

35958

21

Թիւ 1 (Գին՝ 5 Ա. Դ.) էջ 1-52

ՀԱՅ ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ «ԿԱՅԾ», ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՊԵՏՐՈՒԹ


ՔԱՐՈՒԻՆԱ ԻՆՎԵՍՏԻՑԻՈՅԻ

Ռ Ի Ն Ա

Կ Ա Մ

Ա. Լ. ՊԵԱՆՑ ՀՐԵՁՏԱԿԸ

35958

Handwritten signature


Handwritten signature 8-6-942

Վ. ՏՕՆԻԿԵԱՆ
Rue Nahr St. Michel

ՊԵՏՐՈՒԹ
1934

ՇԵՂԵԱԿ ԲՍՈՈՒԻՆԱ ԻՆՎԷՆԻՑԻՈՑ
ՌԻՆԱ ԿՍՄ ԱԼՊԵԱՆՑ ՀՐԵՇՏԱԿԸ

ՆԱԽԱԲԱՆ

Գեղածիծաղ Իսաիոյ սահմանին վրայ բարձրացող Ալպեան լեռանց կողքին, գիւղին ծայրը կը բնակէր Կելգրոս. բարի կին մը, որուն ամուսինը փանի մը սարիէ ի վեր վախճանած էր առանց զուակ մը բողոյ:

Իրիկուն մը երբ արդէն մուրը կոխած էր՝ Կելգրոս մօտակայ գիւղէն տուն կը դառնար, ուր գացած էր տնավանառին իր փանի մը բանջարեղէններ վանառելու:

Դեռ հեռու էր իր տունէն երբ նամբէն քիչ մը ներս հառաչանք մը զարկաւ ականջին: Կեցաւ, շունչը բռնեց. գլխուն վրայի կողովը վար դրաւ եւ սպասեց: Քիչ վեջ ահա միեւնոյն ցաւագին տղաղակը կրկնուեցաւ... բայց ա՛յնչափ ողբագին եւ անորո՞՞ւր հեռաւորութեան մեջ կը ցնդէր:

— Ո՛վ օրհնեալ կոյս, — ըսաւ Կելգրոս, — զուցէ մէկը վճանգի մեջ է եւ օգնութեան կը կարօտի... պէտ էմ բողոյ որ մեռնի՞:

Քաջասիւրս կինը երեսը խաչակնեց եւ այն կողմը շտապեց ուսկից հեծութեան ձայնը կուգար:

Ա՛յնքան մուր էր՝ որ գրեթէ անկարելի կ'ըլլար ոտքը կոխած տղը տեսնել: Սակայն շփասեցաւ, հագրու վայրկեան մը զնաց՝ հեծկյանքով ընդհատուած քաղցրիկ ձայն



մը դուրս բաւ անդունդէ մը :

— «Մայրի՛կ... ո՛վ իմ մայրիկ... »:

Լեւոնաբնակ կիներ բուն կարեկցու թիւն մը զգաց եւ նամբորդութիւնը կրկնապատկելով՝ դէպ հոն զնաց ուսնից ձայնը կուգար : Մօտի անդունդէն կուգար ձայնը : Մտերու կոնյեւրան եւ մացառներուն հետ կուռելով, եւ էրստերու, ցցուած քարերու յենլով մինչեւ ստորոտ հասաւ, զրգանէն լուցկիէն հանեց ու վառեց եւ նեւարեց կրն մը՝ գետին փռուած, անւարձ, արխնբարբախ եւ ջախջախուած դեմով, որուն քով գետքէ երեք արեւկան գեղեցիկ աղջկանկ մը . ցուրտէն բմբւած որ սակայն փափուկ ձեռներով բռնառին փայտացած դեմքը կը շարժէր, կարծես ջանալով զայն իւր արցունքով կենդանացնել :

— Թշուա՛ն կին, ըսաւ Կելլրուս հեղեղաթափ արցունքով, — ուզած պիտի ըլլայ զիւրոք այս անձանքը նամբաներէն քաշել ու ինկած է... ո՛հ, իցի՛ր՝ թէ կարենայի զինքը արքնցնել :

— Մայրի՛կ ո՛վ իմ մայրիկ, կ'ըսէր մերք փոքրիկ աղջիկը . յեռնակեաց անձանքը կնոջ գիւղը սեղմուելով :

Կելլրուս փորձեց կնոջ մեկ թելը վերցնել . բայց ան վար ինկաւ անւարձ, ուսերէն վեր վերցուց . բայց անոնց ծանրութիւնն ու կարծր անւարձութիւնը՝ շուտով զգացնել տուին իրեն թէ դիակի մը առջեւ կը զսնուէր :

Այն ատեն որոշեց օգնութեան կանչել : Բանեց պզտիկ աղջկան ձեռքը, որ ցուրտէն մարելու վրայ էր եւ անհասկնալի բառեր կը թորովեր եւ անդունդին միւս կողմի արահետով՝ քանի մը վայրկեանէն մայր նամբուն վրայ եղաւ :

Քուրցէ դիպուածով կամ նախախնամութեամբ, նիւթ նայն վայրկեանին անկից զիւրազիներ կ'անցնէին, որոնք այս խոր լուրի անելով Կելլրուսի հետեւեզան, որ աղ իկը իւր կուրծքին վրայ սղմած էր . գիւրազիները բռնա անձանքունին Կելլրուսի տունը արքին ու անկողնոյն վրայ պառկեցուցին . էիջ վերջ հասան բժիշկն ու ժողովրդապետը :

Ի՛նչ ալ ընելու ըլլար մարդկային հանճար՝ արդէն շատ ուշ էր . կիներ այլեւս չբացաւ աչքերը : Ո՛չ ոք գիտցաւ թէ ո՛վ էր նե եւ ուսկից կուգար : Հետեւեալ օրն իսկ անպատեղ իրաւով բաղուեցաւ գիւղին պզտիկ գերեզմանատան մեջ եւ պզտիկ աղջիկը որդեգիրն եղաւ Կելլրուսի :

— Ազգաս եմ, այո՛ — ըսաւ Կելլրուս ժողովրդապետին — բայց, եթէ Աստուած ուզէ, պատահաւ մը հաց ինձի չի պակսիր . զոր ինձի աւելի անուշ է բաժնել այս բռնաւորութիւնն հետ որ ա՛յսպէս դժբախտ աշխարհ եկած է . եթէ ո եւ է մեկը գալու եւ ուզելու ըլլայ զայն, պատաստ եմ տալու, բայց հակառակ պարագային ինձի հետ պիտի մ'ալ :

Կելլրուսի սնակը արտաքին երեւոյթով խեղճ էր, բայց բռնաւորութիւն չէր ցոյց տար . ինքը առտու իրիկուն կ'աշխատէր ապրուստը հանելու համար, շատ զոն եւ ուրախ կ'ըլլար, երբ իրմէ աւելի ազգասի մը նպաստելու առիթը կ'ունենար :

Դժբախտ որբունին իմանալով թէ այլեւս պիտի չտեսներ այն կիներ զոր մայր կը կոչէր, սկսաւ լալ, եւ այնպէս սաստիկ հեծկլցալ, որ Կելլրուս վախցաւ թէ նա էիջ օրէն կը հիւանդանայ : Ի՛նչ հարցում որ անոր կ'ընէր, որբունին ուրիշ բան չէր պատասխաներ . միայն այսպէս՝ «Ե՛տ մեծ քաղքի մը շէնդ պալատան մեջ բնակած էին, սակայն ինք իր մօրը հետ միշտ սենեակի մը մեջ փակուած կը մնային, թէ՛ էջ օր առաջ, գեղեցիկ տիկին մը որ ստակ իրենց այցելութեան կուգար, երկար ժամանակ իր մօրը հետ խօսած էր, եւ մայրը դառնապէս լալով, անոր հետ կառնով մը մեկնած էին... յետոյ հետիոտն քաղքէն» եւ ուրիշ բան չէր յիշեր, վասն զի վնասած էր, եւ արքնալով իր քով զսած էր մայրը՝ պաղ, ստառած, արխնբարբախ, եւ այն ժամանակ սկսած էր պոռալ :

Սնամասիկ ինչ որ կրցաւ գիտնալ որբունինին բերնէն : Կելլրուս այլեւս չհարցուց զոն եղաւ մխիթարելով որբունը :

հին, խոստանալով իրեն մայրագիր ըլլալ. եւ անունը դրաւ Ռինա, ի յիշատակ իր մեկ սղօջիան որ մեռած էր դեռ խանձարու բի մեջ: Հեզգիտեալ չար սեռով իրիկուան ժամուր յիշատակները Ռինայի մանկական հոգիէն կը ջրնջուէրն եւ եթէ չէր մոռնար բոլորովին իր կորսնցուցած մայրը, սոսկայն գոցե մսիքարուքիւն մը, սփոփանք մը կը զգար լեռնցի աղհաս կնոջ գորովալիք խնամներուն մեջ:

Ո՛րչափ սարխիք կ'առնէր, այնչափ ատի ուրբունին բաւեր եւ գեղեցիկ կ'ըլլար: Գիւղացիները զինք Ալպեանց Հեռեսակը կը կոչէին: Սե այդ անունն շատ արժան էր: Երբ, Ռինա, կիրակի օրերը եկեղեցի կ'երթար իր լոռնցի նկարչագեղ սորագով, դեղին հիւսկէն մազերը շնուհալի գլխուն շուրջը վայելչ սգեղ ուրբով մը փաթաւած, ու անունն հողգրոթեամբ լի գեղեցիկ սեւ աչները չարս դին կը գործնէր եւ անմեղութեան կարմրութիւնը կը գունաւորէր իր սպիտակ ու թափանցիկ այտերը. անոնք որ իրեն կը մօտենային բերում մը կ'զգային զինքը պատշաճ իբրեւ աստուածային եան մը:

Որբունին ինքզինքն երջանիկ կ'զգար, չունենալով աշխարհի վրայ գոն խնամող մը բացի իր մայր յորէն:

Անորոս պզտիկ պարտեզ մ'ունէր զոր անձամբ կը մշակէր եւ անոր ծաղիկներով ամեն օր Աստուածամոր նուիրուած անպանայն խառան մը կը գարդաւորէր, որ իր խնամքէն շատ հեռի չէր:

Աշխատութիւնը, աղօթքը, անմեղ խաղերը Ռինայի գրադանին էին. բնաւ չէր տեսնէր իր վիճակին վրայ. եւ քեպէտ կերածը կտոր մը սեւ հաց էր եւ կալ փոխարէն: Այնու հանդերձ իր մտաւր արեւն բնաւ տեսնէր մը չէր ելնէր, ընդհակառակն շնորհալի կ'ըլլար Աստուծոյ այն բարեաց համար, զոր իրեն այն խեղճ որբունին մը կարեկցելով առաստանեմած էր, եւ կ'աղօթէր արարչին որ երկար կեանք պարգեւէ իր գրասիրտ բարեարթին:

Այնպէս մինչեւ տասն եւ հինգ տարեկան եղած էր:

ՀՐԵՇՏԱԿ ԵՒ ՍԱՏԱՆ

Ա.

Քիչերը վրայ կը հասնէր, երկինքը սե ամպերով ծածկուած մերձաւոր փոթորիկ մը կը աւետէր. ամպերուն պատառուածքներէն մեռնող արեւուն ճաճանչները կիջնէին, աղօտ շողով լուսաւորելով բովանդակ բնութիւնը: Ռինա, խրճիթի ծածքին շուքին տակ փայտէ աթոռի մը վրայ նստած, կ'ապուշտ բամբակէ կարժ մը կարժաօին վրայ կը փաթթէր: Բաց կարմրագոյն թաշկինակ մը իր դեղին մազերը կ'ամփոփէր, բայց անոնց կարենալ բոլորովին արգիլելու քանի մը խոպոպներու կախուիլը անոր սպիտակ ճակատին վրայ: Երեկոյեան քամին երբեմն բանալով շերտաւոր շապիկի մը ճեղքուածքը, ցոյց կուտար լեցուն ու ճապուկ վիզ մը, կուսական կուրծք մը: Օրիորդին, ընդհանրապէս տժգոյն այտերը, նոյն վայրկեանին կրակ դարձած էին օրուան սաստիկ ջերմութենէն և անոր աչքերուն տեսակ մը դիւթիչ մեղկութիւն մը կուտային:

Ռինայի քով նստած էր կելզրուտ գլուխը մէկ ձեռքին յենած. իր դէմքը տխուր և լքեալ երեւոյթ մ'ունէր, և աչքերը անսովոր կերպով մը կը փալփէին:

— Ի՛նչ սաստիկ ջերմութիւն — ըսաւ կինը յանկարծական թափով մը, գլուխը վեր առնելով — չեմ գիտեր ի՛նչ ունիմ ես այս իրկուն, բայց կարծես երկաթէ օղակ մը ճակատս կ'անցնի, և ամէն բան կրակի դոյնով կը տեսնեմ:

— Մայրի՛կ — գոչեց Ռինա, մէկզի ձգելով աշխատութիւնը և անոր զօրաւոր ձեռքերը իրենին մէջ առնելով, — մայրի՛կ, դուն հիւանդ կ'երեւիս, քեզ շատ լաւ չեմ տեսներ. կ'ուզե՞ս որ վազեմ բժիշկ մը կանչելու:

— Ո՛չ ո՛չ, աղջիկս. բան մը չէ, ոչինչ. քիչ մը հանգչիմ՝ կ'առողջանամ, է՛հ, ասկէց ծանրները անցուցած եմ: Եկո՛ւր, ներս երթանք, ես անկողին կը մանեմ, դուն ալ կը ճաշես: Տե՛ս մըրքիկը փրգելու մօտ է:

Իրաւցնէ խուլ որոտումին ձայները կը լսուէին, և փայլատակները իրարու վրայ կը լուսաւորէին ընդարձակ հորիզոնը և անձրեւի խոշոր ու յանցառ կաթիլներ սկսած էին թափթփիլ:

— Չեմ գիտեր — փսփոսաց Կելզրուտ, երբ տուն մտան խրճիթին պատուհանն ու դուռը լաւ մը փակեցին — չեմ գիտեր ինչո՞ւ շատ մը դուշակութիւններ միտքս կուզան:

— Ո՛հ, մայրի՛կ — կրկնեց Ռինա արցունքոտ

աչքերով և պաղատազին շեշտով:

— Այնտեղ այս տեսակ իրիկուն մըն էր — շարունակեց լեանցի կինը անկողին մանելով երբ տարստիկի փոթորկի մը ժամանակ, ամուսինս քնդ միշտ փակեց աչքերը, դողդոջուն ձայնով մը ինծի բսկով, «Շուտով կը տեսնուիք կելզրուտ»: Ո՛հ, շուտ, այո՛, վասն զի զինք այս իրիկուն ալ տեսայ:

Կնոջ խուլ ու գերեզմանական ձայնը, աւելի ևս վրդովեց Ռինան: Որբուհին իր երկիւղալից աչքերը սեւեց մօլը վրայ. բսկով սարսուռով մը:

— Որո՞ւ վրայ կը խօսիս: Չո՞վ տեսար:

— Մտիկ ըրէ — բնդմիջեց Կելզրուտ ծանր շեշտով մը — ձմրան երկար դիշերներուն մէջ, մեր կնք մայրերուն բերնէն, մեռելներէ դարձագնիւրու հին հեքեաթներ յաճախ լսած ենք, որոնց ես և դու ո՛ր և է հաւատք չէինք ընծայեր: Լաւ ուրեմն, բայց անոնք մասամբ մը, ստոյգ են: Այս իրիկուն անտառէն վերադարձիս, խաշած և ճամբուն մէջտե՛ղ, երկայն ուրուական մը ցցուեցաւ առջեւ ձերմակ սաւանի մը մէջ փաթթուած: Աստուած ինծի ողբմի, բայց ես զայն խնդիս ճանչցայ: Ողորմած հոգի ամուսինիս ոգին էր: Չեոքով ինծի նշան մ'ըրաւ, ... յետոյ աներեւոյթ եղաւ: Չորս բոլորս մուլթ էր և լուռ: Ոտքերս դեռ կը դողային՝ երբ տուն հասայ. չուզեցի քեզի բան մ'ըսել որ չվախնաս... բայց հիմա... Ռինա զանիկա... դարձեալ կը տեսնեմ, հո՛ն... ան-

կողինիս խորը:

Եւ խեղճ կինը ցնորքներու մատնուած, ոտ քի ելաւ, տժգոյն, գիսախուիւ, վալլակնացայտ աչքերով:

— Մայրի՛կ, մայրի՛կ — գոչեց աղջիկը վախէն գողգողալով և ջանալով զայն զրկել — Աստուածըդ սիրես թո՛ղ այդ տեսակ խօսակցութիւնները. կ'ուզես զիս վախէս մեռցնե՞լ: Տե՛ս, ես եմ հոս, ...մի՛այն ես... մայրի՛կ. մայրի՛կ ինձի նայէ՛, խելքդ վրադ բե՛ր. քու Ռինադ է որ քեզ կը կանչէ, քու խեղճ Ռինադ սրբունի կոյս գթա՛ ինձի:

— Թո՛ղ զիս, ձգէ՛ զիս — կը մրմնջէր կելզըրուտ, ահաւասիկ կը տեսնեմ զայն. . կը տեսնեմ... կուգամ, կուգամ... ո՛հ կարծես թէ պիտի մեռնիմ:

Այս ըսելով դարձեալ անկողինին վրայ ինկաւ, ջղային դալարումով մը:

Ռինա վախէն պատահեցաւ:

Փոթորիկը դուրսը կը կատարէր:

Այդ պահուն տան դրան երկու անգամ զարնուիլը լսուեցաւ:

Օրիորդը դեղաց և սարսափահար չորս կողմը նայեցաւ:

— Բացէ՛ք, բացէ՛ք — գոչեց հնչուն, հպարտ ձայն մը — մի՛ վախնաք կելզըրուտ, ես եմ, Պերդրանտը:

Պերդրանտը: Գիւղին բժի՞շկը: Նախախնամութիւնն էր որ զայն կը զրկէր:

մութիւնն էր որ զայն կը զրկէր:

— Ծնորհակալ եմ ո՛վ Աստուած — գոչեց որբունին, և վազեց դրան սողնակը բանալու:

Յիսուն տարեկանի մօտ կարճահասակ, գէր մարդ մը բոլորովին տհաճ գէմքով ներս մտաւ, և աղմուկով մը դուռը գոցեց:

Անիծեալ օդ — մրմրաց ինքնիրեն — մարգիգունիին խելքը ի՞նչ փշեց զիս կանչելու. այո՛, սպասէ՛... այս անձրեւով ամառանոց երթալ... եթէ խենդեցեր եմ... այն գեղեցիկ գէմքին պատճառաւ հիւանդութիւն մը ձեռք ձգեմ... ո՛հ, արգէն ըստ բաւականի մինչև կրունկս խիմած եմ:

Սօսքն ընդհատեց հեծկտուկէ մը՝ որ սենեակին մէկ անկիւնէն կուգար. և արցունքի երկու ջերմ կաթիլներ որ իր ձեռներուն վրայ ինկան, զինք սթափեցուցին:

— Պարո՛ն — կ'ըսեր Ռինա իր ոտքը ինկած — պարո՛ն, ազատէ՛, մայրիկս... տե՛ս... կը մեռնի:

Պերդրանտ զարհուրած երկու մեծ աչքերը բացաւ:

— Ի՞նչ ըսել կ'ուզես — կարելի՞ բան է... կելզըրո՛ւտ... բայց ի՞նչ պատահեցաւ, ի՞նչ է հիւանդութիւնը... բացատրէ՛...

— Մայրիկս — պատասխանեց որբունին լալազին, — քիչ առաջ սաստիկ զառանցանք մ'ուներեցաւ, իր ողորմած հոգի ամուսնոյն ուրուականը կը տեսնէր... կը մոլեգնէր... կը պոռար, կը կանչէր: Պարո՛ն, կը խոստովանիմ թէ վախցայ:

կուզէի վագել օգնութիւն կանչելու համար. երբ բարերարն Աստուած ձեզ հոս զրկեց...

Օրիորդին ձայնը հեծկլաուքէն խելզուեցաւ: Պերզբանտ անանց այլևս խօսք մը պարտաբերելու, իզէ կանթեղ մը առած՝ մօտեցաւ հիւանդին անկողինին: Բայց հազիւ ակնարկ մը նետեց անոր այրած գէմքին, անոր մանիշակագոյն շրթուքներուն վրայ, ակամայ ընկրկեցաւ:

— Այս կինը չարաշուք, փոխադրական և մահացու ջերմէ մը բռնուած է, ուսկից երկու գէպք ունեցանք անցեալ տարի և երկուքն ալ իրարու ետեէ մեռան:

— Ուրեմն փասնդի մէջ է մայրիկս — գոչեց Ռինա — Ո՛հ, մի ջանար զիս խարել:

Այնչափ յոսանաստութեամբ շողուած էին աղջկան այս խօսքերն, որ բժշկին սիրտն ելաւ:

— Աղջիկս — բաւ ան քաղցրութեամբ — հիւանդութիւնը գիտութենէն վեր չէ. կարծեմ ճիշտ ժամանակին հասայ: Հիմա ամօքիչ մը կը պատրաստեմ, քանի մը գեղերով, փոթօրիկը դադրելուն պէս կ'երթանք ուրիշ դարմաններ և օգնութիւններ փնտռելու, որովհետև դուն չես կըրնար հոս տեղ մնալ:

— Ե՞ս, մայրս թողում — գոչեց Ռինա ձայնի այնպիսի շեշտով մը որ ապառաժն անգամ իզուր կը շարժէր: Ո՛հ, անկարելի՛ բան է:

— Շատ լաւ, հոս կեցիք ուրեմն, բարի աղջիկս, և ինձի օգնէ ինչ որ քեզի ըսեմ:

Քանի մը վայրկեանէն ամօքիչը պատրաստուեցաւ և Պերզբանտ շատ զժուարտ կրտսէ հիւանդին բերանը լեցնել, որ ակամայն զոցած կը կափկափէր իրրև շղաձգութենէ վարակուաց ըլլար:

Յետոյ բժիշկը մտատանջութեամբ բարբոքուած, սկսաւ սենեակին լայնութեամբ և երկայնութեամբ պտտիլ, երբեմն կանգ առնելով պատուհանէն փոթօրիկը դիտելու համար, որ երթալով կը սաստկանար. և մերթ աչքի տակն դեղնագէտ օրիորդը դիտելով, որ բոլորովին վնասուած, արցունքատ աչքերով, հիւանդին ոչ մէկ շարժումը աչքէ չէր փոխցնէր:

— Եթէ չեմ սխալիր այդ կինը զիչ կեանք ունի — կը մըմեշէր Պերզբանտ ինքնիրեն — այնպիսի ստակօլի հիւանդութիւն մըն է, որ քանի մը ժամուան մէջ ուժեղ կին մը գիտի կը վերածէ: Եւ այդ աղջիկը կը յամառի քովը մնալու արդեօք մարդկուհիին երթամ և ինչքեմ որ գայն քովս անու: Շատ լաւ մտածեցի. հիմա երթամ և դեղը տամ... փորձ մ'է կ'ընեմ... խեղճ կ'ըլլարու. ս'ըր էր թէ յաջողէի գիծը անողջացնէր:

Եւ այդ դաժան մարդը, որ անմատչելի կը թուէր կարեկցութիւն մը կ'զգար:

— Հիմա հանգիստ է հիւանդը — գիտեց ան, կելզբուտի մօտենալով տազնաօպալից, որ անշարժ կը պտտկէր, աչքերը փակ, բայց անոր կիսարայ բերնէն տաք շունչ մը դուրս կուգար: — Ես այս

պատեն սուրբէն կ'օգտուիմ, զիւզ կ'երթամ ու կը վերադառնամ կարեւորներովը:

Եւ բացարձակ հաստատամտութեամբ զէպի զուռ ուղղուեցաւ:

— Բայց տեսէ՛ք ինչպէս կ'անձրևէ, պարոն, — ըսաւ Ռինա, սաստիկ զգածուած — ես ալ գամ որ յանձնարարած գեղերնիդ բերեմ:

— Ո՛հ երբէք մի՛ տարակուսիր թէ քիչ մը անձրևի համար ես պարտքէս կը պակսիմ: Կեցիր զուռ, աղջիկս, հանգիստ եղիւր. է՛ն ուշ ժամէ մը կը վերադառնամ:

Պերգրանա մեկնեցաւ:

Դուրսը փոթորիկը իր զօրաւոր ձայնը լսելի կ'ընէր և վայլատակներն իրենց շողացող լոյսը պատուհանի ապակիներէն ներս կը ցոլացնէին:

Ռինա սիրտմաշուք վախով մը, խաչելութեան առջև ծնրադրեց: Ականջը լարած և սիրտը բարախուն՝ կ'սպասէր:

Փամերը կը սահէին և Պերգրանա տակաւին չէր գար: Հիւանդը վայրկեանէ վայրկեան կը ծանրանար: Ռինա, միշտ ծնրադիր, շարունակ կուլար ու կ'աղօթէր:

Փոթորիկը իջած էր, բայց գիշերը մութ էր և դաշտը անապատ...:

Աղջկան վախը յուսահատութեան փոխուեցաւ: Իր մայրը կը մեռնէր և ինքը հո՛ն միայնակ և անկարող էր գայն՝ փրկելու: Օգնութիւն մը փնտրելու համար զուրս ելլելու վրայ էր, երբ

զուռը կրկին բացուեցաւ և Պերգրանա օտարականի կերպարանքով տիկնոջ մը հետ երևցաւ. որուն տեսքը հիւանդին սամէն պէտքերը հոգալու պատրաստակամութեան երևոյթն ունէր:

— Պիանքա մարքիզուհի՛ն — գոչեց Ռինա՝ թեւերը բացած անոր առջև վազելով:

Բ.

Այն տիկինը զոր Ռինա Պիանքա մարքիզուհի կոչած էր, քառասուն տարեկանի մօտ պիտի ըլլար, սակայն իր դէմքը սքանչելի գեղեցկութեան մը հետքերն ունէր: Սև ու խիտ մազերը անոր ճակատը կը ստուերազրէին և սպիտակ ու թափանցիկ մարմինը՝ ալապատգրի մը պէս աւելի զուրս կը ցայտեցնէին: Սակայն սև աչքերը մութ և մեղամաղձոտ կրակով մը ոգեւորուած հոգւոյն բունն զգացողութիւնը կը յայտնէին, իր տօգոյն շրթունքներուն վրայ դառն ժպիտ մը կը շրջէր: Բոլորովին սև հագուած էր. և իր ամագոն հաւալը ու կեցուածքը գեղեցիկ շնորհք մը, կատարեալ ազնուութիւն մ'ունէին:

Գիւղին մէջ կը խօսէին, թէ Պիանքա մարքիզուհին հո՛ն եկած էր իր պաշտելի ամուսնայն կորստեան վրայ մխիթարուելու համար, և մխիթարանք կը գտնէր իր հարստութիւնը ծախսելուն մէջ: Եւ հետզհետէ լաւագոյն կերպով սիրտի ճանչ-

նանք գինքր:

Կելզրուտ իր որդեգրած աղջկան հետ միասին շատ սնդամ մարգիզուհիին ամարանոցը կերթար: Ազնուական տիկնոջ և սղքատ լեռնցի աղջկան մէջ գտնուած յարաբերութիւնները պարզ և եզակի գիպուածով մը յատուկ և կամ էին:

Պիանքա մարգիզուհին սովորութիւն ըրած էր գուարձութեան համար ամէն առտու դաշտերն ու մարգագետինները երթալ: Օր մը պզտիկ այգիէ մը անցնելու պահուն, պահապան շուն մը վրան յարձակեցաւ: Տիկինը սոսկալի աղաղակ մը վրցոց և այդ ձայնէն մացաններու մէջէն օրիորդ մը գուրս թռաւ, որուն դէմքէն ու ձայնէն իսկոյն շունը ընտանեցաւ և անոր առջև վագելով աւրախութեամբ սկսաւ պոչը շարժել:

Մարգիզուհին վախէն սարսափահար եղաւ: Կեանքին մէջ երբեք տեսած չէր նման գեղեցիկ և շնորհալից օրիորդ մը:

Ինքը, Ռինա, ժպիտով մը ազնուական տիկնոջ ներկայացաւ ըսելով.— մի՛ վախնաք տիկին, Ֆիտօն շա՛ր չէ: Մալայն դուք սաստիկ վախցած պիտի ըլլաք: Եթէ ձեզի նեղութիւն մը չէ, ինձի հետ եկէ՛ք. հո՛ս մեր տնակը մօտ է. մայրս Կելզրուտ ձեզի գաւաթ մը լաւ կաթ կուտայ և դուք ալ քիչ մը հանգիստ կ'առնէք:

Այս խօսքերը այնպիսի միամիտ պարզութեամբ մը ըսաւ որ Պիանքան մոզեց: Ան մեքենաբար աղջկան հետեցաւ, առանց անկից բաժ-

նելու իր նայուածքը՝ ինքն իրեն ըսելով.—

«Աստուած իմ... ի՞նչ գեղեցկութիւն... եթէ կարելի՛ ըլլաք»:

Հետեւեալ օր, և ամէն առտու Մարգիզուհին կուգար Կելզրուտին այցելութիւն տալու և աղջրկան հետ խօսակցելու, որուն մէջ միշտ նոր ձիրքեր կը գտնէր: Լիռնցի կինը աղջկան դէպքը պատմած էր Պիանքային և այս բանս մարգիզուհին շահադիտութիւնն աւելի աճեցուցեր էր որբուհիին նկատմամբ: Պիանքա միշտ միասին նուէրներ կը բերէր օրիորդին: Ի սկզբան Կելզրուտ իր բնատուր խրոխտութեամբ պատուիրած էր աղջրկան որ մերժէ, բայց յետոյ ազնուական տիկնոջ շողքօրդ և քաղցր կերպերէն պարտուած, սկսած էր ընդունիլ և միանգամայն հրաման տուած էր որբուհիին որ երբեմն տիկնոջ ընկերակցութեամբ կամ առանձին կարենայ Պիանքայի ամարանոցը երթալ. Մարգիզուհիին կը թուէր թէ պիտի չկարենար ապրիլ օր մը առանց Ալպեանց Հրեշտակին, ինչպէս սովոր էր կոչել Ռինան:

Զարմանալու չէ ուրեմն, որ երբ Պերդրանտ ուշ գիշերով իրեն գնաց, և Կելզրուտի անակընկալ սոսկալի հիւանդութիւնը պատմեց, վայրկեան մ'իսկ չվարանեցաւ Պիանքա բժշկին հետեւելու՝ միտսին տունելով իր ծառաներէն մին պէտք եղած ծառայութիւնները ընել տալու համար:

— Ռինա, հրեշտակս — ըսաւ Պիանքա, սիրալիբ դգուանքով մը՝ որբուհիին իր կուրծքին վը-

3595



բայ սեղմելով — մի՛ լար, մի՛ լար... մայրիկդ
աղէկ վիճակի մէջ չէ, գիտեմ... բայց յուսանք
թէ ամէն բան աղէկ կ'երթայ: Այսուհանդերձ դու
չես կրնար հոս մնալ...:

— Ա՛հ, ես մայրս չեմ ձգ'ր — գոչեց ուրուհին:

— Ես ալ քու քովէդ պիտի չհեռանամ — ա-
ւելցուց Մարգիգուհին, գանձիկա համբուրելով:

— Ո՛հ, տիկի՛ն, ո՛րչափ բարձր էք — մըմնչեց
խեղճ աղջիկը, փոխարինելով ազնուական տիկնոջ
զգուանքները:

Պերզրանտ հիւանդին անկողնոյն քով գա-
ցած էր և գլուխը կը շարժէր: Կելզրոտ տ ինքզին-
քը կորսուցուցուցած կը տեսուէր: Բժիշկը իբր ա-
րուեստին ամէն միջոցներն ի գործ գրաւ և սթա-
փեցուց զայն:

Լիոնցի կինը, զգայարանքները ձեռք բերե-
լով, շփոթաց ակնարկ մը դարձուց չորս դին,
ակնարկ մը՝ որուն մէջ կը փայլէր ջերմը ու ցը-
նորքը, բայց ան ո՛չ բժիշկը ճանչցաւ, ո՛չ մար-
գիգուհին և ո՛չ ալ պաշտելի աղջիկը: Զամէնքը
գիտեց ծիծաղելով .. յետոյ կրկին սկսաւ գառան-
ցել, որ քանի մը ժամ տեւեց, յետոյ թմրու-
թիւն մ'եկաւ վրան և շթողուց որ մէկը ճանչ-
նայ:

Առաւօտեան ժամը տասը կը հնչէր:

Պերզրանտ և Մարգիգուհին մահամերձի
սննեակէն չշարժեցան: Ռինա, տեսակ մը զրգուու-
թեան մատնուած, գուցէ վերահաս դժբախտու-

թեան գիտակից, սննեակին մութ անկիւն մը նըս-
տած՝ ցած ձայնով կը հեծէր:

Պիանքային ծառան էր, պատուհանին քով,
կարծես բնութեան գեղեցկութիւնները գիտելու
մէջ ընկզմած էր:

Բժիշկը զինք այգ յափշտակութենէն սթա-
փեցուց:

— Մատթէոս, շուտ ժողովրդապետին վագէ
ու հոս բեր զինք:

— Այո՛, տէ՛ր — պատասխանեց ծառան, և
խսկոյն դուրս ելաւ:

Պերզրանտ Մարգիգուհին մօտեցաւ և զաղտ-
նաբար ըսաւ անոր:

— Վիճակնիս շատ ծանր է, խեղճ կինը պի-
տի մեռնի:

Տարօրինակ ժպիտ մը փայլեցաւ Պիանքայի
չրթունքներուն վրայ:

— Ա՛խ — ըսաւ զգածուած — ուրեմն կը
կարծէք թէ այլ ևս յոյս չկայ:

— Դժբախտաբա՛ր, կարծեմ...:

— Եւ ուրիշ գեղ դարմա՞ն մը:

— Ուրիշ բան մը չեմ գիտեր... և ցաւօք
սրտի կ'իմացնեմ թէ երկու ժամէն..

— Կը բաւէ :. մի՛ խօսիր... մըմնչաց տիկի-
նը նու՛ազ ձայնով և երկու ձեռքերով երեսը ծած-
կեց:

— Ազնուական սիրտ — ըսաւ Պերզրանտ
ինքն իրեն՝ և աւելի ևս Մարգիգուհին մօտենալով

փափսաց անոր ականջին. — Ի՞նչ պիտի ըլլայ խեղճ Ռինան:

Պիանքա սարսոնցաւ... բայց բան մը չըսաւ:

— Եթէ կելզրուտ դեռ կարենար խօսիլ — շարունակեց բժիշկը ցած ձայնով — անշուշտ խնդիրք մը ուղղէր ձեզի... միակ խնդիրք մը... Ո՛վ Մարգիզուհի, երեսէ մի թողուք այս թշուառ որբուհին:

Վառ կարմրութիւն մը փայլեցաւ Պիանքայի դէմքին վրայ.. իր ձեռքերը՝ Պերզրանտի ձեռքերը կը փնտռէին:

— Կելզրուտ զուր տեղը խնդրած պիտի չըլլար — ան սեղմելով անոր ձեռները ներկաներուն մէջ և այսպիսի ճարտար կեղծիքով մը, որուն, ձեռնամած շնորհակալ կ'ըլլամ որ վստահութեամբ ինծի կը յանձնարարէք: Երանի՛ թէ Աստուած խեղճ կինը մեզի պարգեւէր, բայց եթէ Աստուած ուրիշ կերպով կարգադրած է... շատ լաւ, Ռինա իմ մէջն ուրիշ մայր պիտի ունենայ:

— Ա՛խ, Մարգիզուհի... դուք հրեշտակ մըն էք... ես տարբեր բան մը չէի սպասեր ձեր բարի որտէն:

Առեղծուածական նոր ժպիտ մ'ալ փայլեցաւ ապնուական տիկնոջ շրթունքներուն վրայ: Միեւնոյն ժամանակ խրճիթին դուռը կը բացուէր: Ծառան էր, ժողովրդապետով միասին:

Ռինա, այս բանը տեսնելով, գուշակեց դրժբախտաբար թէ իւր մօրը համար ամէն բան լմըն-

ցած էր. և Մարգիզուհիին բազուկներուն մէջ նետուեցաւ, արիւն արցունք թափելով:

Ժամ մը վերջ կելզրուտ ընդ միշտ աչքերը կը փակէր, առանց խելքը գլուխը եկած ըլլալու, առանց իր աղջիկը օրհնելու, որ անկողնոյն քով ծնրագիր կը կենար:

Ռինա, ցաւատանջ սրտով, յետ վերջին համբոյրը դրոշմելու զինք որդեգրող մօր շրթունքներուն վրայ. անոր դագաղին ընկերանալ՝ մինչև գերեզման:

Պիանքա ալ անոր հետեւեցաւ:

Ութը օր վերջ, աղջիկը դէպի Թորինց կը մեկնէր իւր բարբար տիկնոջ Պիանքա Մարգիզուհիին հետ:

Գ.

Թորինոյի քիչ յաճախուած ճամբաներէն միոյն մէջ, հին պալատ մը կը բարձրանար, այլանդակ ճարտարապետութեամբ, պղտիկ ամբողջ մը պէս խրոխտ. կամարակապ պատուհաններով, մեծղի աւ լայնանիստ և կանաչագոյն երկաթէ վանդակներով պաշտպանուած: Պալատին ետեւի կողմը պարտէզ մը կամ անգղիական մարգագետին մը կը տեսնուէր, մէջը ցան ու ցիւր՝ սիւնէր, կոթողներ, արձաններ:

Արեւը դէպի մուտք կը խոնարհէր, Օգոս-

տասի գեղեցիկ օր մը, իրեն պալատին դուռը բացուեցաւ կառք մը ներս մտնելու համար, որ շառաչելնով ընդարձակ ծածքի մը տակէն անցնելով, եկաւ ծաղիկներով և գորգերով զարդարուն՝ մարմարեայ շքեղ սանդուխի մ'առջև կանգ առաւ.

Ծեր սպասաւոր մը վազեց կառքին դռնակը բանալու, բոլորովին քողարկեալ տիկնոջ մը և սեւազգեստ դեղին մագերով աղջկան մը ձեռք տալով:

Մեր որբուհին էր, Պիանքա Մարգիզուհին հետ:

Հագիւ սանդուղներէն վեր ելան, երկու ուրիշ սպասաւորներու կանոնաւոր յարգանքներուն մէջ, ճոխ և երկայն սրահէ մ'անցնելով աննման շքեղութեամբ կահաւորուած յարկաբաժին մը մըտան:

Տասն և հինգ տարեկան հասակին մէջ այդպիսի տեղ մը գտնուիլ, ա՛յնչափ հրաշալիքներու մէջ. յիրաւի ապշահար կը մնար: Ռինա շուրջը կը նայէր և կը կարծէր երագել, և ուրախութեան ու զարմանքի պզտիկ թեթեւ բացազանչութիւններ կ'ընէր, մինչ Մարգիզուհին կատարեալ գոհ ու հոգեզմայլ գէմքով զինքը կը դիտէր:

— Կ'ախորժիս, այնպէս չէ՞ Ռինաս... Շատ լաւ ուրեմն, այս ամէնը քուկդ են...

— Ի՞մա — հարցուց օրիորդը, զաբմացած, իւր գեղեցիկ աչքերը լայն բանալով:

— Դու իմ աղջիկս չե՞ս: Ես քեզի չխոստա-

ցա՞յ մայր ըլլալ: Աշխարհիս վրայ մէկը չունիմ որ քեզմէ աւելի սիրեմ, . . . ուստի ունեցածս քուկըդ է:

— Ո՛հ տիկին, — գոչեց Ռինա զգածուած ու ձեռնամած:

— Ինչո՞ւ զիս մայր չես կոչեր. — ըսաւ Պիանքա քաղցրութեամբ — ուրեմն այդպիսի անուն մը տալ քեզի դժուարի՞ն կուզայ . . բայց հոգ չէ՛ — շարունակեց խնդալով և անոր երեսները համբուրելով, — վաղը կ'ըսես . . . այնպէս չէ՞:

Եւ զանգակ մը քոչելով, ըսաւ. — հիմա քեզի սննեակդ կը դրկեմ, որպէսզի լաւ մը փոշինեղիդ մաքրուիս. . . ես ալ նոյնպէս պիտի ընեմ. . . ճաշարանը քեզի կը սպասեմ:

Վառվռուն աչքերով և թուխ գէմքով տասն և ութ տարեկան օրիորդ մը: Սենեակի սեմին վրայ երեւցաւ:

— Մինէթթա — ըսաւ Մարգիզուհին խրոխտանքով — անա հո՛ս է քու տիրուհիդ: ասկից վերջ հրամանները իրմէ պիտի ընդունիս: Յուսամ թէ առիթ չես տար զքեզ յանդիմանելու:

— Ո՛հ տիկին, ամէն բան պիտի ընեմ որ ինձմէ գոհ մնայ. — եւ շնորհալից ժպիտով մը, Մինէթթա, հրաւիրեց որբուհին և զայն իրեն յատուկ սենեակը առաջնորդեց:

Սենեակը այնպիսի շնորհալի վայելչութեամբ կահաւորուած էր, որ Ռինա, իւր խրճիթէն զատ ուրիշ բան տեսած չըլլալով, Մարգիզուհին ա-

մառանցին համեստ ու կահաւոր սրահներն ու սննեակները տեսնելուն չէր գիտէր ինչ մտածել. և իրականացած կը կարծէր իրեն համար այն առասպելներէն մին՝ զոր ձմրան երկար գիշերները իրեն կը պատմէր խեղճ կելլերուտ. իբրև թէ իւր մանկութենէն սքանչելի պալատէ մը հանրւած ըլլար:

Անկողինը ձիան դէզի մը կը նմանէր, կիսովին ծածկուած՝ սպիտակ ծոպերով թեթև վարագոյրի մը տակ. պատերը թանկագին երկնագոյն կերպասներով, ոսկեգօծ և մանր աստղազարդ աթոռները փղոսկրէ և բարձերը երկնագոյն մետաքսէ:

Ռինա, երեսն ու ձեռները մաքրելէ վերջ, բոլորովին ժպտուն, իր բարերար տիկնոջ քով վերադարձաւ:

Պիանքա, կերակուրներով և ազնիւ գինիներով զարդարուած սեղանի մ'առջև նստած էր, որուն բոյրերն հազար ու մէկ զանազան ծաղկանց անուշահոտութիւններուն հետ կը շփոթուէին, որոնք չքեզ անօթներու մէջ կը պճնէին սեղանին շորս անկիւնները:

Ռինա Մարգիզուհիին դիմաց նստաւ: Խօսակցութեան նիւթը առաջին անգամ ողորմած հոգի կելլերուտի բարեպաշտ յիշատակն եղան, յետոյ Մարգիզուհիին սկսաւ երիտասարդութեան տարիներուն վրայ խօսիլ, այն ժամանակին՝ յորում կեանքը յարատև յուզում մըն է, յարատև

խառնուրդ մը ուրախութեան և վշտի. ապա քիչ քիչ երեւակայութենէն մղուած, իր խօսակցութիւններն աւելի աշխոյժ և թեթև գոյն մ'առին. խօսեցաւ նորոյթներու, տեսարաններու և հաճոյքներու վրայ:

— Բեզի համար հիմա այժմ նոր կեանք մը կը սկսի — ըսաւ վերջապէս Պիանքա զգուալիր շեշտով մը: — Բեզի սովորեցնեմ, թէ ունեցած վիճակիդ պահանջին համեմատ ինչպէս պէտք է դու զքեզ կրթես... պիտի չաշխատիս այլևս... ես կ'ուզեմ քեզ միշտ պեղեցիկ տեսնել... ընկերութեան մէջ զուարճանալ, կ'ուզեմ դարձեալ որ քիչ մը ֆրանսերէն և երաժշտութիւն ալ սորվիս... կ'ուզեմ որ ամենակատարեալ էակ մը դառնաս, ամէնուն ուշադրութիւնը գրաւես:

Ռինա, ապշած, ինքնիրմէ դուրս ելած մտիկ կ'ընէր, և իր դէմքին վրայ երկնաւոր ուրախութեան շող մը կը փայլէր: Մարգիզուհիին շքութունքներէն յողթութեան ժպիտ մը կը թափէր, մինչդեռ իր նայուածքը դժնեայ փայլատակ մը կ'արձակէր: Ամէն ջանք կ'ընէր իր տպաւորութիւնները ծածկելու համար. սակայն թէպէտև ամէն կեղծաւորութիւն ընելու կարող, բայց մերթ շէր կրնար բոլորովին պարակել, Միւս կողմանէ պէտք կ'զգար սակայն այս խօսակցութիւնն ընդհատելու:

— Սիրելի ազջիկս — ըսաւ Պիանքա ոտքի ելելով — ես շատ յոգնած եմ ճամբորդութենէն...

ուստի կը մտածեմ երթալ, հանգչիլ: Գու ալ նոյն-
պէս ըրէ. մեր խօսակցութիւնը վաղուան թողունք:

Եւ իր շրթունքը հրեշտակին ջինջ ճակտին
վրայ հանգչեցնելով, գիշեր բարի մաղթեց անոր:

Մինէթթա, Ռինան սենեակը առաջնորդեց, և
ուզեց անոր հանուելուն օգնել. բայց աղջիկը
հասկցուց թէ առանձինն կուզէր հանուել. ուստի
աղախինը հակառակ մարգիզուհիին պատուէրնե-
րուն, կամացուկ մը հեռացաւ:

Երբ որբունին մինակ մնաց, բոլոր թափով
իր մտածութիւններուն մէջ ընկղմեցաւ. Հագար
ու մէկ գեղեցիկ տեսիլներ մտքին մէջ կը սաւառ-
նէին: Նոր հորիզոն մը, նորութեանց աշխարհ մը
կը բացուէր իր դիւթիչ աչքերուն առջև:

Ծունը դրաւ և սկսաւ աղօթել. բայց մինչդեռ
շրթունքները աղօթքի բառերը կը մըմնջէին...
օրիորդը մտքով կ'անդրադառնար մարգիզուհիին
հետ անցած դարձած օրերուն վրայ, իր մօր ող-
բերգական պարագաներուն վրայ, և այն անակըն-
կալ երջանկութեան՝ որ յաջորդած էր...:

— Ո՛վ մայր իմ — մըմնջեց սարսրագին —
կը տեսնեմ թէ ո՛րչափ կրած ես դու այս աշխար-
հիս մէջ, դրկէ՛ օրհնութիւններդ քու թշուառ աղ-
ջրկանդ վրայ:

Լռեց... քանի մը վայրկեան մտածկոտ ան-
ցուց, յետոյ աչքերն ու ձեռքերը երկինք վեր-
ցընելով.— Մա՛յր իմ, գոչեց — դու որ երջանիկ
կը հանգչիս Աստուծոյ գրկին մէջ և անկից կ'ըն-

դունիս քու առաքինութիւններուդ վարձքը, ա-
ղօթէ՛ ուրեմն, աղօթէ՛ ինծի և իմ բարերար տիկ-
նոջս համար, որ ա՛յնչափ բարի է և սիրատարփ
դէպ ի քու Ռինադ...:

Ոտքի ելաւ և յետոյ անկողին մտաւ: Քանի
մը վայրկեան վերջ հանգարտ կը քնանար:



Գ.

Հետեւեալ առտուն ժամը ութի ատենները,
Պիանքա գեղեցիկ սպիտակ վերարկուի մը մէջ
հիաթթուած ներքնաստեղծակին մէջ թիկնաթոռի մը
վրայ երկնցած էր. աւելի լկտի կնոջ մը քան աղ-
նուական տիկնոջ մը գաղափարը կուտար: Չեռ-
քը նամակ մը ունէր, զոր անյագաբար կը կար-
գար: Դէմքի գծագրութեան կծկումէն կ'իմաց-
ուէր թէ այն նամակը իւր սրտին մէջ դառն պա-
պատերազմ մը կը բանար:

— Ո՛չ, չի կրնար ըլլալ — կը մըմնջէր — ո՛չ:

Ո,յդ վայրկեանին սենեակի դրան երկու թե-
թեւ հարուած տրուեցաւ: Մարգիզուհիին փութաց
նամակը ծածկել... յետոյ բաւական հաստատ
ձայնով մ'ըսաւ.

— Մտէ՛ք:

Դուռը բացուեցաւ և քսաներկու տարեկանի
մօտ երիտասարդ պատանի մը ներս մտաւ, հա-
րաւային բնակչի ճշգրիտ տիպար մը: Մաքուր

հագուած էր, մոխրագոյն, և ձեռքը թաղիքէ գըլ-
խարկ մ'ունէր:

— Բարի լոյս — ըսաւ ան, նստելով Պիանքա-
յի մօտ, որ աշխուժով գայն իրեն քաշեց, և ճա-
կատը համբուրելով — բարի լոյս, սիրունիս, վեր-
ջապէս քեզ նորէն տեսայ: Իրաւի, ես կը կարծէի
թէ քու ճամբորդութիւնդ այս անգամ պիտի չի
վերջանար: Ամէն առտու պալատ կուգայի քու
մասիդ տեղեկութիւն մը հարցնելու համար, և
միշտ ինծի կը պատասխանէին. «Շատ հանգիստ է,
գիւղը կը գտնուի»: Եւ այդ քու նամակներդ ին-
ծի շուտ վերադարձիդ համար յոյս մը կը ներ-
շնչէին: Սակայն չեմ կրնար ըմբռնել յերաւի թէ
ինչ հաճոյք կը զգայիր անտառներուն մէջ:

— Ապերախտ, — ընդմիջեց մարգիզուհին,
քաղցր ու սրտաշարժ ձայնով — դու լաւ գիտես
թէ միայն իմ հաճոյքիս համար չէր որ գիւղ գը-
նացի... խեղճ Նորպերդ — աւելցուց տխուր մը
ժպտելով — անմիտ պատանիի մը պէս կը խօսիս,
և չես մտածեր թէ քեզի համար ինչ ընդդիմու-
թեանց կը բախիմ . . . :

Երիտասարդը չհամարձակեցաւ բերանը բա-
նալ:

— Օր մը, — ըսաւ դարձեալ քաղցր ու հա-
մակամեալ ձայնով — պիտի ըմբռնես թէ ի՛նչ
աստիճան գքեզ սիրած եմ. Հիմա քեզի պատմեմ
թէ ամարանոցին մէջ ինծի ինչ պատահեցաւ:

— Արգեօք այն աղջկան վրա՞յ պիտի խօ-

սիս որոյ մասին ակնարկութիւն ըրած էիր քու
վերջին նամակիդ մէջ:

— Այո՛, մտիկ ըրէ:

Եւ պատանին իրեն մօտ քաշելով իւր հրա-
վառ շունչով անոր այտերը վառելու աստիճան,
պատմեց, թէ ի՛նչ միջոցով ճանչցած էր Ռինա որ-
բունին . . . ինչպէս իրեն յանձնուած էր իրրեւ
զաւակ, զանց չընելով ոչ մէկ մանրամասնութիւն
այնպէս որ կարծես այդ յայտնութիւններուն մէջ
ամենամեծ ուրախութիւն մը կը զանէր. իր ձայ-
նը անգութ ու ծաղրալից շեշտ մ'առած էր, աշ-
քերը շղային գըգռութեամբ մը կը փալփլէին:

Նորպերդ մտածկոտ մտիկ կ'ընէր . . .

— Անշո՛ւշտ, — եզրակացուց Պիանքա —
դու բան մը չես ըմբռնեք բոլոր այս պատմութե-
նէն, և ոչ կը հասկնաս թէ ի՛նչ նպատակաւ իմ
տունս մտցուցի այս խեղճ աղջիկը . . . բայց օր
մը, կ'ըսեմ քեզի, բոլորը պիտի ըմբռնես և գուցէ
այն ժամանակ զիս պիտի ծափահարես:

Խորապէս հառաչեց, և աւելի ցած ձայնով,
իրրեւ թէ ինքն իրեն խօսէր, աւելցուց — Այո,
կարեւոր է . . . :

— Յիրաւի — գոչեց պատանին, լիբը ժպի-
տով մը — սր այս առտու ինծի սիրելիլայի մը
զաղափարը կուտօս: Քու առեղծուածներդ ան-
լուծելի են . . . Ա՛խ, ա՛խ, այս ամէնը քեզի հա-
մար ծաղրական, ոչինչ բանեք են:

Պիանքա չպատասխանեց, բայց իւր այտերը

տոժգունեցան և աչքի ըր բոցեր արձակեցին: Չևոքը կարկառեց, ուժով մը սեղմեց պատանիին բազուկը, և սաստիկ գրգռեալ շիշտով մը, ըսաւ.

— Ինչ որ ալ ըլլայ, դու պէտք ես սաստիճանդ ճանչնալ:

— Եւ ինչո՞ւ:

— Մտածէ՛, որ դու կործանած ես. պարտատէրներէն հալածուած, բանտարգելութեան սպանալիքով, և քեզի կը մնայ՝ միայն և միայն վատահամբաւութի՛ւն կամ անձնասպանութի՛ւն:

— Ծճմարիտ է, — մըմնջեց Նորպերդ ուտում մ'ընելով աթոռին վրայ — բայց չեմ տեսներ — կրկնեց — Ի՛նչ կապ ունի այս ամէն բաներուն հետ քու պաշտպանութիւնդ:

— Այն աղջիկը — խօսք առաւ մարքիդուհին՝ աւելի հանդարտ շիշտով մը — քու փրկութեանդ գործիքը պիտի ըլլայ:

— Ի՛նչ կերպով:

— Ես իմ ծրագիրներս ունիմ — մըմնջեց Պիանքա, և խոհեմութիւն չհամարեցաւ՝ երիտասարդը բոլոր իւր գաղտնիքներուն գիտակից ընել — առ այժմ բաւական է որ գիտնաս թէ կուզեմ եքեզ ազատել, և պիտի ազատեմ:

Նորպերդ վայրկեան մը յուզուեցաւ: Մարքիդուհիին առջեւ ծնրադրեց, անոր ըսելով այնպիսի համոզուած շիշտով մը, որ Պիանքայի շիղերը թունդ հանեց:

Ո՛հ. մայրիկ, մայրի՛կ, ո՛րքան և, ո՛րչափ

զքեզ կը պաշտեմ:

Լուէ՛ — ընդմիջեց իսկոյն ազնուական տիկինը, ծռելով եւ ծածկելով իւր կարմրած դէմքը պատանուին զանգուրներուն մէջ — լուէ՛, Նորպէ՛րդս, յիշէ, որ քեզի համար, ինչպէս նաև ամէնուն համար ես մարգիդուհի Պիանգա՛ն եմ:

Քանի մը վայրկեան լուռ մնացին. վերջապէս մարգիդուհին բոլորովին ցած ձայնով, իւրեւթէ մէկը կարենաւ լսել զայն.

— Ուրեմն, դու կը կարծէիր թէ զքեզ մոռցե՞ր եմ, Նորպերդս, — ըսաւ —: Եւ սակայն լաւ գիտես թէ բան մը չեմ մտածեր՝ որուն մէջ չգտնուիս... Ուրեմն չըկաթիր արիւն մը որ քեզի չըվերաբերի — քեզի քի՛չ կը տեսնուի ինչ որ մինչև ցայսօր քեզի համար կրած եմ: Դու որդին էիր մարդու մը՝ զոր ես կը պաշտէի և որ մեռաւ առանց իր անունը ինձի կարենալ տալու, և ես սախուեցայ քեզմէ ծածկելու որպէսզի ամուսնանամ ուրիշ մարդու մը հետ ուսկից ես կը խորչէի... Եղուարդ Ռովէրպէլլայի հետ: Բու Սիրոյդ համար, օտակալի քաջասրտութիւնը ունեցայ ընդ միշտ աներեւոյթացնելու այս վերջին չարաշուք ամուսնութենէն ծնած աղջիկը: Եւ կենօք չափ ինձի հետ կապուած կնոջ մը յանձնեցի որ զայն հեռաւոր տեղ մը տանի, սպանէ, եթէ հարկ է, ... որպէս զի գաղտնիքը բնաւ չյայտնուի: Գնաց աներեւոյթ եղաւ կինը իմ աղջկան հետ, և երբք չիմացայ թէ ինչ պատահեցաւ իրենց, Ողձի խայ-

Թերը քու սիրոյդ մէջ խեղճեցի և շքեղ էջրի որը մը մարգիղին ներկայացուցի . . . որ . . . իր կորսուած աղջկան տեղ որդեգրէ: Աւնա՛յն յոյս, Անանուն նամակ մը սակայն յայտնած էր մարգիղին իմ լարած սրողայթը որուն դո՛հ ելած էր իր աղջընակը: Բարեբախտաբար յիմաբուծիւն մ'եկաւ մարգիղին վրայ այն վայրկեանին, երբ մտադիր էր զիս մասնելու և ինձի դէմ դատ բանալու, ուղելով այս կերպով զիս ստիպել որ բոլոր հարստութենէս հրաժարիմ: Անգոայ ամէն բանի, ցնծացի ամուսնոյս դժբախտութեան վրայ, որովհետև ինձի զիւրութիւն կ'ընծայէր քեզմով զբաղելու: Գիտես թէ ինչպէ՞ս քեզի համար ամբողջ պալատ մը վարձեցի . . . քեզի ուսուցիչներ ու զբամ հայթայթեցի . . . քեզի հօրդ անունը տուի: Այդ վայրկեանէն սկսեալ իմ կեանքս յարատեւ երջանկութիւն մ'եղած է, և յարատեւ տանջանք մը: Երջանկութիւն մը, սրովհետև կընամ քու տեսութեամբդ. քու սիրովդ զմայլիլ տանջանք, նախատեսելով՝ որ այդ երջանկութիւնը չէր կընար յարատեւել:

« Եկաւ օր մը . . . օր վշտալից յիշատակի . . . յորում այնպիսի կէտի մը մէջ կը գտնուէի որ ստիպուած էի պատիւս ու համբաւս վաճառելու, որ զքեզ և քու անկուշտ փափաքներդ գոհացնող միջոց մը գտնեմ: Քեզի համար այնչափ կրեցի որչափ կ'ին մը կընայ տանիլ աշխարհի վրայ, առանց բնաւ շրթունքներէս տրտունջ մը հանելու,

առանց պարսաւ մը ուղղելու իմ վիշտերուս հեղինակին: Ընդհակառակն դու ամէն բանի անտարբեր էիր. ա՛յս էր իմ պատիժս, . . . և սակայն անոր արժանի չէի, ո՛չ: Ի՞նչ ըրի ես զքեզ սիրելէ զատ: Իմ անհուն ստորնութիւններս բաւական չէի՞ն միթէ քեզի հանդէպ ունեցած սիրոյս չափը ցոյց տալու: »

Պիանքա իրաւունք ունէր. իւր որդին զինք չէր սիրէր. ու բնաւ սիրած ալ չէր: Միրտը երբեք ազնուական զգացումով չէր բարախած, և երբեք յօռի հետքերու չէր դիմաբերած: Մանկութենէ ինքն իրեն ազատութեան թողուած, ապօրէն ծնունդ, ո՛չ անուն ունէր, ո՛չ մականուն՝ հասարակաց առջև ներկայանալու համար. չափազանց ներողամտութեամբ կըթուած, Նորպերդ, թերութիւններով ու անկարգ հաճոյքներով սնած էր, որոնց վրայ մայրը աչք կը զոցեր, անշուշտ՝ որովհետև այդ որդին կը յիշեցներ այն մարդը՝ զոր իր երիտասարդութեան ժամանակ սաստիկ սիրած էր, սէր մը՝ միջնեւ պաշտելու աստիճան:

Լսած ըլլալով, թէ ոսկին այս աշխարհիս մէջ բժժանք (թըլըսըմ) մ'է որ ամէն թերութիւն ընկերական ո՛ր և է անհաւասարութիւն կը քօղարկէ, Նորպերդ զգաց իրեն մէջ ծնանիլ անհուն փափաք մը և փառասիրութիւն մը՝ հարուստ ըլլալու:

Եւ իրեն ինչ հոգն էր, եթէ այդ հարստութիւններն որոնցմով կը զեղծանէր, իր մօտ անպատուութեան և արցունքներուն պտուղն էին:

Մարգիգուհին լուծ էր. շունչը հեւքոտ էր, . . . խղճուէլ: Գրպանէն նրբահիւս թաշկիւնակ մը հանեց, անով քանի մը կաթով պաղ քրտինք չորցուց որ ձակտէն վար կը վազէին:

Նորպերդ նստած էր, արիւնհիւս չափ շըրթունքները խածնելով . . . Զայրացած էր, ոչ թէ զգածուած:

— Եւ դեր այս ամէնը ոչինչ է — ըսաւ Պիանքա, որ այն վայրկեանին այնպիսի ծանրակշիռ գրգռումի մը տակ կը գտնուէր որ հոգւոյն խորը եզածը դուրս յորդեց — հիմա ես աւելի գարշելի ոճիր մը պիտի գործեմ զոր կին մը կարող ըլլայ գործել երբեք . . . և առաջինը չէ . . . ուրիշ նոր անմեղ էակի մ'ալ արիւնը պիտի մտնեմ . . . զքեզ ազատելու, զքեզ վտանգէն փրկելու համար որ քեզ կսպաննայ:

— Բայց դու կը չափազանցես վիճակս — ըսաւ պատանին հանդարտութեամբ:

— Ո՛հ, կը չափազանցե՛մ — գոչեց Պիանքա ու ժգնութեամբ — շատ լաւ, դու քու աչքովդ տես:

Մէկ ձեռքը ծոցը խոթելով, նամակ մը դուրս հանեց և Նորպերդին սուսաւ:

Վերջինս կապոյտ գոյն մ'առաւ:

Այն նամակը ոճիր մը կը պարունակէր զոր մօրը կերպարանքէն գուշակեց: Գողգոթուն ձեռ-

քով մը զայն բացաւ և կարդաց.

«Մարգիգուհի՛,

«Շատ կը ցաւիմ որ ստիպուած եմ ճշմարտութիւնը երեւան հանելու, բայց դուք կ'ուզէք «և ես ալ ձեր փափաքը կը լրացնեմ: Պարոն «Նորպէրդի պարտքերը ութսուն հազար Ֆրանքի «կը հասնի, յաւելեալ քանի մը փոխանակագրերու՝ «երեսուն հազար Ֆրանքի արժողութեամբ, փո- «խանակագրեր՝ զոր ուրիշ անձի մը անուամբ «ստորագրած է, որպէսզի անոր զեղչը դիւրա- «նայ . . . »

— Ո՞վ է այս թշուառակա՛նը որ քեզի գրած է, — գոչեց ան, կատաղաբար կոխկռտելով նամակը առանց ընթերցումը լրացնելու:

— Գրուածը ճիշտ է թէ ոչ — հարցուց Պիանքա առանց պատասխանելու որդւոյն հարցումներուն:

Պատանին ժխտական պատասխան մը պատրաստելու վրայ էր, երբ նոր մտածում մը մտքէն անցաւ, ուստի փոխելով իւր որոշումը:

Ճիշտ է, մայրի՛կ, ճիշտ է — մրմնչեց անոր առջեւ ծունկի գալով — վերջին անգամ մ'ալ ներէ՛ ինձի, կ'երզնում որ ա՛յլ եւս զքեզ պիտի չտըհաճեցնեմ:

Պիանքա անոր գլուխը իր ձեռներուն մէջ առած՝ կը համբուրէր մօլիգնութեամբ: Ժպտալը շրթներուն վրայ վերադարձած էր:

— Ո՛չ մրայն քեզի կը ներեմ, Նորպերդս . . .

ըսաւ արիւնը — այլ ա՛նէն բանի դարձանը պիտի գտնեմ: Գիտեմ որ փոխանակազրերը Մարագի քողն են, և երեք ամիս ժամանակամիջոց ունին: Լա՛ւ, ուրեմն, երեք ամիսէն քու պարտքերդ պիտի վճառուին, փոխանակազրերը Լտ պիտի առնուին, և դու պիտի հարստանաս:

— Իրաւցնէ, դու իմ բարի հրեշտակս ես — գոչեց Նորպերգ, և երախտագիտական զգացումով մը իր մօր վիզը փաթթուեցաւ, և գաշն համբոյճներով ողողեց:

Այդ պահուն քանի մը թեթեւ քայլեր լսուեցան քովի սենեկին մէջ, Պիանքա սարսռեցաւ և իսկոյն որդիէն բաժնուեցաւ:

— Ռինան է — ըսաւ — ինձի բարի լոյս մաղթելու կուգայ: Չեմ ուզեր որ քեզ տեսնէ, Միւս կողմէն դուրս ելի՛ր — աւելցուց, ցոյց տալով գորգով ծածկուած դռնակ մը:

— Մնաս բարով, մա՛յր իմ, կամ չաւ ևւս, փութով ցտեսութիւն:

Եւ պատանին անհետացաւ, երբ սենեկին դուռը կը բացուէր. . . օրիորդը բոլորովին զլարթ և ժպտադէմ կը տեսնուէր սեմին վրայ:

Ե.

Պոսկոյ Նուովոյ ճամբուն գրեթէ վերջին ծայրը, չքեղ պզտիկ պալատ մը կը տեսնուէր,

որուն ճարտարապետութիւնը հիանալի էր ոճին ներդաշնակութեամբ, Յաւերժահարսի մը տաճարին նման: Ասիկա միլիոնատէր սեղանաւոր Մարագի բնակարանն էր:

Տասն և ութ տարեկան հասակին, Մարագ թշուառ և որբ մնացած, ստիպուած՝ ճաշարաններն ու սրճարանները կը շրջէր, որպէսզի լուցկիներ ծախելով իր օրապահիկը վասակի, ծեր նաւաստիի մը հրաւերքն ընդունեցաւ, որ իրեն կ'առաջարկէր վաճառականական առագաստանաւով մը մեկնիլ դէպի Աւստրալիա:

Մարագ քսան տարի հեռու ապրեցաւ հայրենիքէն, և երբ հո՛ն վերադարձաւ այլեւս չէր այն կարկարուն ու պատուած զգեստներով երիտասարդը, որուն բոլոր ունեցած ինչքը գամբիւղի մը մէջ է ամփոփուէր: Խելքով և ճարտարութեամբ Մարագ կրցած էր դիզել հինգ միլիոնի զրամագլուխ մը և մտածած էր զալ վայելել այն քաղաքին մէջ որ իր ծնանիլը տեսած և իր անցեալ խեղճութիւններուն ականատես վկան էր: Սակայն կենցաղասերին կեանքը իր զօրաւոր կազմուածքին յարմար չէր, անիկա շուտով զգաց ժամանակի մը համար իր ֆիզիքական և մտաւորական յատկութիւններով զբաղելու պէտքը: Ուստի նո՛ր զարկ մը տուաւ իր գործերուն, փոխառութիւններով զեղջավաճառութիւններով և Սակարանով զբաղեցաւ և քիչ ժամանակէն ամենանշանաւոր և ամենաբախտաւոր սեղանաւորնե-

ըէն մէկն եղաւ:

Մեր պատմութեան թուականին, Մարագ յիսուն և վեց տարեկան էր, բայց քառասունի չափ ցոյց կուտար: Արտաքին երեսօթով յաղթանդամ, կայտառ և խրոխտ էր: Դէմքը ձիթագոյն, մազերը դեռ սեւ, աչքերը վառվռուն, որոնց մէջ կը կարդացուէր բուն կիրքեր արտայայտելու ոյժ մը, և միւս կողմանէ ժամանակ մը կամաւոր կերպով զանոնք կեղծելը: շրթունքներն ալ միշտ բաց էին մարդասիրական ժպիտով մը: Իր ամէն շարժումն և երուն մէջ վերջապէս կը տեսնուէր իր բնաւորութեան խրոխտութիւնը ու հոգւոյն վեհանձնութիւնը:

Դեկտեմբերի միջնադ առաւօտ մը, մեր պատմած տեսարանէն չորս ամիս վերջ, Մարագ մուշտակապատ լայն զգեստի մը մէջ փաթթուած թիկնաթուռի մը վրայ երկնցած էր իս գրասենեկին մէջ: Իր առջեւը հին սճով փողոսկրագարգ գրասեղանի մը վրայ, կը տեսնուէին քանի մը ցիրուցան թղթեր, բացուած գիրք մը, կաշիէ թղթթապանակ մը՝ թղթերով ու պիտակներով լեցուն, և արծաթէ կաղամար մը:

Կարծես Մարագ թեթե անհանգստութիւն մը ունէր. ստէպ աչքը պատուհանին կը դարձնէր, որուն քով, ընդարձակ վարագոյրին տակ կիսով չափ ծածկուած, ձերմակ մազերով ձերունի մը կը նշմարուէր, որուն անուշ դիմագծութիւնը ցոյց կուտար թէ, իր ծաղիկ հասակին մէջ վիշտեր քա-

չած էր:

Լաւրինտիոս սենեկապանն էր, կամ աւելի ստոյգ Մարագի մտերիմ խորհրդակիցը:

— Դեռ չի՞ տեսնուիր—հարցուց սեղանաւորը տեսակ մը զայրոյթով:

— Ո՛չ, տէր իմ, և կը տարակուսիմ որ զայ:

— Ահաւասիկ հոս է մազնէսը որ գինք կը քաշէ—բաւ Մարագ, ցուցնելով գրասեղանի վրայի թղթապանակը:

— Ճիշտ է . . . բայց—հարցուց Լաւրինտիոս տեսակ մը հետաքրքիր շեշտով, տիրոջ մօտենալով— Ի՞նչպէս կ'ըլլայ որ Պիանքա մարգիզուհին այսչափ պարսն Նորպեղբի գործերով կ'զբաղի:

— Ահա առեղծուած մը՝ որուն լուծումը չեմ կրցած գտնել: Նախ կասկածեցայ թէ այս միայնակ, որբ պարոնը, որուն անունը ո՛չ ոք գիտէ, ուրիշ մէկը չըլլայ բայց եթէ ապօրինի ծնունդ մը . . . բայց երբ կը մտածեմ թէ մարգիզուհին, հակառակ իր շարչարուած դիմագծութեան, երեսուն և հինգ տարեկանէն աւելի չի կրնար ըլլալ, այն ատեն կը յանգիմ այս գաղափարին թէ գուցէ իր մէկ սիրահարն ըլլայ:

— Այս վերջին ենթադրութիւնը անշուշտ ամենաստոյգն է, և նոյնը կ'ապացուցանէ այդ աիկնոջ անպարկեշտ կենցաղը . . . :

— Կեսնք մը՝ որ ազնուական կերպով կրնար մաշուած ըլլալ: Ի՞նչ կը պակսէր Պիանքայի, Ռուփելպէլա մարգիզուհին: Ոչինչ: Հարուստ էր,

պատուաւոր ամուսին մ'ունէր, մարդ մը որ զինք
կը պաշտէր: Շատ լաւ. այս մարդը իր պատճա-
ռաւ խննթեցաւ . . . անունը զինք տիգմին մէջ
նետեց . . . հարստութիւնները վասնեց գարշիլի
անառակի մը ախտերը սնուցանելու համար: Քա-
նի որ երիտասարդ էր և գեղեցիկ զինք պաշտող-
ներ չպակեցան, որոնց իր անձին վստով ու-
րանոր հաճոյքներ կ'ստեղծեր, բայց հիմա բո իր
գեղեցկութիւնը սկսեր է խամրիլ, թոխափիլ և
սիրահարները կը հեռանան, ինք ուր'չ ուր և
գժոխային գաղափար մը ծրագրած էր . . . Քիչ
մը ժամանակ թորինոյէն կը բացակայէ և երբ
գարձեալ մէջտեղ կ'երեւնայ՝ հետը միշտ միամիտ
ու գեղեցիկ աղջիկ մ'ունի. չի գիտցուիլ թէ
ուսկից ձեռք ձգած է . . . և իր ամբարիշտ օրի-
նակովը քիչ ժամանակի մէջ կը յաջողի այդ կու-
սական սրտին մէջ թափանցիլ տալ իւր գիւտ-
կան սկզբունքներն և այն ատեն ժպտելով զինք
վատահամբաւութեան ճամբան կ'առաջնորդէ . . . :

— Անամօթ — գոչեց Լաւրինաիս կատա-
ղարար:

Այս խօսքը Մարգար գունատեց:

— Եւ ինչ պիտի ըսես դու — խօսք տուաւ
սա՛ դառն ժպիտով մը — եթէ տէրք ալ մասնակ-
ցութիւն ունենայ նման վաճառաշահութեան մը:

Հազիւ սանձուած սարսափի ազդակ մը
պոռթկաց ծառային շրթներէն.

— Անկարելի է — ըսաւ գրեթէ ինքն իրմէ

դուրս ելած — անկարելի . . . դուք համոզուած չէք
խօսիր: Ձեր աղնիւ սիրտը, ձեր աղնիւ զգացում-
ները, պէտք է որ շգուշանան այդպիսի անբարիշա
գազափարէ մը:

— Լաւրինաիս — մրմնչեց սեղանաւորը
տխուր ձայնով — ես կը զգուիմ այն կինէն, որուն
անունը ամէն ախտերու նշանագրոյմն է, . . . կը
դողամ երբ անոր հետ պիտի խօսիմ . . . և սակայն
այս վայրկեանին կ'ըլձամ . . . կը փափաքիմ: Անիկա
ինձի պէտք է . . . վասն զի այս ձեռնարկին մէջ
իմ սիրտս իրաւախոհ է:

— Արդեօք մարգիզուհիի՞ն սիրահարուեցար:
Ուրեմն կրցաւ զքեզ ալ հրապուրել:

Մարագ խոր տհաճութեան նշան մ'ըրաւ. յե-
տոյ ծառան իր քով նստեցնելով, ցած ձայնով
շարունակեց:

— Լսէ՛, ծերո՛ւկս և մասնաւորապէս ուշ գիւր
որ զիս չընդհատեց. տասնը հինգ օր առաջ կառ-
քովս Փոյ գետէն կ'անցնէի, երբ բաց, շքեղ, եր-
կանիւ կառք մը քովէս անցաւ: Հազիւ ժամանակ
ունեցայ ակնարկ մը տալու, բայց բաւական եղաւ
սրտիս մէջ տակն ու վրայութիւն մը բերելու: Այն
երկանիւ կառքին մէջ կար Պիանքա մարգիզուհին
օրիորդի մը ընկերակցութեամբ, որ աղջկան մը
թարմութիւնն ունէր: Ի՞նչպէս նկարագրեմ քեզի,
Լորէնցո՛յ: Երեւակայէ այն ուաֆայելական հրեշ-
տականման տիպարներէն մին, զոր հազիւ կը հա-
մարձակինք երազել մեր քսանամեայ գարնանային

տարիքին մէջ: Տուն եկայ՝ փոթորկալից սրտով: Ես, որ երկտասարդութիւնս մաշեցի աւանց սիրոյ, աւանց յուզումի, ցած ու գրեհիկ մարդկանց մէջ, որ սիրոյ մասին նիւթական գազափար մը միայն սննէի, ես որ երբեք զգածուած չէի կեռլ մը տեսքէն, ... կը շփոյթի որ սիրտս կը բարսխէր, կայրէր, բուրն կրքի մը կրակին տակ, ... կը զգայի թէ պարաստ էի կեանքս տալ այդ աստուածային էակին մէկ ժպտին համար: Կուզէի ինքզինքս մարդիզոհիին ներկայացնել... վարանցոյ: Երկու օր վերջ կայսերական թատրոնին մէջ կրկին տեսայ հրեշտակը զոր կ'երազէի, հանդիպակաց օթեակի մը մէջ էր: Չէի կրնար աչքերս անկից բաժնել: Իր մարտը հաւելթածել գէմքին արտայայտութիւնը, իր անուշ զիմազծերուն ներդաշնակութիւնը, այն ճակտին սպիտակութիւնը, որ հրաշալի բանասանդձութեան մը ամենագեղեցիկ էջերէն միայն կը հաստատէր, իմ սրտիս հետ կը խօսէին՝ չլսուած, խորհրդաւոր և յուզիչ լեզուով մը: Կը զգայի զանիկա սիրելի մարդ սպէս, անհուն սիրով...:

«Մարդիզոհին զիս տեսաւ և ողջունեց. ես ողջունը փոխանակեցի և քիչ վայրկեան վերջ, անգիմադրելի սթէ մզուած, իր օթեակը ներկայացայ: Յրիտհրը բոլորովին տեսարանին մէջ ընկղմած իմ ներս մտնելս չնշմարեց, բայց Պիանքայի մէկ խօսքէն գլուխը շրջեց, ժպտեցաւ ինծի և նորէն տեսարանին դարձաւ: Ես և Պիանքա քանի մը խօսք փոխանակեցինք, բայց այն քանի մը

բառերուն մէջ մենք զիրար հասկցանք, և իրարմէ բաժնուեցանք միակ բառով մը. «վսրը»:

«Գլուխս բոցերու մէջ պալատ վերագարձայ: Դժոխային զիշեր մ'անցուցի: Հետեւեալ օրը մարդիզոհին ինծի եկաւ, աղջկան պատմութիւնն բրաբացատրեց թէ որչափ ծախս բրած էր անոր համար և ինչպէս տրամադիր էր զանիկա ինծի յանձնելու: Պայմաններու մասին խօսք բացաւ, բայց ես ընդմիջեցի. «Ինչ որ ալ ըլլայ, ըսի, ես պատրաստ եմ երկու ձեռքով ալ գանսնք ստորագրելու»: Տրկինը ճառագայթող ուրախութեամբ մեկնեցաւ, ըսելով ինծի. «ու՛թ օրէն կուգամ»: Այսօր ութերորդ օրն է. ահա ինչո՛ւ անոր կսպասեմ:

— Բայց ասիկա սոսկալի, անպատիւ բան է — թոթովեց Լաւրինտիոս — և այդ աղջիկը ս' և է տեղեկութիւն մ'ունի՞ այս բաներէն: Ո՛հ, տէ՛ր... դոք անշուշտ պիտի չուզէք այսպիսի անարդ, շահասիրական առեւտուր մը յանձն առնել... ո՛չ ոչ... լաւ մտածեցէ՛ք:

— Բաւական է, բուական է — գոչեց Մարագ զայրոյթի շարժումով մը — ես բու խորհուրդներուդ կարօտ չեմ... սպասէ՛, երբ հարցնեմ, այն ժամանակ կ'ըսես:

Խեղճ ծառան գլուխը ծռեց բոլորովին շփոթած:

— Բայց չե՞ս հասկնար — ըսաւ Մարագ — որ քիչ մը շուտ քիչ մը ուշ, այդ օրիորդին համար վախճանը նոյն պիտի ըլլայ: Այդչափ քիչ համա-

բում ունիս վրաս որ կարծես թէ ես անոր եր-
ջանկութենէն զատ ուրիշ բանի՞ կը ցանկամ:

Դե՞ն Լաւրինտիոս պատասխանն չտուած, ըս-
պասաւոր մը, սենեակին դրան կապոյտ թաւիչէ
վարագոյրը վերցնելով Ռովէրպէլլա մարգրիտուհիին
գալուստը իմացուց:

Մարագ հազիւ ժամանակ ունեցաւ ամփոփ-
ուելու և դիմագծութիւնը շտկելու, երբ Պիանքա
ներս մտաւ: Կապոյտ թաւչէ վայելուչ վերարկուի
մը մէջ փաթթուած էր ան և զլուխը միեւնոյն
գոյնով զլխարկ մ' ունէր, որ աւելի դուրս ցայտիլ
կուտար անոր այտերուն սաստիկ աժգունութիւ-
նը: Ձեռնոցաւոր մէկ ձեռքը սեղանաւորին կար-
կառեց, կէս ժպտով մ' ըսելով.

— Տեսէ՛ք, ինչպէ՛ս ճիշտ եմ:

— Մ'ն, դուք շա՛տ բարի էք— պատասխանեց
Մարագ, թիկնաթոս մը հրամցնելով որ նստի:

Վայրկեան մը լուռ կեցան:

Լաւրինտիոս հեռացաւ և իրենք մինակ մնա-
ցին:

Սեղանաւորը կարծես ունելիով վառարանին
կրակը շտկելու զբաղած էր: Պիանքա հակարակ
իր համարձակութեան ի գուր խօսք կը փնտռէր
սկսելու: Կարծես ֆիզիքական ուժերը չէին օգներ
իր կամքին: Տժգոյն դէմքը բոցավառուեցաւ,
սիրտը կը բաբախէր պայթելու աստիճան, մերթ
ընդ մերթ շղաձգութիւն մը իւր երեսին դնողը-
ները կը կծկէին:

— Պարոն— սկսաւ վերջապէս չոր ու նշանա-
կալից շեշտով: Դուք գիտէք թէ ինչո՞ւ համար
ևս հոս եկայ:

Մարագ թողուց սենիին և ուշադրութեամբ
անոր նայելով՝

— Գիտեմ — ըսաւ — դուք կ' ուզէք զի մար-
դիկներէն ամենէն երջանիկն ընել . . . ուրեմն ին-
չո՞ւ այդչափ կը վարանիք — աւելցուց աղերսա-
կան ձեւով մը:

Այս խօսքերը մարքիգուհիին բնական գոյնը
վրան բերին: Մտնալով ամէն խոհեմութիւն, ա-
մէն արժանապատուութիւն, անհանգստութեամբ
մէկշի նետելով դիմակը . . .

— Լաւ ուրեմն, այո՛ — ընդմիջեց թրթուռն
ձայնով մը — ի՛նչ բանի համար սպասել. ինչո՞ւ
քեզի հետ ձեւակերպութիւններ ընել, հիմա կամ
վերջը միեւնոյն բանն է . . . :

Լուց, և իր նայուածքը Մարագին հանդի-
պեցաւ, որ նրտատրոփ և անձկալից հազիւ կը
չնչէր: Երկուքին աչքերն ալ կարծես դաշնադրու-
թեան մը պայմաններուն վրայ սեւեռած էին:
Եւ դիրար հասկցան, վասն զի ի վերջոյ Պիանքա-

— Հարիւր հազար ֆրանք հնչուն դրամ և
Նորպերդին ստորագրած փոխանակապրերը . . .
կ' ընդունի՞ք — ըսաւ:

— Ամէնը կ' ընդունիմ . . . առանց ո՛ր և է բա-
ցառութեան, . . . մանաւանդ կը կրկնապատկեմ
գումարը, ինծի շատ սուղ չերեւնալով այդպիսի

երջանկութեան մը համար հատուցանելիքս: Առէ՛ք — և այս ըսելու ժամանակ գրասեղանի վրայ գտնուած գրամապանակը անոր կարկանոց — ասոր մէջ ձեր փափաքածէն աւելին կայ, հիմա ա՛յլ եւս վրան չխօսինք:

Յաղթութեան ճառագայթ մը ցածեց մարգիզուհիին գէմքին վրայ. «Նորպէ՛րդս, Նորպէ՛րդս մըմնչեց, դու հարո՛ւստ պիտի ըլլաս և պիտի ազատի՛ս»: Եւ Մարագին դառնալով.

— Դուք ազնուական և առատաձեռն էք, և Ռինան ձեզի՛ հետ երջանիկ պիտի ըլլայ, ... այս իրիկուն անիկա հոս է:

— Այս իբրիկո՛ւն — գոչեց սեղանաւորը ուրախութեամբ լեցուած: — Բայց ի՛նչպէս պիտի համոզէք որ նա ոտք կոխէ այս պալատին մէջ:

— Միտ գրէք ինձի և կ'ըմբռնէք: Այս երեկոյ Ռինա Մինէթթային հետ Գարինեանոյ պիտի երթայ: Հանգէսէն վերջ, կառքը փոխանակ զինքը իմ տունս բերելու, հոս թող բերէ:

— Բայց օրիորդը պիտի չիմանայ խաբէութիւնը:

— Մի՛ վախնաք... Ռինա չա՛տ միամիտ է: Միւս կողմանէ կառապանը դասը սերտած պիտի ըլլայ. պիտի ըսէ որ ես հոս իրեն պիտի սպասեմ... մնացածը ձեր իմաստութեան կը թողում...:

Եւ խնդալով ծաղրալից ժպիտով մը Պիանքա ոտքի ելաւ:

— Ես պէտք է մեկնիմ — ըսաւ — վասն գի

ինձի կ'սպասեն. հոս ընելու գործ մը չմնաց: Եւ շնորհալից յարգութիւն մ'ընելով սեղանաւորին որ աջլեւս պէտք մը չունենալով տիկինը խօսքի բռնելու, իրեն ուղեցկցած էր մինչև դուռ աւելցուց ուրախութեամբ: — Ա՛յս իրիկուն . . .:

— Վե՛րջապէս — գոչեց Մարագ առանձին մնալով, և թիկնաթուփն վրայ իյնալով — վե՛րջապէս:

Զ.

Նոյն երեկոյ, ժամը եօթին առեկները, Ռինա սպիտակ և ալեծածան, շքեղ՝ բայց պարզ շրջագետտով մը կազմ և պատրաստ՝ հայելիի մ'առջև նստած էր: Մինէթթա ետեւը կեցած, քանի մը մարգարիտի թելեր կը հիւսէր իր գեղին խոպոպներուն մէջ, որ ճոխաբար կը ծածանէին ուսերն ի վար:

Դատարկասպորտ և երջանիկ կեանքը, զոր որբուհին իր մայրազրին քով կը վարէր, իր Փիգիքական կազմուածքին այն աննման շնորհքը, այն քնքուշ քալուածքը զինքն օժտած էր, իր միտքն ալ զարմանալի կերպով զարգացած էր ի մեծ ուրախութիւն և պատիւ մարգիզուհիին: Ռինա երջանիկ կ'զգար ինքզինք՝ այս ընակարանին մէջ: Շատ կ'ախորժէր այն նոր, անլուր շքեղութենէն, ... կը սիրէր այն կիներ որ իրեն սիրոյ

յայտնի նշաններ ցոյց կուտար, որ օրը հազար անգամ իր կուրծքին վրայ կը սղմէր («աղջիկս») ըսելով:

Թորինոյ հասնելնէն ամիս մը վերջ, մարզի-
զունին, պատրուակով թէ Ռինայի սեւ գգեստ-
ներն իրեն դառնալից յիշատակներ կը յիշեցնէին,
որով կը մեկամաղձոտէր, փափաքեցաւ՝ որ որբու-
հին իր երիտասարդութեան և իր գեղեցկութեան
յարմար գգեստներ հագուի:

Եւ Ռինա, պահելով հանդերձ իր սրտին մէջ
խեղճ կելդրուտի սիրելի յիշատակը, նոր մօրը
տհաճութիւն չպատճառելու համար՝ անոր իղձե-
րուն հաւանեցաւ:

Որոշուած էր որ մինչեւ սուգի տարին լրա-
նալուն աղջիկը ընկերութեան մէջ պիտի չմտնէր.
բայց դեր երկու ամիս չէր անցած որովհետեւ
Ռինա կատարեալ կըթութիւն առած կը տեսնուէր
երբ մարզիզունին, իր բոլոր ունեցած ճարտա-
բութեամբը սկսաւ գուարճութեան, մոլեգին սերը
անոր մէջ թափանցել տալ: Երեկոյ մը, որպէսզի
տխրութիւնը փարատի, որ, ըստ Պիանքայի, կը
մթազնէր օրիորդին գեղեցիկ աչքերը և վարդա-
գոյն այտերը կը տժգունէր, գայն թատրոն տա-
րաւ: Ռինայի համար այն իրիկունը հիացումի
եկեկոյ մ'եղաւ, ... այն հեշտալի երագներէն մին,
որ կը փափաքէր յաւիտեան տեւեն: Այն ժա-
մանակէն սկսեալ զգաց որ գուարճութեան ան-
դիմադրելի ծարաւ մը ծընաւ սրտին մէջ, ... կը

սկսէր զգալ հետզհետէ աճող տխուր ճակատագիրը
այն տիկնոջ՝ որուն քով կը գտնուէր, և թէպէտ
գեւ թերութեան ոչ մէկ ստուէր չէր եկած խոռ-
վելու իր հոգւոյն անդորրութիւնը, իր երագներն
այլևս այնչափ մաքուր և ժպտուն չէին՝ ինչպէս
երբեմն:

Այնպէս մինչև այն իրիկունը հասած էր, ...
վերջինը՝ զոր պիտի անցնէր մայրագրին տանը մէջ:

Ռինա բոլորովին տգէտ ըլլալիքին, սովորա-
կանին պէս կը զարդարուէր թատրոն ելթալու
համար: Եւ երբէք օրիորդը ա'յսչափ հրապուրիչ
չէր եղած: Աչքերուն մէջ գոհութիւնը կը փայ-
լէր... իսկ դէմքը անպատմելի երջանկութեան
մը արտայայտութիւնն ունէր....:

Յանկարծ ետև դարձաւ հայելիին մէջ տե-
սած էր որ մարզիզունին ներս կը մտնէ:

— Ի՛նչպէս գեղեցիկ ես, աղջիկս — ըսաւ
Պիանքա գգուալիւր շեշտով մը, դիտելով գայն գոհ
դէմքով մը — կարծեմ, քիչ աղջիկ կայ որ քեզի
հուսասարի:

Ռինա շիկնեցաւ, ոտքի ելաւ և անմեղ շար-
ժումով մը մարզիզունին փարելով՝ պատանեկան
մաքուր ժպտով գայն համբուրեց:

— Ի՛նչ բարի ես, սիրելի մայրիկ և ո՛րչափ
քեզի կը պարտիմ ինձի շնորհած ուրախութեանցդ
համար: — Բայց — կրկնեց աղջիկը, իսկոյն լուրջ
կերպարանք մ'առնելով և հառաչելով — ինչո՞ւ
այս երեկոյ դու թատրոն չես գար: Գիտես որ ես

առանց քեզի չեմ գուարճանար:

Ռինայի շեշտը այնպիսի սերտ գորով մը կը յայտնէր, որ Պիանքա ցնցուեցաւ: Բայց փայլատակի մը պէս անցաւ: Անուշ մը գլուխը շարժելով և կատակով մը.

— Խենդուկ, — ըսաւ — քեզի ըսի որ կարևոր գործ մ'ունիմ: Կը ցաւիմ, բայց ի՛նչ ընեմ աղջիկս. քու երջանկութեանդ համար է: Երբ դու տունն ալ մնաս, տե՛ս, ես չպիտի կարենամ քեզի հետ ընկերութիւն ընել... ուստի շատ աւելի ուրախ կ'ըլլամ որ փոխանակ քեզ մինակ ձգելու, համբերով մեզ բաժնող ժամերու զանդազուծիւնը, գիանամ՝ որ դու տեսարաններով զբաղած ես: Փութա՛ ուրեմն, սիրելիս, լմնցո՛ւր զարգերդ — շարունակեց մարգիզուհին, որ կարծես կը տարապէր, — ժամը գրեթէ ութն է... ես քեզ կը թողում, բայց շուտով տեսնուելու համար:

Եւ բուն ճիգով մը գրկեց աղջիկը, և գէպի դուռը գնաց: Հո՛ն հասնելով, զսպանակէ մը մըղուածի պէս ետև դարձաւ, թեւերը կարկռոց, ոչոնց մէջ նետուեցաւ Ռինան և քանի մը վայրկեան ուրիշ բան չլսուեցաւ՝ բայց միայն համբոյրներու փոխանակութիւն մը: Վերջապէս մարգիզուհին թափով մը բաժնուեցաւ օրիորդէն և մբմնչեց.

— Խե՛նթ եմ... մնա՛ս բարեաւ... մնա՛ս բարեաւ... և աներևոյթ եղաւ:

Գարինեանոյ թատրոնը այդ իրիկունը լեցուն

էր, բառական իմաստով: Շամունիի Լիճսան կը ներկայացուէր: Սիրոյ համար խենդեցող՝ այս լեռնուհւոյն դէպքերը, այն քաղցր ու ներդաշնակ երաժշտութիւնը, մէկէ աւելի անգամներ Ռինայի աչքերէն արցունքներ քամեցին, որ բոլորովին տեսարանին մէջ ընկղմած, չնշմարեց սեղանաւոր Մարագի մէկ ակնարկը, զոր իր օթեակէն Մինէթթայի ուղղեց:

Մտքով, ներկայացուած տեսարաններուն մէջ ընկղմած, օրիորդը թատրոնէն ելլելով, կառքը նստաւ, առանց ուշադրութիւն դարձնելու անոր բռնած ուղղութեան: Շուրջ քսան վայրկեանէն, կառքը՝ Ռինայի անձանօթ պալատի մը գաւթին մէջ կենալով, զարմացած հարցուց Մինէթթային.

— Բայց ո՛ւր եկանք: — Եւ գեռ սպասուհին շտապած ըսիլիքը, արդէն օրիորդը շնորհալի գլուխը դուրս հանելով կառքէն՝ կը գոչէր կառապանին. — Է՛յ, Անսելմո՛ս, ո՛ւր կը բերես մեզ: Ինչո՞ւ հոս կեցար:

— Մարգիզուհիին հրամանն այս է — պատասխանեց զաւեշտական սուր ձայնով մը: — Տիկինը ինձի պատուիրեց որ թատրոնէն վերջ ձեզ հոս բերեմ, ուր ինքը քեզի կ'սպասէ:

— Ո՛հ, ճիշտ է, ճի՛շտ է — գոչեց Մինէթթա իբրև մոռացկոտութենէն շփոթած:

— Ինչո՞ւ համար ինձի առաջ չըսիր — ըսաւ աղջիկը խնդալով և կառքէն իսկոյն վար իջնալով: Սպասաւոր մը մեծ սանդուղիին վրայ իրեն

կ'սպասէր:

Լաւրինտիոսն էր:

— Հրամեցէ՛ք — ըսաւ նա բռնի կերպով —
ինծի հետ եկե՛ք, մարգրիգուհին ձեզի կ'սպասէ:
Երկայն որանէ մ'անցան, որուն պատերը
թանկագին փորագիր պատկերներով, գծագրու-
թիւններով, և հին արհեստաւորներու ծրագիծե-
րով ծածկուած էին, որուն մէկ տնկեան մէջ կը
նշմարուէր խեփորագարդ սանդուղ մը, ոսկեգօծ
պղնձէ բաղրիկներով, որուն աստիճաններն պարս-
կական ամենագեղեցիկ գորգով մը ծածկուած էին:
Սանդուղէն ելլելով իրենք զիրենք գտան փոքր
սրահի մը մէջ, որուն խորը ոսկեգօծ կանանչ
թաւշէ դրան վարագոյր մը՝ հրաշալի յարկաբա-
ժինի մը մուտքը կ'աւետէր: Լաւրինտիոս վեր
վերցուց վարագոյրը և օրիորդը թէպետև վարժ
մարգրիգուհին տան շքեղութեանց, ասուհանդերձ
կարծեց երագել՝ ինքզինք գտնելով բոլորովին
հայելապատ և ոսկեգօծ, լուսահեղձ, բուրումնա-
ւէտ և բուն իսկ արևելին շքեղութեամբ զար-
դարուած սենեակի մը մէջ: Ծերունի սպասաւորը
խնդրեց Ռինայէն սը նստի, յետոյ խոնարհ յար-
գանօք ըսաւ իրեն զողգղացոյ ձայնով:

— Սպասեցէ՛ք վայրկեան մը. հիմա կուգա՛յ:

— Եւ դեռ օրիորդը զարմանքէն չ'սթափած, Լաւ-
րինտիոս աներևոյթ եղած էր:

Աղջիկը մինակ մնալով չորս կողմը նայեցաւ
տեսակ մը հետաքրքրութեամբ և զարմանքով:

Ինքը սպասաւորին կը հետևէր, առանց վարանե-
լու, առանց ո՛ր և է դիտողութիւն մ'ընելու, բայց
հիմա՝ այս սենեակին մէջ գտնուելով, սրտի ձըն-
շում մը, անհուն յուզում մը կ'զգար:

Երեք վայրկեան այսպէ՛ս անցաւ: Ռինա
երագի մը մէջ կը թափառէր, երբ անակնկալ
կերպով իր մտած կողմի հակադիր դրան գորգը
վեր բարձրացաւ և շքեղ մութ կարմրագոյն թաւշէ
զիշերնոցով, ոսկեհիւս զոտեկապով, մարդ մը
ներս մտաւ:

Մարագն էր:

Ռինա այլայլած ընկրկեցաւ: Ներքին ձայն
մը իրեն փափսաց թէ, ա՛յդ ժամուն, ա՛յդ մար-
դուն ներկայութիւնը իր գոյութիւնը պիտի որոշէր
նախագագցում մը իրեն կ'ըսէր, թէ այդ մարդը
եկած էր զինքը անպատուելու:

— Եւ մայրի՞ կս... հարցուց նա տկար ձայնով:

— Մարգրիգուհին պիտի գայ... մի՛ տարա-
կուսիք — ըսաւ սեղանաւորը, ժպտիլ ձեացնելով:
Մարագի դէմքը գունատ էր, աչքերուն տակի եր-
կու կապտագոյն ակօսները տասն և հինգ օրէ ի-
վեր կրած շարատանջ յուզումները ցոյց կու-
տային:

Մարագ նստաւ և որբունին ալ քովը նստե-
ցուց, անոր մէկ ձեռքը իրեններուն մէջ առնե-
լով. քանի մը ոռպէ լուութենէ վերջ, զոր Ռինա
չէր համարձակէր խզել, մըմնչեց՝ ամենափափուկ
և անուշ ելևէջ մը տալով իր ձայնին:

— Ի՞նչ գեղեցիկ ես, աղջի՛կս, և ի՞նչպէս երջանիկ կ'զգամ ինքզինքս քեզի մօտ:

Օրիորդը անբացատրելի սարսափ մը և տհաճութիւն մը զգաց այդ խօսքերէն: Գոյնը նետեց, աչքերը դարձան, և բարկութենէն ու զայրոյթէն շրթունքները կը դողդղային:

Մարագ պողատագին ակնարկ մը դարձուց, տխուր մը ժպտելով:

— Ռինա՛, ինչո՞ւ ինձմէ այդպէս կը փախչիս ... ինչո՞ւ կը վախնաս: Ես քեզի ո՛ր և է վրաս չեմ տար: Արդեօք ոճի՞ր մ'էր քեզի « գեղեցիկս, ... զքեզ կը սիրեմ, հրեշտակս » ըսելու: Եկո՛ւր հո՛ս, քովս եկուր: — Այսպէս ըսելով սեղանաւորը, մէկ ձեռքը երկնցուց որ զանիկա բռնէ. կրքի բուռն զգացումը կը փայլէր իւր աչքերուն մէջ և այտերը կ'այրէին:

Ռինա մինչև դուռը հեռացաւ:

— Պարոն, զիս ազատ թո՛ղ որ երթամ — գոչեց նա, ի՞նչ կուզես ինձմէ չեմ հասկնար... Հոս եկայ կարծելով մայրս գտնել, ... բայց հիմա կը տեսնեմ որ զիս խաբած են... ասի գարշելի տեղ մ'է, կ'ուզեմ երթալ:

— Եւ ո՞ւր կուզես երթալ — թոթովեց Մարագ:

— Ո՛ւր կ'ուզեմ երթալ, պարո՞ն... մօրս տունը... դու սուտ խօսեցար... մարդիգուհին հոս չէ:

Մարագ տխրութեամբ գլուխը կախեց, բայց տեսնելով որ աղջիկը սենեակին սեմէն դուրս կել-

լէ, քովը վազեց, բռնի ձեռներէն բռնեց, ջանալով ևս ե դարձնել: Բայց կարելի չեղաւ:

Ռինա՛, ըսաւ նա այն ժամանակ, զայրացած — Ռինա՛, դու այլևս չես կրնար մարդիգուհին քով երթալ:

— Ինչո՞ւ:

— Որովհետև անկարելի է:

— Սնկարելի՞, մե՛ծդ Աստուած. ի՞նչ կ'ուզես ըսել. կ'ուզես զիս խենթեցնե՞լ: Ի՞նչ բան կ'արգիլէ որ ես բարերարուհիս քով երթամ. խօսէ՛ ... օ՞ն, խօսէ՛ ... :

Մարագ չպատասխանեց. կարծես սաստիկ յուզման մը ենթարկուած էր:

— Մայրիկս կարելի է վտանգի մէջ է, գոչեց թափով մը օրիորդը — ըսէ՛ ինձի ճիշտը... պարո՞ն, ես քաջասիրտ եմ:

Սոսկալի անձկութիւն մը կը պրկէր աղջկան գեղեցիկ դիմագծութիւնը, որ լացնել կուտար:

— Ո՛չ, մարդիգուհին ո՛ր և է վտանգի մէջ չի գտնուիր — ըսաւ Մարագ շեշտով մը որ կը ջանար ինքզինքը հանդարտ և ծանր ցոյց տալ, բայց դժբախտաբար անհուն խռովութիւն մը զինք կը մատնէր — այս ժամուս հանգիստ կը քնանայ իր պալատին մէջ:

Ռինա գէշ զգաց, կապուտակ գունատութիւն մը պատեց իր վայելուչ դէմքը և սարսափէն աչքերը կը փերեկէին իր առջև տեսնելով ծանրա-կշիռ վտանգը:

— Ի՛նչ կ'ըսես, պարո՞ն, գոչեց ի վերջոյ: —
Ուրեմն ինչո՞ւ ես հոս եմ: Աստուած իմ... Աս-
տուած իմ, ես այլևս չեմ հասկնար:

Վայրկեան մը ձեռքերով դէմքը ծածկեց. յե-
տոյ հպարտ շարժումով մը կռնակը նետելով խան-
գարուած մազերը, գլուխը բարձրացուց դիւցազ-
նական կորովով, արհամարհալից, և անհուն ա-
տելութեան շեշտակի ակնարկ մը ուղղելով սեղա-
նաւորին դէմքին:

— Կուզեմ դուրս ելլել ասկից, ըսաւ թրթռուն
ձայնով, դու չես կրնար արգելել որ մօրս եր-
թամ: Թո՛ղ ի՛նչ իրաւունքով կուզես զիս կապտել:

— Ի՛նչ իրաւունքո՞վ, թոթովեց Մարագ ինքն
իրմէ դուրս ելած, յուզումէն դիմադծերը ծըռ-
մըռակելով և առանց իր խօսքին ոյժը մտածելու
— բայց դեռ չհասկցա՞ր որ ես զքեզ կը պաշտեմ...
որ դուն իմս ես... այո՛, իմս, վասն զի այն տի-
կինը դոր մայր կ'անուանես, ըքեզ ինձի ծախե՛ց...:

Անուր աղաղակ մը, դժբախտ աղջկան շրթ-
ներէն դուրս պոթկաց: Զգաց՝ որ կորսուած է
կամ գոնէ մեծ վտանգի մը մէջ կը գտնուի: Փոր-
ձեց փախչիլ, բայց սրունգները ծալուեցան և
պիտի իյնար, եթէ Մարագ չփութար զինք իւր
բազկած մէջ բռնելու:



է.

Քանի մը վայրկեանէն կարծես Ռինայի սրտի
բաբախումը դադարեցաւ, մեռելային գոյն մը պա-
տեց այտերուն վրայ և աչքերը փակուեցան:

Մարագ խելացնոր, շփոթած, և Լաւրինտիոսի
օգնութեամբ, որ աղջկան աղաղակին վրայ եկած
էր, արևելեան բազմոցի մը վրայ մեղմով զե-
տեղեց զայն, փորձելով քանի մը տեսակ խկու-
թիւններով զայն ուշաբերել: Անշարժ ու անզօր
օրիորդին վրայ խոնարհած մտիկ կ'ընէր անոր
ամենանուրբ շնչառութիւնը: Այն փափուկ և ան-
կենդան մարմնոյն առջև Մարագ սուր խղճի խայթ
մը կ'զգար, իր բերնէն հանած անզգոյշ բաւերուն
համար: Նա սրտէն կ'անիծանէր մարգիզուհին և
դարձուբանքով կը մտածէր այն վայրկեանը յու-
րում Ռինա պիտի արթննար, և հաւանաբար զին-
քը իւր քովէն պիտի վռնտէր:

Որբուհին բացաւ աչքերը և չորս բոլորը
նայեցաւ կարծես ապահոմնալու համար թէ մի՛
գուցէ եղածները երազ մ'ըլլային: Բայց հազիւ
թէ Մարագը նշմարեց իր ոտքերուն առջև ծնրա-
դիր, որ ապշած իրեն կը նայէր, խկոյն ձեռքերով
երեսը ծածկեց դառն արցունք թափելով: Թէպե-
տև ոչ մէկ անմաքուր մտածութիւն չէր անցներ
սեղանաւորին մտքէն, և եթէ յափշտակուած զայն
կը դիտեր, սաստիկ հոգատարութեան, պարկեշտ
զմայլումի, սաստիկ ցոււի զգացումով մ'էր:

— Ճիշտ է ուրեմն, մրմնչեց Ռինա լալով—
 ճիշտ է ուրեմն... այն կինը զոր ես կը սիրէի,
 որ օրուան մէջ հարիւր անգամ զիս կը գրկէր՝
 աղջիկս ըսելով, իմ կոշտեանս համար սրտին
 խորը երգուընցած էր։ Ո՛հ, պարո՛ն, ընդմիջեց
 աղջիկը յանկարծ, սրտածմլիկ շեշտով մը— ըսէ՛,
 թէ արդեօք զիս կը խաբէ՞ս... արդեօք կառա՞նկ
 մ'ուզեցիր ընել... ս՛հ, սոսկա՛լի բան է...

— Անտարակոյս սոսկալի և վատ, ըսաւ Մա-
 րազ, բայց դժբախտաբար ճիշտ... հաւատարիմ
 ծառայիս հարցուը, աւելցուց դառնութեամբ՝
 ցուցնելով Լաւրինտիօսը, որ բոլորովին խանդա-
 դատած անկիւն մը քաշուած էր։

Աղջիկը շարունակ կը հեծկտար։

— Մի՛ լար, մրմնչեց սեղանաւորը, տառա-
 պանքէն հագիւ լսելի ըլլալու ձայնով — Ինծմէ
 մի՛ վախնար, քու մէկ բարեկամդ եմ։ Խեղճ աղ-
 ջիկ։ Ես շմտածեցի թէ այդչափ գէշ պիտի դառնի,
 տմարդութեամբ ճշմարիտը խոստովանելովս։ Կը
 յարգեմ՝ քու վիշտդ, շարունակեց ոգևորուելով—
 բայց թո՛ղ որ խոնարհին այն գլուխները, որոնց
 խղճի խա՛յթը կը կրծէ իրենց խղճատանքը։ Վե՛ր
 բարձրացուը ճակատդ, ազնի՛ւ օրիորդ, տե՛ս այս
 մարդը, որ քու ոտներուդ առջև ներուամ կը խըն-
 դրէ... մտի՛կ ըրէ վայրկեա՛ն մը, վայրկեան մը
 միայն... և յետոյ... վանտէ քովէդ, եթէ քու սի-
 րոյդ անարժան դատես։

Հետզհետէ որ Մարազ կը խօսէր, Ռինա իր

խոշոր աչքերը կը բանար սևեռելով անոր վրայ,
 իսկ դէմքը տեսակ մը ապշութիւն կ'արտայայտէր-
 ակամայ զգացուած էր մինչև սրտին խորը։ Յե-
 տոյ շրթունքներն սկսան դողալ, ջերմ արցունք
 մը փայլեցաւ աչքերուն մէջ և թոթովեց։

— Խօսէ՛, պարո՛ն... ականջս քեզի է։

— Ո՛հ, շնորհակալ եմ, Ռինա՛, շնորհակալ եմ
 դու հրեշտակ մըն ես, գոչեց սեղանաւորը յա-
 փըշաակուած ուրախութեամբ մը։ Յետոյ վայր-
 կեան մը լռութենէ վերջ սկսաւ։

— Լսէ՛... կամ լաւ ևս ինծի նայէ՛։ Կը տես-
 նե՞ս իմ կարմրած աչքերը, տոգոյն դէմքս։ Տասն
 և հինգ զիշեր է որ աչքերս չեմ փակեր. տասն
 և հինգ զիշեր է որ վրադ կը մտածեմ։ Զհասկցա՞ր
 դեռ, մտիկ ըրէ՛։ Օր մը զքեզ տեսայ կառքի մէջ
 Պիանքա մարգիզուհիին հետ. կարծեցի թէ հրեշ-
 տակ մ'իջած ես երկնքէն։ Ես, ծեր միլիոնատէրս,
 որուն սիրտը համը էր սիրոյ համար, զգացի այն
 վայրկեանին որ կուրծքս պատռելու չափ կը բա-
 բախէր, սիրտս արիւնս զոր պաղած կը կարծէի,
 ըղեղս կը բորբոքէր։ Կարծեցի բանդագուշիլ, բայց
 իսկոյն նշմարեցի որ այլևս խաղաղութիւն պիտի
 չունենամ առանց քեզի։ Պիանքա մարգիզուհին,
 այն տիկինը որ առանց սարսելու զքեզ իր բազ-
 կաց մէջ կը գպուէր, քեզի տալով սրբազան ա-
 նուն մը, սրտի անունը, նպաստեց իմ ծրագիր-
 ներուս։ Զքեզ անոր հետ տեսնելով, իմ յաղթա-
 նակս դիւրին կարծեցի։ Եւ զքեզ ունենալու հա-

մար, ամէն ինչքս կուտայի: Ներէ՛ ինծի, Ռինա,
ես խենթ, յիմար մըն էի: Գիտէի... քանի մ'ան-
ծանօթ ... անհեթեթ ... անկարելի բաներ ... կը
կարծէի թէ դու նշմարած ըլլաս՝ իմ սէրս, դու-
շակած՝ իմ անձկութիւնս: Քու քաղցրիկ ու զը-
ւարթ հայեացքդ ինծի կարծել տուաւ թէ դոտայ
վերջապէս կին մը որ զիս կը հասկնայ, և ինքնի-
րենս կ'ըսէի, թէ քու սիրոյդ փոխարէն՝ բոլոր իմ
արիւնս, իմ բացարձակ իրաւունքներս ու իմ
կեանքս կուտայի ամբողջովին...:

Մարագ լսեց. գուցէ քաջալիրական խօսք
մը կ'ստղասէր: Բայց աղջիկը անշարժ, ապշած,
կարծես չէր ըմբռնէր:

— Ո՛հ, դժբախտաբար կ'զգամ թէ խենթ էի.
յիմար մըն էի, — շարունակեց սեղա՛ւաւորը: —
Խենթ, մտածելով թէ իմ հարստութիւններս ինծի
իրաւունք պիտի կարենային տալ քու սէրդ գնե-
լու համար. յիմար մը՝ կարծելով թէ կապակցու-
թիւն մ'ըլլայ կորդ ապաւաժ վէմի մը և սպիտակ
ծաղկի մը մէջ: Ո՛հ, դժբախտաբար իմս ուրիշ
բան չեղաւ բայց միայն ցնորք մը, մտախաբու-
թիւն մը, երազի մէջ տեսած արքայութիւն մը:
Վայրկեան մ'առաջ, երբ քու արցունքներդ տե-
սայ, քու վիշտդ, քու յուսահատութիւնդ, բոլոր
իմ յիմարութեանս, ցածութեանս անհեղեթու-
թիւնը ըմբռնեցի... ըմբռնեցի ո՛րչափ անարգ բան
էր իմ գործակցութիւնս այնպիսի վատահամբաւ
տիկնոջ մի հետ: Բայց միևնոյն ատեն իմ մէջս

ձայն մը լսեցի որ ինծի կը դռնէր. «Շատ լաւ,
եթէ քու դրամդ քեզի իրաւունք չտուաւ այս
հրէշտակային օրիորդին սէրը գնելու, սակայն
քեզի միջոցը տուաւ անոր պատիւը պահելու, ա-
նոր երախտագիտութիւնը, գնելու»: Ո՛հ, այո՛ —
հետևեց Մարագ վսեմ և դիւցազնական անձնա-
նաւիրական թափով մը, — այո՛, Ռինա՛, ինչպէս
զքեզ մարգիգունիին ձեռքէս ազատեցի, այսպէս
ալ պիտի փրկեմ քեզ ապագայ ամէն վտանգէ:
Դու ինծի համար սրբագան առարկայ մը պիտի
ըլլաս, առարկայ մը անհուն պաշտամունքի: Իմ
քեզի նկատմամբ ունեցած վերաբերումս հաւա-
սար պիտի ըլլայ անձինս. զքեզ պիտի սիրեմ՝
ինչպէս հայր մը՝ իր աղջիկը, և զբայր մը՝ իր
քոյրը: Աստուած ինծի ուժ պիտի տայ իմ շար
կիրքս իմ մէջս խեղդելու, և որովհետև այս երե-
կոյեան քեզ տուած նեղութեանցս փոխադարձ
հատուցում մը կը պարտիմ, ասկից վերջ կեանքս
պիտի մաշեմ զքեզ ենչանկացնելու համար: Խօսէ՛,
Ռինա... ըսէ՛ թէ գո՛հ ես:

Որբունին տխրութեամբ անոր նայեցաւ. վառ
կարմրութիւն մը կը գունաւորէր իր այտերը...

— Պարո՛ն, ըսաւ, դու բարի ես և յօժարա-
կամ, քեզ պիտի սիրեմ, ինչպէս հայրս պիտի սի-
րէի եթէ Աստուած զայն ինծի շնորհէր, ... բայց
ի՛նչ կը մտածեն ուրիշները իմ նկատմամբս: Ի՛նչ
պիտի համարեն թէ եղած ըլլամ, զիս քեզի հետ
տեսնելով: Մտածէ՛, որ ես խեղճ աղջիկ մըն եմ

անհայր, անմայր, անանուն, ողորմութեամբ անած քիչ մ'ասկից, քիչ մ'անկից, ... ընդհակառակն գո՛ւք հարուստ պարոն մը...:

— Դեռ վրաս կը տարակուսի՞ս... Հե՛ս հաւատար խօսքերուս... ընդմիջեց Մարագ աննկարագրելի շեշտով մը՝ խրոխտաբար գլուխը վեր վերցնելով:

— Ո՛հ, ո՛հ, ո՛հ, կը հաւատամ— ըսաւ Ռինա քաղցրութեամբ— բայց ցուալի է մտածել որ մարգիդուհիին պատճառաւ, զոր կը սիրէի, և զոր ա՛յնչափ բարի կը կարծէի, այսպիսի նորօրինակ դրութեան մը մէջ գտնուիմ, մինչդեռ ան երզուած էր խեղճ կելդրուտի դիակին վրայ՝ ինծի մայրութիւնն ընելու և վրաս հսկելու:

— Լսէ՛, լսէ՛, չխօսինք այլևս այն տիկնոջ վրայ... գէշ կ'զգամ: Լսէ՛ Ռինա, դու իմ վրայ վստահութիւն ունիս. այնպէս չէ՞: Անվստահութիւնը անիրաւ նախատինք մը պիտի ըլլայ: Շատ լաւ, ես միջոցը պիտի մտածեմ քու երջանկութիւնդ ապահովելու և երևոյթները փրկելու, որ կընան ո՛ր և է արատ մը բերել քու պատուոյդ վրայ: Դու հանդարտէ ուրեմն և մնացածը ինծի թո՛ղ: Առ այժմ քանի մը օրուան համար առանձնացիր քեզ պատրաստուած յարկաբաժնին մէջ: Գարմէլիթա, հաւատարիմ սպասաւորիս աղջիկը, քու հրամանիդ տակ կը դնեմ:

Լաւրինտիոս, որ միշտ մէկ կողմ քաշուած կեցած էր, այս խօսքերուն վրայ մօտեցաւ աղ-

ջկո՞ն և կարեկցական ու յարգալից դէմքով քիչ մը ժամանակ զանիկա դիտեց: Ռինա քաղցրութեամբ ժպտեցաւ, վասն զի ծիրոյն համակրելի դէմքը և սպիտակ մազերը իրեն լիուլի վստահութիւն կը ներշնչէին:

— Ռինա, դու կընաս վստահիլ այս մարդուն — ըսաւ Մարագ — Եթէ որ և իցէ բարի և վեհանձն զգացում մը թրթռայ իմ հոգւոյս մէջ՝ դոյն իրեն կը պարտիմ...:

— Ձեր սիրտն է տէ՛ր, որ ազնիւ և մեծ է — գոչեց խեղճ Լաւրինտիոս ոգևորուած:

— Բաւակա՛ն է, ընդմիջեց Մարագ ժպիտով մը և պէտք զգալով կտրել այն տաժանելի խօսակցութիւնը — այլևս ատոր վրայ չխօսինք: Ժամանակը ուշ է, և միտքը զօրացնելու համար, պէտք է մարմնոյն հանգիստ տալ: Լաւրինտիոս, օրիորդը իր սենեակը տար: Եթէ բանի մը պէտք ունենայ աղջիկդ կանչէ:

— Ո՛հ, բանի մը պէտք չունիմ, ըսաւ Ռինա: Եւ ձեռքը սեղանաւորին երկնցնելով, շարունակեց — Գիշեր բարի, Պարո՛ն: Աստուած քեզի հազարապատի՛կ պարգևէ, ինչ որ այս որբուհիին կ'ընես:

— Փոխադարձաբար քեզի, ինչ որ դու ինծի կ'ընես, քու անուշ խօսքերովդ:

Եւ Մարագ բոլորովին զգացուած՝ սեղմեց օրիորդին ձեռքը, և կրկին երթաս բարեաւ մաղթելով անոր թողուց որ Լաւրինտիոսի հետ մէկնի:

Ռինա, ա՛յնչափ յուզումներէ յօգնած, մե-
րենարար հետեցաւ սպասաւորին մինչև իրեն
համար սահմանուած սենեակը, և իսկոյն խոր
քնով մը մոռցաւ բոլոր իր վիշտերը:

Ը.

Աննաման շքեղ սենեակի մը մէջ, վերածնու-
թեան ոճով քանդակուած վառարանիկի մը քով,
կանգուն կեցած էր Պիանքա մարգրիգուհին: Այն
թագասոցին որմերը ծածկուած էին արծաթէ
երկայն գծերով կապոյտ թաւիչէ վիճակով մը:
Կարասիները բոլոր երևելի արուեստաւորներու
գլուխ գործոցներ էին. արհեստակ սն ծաղիկներով
պսակներ, սիրոյ հրեշտակիկներու (ամսոնն) ձե-
ռաց մէջ, վայելուչ կերպով ճոխացած էին հայե-
լիններու շուրջը, քիչ մ'անդին քանի մը թարմ
ծաղիկներ ալապաստրէ գեղեցիկ անօթներու մէջ
դրուած էին: Արուեստաքանդակ արծաթեայ կան-
թեղ մը, ծածկուած ապակիով, ձեղունին մէջ-
տեղէն կախուած էր, չորս կողմը սիւսերով մեղմ
ու անուշ լոյս մը. նման երեկոյեան վերջալոյսին:

Գիշերուան ժամը ինը կը հնչէր:

Պիանքա կարծես խոր մտածումներու մէջ
ընկղմած էր: Վառարանի անկիւնը, գլուխը մէկ
բազկին կոթնցուցած, թափանցող և անշարժ նայ-
ուածքը՝ անհուն վշտի սրտայայտութիւն մ'ունէր:



իր տօգունած շրթունքը հեքէն կը գողար անկապ
խօսքեր մը մնջելով...

— Ո՛հ, իրաւցնէ խենթ եմ որ այսչափ կը
մտածեմ— ըսաւ յանկարծ սաքը գետին զարնելով,
դժկամակութեան թեթև շարժումով մը — ճակա-
տագի՛րն է որ այսպէս կուզէ: Անպատճառ կա-
րևոր էր այսպիսի գոհողութիւն մը իմ որդւոյս
երջանկութեան համար...: Խե՛ղճ Ռինա... անիկա
քիչ մը պիտի լայ անշուշտ... գուցէ նաև զիս ա-
նիծէ... ո՛հ, սակայն ծաղրական է բոլոր իմ եր-
կիւզս...: Ռինա, ուրիշ անգամներու պէս շուտով
կը համակերպի, և մէկ կողմ կը թողու իր միա-
մտութիւնը, իր գեղջկական հանդարտ սովորու-
թիւնները, փայլուն և հեշտալի կեանքի մը դրու-
թիւնը ապահովելու համար... բախտաւոր Մարագ
... ո՛հ, լաւ է իրեն քան ուրիշի մը... հարուստ
է, մեծաշուք, և զայն երջանիկ պիտի ընէ...: Ո՛վ
զիսէ թէ օր մը Ռինա այս իրեն ըրածիս համար
ինծի շնորհակալ չըլլայ... ո՛հ, լաւ է այլ և վրան
չ'մտածել...:

Այսպէս ըսելով անփութօրէն սեղանի մը
մօտեցաւ, որուն վրայ ափսէ մը դրուած էր օրա-
գիրներով լեցուն, որոնք նոյն օրը հասած կը
տեսնուէին, վասն զի ծրարին դեռ ձեռք զարնուած
չէր:

Թիկնաթողի մը վրայ բազմեցաւ, առաւ մի

առ մի օրագիրները, ծալքերը բանալով, թեթև
 աղնարկ մը տուաւ անոնց, յետոյ զանոնք խառ-
 նափնդոր սեղանին վրայ նետեց առանց ծալիւ-
 նեղութիւնը քաշելու: Հակառակ ապահովութեան
 որով կ'ուզէր սնապարծիլ, որոշ կը տեսնուէր որ
 չէր կրնար տիրանալ այն յուզմունքին, որուն
 քանի մը ժամէ ի վեր աւար եղած էր:

Այս զբաղանքին մէջ յանկարծակի, սենեակի
 դրան զգուշաւոր զարկը լսեց. Պիանքա հրահանգ
 տուած էր որ մարդ ներս չ'ընդունուի. գիտէր որ
 այն իրիկուն Նորպերդ չէր գար. ո՞վ կը համար-
 ձակէր այդ ժամուն զինքը անհանգիստ ընել:

— Հրամայեցէ՛ք, ըսաւ անհանգստութեամբ և
 բարկութեամբ:

Գուռը բացուեցաւ և սպասաւոր մը երևցաւ
 ձեռքին մէջ նամակ մը:

— Պանդոկի մանչ մը բերաւ այս նամակը,
 ըսաւ ան — և ստիպողական բան մը կարծելով
 ձեր հրամանը զանց ըրի:

— Շատ լաւ... հոս գիր:

Սպասաւորը դուրս ելլելու վրայ էր, բայց
 մարգիզուհին շարշուժով մը զայն կեցուց:

— Մինէթթան վերագառնալուն պէս, շուտով
 հոս գրկէ:

Ծառան գլուխը ծուեց և անհետացաւ: Մար-
 գիզուհին նամակն առաւ և բանալէն առաջ լաւ մը
 գննեց: Այդ խոշորատառ և տձև գրութիւնը իրեն
 անծանօթ էր: Աճապարանքով բացաւ զայն և

ստորագրութիւնը նայեցաւ Պերդրանտ բժիշկն էր:
 Կարգաց.

«Ազնիւ մարգիզուհի՛»,

«Մէկ քանի ժամէ ի վեր է Թորինոյ հասած
 «եմ, և իմ առաջին մտածութիւնս դուք եղաք:
 «Վաղը առտու, եթէ հրաման տաք, պիտի գամ
 «ձեռքերնիդ սեղմելու և մեր սիրելի որբուհին
 «համբուրելու, զոր շատ կը փափաքիմ տեսնել:
 «Ձեզի հետ երկայն խօսելիք ունիմ:

«Նամակատան պանդոկէն, երեկոյեան ժամը
 9-ին»:

« »

Եթէ կայծակ մ'իյնար մարգիզուհիին ոտքին
 տակ այլ յանկարծակի պիտի չգար. յուզումը
 ա՛յնչափ սաստիկ եղաւ, որ նամակը ձեռքէն գե-
 տին ինկաւ:

— Աստուա՛ծ իմ — մտածեց նա — ի՛նչ պա-
 տասխան պիտի տամ Ռինայի մասին:

Վայրկեան մը մտածկոտ մնաց, բայց իր յու-
 դումը երկար չտևեց: Անբրկիւղ վեր բարձրացուց
 գլուխը, և խնդալով իր վախկոտութեան վրայ,
 գլխի մ'առաւ, քանի մը տողով պիտակ մը գրեց,
 զանգակիկը զարկաւ և զայն սպասաւորին յանձ-
 նեց, ըսելով:

— Շուտով Պերդրանտ բժիշկին տար — ըսաւ
 — նամակասան պանդոկը:

Պիանքա կը գրէր բժիշկին.

«Սիրելի բարեկամս,

«Դուք կը հասնիք, ես կը մեկնիմ. Նարսիսէն կանչուած եմ, քանի մը գործերու համար, զորս չեմ կրնար երկարածդել: Ռինա միասին պիտի գայ: Այս գիշեր կը մեկնինք, ցաւելով զձեզ չըտեսնելնու համար, բայց յուսարով որ քանի մը ամիսէն զիրար կը զանենք ձեր սիրելի զիւրի տան մէջ»:

« »

Երբ սպասաւորը մեկնեցաւ, — Պէտք է որ ես այս իրիկուն Նորպերգը տեսնեմ—ըսաւ մարգիդուհին: —Կեղբոնական Իտալիոյ մէջ պանդուկ ճամբորդութիւն մը շատ կարեւոր է թէ՛ իմ և թէ՛ իր հանգստութեան համար... երբ հարստութիւն սենինք, աշխարհիս ո՛ր կողմն ալ ըլլանք կրնանք զուարճանալ... և յետոյ մըշտ գաւակս քովս կուսնեմ... և երջանիկ կ'ըլլամ... նաև...

Վայրկեան մը լռեց, յետոյ սաստիկ անհանգստութեամբ յտքի ելլելով. — Ո՛հ, գոնէ Մինէթթան վերագտնար—մըմնչեց, այլայլած վեր վար քալելով սենեակին մէջ, չգիտնալով ընելիքը:

Վերջապէս բակի սալայատակին վրայ կառքի մը ձայնը իմացուց թէ Մինէթթա վերագարձած էր:

— Լաւ որ եկար վերջապէս — ըսաւ սրտատրոփ, ազախինը դիմաւորելով, որ այդ վայրկեանին սենեակը կը մտնէր և հարցուց — Ի՞նչ ըսաւ Ռինան:

Մինէթթա չարաձեռութեամբ խնդալով պատասխանեց.

— Ոչի՛նչ, ան հաւատաց թէ դուք իրաւցնէ պարոն Մարագի տունը իրեն կ'սպասէք. սեղանաւորի ծառային հետեցաւ առանց խօսք մը ըսելու... մանաւանդ կը խնդար դուարթութեամբ:

— Ճիշտ մտածածիս պէս, մըմնչեց Պիանքա: Սպասուհին ուրիշ գիտողութիւններ ընելու վրայ էր, բայց մարգիդուհին ընդմիջեց:

— Կէս գիշերը մօտ պիտի ըլլայ, ըսաւ, բայց ես դուրս պիտի ելլեմ... տուն պիտի չվերագտնեմ... Անսելմոսին ըսէ որ կառքս պատրաստէ... գնա՛ և շուտով վերադառձիր:

Մինչդեռ Մինէթթա դուրս կ'ելլեր տիրուհիին հրամանները գործադրելու համար, Պիանքա գրեթէ ջղային անհամբերութեամբ մը սկսաւ պատրաստուիլ: Սեւ զգեստ մը հագաւ սամոյքապատ երկայն վերարկուի մը մէջ փաթթուեցաւ, և գլուխը լայն կնիզուչ մը անցնելով.

— Մինէթթա՛—ըսաւ սպասուհիին, որ կրկին ներս կը մտնէր—կարելի է քանի մը օր զիս չըտեսնես: Ո՛վ ալ գալու ըլլայ ըսէ որ Ռինայի հետ մեկնած եմ:

Մինէթթա հաւանութեան նշան մ'ըրտաւ:

Պիանքա ձեռնոցներն անցուց, Պերդրանտի նամակը հետն առաւ, և դուրս ելաւ:

Կառքը պատրաստ էր:

— Դէպի պարոն Նորպերգի պալատը — հրամայեց մարգիդուհին, հեշտութեամբ երկնալով կառքի փափուկ բարձերուն վրայ: Կառավարը

մտրակեց ձիբորը:



Թ.

Կէս գիշերը կը հնչէր, երբ կառքը կանդ առաւ երկու յարկով գեղեցիկ պալատի մը առջև, ոսկեծայր պղնձէ վանդակով մը շրջապատուած. որուն ետևի կողմը կը տեսնուէր ընդարձակ ու գեղեցկազարդ պարտէզ մը: Այն ծառո. զին որուն ծայրը կը բարձրանար փոքրիկ պալատը, այս ժամուն մտթ էր. ամայի և լուռ. տունն ալ կարծես քնոյ և խաւարի մէջ ընկղմած էր, եթէ միայն ուշադրութեամբ զննելով, երկրորդ յարկի մէկ պատուհանի վանդակափեղկէն չնշմարուէր՝ տկար և անորոշ լոյս մը, հաւանական նշան՝ թէ Նորպերդ տունը կը գտնուէր, վասն զի այն լոյսը իր սենեակէն կը մեկնէր:

Պիանքա կառքէն իջաւ և զանգակը դարկաւ: Քանի մը վայրկեան ոչ ոք պատասխանեց: Մարգիզուհին ցուրտէն կը սարսուար:

Վերջապէս բացուեցաւ տան մեծ դուռը որ կարճ ծառուղիով մը բաժնուած էր վանդակապատէն, և սիւնազարդ գաւթին վրայ մարդ մը տեսնուեցաւ աշտանակը ձեռքը:

Դռնապանն էր:
— Ո՞վ է — հարցուց նա քնատ ձայնով:
— Բայց, Գէորգ, շո՛ւտ. . ես եմ, Պիանքա

մարգիզուհին:

— Հի՛ մա, տիկին, հի՛ մա: — Եւ գիրուկ, կարճահասակ, ռամիկ մարդ մը վանդակադուռը բանալով, կրկին ու կրկին յարգանքներով ընդունեցաւ տիկինը:

Պիանքա կառքը ետ ուղարկեց:
Քիչ վերջը կը գտնուէր պզտիկ, գեղեցիկ, ժպտուն, լի գեղարուեստի գործերով և բոլոր այն թանկագին, գեղեցիկ, մանկական խաղալիքներով սրահի մը մէջ, գորս վայելչագեղ պազարի մը ապակափեղկին մէջ տեսնելով կը զարմանանք և որոնք գեղեցիկ սեռին հրապուրիչ հեշտանքն են: Այս սրահը առաջին յարկաբաժինը կը կազմէր, զրեթէ առանց բացառութեան՝ մարգիզուհին յատկացուած՝ երբեմն իր պաշտելի որդւոյն տալիք գիշերային և խորհրդաւոր այցելութեանց մէջ:

Պիանքա, վերարկուն աթոռակի մը վրայ նետեց, և դռնապանին դռնալով, որ իրեն հետեւած էր, և հիմա յարգալիբ գլխարկը ձեռքը բռնած իր հրամանին կ'սպասէր, ըսաւ անոր.

- Տո՛ւնն է Նորպերդ:
- Այո՛, տիկին... բայց...
- Բայց ի՞նչ... ուրեմն:
- Ճիշտ ըսելու համար, տիկի՛ն, պարոն Նորպերդ մինակ չէ:
- Պիանքա սարսուեցաւ:
- Ո՞վ կայ հետը:

— Բարեկամ մը:

— Մարգրիգուհին ժպտեցաւ:

— Շատ լա՛ւ, ըսաւ, կ'սպասեմ. երբ մէկնի՛ր
... ինձի իմաց տուր:

Գէորգ տեղէն չ'շարժեցաւ:

— Բայր... կը վախնամ տիկի՛ն, որ այնչափ
շուտ չմեկնի:

— Ինչո՞ւ:

Գէորգ խորհրդաւոր կերպով աւելի մօտենա-
լով Պիանքային, ըսաւ անոր ականջն ի վար:

— Եթէ տիկին մարգրիգուհին ինձի վստա-
հութիւն կը շնորհէ...

— Խօսէ՛ — ըսաւ Պիանքա, սաստիկ յանկար-
ծակի զայով:

— Լա՛ւ... պարոն Նորպէրզի քով գտնուող
բարեկամը մ... արդ չէ, կի՛ն է:

Պիանքա գոյնը նետեց:

— Դու տեսա՞ր... ինչպէս էր — հարցուց
խստութեամբ:

— Մեծ է, թխաղէմ և երիտասարդի զգեստ
հագուած: Կը տեսնուի որ Նորպէրզ անոր կ'սպա-
սէր, որովհետև բացի ինձմէ ամէնքը պառկելու
զրկեց: Հետիտան եկաւ, գրեթէ կէս ժամ կ'ընէ.
Նորպէրզ ինքը գնաց դուռը բանալու. անիկա
կը դողդոջար և կը վարանէր... բայց մեղմիւ ըսաւ
«Սիրտ ա՛ն կարմելիզա, ի՛նչ բանէ կը վախնաս
ես մինակ իմ դռնապանիս հետ, որ գրեկ իմ մէկ
բարեկամս կը կարծէ»: Այս բոլորը ես լսեցի,

դրա՛ն քով կեցած... բոլորովին ստոյգ է:

Կարծես թէ Պիանքա այլևս բան չէր լսեր.
Իր զգայարանքներն անբացատրելի յուզումով մը
տակն ու վրայ եղած էին, իր սարսուռը զգալի
կերպով կ'աճէր սեղանի մը մօտեցաւ որ շիջնայ:

Դռնապանը շարունակ կը խօսէր, առանց
նշմարելու մարգրիգուհին աճող տազնապարհ վեր-
ջնապէս սա հանդարտեցաւ և ժպտաւ մը փայլեցաւ
չրթներուն վրայ:

— Գէորգ — ըսաւ — կարծեմ այս իրիկուն
ինձի անկարելի պիտի ըլլայ Նորպէրզին հետ
տեսնուիլ... ես անկողին կերթամ... եթէ տէրզ
տեսնելու ալ ըլլաս մի՛ ըսեր թէ հոս եմ... վաղը
կը տեսնուիմ հետը...:

— Շա՛տ լաւ, տիկին մարգրիգուհի, տան
տէրը դուք էք ինչպէս որ կը հրամայէք: Ձեր
սենեակը միշտ պատրաստ է. եթէ բանի մը պէտք
ունիք՝ պատրաստ եմ:

— Ո՛չ, պէտք չունիմ, կրնաս երթալ:

Դռնապանը դուրս ելաւ:

Պիանքա մինակ մնաց:

— Աստուած իմ... Աստուած իմ — ըսաւ —
այս բոլորը սոսկալի երտոյ մ'է, անտեղի և ան-
կարելի...: Կին մը... հո՞ս, այս տա՛նը մէջ...
կին մը որ ինձմէ սի՛րտը կը գողնայ, իմ որդւոյս
սէ՛րը... Ո՛հ, կ'ուզեմ տեսնել զայն, կ'ուզեմ
ճանչնալ, կ'ուզեմ լուծել այս առեղծուածը:

Պիանքա, տան ել ու մուտքը շատ լաւ գիտէր:

Գիտեր, որ Նորպերդի ննջասնեակին կից՝ ապակափեղկով մը բաժնուած արդուգարդի ներքնասնեակ մը կար, ուսկից պիտի կրնար լսել երկու երիտասարդներուն խօսակցութիւնը, տեսնել այն անձանօթ տիկնայ գէմքը, առանց ինքը տեսնուելու: Կ'ըմբռնէր որ ընելիքը ազնուալան, վայելուչ բան մը չէր, տեսակ մը մասնաշութիւն... բայց կայր մայր մըն էր և խենթ սիրահար իր որդւոյն, որ ամէն միջոց ձեռք կտանէ՝ թէև ոչ շատ փափկանկատ՝ զայն վառնդէ մը փրկելու և անոր մտերմական մտածութիւններն ու զգացումները հետազօտելու համար:

Մարգրիտուհին ճրագ մը ձեռքը դուրս ելաւ սրահէն և վեր ելաւ սանդուղէ մը որ երկրորդ սրահը կը հասնէր: Դուռը կիսաբաց էր: Մեներկիւղ, երկայն նեղ սրահ մը մտաւ, և սենեակէ սենեակ անցնելով հասաւ վերջապէս լայն վարագոյրով մը ծածկուած դրան մ'ատջև: Հոն մարեց ճրագը բարձրացուց վարագոյրը, կամացուկ մը դուռը բացաւ, և հանդերձատան սլօտիկ գեղեցիկ սենեակ մը մտաւ. սիրտը պայթելու չափ կը բարակէր: Ինչպէս գուշակած էր, Նորպերդ իր սենեակին մէջ կը գտնուէր, որուն համակրելի ձայնը իր ականջին մաքուր և որոշակի կը հասնէր: Պիանքա կամաց կամաց ապակափեղկին մօտեցաւ և դիտեց:

Խառն ոսկեթել կապոյտ թաւշ արեւելեան բազմոցի մը վրայ, մեղկօրէն երկնցած էր տիկին

մը, այր մարդու սգեստով, իբրև դերասանի և դերասանուհի:

Ճիշտ ճրագին դիմաց նստած էր, և իր գէմքը բոլորովին լոյսին տուած: Քսան և հինգ տարեկանի մօտ մէկը: Իւր թուխ ու մտածկոտ գէմքը, կատարեալ Հիպերի (*) գլուխ մը, բոլորուած էր ամենասև, խիտ, զանգուր մազերով, վալելուչ կերպով զազաթին վրայ ամփովուած, գուցէ աւելի լաւ. կերպով ծածկելու համար զանոնք լայնածիտ զլխարկին տակ, որ մերձակայ աթոռի մը վրայ կը տեսնուէր: Իր մարմինը Մետալուզաներու դիւթիչ գունատութիւնն ունէր, այն գունատութիւնը որ կեանքի և զգացողութեանց առատութիւնը կը յայտնէ. իր մեծ սև աչքերը մեծ իմացականութիւն մը, քաջասրտութիւն մը, զիւցազնութեան պէս բան մը ցոյց կուտային. իր հընչուն շրթունքները վայրագ ու ցասկոտ բնաւորութեան մը դրոշմն ունէին. բայց այս թերութիւնը մեղմացած էր իր աննման ժպտուն գէմքին ար-

(*) Հիպեր, Փարիզի երեսփոխանական ժողովոյ անդամ, երեսիլի ուսմկավար, Մնած Ալանտի մեջ 1755-ին, մեռած կառօփնաւի վրայ 1794-ին: Օրօքեր մը հրատարակած է Le Père Duchesne անուամբ: Ի վարպետութեանց չափազանցութիւններուն հետ անպակաս լեզու մը եւս ունէր: Իրողն եղաւ Սեպտեմբերեան շաղկերուն, գերակիռ ազդեցութիւն մ'ունեցաւ վերջեւ իւր ձեռքակալումը: Մերք զինք իւր օրօքերին անուցով կը նշանակեն:

տայայտութեամբ՝ Անոր վրայ կար վերջապէս նշանաւոր, ազնուական բան մը, հակառակ զգեստի պարզութեան, որ կը բաղկանար շագանակագոյն թաւշէ թիկնոցակէ մը, շատ գործածուած, մութ գորշագոյն տարատէ մը և սև բաձկոնէ մը:

Պիանքա մարզիգուհին չկրցաւ զարմանքի և հիացումի շարժում մը զսպել՝ ի տես այն հիանալի և հեշտալի օրիորդին, և իր աչքերը Նորպերդի դիրքին վրայ կեդրոնացան:

Վերջինս աթոռակի մը վրայ նստած էր աղջրկան ոտքերուն առջև, անոր ձեռքը իրենուն մէջ բռնած: Ինքը մութի մէջ մնացեր էր, անոր համար Պիանքա դժուարաւ կրցաւ դէմքին արտայայտութիւնը նշմարել:

Իր հետաքրքրութիւնը սաստիկ զրգուռած էր:

Մեծ աթոռ մը ապակափեղկին մօտեցնելով վրան նստաւ, և ունկնդրեց երկու երիտասարդներու խօսակցութիւնը:

— Ինձի համար է որ քու անձդ այնչափ վտանգներու կենթարկես. — ըսաւ Նորպերդ զրգուռանքի շեշտով մը, որ Պիանքայի սիրտը թուռնդ հանեց:

— Ո՛հ, ի՛նչ նշանակութիւն ունին վտանգները՝ բաղդատմամբ քեզ տեսնելու քիզի մօտ գանուելու երջանկութեան հետ — պատասխանեց օրիորդը աստուածային ժպիտով մը և սիրային եռանդով մը. — միւս կողմ անէ, ո՛չ որ, ապահով

եղիր, իմ բացակայութիւնս կը նշմարէ. իմ տէրս ժամը տասնի մօտերը իր բոլոր սպասաւորները արձակեց, բացի հօրմէս: Ես ալ քնանալու համար երթալ կեղծեցի, բայց երբ տեսայ որ չորս կողմս խաւար էր և լուռ, իմ առնական զգեստներս հագուեցայ, պարտէզի դրան բանալին առի և դուրս ելայ: Ճիշտ այն վայրկեանին որ ես անկիւնը կը դառնայի, կառք մը պալատին դրան առջև կանգ առաւ:

— Կա՞ռք մը:

— Այո՛, — շնչեց օրիորդը՝ ցած ձայնով այն կառքն էր որուն տէրս կ'սպասէր...: Եւ գիտե՞ս թէ մէջը ինչ կար — աւելցուց կորովով մը, և աչքերը կատաղի և սոսկալի կայծեր արձակեցին — անոր մէջ թշուառ որբուհի մը կար... ամենաբրիտասարդ և գեղանի... Պիանքա Ռովէրպէլլա մարզիգուհիին ուրիշ մէկ զօհը:

Նորպերդ աչքերը չթարթեց:

Պիանքա սարսուաց և ոտքի կանգնեցաւ վայրկենական շարժումով մը, բայց գրեթէ իսկոյն աթոռին վրայ ինկաւ երկու ձեռքով երեսը ծածկելով:

— Դու մարզիգուհին կը ճանչնաս... գիտե՞ս թէ ով է — հարցուց Նորպերդ անտարբերութեամբ մը:

— Ո՛հ... չեմ ճանչնար... բայց գիտեմ թէ հրէշ մ'է... հայրս ըսաւ ինձի: Դո՛ւ ալ... տեսած չես բնաւ:

— Բնա՛ւ — պատասխանեց Նորպերդ, պա-
զարինու թեամբ:

Ո՛րչափ երկու երիտասարդները կը խօսէին,
ա՛յնչափ Պիանքայի խոտովութիւնը կը բարդուէր:
Գունատած, բարկութեամբ և արհամարհութեամբ
լեցուն իր հրաբորբօք, անեղացայտ աչքերը կը
սեւեռէր օրիորդին դէմքին վրայ, մըմնչելով:

— Ո՛հ, դեռ գոհ չես որդւոյս սիրտն ու սէրը
ինձմէ գողնալով... դիս հրեշ ալ կը կոչես... շա՛տ
լաւ, քեզի կը հասկցնեմ այդ տիպոսը: — Եւ իր
դիմադծութիւնը այնպիսի կատաղի ատելութիւն
մը զգեցաւ, որ եթէ օրիորդը զայն տեսնելու ըյ-
լար, պիտի սարսուէր:

Վայրկեան մը լռութիւն պատեց. վերջապէս
Նորպերդ իր այն բնատուր փափկանկատ շեշտովը,
զոր պարագային համեմատ կ'ստանար, ըստ:

— Գարմելիդա՛, ուրեմն դու զիս կը սիրես:

— Թէ ես զքեզ կը սիրե՛մ, Նորպե՛րդ... Դեռ
կը տարակուսի՞ս... որ իմ անձս բոլորանուէր
քուկդ չըլլա՛յ... Մի՛ միայն քու սէրդ զիս հոս
առաջնորդեց, ... միակ սէրը՝ որ քեզի համար կը
սնուցանեմ, բաւական ապացոյց մ'էր իմ հոս
գալս... այս ծպտեալ վիճակի մէջ գալս: Նոր-
պե՛րդ... դու պատուաւոր մարդ մ'ես... դու չես
ուզեր զիս խաբել, այնպէս չէ՛:

Երիտասարդը անոր ձեռքը սեղմեց, առանց
պատասխանելու:

— Ո՛հ, ես կը հաւատամ քեզի ինչպէս կը

հաւատամ Աստուծոյ — շարունակեց Գարմելիդա,
երիտասարդին ձեռներն իւր սրաին վրայ դնելով
— կը հաւատամ քու սիրոյդ, որովհետեւ զիս կը
յարգես... քու թախանձանայդ անձնատուր եղայ,
սուանց վարանելու քովդ եկայ, որովհետեւ ինք-
զինքս սպանով կը կարծեմ քու մօտդ... որովհետեւ
բոլորանուէր քուկդ ըլլալով, ինչպէս բախր և ես
ալ կը հաւատամ. իմ պատիւս քեզի սիրելի պէտք
է ըլլայ...:

— Ատոր վրայ կը տարակուսի՞ս, հրեշտա՛կս:
Ո՛հ, դու վսիմալու բան չունիս, ո՛չ ուրիշէն, ո՛չ
ինձմէ. ոչ ոք պիտի իմանայ քու գիշերային
պտոյտներդ, այս խորհրդաւորութեամբ լի և
զմայլելի խօսակցութիւնները. քու պատիւդ իմ
պաշտպանութեանս տակ է: Դու զիս կը սիրես, ես
ալ զքեզ կը պաշտեմ՝ ինչպէս հրեշտակները զԱս-
տուած...: Այնպէս բոլոր հարստութիւնները
բաւական պիտի չըլլային այս վայրկեանիս եր-
ջանկութիւնը գնելու: Գարմելիդա՛, երգուի՛ր որ
իմս պիտի ըլլաս, միայն իմս: Առ այժմ արգելք-
ներ զմեզ իրարմէ կը բաժնեն, ծանր արգելքներ,
բայց ես գիտեմ զանոնք հարթել և պիտի զայ օր
մը յորում ա՛յլ եւս իրարմէ անբաժան պիտի
ապրինք...:

— Զբաժնուինք ա՛յլ եւս, Նորպերդ... ո՛հ,
հեշտալի երազ... — մըմնչեց Գարմելիթա դող-
դոջուն ձայնով և ուրախութեան փայլատակով մը
աչքերուն մէջ, երիտասարդին վիզը փաթթուելով

սիրածալ ոստումով մը: — Ո՛հ, ես գըեզ կը սիրեմ... կը սիրեմ գըեզ — կրկնեց դարձեալ՝ իր շրթները պատանուոյն շրթներուն հպելով:

Երկուքն ալ վայրկեան մը լուռ մնացին, . . , այն անորոշ և երեւակայական երջանկութեան մէջ խորասուզուած, որ նախագուռն է մաքուր և անմեղ սիրոյ:

Պիանքա գանոնք կը դիտեր սարսուռն և խոււ վալից: Մէկ ձեռքը՝ պաղ քրտինքով ծածկուած ճակատին տարաւ, իբրև սրտին խորը մարած ախուր յիշատակ մը վանելու երեւոյթով, որ հիմա նորէն կ'արթննար...: Նորպերզին ձայնը զինք ցնցեց և իր ունկնդրումը աւելի զրաւեց:

— Գարմելիթա՛ — կ'ըսէր երիտասարդը քաղցրութեամբ — կը խոստանա՞ս ինձի քու կեանքիդ պատմութիւնն ընել... և ինչո՞ւ չես ընել: Ուսկի՞ց կը վախնաս:

— Ի՛նչ բանէ պիտի վախնամ... հո՛ս... քու քո՛վդ: Կուզե՞ս: Շատ լաւ, քեզի ամէն բան կ'ըսեմ, ամէնը, բան մը չպիտի ծածկեմ տխուր, ցաւալի պատմութիւն մ'է լսելիքդ, բայց զըլխաւորապէս քեզի ճանչցնել պիտի տայ կինը՝ դոր կը սիրես...

— Ոտէ՛ ուրեմն, սէ՛րս, անհամբեր կսպասեմ:

Գարմելիթա վայրկեան մը միտքն ամփոփելէ վերջ, սկսաւ:



Ժ.

Ես ծնայ ի Գորտովա Անտալուզիայի մէջ:

Դու յաճախ գորմանալի: Ըտներ լսած պիտի ըլլաս՝ այս եզական և վիպական գաւառին վրայօք, որ առաջինն է՝ Սպանիոյ բոլոր գաւառներուն մէջ, ճշմարիտ եզեմ մը, Արարչագործութեան գոհար: Բայց դեռ ի՛նչ ալ ըսած, խօսած ըլլան անոր հրաշալիաց վրայօք, ոչինչ է իրականին քով: Անտալուզիան, իր դիրքով, կլիմայով, բերքով և իր եզական արտագրութիւններով աշխարհիս ամէն մասերը կը յիշեցնէ: Հոն կը բուսնին արմաւենին, նոճին, կամէլլիան, մագնոլինին, շաքարեղէզը ու Սկովտական շոճին... հո՛ն անուշ հոտերով կ'արբենաս որոնք անթիւ վարգաստաններէ, որմնայից նարնջենիններէ, կիտրոնենիններէ, նոնենիններէ, և ծաղկեալ ագաւիններէ կը բուրեն, և մերթ կը կարծես փոխադրուած ըլլալ Արեւելի ամենաժպտուն գաւառները, մերթ ինքզինքդ կը գտնես Իտալիոյ լճերուն՝ հիանալի, մոզական տեսարաններուն առջև:

Ես չեմ կրնար ծննդավայրս յիշել առանց որտիս մէջ արթննալու հազար ու մէկ սրբազան յիշատակներ և բուռն սէր մը գանիկա վերստին տեսնելու: Գորտովա կը հանգչի Գուատալքուի-վիրի բանաստեղծական եզերքներուն վրայ, Կաշտավայրի մը ծայրը, հիւսիսակողմեան բոյսերով հարուստ բլուրներու մօտ և ոչ հեռու Սիէրրա

Մօրէնայի նկարագրիւղ լերան գագաթներէն:

Ես չճանչցայ մայրս, վասն զի զիս աշխարհ բերած օրը մեռած է. հայրս մաքսանենդ էր և Ալճեգիրոյի և Մարպէլլայի կողերը իր զրախտն էին, իւր, բնակարանը:

Պառաւ հօրաքոյրս, որուն տան մէջ ես աշխարհ եկած էի, զիս սնուցց: Ուրախ և զուարթ սահեցաւ անցաւ իմ մանկութիւնս գոուելի, քան զամէն հեշտալի երազներ: Հօրաքոյրս վրաս ամէն խնամք կը տանէր, ինք ստանձնեց իմ կրթութիւնս և քեզի շիտակն ըսելու համար ես չէի կրնար անկէ աւելի լաւ ուսուցիչ մը գտնել, ինք իր երիտասարդութիւնը համբաւաւօր Միվիլիայի վանքերէն միոյն մէջ անցուցած ըլլալով, ուր կը դաստիարակուէին Սպանիոյ ամենաազնուազարմ աղջկունք:

Տասն և հինգ տարեկան հասակիս մէջ կը մտնէի... հասակ մը՝ յորում յոյսերը, փափաքները, երեւակայութիւնները աւելի փայլուն տարիները գուշակել կուտան, երբ յանկարծ հօրաքոյրս մեռաւ: Ես իբրև սպասուհի կրցայ մտնել հարուստ տիկնոջ մը տունը, որուն յանձնարարած էր զիս խեղճ կինը մեռնելէն առաջ, բայց ես գերադաս համարեցայ հօրս բարեբախտ կեանքին հետեւիլ, վասն զի իմ ուժով բնաւորութիւնս աւելի յարմար էր... ազատ կեանք ու ազատ գաղափար:

Նորպէ՛րդ... դու չես գիտեր անշուշտ ի՞նչ

կեանք է մաքսանենդութիւնը: Քանի մը բաւով քեզի բացատրեմ: Սպանիոյ մէջ մաքսանենդը քաջարտութեան դիւցազն է, կարօտութեան և տառապանաց մարտիրոսը: Միշտ աղքատ, միշտ տշխատող, կասկածոտ ու դժուարակեաց, բայց անվախ. գիշերն է՝ իր ուրախութիւնը... վտանգը, կոխը՝ իր կեանքը:

Ամէն տեղ հօրս հետ էի. մարդու զգեստի տակ ծրպտեալ, գաթալանեան սուրը մէջքիս և Անգղիական երկ-հարուածեան լաւ հրացան մը ուսիս վրայ, ամէն արշաւանքի կը մասնակցէի... պէտք եղած տեղը խորհուրդ կուտայի, այնպէս որ մաքսանենդողները զիս իրենց գլուխը կը համարէին, զիս կը յարգէին, ինծի ճամբայ կուտային զիս տեսնելուդ պէս, գետինը կը փռէին իրենց մաշած կրկնոցները, երբ պիտի հանգչէի, իմ ամէն քմահաճոյքներուս կը նպաստէին: Հայրս զիս կը պաշտէր: Ես հպարտ ու խրոխտ էի թագուհի մը պէս... քաջասիրտ և յանգուզն իբրև մեր մաքսանենդներուն ամենաուժովը: Մեր տանիքը բաց երկինքն էր. մեր յոգնած անդամները կը հանգչեցնէինք ծովեզրի մը կամ նաու մը տախտակամածին վրայ: Եւ սակայն ինքզինքս երջանիկ կ'զգայի... ես կը սիրէի այս յարատև չարատանջ և վտանգաւոր կեանքը, ... բայց լի միանգամայն խորհրդաւոր ուրախութիւններով:

Հօրս բախտին հեաւեւող մաքսանենդներուն մէջ, կար մէկը՝ զոր ես ամենէն աւելի կը նախա-

սիրէի: Փէփէ էր անունը, քսան և վեց տարուան: Իր դէմքը պղնձի գոյն առած, մազերը սև ու դրուուզ, աչքերը փայլակնացայտ ու խոր, առաջին անգամ զինք տեսնողին սոսկալի ու խրոխտ երեւոյթ մը կուտային. բայց եթէ ուշադրութեամբ զննեց՝ անոր իւրաքանչիւր վարմունքին մէջ կը կարգաս իր հոգւոյն բնական բարութիւնը և այն անկեղծ ու վեհանձն զգացումները, որոնք քաջասրտութեան և աղատ ապրելու պտուղ են: Իմաստութեան շողը որ իր խոշոր աչքերուն մէջ կը փայլէր, իր հոգւոյն կատարելութիւններն էին, որոնք զինք ուրիշ իղձերու և աւելի ազնուական կըքերէւ կը մղէին քան ցած ու գրեհիկ զգացումի մը:

Երեք տարիէ իվեր էր որ ես և Փէփէ երկու եզբօր պէս միասին կ'ապրէինք. երեք տարի էր որ միեւնոյն վտանքներն և ուրախութիւնները կը բաժնէինք: Ես մեծցած էի... և ներքին բնագոյ մը ինձ կ'ըսէր որ ես գեղեցիկ եմ, երբեմն, իմ անցուղարձիս ժամանակ հօրս բարեկամները հիացումի ակնարկներ կը նետէին վրաս... կամ կը նշմարէի որ Փէփէ զմայլած... տարփալից ինձի կը նայէր: Ամբան օր մը, յորում խղճուկ տաք կ'ընէր, հայելիի պէս վճիտ շրով առտակի մը եզերքը՝ ծառի մը ստուերին տակ կակուզ խոտերուն վրայ երկնցած որ գովանամ: Հետաքրքրութիւնը զիս մղեց որ դէմքիս անզրազարձութիւնը գետակին մէջ զիտեմ:

Սաստիկ շառագունեցայ՝ ինքզինքս կարծածէր գերազաս գտնելով, և իմ կարմրութիւնս աճեցաւ մտածելով թէ աւելի հաճելի պիտի ըլլամ իրեն... իմ երագնեբուս դիւցազնին... իմ սիրելի Փէփէիս: Որովհետեւ, պէտք եմ ըսել քեզի թէ իր բարեկամութիւնս հետզհետէ մեղմով իմ բնաւորութիւնը կը փոխէր իրեն հանդէպ. ո՛չ թէ զինք նուազ կը սիրէի, ընդհակառակն. այլ իմ սէրս անցեալին համեմատութեամբ նուազ հաղորդական կ'ըլլար չէի համարձակէր այլ եւս ծիծաղել, զուարճանալ, իրեն հետ առանձին մնալ, ուրիշ անգամներու պէս զինքը գրկել, և երբ ձեռներս սեղմելով՝ զիս քոյր կը կոչէր, այս բառը փոխանակ սրտիս մէջ քաղցր հնչելու, հոն աւելի դառն արձագանգ մը կը թողուր: Փէփէն ալ ժամանակէ մը իվեր աւելի պաղած և վտրանոտ էր ինձի հետ... կարծես շուքէս իսկ կը փախչէր, կամ կոշտաբար մեր խօսակցութիւնները կ'ընդհատէր, գլուխը անդին դարձնելով:

Ո՛հ, աղետալի դէպք մը պէտք էր իրաց այս վիճակին վերջ մը աալու համար՝ երկուստէք ցաւալի. և ցաւօք սրտի այդ աղէտքը շուշացաւ:—

Գարմէլիդա լուց վայրկեան մը, մէկ ձեռքը ձակաին քսելով: Կարծես սաստիկ կը տանջուէր. իր կուրծքն ուժգին կը բաբախէր, մատնելով հոգւոյն ներքին խռովութիւնը... ջերմ արցունք մը այտերէն վար գլորեցաւ:

Պիանքա, իր թագստոցէն զժոխային ուրա-

խուժեամբ կը ներշնչէր այն ցաւի բոլոր փոփոխմունքները, և աչքերն հաճութեամբ կը հետեւէին այն կուսական կուրծքին յուզուած բաբախումին. ինք չէր փոխեր իր տեղը՝ գահի մը հետ: Բայց սակայն կասկած մը ծագեց իր միտքը երբ որդւոյն ձայնը լսեց...:

— Գարմէլիդա՛ — ըսաւ Նորպերդ յուզուած շեշտով, օրիորդին մէկ ձեռքը իր շրթներուն հըպելով — ո՛հ, ներէ՛ ուրեմն որ քեզ տխուր յիշատակներու տարի... կեցիր, կ'ողաչեմ ուրիշ իրիկուան մը թող պատմութիւնդ. այսօր շատ յուզուած և խռոված ես:

— Ո՛չ Նորպերդս, ո՛չ, թող որ շարունակեմ, ամէն բան կ'ուզեմ քեզի ըսել, անգամ մ'ալ այս նիւթիս չվերագառնալու համար...: Կ'ուզեմ որ դու զիս բոլորովին ճանչնաս...:

Վայրկեան մը լուռ կեցաւ և սպա հարցուց.

— Ժամերնիս քանի՞ն է:

— Գիշերուան երկուքն է:

— Մինչև ժամը չորսը կրնամ հոս մնալ, անոր համար շարունակեմ եթէ դու յոգնած չես...:

— Ի՛նչ կ'ըսես Գարմէլիդա — գոչեց Նորպերդ անուշ յանդիմանական ձայնով և տարփանքով մը իրեն նայելով:

Ստուռածային ժպիտ մը վայլեցաւ գեղեցիկ սպասուհիին դէմքին վրայ, որ շարունակեց.

— Կուստալգուիվէրի բանաստեղծական ալեաց ընթացքին հետեւելով, Գորտովայէն քանի

մը մղան անդին կը գտնուի պղտիկ ու հեշտալի ձորակ մը, կանաչ բլուրներով շրջապատուած, նարնջենիներով հոծ, և դեղեցիկ այգեստաններ՝ բնակչութեամբ լի:

Սմարտնոցէն անցնելէ վերջ, կաղնիներու այնպիսի խիտ անտար մը կը յաջորդէ, ուր գրեթէ աչքդ լսյս չի տեսներ: Հովէն շարժող տերևներուն խշրտոցը, և թոչնոց երգը, միայնութեան բարեկամներ, կ'ընդհատեն միայն այն տխուր վայրենիներու աղիտաբեր լուծիւնը: Ճիշտ անտարին մէջտեղ, մեծ վայրի ծառերու ստուերին տակ, աւերակներու մէջ թաղուած, ամենէն մոռցուած, պղտիկ խրճիթ մը վեր կը բարձրանար, որը յաճախ մեր մաքսանենդներուն մթերանոցի կամ ապաստանարանի տեղ կը ծառայէր:

Շաբաթ օր մը, առտուան դէմ, ես խրճիթին կիսաբաց դրան առջև նստած, ուշադրութեամբ հրացանս կը մաքրէի և նոյն ժամանակը համբաւաւոր եղած սպասուհիի մը վիպերդը կ'եղանակէի ցած ձայնով երբ ոտքի թէթև դրդելէն մը իմացայ որ մէկը կուգար: Հայրս ու իր ընկերներն յոգնած գիշերուայ աշխատութիւններէն, իազազութեամբ կը հանդէլին խրճիթին մէջ... ո՛վ կրնար ըլլալ ուրեմն:

Գլուխս վեր առի և առջեւ տեսայ ֆէփէն:

— Փէփէ դո՛ւ հոս, այսչա՛փ կանուխ, —

հարցուցի սրտի բաբախումով և աչքերս իր վրայ սեւեռելով: Բայց, իսկոյն գոյնը նետեց և ես

ընկրկեցաւ:

Մեռելատիպ գունատութիւն մը պատեց երիտասարդին դէմքը. աղւանները կը կափկաշէլն, աչքերը լաջն բացած, շրթները դողդոջուն, չնչառութիւնը խղզուած: Հոն խոտին վրայ փռուեցաւ հանդէսը համար. և երկու ձեռքով երեսը ծածկեց, տեսայ՝ որ արցունք մը վազեց անոր կծկուող մատներու մէջէն:

Տեսներով այս անհուն տագնապը, այլայլած և գութս շարժած, մէկ կողմ դրի հրացանս անշուշտ քովը մօտեցայ և մեղմով մը ուսին դըպչելով:

— Փէփէ՛ — ըսի իրեն — կուլա՞ս, ի՞նչ ունիս... ս՛հ, խօսէ՛. խօսէ՛...:

Իմ արտասուախառն ձայնս ցնցեց երիտասարդը: Չեռներն երեսէն վար առաւ, գրկեց զիս... աչքերը վրաս սեւեռեց, յետոյ մրմնջեց յուզուած ձայնով:

— Գարմէլիդա՛... զիս կը սիրես, այնպէս չէ՞:

Իր նայուածքի կրակէն սկսայ կարմրիլ և գլուխս ուսերուն վրայ խոնարհեցնելով, դողդոջուն յոյսով մը թոթովեցի:

— Եւ ես քու քոյրդ չե՞մ:

— Սյո՛, ... քո՛յրս, այո՛ իմ տարփանքի քոյրս, — կրկնեց իսկոյն, — քո՛յրս... ս՛հ, այլեւս մի՛ խօսիր... տարակոյսով մի տանջեր զիս, ապա թէ ոչ կորսուած եմ...:

— Կորսուած ես, և ինչո՞ւ — հարցուցի

յանկարծակիի եկած:

Նա գլուխը շարժեց խորապէս հարաշելով:

— Աստուած իմ... բայց ի՞նչ կ'ուզես բռնիլ — կրկնեցի սրանեղած — ինչո՞ւ այս լռութիւնը, այս խորհրդաւորութիւնը բացատրէ՛ միտքդ...:

Փէփէ կարծես վարանեցաւ ըստէ մը, գլուխը վեր բարձրացուց և աչքերը վրաս սեւեռեց. իր ամենատոգոյն, խռովեալ դէմքին վրայ տեսաի մը վնասութիւն կը կարգացուէր, ցաւի այնպիսի յուզիչ արտայայտութիւն մը, որ լալով իր գիրկը նետուեցայ և գոչեցի:

— Փէփէ՛, ի՛մ Փէփէս՛, ... խօսէ՛, ս՛հ, խօսէ՛, ուրեմն կ'ուզես որ մեռնի՛մ:

— Մեռնի՛լ, մեռնի՛լ... գո՛ւ իմ պատճառա՞ւ, — ընդմիջեց երիտասարդը ուժգնութեամբ և գրեթէ խելացնոր սեղմելով զիս իր կուրծքին վըրայ — բայց չե՞ս զիտեր Գարմէլիդա թէ քու կեանքդ իմինիս հետ կապուած է, թէ աշխարհիս վրայ քեզմէ աւելի սիրելի մէկը չունիմ, ս՛հ, ա՛յո՛, թո՛ղ որ այլեւս բաց է ի բաց ըսեմ, հրեշտակա... թո՛ղ որ խոստովանիմ թէ զքեզ կը սիրեմ... կը սիրեմ զքեզ... գիտցիք որ իմ այս տարփանքս այս վայրկեանիս չծնաւ, այլ այս առաջին օրէն՝ երբ քու աչքերդ իմիններուն հանդիպեցան... այն օրէն՝ երբ զիս եղբայր կոչեցիք: Եւ սակայն հարկ է որ ես այս զգացումը սրտէս չնջեմ, որ իմ էութիւնս կը կազմէ, պէտք է որ քեզմէ փախչիմ... փախչիմ քեզմէ՝ ընդ միշտ:

Այս կերպով խօսած պահուն, իր ձայնը հեծեծանքէն կը խղղուէր:

— Դու ըսիր թէ զիս կը սիրես, — գոչեցի ես զարմացած շեշտով մը — և միանգամայն կը ջանաս զիս մոռնալ: Ես չեմ հասկնար...: Ինչո՞ւ պիտի չկարենանք երջանիկ ըլլալ...: Ի՞նչ արգելք կրնայ իրարմէ մեզ բաժնել...: Կը վախնաս որ արգեօք իմ սէրս քու կիսէդ նուա՞յ սաստիկ ըլլայ:

Փէփէ գլուխը ծոցեց ակրուլթեամբ, մրմնչելով.

— Գիտե՛մ, Գարմէլիդա՛, գիտեմ, որ դու ալ զիս կը սիրես և ինծի համար թշուառութիւն մ'է ատոր հաւատալս: Տա՛ր Աստուած որ ոչ մէկ ձախորդութի՛ւն չպատահէր:

— Փէփէ՛ — ըսի գրեթէ զայրացած — եթէ դեռ այսպէս պիտի շարունակես խօսիլ, ես ա՛յլ ևևս ականջ չունիմ լսելու:

Երիտասարդը իւր հրացայտ աչքերը վրաս սեւեռելով, թոթովեց.

— Ուրեմն դեռ կ'ուզես ամէն բան գիտնա՞լ:

— Ամէն բան, այո՛:

— Ինծի մտիկ պիտի ընես:

— Մինչև վերջը:

— Շատ լա՛ւ, Գարմէլիդա, ինչպէս որ կը փափաքիս, և Աստուածամայրը մեզի պահապա՛ն ըլլայ:

Փէփէ լոցեց վայրկեան մը, յետոյ շարունակեց զողջովուն ձայնով.

— Հինգ օր է, հի՛նգ օր շարունակ, որ երբ

կը քնանամ տարօրինակ և ցաւատանջ երազ մը զիս կը հալածէ: Կարծես քու քովդ եմ, ծնրադիր, քու ձեռքերդ իմիններուս մէջ բռնած, երեւակայութեանս մէջ յափշտակուած, ... բայց երբ իմ շրթունքներս արտասանելու վրայ են անուշ խօսքերը՝ զեզ կը սիրեմ... փոխանակ քեզի, քու տեղդ, տեսակ մը ստուեր կը տեսնեմ... հարուածի շուռաչ մը կը լսեմ, ... սաբսուռ մը երակներուս մէջ, կարծես գետին պիտի իյնամ... և այն ժամանակ դարձեալ գքեզ կը նշմարեմ քովս, որ հրացայտ աչքերով ինծի կը նայիս, և ձեռքերդ վրաս կարկառած, քանի մը կաթիլ արիւն կը հոսեն...: Այս գիշեր, մեր արշաւանքէն վերադառնալով, հազիւ աչքերս փակած էի, մի և նոյն երազը կրկնուեցաւ: Սարսափահար արթնցայ, և դուրս ելայ խրճիթէն, յուսալով որ ազատ օդը իմ մտածութիւններս պիտի փարատէր: Հազիւ արշալոյսը կը բացուէր և ամէն տեղ զով էր և շուրջս ներդաշնակ...: Բոլորովին խաղաղած ներս վերադառնալու վրայ էի, երբ երազ քայլ մը լսուեցաւ խիտ խոտերուն մէջէն, և աչքերս վեր առնելով Յոհաննիդան տեսայ...:

— Յոհաննիդա՛ն... կախարդ պառա՞ւր — գոչեցի սարսուռով և երեսս խաշակնքելով...: Սո՛ւրբ Աստուածածին, դու ողորմէ

Նորպէ՛րդ — ըսաւ Գարմէլիդա՛ վայրկեան մը դագարէ վերջ — գիտե՛ս թէ Սպանիացիները

ս'ըչափ նախապաշարեալ են և որչափ անոնց երեւակայութիւնը Արեւելեանին կը մօտենայ. անոր համար քեզի տարօրինակ պիտի չ'երեւնան որ անոնք զիւրաւ իրենք իրենցմէ դուրս կ'ելլեն այն ամէն բաներէն՝ որ զարմանալի է, երեւակայական, տարօրինակ և ճշմարտաման... քեզի ծիծաղելի պէտի չ'թուի որ ես և Փէփէ կապաստանինք խորհրդաւոր հաւատալիքի մը, և կոչը հաւատք կ'ընծայենք երազներո՞ւ և կախարդութեանց... Միւս կողմանէ եզելութիւնները իրաւունք տուին մեր վախերուն:

Եւ շարունակեց.

— Այո՛, — գտայ կախարդ պառաւր — կրկնեց Փէփէ աղօտ ձայնով մը: Առջեւս կեցաւ, կոթնելով խոշոր և ոստնուտ գաւազանին վրայ, և խնդալով սուր ու ճշող ձայնով մը, որ ոսկորներս կը սարսէր: Ես անշարժ կը կենայի, զարհուրած իրեն նայելով:

— Բաւական ատեն է որ զքեզ կը փնտռեմ — ըսաւ ինծի վերջապէս՝ խուլ ու խղճուկ ձայնով — բաւական ժամանակ է որ զքեզ կը փնտռեմ, լաւ խորհուրդ մը տալու համար:

— Խորհուրդ մը... ինծի՞... դո՞ւք — պատասխանեցի դողալով:

Պառաւր ատանց իմ հարցմանս պատասխանելու մէկ ձեռքը վեր բարձրացուց հուժկու ժեստով մը, գոչելով ճոռոմաբանօրէն... — փախի՛ր ... Փէփէ՛, փախի՛ր այն սև աչքերէն որ նետեր

կ'արձակեն, այն կարմիր շրթներէն, որ կը վարեն ... փախի՛ր Գարմէլիդայէն, քանի որ ժամանակ ունիս... եթէ չես ուզեր մեռնիլ...:

— Մեռնի՛լ — թոթովեցի, քանի մը քայլ ետև առնելով, վախէս տժգունած, յիշելով իմ երազս:

— Այո՛, ... մեռնի՛լ — կրկնեց...: Եւ աչքերը երկինք վերցնելով — դեռ արեգակը անգամ մ'ալ հորիզոնին վրայ չտեսնուած... կինը դոր կը սիրես... զքեզ սպաննած պիտի ըլլայ: Ես քեզի իմացուցի...: Եւ ինծի մնաս բարովի նշան մ'ընելով, Յոնանիդա աներեւոյթ եղաւ անտառի ծառերուն մէջ:

Փէփէ լռեց և ես որ ի սկզբան իր խօսակցութեանց անձկանօք ուշ կը դնէի, վերջին բառերուն չկրցայ ծիծաղս բռնել:

Բայց այդ պառաւր յիմար է, կապելու խենթ է — գոչեցի խոր արհամարհանքով մը — և դու... դո՛ւ, Փէփէ՛, անոր խօսքերուն հաւատացիր: Բայց ինչ պատճառ տուի քեզի, որ կարող կը համարես զիս այդպիսի հրէշային ոճրագործութեան մը: Յիրաւի անհեթեթ... ծիծաղելու բան է...: Ո՛հ, եթէ ասոր համար էր միայն որ ինքզինքդ այդչափ զբաղած ցոյց կուտայիր, ուրախ եղիր Փէփէ՛ս... ես զքեզ այնքան սաստիկ չէի սիրած որչափ այս վայրկեանիս... համապատասխանած ըլլալու ուրախութիւնը՝ միթէ սպաննելու՞ կը ծառայէ... այն ատեն երկուքս ալ

պիտի մեռնինք, վասն զի ես ալ մասնակից եմ...

Իմ ուրախութիւնս, իմ խօսքերս՝ Փէփէին շրթներուն վրայ վերադարձուցին ժպտը:

— Ո՛հ, ճիշտ է, յիմար եմ—գոչեց—խենթ եմ. ներէ՛ ինծի հրեշտակ:

Եւ զիս իր թեւերուն մէջ սեղմեց:

Գիշերը վրայ հասաւ. մութ ու փոթորկալից գիշեր մը, բոլորովին խաւար: Քամին կը փչէր խլութեամբ, ալիքներն յուզուած էին: Ես, Փէփէին և հօրս հետ փոքր մակոյկի մը մէջ, լուս ու մուսջ գետի մը վրայ կը նաւարկէինք, ջանարով գաղտուկ մաքսատան սահմանէն անցնելով ցամաքը ելնել:

Ուրիշ երեք մակոյկներ՝ իրերով և մաքսանենգներով բեռնաւորուած, մեր ետեւէն կուգային: Մեր նաւակը արագաշարժ և թեթև, կարծես հազիւ շուրը կը ցտէր մեղմով... երեք թիավար էինք, երազ ու սահուն էր մակոյկին վազքը:

Ես բնաւ այնպէս երջանիկ եղած չէի: Փէփէ զիս կը սիրեր. հայրս կ'օրհնէր մեր սէրը և մեր միութիւնը քանի մ'օրէն տեղի պիտի ունենար: Իմ ապագան սքանչելի հատուածակողմեան ապակիի մը մէջէն կը նշմարէի... ամէն բան շուրջս մեր գեղեցիկ երկնքին գոյնովը կը գունաւորուէր... Ընդհակառակն, Փէփէ մուսջ ու մտածկոտ էր:

— Դեռ երազի՞ց վրայ կը մտածես — մեղմով փափսացի ականջին: Չկրցայ նշմարել զէմքին արտայայտութիւնը, բայց կարծեմ կը դող-

զդար, պատասխանելով.— կը մտածեմ թէ գիշերը շատ զէշ է... դու պիտի նեղուիս...:

— Փի՛հ: Աւելի չարագոյններն ունեցած ենք...:

— Տե՛ս այն արիւնտտ շղարշը երկնքի մէջտեղը... աղետալի գուշակական մը շե՛ս կարծեր. տխուր նախադասցում մ'ունիմ:

— Տղա՛յ — հառաչեցի — դու կը դողբլդա՞ս:

— Քեզի համար միայն կը դողամ — պատասխանեց ինծի տկար կերպով:

— Զաւակներս, սիրտ առէք, նաւակ մը կուգայ մեր ետեւէն — ըսաւ հայրս — ուժ տուէք թիբրուն... կը հալածեն զմեզ... նայեցէ՛ք: — Եւ մեզի ցցուց լուսաւոր կէտ մը, կապոյտ բոց մը, նման այն փոսփորափայլ ձկներուն, որ գիշերը ջրոյ մէջ կ'երեւին, որ կը տեսնուէր քիչ հեռուն: մաքսաւորներով լեցուն նաւակ մ'էր, որ ուժգնօրէն մեր ետեւէն կը վազէր:

Հովը սաստկացած էր, մեր և անոնց մակոյկներն ալ ալեաց վրայ կը պարէին... ցուրտ հովը գանոնք դէպի եզերք կը մղէր, թիբրն անօգուտ էին: Այս պահուս տեսած ճրագնիս հետզհետէ աւելի կը մեծնար. շուտով մաքսաւորներու նաւակը մեզի հասաւ և անոնք ստիպեցին զմեզ անձնատուր ըլլալ: Իրրև պատասխան հրացաններու ձեռք զարկինք, որոշ միտքերնիս դնելով տուղի նստեցնել տալ անոնց մեր ստացուածքը...:

ու մեր կեանքը: Մաքսաւորները պատասխանեցին, ... քանի մը վայրկեանէն սոսկալի կոխ մը ծագեցաւ, որ մթութիւնն ու փոթորիկը աւելի ահաւոր բրին:

Փէփէ նաւուն յիտասկողմը կանգնած քաջութեամբ ինքզինք կը պաշտպանէր, միեւնոյն ժամանակ ջանալով իր մարմնով ինծի վահան ըլլալ թշնամեաց գնդակներուն դէմ...: Քամիի ուժգին հարուած մը քիչ մնաց մակոյկը կը շրջէր... Ես իջնալու վրայ էի... Իսկոյն բնագոգով մը հրացանիս բունին փաթթուեցայ, կ'ուզե՞ս որ ձախորդութեամբ հրացանի ձգանին գալիմ... հարուածը մեկնեցաւ... սուր ճիշ մը լսուեցաւ և մահուան հանչիւնին մէջ իմ անունս հնչեց...: Փէփէ որ առջեւ կանգուն կնցած էր, թիկունքէն մահացու հարուածուելով, դիակնացած ջուրը կը գահավիժէր, և ես վախէս սարսափահար, մակոյկին մէջ գլորեցայ...:

Պառաւ վհուկին հմայութիւնը կատարուած էր, ես սպաննած էի այն մայրը զոր կը սիրէի...
.....

Գարմէլիզա դարձեալ լոնց, վասն զի հեծեծանքէն ձայնը կը խեղդուէր...:

Նորպէրդ չէր համարձակէր այն ցաւոց թօթափումն արգիլել... գոհ կ'ըլլար սեղմելով և համբուրելով անոր ձեռքերը:

— Չեմ գիտեր ինչ պատահեցաւ յիտոյ — ըսաւ Գարմէլիզա երբ իր ներքին տաղնապը քիչ

մը հանդարտեցաւ — բան մը չտեսայ, չլսեցի ա՛յլեւս:

Երբ սթափեցայ, ինքզինքս գեղջկական խեղճ անկողնոյ մը վրայ երկնցած գտայ: Հայրս բարձին քով նստած էր: Եւր մագիբը ձերմկցած էին և տասը տարուան չափ ծերացած էր: Զարմացած իրեն նայեցայ, և ձեռքս ճակատին քսելով, ինծի երեւցաւ թէ գէշ երազ մը տեսած ըլլամ:

— Ուր եմ — գոչեցի — Փէփէ: Այս անունը հնչած պահուս ցնցուեցայ, և տեսայ որ հայրս կուլար: Այն ժամանակ միտքս եկաւ բոլոր այն փոթորկալից զիշերուան սարսափն ու իմ ոճիրս...: Փորձեցի անկողնէն դուրս նետուիլ, բայց հայրս թեւերէս բռնելով կեցուց, և ես սկսայ դառնապէս լալ...:

Չեմ ուզեր քեզի նկարագրել այն սոսկալի վիճակը զոր քանի մ'որ ունեցայ... Ձերմը զիս կը հալէր ու կը մաշէր... ամէն բան ինծի արիւնի գոյնով կը տեսնուէր... շարունակ ականջիս կը հնչէր սա բառը. «մարգասպան»:

Երբ կրցայ անկողնէս ելնել, խենթի պէս ծովեզբը վազեցի... ուշադրութեամբ դիտելով ալիքները, ... անհեթեթ բանի մը... հրաշքի մը յոյսով... որ եթէ հնար էր ինծի վերագարձնէին ինծմէ սպաննուած մարդը: Հայրս, խեղճ հայրս, ամէն կողմ ետեւէս կը շրջէր, ստուերս եղած էր:

Հիմա գլխէս անցածները կարելի է քանի մը բառի մէջ ամփոփել:

Ես չէի կրնար այլեւս Սպանիա մնալ և տեսնել ահամայ գործած սճիրիս վայրերը. Փէփէի պատկերը՝ առջեւս ելած ամէն առարկայի վրայ սպռած էր որ աչքիս կը զարնուէր և սոսկալի կերպարանքով մը կը ներկայանար, մահամերձ վիճակի մէջ: Մաքսանենդական կեանքը, որ առաջ ինծի համար ա՛յնքան հրապուրիչ և զմայլելի էր, այժմ սարսափելի... անուանարկ կը թուէր:

Պատառ մը հաց մուրալով ես և հայրս շրջմուլի կեանք մը կը վարէինք, մղոններով կը թափառէինք առանց ուղղութեան և առանց նըպատակի: Անօթութիւնը, անքնութիւնը, երկիւղալից երեւակայութիւնը զիս դառնապէս տանջելով մաշեցին, հալեցին, դիակ մը դարձուցին:

Ամբան օր մը, տաքէն և անօթութենէն դալկացած ծառի մը ստուերին տակ փռուեցայ ըսպասելով բարերար մահուան: Հայրս, խեղճ ծերունին, թէև ինծմէ աւելի տկար՝ սակայն կը ջանար զիս սրտապնդել:

— Գարմէլիդա՛, — ըսաւ ինծի յանկարծ — եկո՛ւր... եկո՛ւր... ինծի հետ, ... հո՛ն, վալը գիւղացիներու խրճիթ մը կայ. ո՛րչափ ալ պնդասիրտ ըլլան, պիտի չմերժեն մեզ անշուշտ:

Ջանացի ոտքի ելլել, բայց ի գո՛ւր: Հայրս տղու մը պէս թեւէս բռնեց: Խեղճը քրտինքի մէջ կը լողար և ծանրութեանս տակ կը կքէր, այնուհանդերձ դարձեալ կը քալէր: Բայց վերջապէս ուժերն սպառեցաւ, և զիս կիսանուաղ գետինը

խոտին վրայ դրաւ:

— Ո՛հ... ո՛րչափ անօթութիւն... մրմնջեցի:

Հայրս լսեց և ոտքի ելաւ գայրացկոտ, ըսպանալից, հրացայտ աչքերով, և յուսահատութենէն ձեռքերը շփելով:

— Ուրեմն երկինք մեր վրայ պիտի չգլթայ — գոչեց խելացնոր:

— Երկինքը երեսէ չի թողուր իրեն ապաւինողները — ըսաւ հնչուն, ներդաշնակ ձայն մը՝ մեր ետեւէն: Զարմացած ետև դարձանք: Տարիքը առած, բարձրահասակ թխադէմ, համակրելի մարդ մը, աջ ձեռքին մէջ բռնած արաբական գեղեցիկ ձիու մը սանձը, կամաց մը մեզի մօտեցած էր: Անձանօթը մէջքէն կախուած պայուսակէ մը՝ կարմբագոյն ըմպելիով լի բիւրեղեայ շիշ մը հանեց և իմ շրթներուս մօտեցուց: Ումպ մը բուլական եղաւ զիս կենդանացնելու. նոյնչափ ալ հայրս խմեց: Յետոյ քանի մը պաքցամատ եւս տուաւ մեզի, և գեղեցիկ ձին ծառի մը կապելով քովերնիս խոտին վրայ նստաւ, փափաքելով մեր զլխէ անցածը լսելու, ձեռքէն եկած օգնութիւն մ՛ընելու համար: Այս առատածեռն, ազնուական մարդը, նախախնամութենէն զրկուած այս բարերարը, Մարագ սեղանաւորն էր, ինչպէս գուշակած պիտի ըլլաս արդէն:

— Մարագ սեղանաւորը — ընդմիջեց նորպերդ — և ի՛նչպէս Սպանիա կը գտնուէր:

— Իրեն ըսածին համեմատ քանի մը կարե-

ւոր գործերու համար եկած էր և առիթէն օգտուելով Անտալուվէնի ներքին գաւառները կ'այցելէր: Ի'նչպէս ալ եղած ըլլայ, մենք նախախնամութենէն մեզի զրկուած հրեշտակ մը նկատեցինք զայն: Մարագ սեղանաւորը, մեր գլխէն անցած պատմութիւնը լսելէ վերջ, առաջարկեց որ իրեն հետ իր սիրելի հայրենիքը վերադառնանք, երախտագիտութեամբ և խանդով ազնուասիրտ օտարականին առաջարկէն ընդունեցինք: Վեց տարի է որ իրեն հետ կ'ապրինք... վեց տարի է որ զինքը իբրև իմ նախախնամութիւնս... իմ Անտուածս կը նկատեմ:

— Եւ ի'նչ կեանք վարեցիք սեղանաւորին քով այս վեց տարուան մէջ — հարցուց Նորպերդ այնպիսի ձայնով մը, որուն մէջ մարգիթուհին թեթև հեղնութեան գոյն մը նշմարեց:

Գարմէլիզա իր խոշոր աչքերը խոժոռ կերպով սեւեռեց իրիտասարդին վրայ, պատասխանելով.

— Աղջկան մը կեանքը որ իր յօժար բերումովը կ'ընտրէ վանքի մը միայնութիւնը. իմ խցիկըս՝ խղիկս էր. պալատին պարտէզը՝ իմ սիրած շրջագայելու տեղս: Իմ տէրս զիս թողուց որ սրտիս ուզածն ընեմ, ազատ վայելեմ քիչ անգամ հետս կը խօսի, և այն ալ, միայն ինծի լաւ խորհուրդ մը տալու և կամ ինծի մխիթարական խօսք մ'ըսելու համար... ո՛հ — շարունակեց օրիորդը այն պարզ անկեղծութեամբ, որ հիւսիսարնակ կանանց յատուկ է — իմ տէրս իմաստուն է և բարի

և երջանիկ է ան՝ որ անոր հետ ապրելու բախան ունի:

Գարմէլիզա վայրկեան մը եւս լռեց և դարձեալ սկսաւ.

— Շաբաթներ և ամիսներ կը սահէին, և ես շատ տխուր էի, բայց կամայ կամաց զգացի որ անցելոյն յիշատակները այլևս չէին բուէր իմ սիրով պապակող սիրտս լեցնելու... կը մտածէի թէ դեռ ո՛րչափ բուռն սիրոյ կըքեր անթեղուած են իմ մէջ, երիտասարդութեանս քաղցր ու ըսքանչելի երազները քունիս մէջ կը կրկնուէին, իմ առջեւ ներկայացնելով սիրոյ գաղափարական նոր տիպար մը: Կը յիշե՞ս այն օրը յորում իրարու հանդիպեցանք այն սրահին մէջ որ իմ տէրօջրս զրասնեակը կը տանի: Քու ակնարկիդ բախուելով, զգացի որ գոյնը իմ տժգոյն այտերուս վրայ վերադարձաւ և սիրտս բարախեց, որուն նմանը բաւական ժամանակ է ի վեր չէր ունեցած. այն օրէն ի վեր քու պատկերդ իմ տաք երազներուս մէջ երեւցաւ և երբ պարտիզի պատուհանին յենած թռչնոց քաղցր դայլայլը կը լսէի և ծառոց տերեւներն յուզող քամին, ես տեսակ մը խորհրդաւոր երջանկութիւն կ'զգայի. տեսակ մը սրբազան ազօտ յիշում, և կը շոռագունէի ու կը գողայի իբրև թէ դու քովս ըլլայիր: Կարծես կ'ապրէի գիշերուան այն հազուադէպ ժամերուն մէջ. յորում բախան ունեցայ ձամբէն անցնիլդ տեսնելու... հեռուէն քու քայլերդ կը լրտեսէի... ու-

բախութենէս վեր վեր կը ցատքէի երբ զիս կ'ողջունէիր: Ո՛հ,— շարունակեց յանկարծական թափով — երանի՛ ա՛յն զիշերը, յորում պարտիզի վսնդակափեղկէն մեր առաջնն խօսակցութիւնն ունեցանք... եթէ յաւիտենապէս ալ ապրելու ըլլամ զա՛յն պիտի չմոռնամ... երբե՛ք:

Գարմէլիգա լոեց. իւր զէմքը անհուն ուրախութեամբ մը... անպատմելի երջանկութեամբ մը կը ճառագայթէր: Բայց յանկարծ, իբրև տարածամ մտածութենէ մը իւր սիրտը վրդոված ըլլար, ճակատը կնճռտեցաւ, և աչքերը բուռն ու վայրենաբարոյ կրակով մը վառեցան:

— Նորպէ՛րդ — ըսաւ օրիորդը, տարփալիբ նայելով իր երիտասարդ սիրահարին երեսը — դու գիտես թէ ի՛նչպէս քու սէրդ ինձի համար կեանքն է... լաւ ուրեմն, կրկնէ, երգուընցի՛ր, որ զիս չես խաբեր: Հողի մը՝ ինչպէս է իմս, չ'ընկրկի՛ր ո՛ր և իցէ պարագայի առջև, և ինչպէս քու սիրոյդ համար պատրաստ եմ արիւնս թափելու... եթէ գիտնամ թէ ո՛ր և է վտանգ մը կ'սպառնայ քեզի, նոյնպէս կ'սպաննեմ ա՛յն կի՛նը որ քու մէկ նայուածքդ կ'ընդունի... զքեզ ալ կ'սպաննեմ, եթէ քու սրտիդ խորը կեղծիք մը նշմարեմ:

Նորպէրդ իբրև պատասխան, առջևը ծընրազրեց և ձեռները համբոյճով ծածկեց:

Երկու տարփածուներու մէջ վայրկեան մը լուռութիւն պատեց, երկուքն ալ յուզուած էին:

— Պէտք է որ ես մեկնիմ — ըսաւ ի վերջոյ

զեղեցիկ սպասուհին՝ ոտքի ելլելով — բու քովդ ժամերը մոռցած էի... բայց կը վազեմ...:

— Վազն իրիկուն կը տեսուի՞նք:

— Հիմա չեմ կրնար ըսել. ամէն բան տիրոջմէս կը կախուի. ո՛վ զիտէ ի՛նչ ելք ունեցաւ այս զիշեր ա՛յն օրիորդին գործը... յամենայն դէպքս դու վաղը ժամը վեցի ժամանակները պարտիզի վանդակապատին մօտ գտնուէ. եթէ ես ալ հոն չգտնուիմ... սովորական տեղը կը գտնես իմ պիտակս:

— Շատ լաւ. հիմա պէտք է փութալ հակառակ փափաքիս, խօսքի չեմ բռներ զքեզ որպէսզի զքեզ վտանգի մը չենթարկեմ: Սպասէ՛ որ զըլխարկս առնեմ...:

— Ո՛հ... ո՛հ, չեմ ուզեր որ հետս գաս... հոս կեցի՛ր, խնդրեմ: Ծպտեալ եմ վտանգ չկայ, և զուցէ մէկը հանդիպի և մեզ միասին տեսնէ, ես գործաւորի զգեստով, դու ազնուական երիտասարդի... մնաս բարեալ...:

— Կը ներե՞ս զոնէ որ մինչև դուռը քեզի բնկերեմ:

— Շատ լաւ, հրամմէ՛ — ըսաւ օրիորդը անպատում ժպիտով մը՝ լա՛յն գլխարկը գլուխը դնելով և մեղկաբար իր տարփածուին թեւը մտնելով...:

Հազիւ երկու երիտասարդները դռնէն դուրս ելած էին, երբ զարգասնեակին ապակափեղկը բացուեցաւ և մարզիզուհին երեւցաւ՝ գունատ

դէմքով՝ բայց հանդարտ և գրեթէ ժպտուն:



ԺԱ.

Նորպերդ սանդուխէն վեր կելլեր, քթին տակէն երգելով. ուրախութեամբ սենեակը մտաւ՝ դո՞ն սրտով ձեռքերը շփելով... բայց յանկարծ ետեւ ընկրկեցաւ սպշահար:

Բազմոցին վրայ, ուր վայրկեան մ'առաջ Գարմէլիզա կը գանուէր հիմա Պիանքա մարդիգուհին նստած էր:

Առանց բառ մ'իսկ արտաբերելու, մայր և որդի քիչ մը ժամանակ անշարժ մնացին, ակնապիշ իրարու նայելով:

— Գո՛ւ հո՞ւ... այս ժամուս — ըսաւ վերջապէս նորպերդ, առաջին անգամ լուսթիւնը խոսելով:

— Կը գարմանա՞ս միթէ — հարցուց Պիանքա ձայնով մը՝ որուն մէջ պզտիկ այլայլութիւն մ'ալ չէր տեսնուէր — և սակայն քզի համար նոր բան չէ իմ յանկարծադէպ երեւումներս...:

Նորպերդ չպատասխանեց. իր յուզումն ալ կատարելապէս հանդարտած էր: Թիկնաթոռի մը վրայ երկնցաւ, թիկնաբարձին յենլով և անհուսթեամբ մը օրօրուելով... յետոյ բռնի քմծի՛ծազով մը գոչեց.

— Բաւական ժամանակ է որ հոս ես:

— Կէս գիշերէն սկսեալ ես զարգասնեակին մէջն եմ — պատասխանեց Պիանքա երգիծական շեշտով:

Երիտասարդը չկրցաւ այլևս ինքզինքը զրուպել. և սկսաւ սառտիկ խնդալ, ըսելով.

— Ուրեմն հովուերգութեանս ներկայ էիր... քա՛հ, քա՛հ քա՛հ, ի՛նչ կ'ըսես իմ բռնած գերիս. ի՛նչպէս գտար իմ խորոխ սպասուհիս: Գեղեցիկ է, չէ՛:

Մարդիգուհին աչքերը վայլատակ մը արձակեցին:

— Ա՛խ ա՛խ, սիրելի մայրիկ — շարունակեց Նորպերդ երգիծանքով մը — զլխուս վրայ կ'երգնում որ դու կը նախանձիս այն օրիորդին վրայ, յանցաւոր ես, մայրի՛կ: Չլսեցի՛ր ո՛րչափ փափկանկատութեամբ խօսեցաւ քու վրայօք:

Պիանքա զայրութի և սպառնալիաց սոսկալի շարժումէ մ'ըրաւ:

Երիտասարդը շարունակեց.

— Ո՛հ, եթէ Գարմէլիզա երեւակայէ միայն թէ Պիանքա Ռովերպէլլա մարդիգուհին... այն կէնը՝ զօր սաղայէլ կոչեց, իր սիրած երիտասարդին մայրն է, որուն հետ կուզէ միանալ...:

Տիկինը շրթունքները խածաւ արիւնհլու չափ:

— Օ՛ն — ըսաւ վերջապէս Նորպերդ անխռով — Ժպտէ՛ մայրի՛կ: Գո՞ն չե՞ս ուրեմն որ որդիդ երջանիկ ըլլայ: Դէ՛մ կ'ուզես կենալ:

Պիանքա թթու շարժում մ'ըրաւ և տխուր ձայնով.

— Անօրէ՛ն, ըսաւ, դու կարծես որ ես քու մտածութեանդ... քու հեզուոյդ մէջ չկարգացի՞. կարծես թէ ես ամէն բան չե՞մ գիտեր:

Նորպերդ դողաց... այսերը գունատեցան. շրթներէն ժպտան աներեւոյթ եղաւ, բայց բան մը չըսաւ:

— Ո՛հ, ըսաւ մարգիդուհին իր սառած ձեռքը անոր թեւին վրայ դ՛նելով — դեռ գո՞հ չես գիտ մերկացնելով... և դեռ կը մտածես թէ փափաքներովդ արգելքը ես եմ... ահա քու գաղափարդ:

Նորպերդ շունչ առաւ. մայրը գաղանիքը դեռ չէր գուշակած:

— Շատ լաւ — կրկնեց Պիանքա, որուն գունատութիւնն ու սարսափը զգալի կերպով կ'աւելնար — ինչո՞ւ կ'սպասես, մենք հոս մինակ ենք... դռնապանէն զատ մարդ չկայ, գիտէ որ ես հոս եմ... եթէ իմ արեանս ծարաւի ես... ահա կուրծքս... խոցէ... պատժելու համար զիս որ քեզի պէս եղկելի՛ մը աշխարհ բերած եմ:

Մարգիդուհին ձայնին և շարժումներին մէջ՝ տեսակ մը վայրենի և յուսահատական բան մը կ'երեւնար, ուսկից նորպերդ ցնցուեցաւ:

— Խենթ ես, մայրի՛կ — գոչեց աշխուժի — ինչո՞ւ քու կեանքիդ պիտի դաւաճանեմ: Ի՞նչ նպատակաւ: Իմ բոլոր ունեցածս քեզ չե՞մ պարտիր միթէ: Լաւ գիտեմ որ ինծի արգելք չես ըլ-

լար այն աղջիկն առնելու, եթէ գիտնաս թէ այն է քու որդւոյդ երջանկութիւնը, ... բայց մի՛ վախեր... անոր հետ չե՞մ ամուսնանար:

— Լըջօրէ՛ն կըսես — ընդմիջեց Պիանքա ուժգնութեամբ:

— Նորպերդ վայրի հեգնական ժպտով մը.

— Կը զարմանա՞ս ասոր վրայ — ըսաւ մօրը ակնապիշ: — Պիտի յիշեմ միշտ ուսկից ծնած եմ: Այն խրոխտ Անտալուզան մաքսանենդի մը աղջիկն է, և իր ծնունդը գուցէ նոյն իսկ արգելք մ'ալ ըլլայ մեր միութեան, բայց քանի որ մինակ ենք, ըսէ ինծի ո՞վ էր հայրս:

Մարգիդուհին կնճռեց յօնքերը. բայց բերանը չբացաւ:

— Ա՛խ, ա՛խ, մայրի՛կ... կ'ուզես ինձմէ ծածկել, այնպէս չէ՞. կարծես թէ դեռ ես միամիտ տղայ մըն եմ... կարծես թէ ես չե՞մ գիտեր քու պատմութիւնդ, որո՞ւն կը պարտիմ կեանքիս տխուր պարգեւը...:

— Լո՛ւ, լո՛ւ, — գոչեց Պիանքա խղղուկ ձայնով...:

— Կը վախես որ մէկը լսէ՞, — ըսաւ նորպերդ արտաքսապէս կարեկցութիւն ցոյց տալով մարգիդուհին պաղատող շեշտին — միւս կողմանէ — աւելցուց — ինծի ալ կարելոր է ծածուկ պահել այսպիսի գաղանիք մը:

— Բայց ի՞նչպէս իմացար — թո՞թովեց տիկինը...:

— Գժբա՛րա մականուննէն զոր ինծի առիր: Բայց խելքդ ինչ փշեց հօրս մականունը տալու: Եւ գու ա՛յնչափ կուլայիր որ գեռ իրեն կին չեղած մեռած էր... ա՛խ. ա՛խ, այո՛, իբաւունք ունէիր լալու: Բաւական է. ես մեծցած էի առանց գիտնալու ի՛նչ սոսկալի պատմութեան հետ ազերս ունէր այդպիսի անուն մը, և գուցէ երբեք չգիտնայի, առանց տարօրինակ և եզական պատճառի մը:

Պիանքա բոլորովին տկանջ կտրեցաւ:

— Տասն և հինգ օր առաջ, մինչդեռ Մինէրվա ճաշասրահին մէջ հանգիստ նախաճաշս կ'ընէի, բարեկամ մը հո՛ն մտնելով, բարձրաձայն մականուննս տուաւ:

Անձանօթ մը, որ քովս նստած էր, սարսռաց, և ուրիշ սեղանակցի մը դառնալով, զիս մատնանչեց, ըսելով ծածկաբար, բայց այնպէս որ ես կըրցայ լսել:

— Այդ երիտասարդը, գարշելի աւագակի մը անունը կը կըէ, զոր քսան տարի առաջ Գագէրթայի մէջ դատուեցաւ... որուն հետ ես երեք ամիս պատանդ մնացի...:

Պիանքա ձեռներով երեսը ծածկեց և բերնէն խղճուի, անկապ ձայն մը դուրս ելաւ՝ դառն հեծկլատւքներով խառն:

— Ես յիմար զգացում մ'ունեցայ բողբոջուայն օտարականին որ ինծի այդպիսի նախատինք մ'ըրաւ — շարունակեց Նորպերգ առանց ուշադրու-

թիւն դարձնելու իբ մօր յուզումներուն — ինքզինքս սանձեցի աւելորդ գայթակղութիւն մը չզրգոելու համար... յետոյ ըսի ինքնիրենս. կըրնայ անուան սխալ մը ըլլալ...:

— Շարունակէ՛ — մրմնջեց մարգիզուհին:

— Սակայն հազար ու մէկ ենթադրութիւններ մտքէս անցան. հազար ու մէկ պարագայ որոնց նախապէս բնաւ կարեւորութիւն չէի տուած. ժամեցի քու զգուշաւորութեանդ վրայ՝ հօրս մասին ինծի խօսածդ ժամանակ, և ինքնիրենս եզրակացուցի, որ իրաւցնէ ես պէտք եմ... այն ... որդին ըլլալ...:

Պիանքա փութաց մէկ ձեռքով Նորպերգի բերանը փակել:

Վերջինս զայն մէկդի հրեց և յամառութեամբ շարունակեց.

— Թէպետե ապացոյց մը պէտք էի ունենալ, բայց բարեբախտաբար այս անգամ եւս բախտը ինծի օգնեց: Երբ քանի մ'օր առաջ քու գրասենեակդ կը գտնուէի և անտարբերութեամբ դարակդ կը խառնէի բանալիս գտնելու համար, այժի կարծրը կաշիէ գրքոյի մը ձեռքս անցաւ:

— Եւ զայն կարգացի՛ր — գոչեց մարգիզուհին բարկութենէն ու սարսափէն դողդղալով:

— Ո՛չ միայն կարգացի, մայրիկ — պատասխանեց պատանին հանդարտութեամբ — այլ քովս առի... անիկա ինծի նուիրական է... վասն զի քու պատմութիւնդ կը պարունակէ և իմ էու-

թեանս վաւերական գրաւոր հաւաստիքներն ունի
... ա՛խ, ա՛խ, եթէ մէկը գիտնայ թէ ազնուական
Պիանքա մարգիգուհին փողոցայլն մարդասպանի
մը սիրուհին եղած է:

— Եղկելի՛ — գոչեց տիկինը կատաղասիրտ
— կ'ուզես ուրեմն զիս փճացնել, տո՛ւր ինձի սա
գրքոյկը...:

— Դու չես գիտեր մայրի՛կ — ըսաւ պատա-
նին երգիծական ժպիտով մը — դարձեալ կը կրկ-
նեմ, ան ինձի նուիրական սրբազան է... միակ
ժառանգութիւնս է զոր հօրմէս կ'ունենամ...:

— Այնպէս թող ըլլայ — ընդմիջեց Պիանքա
արհամարհական ժպիտով մը, հետզհետէ իր հան-
դարտութիւնն առնելով — բայց փոխադարձ երգ-
ո՛ւիք որ բացարձակապէս պիտի հրաժարիս հոս
եկող կնոջմէն...:

— Գարմէլի՞ դայէն հրաժարիլ... բնա՛ւ, եր-
բե՛ք:

— Ուրեմն կը սիրե՞ս զայն:

— Եւ դու ալ կը հաւատաս, գոչեց գոռոզ
չեչտով մը:

— Բայց վերջապէս անկէ ի՞նչ կը յուսաս:

— Իմ գիտնալու բանս է, եւ աւելի մօտե-
նալով մօրը՝ դողդոջուն մրմնջեց անոր ախանջին
— ուրեմն չե՞ս գիտեր, որ հօրս անունը ինձի
տալով... անոր ախտերուն ալ ժառանգորդ կ'ըլ-
լամ...:

Պիանքա զարհուրած գլուխը ծռեց... արգիօք

իւր որդին ո՞ճի՞ր մը մտադրած էր:

— Եւ յետոյ, շարունակեց Նորպերգ, ինձի
չըսի՞ր թէ կատես այն աղջիկը: Սօրէ՛:

Պիանքա այնպիսի դաժան ակնալ՛, մը դար-
ձուց Նորպերգի, որ պատասխանէ մը աւելի
կ'արժէր:

— Շատ լաւ, շատ պիտի չուշանայ քու ա-
տելութիւնդ իւր գոհացումը գտնելու... ես քու
տեղք անկից վրէժ կը լուծեմ:

— Եւ ի՞նչ կերպով...:

— Ես գիտե՛մ — կրկնեց Նորպերգ...:

Պիանքա չուզեց պնդել: Մայր և որդի լռե-
ցին վայրկեան մը:

Վերջապէս յիշելով մարգիգուհին թէ այն գի-
չերն ինչ բանի համար եկած էր Նորպերգի պա-
լատը:

Քիչ մնաց կը մտնայի, ըսաւ, քեզի հետ
կարեւոր գործի մը վրայ խօսելու: Եւ Պերդրանտի
նամակը ծոցէն դուրս հանելով, տղուն երկնցուց՝
ըսելով. — կարծեմ, լուսագոյն է, որ քիչ մը ժա-
մանակի համար թորինոյէն հեռանաս...:

— Եւ ինչո՞ւ... սյս ապուշ ծերը օգը պիտի
հանէ իմ բոլոր ծրագիրներս — մրմնջեց Նորպերգ:
Եւ մօրը դառնալով — ի՞նչ բանէ կը վախնաս
— ըսաւ քաղցրութեամբ — դու կրնաս ապահով
ըլլալ իմ պալատիս մէջ: Առ այժմ անկարելի է
մեկնելիս... վերջը չեմ գիտեր, տեսնե՞ք... դիտա-
ւորութիւն ունիմ քիչ ատենէն մինչև Ամերիկա

ճամբորդելու... դու ալ ինձի կ'ընկերես... մենք հարուստ... երջանիկ կ'ըլլանք:

— Երիտասարդն իր նախորդ բարկութիւնը մոռնալով, սկսաւ այն քաղցր ապագային վրայ խօսիլ որ իրենց կ'սպասէր աւելի ծիծաղկոտ հողի մը վրայ... :

Պիանքա յափշտակուած մտիկ կ'ընէր: Եւ իր խռովութիւնն անզգալի կերպով կը ցրուէր. խելացնոր մայրը, իր որդւոյն համար սրտատար լի վայրագ նախանձով մոլեգին տիկնոջ մը կերպարանքն առած էր... :

Հուսաստոյն երկուքն ալ յանկարծակիի բերաւ, մինչ մտերմական խօսակցութեամբ մը դրացած էին

Արեգակն արդէն հորիզոնին վրայ բարձրացեր էր երբ Ռինա արթնցաւ:

Ի սկզբան իր տարտամ ու անորոշ մտածութիւնը չէր կրնար տրամաբանել թէ ուր կը գտնուէր. բայց երբ աչքերը բոլորովին բացաւ, ճանչըցաւ նոր աննեակը և չիշեց նախորդ երեկոյեան բոլոր անցած դարձածը: Այն ժամանակ իր կարմրած դէմքը սպիտակ սաւանին մէջ ծածկելով, սկսաւ քանի մը գոչրկեան լսիկ լալ:

— Ո՛հ, երազ մը չէ իմս — գոչեց վերջապէս արցունքով ողորտած գեղեցիկ դէմքը բանալով և ձեռքերը միացնելով խոր ցաւի սրտայայտութեամբ — Ես հոս մինակ եմ... անձանթ տան մը մէջ... մարդու մը ձեռքը, որ թէպէտ բարի և

ազնիւ, սակայն անյաղթելի երկիւղ մը կարթնցնէ մէջս:

— Ո՛հ, մայրիկ — շարունակեց նա աչքերը երկինք վերցնելով — Ինչ պիտի ըսես եթէ թըռուառ Ռինադ տեսնես: Այս էր ուրեմն ճակատագիրը որ ինձի կ'սպասէր, յետ այնքան մաքուր երջանիկ օրերու: Կարելի՞ բան որ մարգիգունին, այնպիսի գեղեցիկ կերպարանքի մը տակ՝ այսպիսի ամբարիճտ ոգի մը անուցանէր: Եւ սակայն այն մարդը չստեց, կ'զգամ... Ինչպէս կ'զգամ թէ, պիտի չկարենամ նաև անիծել այն կինը, զոր սիրելի էր ինձ մայր կոչել... Զայն շատ կը սիրէի... Եւ հիմա, Աստուած իմ, ինչ պիտի ըլլամ ես... այն մարդը խոստացաւ իմ անմեղութիւնս յարգել, ինձի հայրութիւն ընել, ... բայց կրնամ վստահ ըլլալ:

Հազար ու մէկ մտածութիւն խոնուեցան աղջկան յուզեալ մտքին մէջ, հազար ու մէկ կարծիք փոխանակեցին իրարու, հազարաւոր երկիւղ զինքը կը խռովէին: Ինչպէս մէկը որ ցաւալի երազէ մը արթննալով ի գուր կը ջանայ մէջ ընդ մէջ պատահած սարսափներու իրական կամ երեւակայական մեկնութիւն մը տալ, այսպէս մեր որբունին կը ջանար՝ բայց անօգուտ տեղ լուծել զինք խռովող կիզիչ տարակոյսներն:

Անկողնէն դուրս ցատքեց դեռ աչքերը արտասուաթոր. և ի վարմանս իրեն, փոխանակ իր սպիտակ զգեստին՝ զոր նախորդ իրեկունը կը կրէր

աթոռին վրայ պատրաստուած գտաւ առտուան շքեղ զգեստ մը. երկնագոյն, սպիտակ կզաղխի մորթով աստառապատ: Ռինա գրեթէ վայրկեան մը երազուն նայեցաւ անոր. կը վախնար զայն հագուել, սակայն ցուրտէն կը դողդղար:

Գաղափարը, թէ մի՛ գուցէ մէկը զինք գօտելոյժ տեսնէ, յազթանակեց իր վարանումին: Այն զգեստը յատկապէս իրեն համար պատրաստուած կը թուէր:

Աւելի հանդարտելով, աչքերը սենեակին շուրջը պտրտցուց: Ազաւնեակի մը խնկուած բոյն մ'էր, բոլորովին սպիտակ ծաղկէ նկարէն: Ռինա արհամարհոտ անտարբերութեամբ նայեցաւ, իր փորձովը սորված էր չվտահիլ մետաքսներու և թաւիչներու: Նոյն պահուն մօտեցաւ պատշգամի մը վրայ նայող լուսամուտին՝ ուսկից պարտէզ կ'իջնցուէր: Բայց ծաղիկները չորցած էին ու անհետացած... դեղին տերեւները կը շարժէին ծառոց և մացառներուն վրայ...:

— Ահաւասիկ — ըսաւ ինքնիրեն որբուհին, իբրև պատասխանի իր մտքէն անցած մէկ մտածութեան, — ճիւղերէն բաժնուած այս տերեւներուն նման ճիշտ... մի առ մի ինկած են իմ ցնորական խորհուրդներս. իմ կեանքս նման է ճիշտ այս դալար ու գուարթ պարտիզին... այժմ մերկ ու անապատ դարձած:

Ռինա աւելի տխրելով, և լռելով ի տես այդ մեռեալ ընութեան, թողուց լուսամուտն ու ան-

կողնոյն մօտեցաւ: Անոր քով երեսուէ աղօթարան մը կար՝ ոսկեզրուազ սպիտակ մետաքսէ բարձով: Աղօթարանին վրայ կախուած էր Բրիտտոսի գեղեցիկ պատկերը՝ անարգ խաչին վրայ, որուն վրայէն կարծես կ'ըսէր որբուհիին. «Տե՛ս, ես ալ կը սիրէի, բայց մատնուեցայ... ես ալ անմեղ էի և վաճառուեցայ. ինձմէ սրբվէ՛, պէտք է համբերել և ներել»:

Այն խաչելութեան պատկերը պարզամիտ օրիորդին վրայ հաւատք և անբժութիւն ներշնչեց, յանկարծական հակազգեցութիւն մը: Իրեն մթընցած դէմքին վրայ գոհութեան ճառագայթ մը երեւցաւ, սրտին մէջ քաղցր ու կենդանի յոյս մը արթնցաւ...: Ինչո՞ւ դեռ երջանիկ պիտի չկատենար ըլլալ: Ո՞վ զիտէ թէ Աստուած այն վիշտերը չէր զրկած միակ իր բարւոյն համար. զինք չար արարածի մը ձեռքէն փրկելու համար...:

Այս մտածութեան վրայ գրեթէ սիրտը փոքրկեցաւ, ծնրադրեց, ձեռքերը միացուց և — Աստուած իմ—գոչեց—նրէ տկարութեանս... նրէ՛ որ քիչ վստահութիւն ունեցայ վրագ: Զիս քու ձեռքը կը յանձնեմ... պահէ, պաշտպանէ՛ զիս. դու որ անգամ մը զիս փրկեցիր, սակից վերջն ալ կը պաշտպանես...:

Բոլորովին իր աղօթից մէջ ընկղմած, Ռինա չտեսաւ որ մարդ մը իր սենեակը կը մտնէր, և միայն ցնցուեցաւ երբ լսեց որ անուշ ձայն մը էր աղանջին կը փսփսար. — աղօթէ՛, աղօթէ՛,

խեղճ աղջիկ: Աստուած անմեղներուն կը լսէ և կը պաշտպանէ զանոնք:

Ռինա յանկարծական աղաղակով մը ոտքի ցատքեց և իր շրթունքները երկնային ժպիտով մը փայլեցան, տեսնելով օրիորդ մը՝ որ առջեւը կանգնած էր: Գարմէլիդան էր... Գարմէլիդան աւելի գեղեցկացած կ'երեւնար քան երբեք, գորշ բրդէ պարզ զգեստ մը հագած էր, որ զարմանալի կերպով դուրս ցատկել կուտար անոր գեղեցիկ մարմնոյն ձեւը:

— Ներէ՛ — ըսաւ նա իր սև աչուրները օրիորդին վրայ անկելով՝ աննկարագրելի փափուկ արտայայտութեամբ մը — ներէ՛ որ քեզ անհանգիստ ըրի... ո՛հ, մարդ երբ վիշտ մ'ունի շատ կը նպաստէ աղօթքը, և դու կը տարապիս, ազնիւ օրիորդ... — աւելցուց, ընտանեբար իր ձեռքէն բռնելով...:

Ռինա խանդաղատանօք սեղմեց անոր ձեռքը և սպանուհիին երախտագիտական ակնարկ մը նուիրեց: Յանկարծակիի գալը և յուզումը արգելեցին իրեն խօսելու:

— Հա՛յրս զիս քեզի զրկեց — շարունակեց Գարմէլիդա շնորհալի կերպով մը — բայց եթէ ինքն ալ ինձի բան մը ըսած չըլլար, իմ սիրտս զիս հո՛ս պիտի մղէր, վասն զի կը գուշակէի թէ ինձի պէտք պիտի ունենաս:

— Եւ ո՛վ է քու հայրդ — թոթովեց Ռինա զոզոջուռն:

— Լաւրինտիո՛սն է, պարոն Մարագի սե- նեկապանը — պատասխանեց օրիորդը զրեթէ ցասկոտ շեշտով մը... բայց խսկոյն ձայնը քաղ- յորրացնելով — եթէ իմ օգնութիւնս — աւելցուց — եթէ իմ ձեռնտուութիւններս կրնան օգտակար ըլլալ քեզի, ինքզինքս երջանիկ պիտի զգամ երբ ո՛ր և է բան մ'ընեմ քեզի. արդէն կ'զգամ թէ ի սրտէ կը սիրեմ զքեզ:

— Փոխադարձ կ'ես — դոչեց Ռինա բոլորովին զգացուած, մանկական պարզմտութեամբ անոր վիզը փաթթուելով, որ այսպիսի վեհանձնութեամբ իրեն նեցուկ կը կանգնէր:

Գարմէլիդա զգուեց որբուհին քրօջ մը փափուկ և կաթոզին սիրով: Տեսնել այս երկու գեղատեսիլ օրիորդներն, և այսպէս իրարմէ տարբեր գեղեցկութեամբ, զիրար գրկած՝ տաղանդաւոր նկարիչի մը երկու պատկերներու նիւթ կրնար ընել, տկարութիւնն և ուժը. երիտասարդութիւնն և սէ՛րը:

— Բարեբար Աստուած զքեզ զրկեց — խօսք ստաւ Ռինա գլուխը վերցնելով և երկչոտ ու ազաշական ակնարկ մը ձգելով սպանուհիին դէմքին վրայ. — զիս պիտի չթողուս ա՛յլ եւս, այնպէս չէ՛:

Գարմէլիդա ժպտեցաւ անոր մէկ ձեռքը սեղմելով: Ինքը չէր կրնար ըսել այն խեղճ աղջկան թէ պիտի չկարենար միշտ իր քով մնալ... բայց իր ձեռք սեղմելուն մէջ՝ խոստում մը... իր ժրպ-

տին մէջ՝ սփոխանք մը կը թարգմանուէր:

— Մի՛ տարակուսիր, քեզի ի՛նչ ալ հանդիպելու ըլլայ՝ ես հո՛ս եմ:

Հակառակ իր ակնկալութեան, զգաց Ռինա որ իր վիշտերը կը խողաղին կամաց կամաց իր ընկերուհիին ամենաքաղցր ձայնէն, և զիշերուան խռովութիւնը անզգալի կերպով փարատեցաւ տեղի տալով գողտր ու քաղցր ուրախութեան մը: Նա ժպտեցաւ մանկական ուրախութեամբ՝ զեղեցիկ սպանուհիին խանդավառ խօսակցութեան վրայ. իր իմացականութիւնը՝ հաւատարիմ իր քաղցր ու պարզ բնագոյումներուն, իր նախկին ընտանի երջանիկ տեսիլներուն կը վերադառնար:

Լաւրինտիոս օրիորդին նախաճաշն ու ճաշը պատրաստեց՝ ննջասենեակին կից փոքրիկ ճաշասրահի մը մէջ: Ռինա խնդրեց ծերունիէն, որ իր աղջկան ընկերութիւնն իրեն շնորհէ, և խեղճ մարդը՝ հաւանեցաւ լալու աստիճան յուզուած:

— Ինչո՞ւ սեղանաւորը չգար — հարցուց որբուհին Գարմէլիդային այնպիսի պարզութեամբ որով կը խօսի բարի և վեհանձն սիրտ մը, որ շուտով կը մոռնայ չարիքը՝ միա՛յն բարիքը յիշելու համար...:

Այս հարցման վրայ՝ սպանուհին ուշադրութիւնը սրեց և օրիորդին երեսին հետաքննող ակնարկ մը տուաւ: Բայց Ռինայի դէմքը այնչափ ոգւոյ անկեղծութիւն ցոյց կուտար, ժպտաւ այնպիսի մաքուր ու պայծառ էր, որ Գարմէլիդայի

մտքին տարակոյտը փարատեցաւ, և անտարբերութեամբ պատասխանեց.

— Իմ տէրս այնչափ գործերով զբաղած է որ իր գրասենեակէն չի կրնար դուրս ելլել. այսօր զինքը չիս տեսներ:

Սակայն այս էր ճշմարտոր. Մարագ կը փափաքէր որ որբուհին իր յուզումներէն կատարելապէս հանդարտի. կը վախնար որ եթէ անմիջապէս ներկայանալու ըլլար՝ կրկին տխուր տպաւորութիւն մը պիտի ձգէր անոր վրայ:

Երեկոյեան ժամը վեցէն քիչ մ'առաջ, Գարմէլիդա հրաման խնդրեց վայրկեան մը առանձնանալու: Ան Նորպերդի տուած խոստումը կը յիշէր... չէր ուզեր պակսիլ՝ որչափ ալ որ այն սիրուն օրիորդին սէրը զինքը կը ձգէր:

Իսկոյն սենեակը վազեց, կաղամար մը, թերթ մը թուղթ ու գրիչ մը հանեց դարանէ մը, նստաւ գրասեղանին առջև և գրեց.

«Միրելի Նորպերդս,

«Հակառակ իմ սաստիկ փափաքիս, անկարելի է որ այս գիշեր քեզի կարենամ գալ:

«Այս առտուընէ սկսեալ՝ ընկերութիւն և «պահպանութիւն ըրի խեղճ որբուհիին, որուն «մասին քեզի խօսեցայ: Այս գիշեր ինձի համար «ալ միեւնոյն սենեակին մէջ անկողին մը պիտի «պատրաստուի, որովհետև խեղճը կը փափաքի որ «ես միշտ իր մօտն ըլլամ: Ա՛խ, Նորպերդս, եթէ «տեսնես թէ ի՛նչ սիրուն աղջիկ է . . . ո՛րչափ

«գեղեցիկ... և ի՞նչ անմեղ: Պատժէ՛ թող Աստուած
«այն ոճրագործ կինը, որ փորձած էր ապականելու
«այսպիսի անմեղութիւն մը:

«Փորձած էր կ'ըսեմ, որովհետեւ Մարագ
«սեղանաւորը, այն բարերար մարդը, այն իմ
«խնամակալ հրեշտակս, նմանապէս թշուառ օր-
«իորդին ազատարարը եղած է: Իր ազնուասրբ-
«տութիւնը դժոխային գործը խափանեց, ի դերև
«հանեց Ռովէրպէլլա մարգիդուհին մատնութիւ-
«նը. այնպէ՛ս որ ազլիկը՝ փոխանակ անասնարա-
«րոյի մը ներկայութիւնը գտնուելու, սիրագիւղ
«հայր մը, գողտը բարեկամ մը... եռանդուն
«պաշտպան մը գտաւ...:

«Ձեմ գիտեր, Նորպե՛րգս, ե՛րբ կրնամ քեզ
«տեսնել. գոնէ քեզի չափազանց վիշտ չպատճա-
«ռելու համար: Գիտցիր որ իմ սիրաս միշտ քեզի
«հետ է, և թէ բարի գործ մ'է զոր պիտի ընեմ ..
«և թէ այն արգելքները որ գմեղ իրարմէ կը
«բաժնեն՝ աւելի եւս իմ սէրս կ'աճեցնեն:

«Եթէ փափաքի՞ս ինձի գրել, պիտակդ սովո-
«րական տեղը դի՛ր: Առ այժմ մնաս բարեաւ...
«մինչև առաջին առիթը հանդիպի՛ յորում դարձ-
«եալ մօտդ գտնուելով կրկնեմ թէ կը պաշտեմ
«զքեզ:

«Բոլորանուէր քոյգ
«Գարմէլիդա»

Գեղեցիկ սպանուհին ծայրեց և կնքեց թուղ-
թը, յետոյ ծածկարար պարտէզ իջաւ, և սեղա-

նաւորի պալատին ետեւի կողմը գտնուած՝ մութ
խճուղոյ մը վրայ բացուող երկաթէ վանդակա-
դրան մօտենայով. քար մը վերցուց և նախկը
հոն տակը դրաւ: Ապա աւելի հանգիստ ու զուարթ
Ռինայի սենեակը վերագործաւ:

Շուրջ քառորդէ մը, Նորպերգ այն ամայի
նրբուղիէն կ'անցնէր, ձեռքերը գրպանը դրած,
հանգարտօրէն ծխելով: Երբ վանդակադրան մօ-
տեցաւ, չորս կողմը դիտեց ապահով ըլլալու հա-
մար թէ մէկը զինք չի տեսներ, ձեռքը երկաթէ
դռնէն ներս խոթեց, քարը վերցուց և նամակն ա-
ռաւ: Յետոյ ամենայն հանգարտութեամբ կանթե-
ղի մը քով գնաց, որուն լսյսը քիչ հեռուն կը փայ-
լէր և հոն նամակը բացաւ:

Բայց հազիւ առաջին տողերը կարդաց, կա-
տաղարար ակռաներուն մէջ բռնած սիկարը ծամեց
հայնոյանք մը արձակելով:



ԺԲ.

Յոյսը, որուն՝ մարդս այնքան դիւրաւ կը
փարի կեանքի դարնան մէջ, սկսած էր իրեն ծա-
ղիկները սփռել մեր սրբուհիին օրերուն վրայ:
Իրաւցնէ, գրեթէ ամբողջ ամիս մը կար որ Ռինա
սեղանաւորի պալատան մէջ կը բնակէր, և իրեն
յատկացուած յարկաբաժնէն բնաւ դուրս ելած
չէր. բայց հոն ամէն երեւակայելի սփոփանք կը

նաւորութիւն մըն էր, այլ իր համոզիչ և ձգիչ ձայնը, իր համարձակութիւնը և ուղղամտութիւնը խոր ապաւորութիւն մը կ'ընէին իրեն մերձեցողներուն...:

Նա շատ ճամբորդած էր, անոր համար կ'ախորժէր պատմել այն ժողովրդաց բարքերն ու սովորութիւնները որոնց մէջ ապրած էր:

Իր տաք, թափանցող, երեւակայոտ խօսակցութիւնը մեծ ժամանց մ'էր Ռինայի համար՝ իրեն միայնութեան մէջ այլեւս չէր սարսափէր սեղանաւորէն, ընդհակառակն կ'ախորժէր եթէ ստէպ այցելեր: Եթէ Մարագի խօսակցութիւնները որբուհիին ներկայութեան խանդավառ էին՝ Լաւրինտիոսին հետ ընդհակառակն անտարբեր էին: Որչափ ոյժ որ ունէր Մարագ՝ բաւական չէր զինք տիրապետող մագնիսական ձգողութեան դիմադրելու: Այն խարտեաչ և երկչոտ աղժիկը զինք կը հրապուրէր... կը կախարդէր: Ինք կը ջանար վրտարել իր իզձերը, կը դատասպարտէր իր յոյսերը կ'առաջարդէր ա՛յլ եւս զայն չսիրել, չզրժել վստահութեան զօր օրիորդն ունէր իր վրայ. բայց հազիւ Ռինա կ'երեւնար, բոլոր իր առաջադրութիւնները կը մոռնար, դարձեալ կը մտնէր ցնորական խորհուրդներով և բոցը դոր կը ջանար մարել, աւելի սաստկաբար կը լափլիզեր զինք: Դեռ ինչպէս երկայն ժամանակ դիմադրել այն բաղձանքին որ գրեթէ մտախաբութեան կը փոխուէր...:

Գիշեր էր, հովը կը փչէր մուկիւն, ձիւնը խոշորահատ կը տեղար: Փողոցներու լապաերները գողգողուն և տարտամ լոյս մը կ'արձակէին. ճամբաները բոլորովին ամայի էին:

Մարագ անկողին մտած էր բայց չէր քնանար, տխուր մտածութիւններ կ'ալեկոծէին զինք: Իր բարոյական զգացումները մերթ վայրկենաբար չափէն անդին՝ երեւակայական երանութեան սահմանները կ'արշաւէին՝ սիրած կինը իրեն ստանձնելու հեշտանքէն, մերթ նախազուշակութեան կը կառչէին՝ օր մը զայն ուրիշին բազկաց մէջ տեսնելու երկիւղէն. և մերթ մարդատեաց կատաղի վիճակ մը կ'առնուր՝ որ իր բոլոր ժամերը խոր շիլի դառնութեան կը փոխէր:

Լաւրինտիոս, գիշերային կանթեղը ստուի մը վրայ դնելէ վերջ, կ'ուզէր առանձնանալ, բայց սեղանաւորը զայն կեցուց.

— Սիրելի ծերուկս, — ըսաւ ան քաղցրութեամբ — քիչ մ'ալ կ'սպասե՛ս հետս խօսելու համար...: Ներսս անբացատրելի անհոնգստութիւն մը կ'զգամ, որ թոյլ չի տար աչքերս գոցելու. կարծես շունչս պիտի սպառի: Իմ կեանքի ամենատխուր անցքերը կը յիշեցնեն...:

— Խեղճ Լաւրինտիոս — մրմնջեց Մարագ երեսաբարձին վրայ հանգչելով — կ'ըմբռնեմ վիշտերդ...: Ներէ՛ եթէ զբեզ կը զբաղեցնեմ... մինչդեռ անշուշտ կը փափաքիս միայնակ մընալ:

— Ի՛նչ բաներ մտքերնէդ կ'անցունէք սիրելի տէրս — բացագանչեց ծերը աշխուշութեամբ — ինծի հաճոյք մ'է որ զիս խօսքի կը բռնէք... որովհետև ձեզմէ աւելի սրտակելու տրամադրութիւն չունիմ և ձեր վիշտերուն վրայ խօսելով իմ'իններս կը մոռնամ...:

Երախտագիտութեան ժպիտ մը փայլեցաւ սեղանաւորին շրթանց վրայ:

— Ուրեմն դու ըմբռնած ես որ ես կը տառապիմ — ըսաւ ան վարանոտ կերպով մը — շատ լաւ, և բուն նպատակս է արդէն քեզի հետ լուրջ ցաւալի բաներու վրայ խօսելու... Ռինայի համար:

— Ձեր խռովքը այս մըրկալից գիշերուան պէտք է տաք — պատասխանեց Լաւրինտիոս, տիրոջ անկողնոյն քով նստելով — ես ալ ձեզի պէս կ'զգամ... որովհետև այս տեսակ գիշերները ունեցած տարփանքիս վրայ... այնպիսի բաներու որ սրտիս վրայ մնացած են... և ասոր համար քեզմէ խնդրեցի որ կենաս...:

Լաւրինտիոս բոլորովին մեղամագձօտ և ներողամիտ աղնարկով մը նայեցաւ իւր տիրոջ ըսելով.

— Ի՛նչպէս մեծ և վսեմական վարմունք էր զոր ցոյց տուիք դէպի այդ թշուա՞ն որբունիս:

— Այնպէս է խեղճ ծերո՞ւկս — ըսաւ Մարգ յուզեալ ձայնով մը — սակայն ի՛նչ պիտի ըսես եթէ գիտնաս իմ գոհողութեանս անհունու-

թիւնը: Բան մը, տեսակ մը գարնուրելի բան մը ունիմ որ զիս կը ջլատէ: Միթէ կարելի է վայրկենաբար մարել սէր մը որ բոլոր իմ էութիւնս կը կազմէ: Ի՛նչպէս կրնամ զայն տեսնել առանց ըզեզս ցնորելու: Ի՛նչպէս զայն աղջիկս կանչել, այն վճիտ ճակատը համբուրել, առանց սուր խզի խայթ մը զգալու...: Ո՛հ, հաւատա՛ Լաւրինտիոս, ես շա՛տ դժբախտ եմ: Խենթեանալու բան է: Եւ ինքը այնպէս սիրուն ու միամիտ, չի ըմբռնէր թէ ի՛նչպէս իր սիրուն կերպերը, իր ազնիւ քաղքաւարութիւնները, երախտագիտական անուշ խօսքերը, զոր ամէն օր ինծի կ'ուզէ, ուրիշ բան չեն ըններ, բայց եթէ աւելի եւս կ'աճեցնէն այս զիս լափլիզող հրդեհը: Երեկ, տե՛ս, ես իր քով նստած էի, և Ափրիկէի մէջ վազը որսութեանս ժամանակ ինծի պատահած դէպք մը կը պատմէի իրեն: Խեղճ աղջիկը երկիւղէն այնպէս գունաթափ ճերմկցած էր՝ լսելով զլսուս եկած վտանգը, որ վայրկեան մը դալկացած գլուխը ուսերուս վրայ ձգեց, թոթովելով. «Ի՛նչ գարնուրելի բան... սարսափելի բան, ... բայց Աստուած զքեզ փրկած է... և ես պէտք եմ իրեն շնորհակալ ըլլալ...»

«Ուրեմն, Լաւրինտիոս, կը հաւատաս: Ես դեռ անուշ և ճեշտալի բոյրը կ'առնեմ, իր խարտրեալ մաղերուն, որ այն ախորժելի լքումին մէջ իմ դէմքս կը շոյէին, և անա այդ բոյրը ա՛յն աստիճան զիս կը գինովցնէ, զիս կը հրահոսէ որ

վախնամ ըզեղս ցնդի...:

Մարագի ձայնը տարօրինակ կը հնչէր...
աչքերը բոցավառեր էին...տենդոտ... կը տեսնուէր
թէ ան սաստիկ կը տառապէր:

Քանի մը վայրկեան լուռթեանէ վերջ, դարձ-
եալ խօսիլ սկսաւ աւելի հանդարտ ձայնով:

— Ներէ՛ ինծի, սիրելի՛ ծերունիս, որ չեմ
զիտեր իմ զգացումներուս սանձ դնել. անշուշտ
քեզի շատ ծաղրական պիտի թուիմ... Ո՛հ, —
չարունակեց զլուխը ծռելով և աննկարագրելի
տխուր շեշտով մը — մանաւանդ թէ այն օրիորդին
երջանկութեանը նպատակնք: Ձի կրնար այս ա-
ռանձնացեալ կեանքը շարունակել: Ի՛նչ կ'եսես,
խորհուրդ մը չե՞ս տար... ո՛չ մէկ խօսք ու կա-
րենայ պաշտպան հանդիսանալ իր պատուոյն՝ դէ-
պի այս ընկերութիւնը՝ որուն երեւութապէս
միայն կը նսջի:

— Տէ՛ր, — ըսաւ հառաչանքով մը Լաւրին-
տիոս — ի՛նչպէս կ'ուզէք որ սզէտ ծառայ մը
կարենայ...:

— Ո՛հ, այդպէս մի՛ ըսեր — ընդմիջեց Մա-
րագ — քու գեղեցիկ սիրտդ որ և իցէ հանձարէ
մը աւելի կ'արժէ. քու խորհուրդներդ բնաւ չեն
սխալիր. երբ ես գանոնք կը լսեմ՝ ինքզինքս պ-
ւելի լաւ կ'զգամ:

— Շատ լաւ — պատասխանեց Լաւրինտիոս
դողդոջուն և սրտայոյզ ձայնով — քանի որ չէք
արհամարհեր ձեր հաւատարիմ ծառային մէկ խոր-

հուրդը, յօգուտ այն սիրուն աղջկան, ահաւասիկ
զինքը՝ գ'զի կնութեան առէ՛ք:

Սեղանաւորը ցատքեց անկողնոյն վրայ՝ հը-
րավառ աչքերով Լաւրինտիոսին նայելով...:

— կը կարծե՞ս թէ Ռիւան հաւանի:

— կը յուսամ — պատասխանեց Լաւրինտիոս
հաստատ ձայնով — վասնզի որչափ ես անդրա-
դարձեր եմ աւելի հաւանական կը տեսնեմ թէ
նա, դուցէ առանց իսկ իրեն զիտութեան, ար-
դէն զձեզ կը սիրէ...:

Մարագի գեղեցիկ և անկեղծ դիմագծու-
թիւնը կենդանացաւ:

— Լաւրինտիո՛ս — ընդհատեց՝ ձեռքերը մի-
ացնելով, — Լաւրինտիո՛ս, ունա՛յն յոյսեր մի՛
ներշնչեր ինծի: Այն հրեշտակէն սիրուելու գա-
ղափարը զլիսու պտոյտ կը պատճառէ ինծի...ե-
թէ անգամ մ'ալ անկից մերժուիմ, անձնասպա՛ն
կ'ըլլամ:

— Այդ կէտին չէք հասնիր, վասն զի, կը
կրկնեմ դարձեալ վստահ եմ թէ նա պիտի չմեր-
ժէ ձեր ձեռքը, եթէ իրեն տալու ըլլաք: Մա-
կայն հարկ չկայ խնդիրը շուտափոյթ տեսնելու:
Զգուշանալու է գայն վատնողի մէջ՝ դնելէ. ան-
սահման վստահութիւն մը պէտք է ներշնչել ի-
րեն, և համբերութիւն ունենալ. ա՛հա այս ճամ-
բան պէտք է բռնել:

— Շատ լաւ, այդպէս կ'ընեմ. վատնողի կ'ու-

դեմ քու խօսքերուդ հաւատալ: Սակայն, լաւ-
րինատի՛ս, սիրելի բարեկամ, վախնամ որ կը
խարուխա: Ռի՛նա պարզամիտ է, շա՛տ պարզա-
միտ... ա՛յն որ իրեն մէջ սէր կը կարծես, գու-
ցէ ուրիշ բան չէ բայց միայն երախտագիտու-
թիւն: Եթէ հաւանի իմ կինս ըլլալ, ես աշխարհի
ամենաերջանիկ մարդը կ'ըլլամ ... իմ կեանքս
իրեն համար կը վատնեմ: Բայց չեմ ուզեր զինք
ստիպել: Իմ զժբախտութեանս լրումն պիտի ըլ-
լայ եթէ Ռի՛նա ինձի պատասխանէ («այ՛») ե-
րախտագիտութեան համար: Ո՛չ... ո՛չ... միայն իր
ձեռքը չէ որ կ'ուզեմ... իր սի՛րտը կ'ուզեմ, իր
ոգի՛ն... ինք բոլորովին համոզուած է թէ ես
զինք կը սիրեմ, բայց պէտք է որ նոյնչափ ալ
ինքը զիս սիրէ, և բացարձակապէս անհրաժեշտ
է, որպէսզի երկուքս ալ հաւասար մասն ունե-
նանք խնդրոյն մէջ:

«Քու խորհուրդիդ համեմատ դեռ պիտի
սպասեմ... պիտի կրկնապատկեմ հոգերս ու խը-
նամքներս: Առ այժմ կը մտածեմ զինք այս մե-
նակեցութենէն փրկել որուն ամիսէ մ'իվեր դա-
տապարտուծ է օդ, շարժում, գուարճութիւններ
անհրաժեշտ կարևոր են իր երիտասարդ հասա-
կին: Արդեն գործերուս համար Ֆիրէնցէ եր-
թալու միտք ունիմ ... կարելի է բոլոր ձմեռը
հոն մնամ: Հեաս պիտի տանիմ զինք որ վայել
տամ այն հաճոյքներն զորս կ'ընծայէ այնպիսի
ծաղիկեալ և ազնուական քաղաք մը... Ի՛նչ կըսես

ասոր:

Կատարելապէս կը հաստատեմ ձեր որոշ
ուղղութիւնը, բայց վախնամ որ դժուարութիւն
քաշէք զինքը իմ աղջիկէս բաժնելու մէջ:

— Գարմելիդան ալ միասին պիտի գայ,
բայց դու լաւրինատի՛ոս չես կընար մեզի ընկե-
րիլ... հո՛ս ես հաւատարիմ բարեկամի մը և
մարդու մը պէտք ունիմ որուն կարենամ իմ
շահերս յանձնել. իմ ընտրութիւնս քու և երի-
տասարդ գրագրիս վրայ է:

— Պօղոսի՛ն հարցուց ձերունին բարեմիտ
ժպիտով մը:

— Վստահելի չե՛ս գտներ— հարցուց Մարագ
անհանգստութեամբ:

— Ո՛հ, այդ կողմանէ կընաք հանգիստ ըլ-
լալ: Պօղոս երկչոտ համեստ է աղջկան մը պէս,
ինչպէս նաև պարկեշտ ու հաւատարիմ. ինձի լի
ու լի վստահութիւն մը կը ներշնչէ... բայց...:

— Ուրեմն ի՛նչ:

Լաւրինտիոս տիրոջ նայեցաւ դարձեալ՝ ժը-
պիտով:

— Կը վախնամ որ սիրահարուած չըլլայ, և
տարփածուններն եսասէր և անփոյթ կ'ըլլան...:

Սեղանաւորը սարսռաց և աչքերը իր հաւա-
տարիմ սպասաւորին վրայ սեւեռեց:

— Գիտե՛ս արդեօք, որո՞ւ, — հարցուց թա-
փով մը:

— Կարծեմ գուշակեցիք... Պօղոս... իմ աղ-

Ղիկս կը սիրէ:

Մարագ գաղանի հեշտութեամբ մը շունչ առաւ:

— Եւ Գարմելիդա — հարցուց զուարթարար:

— Ո՛հ, Գարմելիդա բնաւ մոռցած չէ իր փէփէն — մրմնջեց ծերունին արտութեամբ — և ես կը կարծեմ թէ իր երբտասարդ սիրար սիրոյ հանդէպ մեռած է:

— Կը կենդանացնենք զայն դարձեալ, մի՛ տարակուսիր — ըսաւ Մարագ միշտ աւելի ուրախ — և ո՛վ գիտէ թէ Պօղոս արդէն յաջողած չըլլայ զայն արծարծելու: Գիտես թէ կիներն աւելի դիւրաւ կը ծածկեն մեզմէ իրենց տպաւորութիւնները:

— Աստուած ձայնդ լսէ՛, Տէր: Միւս կողմանէ ճիշտը կը խոստովանիմ, Պօղոս միակ պատանին է որուն կ'ուզեմ աղջիկս տալ. մասնաւոր սէր մը, համարում մ'ունիմ իր վրայ, զոր կարեւոր կը համարեմ Գարմելիդայիս երջանկութեան համար: Ի՛նչ սիրով բողկացս մէջ պիտի գտուէի՝ որդի՛ կոչելով զայն:

— Ահա խօսք մը՝ զոր խեղճ երիտասարդը ծնրադիր պիտի լսէր — ըսաւ լրջօրէն սեղանաւորը — յետոյ անուշ կերպով մը ձեռքերը կաւրինատիտի ուսերուն վրայ գարնելով, շարունակեց զօրովայից ձայնով. — գնա՛ ... անկողին գնա՛, սիրելի բարեկամս և զիտցիր որ քու տիրոջը սրտին միակ իղձն է աղջկանդ՝ ինչպէս նա քու

երջանկութիւնը... գիշեր բարի, սիրելիս... բարի հանգիստ:

Կաւրինատիտս ուրախութեամբ լեցուած, սեղանաւորին ձեռքն համբուրեց, ճրագ մ'առար և մեղմով սենեակէն դուրս ելաւ: Սրահին մէջ կանգ առաւ, և շունչը բոնեց սրովհետեւ թեթեւ ազմուէ մը կարծեց լսել:

— Քամին պիտի ըլլայ — մրմնջեց ինքն իրեն, քանի մը վայրկեան ահանջ գնելէ վերջ:

Սանդուխէն վեր պիտի ելլեր որ իր սենեակն երթար, օդոյ հոսանք մը քիչ մնաց որ իր ճրագը մարէր և դարձաւ տեսնելու համար թէ ուսկից կ'ուզար, տեսաւ որ զադունի դռնակ մը՝ որուն խխունջածեւ սանդուխէն ստորերկրեայ սրահ մը կ'իջեցուէր և անկից պարտէզ, բայց մնացեր էր: Ո՛վ կրնար ըրած ըլլալ՝ Յիշեց որ երկայն ժամանակէ ի վեր այն դռնակը գոց էր, որովհետեւ անգործածելի էր, և յիշեց նաև թէ այն պահն բանալին կորսուած էր, զոր գտնելու բնաւ հոգ չէին ըրած:

Տգեղ մտածութիւններ կը սաւառնէին ծերուն գլխուն մէջ, բայց շուգելով աղմկել պալատը և միտքը գնելով միանգամայն ի՛նչ պատճառի համար այն դռան բացուիլը գիտնայ, սանդուխէն ներկնայարկն իջաւ: Հո՛ն ալ մեծ սրահի պարտէզին վրայ նայող դուռը կիսաբաց էր: Ինքը զայն բոլորովին բացաւ և դուրս նայեցաւ, երկինքը հրաշալի էր, պարզ. լուսինը կը փայլէր

երկնակամարին վրայ և բոլոր պարտէզը իր լոյս-
սով կ'ողողէր:

Լաւրինտիոս մարեց իր ճրագը և հակառակ
որ ցուրտ կ'ընէր, ծառուղւոյն մեջ մտաւ և ու-
շադրութեամբ գետինը կը գննէր, Ակնարկ մը
բաւական եղաւ ձիան վրայ տեսնելու քայլերու
հետք մը. սակայն այն քայլերը կնոջ մը կամ
տղու մը կը վերաբերէին, այնչափ աննշան ու
փոքր էին: Բաց քիչ մ'անդին ուրիշ հետքեր նըշ-
մարեց. կարծես մարդ մը չորքոտանի քայլերով
մինչև վանդակապատը գնացած էր, վասնզի ձեռ-
քի ծունկի հետքեր կը տեսնուէին: Վանդակապա-
տը հաստատուն գոցուած էր, ոչ ոք գայն շար-
ժած չէր որովհետև հոն ձիւնին ձեռք դպցուած
չէր:

— Կ'երգնում — ըսաւ Լաւրինտիոս ինքն ի-
րեն, քիչ մ'ապահոված — թէ յիմար Քէքքոյին
գործն է, որ իր մէկ սովորական խաղը ըրած է
վախցնելու համար, բայց եթէ այս անգամ ալ
ստուգեմ՝ զինք վնասել կուտամ. ասոնք ընելու
կատակներ չեն:

Խեղճ ծերունին աչքերը դէպի պալատին
պատուհանները դարձուց, որոնք կատարեալ խոր
լուծեան մը մէջ թաղուած էին: Լուսինը կը ցո-
լանար հանդարտօրէն սպիտակ պատին վրայ:

Լաւրինտիոս իր քայլերուն վրայ ետ դար-
ձաւ, կրկնելով.

— Ապահով Քէքքոյին գործն է:

Այս Քէքքոն, որուն վրայօք կը խօսէր Մա-
րագի սրտակիչը, խոհանոցի սպասաւոր մըն էր,
տասն և վեց տարեկան, չարածճի և անհանդարտ,
որ յաճախ պալատին մէջ կ'ախորժէր կատակներ
ընել, ծերագոյն սպասաւորները վախցնելու հա-
մար: Միւս կողմանէ լաւ տղայ մըն էր, ծառա-
յասէր, անկարող սուտ խօսելու կամ ուրիշին շա-
րիք մը հասցնելու:

Լաւրինտիոս հաստատապէս համոզուած թէ
դարձեալ փոքրիկ չարածճիին մէկ նոր կատակն
ըլլայ, միւսնոյն սրանը վերագարձաւ, ներսէն
դուռը լաւ մը գոցեց. վառեց ճրագը, սանդու-
ղէն վեր ելաւ ու միւս դուռն ալ փակեց, և աւելի
ապահով ըլլալու համար անոր ետևը կարասի մ'ալ
դրաւ: Յետոյ վայրկեան մը ականջ դրաւ. բայց
ոչինչ լսեց, ու ոչինչ տեսաւ: Այն ժամանակ, ա-
պահով իր սենեակը վերագարձաւ:



ԺԳ.

Սեղանաւորին գրագիրը, Պօղոս, քսան և վեց
տարեկան երիտասարդ մըն էր, դեղին մազերով,
տժգոյն և գողտրիկ դէմքով, ժպտուն աչքերով,
մտքուր և պայծառ ճակատով, որ կարծես պասն և
հինգ տարեկան կոյս մ'ըլլար: Տղայ հասակէն
որբ՝ դժբաղդ ծնողներէ, բարեբախտաբար աիկին

մը, զինուորականի մը այրին, վրան զթացած և զինքը իր խնամոց տակ առած էր:

Աստուած այս այրիին զաւակ տուած չէր, ուստի բոլոր իր մայրական սէրը նուիրեց այս մատղաշ ու դժբախտ արարածին: Ամուսնէն ժառանգած սկսաւ ինչքերը անոր հետ բաժնեց, և պատշաճ կերպով զինք զաստիարակեց, և սրտին մէջ բարի և խիստ բարոյականի սէր մը ցանեց:

Խեղճ այրիին ջանքերն անպտուղ չհղան: Պօզոս իմաստուն, բարեկիրթ և առաքինի մեծցաւ. զինք որդեգրող մօր վրայ ունեցած երախտագիտութիւնն անհուն էր. աշխարհիս մէջ անկից դաս ոչ ոք ունէր: Բոլոր իր սէրը ու խանդաղատանքը կեդրոնացած էին իր բարերարուհիին վրայ, առանց որոյ և որմէ հեռի՝ իրեն կը թուէր ըլլալ իբրև մատղաշ ու փափուկ բոյս մը՝ առանց նեցուկի, ենթակայ ամէն վտանգաց...:

Խեղճ Պօզոս: Ա՛յնպէս զուարթ, ա՛յնչափ երջանիկ էր, երբ իր բարերար տիկինը հիւանդացաւ: Անձկութեան և յոյսի խառն ամիս մը սահեցաւ. ամիս մը, որոյ տևողութեան միջոցին Պօզոս վայրկեան մը չբաժնուեցաւ այրի կնոջ անկողնէն: Բայց վերջապէս հասաւ այն դժբախտ օրը յորում խեղճ կինը ընդ միշտ փակեց աչքերը, օրհնելով այն պաշտելի որդին որ իր այրիութեան վրայ ա՛յնչափ ուրախութիւն սփռած էր:

Նս չեմ ուզեր նկարագրել պատանուոյն զգացած դառնաղէտ վիշտը, զոր նախորդ զիշերը

զիակին քով ունեցաւ: Համբ վիշտ մըն էր, բայց սարսափ կ'ազդէր: Մինչև այն վայրկեանը յորում այրիին մարմինը գերեզման փոխադրուեցաւ ոչինչ կրցաւ Պօզոս իր տեղէն շարժիլ: Քանի որ նա դեռ անկողնոյն վրայ տարածուած էր խեղճ երիտասարդը կը յուսար կարծես դեռ զայն ձեռք բերել. անոր մօտ նստած էր ... անոր հետ զբաղած էր մտքով և իր սիրտը իրենց փոխադարձ տածած սիրոյն յիշատակներովը կը ծփար: Երբ դազաղին կափաբիշը այրիին ցուրտ մարմինը ծածկեց, անպարտելի պատնէշ մ'երեւցուց իրեն...: Նոյն ըոպէին այլևս տէր չէր իր յուզումներուն, անզգայ գետին փռուեցաւ:

Շուրջ ամիս մը վերջ. ծերունի լուսնայափառ մը՝ որուն յանձնած էր խեղճ այրին իր Պօզոսը, առաջարկեց երիտասարդին զինք սեղանաւոր Մարագի քով դնելու:

Պօզոս երախտագիտութեամբ ընդունեցաւ ծերունիին առաջարկը և քիչ ատենէն զիտցաւ ա՛յնպէս Մարագի համարումը վաստկել, որ սա ամենավստահելի գործերն ալ իրեն կը յանձնէր:

Բայց Պօզոս, սրտին մեջ՝ սիրելու բուն պէտք մը կը զգար: Նա մեծ սիրոյ առարկայ մը կ'երագէր, ճշմարիտ քնարերգութիւն մը, միջին—զարեան սէր մը, հրեշտակ մը՝ որուն կը նուիրէր բոլոր իր առոյգ կեանքը: Միայն աշխարհի մէջ, վեհանձն ոգւով մը, սակեղէն սրտով մը և բանաստեղծ գլխով մը՝ նա շուշացաւ կեդրո-

նացնել իր տարփանքը գեղատեսիլ և վառվառն Գարմիրիդայի մէջ:

Յաճախ անոր շրջադայիլը կը տիրէր, ար-
խուր և միայնակ՝ պարտէզին մէջ... շատ անգամ
յանկարծակի անոր աչքերը արցունքոտ տեսած
էր, և կամ գեղեցիկ ծաղիկփունջեր կապելու
դբադած՝ որոնցմով կը զարդարէր իր պուզունակ
սենեակը, և սէրը բոյն դրած էր իր սրտին մէջ՝
հրապուրուած բոլոր այն յոյսերէն՝ որ նրան ուշ
եղանակաւ մը երիտասարդութեան երեւակայու-
թիւնն կը պատուեն:

Ո՛հ, ի՛նչպէս Պօղոս կ'ըզձար չորցնել այն
արցունքի կաթիլները... այն օրիորդին սունե-
րուն առջև դնել արքայութիւնը... երջանիկ ընել
դայն... ընդհակառակն: Ընդհակառակն գոհ կ'ըլ-
լար անոր նայիլ և հառաչել. չափազանց երկչոտ
էր իր սէրն անոր յայտնելու...

Գարմիրիդա երբեք նշմարած չէր երիտասար-
դին տարփանքը: Անկէ աւելի անգամներ Պօղոսի
հետ զանուած էր, առանց անդրադառնալու ա-
նոր ներքին տազնապն ու դողը՝ խօսելու պա-
հուն: Յաճախ նաև գեղեցիկ սպասուհին, անուշ
ընսանութեամբ, ո՛րէ յանձնարարութիւններ կը
խնդրէր անկէ իր հօր կողմանէ:

Այն խնդրանքները, Պօղոսի համար՝ հաւա-
սար էին հրամանի, և երբ օրիորդը «չնորհակա-
կեմ»ով զինք կը վարձատրէր, այն մէկ բառը ար-
քայութեան հետ չէր փոխեր ինք: Բայց անցողա-

կի փայլատակներ էին, որովհետև այն եռանդը
աւելի վտանգաւոր գոյն մը կ'առնուր երբ օրի-
որդէն կը լսէր ուրիշ աւելի ցուրտ բառ մը կամ
կը լսէր անտարբեր շարժում մը՝ որ զինք մթու-
թեան մէջ կը խարխափեցնէին և այն կէտին յու-
րում սէրը զկեանքն ամենաերջանիկ ցոյց կու-
տար Պօղոսին, միեւնոյն սէրը զինքը ցաւերով և
մտախաբութեան մէջ կը գահավիժէր:

Այս փոխադարձ զրգուումէն՝ յուսահատու-
թիւն ծնաւ:

Սեպտեմբեր ամսոյ բարեխառն օրուան մը
արեւու մայրամուտին, մեր սրբուհիին Մարագի
պալատը գալ բնակելէն ամիս մ'առաջ, Գարմիրի-
դա, ստորերկրեայ սենեակի մը մէջ, որուն լու-
սամուտները պարտէզին վրայ կը բացուէին, մի-
այնակ քանի մը ճերմակեղէններ կը կարկտնէր,
որ փոքր սեղանի մը վրայ դրուած էին, միև-
նոյն ժամանակ դաշն ձայնով զուարթ երգ մը
կ'երգէր:

Պուր բաց էր և աշխուժով կ'աշխատէր,
այնպէս որ չնշմարեց թէ մարդ մը մուտքի դը-
րանդուոյն կռթնած լուռ զինքը կը դիտէր: Պօ-
ղոսն էր... Պօղոսը, որ պալատի սրահէն դուրս
ելած պահուն՝ լսած էր օրիորդին քաղցր ձայնը,
և հակառակ իր կամքին անբացատրելի հիացումէ
մը զարնուած կանգ առած էր:

Այսպէս գրեթէ քառորդ ժամ մը անցաւ.
վերջապէս Գարմիրիդա երզը դադրեցուց և աշ-

քերք վեր առաւ՝ մեքէնարար դէպի դուռ ուղ-
ղելով: Երկու երիտասարդաց ակնարկներն իրա-
բու հանդիպեցան. սպասուհիինը՝ անուշ զար-
մանքով մը լի. միւսինը՝ անգութ անձկութեամբ
մը:

— Ինչո՞ւ ներս չես մտներ—հարցուց Գար-
մելիզ իր ներգաշնակ ձայնով:

— Կը վախէի որ արգելք ըլլամ քեզ—պա-
տասխանեց Պօղոս յուզումէն սարսուռն, մօտե-
նալով օրիորդին:

— Ո՞հ, դու ինձի հաճոյք կը պատճառես
միշտ—աւելցուց սպանուհին՝ աթոռ մը ցուցնե-
լով անոր, որ իրեն մօտեցաւ քովը նստելու հա-
մար—ես միշտ այսպէս մինակ եմ...: Ի՞նչ ալ տուն
մեկնելու դիտաւորութիւն ունէիր այնպէս չէ՞:

— Այո՛, օրիորդ, այսօր գործերս աւելի շուս
լմնցուցի... և ինձի համար բախտ մ'եղաւ. գլխա-
ւորնիս գործի համար հարկադրուեցաւ հօրդ հետ
դուրս ելլել, միւս պաշտօնեաներն ալ առիթէն
օգտուելով կանուխ մեկնեցան:

— Ի՞նչ ալ, պարոն Պօղոս, չե՞ս ուզեր շըր-
ջագայութիւն մ'ընել:

— Ես... օրիորդ, շատ քիչ դուրս կ'ելլեմ:
Ասկից մեր տունը հարիւր քայլ է. այս է իմ ա-
մէնօրեայ շրջագայութիւնս...: Կը գերադասեմ իմ
պարապոյ ժամերս գծագրութեան կամ երաժըշ-
տութեան. նուիրել... կամ, ինչպէս այս վայր-
կեանիս... քեզի հետ անցունել...:

— Ո՞հ, դու գործիք կը նուագե՞ս, պարոն
Պօղոս,—ընդմիջեց խանդով Գարմելիզա, չլսելու
զարնելով պատանոյն վերջին խօսքերը — այն
ժամանակ կտոր մը նուագէ որ լսեմ: Ես կը
պաշտեմ երաժշտութիւնը... երգել ալ գիտե՞ս:

— Քիչ բան մը, կիթառի օգնութեամբ:

— Ո՞հ, այն ատեն վայրկեան մը սպասէ՛.
սենեակս երթամ բերեմ, շուտով կուգամ: Ոչ չե՛ս
լսեր անշուշտ Դու շատ բարի ես: Միւս կող-
մանէ, պօլլատի այս կողմէն ոչ ոք կը լսէ ձայնդ:
Հայրս և սեղանաւորը դուրսն են...: Ո՞հ, այսպի-
սի հաճոյք մը չես մերժեր չէ՛:

Ինչպէս կրնար մերժել Պօղոս այն աստ-
ուածային օրիորդը, որ զինքը ա՛յնչափ դիւ-
թած էր: Հաւանեցաւ փափաքին՝ անոր ձեռքը
սեղմելով: Գարմելիզա վիթի մը պէս արագա-
շարժ, իր սենեակը վագեց և քիչ վերջ իր կի-
թառով վերադարձաւ և զայն երիտասարդին տը-
լաւ: Յետոյ կամաց մը սենեակին դուռը գոցեց:

Պօղոս անհուն յուզում մը զգաց այն հրա-
պուրիչ օրիորդին հետ այսպէս մինակ գտնուելով:
Սակայն այսուհանդերձ ջանալով ինքզինքը զսպել,
առաւ կիթառը և անուշ սկզբնաւովութեանէ մը
վերջ՝ քաղցր ձայնանիշերով սկսաւ նուագել հե-
տեւեալ երգը:

«Ո՛վ ծաղիկ թշուառ, Ո՞հ...երբ սրտին տակ
Ըզբեզ կուսական Յոյսն ընդ միշտ մարի
Ստողէն՝ ցուրտն ու սառ Քեզի պէս շիտակ
Բաժնեցին սակայն: Կ'իյնայ կը մեռնի»

Գոյնդ վարդակարմիր կեանքի են հանդոյն
 Մարեցաւ անյոյս Սիրան ու ծաղկներ.
 Գու չունիս բոյն ժիր Ապրիլ ամիսն է միոյն,
 Թէ ծաղի և լոյս: Իսկ միւսին՝ սէր:»

Գարմելիդա սրտագեղ մտիկ կ'ընէր: Իր սեւ ու աստուածային աչքերը կայծեր կարձակէին. բերանը կիսաբաց, կուրծքը բարախուն. բոլոր մարմնէն այնպիսի կախարդիչ մեղկութիւն մը կը բղխէր, որ Պօղոս ապշած, ինքն իրմէ դուրս ելած, անկարող այլևս երկար ժամանակ ինքզինք զսպելու, երգը ընդհատեց և ձայնը կոկորդին մէջ խղզուեցաւ:

— Ինչո՞ւ չես շարունակեր—ըսաւ սպանուհին զարմացած այս անակնկալ դադարին վրայ:
 Պատանին սկսաւ դարձեալ շարունակել.

«Ո՛հ...երբ սրտին տակ Գեղի պէս շիտակ Յոյսն ա՛յլ ընդ միշտ մարի, կ'իյնայ կը մեռնի:»

Յետոյ կանգ առաւ, աչքերն արցունքով լեցուեցան, ճակատը քրտինք պատեց, կուրծքը դժուարաւ կը շնչէր և ընելիքը չգիտնալով, ոտքի ելաւ դողդոջուն՝ և օրիորդին մօտենալով անոր ոտքն ինկաւ և ձեւնամած մըմնջեց.

— Գարմելիդա՛... կը սիրեմ զքեզ:

Սպանուհին այս շարժման, այս խօսքին վրայ, դայրոյթէն յօնքերը պոստեց, բայց այն յանդիմանական, բարկութեան և սպառնալիաց

ակնարկը՝ խաշածեւուեցաւ. Պօղոսին, սիրակաթ աղերսանաց հետ՝ որուն դէմքին վրայ անձկատաշտը վհատութիւն մը, տեսակ մը խղճի խայթ, վերջապէս ցաւի այն արտայայտութիւնը կը կարգացուէր, որը մեծամեծ մարդիկ գիտեն միայն յետին յուսահատութեան վայկեանին ցոյց տալ, այնպէս որ օրիորդը տեսակ մը այլաշփոթ, յիմար զգացումի մ'ենթարկուելով՝ գլուխը ծռեց և ջերմ արցունք մը կաթեց աչքերէն Պօղոսի ձեռքին վրայ: Երիտասարդը դժգունեցաւ և բոլոր նիարդները թունդ ելան, իբրև թէ տաք երկաթ մը շօշափած ըլլար:

— Գարմելիդա—մըմնջեց նա անհուն թախծութեամբ—Գարմելիդա՛ դու կուլա՞ս... կուլաս որորովհետև զքեզ վշտացուցի՞:

Ո՛չ, պարոն Պօղոս, ո՛չ... դու զիս չես վըշտացուցած—պատասխանեց սպանուհին՝ դողդոջուն ձայնով—բայց ոտք ելիր, խնդրեմ... զնա՛ ասկից... ես չեմ կրնար, չեմ կարող քեզի լսել...: Այն սէրը զոր ինծի համար կը սնուցանես, անկարելի է ինծի անոր համապատասխանել... որովհետև իմ սիրտս ուրիշին կը վերաբերի...:

Յուսահատութեան և հոգեվարքի աղաղակ մը պիտի պոռթկար Պօղոսի կուրծքէն, բայց սուկալի ջանք մը ըրաւ և ինքզինքը զսպեց: Ոտքի ելաւ և բոլորովին աղջկան մօտենալով.

— Գարմելիդա՛—ըսաւ խղզուկ ձայնով, անոր ձեռքը բռնելով, որ չհամարձակեցաւ մեր-

ժել—քու խօսքերովդ իմ ճակատագիրս վճռեցիր... մահը հողույս մէջ գրիր: Այլևս ոչինչ կը մնայ ինձի յուսալ... ոչինչ քեզի բսել, բայց միայն մնա՛ս բարեալ... մնա՛ս բարեալ ց մի՛շտ:

— Ո՛վ Աստուած իմ, ի՛նչ կնիքով գրոշմած ես զիս որ, ա՛յնչափ անգթօրէն կը պատժես ինձի մօտեցողներուն ձեռքով—գոչեց սպանուհին այնպիսի յուսահատական շեշտով, որ Պօղոս գլխէն մինչև ոտները սարսուց և քանի մը բոպէ անշարժ մնաց:

Գարմելիդա այն ժամանակ դանդաղ քայլերով անոր մօտեցաւ, երկու ձեռքերը պատանիին ուսին վրայ դրաւ և աննկարագրելի մեղամաղձոտ ակնարկ մը սեւեռելով վրան:

Պօղո՛ս—ըսաւ—ճշմարիտ է, ես չեմ կրնար գրեզ սիրել... անկարող եմ քու երագներդ իրականացնելու... բայց ասի պատճառ մըն է որ յուսահատիս... որ մոլեգնաբար ինքզինքդ յիմար... անտեղի խորհուրդներու մասնես, ինչո՞ւ կ'ուզես զիս ընդ միշտ թողուլ: Պօղո՛ս, կ'աղաչեմ, մի՛ հեռանար, աւելի դժգախտ մի՛ ըներ քան ինչ որ եմ: Ինձի բարեկամ, եղբայր եղիր: Իմ վրայ ունեցածէդ աւելի ուրիշ մեծագոյն սէր մը՝ պիտի չուշանայ քեզի կեանք տալու. ես երբեք պիտի չմոռնամ որ զիս սիրած ես... քու պատկերդ սրտիս խորը պիտի պահեմ, և քու յաջողութեանցդ և երջանկութեանդ աղօթող պիտի ըլլամ... Լսէ՛ Պօղո՛ս, կարելի է մենք երկուքս ալ կեանքի

մէջ շատ դառն վիշտեր ունենանք. . բայց ի՛նչ վիճակ կ'ունենանք, եթէ դժբախտութեան մը առջև այսպէս դիւրաւ ընկճինք: Քաջասիրտ և զիր... Պօղոս... մա՛րդ եղիր...:

— Պիտի ըլլամ— պատասխանեց Պօղոս անհաստատ ձայնով, բայց... հիմա երթամ... քիչ մը սթափելու համար, որովհետև ինքզինքս կորուսած եմ, . . և հազիւ ուր ըլլալս գիտեմ...:

Եւ բռնեց օրիորդին ձեռքը, զայն սեղմեց վայրկեան մը... յետոյ սենեակէն դուրս նետուեցաւ, առանց համարձակելու վերջին ակնարկ մ'ալ դարձնելու Գարմելիդային, որ չէր համարձակած զինք խօսքի բռնելու, և ծունկի եկած էր՝ երկինք վերցնելով իր արտասուածքը գեղեցիկ աչքերը:

Բոլոր գիշերը Պօղոս թափառեցաւ պալատին շուրջը՝ խելացնոր. իր սրտին անձուկն անտանելի էր... միակ մտածութիւն մը կը շրջէր իր մտքին ու սրտին մէջ «Գարմելիդա ուրի՛շը կը սիրէր»:

Ձի՛նչ կրէր ի մարդն՝ կարելի չէ նկարագրել իր գեղեցիկ դիմագծութիւններն բուռն սրկումներէն այլափոխուած էին. աչքերը ակնակապճէն դուրս ինկած, շրթները մանիշակագոյն, մազերը ցցուած՝ անեղ կերպարանք մ'առած էր:

Ո՛հ, ի՛նչ յօժարութեամբ Պօղոս կեանքը պիտի տար իր բարեբախտ հակառակորդը ճանչնալու համար, որ իրմէ կորզած էր կնոջ մը սիր-

տը՝ զոր ինք յանհունս կը սիրէր:

Միտքը դրաւ սպասել. . . և լրտեսել: Նա իր սենեակէն ու իր գործին վերագարծու... շարունակեց տեսնուիլ Գարմելիդային հետ, առանց կարենալ մէկ խօսք մ'իսկ որսալու անկէ՝ ի մեծ յուսահատութիւն իր սրտին:

Գիշեր մը, մինչդեռ լայն վերարկուի մը մէջ փաթթուած, Պօղոս, սեղանաւորի պալատան ետև գտնուած նրբուղիէն կ'անցնէր, մարդու մը հետ դէմ առ դէմ գտնուեցաւ: Նորպերդն էր... Նորպերդը, որ ատամնասոյլով երգ մը եղանակելով, Գարմելիդայէն դրուած ժամագրութեան մը կ'երթար:

Պօղոս զգաց որ իր սիրտը իբրև մամուլի մը տակ կը ճնշուէր, տեսնելով այն երիտասարդը, որ նա ալ, ուրիշ շատերու պէս, անպարկեշտ տարփածուն եղած էր Պիանքա Ռովէրպէլ-լա մարգիդուհիին: Գաղտնի ներքին, ձայն մը իրեն ականջէն փսփոսաց թէ ինք իր նախանձորդին առջև կը գտնուէր: Միտքը դրաւ զայն ըստուգել և գլխարկը դեռ աւելի աչքերուն վրայ քաշելով, պատին տակէն զրեթէ մինչև պալատի պարտէզի դիմաց գտնուող փոքրիկ ծածկը զնաց: Հո՛ն կանգ առաւ և սպասեց:

Նորպերդ անտարբերութեամբ նայած էր այն մարդուն որ իր քովէն անցեր էր, յետոյ արագ քայլերով երկաթէ վանդակին մօտեցած էր: Բայց հոն հասնելէ առաջ, ուշագրութեամբ չորս դին

նայեցաւ որ մի՛ գուցէ մէկը զինքը լրտեսէ: Նրբուղին մութ ու ամայի էր, քիչ հեռու մատրան մը լապտերը ամենագողգոջուն և ազօտ ըլլալ մը կ'արձակէր: Ուրեմն անկարելի էր. Պօղոսը տեսնել որ փոքր ծածկի մը տակ կ'ընկած էր:

Այն ժամանակ, Նորպերդ աւելի սպահով քայլերով մօտեցաւ վանդակապատին և դեռ քովը չհասած՝ Գարմելիդայի անուշ ձայնը լսուեցաւ: Սակայն անկարելի էր օրիորդին դէմքը տեսնել, որովհետև բոլորովին մութին մէջ կը մնար:

Պօղոսի սիրտը ուժգին բաբախեց. արիւնտ ամպ մը աչքերուն առջևէն անցաւ: Կը մտածէր խուժել այս վատնոգի մարդուն վրայ, որ իրմէ կորզած էր այն ամենասիրելի բանը որ կրնար ունենալ աշխարհի մէջ. կը մտածէր զայն ոտքերուն տակ առնուլ և ցուցնել աղջկան ըտեւով: «Այս երիտասարդը զոր կը սիրես, զոր ինձմէ կը գերադասես, եղկելի, անարգ խաբեբայ մ'է: Զքեզ կը խաբէ... քեզի կը բաւէ:»

Բայց մտածութիւն մ'եկաւ միտքը: Գարմելիդա իրեն հաւատացած էր...: Եւ կամ թէ իր բռնաբարութիւնը յիմար նախանձի մ'արդիւնք համարուած չէ՞ր անկէ:

Այս գաղափարը զինք զգաստացուց: Մտածեց թէ լաւագոյն միջոցն էր շարունակ հսկել օրիորդին վրայ, ի դերև հանել Նորպերդի բոլոր որոգայթներն ու մեքենայութիւնները... վերջապէս յարմար ժամանակի մը սպասել՝ սպանու-

հիին առջև անոր պատրուակը բանալու համար:

Այս առաջադրութեան վրայ հաստատուն, Պօղոս փափաքեցաւ երկու տարիածուններու խօսակցութիւնը մտիկ ընել, և հոգեկան ի՛նչ անձուկ վիճակի մէջ, դիւրին է երեւակայել: Գետնաքարչ պատին տակէն սողոսկեցաւ մէկ կողմէն մինչև միւս անկիւնը: Հո՛ն ստքի կանգնելով մասներուն վրայ մօտեցաւ պարտէզի ցանկապատին: Բայց Նորպերդ և Գարմելիդա ցած ձայնով հագիւ քանի մը բառ փոխանակած, իրարմէ բաժնուեցան: Երիտասարդը դարձեալ եկած կողմէն վերադարձաւ և իսկոյն նրբուզին լուռ ամալացաւ առաջուան պէս: Պօղոս սրտին ցաւէն շրթունքները խածնելով իր սենեակը քաշուեցաւ հազարումէկ ծրագիրներ կազմելով մտքին մէջ՝ մէկը միւսէն աւելի տարօրինակ: Բայց յաջորդ գիշերները ի գուր այն մութ ու երկայն ճամբուն վրայ շրջագայեց: Ո՛չ Նորպերդ, ո՛չ Գարմելիդա չտեսնուեցան Ի՛նչ կը նշանակէր այս: Եթէ Պօղոս ուշադրութեամբ դիտած ըլլար, պիտի նշմարէր որ կէս գիշերուան մօտերը պարտէզի պատին վրայ ճարտարութեամբ շինուած դռնակէ մը դուրս կ'ելնէր՝ գործաւորի զգեստով պատանի մը...: Բայց Պօղոս, աչքերը միշտ երկաթէ վանդակազրան ուղղած, ոչ բան մը տեսած էր, և ո՛չ լսած:

Այն սոսկալի, փոթորկալից գիշերը հասած էինք, յորում ձեր Լաւրինտիոս սրահի դռնակը

քաց գտած էր և խնամքով մը զոցելով գայն հանդիստ քնանալու գացած էր, բարի հաւատքով կարծելով թէ եղածը դարձեալ Քէքքօ պնակալէզին մէկ կատակն էր:

Գիշերուան ժամը գրեթէ չորսն էր. փոթորիկը ինչպէս ըսի, իջած էր, և լուսինը հանդարտ կը փայլէր հորիզոնին վրայ, երբ պարտէզի գաղտնի դռնակը բացուեցաւ, և կնիւնի պէս բարձրահասակ աշխոյժ երիտասարդ մը ներս մտաւ գաղտնաբար՝ զգուշութեամբ չորս կողմը դիտելով: Այս երիտասարդը գոր ընթերցողս զուշակեց անշուշտ, Գարմելիդան էր... Գարմելիդան՝ որ ըստ իր ժամադրութեան պաշտելի Նորպերդին քովէն կը դառնար:

Ի՛նչպէ՞տ կրցած էր փախուստ տալ Ռինայի սենեակէն, պոսնց տեսնուելու:



ԺԴ.

Որբունէին սովոր էր կանուխ պառկելու, և անկողին մտածին պէս հանդիստ ու երկայն անձեղ բուն մը կը ննջէր:

Խամանակ մը Գարմելիդա իր ամենաշերմ տարփանքին դիմադրեց... բայց իբ սրտի անձկութեան չափը լեցուած էր՝ Նորպերդէն ո՛նէ նամակ մը չտանալուն համար: Գեղեցիկ սպա-

նուհին ամենամշուշոտ մտածութեանց մէջ կը
թարթափէր. վախցաւ որ իր տարփածուի գլխուն
վտանգ մը հանդիպած չըլլայ, և կամ ո՞վ դիտէ...
զինքը մոռցած...:

Յոյսը շուտով այս անգութ տարակոյսէն,
այս անացուցիչ մտածութենէն ընկճուեցաւ... և
յանցանքն իր վրայ առաւ թէ քիչ վարանութիւն
և քիչ սէր ցոյց տուած էր գուցէ:

Վեցերորդ իրիկունը, Գարմելիգա սովորա-
կան քարը վերցնելով, նրբաճաշակ ծալքով կար-
միր պիտակ մը գտաւ: Ուրախութեան ազդակ
մը խղզեց, գայն համբոյրով ծածկելով: Սակայն
գիշերուան խաւարը անոր ընթացումն անկարելի
կ'ընէր: Ծոցը դրաւ գայն և Ռինայի սենեակը
վերադառնալով, սպասեց որ ան պառկի: Ի՞նչ
սրտմաշուկ ժամեր խնձօմ տարփածուհիին հա-
մար:

Վերջապէս Ռինա անկողին մտաւ: Գարմե-
լիգա անոր վարագոյրը քաշեց, յետոյ գիշերուան
կանթեղին մօտենալով, հանեց նամակը, բացաւ
գայն և կարդաց:

«Սիրելի հրեշաակս,

«Հինգ օր հիւանդ պառկեցայ... բայց ֆի-
«զիքական տկարութիւնը նշանակութիւն չո՞նէր
«բաղդատամբ բարոյակա՞ն վշտաց և յուզում-
«ներուն:

«Հակառակ քու պիտակիդ, յորում կ'իմացը-
«նէիր թէ գուցէ երկայն ժամանակ դքեզ չկա-

«րենամ տեսնել... քեզ կը սպասէի:

«Սմէն գիշեր ... ժամացոյցի իւրաքանչիւր

«հարուած, կարծես արիւնս գլուխս կը ժողվէր,

«միւս կողմանէ ալ քաղցր յոյս մը խոովացոյց

«սրտիս զարկերը կը բազմապատկէր. ամէն թե-

«թե աղմուկ քու աշխուժ ու թեթե քայլերդ լսել

«կուտային ինծի: Ինձ կը թուէր թէ քու ներ-

«կայութիւնդ՝ ինծի առողջութիւն... կեա՞նք պի-

«տի պարգեւէր:

«Չարածիճի՛: Դուն իմ յոյսերս կը ցամքե-

«ցընես և կամ գուցէ զիս մոռցա՞՞ծ ըլլաս:

«Իեռ վրաս շատ ուժ չկայ, բայց մերթ

«վայրկեան՝ մը դուրս կ'ելլեմ տունէն, քու շնչած

«մթնոլորտէդ ծծելու համար: Չքեզ պիտի տես-

«նե՛մ: Չեմ համարձակիր յուսա՞լ: Յամենայն

«դէպս, եթէ պիտակս ձեռքդ հասնելու ըլլայ, լա-

«պիտի ըմբռնես թէ ի՞նչ կը կրեմ հինգ օրէ իվեր:

«Ո՞հ, երկայն ժամանակ քեզի ծարաւի՛ մի՛

«ձգեր զիս... եկո՛ւր, քոյն եկո՛ւր անոր որ դքեզ

«կը պաշտէ և պիտի պաշտէ իր բոլոր կենաց

մէջ:»

«ՆՈՐՊԵՐԴ»

Այս վերջին և սիրատարփ պաղատանքին
մէջ, Գարմելիգա կարծեց թափուած տեսնել իր
տարփածուին բոլոր ոգին:

— Աստուա՛՞՞՞՞՞՞՞ իմ, Աստուա՛՞՞՞՞՞՞՞ իմ — մրմնջեց

յուզուած ձայնով — ի՞նչպէս ընես:

Պէտք էր յայտնե՞լ Ռինայի իր սիրոյ գաղտ-

նիքը: Ո՛հ, ո՛չ: Ազնուասիրտ սպանուհին խօսք մ'անգամ չէր ըրած, որ չխուովէ ա՛յն սքանչելի օրիորդին միամիտ անմեղութիւնը: Սակայն միտքը զրած էր ա՛յն գիշերն իսկ ջանալ տեսնել Նորպերդը:

Վերցուց Ռինայի անկողնոյն վարագոյրն և նայեցաւ.

Որբուհին, ծիծղուն դէմքով կը ննջէր, իբրև թէ ախորժելի տեսիլ մը իր անմեղ երազներուն մէջ զինքը կը փայփայէր: Գարմելիզա վայրկեան մը անոր դէմքէն յափշտակուած մնաց ... յետոյ ճրագը մարելով ինքն ալ պառկեցաւ: Անձկանօք կէս գիշերուան կը սպասէր, ա՛յն սովորական ժամուն՝ յորում ամէն սք կը քնանար պալատին մէջ:

Երբ ժամացոյցը տասներու հնչեց, կամաց մը անկողնէն դուրս սահեցաւ և մտնեբուն վրայ քալելով իսկոյն քովի սենեակը անցաւ: Հոն մտնելուն պէս, զգուշութեամբ փակեց դուռը, ճրագ մը վառեց, առնական տարագն հագաւ՝ զոր խնամքով կը պահէր՝ ա՛յն օրէն ի վեր յորում եկած էր բնակակցելու որբուհիին սենեակին մէջ:

Պատրաստութիւններն աւարտելով դուրս եկաւ ննջարանէն, սենեակէ սենեակ անցնելով, սանդուխէ մը ստորին սրահն իջաւ: Հո՛ն ուշադրութեամբ չորս կողմը գիտեց որ մէկը իր շարժումները չլրտեսէ: Գրպանէն բանալի մը հանեց՝ պատին մէջ ծածկուած դռնակ մը բացուց, ուրիշ

սանդուղէ մ'ալ իջնելով ստորերկրեայ մեծ սրահը մտաւ, և ձեռաց կանթեղը սեղանի մը վրայ դրնելով վայրկեան մը սպասեց: Իր դէմքն ամենատո զոյն էր, բայց ա՛յն գունատութիւնը իրեն մէջ բարոյական տկարութիւն մը չէր բերեր. իր գեղեցիկ սև աչուրներն երկչոտութիւն մը ցոյց չէին տար, այլ զօրաւոր հաստատամտութիւն մը՝ յամառութեան աստիճան:

Գլխարկը աչքերուն վրայ քաշեց, ճրագը մարեց և պարտէզին վրայ բացուող դուռը բացաւ: Գիշերը մթին էր. երկու քայլ հեռուն չէր տեսուէր... բայց Գարմելիզա ճամբան գիտէր: Փոխանակ ուղղակի դէպի վանդակապատն երթալու, շրջապատին ստորոտէն գնաց փոքրիկ դռնակ մը, ուսկից սովորաբար երբեմն պարտիզպանը կ'անցնէր, գուռը բացաւ և ոստիկաններէ հալածուած աւագակի մը պէս արագութեամբ ճամբուն մէջ սպրդեցաւ: Կէս ժամ վերջը գեղեցիկ սպանուհին իր տարփածուին քոջն էր:

Առտուան ժամը չորսին ատենները պալատ վերադարձաւ և դիւրութեամբ ներս մտաւ ինչպէս եղած էր՝ դեռ Ռինան չարթնցած:

Գարմելիզա այսպէս ապահով և համարձակ իր գիշերային և խորհրդաւոր աներոյթացումները շարունակեց:

Ա՛յն գիշերը, որուն վրայ խօսեցանք, փոթորկէն օգտուելով, ինչպէս կ'օգտուէր իր հայրը մաքսանենդական կեանքին մէջ, օրիորդն, աւելի

շուտ մեկնեցաւ պալատէն, առանց նշմարելու թէ մէկը զինք բիշ հեռուէն կը լրտեսէր:

Երբ վերադարձաւ իր ժամադրավայրէն, ինչպէս ըսի, ժամը առաւօտեան չորսը կը հնչէր: Յանկարծակիի եկաւ ստորերկրեայ սրահի դռնակը գոց գտնելով, և ինքը սպանով էր որ գաջն բաց ձգած էր: Հովը պատճառ բռնեց և գրպանէն բանալին հանելով դուռը բացաւ, սենեակը մտաւ, ճրագը վառեց և արագարար սանդուղէն վեր ելաւ: Բայց հո՛ն ալ դուռը գոց գտաւ և ի դուռը Գարմելիդա փորձեց բանալ գաջն:

— Աստուա՛ճ իմ— ըսաւ ան դողդոջուն ձայնով, յոգնած նստելով սանդուղի աստիճաններուն վրայ և ձեռքով երեսը գոցելով— Աստուա՛ճ իմ, ես կորսուա՛ճ եմ:

Իր յուզումը սակայն վայրկեան մը միայն տևեց: Գարմելիդա դարձեալ ոտքի ելաւ և քանի մը վայրկեան աշխատեցաւ բռնի դուռը բանալ՝ առանց ազմուկ հանելու: Յոյսը զինք կ'ոգեւորէր և իր քաջասրտութիւնը կը պահէր: Բայց այս յոյսը աստիճանաբար կ'ոչնչանար, ժամ մ'անցեր էր և դեռ իր աչքը միշտ դրան վրայ էր, զոր ի դուռը կ'աշխատէր բանալու:

Արշալոյսն սկսեց էր ծայր տալ հորիզոնին վրայ. լուսնին լոյսը աստիճանաբար կը նսեմանար՝ տեղի տալու համար այգօրէի թեթև շողերուն. ցուրտը սաստիկ էր... կծու. Ի՞նչ ընել: Ի՞նչ որոշողութեան դալ:

Գիշ ատենէն պալատի ծառաները պիտի ելլէին... գուցէ Ռինան ալ արթննար և զինք ուզէր... կամ իր հայրն ուզէր... ո՛հ, մտածելով այն վիշտը՝ զոր պիտի պատճառէր իր ծերունի հօր՝ եթէ զինք հոն գտնէր, ծպտեալ վիճակին մէջ... Գարմելիդա սարսուեցաւ... և պաղ քրտինք մը իր ձակատը ծածկեց:

Գարձեալ պարտէզ իջաւ որ փրկութեան ուրիշ միջոց մը գտնէ: Ուշադրութեամբ չորս կողմը նայեցաւ...: Յանկարծակի դողդոջաց. իրմէ քանի մը քայլ հեռու տեսակ մը ստուեր նշմարած էր... մարդու ձեւով: Վայրկեան մը վարանեցաւ, բայց իր քաջասրտութիւնը վերստացաւ: Քանի մը քայլ առաւ, և կորովի ու հրամայական ձայնով.

— Ո՛վ է այն— հարցուց:

— Բարեկամ մը— պատասխանեց ամենաքաղցր և դողդոջուն ձայն մը: Միեւնոյն ատեն մարդը մօտ եկաւ և գլուխը վեր վերցնելով իր օրիորդանման սպիտակ դէմքը սպանուհիին ցոյց տալով:

— Դո՛ւ... Պօղո՛ս...— ըսաւ Գարմելիդա ապշահար, ճանչնալով երիտասարդը. յետոյ աւելի խիստ շեշտով.

— Եւ ի՞նչ կերպով դու հոս մտար:

— Պարտէզի շրջապատէն անցնելով...:

Սպանուհին յօնքերը կնճռոտեց:

— Ի՞նչ գործ ունէիր հոս, այս ժամուս.

— Քեզի կարեւոր ծառայութիւն մը մատուցանելու համար, — մըմնջեց պատանին դառնութեամբ: — Քու ետեւէդ շրջեցայ, դուռը բանալու և ներս մտնելու համար. անօգուտ ջանքերդ տեսայ, և մտածեցի որ քու պատիւդ վրտանդի մէջ էր և ես կրնայի փրկել զայն:

Օրիորդը գունատեցաւ և միանգամայն շիկնեցաւ: Եւ իր գոռոզութիւնը աւելի զրգոտեցաւ:

— Եւ ո՞վ քեզի իրաւունք տուաւ ետեւէս շրջելու — ըսաւ բիրտ կերպով ու հեզնական ժրպիտով մը: — Ես քեզի պէտք չունիմ պալատ մտնելու համար. կրնաս վերադառնալ ուսկից եկած ես: Իմ պատիւս... ես կրնամ պաշտպանել, ձեռնտուութեան պէտք չունիմ:

Եւ հպարտութեամբ կոնակը դարձուց:

Պօղոս շարժում մ'ունեցաւ բարկութեան, յուզումի... բայց վայրկենական: Աւելի ևս մօտեցաւ օրիորդին, և ցած ձայնով ըսաւ անոր.

— Գարմելիդա՛, ուրեմն չե՞ս մտածեր հայրդ:

Սպանուհին ցնցուեցաւ, բայց չպատասխանեց:

— Ո՛հ, աւելցուց երիտասարդը — վայրկեան մը վրաս վստահութիւն ունեցիր...: Ես քեզմէ հաշիւ չեմ պահանջեր ընթացքիդ վրայ... իրաւունք չունիմ... գիտեմ, այլ նպատակս է զքեզ փրկել...: Ուշ դի՛ր մեծ գայթակղութենէ մը. ո՛հ, եկո՛ւր, ետեւէս եկուր, դժբախտ աղջիկ... չե՞ս

տեսներ որ կը լուսնայ: Քիչ մը վերջ ժամանակ չե՞ս ունենար:

Այնչափ յուսահատութիւն կը տեսուէր իր ձայնին հնչման մէջ, որ Գարմելիդա զորովեցաւ: Իր սիրտը սաստկապէս բաբախեց, աչքերը արցունքով լեցուեցան և երկու ձեռքերը երիտասարդին հարկառելով մըմնջեց.

Ներէ՛ ինձի Պօղո՛ս. չար մեկնեցի միտքդ, մինչդեռ աշխարհիս միակ բարին ու ազնուասիրտն ես: Չեմ կրնար զքեզ սիրել, որովհետև սիրտս ինձի չի պատկանիր, բայց եթէ հարկ ըլլայ քեզի համար կը մեռնիմ:

Պօղոս առանց պատասխան տալու, աղջկան ձեռքերը շրթներուն տարաւ, մինչդեռ յուզումի սարսուռ մը կը շրջէր բոլոր նիարդներուն մէջ: Բայց կորսնցնելու ժամանակ չկար: Նա Գարմելիդան իր հետ դուրս հանեց պարտէզէն. եզերքէն շրջան մ'ընելով պալատին առջև հասան. Պօղոս մեծ մուտքի կողմնակի դռնակը բացաւ և յուսաւոր սանդուխէ մ'իջնելով փոքր նախասենեակ մը մտան:

Սպասուոր մը արեւելեան բազմոցի մը վրայ երկնցած ա՛յնքան խոր կը քնանար՝ որ երկուքին օտնաձայնէն ալ չարթնցու: Բայց եթէ արթննալու ալ ըլլար, պիտի չգարմանար Պօղոսը տեսնելով, վասնզի գիտէր թէ սեղանաւորին սիրելի զրազիրն էր և այն ժամուն զինք հոն տեսնելով ո՛րքէ կասկածի մը պիտի չերթար, կարծելով

թէ կարեւոր գործերու համար գրասենեակը կուգար, բան մը՝ որ ստէպ կը պատահէր:

Պօղոս և Գարմելիդա լուսթեամբ նախասենեակէն անցան և ուղղակի սեղանաւորին գրասենեակը մտան. դեռ առաւօտեան այն ժամունք բոլորովին մթին էր:

Երիտասարդ գրագիրը հո՛ն կանգ առաւ:

— Գարմելիդա՛ — ըսաւ յուզուած ձայնով — հիմա ազատեցար: Դեռ ոչ ոք ելած է և դուն կրնաս անձայն սրահէն անցնիլ ու սենեակդ մտնել: Երթաս բարեաւ — ըսաւ, դարձեալ օրիորդին մէկ ձեռքը շրթներուն տանելով — երթաս բարեաւ ... քեզի կը ներեմ ... կրնաս հանգիստ ըլլալ....:

Եւ Պօղոս իսկոյն հեռացաւ անկից:

Հինգ վայրկեան վերջ, Գարմելիդա լուսթեամբ իր անկողնոյն առջև ծնրադիր կուլար՝ գլուխը վարագոյրին մէջ ծածկած:



ԺԵ.

Լաւրինտիոս արթննալուն պէս, առաջին գործն եղաւ՝ սնակալէզը փնտռել, ան որ միայնակ խոհանոցի կրակարանները կը մաքրէր:

— Քէքքօ — ըսաւ մաքսանենգ ծերունին ըրջութեամբ և առանց այլ և այլի — այս զիշէք

դարձեալ խղիատակութիւն մ'ըրած ես: Սրահի դռնակը բացեր ևս գողցած բանալիովդ, պարտէզ յիշած ես, ձիւնը կոխոտած... և յետոյ ներս եկեր ևս առանց դուռը գոցելու որ անկից անցնող ըսպասաւորները վախցնես:

Քէքքօ բերանաբաց, սալած այնպիսի խեղկատակ գէմքով նայեցաւ Լաւրինտիոսի, որ ուրիշ պարագայի մէջ ծերունին խնդալէն ճաթել պիտի տար:

— Ե՛ս — թոթովեց վերջապէս — բայց չըխարուիս:

— Նայինք — ըսաւ Լաւրինտիոս սպառնալից ձայնով — և դեռ կ'ուզես ուրանալ: Դէմքդ ծոմնտկելու պէտք չկայ, անպիտա՛ն, որովհետեւ քեզ կը ճանչնամ... ձիւնին վրայ ոտքերուդ հետքն անգամ ճանչցայ ... ո՛հ, այսպէս շուտով զինչես կրնար խտրել... կը կրկնեմ, աւելորդ է կեղծելդ... դիս աւելի կը գայրացնես. մինչդեռ եթէ խոստովանիս թէ բանալին առած ես խեղկատակութիւն մ'ընելու համար... քեզ կը ներեմ:

— Բայց... պարոն Լաւրինտիոս... ըսածդ չեմ հասկնար — գոչեց սնակալէզը այնպիսի ճըմարտութեան շեշտով մը, որ ծերունին զգաց թէ իր բոլոր տարակոյսը փարատեցաւ: Սակայն շուղեց ցոյց տալ, և չոր ու հրամայող շեշտով մը.

— Կը բաւէ՛... կը բաւէ՛ — ըսաւ — տեսնենք... բայց վա՛յ քեզ եթէ կարենամ ստուգել:

Եւ Լաւրինտիոս դուրս ելաւ, թողելով Քէք-

քօն, միշտ աւելի զարմացած և քթին տակէն մըմուտով.

— Անըմբռնելի՛ բան... անպատճառ մէկը եկած գացած է... ես կը գտնեմ: Արդեօք դաւազրութի՛ւն մը լարուած է տիրոջս դէմ... կամ իր դրամարկղին... կը կասկածիմ... բայց պիտի հսկեմ:

Լաւրինտիոս ճարտարութեամբ ամէն ծառայ հարցաքննեց, բայց բոլորն ալ կ'անգիտանային թէ ո՛ր բանալիի և ո՛ր դրան վրայ էր խօսքը: Ուստի լաւագոյն համարեցաւ գաղտնիքը իր մէջը պահել շփոթութիւն մը չյարուցանելու համար:

Ռինայի և իր աղջկան նախաճաշի սովորական ժամը եկած էր: Երկու օրիորդները արդէն հագուած և սանտրուած՝ կարծես ուրախ և զրուարթ իրարու հետ կը խօսակցէին, բայց ուշադրութեամբ դիտող մը պիտի տեսնէր գունատութիւնն ու խռովքը, որ փափկակազմ սպանունիին դէմքին վրայ կը տեսնուէին:

Լաւրինտիոս շատ հեռու էր գայտ նշմարելէ, և եթէ տեսնելու ալ ըլլար բոլորովին ուրիշ պատճառի պիտի վերագրէր, ճշմարտէն գտտ:

Միայն նախաճաշէն վերջ, նա իր աղջիկը Ռինայի քովի սենեակը տարաւ և քանի մը բառով իր գաղտնիքը հաղորդեց, յայտնելով միանգամայն իր կասկածները:

Գարմելիդա անայլայլակ մտիկ ըրաւ: Դիմագծին վրայ ո՛չ մէկ ներքին տաղնապ ցոյց չտուաւ:

— Ուրեմն... ի՞նչ կ'ըսես ասոր — հարցուց վերջապէս Լաւրինտիոս օրիորդին:

Սպանունին վայրկեան մը լուռ կեցաւ:

— Կը մտածեմ, սիրելի՛ հայրիկ — պատասխանեց ի վերջոյ — որ մենք ամենապարզ բանի մը համար կը շփոթինք: Համոզուած եմ որ կամ է եղածը, եթէ մէկը դիտաւորութիւն ունենար սեղանաւորի սենեակը մտնելու... այն դռնէն չէր գար:

— Իրաւունք ունիս, կասկածներս փարատեցիր — գոչեց ծերունին: — Օրհնեալ ըլլաս: Սակայն կատակին հեղինակը հանգիստ պիտի չձրգեմ... եթէ գիտնամ ո՛վ է: Ամէն պարագայի մէջ մէկ մ'ալ պիտի չյաջողի, վասնզի այս օր իսկ փականքը փոխել կուտամ: Տան տիրոջ և Պօղոսին ալ կ'ուզեմ իմացնել... ի՞նչ կ'ըսես:

Գարմելիդա չկրցաւ սարսուռ մը զսպել, բայց, իսկոյն հանդարտեցաւ:

— Կարծեմ թէ լաւագոյն է լռութիւն պահել: Միտալ շփոթութիւն մը մէջտել ձգել, կասկածներ յարուցանելը լաւագոյն միջոց մը չէ ճշմարիտ յանցաւորը գտնելու համար:

— Իրաւունք ունիս, սիրելի՛ս: Խորհուրդիդ կը հետեւիմ:

— Եւ լաւ կ'ընես:

Այս վերջին բառերն Գարմելիդա արհամարհոտ շեշտով մ'արտասանեց գրեթէ. բայց տեսնելով որ այլևս երկայն ժամանակ պիտի չկա-

րենար յաղթել իր յուզումին, համբուրով մը ողջունեց իր հայրը ու իսկոյն որբուհիին սենեակը մտաւ:

Բայց ճակատագիրն էր կարծես խեղճ օրիորդին որ այն օրն իր տանջանքները վերջ հունենային:

Ժամ մ'անցած էր Լաւրինաի ոսի բաժնուելէն, երբ սեղանաւորը՝ Մարագ լուր զրկեց Ռինայի սենեակը:

Որբուհին Գարմելիդայի առաջնորդութեամբ պիտակակալ մը կ'ասեղնագործէր, զոր մտադիր էր սեղանաւորին նուիրելու:

Մարագ ներս մտնելուն պէս, Ռինա ոտքի ելաւ, անոր առջև վագեց պատրաստական ուրախ շարժումով մը:

— Այս առտու սովորականէն աւելի ուշացար— ըսաւ անոր քաղցր ձայնով, մինչդեռ Գարմելիդա կ'աճապարէր բանուածքը պահել:

Հիմա դուրս ելայ գրասենեակէս— պատասխանեց Մարագ ուրախ դէմքով մը, հազիւ գործերէս ազատեցայ իսկոյն վագեցի որ քեզի հաճելի լուր մը հաղորդեմ:

— Ինձի՞— գոչեց որբուհին աշխոյժով մը:

— Այո՛, սիրելիս— պատասխանեց սեղանաւորը անոր քով նստելով և մէկ ձեռքը բռնելով. յետոյ նշան ըրաւ Գարմելիդայի որ ինքն ալ մօտենայ, և շարունակեց հայրական շեշտով մը.— Ներկայ ապրած կեանքերնիդ, աղջիկներս, յար-

մար չէ ձեր ժպտին և ձեր պատանեկութեան: Ուրիշ զուարճութիւններ, ուրիշ հաճոյքներ ձեզ կը սպասեն աւելի անուշ կլիմայի մը մէջ, աւելի ծիծրուն երկնքի տակ, ուր ծաղկունք ձմեռն ալ կը փթթին, առանց վառարանի կարօտելու: Միով բանիւ գձեզ երկուքդ ալ միասին Յիրէնցէ պիտի տանիմ՝ հո՛ն այն զարգացեալ և ազնուական քաղաքին մէջ քանի մ'ամիս անցնելու համար:

— Ռինա մտիկ կ'ընէր Մարագի՝ մանկական հետաքրքրութեամբ: Գարմելիդա աչքերը վար առաւ, վախնալով որ մի՛ գուցէ սեղանաւորը կարենայ իր մտածութիւնները կարգալ:

— Գո՛հ էք— հարցուց Մարագ ժպտելով:

— Ո՛հ, անշուշտ— պատասխանեց Ռինա ուրախութեամբ — ո՛հ, ո՛րչափ բարի ես, պարո՛ն: Բայց դու չե՞ս խօսիր, Գարմելիդա՛, չե՞ս ախորժիր արդեօք մեզ հետ միասին գալուդ:

Չա՛ր դու... կը տարակուսի՞ս— մըմնջեց ըսպանուհին, գրկելով օրիորդը՝ լաւ կերպով ծածկելու համար իր կարմրութիւնը և զգացած շրփութութիւնը:

— Շա՛տ լաւ, ուրեմն հասկցանք:— Եւ ոտքի կանգնելով Մարագ, ժամացոյցը հանեց, աւելցնելով.— Ժամանակը ուշ է, ես կ'երթամ կարգադրութիւններս ընելու... Ժամէ մը կը դառնամ. դուք այժմէն ճանապարհի պատրաստութիւնները սկսեցէք տեսնել: Երկու օր ժամանակ

քու տարակոյսդ սիրտս կը կտրատէ։ Ես գաղտնիք չունիմ քեզի համար... ո՛չ, կ'երթնում... խելքըս ցնոռեցաւ... մեկնումի այսպիսի յանկարծական լուր մը զիս յուզեց... ահա բոլորը... դարձեալ կը կրկնեմ քեզ... բան մը չունիմ... բացարձակապէս ոչի՛նչ։

Եւ Գարմելիդա խօսքը փոխեց, խաղաղութիւն և ծաղրալից զուարթութիւն կեղծելով սակայն իրօք սաստիկ կը տանջուէր։

Նոյն գիշերն իսկ, մինչդեռ Ռինա կը ննջէր անգորր, սպանուհին սեղանի մ'առջև նստած էր և կարծես խոր մտածմանց մէջ ընկղմած։ Դէմքին արտայայտութիւնը ամէն բոլե կը փոխուէր կարծես իր հոյին աւար եղած ըլլար ցաւալի վերջիշուններու... յուսով և երկիւղով լի... բայց ժամանակաւ քաղցր։

— Հիմա Նորպերդ ինծի կը սպասէ — ըսաւ ինքն իրեն — և ո՛վ գիտէ ի՛նչ կը մտածէ իր խեղճ Գարմելիդային վրայ...։ Ո՛հ, կը գուշակէ՞ այս գիշերուան գլխէս անցած վտանգը...։ Բայց լաւ է որ բնաւ չգիտնայ։ Վայրկեան մը կեցաւ՝ ականջ դնելով հանգարտ և կանոնաւոր շնչառութեան գեղանի որբուհիին, որուն փափուկ մարմնոյն ձեւը՝ կիսաբաց վարագուրէն սպիտակ սաւաններուն մէջ կը տեսնուէր...։ յետոյ իր մենախօսութիւնը շարունակեց...։

— Պօղոս ի՛նչ պիտի մտածէ իմ վրաս։ Ազնիւ սիրտ...։ Յանդիմանական վանկ մ'իսկ չե-

լաւ իր շրթներէն, խոժոռ նայուածք մ'իսկ չբարցուց այն կնոջ, որ բոլոր իր երջանիկ երագները ցրուեց։ Ո՛հ, ճակատագի՛ր... ճակատագի՛ր։ Երբ ապագայիս վրայ կը մտածեմ... կը դողամ...։ Սակայն Նորպերդ զիս կը սիրէ... ինծի երդուընցաւ...։ Բայց քանի մ'օրէ ի վեր այնպէս անհանգիստ է, վրդոված, ինչի այնպիսի տարօրինակ հարցումներ կ'ուզէ...։ զոր ես չեմ ըմբռներ...։ բընաւ... և հակառակ իր անկասկածելի խանդաղատանաց, իր մօտը գտնուած ժամուս անբացատրելի, դժնգակ զգացում մը կ'ուռնենամ...։

Գարմելիդա վայրկեան մը գլուխը ցնցեց՝ այսպիսի ցաւատանջ տպաւորութիւն մը հեռացրնելու համար...։ վայրկեան մը մտածկոտ մնաց, յետոյ իր գաղափարներուն ուրիշ ուղղութիւն տալով շարունակեց.

— Ի՛նչ խելքը փչեց բարերարիս այսպէս յանկարծակի մեկնելու և զիս ալ հետը տանելու։ Ի՛նչ պիտի ըսէ Նորպերդ, երբ ընդունի պիտակաւ Պէտք է որ ես իրեն գրեմ և տեղեկացնեմ։ Պիտակս սովորական տեղը կը դնեմ և երբ Նորպերդ տեսնէ թէ իր պալատը չեմ երթար, կուգայ զայն փնտռելու...։ ո՛վ Աստուած իմ...։ Աստուած իմ...։ Երբ դարձեալ պիտի տեսնեմ զինք։ Երէկ գիշերուընէ մտածելու և գործելու կարողութիւնը կորուսած եմ...։ ո՛հ, ո՛րչափ կը նեղուիմ...։

Մեքենաբար թերթ մը թուղթ և մատիտ առաւ, և յետ ժամ մը մտածելու և լալու, գրեց.

«Նորպե՛րդս,

«Պարոն Մարագ ըսաւ ինձի թէ այս ձմեռ
«Ֆիրէնցէ պիտի անցընենք: Այս գիշեր կտորած
«սրտով կը մեկնիմ: Մէկ մ'ալ ե՛րբ կընանք տես-
«նըւիլ: Չեմ գիտեր:

«Ես քու նամակներուդ մխիթարութենէն ալ
«գրկուեցայ, որովհետեւ չեմ գիտեր ինչ կերպով
«ընդունիլ կամ քեզի ուղղել: Իցի՛ւ թէ մեկնե-
«լէս առաջ վայրկեան մը կարենայի գքեզ տես-
«նել... անուշ աչքերդ վայլել, և տարփալի խօսքդ
«լսել:

«Չեմ համարձակիր յուսալ: Յամենայն գէպս
«եթէ սոյն պիտակս երեկոյ չեղած ձեռքդ հասնի.
«կայարան եկո՛ւր... իրարու ողջերթ մը փոխա-
«նակելու միջոցը կը գտնենք, եթէ ոչ ուրիշ կեր-
«պով գոնէ ակնարկով:

«Յտեսութիւն... գքեզ տեսներու փափաքով:
«Գարմելիդա»

Փակեց նամակը, ուրիշ թերթ մ'էս առաւ,
և այս անգամ ոչ մատիտով, այլ գրիչով գրեց.

«Պարոն Պօղոս,

«Անցեալ գիշեր, շփոթութեանց մէջ, միտքս
«ցնորած, չկրցայ քեզի գոնէ շնորհակալութեան
«բառ մ'ուղղելու:

«Ներէ՛ որ գայն հիմա ընեմ: Պօղո՛ս... պի-
«տի չմոռնամ երբեք քու ազնուասիրտ գործդ...
«ժառանգութիւնը զոր ինձի ըրիր: Ներէ՛ որ միտքդ
«գէշ մեկնեցի: Չեմ գիտեր ինչպէս վարձատրել

«գքեզ, բայց Աստուած բարի է և եթէ երջանկու-
«թիւն ըսուածը ունայն խոստում մը չէ ազնիւ
«ոգիներու համար, նա գքեզ երջանիկ պիտի
«ընէ... վասնզի ոչ ոք քեզմէ աւելի անոր արժա-
«նի է:

«Ես Ֆիրէնցէ կը մեկնիմ, ինչպէս գիտես,
«Ռինայի և Մարագի հետ: Ի դարձիս յուսամ կա-
«րենալ ձեռքդ սեղմել անձամբ և եղբայրս, ա-
«ղատարարս կոչել, ինչպէս կ'ընեմ հիմա գրով:

«Հայրս Թորինոյ պիտի մնայ: Վրան հոգ,
«խնամք ունեցիր իբրև զաւակն ըլլայիր...» Այս
«է վերջին խնդիրքը, զոր կ'ուղղէ վեհանձն սրբ-
«տիդ, քու

«անձնուէր և երախտագէտ
«Գարմելիդա»

Հետեւեալ առտուն, ժամը տասնէն քիչ մը
վերջ, շնորհիւ բարեխառն և գեղեցիկ օրուան,
Գարմելիդա վայրկեան մը պարտեզ իջաւ Ռինայի
հետ և անոր ծաղկատան հետ զբաղած վայրկեա-
նէն օգտուելով, վանդակադրան քարը վերցուց
և Նորպերդի նամակը հո՛ն դրաւ:

Յետոյ Ռինայի ձեռքէն բռնելով միասին
տուն վերադարձան, սենեակէ սենեակ շրջեցան և
մասնակական հետաքրքրութիւն մը կեղծելով հասան
մինչև մեծ սրահը, որ սեղանաւորին գրասենեակը
կ'առաջնորդէր:

Պօղոս նոյն վայրկեանին անկից դուրս կ'ել-
լէր: Իր գունատ գէմքը իր կարմիր ու նուազ-

կոտ աշուրները, իր թարմ ցաւերը կը յայտնէին. բայց զիմագծութիւնը այն վայրկեանին այնպիսի խաղաղութիւն և անգորրութիւն մը կը շնչէր՝ որ յանկարծակիի բերաւ Գարմելիդան և անոր սիրտը արուիել տուաւ:

Պատանին յարզանօք բարեւեց երկու օրիորդները, և հետեանալու վրայ էր երբ Գարմելիդա զայն կեցուց նշանացի և խօսուէն ակնարկով մը:

— Պարո՛ն Պօղոս — ըսաւ ամենաքաղցր ձայնով — ուրախ եմ որ մեկնելէս առաջ զքեզ տեսայ... վասնզի պիտես արդէն թէ մենք կը մեկնինք, այնպէս չէ:

Գրագիրը զլուխը ծնեց ի նշան հաւանութեան, վասնզի ոյժ չունէր պատասխանելու:

— Թո՛ղ որ շնորհակալ ըլլամ քեզի բոլոր ինծի ըրածներուդ համար: Մնա՛ս բարեաւ Պօղո՛ս... մի՛ մոռնար զիս:

Եւ այսպէս խօսելով, Գարմելիդա ձեռքը երիտասարդին կարկառեց, սահեցնելով միանգամայն նամակը անոր ձեռաց մէջ: Եւ դեռ ան զարմանքը չյայտնած, սպանուհին Ռինան հետը քաշեց տարաւ, որ խօսակցութեան ներկայ եղած էր առանց բան մը հասկնալու, առանց բան մը տեսնելու:

Նոյն իրիկունը, սեղանաւորին կառքը կանգ կ'առնուր երկաթուղիին կայարանը, և անկից վար կ'իջնէին Մարագ և երկու աղջիկները՝ ճանապարհորդի զգեստով: Լաւրինաիոս կայարանը ի-

րենց կը սպասէր ուրիշ քանի մը ծառաներով միասին, որ սեղանաւորին հետ ֆիրէնցէ պիտի մեկնէին:

Ճամբորդի զգեստով երիտասարդ մը, որ սեւազգեստ և քօղապատ տիկնոջ մը հետ թեթեւի տուած սպասարանին լայնութեամբ և երկայնութեամբ կը շրջագայէր, տեսնելով Գարմելիդան սարսուեցաւ, և քանի մը բառ փսփսալով քովի տիկնոջ ակննջին, անկից բաժնուեցաւ և ուղղակի սպանուհիին մօտ գնաց: Տիկինը անշարժ կեցաւ սրահին մէջտեղ. բայց իր քօղին տակէն՝ սուր, սեւեռուն և վառ ակնարկ մը կ'ուղղէր ներս մանող անձանց խումբին վրայ:

Գարմելիդա ուրախութեան ազդակ մը զսպեց, տեսնելով ճանապարհորդը... և անոր երախտագիտութեամբ լի ակնարկ մը նուիրեց: Բայց ուրիշ մարդ մը զայն դիտած էր, ուրիշ մարդ մը քստմնած ու շղացնցուած էր: Պօղոսն էր, որ սրահի անկիւն մը կ'ծկուած էր:

— Նորպե՛րդը... կը մեկնի՞... և անոր հաւելն կ'երթայ, — մըմնջեց յուսահատ շեշտով, ակուսները կը ճտելով:

Այս պահուս Նորպերդ սպանուհիին քով գացած և զայն ողջունած էր գլխու թեթև շարժումով և ժպիտով մը... յետոյ հեռացած:

Սակայն մի՛այն շոգեկառքին առաջին կարգին մէջ ոտք դնելու պահուն, Գարմելիդա լսեց ձայն մը իր ակննջին փսփսալ:

— Ի մօտոյ Ֆիրէնցէի մէջ:

Եւ դեռ այն ընդարմացումէն չսթափած՝ ուրուն մէջ զինք նետած էին այդ երկու խօսքը, շոգեկառքի սուլիչը մեկնելու նշանը տուաւ:



Մ Ա Ս Ն Ե Ր Կ Ր Ո Ր Դ

Ա Ր Ո Ւ Ե Ս Տ Ե Ի Ս Է Ր

Ա.

Ֆիրէնցէ՛. Այս իտալական Աթէնքը, որուն մէջ չկայ քար մը որ չկրկնէ ականջիդ, միշտ քաղցր է լսել, անցեալ ժամանակներու յիշատակաց արժանի դէպք մը...

Ֆիրէնցէ՛. Այս զարգացեալ և ազնուական քաղաքը ուր շատ սիրով կը հիւսուին արուեստի ծաղիկները բնութեան ծաղկանց հետ... պարտաւորեալ նիւթ՝ վիպասաններու նկարին... գաղափարական հայրենիք՝ ամէն գեղեցկի սիրահարներու...

Այս քաղցր և հեշտալի բոյնը ճանապարհորդներէ փնտռուած, իր արուեստի գանձերուն համար՝ որ ունի բոլոր թանգարաններուն, բոլոր եկեղեցեաց մէջ և ամէն անկիւն, որոնք երկրիս վրայ ոչ մէկ քաղքի մէջ չեն գտնուիր, կը յիշեցընեն մեծութիւնն ու առատածեռութիւնը իր անցեալ ժամանակաց իշխաններու և քաղաքացիներու, որոնք բոլորովին հակառակ ներկայիս

խնայող. առանին կեանք մը կը վարէին և վաճառականութեամբ վաստակուած ոսկին կը շոյալէին մեծղի մայր տաճարներ. հրաշալի պալատներ կանգնելու իրենց հայրենիքին մէջ, որ յետոյ գրեթէ նեցուկ կ'ըլլային ամէն մեծ ու ազգայնական զգացմանց: Ֆիրէնցէ, մեր պատմութեան թուականին, կարծես յարութիւն առած էր իր հին փառքերովը: կը ծագկէին արուեստներն ու արհեստները, ամէն տեղ եւ ու գետ կար, ժխոր մը, կեանք մը, մշտաւ շարժում մը:

Հինգ տարիէ ի վեր Ֆիրէնցէ Խտալիոյ մայրաքաղաքն էր, հետեւաբար ամէն տեսակ արուեստագիտական, քաղաքագիտական, գրական և վաճառականական գործողութեանց կեդրոնն էր:

Օտարականաց մէջ, որ բնակութիւն հաստատած էին բանաստեղծական ժպտուն ծագկալից քաղաքին մէջ և եկած էին կայծ մը կորզելու անոնց այն համայնածանօթ բոցերէն, որ առաջին անգամ արուեստը անուշադասեցին, որոնց մէջ կար մէկը՝ որուն անունը ժամանակէ մ'իվեր ամենուն բերանը կը շրջէր, ոչ ա'յնչափ վարած կեանքի տեսակին համար, որչափ հասարակաց ի տես գրուած, իր մէկ մեծղի խղանկարին համար, որուն յանգուզն նիւթը՝ երկու դարոցաց արուեստակիրցներուն մէջ հազարաւոր խնդիրներ յուղած էր:

Քլովիտոքի նկարազրած գժօխքը, ընդարձակ

նիւթ հայթայթած էր օտարական նկարիչին բազմազան երեւակայութեան: Սատանան, չոզիտ ամպի յորձանքի մը մէջ փաթթուած, դէպի ահաւոր աթոռը կը բարձրանար և անդունդի լեռները իր դէմքին բոցի և կայծի հեղեղներ կ'արձակէին. բոցերու հեղեղ մը խաւարէն դուրս կը ժայթկէր: Դեւերը կը վազէին տեսնելով իրենց սոսկալի թագաւորը. հո'ս Մոյսք, աշտարակաձեւ լեռներու ծծմբային շրջանակի մը մէջ, որուն ետեւ շարժելով կը գահավիժեն զողզոցոց քարեր. հո'ն Բէլիէլ պղտոր գետակներու մէջ, որուն ջրերը գանդաղաքայլ կը սահին դէպի սատանին աթոռը. ուրիշ տեղ մը Մազոզ, որ ի զուր կ'աշխատի ոչնչացնել գժօխքը:

Գժօխային ժողովին մէջ կ'որոշեն մեոցնել Մեսիան:

Գրեթէ երկու տարիէ ի վեր, երիտասարդ օտարականը Ֆիրէնցէ կը գտնուէր, և դեռ ոչ ոք պզտիկ տեղեկութիւն մ'ունէր անոր ծննդավայրին և ընտանեաց վրայ: Ոմն կ'ըսէր թէ Արեւելքէն եկած նկարիչ մ'ըլլայ, ուրիշ մը սպանիացի իշխան մը, որ խանդավառութեամբ ինքզինքը այսպիսի գժուարին ասպարէզի մը նուիրած էր, և ուրիշ մ'ալ վերջապէս կը պնդէր թէ փորթուգալցի հարուստի մը որդին է: Բան մը որ ստոյգ կը պիտոյնէր, այն էր թէ արուեստի առարկաներու զնման համար աներեւակայելի գումարներ կը ծախսէր, և կը խօսուէր դարձեալ իր շատ մը

բարեգործական ձեռնարկութեանց վրայ: Սմէն տեղ էր միշտ, բայց գրեթէ միշտ միայնակ, այս էր՝ որ իր շուրջը եղած խորհրդաւորութիւնը կ'աւելցնէր:

Օտարական երիտասարդին գրասենեակը կը գտնուէր Փիրէնցէի ամենաժողովրդական թաղի մը մէջ՝ ընդարձակ շէնքի մը երրորդ յարկը, ուր կեդրոնն էր ամէն արուեստաւորացի:

Սյն գրասենեակը, տեսակ մը «Հարէմ» էր: Կարծես կնոյ՝ գաղափարական գեղեցկութեան մէջ, արուեստագէտը շրջավայրը յարմար գտած էր իր հանճարին ներշնչումներուն, և անոր կը նուիրէր արուեստին բոլոր ամենագաղտնի ճարտարութիւնները և սրտին ամենաազնիւ զգացումները:

Աչքերը չորս կողմը դարձնելով, ի գուր կարելի էր հանգչեցնել գանոնք միայն մէկ գեղեցկութեան մը վրայ. ուրիշ հարիւրաւորներ կը յաղթահարէին նայուածքը՝ աւելի ևս դժուարին յուզումներու մէջ մղելով գհոգին:

Իգական գաղափարը, նա ամէն գոյնով ներկայացուցած էր, երբեմն ցաւի, երբեմն ուրախութեան, մեկամաղձոտութեան արտայայտութիւն տալով անոր... մերթ ևս արհամարհանքի, կասկածի, վախի, և նախանձի:

Գրասենեակը ընդարձակ, մեծղի էր թէև մէկ կողմը թաարոնի նման վարագոյրով տեսակ մը սենեակի վերածուած էր: Կարասիները ամենապարզ էին. բայց բնորն ալ թանկարժէք, որով-

հետև ուրիշ բան չէին եթէ ոչ արուեստի առարկաներ: Հո՛ւ կը տեսնուէին պատկերակալներ՝ արդէն նախագծուած կտակներով... հո՛ն ուրուագրծեր, գծագրութիւններ, օրինակներ, փորագրութիւններ, կիսանդրիներ, խաւաքարտեր, ներկատուփեր. սեղանի մը վրայ շատ մը ալպոմներ և թղթակալներ՝ լի ճարտար նոր նախագծերով. մէկ անկեան մէջ գրագարան մը՝ լի փիլիսոփայական, քննադատական գրքերով, ինչպէս Լամարգինի, Արիստոտէլի, Վինքլմանի, Ռայնտի գլուխ գործոցներով կային. ուրիշ անկիւն մը դաշնակ մը՝ միշտ բաց, որ ցոյց կուտար թէ ի՛նչպէս օտարական երիտասարդը նկարչութեանն ոչ նուագ... կը սիրէր նաև երաժշտութիւնը:

Չմբան հրաշալի առաւօտ մըն էր, տօնական օր մը, և մեր արուեստաւորը իր աշխատանոցին մէջ՝ պատկերակալի մ'առջև կանգուն՝ պնակիտը ձեռքին մէջ բռնած կը նկարէր: Ստեղծելու փափաքը իր սրտին մէջ կը վառէր և իր աչքերը կը բոցակիզէին... խրոխտ կերպարանք մը սալով իր գեղեցիկ գլխուն... գլուխ մը՝ ճշմարիտ արուեստագէտի: Մագերը սև ու փայլուն էին, աչքերը վառլոուն որոնց մէջէն մտածումի փայլատակներ կը շողար կարծես, գոյնը անուշ թխագոյն, ճակատը լայն, արդէն ակօսուած յարատև մտածութիւններէ... բերանը պզտիկ և քիչ մը ցաւկոտ, մօրուքը ցանցա՞ն՝ բայց խնամքով սանտրուած ու կարգի դրուած... դիւրաթեք և ար-

ձակ անձնաւորութիւն մը: Բոլորովին սե հագած էր, բան մը՝ որ իր դիմագծին և իր կերպարանքին ազնուակահարութիւնն աւելի կը ճոխացնէր:

Նոր գաղափարի մը յղացումին մէջ ընկերզւած, երիտասարդը գեղեցկի գաւառներուն մէջ կը թափառէր, և շտեմաւ թէ մէկը առանց իրեն իմաց տալու՝ իր աշխատանոցը մտած էր, որ արուեստաւորէն քանի մը քայլ հեռու՝ գրեթէ զիւթուած՝ կանգ առաւ:

Աչքերը իւղանկարին վակած էին:

— Վսե՛մ, հիանալի՛ է — գոչեց վերջապէս խանդով — Մէնտէ՛ս ուրախակցութիւններս կը յայտնեմ:

Նկարիչը զարմացած ետ դարձաւ, աղաղակ մ'արձակելով:

— Դո՛ւ... Կո՛մս — ըսաւ սրտացոյ ձայնով մը, որուն մէջ կը տեսնուէր սպանիական գոգար ելեւէջ մը — ինձի ըսին թէ Փարի՛զ կը գանուիս:

— Քանի մ'օրուան համար գացի — պատասխանեց Կոմսը, աթոռ մը մօտեցնելով պատկերակալին քով — չես զարմանար անշուշտ երբ գրեզ հաճոյքով կը տեսնեմ, և հազիւ հասած կը համարձակիմ՝ գալ և քու մտածութիւններդ կընդհատեմ:

— Շատ սիրելի է ինձ քու ընկերութիւնդ... բայց... ճիշտ ժամանակին հասար... Կո՛մս, ակնարկ մ'ալ այս նոր աշխատութեանս տուէք և ձեր կարծիքը ըսէք...:

Նորեկը առանց պատասխանելու՝ աթոռին կռթնեցաւ, ակնոցը դրաւ և քանի մը վայրկեան համր հայեցողութեան մը մէջ ընկղմած մնաց: Ամենաթրթուռն բոց մը կարծես անցնելով անոր յիարզներուն մէջէն՝ դէմքը ա՛յնպէս կենդանացուց, որ այդ վայրկեանին զինք տեսնողը պիտի բացագանչէր:

— Այս մարդը շա՛տ լաւ գիտէ գեղեցիկը... կատարեալ արուեստագէտ մըն է ան:

Այո՛... Նիքօլօ Տէ Ռոսսի կոմսը արուեստագէտ մըն էր, բայց ժամանցի, հաճոյքի, խանդի արուեստագէտ մը, ոչ ի հարկէ պաշտաման: Երիտասարդ հասակէն այրի մնացած՝ իր միակ աղջկան հետ որ գայն իր մէկ պառաւ քրոջ խնամքին յանձնելով, ինք ճամբորդութեան ելած էր Եւրոպիոյ ամենանշանաւոր քաղաքները՝ մօտէն ուսումնասիրելու համար արուեստի աստուածային գլուխ գործոցները: Կոմսը հինգ տարի վերջ Ֆիրէնցէ վերադառնալով՝ աղջիկը մեծցած գտաւ, և մտածեց իր սպազայ տարիներն այդ միակ արարածին. երջանկութեան նուիրել և անոր քով վայելիլ ընտանեկան ուրախութիւնները:

Ուստի կամաց կամաց ընկերութենէ հեռացաւ, վերապահելով միայն քանի մը հաւատարիմ բարեկամներ և նուիրելով իր ժամանակը նկարչական հեշտալի ուսումնասիրութեանց և իր Աննինային դաստիարակութեան:

Ներկայիս, Տէ Ռոսսի կոմսը երեսուն և հինգ տարին թեւակոխած էր, այսուհանդերձ իր զէմքը քսան տարեկան երիտասարդի մը թարմութիւնն ու կենդանուցիւնը ունէր:

Վեց ամիսէ ի վեր օտարական արուեստաւորին հետ յարաբերութեան մէջ կը գտնուէր: Միասին արուեստի առարկաներու հասարակաց առուծախով կը զբաղէին: Ի ցոյց դրուած իւղանրկարներուն մէջ, Փէրուճինոյի կտոր մ'ալ կար, զոր կոմսը շատ կը փափաքէր ձեռք բերել: Այս երկուքին մէջ՝ նախանձ մը, տեսակ մը երկպառակութիւն ծագեցաւ: Իւղանկարը առասպելական գնոյ մը բարձրացաւ և ի վերջոյ Մէնտէս գնեց զայն: Վերջինս, կոմսի աչքերուն մէջ կարծեց տեսնել զսպուած արցունք մը, տեսակ մը դայրոյթ...:

— Սակայն առաւ իւղանկարը ու առանց բառ մ'ըսելու մեկնեցաւ:

Նոյն օրն իսկ, Տէ Ռոսսի իր պալատը վերադառնալով, սեղանին վրայ գտաւ իր շատ փափաքած պատկերը՝ այցետուսով միասին, որուն մէջ պարզ անուն մը գրուած էր «Մէնտէս» և քիչ մը վարը նուրբ գեղագրութեամբ այս խօսքերը. «գեղեցիկ արուեստից երեւելի սիրահարին, իբրև դոյզն յիշատակ մէկ-սիրտ բարեկամէդ:»

Սյգ օրէն կոմսը՝ օտարական արուեստաւորին ամենաշերմ հիացողներէն մին եղաւ, և աւիթ չէր կորսնցներ անոր հոգւոյն ազնուակա-

նութիւնն ու տաղանդը մինչև աստղերը բարձրացրնելու:

— Կը կրկնեմ, հիանալի՛ է — գոչեց կոմսը, սեղմելով երիտասարդին ձեռքը — կեցցէ՛, բուն իտալական նշանադրոյմ առած ես ... գծագրութիւնը Միքէլանճէլօյինն է, գունաւորումը Թիցիանոյին, շարժումները Թինթորէթթոյին:

Երիտասարդը մտիկ կ'ընէր մտածկոտ:

— Ներէ՛ սակայն որ ըսեմ, թէ դու քիչ մը շատ կ'աշխատիս — շարունակեց կոմսը հայրական կերպով մը, և բարեսէր ժպիտով մը, — ու անպատճառ կը վրասուիս. քու հասակիդ մէջ պէտք չէ յարատև սիրտ հատցնել գեղեցկին ցնորական տեսիլներուն, արդի կենաց իրական գեղը չկորսընցնելու:

Աշխատութիւնը կը ջլատէ ոյժերը և հոգին կ'ընկճէ... և յետոյ միայն հո՛ս քու աշխատանոցիդ միայնութեան մէջ չէ, որ պէտք ես փնտռել և ստեղծել զաղափարական պատկերները, որ մրտածելովդ քու տաք երեւակայութեանդ մէջ կ'արծարծին, այլ պէտք է փնտռել արտաքին աշխարհին մէջ, որը արուեստաւորին անսպառ հունձքեր կ'ընձեռէ ժողովելու՝ երեւակայութեան աշխարհին համար:

Մէնտէս իր սև աչուրները սեւեռեց ազնուական մարդուն վրայ, գոչելով.

— Գուցէ իրաւունք ունենաս... սակայն ես կը զգամ որ իմ միտքս ամփոփուելու և մտա-

ծելու պէտք ունի՝ Վայրկեան մ'առաջ, դեռ դու հոս չեկած, մինչդեռ վրձինս տենգոս կերպով կտաւին վրայ կը շրջէր, ես այնպիսի նորանոր շարադրութիւններ կ'երազէի որ սիրտս կտոր կըտոր կ'ըլլար կուրծքիս տակ, և քունքերս անսովոր կերպով կ'այրէին, կը տոչորէին... Ո՛հ, ես պիտի աշխատիմ... պիտի աշխատիմ միշտ. ցիւրեկը՝ Թիցիանոյի գոյները ուսումնասիրելով, գիշերը՝ Պուստառոթիի գածերը: Արուեստը՝ ինծի համար երկրորդ կեանք մըն է:

— Ձերինը ազնուական ցնորք մ'է — գոչեց կոմսը խանդավառութեամբ, ոտքի ելլելով և աշխատանոցի երկայնութեամբ շրջագայելով. մերթկանգ առնելով և ուրիշ պատկերներու վրայ հիանալով — նոյնը ես ալ զգացած եմ, երբ քու տարիքդ ունէի. և հիմա ալ ոչ նուազ խանդ ունիմ, թէև մերթ աւելի գերմարդկային սիրով մը մեղմացած... իմ աղջկանս սիրով... Անոր համար միայն դեռ ես վրձինը կը փայփայեմ... նա իմ միակ մխիթարութիւնս է:

Մէնտէս գլուխը ծոցեց հառաչելով, բայց կոմսը չնշմարեց:

— Յարմար առիթն է — ըսաւ նա անպատշաճաբար մը — Աննինայիս խոստացայ որ երթամ և գինք Ս. Աւետման եկեղեցիէն առնեմ: Կ'ուզե՞ս հետս գալ Մէնտէս: Զքեզ երկու գեղեցիկ օրիորդներուն պիտի ներկայացնեմ. որ իմ մէկ բարեկամիս՝ Թօրիոցի Մարազին հետ երկու օր

առաջ Ֆիրէնցէէն հասան: Երկու որբուհիներ են, ինչ որ ինծի ըսաւ, զորս որդեգրած է. կնոջական երկու գեղեցիկ տիպարներ են, տարբեր գեղեցկութեամբ... իմ Աննինաս անոնցմով կը խենթենայ, միշտ հետերնին է, որովհետև բարեկամս պալատիս դիմաց դռնուած յարկաբաժին մը վարձած է... Կ'ուզե՞ս ուրեմն գալ: Տե՛ս ի՞նչ գեղեցիկ, հրաշալի՛ առաւօտ է...:

— Ուրախութեամբ կ'ընդունիմ՝ հրաւերդ — պատասխանեց երիտասարդ նկարիչը, սաստիկ կարմրելով:

— Վայրկեան մը սպասեցէ՛ք — ըսաւ, պնակիտն ու վրձինը վար դնելով — հիմա կուգամ:

Եւ քովի սենեակը մտաւ, որ թատերական վարագոյրով մը բաժնուած էր մինչդեռ ազնուական մարդը սեղանին վրայ դրուած նալպոմը դիտելով զբողեցաւ:

Քաւորդ ժամ վերջը, երկու արթուն ու աշխուժ բարեկամները՝ տաք խօսակցութեամբ մը աշխատանոցի սանդուխներէն վար կ'իջնէին:



Բ.



Ֆիրէնցիի Ս. Աւետման եկեղեցին, ազնուական ժամադրավայրն է այն ամէն տպաշխարհաց՝ որ Վերմեռանդութիւնը ժամանց մը կը նըկատեն՝ և այն թեթև գլուխ երիտասարդներուն՝

որ կ'երթան բախտ մը, մեքենայութիւն մը կամ
օժիտ մը փնտռելու:

Տէ Ռոսսի կոմսը և Մէնտէս հասան Ս. Ա.
Լետաման եկեղեցին, երբ արդէն տաաներկուքի
պատարագը վերջացած էր: Մէկ կողմ քաշուե-
ցան որ ժողովուրդը ցրուի, երբ յանկարծ անոր
մէջ թարմ ու ժպտուն դէմք մը նշմարեցին, որ
չնորհակալից կերպով հեռուէն դիրենք կ'ողջու-
նէր:

— Ահաւասիկ Աննինան— բացազանչեց կոմ-
սը, իր քով քաշելով ընկերը, որուն սև աչքերը
հաճոյքի փայլատակ մը զրկած էին իտես հա-
մակրելի օրիորդին— բայց ինչպէս, չար սատա-
նային բախտէն նորեկները հետը չեն:

Վերջապէս Աննինայի կ'ընկերէր միայն իր
դաստիարակուհին, բազմամեայ կին մը, բայց
անոր գէր ու կարմիր դէմքը, ցոյց կուտար թէ
ինչպէս ներքին խաղաղութիւնը երբեք վրդոված
չէր ապստամբ կիրքերէ, ո՛չ հաճոյից ետևէ ըլ-
լալէ և ո՛չ ընդհարուելէ:

— Եւ քու նոր բարեկամուհիներդ— հար-
ցուց ազնուական մարդը իր աղջկան հազիւ ա-
նոր քով հասած:

— Արդէն դուրս ելած էին երբ ևս գացի
գիրենք առնելու— պատասխանեց աղջիկը, և իր
դէմքը մութ կարմիր գոյն մը կ'առնուր փոխա-
դարձ ողջունած ժամանակ իր հօր երիտասարդ
բարեկամը: — Գուցէ չափազանց ուշացայ ա-

ւելցուց տեսակ մը թացիկութեամբ: — Բայց
ինչ կ'ուզես, սիրելի՛ հայրիկ՝ Յանցանքը փեղու-
րագործուհիին է, որ իմ գեղեցիկ փեղոյրս երէկ-
ուընէ դեռ չէ բերած:

— Միշտ միեւնոյն խնդուկն ես— պատաս-
խանեց կոմսը, հպարտ ժպտով մը նայելով— և
սակայն քու պատճառաւդ ներկայացումէ մը
զրկեցիր բարեկամս, որուն համար շատ տհաճե-
ցայ...:

— Շատ կը ցաւիմ որ Մէնտէս ... աւելորդ
տեղը... զոհեց... իր պտոյտը — վրայ բերաւ Ան-
նինա թեթև արհամարհոտ շարժումով և հեզնա-
կան շեշտով մը— բայց... ուշացուած բանը, չ'ըս-
ուիր կորսուած .. դեռ ժամանակ կ'ունենաս հայ-
րի՛կ, զանոնք իրեն ծանօթացնելու:

Մէնտէսի բոլոր արիւնը սիրտը խուժեց այդ
երգիծանքին վրայ, բայց չպատասխանեց:

— Օգը հիանալի է այսօր և անտարակոյս
Մարագ օգտուած պիտի ըլլայ իր պաշտպանեալ
երկու գեղեցիկուհիները շրջակայքը պտոյտի տա-
նելով.— ըսաւ կոմսը, որ չէր անդրադարձած
աղջկան ծաղրաբանութեանց և օտարական ար-
ուեստագէտին տհաճութեան:

— Սպասաւորը ինձի ըսաւ — ընդմիջեց դաս-
տիարակուհին — թէ այցելութեան մը գացած են
և թէ իրենց վերադարձին ձեր քով պիտի գան:

— Շատ լա՛ւ և մենք պալատին մէջ իրենց
կը սպասենք... դու ալ կուգա՞ս Մէնտէ՛ս:

Սա իր սև աչքերը ս'ւեռոնց կոմսին աղջկան վրայ. կարծես անկից խօսքի մը կը սպասէր: Իր ականարկը քաղցր յանդիմանական կնիք մ'ունէր և միեւնոյն ժամանակ պաղատանքի, որով Աննինայի գէմքը գոհութիւն ճառագայթեց և իր ժպիտը նախկին քաղցրութիւնն առաւ:

— Այո՛... այո՛ եկո՛ւր — ըսաւ օրիորդը սրտի զեղումով — ես քու սիրած «սովմանս»ը պիտի երգեմ, դու ինձի պիտի ընկերիս... յետոյ պիտի ցուցնեմ քեզի իմ թռչուններս և գեղեցիկ գամելեակներուս հաւաքածոյն զոր հայրս ինձի նըւիրեց...:

— Եւ մեզի ճաշի՛ պիտի մնաս — աւելցուց կոմսը՝ աղջկան իղձերը կատարելագործելու համար... — կը հաւանի՞ս:

— Կը հաւանի՛մ երախտագէտ սրտով — բացազանչեց երիտասարդը, շատ յուզուած՝ այնչափ մտերմութեամբ և զեղմամբ եղած հրաւէրքներուն վրայ:

Մինչդեռ ասոնք միասին կ'ուղղուին կոմսին պալատը, որ կը գտնուէր Ածէլիոյ հրապարակի թաղերէն միոյն մէջ, մենք քիչ մը Աննինայով զբաղինք, որ բաւական մասն պիտի ունենայ մեր ամբողջ պատմութեան մեջ:

Տէ Ռոսսի կոմսին աղջիկը հազիւ իր տասն և վեց տարին կը մտնէր, թէև քիչ մ'աւել մեծ ցոյց կուտար, ա՛յնչափ բնութիւնը զինք շոայլած էր կանխահաս և կատարեալ զարգացումով

մը:

Աւելի փափուկ՝ քան գեղեցիկ, աւելի շնորհալի՝ քան փափուկ, իր խեղուով գէմքին վրայ գեղեցիկ կերպով ներդաշնակուած էին շուշանին ու վարդին գոյները. իր սև ու խոշոր աչքերէն վառ կրակ մը կը ցայտէր, որուն շայլը աչք կը շլացնէր, և խաղաղ, մեղկ, և դիւթիչ կ'ըլլային:

Իր օրիորդական հրասուրբիչ շնորհքներուն մէջ, չէր նշմարուեր սակայն այն ամօթխած պարզամտութիւնը, այն անուշ ու քաղցրաբարոյ կերպը որ այնչափ սիրելի կ'ընէ զկիներ:

Որը ի մօրէ, ինչպէս գիտենք, ծաղիկ հասակէն, երկչոտ ու ներողամիտ մօրաքրոջ մը խնամքին տակ սնած, ամէն տեսակ վայելքներով շրջապատուած, զոր հարստութիւնը կը շոայլէ բախտաւորներուն, նա մեծցած էր ճոխ քամահանքներով և թերութիւններով, որ կը սարսափեցընէին նուազ գողտր ու նուազ կուսպաշտ հայր մը:

Օժտուած տարօրինակ իմաստութեամբ մը, սուր, երագ, և խորհող մտքով մը, Աննինա հրաշալի կերպով դաշնակ կը զարնէր, կ'երգէր հագուազիւտ ճարտարութեամբ կը նկարէր, ինքզինք բազմաթիւ ազնուական երիտասարդաց պաշտամունքին և ուշադրութեանն առարկայ ընելով, որոնք իր ձեռքին և իր անհուն հարբատութեանց կը ցանկային: Աննինա միշտ պատրաստ պատասխաններ ունէր ամէն առաջարկութեանց, ամենուն համար մէկ ակնարկ բաւական

էր, բայց իր բնատուր փոփոխամտութեամբ, նախորդ օրուան ըսածն ու զգայածը երկրորդ օրը կը մոռնար:

Տէ Ռոսսի, ինչպէս գիտենք. իբրև կուռք կը պաշտէր իր աղջիկը... միայն անոր համար՝ և անով կ'ապրէր. Աննինան ամէն մտքէ վեր խնամքներով շրջապատելով, կը փափաքէր նոյնիսկ որ օգն ալ անոր չհպէր. եթէ ոչ միայն շոյելու, փայփայելու համար, որ անոր փափուկ ոտքերուն տակ հողը ծաղիկներով ծածկուէր, որ վերջապէս կեանքը անոր համար մշտնջենաւոր ժպիտ մ'ըլլար:

Փափուկ ու պզտիկ կոմսուհին պաշտողներու շարքին մէջ՝ մէկը կար, որուն աւելի հակեցաւ ժամանակ մը Աննինա, և մեծագոյն պատրուասիրութեամբ՝ քան այլոց: Աւրիլիոյ Ծամարոյ կը կոչուէր ան. ծննդեամբ յոյն էր և հասակով քսանամեայ: Որք ի ծնողաց, իրեն մնացած միակ նշանաւոր և հմուտ եղբոր հետ եկած էր ի Ֆիրէնցէ հաստատուելու, քաղաք մը՝ որ իր նախնական տարիներուն գաղափարական եղած էր: Առանց գեղեցիկ ըլլալու՝ չափազանց համակրելի էր: Անդորր ու ազնուական արտաքինին ներքև, իր հանդարտ ժպտին և քաղցր նայուածքին մէջ, հրաշէկ ոգի մը, եռանդուն սիրտ մը, վիպասանական միտք մը գուշակել կուտար: Գիշեր մը, պարահանդէսի մը հանդիպեցաւ Ալվիզոյ մարգիդի տան մէջ... և այդ գիշերէն սկսեալ նա

տնոր յիմար սիրահարն եղաւ: Գիշեր ու ցերեկ Աւրիլիոյ, քմապաշտ օրիորդին պատուհաններուն տակ կը շրջէր... Այն յարասե յաճախութիւնը յոյն ու փափուկ յայտարարութիւնը, ի վերջոյ Աննինայի անձնասիրութիւնը շողմեցին և զգայնացուցին իր սիրտը, այնպէս որ ուրիշ անգամներ երիտասարդին հետ ընկերութեանց մէջ զրուսուած ժամանակ, սկսած էր քծնիլ անոր և անուշութեամբ հետը խօսակցիլ, և վերջապէս ընդունիլ անոր մեծարանաց հաւաստիքը, և այլևս ոչ մէկ վտանգ չէր սպառնար իրեն:

Իրերը այս վիճակին մէջն էին, երբ հայրը Մէնտէս իրեն ներկայացուց: Օտարական արուեստագէտին գեղեցկութեան և յաջողակութեան համբաւը, այն տեսակ մը փորհրդաւորութիւնն ու կախարդանքը՝ որ կարծես զինք շրջապատած էին, երկայն ժամանակէ ի վեր նազելի օրիորդ կոմսուհույն հետքերութիւնն ու շահագիտութիւնը զրգոած էին... և հիմա որ անոր մերձենալու առիթն եկած էր, այնպիսի բուռն ձգտում մը կը զգար իր մէջ առ այն՝ զոր կարելի չէր մեկնիլ կամ յաղթահարել:

Մէնտէս ինքզինք շատ ազնիւ և ընտանիցոյց կուտար օրիորդին. Աննինա ալ շատ անգամ անոր աչքերը տարօրինակ կերպով իրեն վրայ սեւեռած ըլլալը յանկարծակի բռնած էր. բայց իր բերնէն բառ մ'ելած չէր, որ անոր տարակուսիլ տար իր փոխադարձ տարփանքին վրայ:

Եթէ նոյնիսկ երիտասարդը, սրտին մէջ ո՛րեք քաղցր յոյս մը յղացած էր, դեռ յայտնած չէր բնաւ: Այս բանս կը տհաճեցնէր և կը գրգռէր օրիորդը, որ երգուած էր զայն շուտով իր ստեղծուած տակ տեսնել: Ի՛նչ կ'ուզէր: Գրաւել մարդ մը, որ իսկոյն խոնարհած չէր իր ձգողական առաւելութեանց առջև, օրիորդին համար աւելի մեծ յաղթանակն էր՝ զոր կրնար ունենալ մտերիմ սքանչացողներուն վրայ, որոնք բնա՛ւ ընդդիմութիւն չէին ցոյց տար:

Յունուար ամսոյ գիշեր մը, սեղանաւոր Մարագի Ֆիրէնցէ գալէն քիչ առաջ, Ալվիզոյ մարդիկին տանը մէջ, ուր Աննինա ճանչցած էր Ծամորոյ յոյն երիտասարդը՝ ընտիր ու հրաշալի ընկերութիւն մը համախմբուած էր: Ալվիզոյ մարդիկը դարձեալ իր մեծաշուք սրահները բացած էր պարահանդէսի մը համար:

Տէ Ռոսսի օրիորդ կոմսուհին այն գիշերը կախարդիչ էր: Ալեճև, ամենաճոխ, կարմրագոյն պատմուճան մը իր մարմինը կը պճնէր, որ մերկ կը թողուր երկու ուսերը, կուրծքը և երկու փափուկ թեւերը, հեշտալի, և երիտասարդութեան ամէն թարմութեամբ և կախարդանքներով հոծ: Իր կամապաշտ գլխիկը, բաց շագանակագոյն գանգուրներով պսակուած, իբրև պարզունակ զարդ՝ թարմ հովառու շաններու փունջ մ'ուռնէր՝ շողակնի աստղով մը հաստատուած: Ուրիշ փունջ մը հովառու շաններու՝ կուրծքի ժանիակին և

քօղին մէջտեղ կը պսպղար:

Սակայն օրիորդի գէմքին վրայ դժգոհութեան թիթև ամպ մը կը տեսնուէր, աչքերը ստէպ դէպի սրահի դուռը կը մեկնէր և ամէն ներս մտնողին՝ իր հեւքոտ կուրծքը կ'ալեկոծէր և իր այտերը կը շառագունէին:

Պարահանդէսը սգեւորուած էր, յիմար արբեցութիւն մը կարծես բոլոր հրաւիրեալներուն տիրեր էր: Ազմուկէն ու շփութութենէն օգուտ քաղելով և սրահի խղղոզ մթնոլորտէն ազատելու համար, որ իրեն գլխու պտոյտ կը պատճառէր, Աննինա բնագգօրէն դէպի ծաղկանց ջերմանոցները ուղղուեցաւ, զորս մարդիկուհին շատ լաւ մտածեր էր բանալ տալ, որոնք լոյսի և բոյրի մէջ կ'օղողուէին, երբ ոտնաձայնէ մը գլուխը շրջեց և ուրախութեան աղաղակ մ'արձակեց.

— Դո՛ւ ես Մէնտէս, — ըսաւ ոգեւորութեամբ — ինչո՞ւ այս իրիկուն ուշացար:

— Յանցանքը իմս չէ, օրի՛որդ — պատասխանեց երիտասարդը, անոր դիմաւորելով և ձեռքը սեղմելով — սակայն դեռ կարծեմ ժամանակին հասայ քեզի հետ շրջադարձ պար մը (վալցեր) բռնելու համար:

— Քիչ մը վերջը — բացազանչեց Աննինա՝ անպատում քաղցրութեամբ — հիմա ... կարծես շունչս կը բռնուի. սրահը շա՛տ բազմութիւն, շա՛տ լոյս կայ:

— Շատ լաւ, կը ներես անշուշտ որ միասին

Ղերմանոցներն երթանք— ըսաւ Մէնտէս երկիւ-
ղածութեամբ, շափաղանց յանդուզն սեպելով իր
խնդիրքը:

— Այո՛, ... այո՛ ... եկո՛ւր— աւելի հանգիստ
կ'ըլլանք— ընդմիջեց օրիորդ կոմսուհին, ընտա-
նեբար յենլով արուեստագէտին բազկին: Այսպէս
միասին ընդարձակ սրահ մը կտրեցին անցան,
մարմարեայ մեծ և շքեղ սանդուղէ մը իջան և
այնպիսի բանաստեղծական և բուրումնաշատ
մթնոլորտի մը մէջ մտան, որ կարծես պարիկի
մը պատասպարանը փոխադրուած ըլլային: Ագնր-
ւական անուշ հովիկ մը կարծես ծաղկանց մէջ
կը գուարճանար և անոնց քաղցր բոյրը կը գող-
նար. հեռաւոր երաժշտութեան ձայնը հոն կը
հասնէր՝ աւելի մեղամաղձոտ և շքնաղ...: Ուրիշ
քանի մը խումբեր ևս կը շրջադայէին Ղերմա-
նոցին մէջ կամ բուսոց մէջ ծածկուած աթոռակ-
ներու վրայ կը հանգչէին, գուցէ լաւագոյն կեր-
պով շնչելու համար քաղցրաբուրումներն և վա-
յելելու համար անոնց արձակած գովութիւնները:

Մէնտէս և Աննինա Ղերմանոցներէն անցան
և տեսակ մը սիւնաբարձ, ճիւղահիւս, տերեւա-
լից և ծաղկազարդ տաղաւարի մ'առջև հասան,
որ մէջտեղէն կախուած ալապաստրէ նուազ կան-
թեղով մը կը լուսաւորուէր: Քանի մը արեւել-
եան կարասիներ կը զարդարէին այս բանաստեղ-
ծական և մենաւոր թաքստոցը, որ այն վայկեա-
նին բոլորովին ամայի էր:

Տէ Ռոսսի օրիորդը բաժնուեցաւ իր անթա-
կալէն, մեղկաբար իյնալով բազմոցի մը վրայ:

Մէնտէս օրիորդին առջև ոտքի վրայ մնաց:

Շնորհալի շարժումով մը, գայն հրաւիրեց
որ իր քով նստի, և աւելցուց:

— Ի՞նչ լաւ է հոս, այնպէս չէ՞:

Մէնտէս ժպտեցաւ, բայց առանց պատաս-
խանելու: Գուցէ գերուած այն անակնկալ եր-
ջանկութենէն... գուցէ կը տարակուսէր որ այդ
ամէնը երազ մ'ըլլար...:

— Ի՞նչպէս գտար մարդիգուհիին սարքած
հանդէսը— ըսաւ Աննինա վայրկեան մը լուռի-
նէ վերջ:

— Շիտակն ըսելով ես ա՛յնչպի քիչ կեցայ
սրահին մէջ՝ որ չեմ կրնար դատաստան մ'ընել...
բայց ապահով եմ, որ ուրիշներէն նուազ պիտի
չըլլայ... մանաւանդ որ իսկական զարդը հոն չի
պակսիր— աւելցուց երիտասարդը, շարաճճի ժը-
պիտով մը նայելով քնքուշ օրիորդին, որ շառա-
գունեցաւ զլուխը ցնցելով պաշտելի պշրանքով
մը:

— Բայց դու քիչ անգամ ընկերութեան մէջ
կը մտնես— խօսք առաւ օրիորդը իբրև թէ խօս-
քը փոխելու մտքով և տեսակ մը մանկական հե-
տաքրքրութեամբ — և կարծեմ բացառութիւն մըն
է որ ըրիր Ալվիգոյ մարդիգուհիին... և... իմ հօրս
հետ:

— Ստոյգ է, կոմսուհի՛, բայց քեզի չըսի՛ն

հասե, թէ ինչո՞ւ:

— Ո՛հ, ես ի՛նչ գիտնամ — պատասխանեց Մենինա պարզամտութեամբ:

— Շատ լաւ, ես կ'ըսեմ: Ո՛րչափ Ալվիզոյ մարգիգուհիին տունը, այնչափ քու հօրդ տունը՝ ապահով եմ գեղեցիկ օրիորդ մը գանելուս վրայ, որուն համար խելքս կորուսեր եմ վեց ամիսէ ի վեր... ուրիշ տեղեր կը տարակուսիմ այդ բախտը ունենալուս:

Օրիորդը ուրախութեան, յաղթանակի շարժումն մը չկրնալով գսպել, գրեթէ խսկոյն սովորական հանգարտութիւնն ստանալով և կատակով մը.

— Իրա՞ւ կ'ըսես — գոչեց: Ո՛հ, ի՛նչ արժանիքներ պիտի կարենայ ունեցած ըլլալ այդ օրիորդը, ձեր միտքը գրաւելու համար և մինչև այն աստիճան որ ստիպուիս անոր համար... քու սովորական հետաքրքիրն ձգելու... Եւ... ըսէ՛ ինձի, եթէ ներելի է, այդ օրիորդը գո՞րշ է թէ խարտեաչ:

Կ'ուզե՞ս որ անոր գէմքը նկարագրեմ — հարցուց Մէնտէս, բռնելով օրիորդին ձեռնոցակիր ձեռքը, զոր նա չմերժեց:

— Շատ ուրախ կ'ըլլամ:

— Շատ լաւ, լսէ՛ ինձի — ըսաւ արուեստագէտը, որուն ձայնը այնպիսի համակրելի շեշտ մ'առած էր, որ կրնար կամապաշտ կոմսուհիին սիրտը սարսուել: — Այն աղջիկը գոր... ես կը սի-

րեմ... գեղեցիկ է աւելի քան նոյն ինքն իր խօսքերը. իր ամէն շարժումն շնորհքներու կատարելութիւն մըն է. իր ձայնը քաղցր է և ներգաշնակ, եթէ խայթէ կամ փայփայէ. ձեռքերը սպիտակ են և պաշտելի, թէպէտև գուարճանան վարդակարմիր եզունգներով կտրատել այն սրտերը՝ որ իրեն համար կը տառապին: Նա վերջապէս քու ժպտուն բերանդ ունի, քու պսպղուն աչքերդ և քու շագանակադոյն գեղեցիկ գանգուրներդ...:

Տէ Ռոսսի օրիորդը վարժ՝ իր չորս կողմը տեսնելու պաշտողներու ամբօխ մը՝ որ առատօրէն գովեստներ և խունկեր կը շոյալէին իրեն շարժ՝ յանկարծակի զարմանքի արդիւնք մը առաջ բերելու իրեն մերձեցողներուն վրայ, ի սկզբան ինքզինք կամաւոր անտարբեր ցոյց արւաւ երիտասարդին, ինչպէս ըսինք. և հիմա լրսելով անոր ակնարկութիւնները... տեսնելով անոր նախընթաց շարժումը, ինք միտքը գրաւելին յաղթանակը պահել և իզական փոքր վրէժխնդրութեան մը հաճոյքն ունենալ իր կողմանէ արհամարութիւն և անտարբերութիւն մը ցոյց տալով, որ իսկապէս շատ հեռի էր այդպիսի ըզգացումէ մը:

Սակայն Մէնտէս դեռ ելլելու ո՛րէ շարժում մը չըրած, ինքը սաստիկ քրքիչ մը փրցուց:

— Ո՛հ, ո՛հ, — ըսաւ վերջապէս, կատակի ձեւով, գօտիէն կախուած հովահարի մը հետ խաղա-

լով — չեմ հաւատար. բայց միւս կողմանէ շատ բարեբախտ եմ որ այդպիսի ազնուական զէմքի մը կը նմանիմ: Գնա՛, գնա՛, պարոն Մէնտէս... գուցէ այս վայրկեանիս իսկ քու անգութ գեղեցկուհիդ զքեզ կը հառաչէ: Յտեսութիւն... և... ներէ ինձի որ սաիպեցի զքեզ այսպիսի կարեւոր քու մէկ գաղտնիքդ ինձի ո՛ն, ո՛ն, ո՛ն, յաջողութիւն պարո՛ն նկարիչ:

Առանց ժամանակ տալու որ երիտասարդն իրեն պատասխանէ, Աննինա շնորհալից կերպով զայն ուղունեց, և դուրս ելաւ տաղաւարէն և թիթեռնիկի մը պէս թռչկտելով շերմանոցի բուսոց և ծաղկանց մէջ. մինչդեռ կը մըմնջէր ինքն իրեն՝ ուրախ սարսուռով մը. — Խեղճ Մէնտէս, կարծեմ զիս իրապէս կը սիրէ... ես ալ զինք կը սիրեմ, բայց յիմար չեմ որ զայն իրեն իմացնեմ. չափազանց մեծ յաղթանակ մ'ըրած պիտի ըլլայ:

Երիտասարդն ալ, յանկարծակի իր բարոյական հեղգութենէն դուրս ելլելով. որուն մէջ զինք նետած էին կամապաշտ օրիորդին խօսքերը, միեւնոյն ժամանակ կը գոչէր.

— Շնորհալի և յամա՛ռ սատանայ. կը զգամ թէ զիս կը սիրէ... իմ կեղծ անտարբերութեանս վրէժը լուծելու համար, զիս չհասկնալ կը կեղծէ: Ո՛ն, այդպէ՛ս թող ըլլայ... ես կ'ընդունիմ. անտարբերութիւն ընդ անտարբերութեան, արհամարհութիւն ընդ արհամարհութեան: Տեսնե՞ք երկուքէս ո՛րը պիտի կարենայ ինքզինք լաւ

պաշտպանել:

Եւ Մէնտէս ժպտար շրթանց վրայ՝ յաղթական՝ պարասրանը մտաւ:

Հիմա գտնանք մեր պատմութեան.

Գ.

Արդի ճարտարապետութեամբ շինուած Տէ Ռոսսիի պալատը, ազնուական պարզութիւն և վայելուչ երեւոյթ մը կ'ընծայէր զիտողներուն:

Պալատին չորս կողմը՝ հաւասար լայնութեամբ գեղեցիկ բակ մը կար, մէջտեղը կճեայ աւազանի մը վրայ Արիոնէի արձանը քանդակուած: Անոր ետե կը տարածուէր գեղեցիկ պարտէզ մը՝ իրեն տեսակին մէջ եզական:

Պալատին ներքին սրահներն ու սենեակները բարձր էին, ընդարձակ, հարուստ և գեղեցիկ կահաւորուած, ճաշակաւոր և քմահաճ:

Տէ Ռոսսի կոմսը պատկերներու առաջնակարգ թանգարան մ'ունէր: Հոն կային Թիցիա-նոյի, Սալվատոր Ռոզայի, Գորրէճճիոյի, Վան-տիքի, Ռուպէնսի, Թէնիէյի, և Փուսսինոյի գործերէն: Ուշադրութեան արժանի էին զլիսաւորապէս նաև նաբոլէթանցի Վէրրիոյի նկարներէն մի քանին, օրինակութիւն մը վասթոյմարզիդուհիին՝ Թիցիանոյի բնագրէն առնուած և շատ մը նշանաւոր իւզաներկ զէմքեր:

Ագնուական մարդը ունէր նաև հին ու նոր անօթներու, պղինձներու, մարմարներու, յաղ- ջապակիներու, սակիներու, երգինադրուզ փղոս- կրբերու և վերջապէս հագուազիւտ իրերու թան- զարան մը, ճաշակաւոր ու գեղեցիկ կերպով դա- սաւորուած սրահներու և սենեակներու մէջ:

Մեր անձինքը հագիւ պալատ հասան՝ Ան- նինա խնդրեց վայրկեան մը առանձնանալ զգիւ- տը փոխելու համար: Բայց առանձնանալու պատ- ճառը իրօք՝ Մէնտէսի ներկայութենէն զզացած յուզումէն կազդուրուելու համար էր, որովհետև զինքը չէր տեսած վերը յիշուած պարահանդէսի գիշերէն ի վեր:

Եւ յետոյ, ճամբան քալած ժամանակ, երի- տասարդ արուեստագէտին կողքին գտնուելով՝ հրապուրեալ ձայնով մը և շարածձի ժպիտով մը հարցուցած էր անոր, թէ վերջին անգամ երբ տեսած էր այն շնորհալի գէմքը՝ զոր նկարագրած էր. և թէ դեռ իր սէրը չէր յայտնած անոր.

Մէնտէս այս հարցման վրայ տարօրինակ քաղցրութեամբ մը նայած էր ցուրտ ձայնով պատասխանած.

— Այլևս հոգ չըրի: Ի՛նչ կ'ուզես, խարուած էի, ինչպէս կը խաբուին այն ամէն չափազանց վառ երեւակայութիւն ունեցող մարդիկ... հեշ- տալի երազ մը տեսած էի՝ առանց իրականու- թեան վրայ մտածելու. կը յուսայի բնութեան հրապուրիչ շնորհաց ներքև գտնել՝ հոգւոյն աստ-

ուածային շնչումը, բայց չէի նախատեսած որ, եթէ կինը գոյութիւն ունէր, սակայն իմ երազած գաղափարականն ալ ուրիշ բան չէր՝ բայց միայն բանգագուշանքի մը շոգեղէն արդիւնքը: Ստոյգ է թէ վէրքը մարդուն սրտին մէջ ցաւալի եղած է, ինչպէս ամբարտաւանութիւնը՝ նկարչին քով... բայց փառք Տիրոջ... հիմա ապահով եմ, առող- ջացած եմ, կատարելապէս առողջ: Ըսէ՛ ինձի օրիորդ, ստոյգ չէ՞ թէ բրածս խենթութիւն մըն էր...: Խենթութիւն՝ սիրային խօսքեր մը մնչելուս համար օրիորդի մը ականջին՝ որ խնդալով ինձի մտիկ կ'ընէ, խեղկատակութեան կ'առնէ, և երբեք լըջութեամբ կամ գայրոյթով ընդունելու պատիւն իսկ չըներ ինձի:

Աննինա շրթուները խածած և պշրալի շար- ժուձև մ'ըրած էր, և թէպէտ իր գէմքին վրայ չէր երևցներ զզացած նախատինքը, սակայն մտածկոտ մնաց և մինչև տուն՝ այլևս չխօսեցաւ:

Կոմսն ու Մէնտէս իւր գովիկոս Ժ. Կ. Եան գե- ղեցիկ սրահի մը մէջ կանգ առին և արեւելեան բազմոցի մը վրայ նստած՝ սկսան ընտանեբար խօսիլ ուսմանց, ճամբորդութեանց, նոր գրոց, արդի մատենագիրներու վրայ. և օտարական ար- ուեստագէտը իր շողակրատանքները այնչափ սը- րամտութիւններով և զուարթութեամբ կը համե- մէր, որ կոմսը անոր վրայ ապշած էր և ինքն իրեն կը հարցնէր. «Ի՛նչպէս կարելի է որ շուրջ քսան և հինգամեայ երիտասարդ մը կարենայ

այսչափ բան գիտնալ և այսչափ ճամբորդութիւնս
բրած ըլլալ:»

Անկարող այլևս երկար սանձելու իր հե-
տաքրքրութիւնը, ազնուական մարդը մտադրեց
հարցնելու օտարականին իր ծննդեան գաղտնի-
քը. այդ ատեն սրահին դուռը բացուեցաւ, և
ներս մտաւ կոմսուհին՝ որ իր ներկայութեամբը
խղեց անոնց ներքին խօսակցութիւնը և քանի մը
զարմացումի խօսքեր արտաբերեց:

Քանի մը վայրկեանի մէջ օրիորդն այլա-
փոխուած էր: Առտնին զգեստ մը հագած էր՝
բուստի գոյնով, սպիտակ մետաքսի վրայ բան-
ուած և ամենապարզ ոսկեկապով մը զօտեւոր-
ուած: Իր ստներն, որ մոխրիկի մը նախանձը
կրնային շարժել, արեւելեան երկու հողաթափեր
հագուած էր. մագերը՝ մի միայն այնպիսի կիւն-
քու յատուկ արուեստով յարգարուած էին՝ որոնց
մէջ մայր բնութիւնը ինքնին գեղեցկին զգացու-
մը յորդած է, իբրև պարզունակ զարդ նոնենիի
ծաղիկները կը կրէին, որոնք վար չէին մնար իր
չրթանց կարմրութենէն:

Աննինա դէպի նկարիչը մօտեցաւ, և անոր
ամենաքաղցր և թեթև դողդոջ ձայնով մ'ըսաւ:

— Պարոն Մէնտէս, կը հաճի՞ս աշխատա-
նոցիս այցելութիւն մը տալ: Քեզի իւղանկարի
մը սւրուագիծը ցոյց պիտի տամ, և եթէ հայ-
րիկս ընդգլխմանայ ցուցահանդէսի մը պիտի զրը-
կեմ:

— Ինչպէս որ կը հրամայես — պատասխա-
նեց արուեստագէտը ոտքի կանգնելով և օրիոր-
դին հետեւելով:

Կոմսը անոնց ետեւէն զնաց, անհուն դոհու-
նակութեան ժպտով:

Սպասաւոր մը առջևնէն կ'երթար:

Յարկաբաժին մը անցան, որ հիանալի շքե-
ղութեամբ կահաւորուած էր և աշխատանոցին
դրան առջև հասան:

Սպասաւորը յարգանքով մը դուռը բացաւ
և մէկդի քաշուեցաւ:

Տէ Ռոսսի օրիորդ կոմսուհւոյն ուսումնա-
սնեակը մտնելու ժամանակ՝ առաջին անգամ
աչքի կը զարնէին երկու իւղանկարներ, կամ լաւ
ևս բնական մեծութեամբ՝ տարբեր տարիքով եր-
կու կնոջական դէմքեր:

Աջակողմանը օրիորդի մըն էր՝ բոլոր իր
կատարեալ գեղեցկութեան մէջ: Քիչ մը ժամա-
նակ դիտելով՝ դիւրին էր ճանչնալ այն կենդանի
դիմագծին մէջ Աննինայի պատկերը: Կարելի չէր
ուրիշ կերպով ըլլալ. անիկա իր մօրը պատկերն
էր:

Միւսը, ընդհակառակն, միջահասակ կին մը
կը ներկայացնէր՝ պարզ ու մելամաղձոտ դէմ-
քով: Կոմսին քրոջ պատկերն էր, անոր՝ որուն
ազնուական մարդը յանձնած էր իր աղջկան
զաստիարակութիւնը և զոր երկինք անկէ յափըշ-
տակած էր, երբ Աննինա մեծապէս պէտք ունէր

մայրական խնամքի մը:

Կոմսուհին Տէ Ռոսսի ուղղակի մօտեցաւ պատկերակալի մը և վերցնելով նկարի մը ծածկոյթը՝ գոչեց:

— Տեսէ՛ք... երեւակայական նախագիծ մըն է... պարզ և աննշան:

Մէնտէս չպատասխանեց խփոյն, վասնզի քաղցր հայեցողութեան մը մէջ ընկղմած էր: Այդ աշխատութիւնը իրեն աստուածային կը թուէր: Կարծես թէ օրիորդը իր անուշ, ճկուն, քմահաճ բնավորութիւնը դրոշմած էր ամէն հոն ուր վրէձինը շօշափած էր: Նիւթը բանաստեղծական էր... թարմ... հեշտալի, Արեւայոյսն անհառին մէջ. անտառ մը՝ բոլորովին ծաղկազարդ և բուրումնաւէտ...: Ծառերն ու սաղարթները կարծես գիշերուան շողիէն գեռ խոնաւ էին: Քանի մը գեղեցիկ օգանոյշներ խոտերուն վրայ կը վազվզէին, ուրիշներ բոյսերու ճիւղերէն կախուած՝ օդին մէջ կը տատանէին, ոմանք ալ վերջապէս դաշտային ծաղկանց բաժակներէն ցօղը կը ծծէին:

— Աննշան նախագիծ մը. — բացազանչեց վերջապէս Մէնտէս՝ անկեղծ զարմացումով մը — բայց ասիկա վերջացած գծագրութիւն մըն է... հիանալի...: Ուրախակցութիւններս կը յայտնեմ քեզի: Աշակերտուհի մ'ես որ ուսուցչիդ պատիւ կը բերես:

— Եւ ահա իմ ուսուցիչս... ահա որմէ սորվեցայ արուեստին սկզբունքները — ըսաւ օրիոր-

դը, իր հօր այտերուն վրայ համբոյր մը դրոշմելով աղջիկներու յատուկ մտերմութեամբ մը: հայրական ներողամտութենէն ունակացած:

Կոմսը գայն իր կուրծքին սեղմեց խնդազին հրճուանքով:

— Ես կը նախանձիմ տաղանդիդ վրայ — շարունակեց օտարականը ծանր շեշտով մը — շարունակէ հեղինակել, որովհետեւ Աստուած գրեզ ճոխ, բեղուն հանճարով մը օժտած է: Գիտեր որ արուեստը սահման չունի: Հակառակ հնագոյն հիանալի գործերուն, որ երեւակայութեան գեղեցկութիւնը սպառած են, կը ստեղծուի, միշտ կը ստեղծուի և դարձեալ բոլոր ստեղծագործողները կը ծափահարուին:

— Դու զիս մխիթարէ՛ — ըսաւ օրիորդը ուրախութեամբ, մինչդեռ կոմսը զգացուած իր մէկ ձեռքը կը սեղմէր — բայց տաղանդս նախանձելի մի՛ ըսեր: Քու իւզանկարդ ցուցահանդէսին մէջ տեսայ. Անիկա այո՛, կընայ դասական արտադրութիւն մը համարուիլ: Քու շարագրութիւնդ ճշմարիտ հանճարի մը կատարեալ արդիւնքն է... ո՛հ, ո՛րչափ յոգնած և աշխատած պիտի ըլլաս անոր վրայ:

Մէնտէս չարածճի ժպիտ մ'ունեցաւ:

— Ուրիշ բան չեմ ըներ — պատասխանեց — բայց միայն Ռէյնոլտոյի ցոյց տուած ոճին հետեւիլ՝ արուեստին մէջ յաջողելու համար:

— Եւ կարելի՞ է գիտնալ — հարցուց Աննինա

վառ հետաքրքրութեամբ:

— Ինչո՞ւ ոչ: — Առտու անկողնէս ելածիս պէս քու վրադ կը մտածեմ մինչև որ կրկին անկողին երթամ:

— Ասոր համա՛ր է — բացագանչեց աղջիկը կատակի ձևով, արհամարհանք մը զգալով այն խօսքերուն համար, որ իրեն յանդիմանութիւն մը թուեցան — որ այսպիսի հրաշալի կերպով էր յաջողիս ամենագոյններին նիւթի մը մէջ... Բայց — աւելցուց շահադիտութեամբ մը — Ինչ մաքով ընտրեցիր իւզանկարիդ համար այսպիսի գարհուրելի և դժօխային նիւթ մը:

— Վասնզի — պատասխանեց գուարթութեամբ Մէնտէս — իմ մթնոլորտս միշտ հրեշտակներով լեցուած չէ... երազներուս մէջ այնպիսի անամօթ հրապուրիչ դևեր կ'երեւնան, որ ո՛րէն նկարչի մը վրձինը կը ստիպեն՝ տարօրինակ... և անառակ տիպար մը փնտաւու:

— Բայց ձեր իւզանկարին դևերն, կը ներես եթէ համարձակ կը խօսիմ, ամէնն ալ անասնական և ահաբեկիչ ցոռկներ ունին — կրկնեց օրիորդը բարեկամական հեգնութեամբ մը:

— Նիւթը այսպէս կը պահանջէր, բայց պիտի տեսնես որ անոնք բոլորովին տարբեր պիտի ըլլան միւս իմ Փորձութիւնները վերնագրով մէկ նոր շարագրութեանս մէջ:

Աննինա թեթևապէս գունատեցաւ:

Տէ Ռոսսի կոմսը սաստիկ ծիծաղ մը փրցուց:

— Ո՞հ, ո՞հ — ըսաւ նա կատակով — քու ուսումնասնեակդ համակ փորձութիւն մըն է: Կրնո՞յական քանի մը դէմքեր ունիս որ, ամենախեղացի մարդու մը խելքն ալ գլխէն կը թոցնեն: Կարծես արար բանաստեղծի մը խելքէն փախած ստեղծագործութիւններ են:

Գեղեցիկ և խորհրդաւոր օտարականը յարգանքով խոնարհեցաւ:

— Ո՞հ, բա՛ւ է... բա՛ւ է, այսչափ, նկարչութեան վրայ, — ըսաւ Աննինա դժկամակ շեշտով յետոյ աւելցուց գուարթաբարոյ և շնորհալի կերպով:

— Դու բուսաբա՛ն ալ ես, այնպէս չէ՞, պարսն Մէնտէս:

— Հօրս արժանաւոր դաւակն ե՛մ, անշուշտ:

— Ո՞հ, — հարցուց կոմսը պարզամիտ կերպով — դե՞ռ հա՞յր ալ ունիս:

— Այո՛, — պատասխանեց երիտասարդը, դուրովալիբ սրտով մը — հայր և մայր ալ ունիմ որ Լիզզոնայի մէջ կ'ապրին... և քոյր մ'ալ որ Փարիզ՝ Պրիան դուքսին հետ ամուսնացած է...:

Ազնուական մարդը և իր դուստրը իրարու նայեցան, որ կարծես ըսել ուզէին. «Այլևս տարակոյս չկայ՝ Մէնտէս պարզ անուան տակ, Փորթուղալցի ամենանշանաւոր ընտանիք մը քօղարկուած է»:

— Հայրս... — կ'ուզէր շարունակել արուեստագէտը — բայց յանկարծակի խօսքն ընդհատե-

լով, դարձաւ Տէ Ռոսսի օրիորդին ու ըսաւ.

— Բուսաբանական ուսումը շատ շահաքրքրական է անոնց համար որ գայն կ'ըմբռնեն. գիտեմ որ դու, օրիորդ. անով շատ կը զբաղիս, և բարեբախտ պիտի ըլլայի եթէ կարենայի անգամ մը այցելել քու պարտէզիդ հրաշալիքները:

— Շատ լաւ... եթէ թեւզ ինծի տալ կը հաճիս, պատրաստ եմ գրեզ գոհացնելու: Գու ալ կուգամ հայրիկ—աւելցուց, դառնալով կոմսին՝ մանկական շնորհալի շարժուձեւով մը:

Ազնիւ մարդը հաւանութեան նշան մ'ըրաւ և երկու պատանիներուն հետ զբասնենակէն դուրս ելաւ, ուղղուելով դէպի պարտէզին վրայ բացուող հանդիսասրահ մը, ուր կ'իջեցուէր շքեղ սանդուղով մը:

Եթէ Յոյները բուսաբանութեան աստուածուհի մը յօրինէին, պիտի ըսէի թէ ասիկա անոր լաւագոյն տաճարն էր: Տէ Ռոսսի կոմսը՝ իր դստեր պարտէզին, ըստ իր բնատուր սովորութեան՝ ամէն խնամք և առատ դրամ շնայած էր ամենահազուադիւտ բոյսեր ձեռք բերելու, զորս շերմանոցներու մէջ յատուկ ուշադրութեամբ կը խնամէր:

Երբ Մէնտէս կըրցաւ մօտէն տեսնել ծաղկանց նոր օրինակ զանազանութիւնները՝ յայտուն գոյներով, ձեռք բերուած՝ այն ամէն միջոցներով զոր արուեստը կը հայթայթէ բնական գիտութեանց այս մասնաճիւղի շերմ սիրահար-

ներուն. և հիայումի ազադակ մ'արձակեց, որուն վրայ կոմսուհին հպարտ հաճոյքով մը կարմրեցաւ:

— Ստոյգ չէ՞ թէ գեղեցիկ է — հարցուց վերջինս պաշտելի շնորհալիութեամբ:

— Հրաշալի, սքանչելի՛ ըսէ, և դեռ քիչ է — պատասխանեց Մէնտէս անկեղծ ոգեւորութեամբ:

Տէ Ռոսսի գոհունակութեամբ ձեռքերը շփելով, կ'ուզէր տեղեկութիւններ տալ այն հիանալի բուսոց վրայ, երբ սպասաւոր մը լուր բերաւ թէ Մարագ սեղանաւորը օրիորդներուն հետ սրահը իրենց կը սպասէր:

— Երթա՛նք, երթա՛նք — գոչեց Աննինա պատրաստական թափով և զարմանալի աշխուժութեամբ, սրահէն դուրս վազելով, մինչդեռ հայրը կ'ըսէր նկարչին.

— Եկո՛ւր, Մէնտէ՛ս, եկո՛ւր, որ զքեզ բարեկամիս ներկայացնեմ:

Դ.

Մարագ Ծիրէնցէ հասնելուն պէս ինքզինք աշխարհիս ամենէն երջանիկ մարդը նկատեց: Բոլոր իր ժամերը կընար գեղեցիկ որբուհիին կողքին անցնել, որ նոյնպէս երբեք այսպէս երջանիկ և զոհ եղած չէր:

Սեղանաւորը չքեղ կահաւորուած յարկաբա-
ժին մը վարձած էր, ուր ամէն զիւրութիւն կար,
ինչ որ անհրաժեշտ է և հաճելի ազնուալիան և
դեռատի օրիորդներուն: Երեք սպասաւոր տարած
էր հետը և սպասուհի մը՝ երկու օրիորդներուն
համար, որոնց բարձր դասակարգի օրիորդներու
հաւասար չքեղ, համեստ և ճոխ զգեստներ հագ-
ցուց:

Ամէն օր զիրենք գեղեցիկ լանճոյով Ֆիրէն-
ցէի արուարձանները կը տանէր... իսկ երեկոնե-
րը միշտ Փէրկոլայ թատրոնին երկրորդ օթեակի
մը մէջ կը տեսնուէին:

Այս երկու գեղեցիկ արարածներուն երևու-
մը մարդու մը հետ, որուն ազնուական, անուշ,
հանդարտ և շրջահայեաց կերպարանքը՝ յարգանք
և համակրութիւն կ'ազդէր, և չէր կրնար տեսակ
մը շփոթութիւն յառաջ չբերել նորածեւութեանց
աշխարհին մէջ, և ժամանակ մը քաղաքական
քրոնիկը իրենցմով չզբաղեցնել:

Վեց օր էր որ Ֆիրէնցէ կը գտնուէին, երբ
առտու մը Մարագ միայնակ Տօնէէն դուրս ել-
նելով, ազնուական մարդու մը հանդիպեցաւ որ,
յետ վայրկեան մը զինք ուշադրութեամբ դիտե-
լու, իր քով մօտեցաւ:

— Դո՛ւ... Մարագ, Ֆիրէնցէի՞ մէջ... Ի՛նչ
զուգահիւսութիւն:

— Ո՛հ, կո՛մս, բախտ մըն է ինձի քեզ հան-
դիպելու— պատասխանեց սեղանաւորը Տէ Ռոսսիի,

որուն հետ տարիներ առաջ միասին գտնուած և
սերտ բարեկամ եղած էին:

— Շատ ատեն է որ հոս հասած ես:

— Գրեթէ վեց օր է:

— Վե՛ց օր... և առանց զիս գալ գտնելու:

— Կը ներես... հասցէդ չէի գիտեր, յետոյ
մինակ ալ չեմ:

— Ամուսնացա՞ր արդեօք:

— Ո՛չ... բայց... պատմութիւնը երկայն է:

— Աճապարանք չունիմ... երթանք, տուն
տանիմ գրեզ... հոն աւելի ազատ կը խօսինք:

Երկու բարեկամներ թե թեւի մտան: Ծամ-
բան Մարագ Տէ Ռոսսի կոմսին պատմեց գեղե-
ցիկ որբուհիին մասին իր գլխէն անցածները, իր
յոյսերը, իր երկիւղները, չծածկելով բան այն
գերագանց մարգէն՝ որուն ուղիղ դիտաւորու-
թիւնն ու ազնիւ սիրտը կը ճանչնար:

Տէ Ռոսսի կոմսը ուշ գրած էր առանց իր
բարեկամին խօսքն ընդհատելու: Երբ պատմու-
թիւնը վերջացուց, անոր ձեռքերը սեղմեց ըսե-
լով.

— Մարագ միտքդ կը հասկնամ, վասնզի ես
ալ սիրած եմ քեզի պէս և գուցէ քիչ մը աւելի.
ստոյգ է, երջանիկ եղած եմ... բայց քիչ մը ժա-
մանակ... վասնզի ընդմիշտ ցնդեցաւ իմ երիտա-
սարգութեանս ամենագեղեցիկ երազը. կը տես-
նես ուրեմն, թէ ատկէ դադարի մը ունիմ. յա-
մենայն գէպս կը յանձնարարեմ որ հանդիստ ըլ-

լաս: Որբուհին ալ Ֆիրէնցէ բերիր:

— Այո՛, բայց ո՛չ միայնակ: — Եւ Մարագ երկու խօսքով Գարմելիզայի պատմութիւնն ալ ըրաւ:

— Ո՛հ, ընդմիջեց Տէ Ռոսսի, ուրեմն ձե՛ր վրայ էր որ կը խօսուէր այս օրերուս մէջ, դո՛ւք էիք որ կը տեսնուէիք միշտ Ֆիրէնցէի արուարձաններու մէջ՝ երկու աղջիկներու հետ, որ փակագծի մէջ, մեր շատ մը ազնուական տիկնանց նախանձը կը շարժէիք:

— Ի՛նչպէս...իրենց վրա՛յ խօսեցաւ:

— Այո՛, սիրելիս, և ոչ միշտ լաւ: Ֆիրէնցէ ալ համեմատութեամբ ոչ նուազ շարախօսող քաղաք մ'է, մանաւանդ թէ կարծեմ ուրիշ քաղաքներու վրայ այս առաւելութիւնը ունի: Բայց... մի՛ վախնար, Տէ Ռոսսի կոմսը զիտէ շար լեզուները լռեցնել:

Մարագ տխուր մը ժպտեցաւ:

— Շնորհակալ եմ քու բարութեանդ, սիրելի բարեկամ, բայց...— աւելցուց տեսակ մը հրպարտութեամբ— ճակատս բաց է և կ'արհամարհեմ ամէն զրպարտութիւն և զրպարտող:

— Կը հաւատամ Մարա՛գ, կը հաւատամ: Այնուհանդերձ պէտք է երեւոյթները փրկել, մասնաւորապէս այն երկու արարածներուն անդորրութեան համար, զորս կը սիրեմ արդէն, և ինձի ըսածիդ համեմատ, կը փափաքիս ընկերութեան մէջ ներկայացնել: Շատ լաւ, ...կ'ըսենք որ

երկու որբուհիները որդեգրած ես ... և զանոնք կը կոչենք Մարագ օրիորդներ, ոչ ոք կարծեմ պիտի ուզէ իմ խօսքերս սուտ հանել:

Սեղանաւորը սրտի զեղումով բարեկամին ձեռքը սեղմեց:

— Ինչպէս կը փափաքիս այնպէս պիտի ընեմ... և իրենց կողմանէ շնորհակալութիւն կը յայտնեմ...:

Տէ Ռոսսի կոմսը ուրախ էր:

— Շատ լաւ...ուրեմն...այս իրիկուն աղջիկներդ ինձի բեր— ըսաւ քաղցրութեամբ— զանոնք Աննինայիս պիտի ներկայացնեմ...:

— Ո՛հ, աղէկ յիշեցուցիր— Ի՛նչպէս է, աղէ՞կ է...— հարցուց Մարագ հոգատարութեամբ— կը յիշէ՞ դեռ իր հին բարեկամը:

— Մի՛շտ... և շատ աւելի ուրախ պիտի ըլլայ կրկին տեսնելով:

Ահա թէ ի՛նչ կերպով Գարմելիզա և Ռինա բարեկամացան Տէ Ռոսսի օրիորդին հետ. անա թէ ի՛նչպէս Մարագ կըցած էր ընկերութեան մէջ ներկայացնել երկու օրիորդները: Երկուքն ալ հասարակաց առջև զինք հայր կը կոչէին, առանին մտերմութեան մէջ՝ իրենց քաղցր բարեկամն ու բարերարը կ'ըլլար:

Երբ կոմսը և Մէնտէս սրահին մէջ մտան, տեսան որ Աննինա իր երկու նոր բարեկամուհիները կը գրկէր՝ իրեն յատուկ խեղուկ զեղումով մը, մինչդեռ Մարագ քաղցր ժպիտով մը զի-

րենք կը գիտէր:

Նկատելի չը այդ խումբին վրայ անտարբեր ակնարկ մը նետեց. բայց հազիւ թէ տեսաւ Ռինան՝ ամբողջացաւ, և անակնկալ կարմրութիւն մը իր գունատ զէմքը շառագունեց: Քաղցր ու խոր ակնարկը, որ օրիորդին աչքերուն մէջ յանկարծակիի եկած էր, իրեն համար տեսակ մը յայտնութիւն եղաւ: Անհուն խոսովութիւն մը զգաց, Տէ Ռոսսի օրիորդ կոմսուհիին իր վրայ գործած տպաւորութեան բոլորովին հակադասակերը: Դեռ առաջին անգամն էր որ այսպիսի խոր չգացում մը կ'ունենար կնոջական տեսքէն. երբեք սիրան այսչափ ուժգնօրէն բարախած չէր: Ուրեմն վերջապէս պիտի իրականանար իրեն համար այն երեւոյթական պատկերը՝ նախատեսած՝ կրեց անքնութեան և արուեստի բաղձանքին մէջ: Վերջապէս գտած էր այլևս գաղափարականը՝ որուն վրայ երիտասարդութեան մը բոլոր անարգները անձնաւորած է:

Կոմսը, որ նշմարած չէր երիտասարդին խըռովքը, գայն Մարագին տարաւ ըսելով.

— Կը ներես, սիրելի՛ Մարագ, որ իմ լաւագոյն բարեկամներէս մին քեզի ներկայացնեմ:

— Քու բարեկամդ իմն ալ է — պատասխանեց սեղանաւորը՝ յարգանօք ձեռքը նկարչին կարեկանելով, զոր նա փոխադարձ յարգանօք սեղմեց: Յետոյ, Մարագ, օտարականը օրիորդներու խումբին տարաւ, ներկայացնելով զինք իր որ-

դեղբա՞ծ աղջիկ՝ երուն:

Փարմալիդա անփութութեամբ մը փոխանակեց Մէնտէսի ողջոյնը, որովհետեւ գեղեցիկ սպանուհիին սիրուն ու միաքը ուրիշ տեղ էին. Ռինա, շուտարած շառագունեցաւ:

Սօսակցութիւնը շուտով տաքցաւ: Նորածնութեանց, արուեստներու, երաժշտութեան վրայ խօսեցան, և Մէնտէս երբեք, այսչափ զբաւարթ և աշխոյժ եղած չէր: Իր ծագկեալ և փայլուն լեզուն, հիւսիսարնակ ազնուականութեան յատուկ, բայց լեզու մը՝ որուն տարփաւոր երիտասարդութիւնը՝ ամէն ժամանակ և ամէն երկրի մէջ՝ բանաստեղծութեան հրաշալի ցնորդները կը հազցնէ, ամէնուն համակրութիւնը իրեն պարտեց, բայց մասնաւորապէս Մարագինը:

— Գիտե՛ս — ըսաւ Մարագ Տէ Ռոսսի կոմսին. մինչդեռ երիտասարդը դաշնակին կը մօտենար, որպէսզի Աննինայի ընկերէ, որ երգելու փափաք ցոյց տուած էր — որ աղջիկը իրաւունք ունի սիրահարուելու այս օտարականին: Գեղեցիկ է և բարի կ'երեւայ: Դէմքին վրայ մեկամաղձոտութիւն մ'ունի որ կը հրապուրէ և իրեն կը քաշէ: Խնձրիկ երիտասարդներ: Եթէ զիրար կը սիրեն, ինչպէս կը տեսնէք և կ'ըսէք, ինչո՞ւ կը սպասէք զանոնք երջանիկ ընելու:

— Քեզ կ'ըսեմ և որոշ գիտեմ որ Մէնտէս կը սիրէ իմ աղջիկս և ըստայնմ ալ կը շարժի, և անկեղծութեամբ կը խոստովանիմ որ ուրախու-

Թեամբ պիտի տեսնես այս միութիւնը որ կ'ի-
րականացնէ ըստիս, սիրոյ գաղափարականը...
բայց կը վախնամ որ Աննինա կարծիքը փոխէ:
Դեռ իր գլխիկը անկարող է տրամաբանելու, զեռ
պզտիկ գաղափար մ'իսկ չունի այն բանին՝ ինչ
որ պէտք է ըլլալ կին մը՝ իբրև հարս կամ իբրև
մայր... միայն հաճոյքի և գուարճութեան վրայ
կը խորհի... ո՛հ, բարեկա՛մս, ի՛նչ տարբերութիւն
իր խեղճ մօր միջև...:

Տէ Ռոսսի կոմսը վայրկեան մը մտածու-
թեանց մէջ ընկղմեցաւ. ամպ մը կը մթազնէր
իր ազնուական ճակատը... շրթները կարծես ա-
ղօթք մը... կամ աղերս մը կը մըմնչէին:

Կը յարգէր Մարագ բարեկամին լուութիւնը,
և վերացեալ ակնարկը կը դարձնէր՝ դէպի օրիորդ-
ները, խնդալու և գուարթ երգ մը երգելու զի-
տաւորութեամբ՝ Մէնտէսի հետ:

Վերջապէս ազնուական մարդը ցնցուեցաւ,
և Մարագը մետաքսեայ վարագոյրներուն ետեւ
տանելով, անհուն վշտով ըսաւ անոր.

— Ո՛հ, ես միշտ ծածուկ պահած եմ կրօն
բոլոր վշտերս, յուսալով որ ժամանակը և փոր-
ձառութիւնը պիտի կարենային փոխել Աննինա-
յիս բնաւորութիւնը, բայց դժբախտաբար, թշուառ
սպազայ մը կը գուշակեմ... քանի որ ես քոյն եմ,
հանդիստ կընայ ապրիլ, վասնզի կեանքիս գնով
գանդիկա կը պաշտպանեմ: Բայց ի՛նչ պիտի ըլլայ
եթէ զիս կորսնցնէ:

— Ո՛հ, այդպէս մի՛ խօսիր, բարեկա՛մս,—
ըսաւ Մարագ աւելի յուզուած՝ ակամայ, և ջա-
նալով ժպտիլ՝ որպէսզի իր կրօն գառն տպաւո-
րութիւնը ծածկէ — սարսապ տեղ դու գրեց կը
վախցնես...: Աննինա զեռ պզտիկ աղջիկ մ'է, և
հակառակ իր քմահաճոյից, բարի՛ սիրտ ունի և
ոչ մէկ տհաճութիւն չի տար քեզի: Կը տեսնես
որչա՛փ գրեց կը սիրէ ...:

Տէ Ռոսսի կոմսը գլուխը շարժեց:

— Աստուած տար որ ըսածդ ճիշտ ըլլար—
աւելցուց տանջուած և դողող ձայնով.— Բայց...
գիտե՛ս թէ ինչո՛ւ զիս կը սիրէ: Վասնզի միշտ իր
ուզածը կ'ուզեմ, վասնզի միշտ «այո՛» կը պա-
տասխանեմ ամէն խնդիրքին, որովհետեւ իր փա-
փաքածը կը կատարեմ, այն երջանիկ կեանքին
համար, զոր իրեն կը հայթայթեմ... ո՛հ, դժբախ-
տաբար եթէ իր կուսական սիրտը կ'արհամարհէ,
ժամանակին ամէն նախապաշարումները, դիւրա-
գրդողութիւնը՝ բնական թեթեւութեամբ մը և
զեռ անկերպարան բնաւորութեան մը հազարու
մէկ թերութիւնները, յանցանքը բոլոր իմս է և
իրաւունք չունիմ անոր վրայ ցաւելու: Չափա-
զանց կը սիրեմ զինք, անա՛ իմ տկար կէտս: Ես
իսկ շողմած եմ իր հակամիտութիւնները, և սը-
նուցած՝ իր քմահաճոյքները... բայց կընայի՞ նա-
խատեսել հետեւանքը: Պէտք էի դարձանել երբ
զեռ փոքր էր, իր հոգիին տիրանալ... և ես ընդհա-
կառակը կ'աշխատէի զիս իրեն սիրցնել տալ, միշտ

զինք կը գրկէի: Քաջութիւնը չունեցայ ոչ մէկ յիմարութեան դէմ դնելու... և հիմա. շա՛տ ուշ է. ականջ պիտի չկախէ իմ խորհուրդներուս կամ ծաղրի պիտի ամնու... ո՛հ, տե՛ս Մարագ, թէ գժբազդ հայր մը չե՞մ...:

Թո՛ղ, թո՛ղ սիրելի բարեկամս, շատ կարեւորութիւն մի տար անցողական քմահաճոյքներու: Կը կրկնեմ դարձեալ, կոմսուհին դեռ աղջիկ է: Թէև գիտնաս, սէրը բան մըն է՝ որ աղջկանց վրայ հրաշքներ կը գործէ. և կարծեմ չեմ խաբուիր, երբ քեզի ըսեմ թէ Մէնտէսն է որ այդ հրաշքը պիտի գործէ աղջկանդ սրտին մէջ:

— Երանի՛ր թէ — գոչեց կոմսը յուսոյ նշոյլով մը և բոլորովին ինքնիբե՛ն գալով... — այո՛... իրաւունք ունիս, և ի դուր կը շփոթեմ...:

Եւ պիտի շարունակէր, բայց այս վայրկեանիս Աննինա իր ընկերուհիներէն բաժնուած՝ և կած էր իր ազուտորիկ գլխիկը անկողնոյ վարագուրի բացուածքէն ներս խոթելու:

— Հայրի՛կ — ըսաւ աննման ժպիտով, որ բաւական եզակի կոմսին ամէն տխրութիւնը փարատելու — հայրի՛կ, եկուր սորված նոր երգս լսելու: Պարոն Մէնտէս դաշնամուրով ինծի կ'ընկերէ: Պարոն Մարագ, դու ալ հրամմէ:

Եւ անոնց հետ դաշնակին մօտեցաւ:
Գարմելիգա և Ռինա քիչ մը հեռուն նստած էին: Առաջինը կը ջանար ժպտիլ, և Տէ Ռոսսի կոմսուհիին ուրախութեանց յարմարելու համար.

բայց իր ժպիտը դառնութեան կը փոխուէր, իր գուարթութիւնը ջղային գրգռութեան մ'արդիւն. քըն էր կարծես: Խե՛ղճ Գարմելիգա: Հակառակ նորպերդի խոստման, ինք Ֆիրէնցէ հասնելէն վերջ զանիկա այլևս չէր տեսած, ոչ իսկ գիտէր թէ ի՛նչ պատահած է անոր:

Որբուհին սակայն, մինչև այն ժամանակ չունեցած յուզումի մը մատնուած էր: Մէնտէսի սև աչուրներուն մէջ, որ յաճախ իր վրայ կը դառնային, ինք տարօրինակ հեշտալի քաղցրութիւն մը կը ծծէր. զգացողութիւն մը՝ անծանօթ, գերմարդկային: Ասոր համար խօսակցութիւններուն շնորհալիութեամբ մը կը պատասխանէր, որ եթէ դեռ քիչ մը տաղնապ կը զգար՝ սակայն նուազ հրապուրիչ չէր:

Բայց նկարչին համար չարագոյն էր: Իր սիրտը դառնացած կոմսուհիին անտարբերութեանէն, սթափելու պէտք ունէր և սթափեցաւ՝ այն երկնաւոր խաղաղութեան, այն քաղցր և լքեալ կերպարանքին առջև: Իրեն համար ոչինչ գոյութիւն չունէր այն սրահին մէջ, բացի այն ոսկեվարսամ գեղեցիկ գլխէն, խոնաւ և փայլուն աչքերէն, որ անծանօթ զգացողութիւններու աշխարհ մը կը լուսաւորէին, և զինք կը դողացնէին... և միեւնոյն ժամանակ զինք կ'արբեցընէին:

Կը վախնար որ իր սրտին բաբախումները զինք մատնեն, և Աննինա իր նոր զգացումները

գուշակէ, սակայն կը ջանար զգացումները սան-
ձել, սանեցնելով մատները դաշնակի ստեղներուն
վրայ և մինակ աչքերը վեր վերցնելով, երբ ըս-
տոյգ էր որ օրիորդ կոմսուհին զայն չէր նշմա-
րեր:

Իրաւցնէ Աննինա ոչ մէկ բանի ուշ դրած
չէր, և երբեք այսպէս զուարթ և հրապուրիչ ե-
ղած չէր: Ապահով կը տեսնէր իր յաղթանակը,
ոչ մէկ տարակոյս չունենալով՝ նկարչին վրայ իր
գործած խոր տպաւորութեանց համար. ինքզինք
երջանիկ կը զգար... և իր երջանկութիւնը այն-
պէս յայտնապէս կը տեսնուէր, որ նոյնիսկ Մէն-
տէս, մտքէն չանցած բան, անկից զարնուեցաւ:

Տէ Ռոսսի կոմսուհին, ուրեմն, բոլորովին
ուրախ՝ մօտեցաւ դաշնակին, սովորած նոր երգը
նուագելու համար: Նա կ'ուզէր բոլոր իր զիւթու-
թիւնները ի գործ դնել. ջանալ հրապուրել զլիսա-
ւորապէս այն օտարականը որ այնչափ զայն կա-
խարդած էր: Ո՛հ. եթէ կարենար այն վայրկեանին
անոր սիրտը կարգալ:

Կատարեալ լուսթիւն մը տիրեց սրահին մէջ,
երբ օրիորդն սկսաւ երգել:

Աննինա ամենաքաղցր, վճիտ սուր ձայն մ' ու-
նէր. այն համակրելի ձայներէն մին՝ որ ականջ
կը խողեն, կը հեշտացնեն, տարածելով հոգևոյն
մէջ հաճելի խորհրդաւորութիւն մը: Ամէնքը մը-
տիկ կ'ընէին, շունչերնին բռնած, յափշտակուած
այն մոգական ներդաշնակութենէն, որ իրենց հո-

զին կը փոխադրէր եթերային դաւառներու կա-
պուտակ դաշտերուն մէջ:

Երբ երգը դադրեցուց, ծափահարութիւն մը
սկսաւ:

— Հրեշտակի մը պէս կ'երգես դու ... սո-
խակի մը պէս. ինչ գովեստ ալ տալու ըլլամ
միշտ քու արժանիքէդ վար կը մնան բացազան-
չեց նկարիչը խանդավառութեամբ:

Բայց ժամանակը ուշ էր: Մարագ մեկնելու
հրաման խնդրեց, խոստանալով սակայն հետեւ-
եալ իրիկունը գալ: Հակառակ կոմսի հրաւերքին,
նա չուզեց սեղանի մնալ, պատճառելով թէ բա-
րեկամ սեղանաւոր մը իրեն կը սպասէր: Ուստի
Մարագ սիրալիբ կերպով օտարական նկարչին
'ձեռքը սեղմեց՝ բարեկամական նոր յայտնու-
թիւններ ընելով անոր, որոնց Մէնտէս փոխա-
դարձ ջերմութեամբ պատասխանեց:

Աննինա ցաւեցաւ իր բարեկամուհիներէն
բաժնուելուն համար... զանոնք համբուրեց ու
համբուրեց և հագիւ գուրս ելան, նկարչին դար-
ձաւ ըսելով.

— Սիրուն են, այնպէս չէ՞:

— Պաշտելի... և զքեզ անոնց հետ միացած
տեսնելով, Երեմ Ենուհիմներ տեսնել կարծեցի:

— Լո՛ւ... շողոքս՝ ըրդ—մըմնջեց Աննինա ցած
ձայնով, շնորհալի կերպով մը մատը շրթանց
վրայ դնելով:

Այն պահուն սպասաւոր մը սրահին դուռը
կը բանար իմացնելով թէ ճաշը պատրաստ էր:



Ե.

Նորպերդը թողուցինք՝ որ Պիանքա մարգի-
զունիին հետ թորինոյէն կը մեկնէր. այժմ Ֆի-
րէնցէ են, ընտիր ճաշակով՝ բայց առանց ո՛րէէ
չքեղութեան կահաւորուած երկրորդ յարկաբաժ-
նի մը մէջ, Գավուր պոլստայի մօտերը:

Ժամը գիշերուան ութը կը հնչէր: Մայր և
որդի փոքր սրահի մը մէջ ամփոփուած, որ առի-
քէն կախուած պարզունակ պղնձէ կանթեղով մը
լուսաւորուած էր:

Նորպերդ, մեղկօրէն երկնցած նարնջագոյն
կերպասէ արեւելեան բազմոցի մը վրայ, ստէպ
ստէպ ծուխ մը կը ծխէր ախորժով. յետոյ զայն
քիչ քիչ դուրս տալով, որպէսզի անոր արբու-
ցիչ բոյրին համը լաւագոյն կերպով առնու:

Պիանքա ալ օճախի մ'անկիւնը նստած, ու-
րուն մէջ պայծառ բոց մը կը ճարճատէր, կար-
ծես ամենամեծ գոհունակութեամբ մը կը յղկա-
նար, բոլորովին իր որտին գննելու զբաղած:

Նա երբեք այսպիսի երջանիկ օրերու չէր
սպասած. Նորպերդ հազիւ երբեք կը բաժնուէր
իւր կուշտէն և զայն ամէն խնամքով, ամէն կա-
րելի եղած զգուանքով կը շրջապատէր: Ի սկզբան

զարմացաւ իր որդւոյն այս յանկարծական փո-
փոխման վրայ. բայց կամաց կամաց վարժուած
էր այնպիսի երջանիկ կեանքի մը, որ իրեն
մոռցնել կուտար բոլոր իր անցեալը, և առջեւը
կը պարզուէր ամենածիժոուն ապագան:

Իր առ Գարմելիդա ունեցած ատելի մտա-
ծութիւնները, կարծես հետզհետէ կը մարէին՝
որչափ Նորպերդ իրեն հետ սերտ սիրով կը մի-
անար: Սակայն այսուհանդերձ դեռ հետաքրքիր
էր գիտնալ թէ երիտասարդը սպանուհիին հետ
տեսնուած էր, ասոր համար վայրկեան մը լը-
սութենէ վերջ՝ դարձաւ որդւոյն և հարցուց ա-
նուշ և բարեացակամ ժպիտով մը.

— Նորպերդ, ուրեմն ա՛յլևս չտեսա՞ր բնաւ
գեղեցիկ անտալուզադ:

Պատանին աշխուժութեամբ գլուխը վերցուց-
աչուքները կայծեր արձակեցին. այտերը կրակ
դարձան, շրթունքները բացուեցան, կարծես պա-
տասխանելու համար, բայց բան մը չըսաւ:

— Կը հաւատամ — շարունակեց մարգիզու-
հին — որ Ֆիրէնցէի մէջ այն ազատութիւնը պի-
տի չունենաս ինչ որ կը վայելիր ի թորինոյ:

— Ո՛հ, ատոր չէ որ հոգ կ'ընեմ — ըսաւ Նոր-
պերդ ուսերը շարժելով — ո՛չ, եթէ ուզեմ, անոր
խօսակցելու միջոցը կը գտնեմ...բայս...:

— Եւ յետո՞յ... — հարցուց Պիանքա անձկա-
նօք.

— Ե՛ւ յետո՞յ — պատասխանեց սպասանին

աներկիւղ—չեմ ուզեր, վասնզի հիմա նախատակս
ուրիշ է, և շահ մը չունիմ այլևս որ ան գիտ
սիրէ...: Ինծի համար... այժմ... այն կի՛նը բնաւ
զոյութի՛ւն չունի:

Պիանքա աչքերը խիստ մը յառեց իր որդ-
ւոյն վրայ:

— Ուրեմն ի՛նչ էր այն գաղտնիքը որմէ ին-
ծի կը խօսէիր:

— Յառաջ կարեւոր կը թուէր... բայց հի-
մա... լաւ մը մտածելով, կը տեսնեմ որ յիմա-
րութիւն է... կեանքս ու ազատութիւնս վտանգի
ենթարկել... անոր...

Յանկարծ լռեց, վախնալով որ չափազանց
յառաջ գնաց. յետոյ դարձեալ չարամիտ ժպի-
տով մը.

— Եթէ միտքս դրածը չյաջողի, եթէ սատա-
նան մէջը պոչ շարժելու ըլլայ, ո՛հ, այն ատեն
դարձեալ առաջին գաղափարիս կը դառնամ, բայց
առայժմ անոր վրայ խօսիլը աւելորդ է:

— Եւ իմ վրէ՛ժս,— մըմնջեց Պիանքա. այ-
լայլած որդւոյն խօսքերուն վրայ:

— Մտածելու ատեն կ'ունենանք, մի՛ տա-
րակուսիր— գոչեց Նորպերդ անհաճոյ լրբու-
թեամբ մը, յետոյ բազմոցէն ցատքելով աթոռի
մը վրայ նստաւ, մօր ոտներուն առջև, և ծխա-
գրլանը նետելով անոր ձեռքերը բռնեց և իր սև
աչքերը անոր վրայ յառելով.— Ինծի մտիկ ըրէ՛
— ըսաւ անհուն քաղցրութեամբ— կ'ուզեմ քեզի

ադուորիկ վէպ մը պատմել և խորհուրդ հարցը-
նել, որովհետև պարագաներ կան որ քեզի բազ-
դադմամբ ես շատ վար կը մնամ:

— Պատմէ՛ ուրեմն, պատմէ՛ — ընդմիջեց մար-
գիզունհին ոգեւորեալ— եթէ ինծի պէտք կը զգաս,
աւելի լաւ, ինչպէս զիտեմ՝ դքեզ վտանգէ մը
փրկել, պէտք եղած պարագային ալ պիտի գիտ-
նամ քեզի խորհուրդ տալ:

— Ո՛հ, չէի տարակուսեր քու սիրոյդ վրայ,
— գոչեց Նորպերդ այն հեզնական ժպիտով, որ
իրեն յատուկ էր, և յետոյ աւելցուց.

— Գիտե՛ս թէ ինչպէս առաջին օրերը որ
Ֆիրէնցէ հասայ, ի դուր թափառեցայ Գարմե-
լիդայի հանդիպելու համար, կամ մէկու մը՝ ու-
րուն կարենայի վստահիլ իմ պիտակս անոր ձեռ-
քը յանձնելու համար: Ես ինծի զայրացած էի,
բայց ստիկա ոչ իմ բնաւորութեանս և ոչ զուար-
ճանսուլու փափաքներուս արգելք չէր ըլլար: Ուս-
տի ժամանակ անցնելու համար, որ կը սկսէր
ինծի երկայն և ձանձրանալի երեւնալ, երբեմն
թատրոն կ'երթայի, մինչդեռ դու յամառած տու-
նէն չէիր շարժեր: Այն ժամանակ մերթ ոտքերս
գետին կը զարնէի, բայց հիմա կը խոստովանիմ
որ ինծի համար բախտ մ'եղաւ, որ դու հետս
չէիր դար:

Պիանքա, որդւոյն յանդիմանական ակնարկ
մը դարցուց, բայց նա բնաւ կարեւորութիւն չը-
տուաւ:

— Իմ քովս եղած թրկնաթուփն մէջ — շա-
րունակեց Նորպերգ հանդարտութեամբ — թխա-
գէմ, գեղեցիկ, շատ համակրելի երիտասարդ մը
կար, որը անշարժ կերպով իր դիտակն ուղղած
էր երկրորդ կարգի օթեակի մը մէջ: Ես, որ ա-
ռանց ուզելու, հետեւած էի իր դիտակի ուղղու-
թեան, քիչ մնաց որ ճիշ մ'արձակէի՝ տեսնելով
այն օթեակին մէջ Մարագ սեղանաւորը ուրիշ
աւելի երիտասարդ պարոնի մը և երեք օրիորդ-
ներու ընկերակցութեամբ, որոնց մէջ ճանչցայ
խկոյն իմ վառվառն սպանուհիս:

— Ան ալ զրեզ ճանչցաւ — հարցուց Պիան-
քա հետաքրքրութեամբ:

— Ձեմ կարծեր, վասնզի իր աչքերը ան-
շարժ տեսարանին սեւեռած՝ կը նայէր: Միւս
կողմանէ կարեւորութիւն չնձայեցի վասնզի իմ
աչքերս չէին կրնար բաժնուիլ իր ընկերուհիէն:

— Ռինայէն — հարցուց մարգիզուհին, գու-
նատած և սաստիկ յուզման մը ենթարկուած:

Մօր անհանգստութիւնը Նորպերգի ծիծաղը
չարժեց:

— Պա՛հ — ըսաւ յետոյ անտարբերութեամբ
— քու սրբուհիդ գեղեցիկ պիտի ըլլայ, բայց ին-
ծի համար անհամ գեղեցկութիւն մ'է... պաճու-
ճապատանք մը... բոլորովին կաթ ու վարդ, ո՛չ,
ո՛չ, ... ուրիշ օրիորդի մը վրայ է խօսքս, բոլորո-
վին գիրդ և աշխոյժ, որուն քնքուշ և փափուկ
չարժուձևերը, առաջին տեսնելուս զիս դիւթե-

ցին... եղով կ'ըս, ի՛նչ գեղեցիկ արարած:

— Ո՛հ, — գոչեց Պիանքա հառաչանքով — և
գի՛տիս ո՛վ է:

— Իմ հետաքրքրութիւնս, շիտակը ըսելով,
սաստիկ շարժած էր: Պատրուակ մը կը փնտռէի
իմ մօտ եղող երիտասարդին հետ խօսք բանա-
լու: Առիթը չուշացաւ: Զբաղանքի վայրկեանի
մը մէջ, իր գլխարկը որ ծնկան վրայ դրած էր,
վար ինկաւ: Ես վերուցի, և ազնուաբար ինծի
չնորհակալ եղաւ: Մառը խորտակուած էր: Սկը-
սանք թատերախաղին և երգերչներուն վրայ խօ-
սիլ և վերջապէս քանի մը տեղեկութիւններ
հարցուցի օրիորդներուն վրայօք, որ մեծապէս
կը փայլէին օթեակներուն մէջ, ըսելով իրեն թէ
նախորդ օրը հասած եմ և ոչ ոք կը ճանչնամ:
Նա ամենայն ազնուութեամբ պատասխանեց իմ
հարցումներուս, բայց Մարագի օթեակը հասնել-
նուն պէս սաստիկ գոյնը նետեց, և դողդոջուն
ձայնով մ'ըսաւ ինծի:

— Այդ օրիորդներէն երկուքը չեմ ճանչնար,
վասնզի դրսեցի են և քիչ օր է միայն որ Զի-
րէնցէ հասած են. բայց այն աշակողմեանը, Տէ
Ռոսսի կոմսին աղջիկն է:

— Շատ շնորհալի՛ է — ըսի — և պէտք է հը-
րեշտակ մ'ըլլայ:

— Հրեշտակ մը — փսփսաց ականջիս, ուժով
մը թեւս սեղմելով — սատանայ մը, ըսէ՛, կ'ըսէ՛

կերպարանքին տակ...:

Երիտասարդին սրտէն՝ իրական և խոր ջերմ տենդով մը դուրս չեղած այս խօսքերը, ուրիշ պարագայի մը մէջ ինծի սաստիկ ծիծաղ մը փրցնել պիտի տային ... ընդհակառակն գոհ եղայ զարմանքի և միանգամայն արհամարհանքի շարժում մ'ընելով...:

— Տէ Ռոսսի կոմսուհին սիրա չունի— շարունակեց նա վայրկեան մը լռելէ վերջ— անոր մէջ ետը միայն կ'իշխէ ... ուրիշներու ցաւերուն ծարաւը... ուրիշներու զոհողութիւնները...:

— Կը ներես անխորհրդութեանս— ընդմիջեց կարեկցութեամբ մը — բայց ... այս քու խօսած տաք կերպէդ կը հասկցուի թէ Տէ Ռոսսի օրինորդը զլխուդ խաղ մ'ըրած է...:

Երիտասարդը վեր ցատկեց թիկնաթոռի բարձի վրայէն:

— Պարոն— պատասխանեց, վրաս սեւեռելով երկու մեծ սև աչուրները, որ բոցեր կ'արձակէին— ես չեմ գիտեր ո՛վ ըլլալդ, ո՛չ ալ ուսկից գալդ, սակայն վրադ համակրութիւն մը կը զգամ զոր չեմ կրնար բացատրել...:

Ես ամչնալով մը ժպտեցայ, ձեռքս իրեն հրկնցնելով:

— Ես ալ միեւնոյն զգացումն ունեցայ, երբ զքեզ տեսայ— աւելցուցի լրջութեամբ — և կրնայ ասիկա նախաբանն ըլլալ մեր ապագայ բարեկամութեան: Ես կը կոչուիմ գերակոմս Նորպերդ,

որդի Սարաքի, որբ, ամուրի եմ, և զուարճանալու համար կը ճամբորդեմ:

— Դերակոմս Սարաք — գոչեց Պիանքա զարհուրած— ո՞ր սատանէն առիւր այդպիսի անուն մը:

— Ո՛հ, մայրի՛կ — պատասխանեց Նորպերդ հանգարտօրէն— ուրեմն կը կարծես թէ ես իմ անվտալի և գոհնիկ Գառուզոյ անուամբս ինքզինքս պիտի ուզեմ ներկայացնել:

— Բայց եթէ մէկը զքեզ ճանչնալու ըլլայ ...— առարկեց Ռովէրպէլլա մարզիգուհին:

Նորպերդի չոր մէկ քրքիջը անոր խօսքը կտրեց:

— Չարագոյն ևս— ըսաւ:— Միւս կողմանէ, սիրելի մայրիկ, կարծեմ թէ շատ միամիտ ես: Արդեօք այս առաջին անգամն է որ անունս կը փոխեմ: Եւ աւելի գեղեցիկ չէ՞ Դերակոմս Սարաք... փարիզեան ամենտաղնուական ընտանիքի մը պատկանած վսեմ տիտղոս մ'է:

Պիանքա զլուխը ծոց անոնց պատասխանելու. Նորպերդ ձեռքը մօրը ձեռքին վրայ չփելով, շարունակեց.

— Եղելութիւնն այս եղաւ որ, երիտասարդը լսելով իմ տիտղոսներս, զիս յարգանօք ողջունեց և ըսաւ. «Ուրեմն իրար զիրար քաղեցինք: Ես պարոն քու բարեկամդ եմ: Կը կոչուիմ Աւրէլիոյ Ծամորոյ, ծննդեամբ յոյն եմ, քեզի նման որբ, և եղբօրս հետ Ծիրէնցէ հաստատուած.

բայց անկից բաժնուած կ'ապրիմ, վասնզի իմ ազատութեան սովորութիւններս իր ամուսնացեալ վիճակին հետ չեն յարմարիր: Բարեբախտ եմ քեզ հանդիպելուս և յուսամ չես մերժեր՝ թատրոնէն վերջ միասին թէյ մը խմելու իմ յարկաբաժնիս մէջ... որով աւելի ազատ կրնանք խօսակցել: Առ այժմ առկախ թողունք մեր խօսակցութիւնը այն օրիորդին նկատմամբ»:

Հրճուանքով ընդունեցայ իր հրաւերքը. Հանդէսը լմննալուն պէս, միասին թատրոնէն ելանք և կառք մը նստանք, որ զմեզ Գիլելլինա ճամբէն տարաւ:

Յոյն երիտասարդը գեղեցիկ պալատի մը առաջին յարկը կը բնակի, շքեղ յարկաբաժնի մը մէջ, և սիրուն ծառայ մ'ունի, որ տճապարանքով առջեւնիս ելաւ: Երիտասարդը անոր քանի մը հրամաններ տուաւ լեզուով մը՝ զոր չհասկցայ, յետոյ զիս խնամքով տաքցուցած և բազմաթիւ կարմրագոյն մոմերով լուսաւորուած սրահ մ'առաջնորդեց: Երկուքս ալ բազմօցի մը վրայ նրստանք, և վայրկեան մը լուռութենէ վերջ, յանկարծ Աւրելիոյ հարցուց ինծի.

— Կ'ուզե՞ս որ զքեզ Տէ Ռոսսի օրիորդին ներկայացնեմ:

— Այո՛ — պատասխանեցի — ջանալով յուզումս զսպել:

— Շատ լաւ, փափաքդ կը կատարեմ... սակայն պէտք է որ է՛ն առաջ դայն ճանչնաս —

աւելցուց, խոր ակնարկ մը ուղղելով վրաս:

— Սուէ՛:

— Տէ Ռոսսի օրիորդ կոմսուէին ոչ միայն երիտասարդ է և գեղեցիկ... այլ միլիոնատէր ալ է: Ես սաստիկ դողացի:

— Իր հարստութիւնները շահադիտէ գրդըւած անձի մը համար՝ իրեն առաւելութիւն մը կ'ընծայեն... բայց այն սր այդ օրիորդը ստանալուն մէջ իր երջանկութիւնը կը դնէ, շատ կը խարուի... Աննինա ոչ ոք պիտի չսիրէ... անիկա միայն իշխել կ'ուզէ:

Հոնց, ես ալ լուս կեցայ:

— Ես տկարութիւնն ունեցայ զինք սիրելու... վայրկեան մը — շարունակեց դառն ժպիտով մը — և իմ սէրս հովուերգութեան մը գոյնն առած էր...: Ես ծաղկալից և բուրումնաւէտ տնակ մը կ'երազէի այն հրեշտակային արարածին ժպիտով գեղազարդուած... ևս իրեն կը հաւատայի, ինչպէս կը հաւատայի Աստուծոյ... ամբողջ երեք ամիս վրաս կախարդական ազդեցութիւն մը գործածեց... մարդիկներուն ամենէն երջանիկը կը համարէի, զիս... իրմէն սիրուած էի, ինքն իսկ խոստացաւ Ո՛հ, իմ կոյր զառացանքներուս մէջ չէի նշմարեր թէ, մինչդեռ մէկ ձեռքով զիս կը փայփայէր, միւսով կը ջանար սիրտս ձեղբել:

Երիտասարդը վայկեան մ'ալ կանգ առաւ և ես յարգեցի իր լուռութիւնը, ինչպէս կը յարգուի Տիւանդի մը քունը՝ երկար և չարատանջ անքը-

նութենէ մը վերջ:

Քանի մը վայրկեան մունջ, անշարժ մնացինք՝ մեքենարար դիտելով առաստաղի ջրաներկ նկարը. վերջապէս Աւրիլիոյ ծաղրալից քրքիջ մը փրցուց, բացագանչելով.

— Ո՛հ, սակայն չափազանց անխելքութիւն է ինքզինքը բոլորովին կնոջ մը գոհելը, անոր համար խելքը թոցնելը, որ է՛ն գեղեցիկ կէտին բրտօրէն կոնակ կը դարձնէ քեզի, ուրիշ բանի մը հետ զբաղելով...:

— Իրաւունք ունիս— գոչեցի ես հեզնական ժպիտով մը— հաւատա՛ որ եթէ ամէնքն ալ ինձի պիտ ընելու ըլլան, նուազ դժբախտ պիտի ըլլան: Ես ոչ հաւատք ընծայած եմ և ոչ ալ պիտի ընծայեմ սիրոյ վրայ. կը տեսնեմ որ պէտք է աշխարհը վայելել... ջանալ խմել՝ առանց սրբուակին նայելու... այս է լաւագոյնը: Զգացակա նութիւնը մարդս ծիծաղելի կ'ընէ: Այն երիտասարդները որ սէրէն գատ ուրիշ բան չեն երագեր... յիմար մարդկութեան սովորական միտապաղաղ երգը, որուն կրկնողը կինը կ'ըլլայ, ջիղեր թունդ կը հանեն. իսկ այն կիներն ալ որ կուլան ու կը հառաչեն թէ գեղեցիկ ըլլալը իրենց կարեւորութիւն չունի, զիրենք չի հոգար, արժանի են խարագանով ծեծուելու: Հաւատա՛ որ կինը ստուեր մ'է, եթէ անկից փախչիս, ետեւէդ կը վազէ. եթէ ետեւէն վազես քեզմէ կը փախչի:

— Դու խաբուածի մը պէս կը խօսիս— մըր-

մընջեց Աւրիլիոյ:

— Կը սխալիս, պարզապէս ինչ որ մտքէս կ'անցնի այն կ'ըսեմ:

— Այն ժամանակ ինչո՞ւ կը ջանաս Տէ Ռոսսի օրիորդին մօտենալ— հարցուց ինձի քիչ մը հետաքրքրութեամբ:

— Վասնզի կանացի տեսակ մը տիպար է դուր կ'ախորժիմ և կը փափաքիմ ուսումնասիրել:

— Դժուարին ուսումնասիրութիւն մը պիտի ըլլայ, ապահով եղիր ... թէև միւս կողմանէ յանցանք չունիս... ճիշտ ինձի պէս ես: Ես ալ որ առաջին անգամ զանիկա տեսայ, նոյն նպատակով ջանացի իրեն մօտենալ... բայց յետոյ... դու ալ պիտի տեսնես որ դժուարին պիտի ըլլայ իր հրապոյրներէն պրծիլ... և այդ օրիորդը ի վերջոյ քու շարաշուք Ոգիդ պիտի ըլլայ, ինչպէս եղած է իմս... պիտի խղզէ քու անկեղծ սրտիդ աղնուական զգացումները...:

Խօսքը կը շարունակէր, երբ թխադէմ մարդը ներս մտաւ, աղաչելով մեզի որ քովընախ սենեակը անցնինք, ուր պատրաստուած էր ճոխ սեղան մը:

— Ո՛հ, — հառաչեց Պիանքա մարդկուհին — դու ալ միասին ճաշեցիր:

— Անկարելի էր մերժել — ըսաւ Նորպերդ թեթեւօպէս քթին տակէն ժպտելով — և կ'ապահովցնեմ զքեզ որ հրաւէրքը պատուած եղայ: Համա՛փանիայի շիշեր պարպեցինք... ամէն խենթու-

թիւն ըրինք... անհեթեթ գրաւներ առաջարկեցինք
և ընդունեցանք, վերջապէս երբ իրարմէ բաժնը-
ւեցանք, երկու լաւագոյն բարեկամներ էինք:

Պիանքա ապշած էր:

— Եւ այն գիշերու ընէ սկսեալ — հարցուց —
այլևս զիրար չտեսանք:

— Ընդհակառակն, բոլոր օրը միասին էինք
և շիտակն ըսելով, հակառակ իր ուրախութեան,
ես չեմ խաբուիր... նշմարեցի որ Աւրիլիոյ կար-
ծուածէն աւելի կը սիրէ Տէ Ռոսսի կոմսուհին...
կիրքը զոր նա կը ջանայ բռնութեամբ ցոյց չը-
տալ, սակայն իր ամէն խօսքերուն մէջ ակն
յայտնի կը տեսնուի:

— Խեղճ երիտասարդ — մրմնջեց մարզի գու-
հին — եթէ կարծածիդ չափ սիրահարուած է, ին-
չու ոտնձգութիւն ընես իր ճամբուն վրայ, ին-
չու նախանձոտ ըլլաս:

— Եւ... ամենասիրելի մայրիկ — աւելցուց
Նորպերդ բարկութեամբ — ա՛յս է քու խորհուրդդ:
Ա՛հ, ա՛հ, ա՛հ, սրտէս խնդալ կուտաս...: Բայց
չե՛ս մտածեր որ կոմսուհին ժառանգորդ մ'է...
չատ մը միլիոններու ժառանգորդ, կ'ըմբռնե՛ս
Եւ դեռ դու կարեկցական աչքով մը կը նայիս
վրաս... կէցցէ՛, բոսձդ անգամ չես գիտեր:

Պիանքա շրթները խածաւ:

— Միշտ միեւնո՞յնը պիտի ըլլաս:

— Ո՛հ, սիրելի մայր, պէտք է ծիծաղիլ քիչ
մը դէպքերէն օգտուելի, երբ այսպէս նպաստա-

ւոր կը տեսնուին: Տե՛ս, ես բնաւ խղճի խայթ
չեմ զգար այն յոյն երիտասարդին ծախքով զը-
ուարճանալուս մէջ, որ իր անկեղծ երեւոյթին
տակ յաւակնութեան գաղանիք մը կը ծածկէ, և
միեւնոյն ժամանակ այն սիրուն կարճ շրջագրեա-
տաւոր Տօն Ճիրվաննին կ'ուզէ յաղթահարել:

— Բայց ապահո՞վ ես որ կոմսուհին զքեզ
կը սիրէ — առարկեց մարզի գուհին:

— Եթէ այսպէս ըլլար — պատասխանեց
Նորպերդ աւելի լրբաբար — հարկ պիտի ըլլար
ըսել թէ օրիորդն ամենէն անճաշակ մէկն է: Այս
կողմանէ շատ հանդիստ եմ:

— Սակայն կը մնայ գիտնալ թէ իր սիրտը
ազա՞տ է...:

— Բոլորովին ազատ... արդէն տեղեկացած
եմ: Միայն մէջտեղը օտար խորհրդաւոր երիտա-
սարդ մը կայ, նկարիչ է կարծեմ ինչ որ կը
տեսնուի, և ներկայացէս օրիորդին սիրականը.
որովհետեւ այդ քածին տարօրինակ և փոքրամիտ
գլուխը՝ կ'ախորժի այն ամէն բան որ խորհրդա-
ւորի ստուերն ունի... բայց անիկա զիս չի վախ-
ցըներ... և... պէտք եղած ատեն կընամ ինքզինքս
անկէ պրծել...:

Այս վերջին հեգնական շեշտով մը զուրցը-
ւած բառերը մարզի գուհին դողացուցին:

— Ուրեմն իսկապէս որոշած ես օրիորդին
ներկայանալ:

— Որո՞շած եմ...: Իմ նոր բարեկամս, վաղը

երեկոյ զիս անոր պիտի տանի, որովհետև Տէ Ռոսսի կոմսը ամէն շաբաթ օր քովս է:

— Բայց քիչ մ'առաջ ինծի չըսի՞ր որ Տէ Ռոսսի կոմսը օթեակին մէջն էր Մարագի հետ:

Նորպերդ գլխու նշանով մը հաստատեց:

— Այն ժամանակ, եղիկի դու, չե՛ս մտածեր որ անկարելի պիտի ըլլայ քեզի կեղծ անուամբ մը ներկայանալ...

Նորպերդ ուսերուն մէջ կծկուեցաւ:

— Կեցցե՛ս, կը կարծե՞ս որ սեղանաւորը զիս ճանչնայ: Անգամ մը միայն միասին գտնուեցանք իր գրասենեակին մէջ, և այնպէս զայն րացած էր փոխանակագրերու խնդրոյն մէջ, որ և ոչ իսկ երես նայեցաւ: Յետոյ այն ժամանակ երկու պարզ ընչացքներ ունէի, հիմա այս երեսի մագերովս՝ Բրուսիայի մը կերպարանքն ունիմ: Վա՛յ թշուառութեանս. առաջուց շատածեցի, որ Բրուսիացի ազնուական ընտանիքի մը անունն աննէի... բայց հիմա շատ ուշ է... և կը մտածեմ զերակումս Մարաք անուանովդ հաստատուն մնալ:

— Բայց կոմսի տան մէջ, Գարմելիզան ալ պիտի գտնես և գոնէ անիկա զքեզ պիտի չճանչնա՞յ — աւելցուց յամառաբար Պիանքա:

Նոր ժպիտ մը փայլեցաւ երիտասարդի շըրթանց վրայ, կծու հեգնութեան փայլակ մ'էր:

— Ի՛նչ հոգս — գոչեց — անիկա չի գիտեր իմ ճիշտ անունս... և ախորժեկի անակնկալ մը պիտի ըլլայ օրիորդին զիս տեսնելը, որովհետև պի-

տի կարծէ թէ մի միայն իր սիրոյն համար ես կոմսին տունը գոցեր եմ: Եւ չեմ ուզեր ամէն պատրանք արգելուլ, կը հասկնամ... և յիշուի պիտի կեղծեմ որ միայն իրեն համար հոն գացած եմ... պիտի աղաչեմ որ ամէն բան և ամենուն հետ գաղտնիք պահէ... պիտի ըսեմ որ պէտք եմ տեսակ մ'անտարբերութիւն կեղծել իր նկատմամբ, ընդհանրապէս խօսքս միշտ ուրիշի մ'ուղղելով... ա՛հ, ա՛հ վերջապէս այնպիսի տեսարան մը պէտք է ըլլայ որ խնդալէն վրանին ... ի՛նչ կ'ըսես ասոր... քու կարծիքդ ալ լսենք...:

— Իմ կարծիքս է որ այդպիսի ձեռնարկէ մը հրաժարիս, որ կրնայ քեզի վնասակար ըլլալ — պատասխանեց լըջօրէն Պիանքա:

— Քու Անտալուզագ ալիս պզտիկ աղջիկ մը չէ... իրերը դիւրաւ կ'ըմբռնէ և անոր աչքերուն տակ այդչափ համարձակութիւն չես կրնար ամէն բան ընել անոր: Մտածէ յետոյ որ իր վայրենի, կատաղի բնաւորութիւնը՝ կարող է ամէն ծայրայեղութեան երթալ:

— Ես անկից չեմ վախնար — շարունակեց Նորպերդ ծաղրածութեամբ: Լաւ գիտեմ որ նըպատակիս հասնելու համար, զոր առաջադրած եմ, մէկէ աւելի վտանգներ յանձն պէտք եմ անուլ, բայց կը կրկնեմ դարձեալ, գրեթէ ապահով եմ յաղթանակիս վրայ...:

Պիանքա գլուխը ծռեց:

— Շատ լաւ, ենթադրե՛նք թէ կոմսուհին

դքեզ սիրէ և հաւանի քեզի ըլլալ...բայց ի՞նչպէս կրնաս կեզծ անուան մը տակ անոր հետ ամուսնանալ: Կը կարծես որ կոմսը իր աղջիկը քեզի՞ տայ առանց քու նկատմամբդ տեղեկութիւն մը հարցնելու: Ֆիրէնցէցիները լուսանի աչքեր ունին և սուր հոտառութիւն ... և պիտի չուշանան հոտոտելու քու մէջ ինքնակոչ ցոփութիւն մը...:

Կատաղութեան փայլատակ մը չողաց երիտասարդին աչքերուն մէջ, սակայն ինքզինքը զսպեց:

— Մի՛ վախնար, մայրի՛կ - ըսաւ նա - Ֆիրէնցէի մէջ՝ այսպէս ըսելու համար՝ զեղեցիկ աշխարհը յաճախողները, այնչափ վարժ են զրկաբաց ընգունելու առաջինը որ կը հանդիպի՝ անձանօթ անունի անցադրով մը ու լեցուն քսակով մ'իսկ, առանց հետեւանքին ուշ գնելու, որ ինծի ալ ուրիշ կերպ պիտի չկրնայ պատահիլ:

Շաբաթէ մը պիտի տեսնես որ Դերակոմս Սարաքի վրայ պիտի խօսուի, և մէկը պիտի չըլլայ որ իր ընտանեաց մասին տեղեկութիւններ փնտռէ: Ես ժամանակին պահանջած մարդը պիտի ըլլամ ... վստահ եղիր: Պիտի խօսիմ յետոյ Աւրիլիոյ հետ իմ գէպի Սպրիկէ. Ամեբիկա ըրած երեւակայական ճամբորդութեանցս վրայ, և պիտի ըսեմ որ հարիւրաւոր վազրեր սպաննած եմ, հնդիկ թագուհիի մը աղջիկը ազատած եմ, որ կ'ուզէր ինծի հետ կարգուիլ և Իտալիա գալ, եթէ նստած նաւերնիս չնաւարեկէր և ես հազիւ

հող պտրելի մը վրայ չկառչէի: Աւրիլիոյ անսպասուած բարեկամներուն կը պատմէ... և մինչև Ֆրմսուհուոյն ականջն ալ կը հասնի, որ զիս վիպատանակուն դիւցազն մը պիտի նկատէ. . և այն ժամանակ, կը հասկնաս, յաղթանակս շատ անորոջ պիտի չըլլայ...:

Պիանքա ժպտեցաւ տեսակ մը բարեմտութեամբ:

— Անգամ մը որ անցք մը բռնամ օրիորդին սրտին մէջ, — շալ ունակեց անպիտան ունայնասէրը — որ կարենայ թովել զայն առանց ինծի չկարենալ ապրելու չափ, այն տոնն յարմար վայրկեանի մը, ոտքերուն առջև կը նետուիմ, և իմ ստոյգ անունս կը խոտտովանիմ, առանց ըսելու սակայն թէ առաջ ի՞նչ տեսակ մարդու կը պատկանէր, պիտի ըսեմ իրեն թէ իր սիրոյն համար միայն, հարկադրուեցայ անունս փոխելու... և թէ՛ իրմէն կը սպասեմ կենաց կամ մահու խօսք մը. և որովհետև իր ժամանակի աղջիկները ամէնքն ալ տկար և զգայուն կ'օգմ մ'ունէին, ինքն ալ վերջապէս ինծի պիտի ներէ և իմ բողկացս մէջ պիտի նետուի... Եւ այն ժամանակ, սիրելի մայրի՛կ, դեռ պիտի կարենայ արդեօք կոմսը իր աղջկան համար զիս մերժել:

Պիանքա չպատասխանեց, որովհետև սաստիկ գէշ եղած էր և կատաղաբար մատին ծայրերը կը կրծէր:

— Այո՛ ... կոմսուհին զիս պիտի սիրէ —

կրկնեց Նորպերդ ոտքի ելնելով և սենեակին լայնութեան և երկայնութեան շրջագայելով — այսպէս կ'ուզեմ... և բանի մը փափաքած եմ... միշտ գտած եմ:

Դարձեալ մօրը մօտեցաւ, ճակատը համբուրեց, աւելցնելով.

— Ես Պոթթէկոնէ կ'երթամ, որովհետեւ Աւրիլիոյի հետ վաղը իրիկուան համար պիտի ժամադրուիմ... դու ըսածներուս վրայ որոճա՛ և ոնէ՛ դիւրին միջոց մը գտիր որ լաւ յաջողիմ: Ժամանակի մը համար Պիանքա մարզիգուհին ըլլալդ ցոյց տուր. մտածէ՛, որ ես հաստատապէս որոշած եմ ... ուրեմն խելքով շարժէ, խելքով մտածէ որ գործերը կը յաջողին: Բայց եթէ ընդհակառակն դու յանգզնիս իմ կարգադրութիւններս խառնելու... ո՛հ, այն ժամանակ ամէն մեկնութեան, ամէն յանդիմանութեան կարճը կապելու համար, դրօշակս ուրիշ կողմ կը պարզեմ:

Այս վերջին խօսքերս արտասանելով, գլանիկ մը վառեց, համբոյր մ'ես դրօշմեց մօրը ճակտին, որ կը շարունակէր լուռ ու մունջ և մտածկոտ մնալ, և սենեակէն դուրս ելաւ:

Հինգ վայրկեան վերջ աւժով գոցուած դրան մը շառաշը, կ'իմացնէր թէ Նորպերդ կը մեկնէր:



Զ.

Աւրիլիոյ յոյն երիտասարդը մինակ էր չքեղ սենեակի մը մէջ, թիկունքներով լուսամտի առջև քարին վրայ կռնած:

Իրիկունը գաղջ էր և գեղեցիկ, արեգակը մաւրը մանելով, լոյսի վերջին սրսկում մը կը սփռէր ամէն իրերու վրայ:

Աւրիլիոյ մտածկոտ էր և ցրուած մտքով անցորդները կը դիտէր, մերթ աչքերը երկինք կը վերցնէր՝ համը վրբի արտայայտութեամբ մը: Վերջապէս ցնցուեցաւ, ետև քաշուելով պատուհանները գոցեց, վարագոյրները քաշեց, լոյս մը վառեց և թիկնաթոռի մը վրայ երկնալով, սկուսաւ ծխել արեւելեան երկայն ձիափողով մը — որուն մետաքսեայ խողովակը ճկուն է այնպէս որ կարելի է թևի վրայ փաթթել օձաձև — մը տածումներու մէջ ընկզմած:

Այն ատենէն ի վեր որ անդրադարձուեցաւ թէ Տէ Ռոսսի օրիորդը այլևս միևնոյն աչքով չէր նայէր իրեն, յոյն երիտասարդը ախուր և մարդատեաց եղաւ. Ի դուր իր հաւատարիմ ծառան կը ջանար զինք զբազցնել: Աւրիլիոյ կարծես ա՛յլևս ուրախութեան անմատչելի էր, բայց բարի ծառան որ գայն որդւոյն պէս կը սիրէր, անոր ծրնանիլը տեսած ըլլալով, բողկաց վրայ կրելով և անոր մանկութեան զրօսանաց մասնակցելով, իր

փոքրիկ տիրոջ հաւասար կը շարչարուէր, և միշտ քթին տակէն կը մրմնջէր՝ գլուխը շարժելով:

— Աւրիլիոսս բոլորովին փոխեցին... ս'ն եթէ գիտնայի թէ ս'վ էր:

Յոյն երիտասարդին բարեկամները երբ անգլըրադարձան Աւրիլիոյ ընկերութենէն հեռանալը, բազմութեամբ այցելութեան գացին, վրան խնդալով՝ վասնզի տժգոյն և նիհարցած գտան, և հեգնական սձով մը հարցուցին թէ չի յոգնեցաւ ժամերդելէն. յետոյ սկսան խօսիլ օրուան նորութեանց, համբաւաւոր կանանց վրայ, միասին խառնելով՝ Սակարանական առասպել մը՝ թշնամւոյ մը հակառակ կժու խօսքով մը, շիտակ ու սուտ պատմութիւն մը՝ տարակուսելի քաջութեան մը վրայ, իրարու հակասող գեղեցիկութեան մը, սիրոյ յոյսի մը, անակնկալ տեսակցութեան մը վրայ ևայլն, ևայլն, այնպիսի անտարբեր հեգնութեամբ՝ որ յատուկ է այս ասակ ստահակ կենցաղասէրներուն:

Աւրիլիոյ բարկութենէն շրթները կը խածնէր, ջանալով ժպտիլ, բայց հազիւ բարեկամները մեկնեցան, կըրկին արթնցած իր կիսամեռ խորհուրդները. իր երեւակայութեան առջեւէն կ'անցնէին բազմամարդ թատրոններ, հէշտասէր կիներ, շքեղ պարուհիներ, քնքուշ սիրուհիներ՝ զարդն ու ազմուկը ընկերութեան, և ինքն իրեն կը հարցնէր, թէ իր տարիքին մէջ յիմարութիւն մը չէ՞ր, իր այնչափ հարստութեամբը հանդերձ,

մէկ առարկայի մը համար միայն սիրտ մաշել... և ի՞նչ առարկայ: Մնասպարծ, քմասէր, հաճոյսսէր օրիորդ մը, որ զինքն իր հառաչանքները կը ծաղրէր:

— Արդեօք արժանի չէ՞ Աննինա այն զոհուցութեան զոր ես իմ ազատութեամբս իրեն կ'ընեմ—կը մրմնջէր յաճախ սիրահար երիտասարդը:

Այնուհետև սկսաւ թատրոն երթալ, և հո՛ն, ինչպէս գիտենք, ճանչցաւ և սերտ բարեկամութիւն հաւտատեց Նորպերդի հետ: Պիանքա մարդկուհեւոյն որդւոյն չնչին ու թեթեւօլիկ խօսակցութիւնները, որ ոչ մէկ հիմ չունէին և ձախորդութիւններ էին, յոյսի գառնացած սիրտը ուրախացուցին և պալասան մ'եղան իր ներկայ վէրքերուն: Կամաց կամաց Նորպերդի փոխադրական զուարթութենէն տարուեցաւ և աշխուժ ու զուարթ խնդութեամբ մը անոր մասնակցեցաւ:

Օր մը, երիտասարդին հետ մինակ գտնուելով, ըսաւ անոր.

— Դերակո՛մս, ես կը մտածեմ իմ հին կեանքիս վերադառնալ: Դու ինձի գայն ալ մատնանիչ կ'ընես: Մինչև ցարդ, ստոյգ է, հովուերգութեան մը անձնաւորութիւնն էի, և հովուերգութիւնները սիրտ կը շարժեն, բայց այս մանկական տպաւորութիւնները պէտք եմ ինձմէ արտաքսել:

Նուրբ ժպիտ մ'երեւցաւ Նորպերդի շրթներէն:

րուն վրայ:

— Դու իմ բարեկամս ես, հետեւաբար մասնակից պիտի ըլլաս իմ դարձիս — շարունակեց յոյնը խանդով — և կը տեսնես որ պիտի չվարանիմ փորձելու ... որ պիտի ներկայանամ Տէ Ռոսսի օրիորդ կոմսուհւոյն առանց գունատելու, անտարբերութեամբ լսելով իր վրայ հիացողներուն զրուատիքը: Կ'ուզեմ ջնջել անցեալին բոլոր հետքերը: Պէտք ունիմ, յիրաւի, զօրաւոր յետաշրջութեան մը, ազդու դարմանի մը ... և անա գտայ, սիրո՞վ պիտի ջանամ սէրը մարելու:

Նորպէրդ ծափահարեց իր նոր բարեկամին խօսքերը:

Այն իրիկունը, յորում յոյն երիտասարդը բոլորովին մինակ կը գտնենք իր սենեակին մէջ, այն իրիկունն էր, յորում մտադրած էր կրկին մտնելու ընկերութեան մէջ: Ժամազրութիւն ունէր նորպէրդին հետ ի Պոթթէկոնէ, ուր սովոր էր ամէն իրիկուն երթալ, քանի մը գուարթ բարեկամներու ընկերակցութեամբ, դեռ Տէ Ռոսսի օրիորդին հետ ծանօթութիւն չունեցած:

Մէկ երկար... «ո՛հ...» մը իր հասնելն իմացուց:

— Ի՛նչ հրաշք — բացազանչեց մէկը:

— Ձեզի ըսած էի արդէն, թէ անիկա դեռ մերինն էր — ընդամիջեց ուրիշ մը, ոտքի ելլելով և յոյն երիտասարդին ձեռքը սեղմելով:

— Ահա անառակ որդին որ կը վերադառ-

նայ — ըսաւ երրորդ մը:

— Մենք ալ սեղանը պատրաստենք և իր տեսութեան համար բաժակ մը պարպենք -- վրայ բերին ուրիշներ:

Աւրիլիոյ վայրկեան մը ապշած մնաց՝ սրախօսութիւններու և զրգոութիւններու այդպիսի հրախաղի մը մէջտեղ, բայց գրեթէ իսկոյն ինքն իրեն գալով, աջ ու ձախ ողջունեց, նստաւ, վառվճ մ'ուզեց և բարեկամներուն դառնալով:

— Լա՛ւ... լա՛ւ, բարեկամներս — գոչեց սրտաշարժ դէմքով — ես երախտապարտ եմ ձեր ըրած ազնիւ ընդունելութեան... այո՛... ես կ'ընարեմ դարձեալ ձեր մտազուարճ կեանքին ընկերանալ...:

— Մքանչեւհրա՛շ...:

— Ապրի՛ս . . :

— Կեցցէ՛...:

— Վայրկեան մը պարօ՛նայք — ընդամիջեց այն գուարթ գլուխներէն մին, ծանր շեշտով մը — դեռ չհարցուցինք մեր պարօն Աւրիլիոյին, թէ արդեօք ամբողջապէս աւարտեց իր ... միջնադարեան... վէպիկը:

— Հոգիներդ սիրէ՛ք, անոր վրայ մի խօսիք ինձի, եթէ կ'ուզէք հաշտ երթալ հետս — ըսաւ երիտասարդ յոյնը՝ դառն ժպիտով մը: — Ստոյգ է... վայրկեան մը ... կարծեցի գաղափարականը գտած ըլլալ, որ համապատասխանէ իմ հոգւոյս վառ երազներուն ... վայրկեան մը սէրը ինձի

զգացուց իր հրատոչոր համբոյրը, ըղբղիս մէջ հրդեհ մը բռնկեցնելով ... բայց հիմա բոլորովին մարած է .. բոլորը լմնցաւ... :

— Շատ լաւ, շատ աղէկ— ձայն բարձրացաւ ամէն կողմանէ— ուրախութիւն ուրեմն պարոններ... սատանան տանի՛ սէրը... միայն խնդալ և գուարճանալ մտածենք:

— Առաջարկ մը չունի՞ք գիշերային հանդէսը գուարթ անցնելու համար— հարցուց այն թեթեւագլուխներէն ամենէն երիտասարդը: Չեմ ուզեր նիկոլինիին երթալ, կատակերգութիւնը կը սկսի սիրտս ձանձրացնել... հակառակ նոյն իսկ Լուիզայի գեղանի աչուրններուն...:

— Ինծի ալ նոյնը կը պատահի— ըսաւ ուրիշ մը— բոլոր իրիկունը կը յօրանջեմ...:

— Ես ալ...:

— Ես ալ...:

— Խօսք կ'ուզեմ— գոչեց ամենէն տարեցը— լաւ բան մը պիտի առաջարկեմ ձեզի...:

— Յառա՛յ ... խօսէ՛ — կրկնեց առաջինը — երեք վայրկեան կուտանք որ մտածես եթէ յաջողիս գմեղ գոհացնել՝ ճաշդ կը վճարենք... ապա թէ ոչ գո՛ւ մեր Անֆիթրիոնէն ճաշ տուող պիտի ըլլաս (ըստ Մոլիէրի):

— Շատ լաւ ... շատ լաւ ... պատրաստ եմ: Փէրկոլա երթանք...:

— Սպասեցէք, հրակէզ լեզուներ, որ ծնած ու եղած էք շնորհքով մարդկանց համբերութիւ-

նը կորսնցնել տալու համար ... թողէ՛ք խօսքս վերջացնեմ— պատասխանեց երիտասարդը զուարթութեամբ— պէտք էք գիտնալ որ այս իրիկուն ֓էրկոլայի մէջ նոր պար կայ և նոր պարին հետ նոր աստղ մը, որ հորիզոնին վրայ կը ծագի, կամ լաւ ևս մեր մեծագոյն թատրոնին լուսարգելին վրայ: Պարուհի մ'է սրուն համար զարմանահրաւ կ'ըսուի... առ առաւելն տասն և վեց տարեկան... խարտեաչ .. ճշմարիտ Աստղիկ մը... աչքեր ու տկճաներ՝ որ վանական մ'անգամ գլխէ հանել կուտան, և այս հրեշտակիկը... երկնային կամ գծոխային... սակայն միշտ հրեշտակ, ամենահամակրելի անուն մ'ունի, էմմա:

— Ո՛րք տեղեկութիւն մ'առի՞ր իր վրայօք— հարցուց Աւրիլիոյ աշխուժութեամբ:

— Ս, յո՛... կայ որ կ'ըսէ թէ Լուզրէցիա մ'է... ուրիշներն ընդհակառակն կ'ըսեն թէ ձեռնասունն է... ամենահարուստ օտարականի մը... Սակայն իրօք բոլոր շողփաղփութիւն է, ենթադրութիւն է և ոչ ոք իրաւցնէ կը խօսի կատարեալ ծանօթութեամբ:

— Քու խօսքերդ ուրիշ բան չեն ըներ բայց եթէ հետաքրքրութիւնս կը շարժեն զայն տեսնելու— մըմնջեց յոյն երիտասարդը...:

— Որսալու միտք մ'ունիս զուցէ— հարցուց մէկը:

— Ա՛հ, ա՛հ, քեզի պէս անառակ... ստահա՛կ ուրեմն զեռ կատարելապէս հրածարած չեա

քու սովորութիւններէդ—աւելցուց ուրիշ մը:

— Ո՛վ գիտէ գուցէ գորովայիր դէմքդ անոր հաճելի անցնի—աւելցուց երրորդ մը:

— Դեռ ո՞րչափ պիտի գեղծանիք համբերութենէս — ընդմիջեց Աւրիլիոյ խնդալով:— Շատ լաւ, զբաւ դնենք որ ութ օրէն գեղեցիկ էմման իմ սիրուհիս պիտի ըլլայ:

Ամէնքը ծիծաղեցան յոյն երիտասարդին խօսքերուն վրայ: Բայց ինք շայլայլեցաւ, և արհամարհական ժպիտ մը շրթներուն վրայ, գոչեց «Լաւ պիտի ծիծաղի այն... որ վերջը պիտի ծիծաղի... փորձը կը տեսնէք»:

Այս բոլէիս մաքուր հագուած երիտասարդ մը սրճարանին դուռը բացաւ և Աւրիլիոյին մօտեցաւ, որ նստած տեղէն ելաւ, դիմաւորեց, ձեռքէն բռնեց, իր կեցած սեղանին քով տարաւ, և աջ ու ձախ դառնալով:

— Պարոններ—ըսաւ մարդապետական շեշտով— պատիւ ունիմ ձեզի ներկայացնելու Դերակոմս Նորպերդ տի Սարաքը, ազնուական գաղղիացին, որ քիչ մը ժամանակէ ի վեր կայարանի քով կը բնակի:

Երիտասարդները յարգանքներ փոխանակեցին, և Աւրիլիոյ շարունակեց:

— Ասիկա իմ բարեկամս է, կը փափաքիմ որ ձերն ալ ըլլայ: Մեր մէջ կուգայ որ մեր ուրախութեանց մասնակից ըլլայ և մեր հեշտալի կենաց գաղտնիքներուն ալ հաղորդակից:

— Բարի է եկեր— բացաշանչեցին միւսները, սաքի ելնելով և մի առ մի ինքնակոչ Դերակոմսին ձեռները սեղմելով:

— Եւ սհաւասիկ, պարոններ, օ՛ն անդր յառաջ — վրայ բերաւ յոյն երիտասարդը — ժամը ինն է և հազիւ ժամանակ ունինք Փէրկոլա հասնելու՝ դեռ պարը չսկսած:

— Երթա՛նք:

Մինչդեռ երիտասարդները սրճարանէն դուրս էլ ելնէին, Աւրիլիոյ Նորպերդի թեւ բռնեց և ըսաւ գաղտնաբար.

— Հաստատուն ես կոկոսահիին ծանօթանալու և որոշողութեանդ վրայ:

— Ամենահաստատուն:

— Շատ լաւ... վաղն իրիկուն պիտի կարենաս հետաքրքրութիւնդ յագեցնել: Ժամը ութին ատենները տունս եկուր:



է.

Փոխանակ մեր երիտասարդաց հետ դէպի Փէրկոլա երթալու, մենք մեր շնորհալի որբուհին Ռինան գտնենք, և տեսնենք թէ ո՞րչափ փոխուած է այն օրէն ի վեր, յորում Մէնտէսի հանդիպեցան: Իր գեղեցիկ դիմագծութիւնը անհուն տխրութեան արտայայտութիւն մ'առած է,

իր խոշոր աշուրները մելամաղձոտ հուրով ժը կը փայլին, իր ժպիտը ճիգ և դառնութիւն կը զգայ:

Առտուն, յետ օտարական նկարչին հանդիպելու, Ռինա չկրնալով խոռովքը իր վրայէն հեռացնել որ բոլոր զիշերը զինք արթուն պահած էր, կանուխ ելաւ և լուսամուտին մօտենալով վարագոյր մը քաշեց՝ անտարբեր ակնարկ մը տալով ճամբուն մէջ, բայց գրեթէ իսկոյն ետ քաշուեցաւ, և շառագունելով ձեռքը սրտին վրայ տարաւ: Մէնտէսը տեսած էր, պալատին առջև կեցած, և աչքերը իր պատուհանին յառած: Երիտասարդը զինք նշմարած էր: Ռինա կը տարակուսէր:

Քիչ վերջ, Գարմելիգայի և սեղանաւորին հետ կառքով դուրս ելլելով, սրբուհին նշմարեց որ նկարիչը ճամբուն անկիւնը կեցած էր: Անիկա վերնազգեստին օձիկը վեր առած էր և գլխարկն ալ աչքերուն վրայ իջուցած. բայց Ռինա իսկոյն զայն ճանչցաւ՝ սրտատրոփ, և բոլորովին դողդոջուն՝ կառքի բարձիկներուն վրայ նստաւ: Պտոյտէն վերագարձին, օրիորդը իսկոյն պատուհանը վազեց. դարձեալ երիտասարդը պալատին առջև կեցած էր, և հազիւ զինք տեսաւ, ձեռքը զըլխարկին տարաւ ի նշան ողջունի, երկայն ժամանակ զիտեց զինք, յետոյ աներեւոյթ եղաւ:

Այն վայրկեանէն ի վեր, Ռինա սկսաւ անվրէպ օրուան քանի մը ժամերը պատուհանին առջև անցընել. իսկ իրիկունը իր բարեբարին

հետ Տէ Ռոսսիի տունը կ'երթար, ուր ամենաապահով էր խորհրդաւոր օտարականը գտնելու:

Վերջապէս աղջկան ժամը հընչած էր, նա զայն կը սիրէր, ... կը սիրէր իր հոգւոյն բոլոր թափով ու անմեղութեամբ: Անցեալը, ներկան, ապագան, իր մտքին մէջ միակ երջանկութեան պատկերի մը մէջ կը շփոթուէին. սիրուիլ Մէնտէսէն: Սակայն հետզհետէ իր գաղափարներն ուրիշ ուղղութիւն մ'առին: Զարհուրանքով մտածեց, թէ գուցէ ի վերջոյ ստիպուի հրաժարիլ այսպիսի գեղեցիկ երազէ մը, որովհետև անյաղթելի արգելք մը կը դիմակալէր իր երջանկութեան:

Հիմա որ կեանքի գերքը իրեն համար ալ բացուելու մօտ էր, Ռինա շատ լաւ կ'ըմբռնէր Մարագի բոլոր խնամոց պատճառը, վեհանձն և ազնուական սէրը զոր նա իրեն համար իր սրտին մէջ կը սնուցանէր, և կ'ըսէր ինքն իրեն, եթէ հրէշային ապերախտութիւն մը չէր իր ըրածը, ուրիշ տեղ զբաղցնելով իր մտածութիւնները, մտածութիւններ՝ որ Արքայութիւնը պիտի բանային այն բարի և առատաձեռն մարդուն առջև, որ իր բոլոր հարստութիւնը կը ծախսէր իր ոտքերուն տակ, միայն զինքը երջանիկ տեսնելու համար:

Սուր խղճի խայթ մը կտոր կտոր կ'ընէր իր սիրտը, սառնական ցրտութիւն մը կը յաջորդէր տենդային շերմութեան, որ վայրկեան մը զինք

ինքն իրմէ զուրս հանեցին:

Մարագ նշմարած չէր որբուհիին փոփոխու-
թիւնը, որովհետև սա միշտ իր առջև կը ժպտէր
և անուշ կը խօսէր: Գերազանց սիրտ, ինչպէս
գիտենք, չուշացաւ սերտ բարեկամութեամբ մը
կապուելու Մէնտէսի հետ: Մէկէ աւելի սնգամ-
ներ այցելութեան գացած էր անոր աշխատասը-
րահը և հաճոյք կը զգար սքանչանալով օտարա-
կանի տաղանդին վրայ՝ այսպիսի դժնդակ և վը-
տանգալից արուեստի մը մէջ:

Իսկ Մարագ, տանը մէջ խանդավառութեամբ
կը խօսէր իր նոր բարեկամին և Ռինայի վրայ,
սակայն ամենանուագ ուշադրութիւն դարձնել
կեղծելով, ըստ սեղանաւորի խօսքին. ամէնը կը
լսէր մեծ հաճոյքով: Երբ մինակ կը գտնուէր
Ռինա իր սենեակին մէջ, Մէնտէսի պատկերը իր
մտքին առջև ամէն ցնորքէ և երեւակայութենէ
աւելի գեղեցկացած կը ներկայանար, սիրտը կը
բաբախէր զգացուած, իր խարտեաշ գլուխը կը
կախէր կուրծքին վրայ, մինչդեռ իր շրթունք-
ները կը մըմնչէին:

— Աստուած իմ... Աստուած իմ... կը զգամ
որ գանիկա կը սիրեմ, պիտի սիրեմ միշտ. ըսէ՛
ինծի Տէ՛ր, ոճի՛ր մ'է սէրս:

Գարմելիդա հասկցած էր՝ մելամաղձոտու-
թենէն՝ որ որբուհիին դէմքին վրայ կը յայտ-
նուէր, թէ բան մը կ'անցնէր իր ընկերուհիին
սրտէն: Բայց չէր համարձակեր հարցնել... և յե-

տոյ ի՛նչ ունէր տառապելու խեղճ օրիորդը
բողոքամամբ անոր՝ զոր ինք զրէթէ ամլսէ մ'ի
վեր կը զգար:

— Եւ Նորպերդ ի՛նչ պիտի ընէ — կ'ըսէր
յաճախ ինքն իրեն — անգամ մը միայն կըցայ
տեսնել զինք, քանի որ Ֆիրէնցէ եկած եմ, բայց
կառքը սաստիկ կը սուրար . . . և աչքէս
հեռացաւ: Արդեօք այլևս զիս չի՛ սիրեր, ո՛չ, ան-
կարելի է... բացարձակ անկարելի...:

Եւ ջանալով այս տխուր մտածութիւններն
խզել, գեղեցիկ սպանուհին կը ժպտէր դեռ...
երեւակայելով աւելի ծիծղուն ապագայ մը:

Ամենացուրտ իրիկուն մ'էր: Ռինա և Գար-
մելիդա մինակ էին գրգարանին (boudoir) մէջ.
առաջինը՝ անշարժ թիկնաթոռի մը վրայ, երկ-
րորդը՝ իր մագերը գլխուն վրայ հանգուցելու
զբաղած:

— Ռինա՛, արդեօք բազմութիւն կ'ըլլա՞յ
այսօր կոմսին քով—հարցուց յանկարծ Գարմե-
լիդա, վար դնելով սանտրն ու աղջկան մօտենա-
լով:

Ասիկա, որ թմրած կը տեսնուէր, սարսուցաւ
և ոտքի ելլելով ըսաւ կերկերուն ձայնով.

— Կարծեմ սովորական մարդիկը պիտի ըլ-
լան:

— Կ'ուզե՞ս երթանք... շիտակն ըսէ՛ — պնդեց
Գարմելիդա՝ սիրալիբ ձայնով:

Որբուհին հառաչեց և լռեց:

— Ռինա՛, — ըսաւ Գարմելիդա յուզուած շեշտով— օր մը զիս կը յանդիմանէիր վրադ քիչ վատանութիւն ունիմ... հիմա միեւնոյն բանը ես քեզի չըսե՞մ: Գաղտնիք մը կայ սրտիդ վրայ... կը տեսնեմ... շատ լաւ... ուրեմն զիս բաւական արժանաւոր չե՞ս նկատեր զայն զիտնալու համար:

Ռինա բարեկամուհիին ձեռքը սեղմեց, պատասխանելով դողդղացող ձայնով.

— Արժանի չեմ այս յանդիմանութեան .. քեզմէ գաղտնիք չունիմ:

— Խեղճ Ռինա — շարունակեց սպանուհին, աղջկան խարտեաշ գանգուրները շոյելու — զուր տեղը դու ինծի կը կեզծես: Ես գիտեմ սրտիդ վիճակը... գիտեմ որ կը տառապիս, բայց հաւատա՛, սիրելի՛ս, դու չես միայն տառապողը...:

— Իմացե՞ր ես, կ'ըսես—գոչեց Ռինա ամբշնալով, և առանց ուշադրութիւն դնելու բարեկամուհիին վերջին խօսքերուն.

— Իմացե՞ր ես:

— Այո՛...որ դու կը սիրես...Մէն...:

Ռինա չթողուց սր լմնցնէ. իր պզտիկ ձեռքը Գարմելիդայի բերնին վրայ դրաւ վայրկեան մը, յետոյ անոր վիզը փաթթուելով սկսաւ յորդարցունք թափել:

Մտոյգ է — կը մըմնջէր հեծեծանքով — ստոյգ է, ես կը սիրեմ... այն օտարական երիտասարդը... բայց կ'ազաչեմ... մարդ չիմանայ...

ոչ որ... ես կը ջանամ այս սէրը ինծմէ ալ ծածկել: Դո՛ւ միայն թափանցեր ես մելամաղձառութեանս գաղտնիքին մէջ ... և դու միայն պիտի կարենաս ծածկել զայն ուրիշներէն... լսէ՛ ինծի:

Եւ որբուհին իր քով նստեցուց Գարմելիդան, և ճարտար ու սիրատարփ լճով մը անոր պատմեց իր անցեալ օրերուն մէջ մղած պայքարները, յոյսերը, երկիւղները որոնք զինք խնուոված էին և եզրակացուց. «Եթէ Մարագ այս սէրը դու չակէ, ինծի համար ուրիշ բան չի մնար բայց եթէ մեռնիլ»:

Գարմելիդա «Մարագ բան մը պիտի չգիտնայ» ըսելու վրայ էր, բայց խօսքը բերանը մէնաց, վասնզի այն վալրկեանին սեղանաւորը դրան սեմին վրայ երեւցաւ:

Նա հանդարտ էր, ժպտուն, նշան՝ թէ բան չէր լսած: Օրիորդներուն մօտեցաւ որ գիրենք համբուրէ, ինչպէս սովոր էր ընել ամէն անգամ որ իրենց սենեակը կը մտնէր. բայց իր դէմքը գունատեցաւ և ճակատը կնճոցեց, տեսնելով որբուհիին այլայլած դիմագծութիւնը:

— Ռինա՛ս...սիրելի Ռինա՛ս, ի՛նչ ունիս — գոչեց անձկութեամբ— ո՛հ խօսէ՛, խօսէ՛...:

— Բան չկայ, բարեկամս — թոթովեց որբուհին, ջանալով ժպտիլ...:

— Բայց... այոպէս տժգոյն... աչքերդ կարմիրած... դու լացա՛ծ ես... դու տկա՛ր ես:

— Բան չկայ—ըսաւ Գարմելիդա— կամ գու-

ցէ անցողական բան մըն է. անհանգիստ մի՛ ըլլար... ամէնը կ'ըսեմ: Ռինա շատ զգայուն է... միասին՝ թշուառ որբուհիի մը պատմութիւնը կը կարդայինք... կարծես իր գլխուն եկած ըլլային այն աղջկան դէպքերը, կամ իրենուն հետ համանմանութիւն մը... լոցաւ... և թէպէտ ես ազաչեցի որ ընթերցումը դադրեցնէ... ուզեց գայն աւարտել... այս է իր յուզման պատճառը...:

— Ստոյգ է — աւելցուց Ռինա — ստոյգ է, հանգիստ եղի՛ր ... հիմա ինքզինքս շատ լաւ կը զգամ:

— Օրհնեա՛լ է Աստուած — գոչեց Մարագ, տազնապով մը բռնելով որբուհիին ձեռքերը — ո՛հ, զիս շատ վախցուցիր... գիտնա՛ս, բայց հիմա անա քու գեղեցիկ գոյներդ կը վերադառնան...:

Ռինա կարմրեցաւ և գլուխը ծռեց՝ Մարագի հետադատող աչքերուն ներքև:

— Հիմա որ կատարելապէս ինքզինքդ զրտար — կրկնեց Մարագ քաղցրութեամբ — ըսեմ թէ ինչո՛ւ համար եկայ զձեզ անհանգիստ ընելու: Ա՛ռ, Գարմելիդա՛, անա հորմէդ նամակ մը: Մտածելով թէ քեզի հաճոյք կը պատճառէ ուզեցի գայն իսկոյն յանձնել:

— Ո՛հ, շնորհակալ եմ, պարո՛ն, շնորհակալ եմ — բացազանչեց սպանուհին ուրախութեամբ ժպտելով, և կրկին կրկին համբուրելով նամակին ծրարը: Յետոյ փափաքելով անոր բովանդակու-

թիւնը գիտնալ, ոտքի ելաւ, աւելցնելով սրտաշարժ ձայնով

— Եթէ կը ներէք... սենեակս երթամ կարգամ:

Եւ առանց պատասխանի սպասելու, Գարմելիդա ուրախութեամբ, սենեակէն դուրս ելաւ:

Մարագ և Ռինա մինակ մնացին:

Որբուհիին սիրտը ուժգնօրէն կը բարախէր, ծանր ճնշում մը կը զգար՝ որուն մինչև այն ատեն անծանօթ էր, և հովէն ցնցուած տերևի մը պէս կը դողար: Բարբերախտարար, հետուն սեղանի մը վրայ դրուած կանթեղի մը ադօտ լոյսը՝ արգելք կ'ըլլար սեղանաւորին՝ իր յուզումներն ու գունաթափութիւնը նշմարելու:

Միւս կողմանէ ան ալ ինքզինք յուզուած, խռոված կը զգար, կարծես խօսելու վարժութիւնը կորսնցուցած ըլլար:

Իսկ մը վայրկեան լուծենէ վերջ, վերջապէս Մարագ իր սովորական պաղարիւնութիւնը առաւ, զարծաւ Ռինայի, ըսելով.

— Բաւական ոյժ ունի՛ս այս իրիկուն Տէ՛ Ռոսսին երթալու համար:

— Ո՛հ, այո՛... շատ լաւ կը զգամ — պատասխանեց որբուհին թոթովելով...:

— Կարծեմ այս իրիկուն ուրիշ նոր հրաւիրեալներ ալ պիտի ըլլան, ի՛նչ որ ինծի ըսաւ Աննինա — կրկնեց սեղանաւորը:

— Տեսա՛ր զինք — հարցուց Ռինա պարզա-

միտ:

— Այո՛ ... վայրկեան մ'առաջ հանդիպեցայ,
երբ նամակատունէն կը դառնայի: Աննինա իբր
հօր և Մէնտէսի հետ էր:

Ռինա սաստիկ գոյնը նետեց:

— Ո հ, — գոչեց — այն օտարական նկար
ընչը... քու ամենասիրելի բարեկամը:

— Այո՛... իմ սիրելի և երիտասարդ բարեկ
կամս — կրկնեց Մարագ — խեղճ Մէնտէս ... շատ
բարի է... կ'ուզեմ երջանիկ տեսնել զինք...բայց...
կ'ըլլայ և գուցէ չուտով...:

Մարագ կը ժպտէր:

— Եւ ի՞նչ կերպով — հարցուց որբունհին
դողալով:

— Կարգուելով անոր հետ զօր վերջին աս
տիճան կը սիրէ... Տէ Ռոսսի օրիորդին հետ:

Ռինա յուսահատութեան աղաղակ մը խրդ
դեց՝ ձեռքը սրտին վրայ դնելով... և աչքերը եր
կինք վերցնելով, յետոյ ջանալով ինքն իրեն գալ,
ըսաւ.

— Բաւական ժամանակ կա՞յ...որ...կը սիրէ
զկամսունհին...:

— Կարծեմ երեք ամիսէ ի վեր է — ըսաւ
անտարբերութեամբ Մարագ — բայց...գալով Մէն
տէսին, գիտե՞ս, իրեն յանձնեցի որ դէմքդ նը
կարէ:

— Դէ՞մքս — բացազանչեց Ռինա թափով մը,
չկրնալով բօլորովին ծածկել խոր արհամարհանք
մը...:

— Այո՛... կը տհաճի՞ս գուցէ — ըսաւ Մա
րագ ապշած:

Ռինա հառաչեց, ջանալով ամփոփուելի:

— Ո՛չ...բայց...կը...գտրմանամ...քու այդ
չափ հոգածութեանդ վրայ... — աւելցուց աղջիկը
չփոթ շեշտով, որուն տակ՝ ուշադրութեամբ դի
տող մը՝ դառն տխրութիւն մը պիտի նշմարէր,
խառն տեսակ մը հեզութեամբ:

— Ի՞նչ կ'ըսես Ռինա — ընդմիջեց Մարագ
ողելորուած — բայց, ուրեմն չե՞ս գիտեր թէ քե
զի համար կեանքս կուտամ... որ...:

Բարեբախտաբար, Գարմելիգա սենեակը մըտ
նելով սեղանաւորին թափը խզեց, որը իսկոյն
իր յուզումներէն ամփոփուելով, օտք ելաւ, բըւ
նեց աղջկան մէկ ձեռքը՝ (որ հազիւ գիտակցու
թիւն ունենալով իր շուրջը անցած դարձածին,
չմտածեց ետ քաշելու), ըսելով քաղցրութեամբ.

— Ես զձեզ կը թողում, սիրելիներս, որ
պէսզի ժամանակ ունենաք այս երեկոյեան հան
դէսին համար զարդարուելու:՝ Քիչ վերջը կը
տեսնուիք:

Եւ նոր ժպիտով մը կրկին ողջունելով եր
կու աղջիկները, խոսվայոյզ՝ դուրս ելաւ սեն
եակէն.

Ռինա որ օտք ելած էր զայն ողջունելու
համար, կրկին թիկնաթոռին վրայ ինկաւ ջլա
տած՝ յորդ արցունք մը թափելով:

Սպանուհին ապշած կը նայէր:

— Ի՞նչ կը նշանակէ այս—հարցուց փութ-
կոտութեամբ—ի՞նչ ըսաւ քեզի Մարագ:

— Ո՞հ, Աստուած իմ, Աստուած իմ—մըր-
մընջեց Ռինա հեծեծազին, առանց ուշադրութիւն
դարձնելու բարեկամուհիին խօսքին:

— Ուրեմն ամէն բան կորսուած է. իմ յոյ-
սե՛րս ու իմ ապագա՛ս...:

— Բայց ի՞նչ ունիս—կը շարունակէր Գար-
մելիդա— ի՞նչ են այս կորսուած յոյսերը... այս
ապագան որուն պատկերը զքեզ այդչափ կը
տանջէ:

Ռինա վարանոտ ակնարկ մը նետեց բարե-
կամուհիին երեսին:

— Ո՞հ, դու ոչինչ չես գիտեր—թոթովեց—
ոչինչ— շատ լաւ, ես քեզի կ'ըսեմ...: Այն երի-
տասարդը... որ վայրկեան մ'առաջ...քեզ կ'ըսէի
թէ կը սիրեմ... այն երիտասարդը որ առաջին
անգամ ինծի ըմբռնել տուաւ կեանքը... ուրիշ
մէկը չէ եթէ ոչ ոգորմելի դրուժան մը... խա-
բերայ էին իր նայուածքները... խաբերայ՝ դէպ
ինծի ցոյց տուած հոգն ու խնամքը...:

— Բայց ի՞նչպէս իմացար...:

— Սեղանաւորը ամէն բան ըսաւ ինծի...:
Մէնտէս Տէ Ռոսսի օրիորդին սիրահարուած է...
և անոր հետ պիտի ամուսնանայ, հասկցա՛ր...
ո՞հ, չափազանց է այս...լսէ՛ ինծի:

Եւ քանի մը խօսքով աղջիկը սպանուհիին

պատմեց, ինչ որ սեղանաւորը օտարական նը-
կարչին նկատմամբ իրեն ըսած էր:

— Սիրելի՛ս— ըսաւ քաղցրութեամբ Գար-
մելիդա, երբ որբուհին իր խօսքը լմնցուց—կ'ու-
զե՛ս որ խորհուրդ մը տամ:

— Սօսէ՛:

— Շատ լաւ, քու խոովութիւնդ ծածկէ,
հանդէսի ժամանակ երբ Մէնտէսը տեսնես ջա-
նա՛ ժպտիլ... այն ատեն լաւագոյն կերպով ճըշ-
մարտութիւնը պիտի կարենաս ստուգել:

Սաստիկ կարմրութիւն մը գունաւորեց
Ռինայի գունատ դէմքը:

— Ի՞նչպէս...ուրեմն կը կարծես թէ սեղա-
նաւորին ինծի ըսածը սխալ ըլլայ...:

— Աղջիկ— ըսաւ տխուր կերպով Գարմե-
լիդա— դու չես մտածեր որ ամենազիւրին է
խարուիլը... և գէշ հիման վրայ դրուած բանի
մը համար կարծիք կազմելը: Հանդարտէ. եթէ
Մարագի բոլոր ըսածը ճիշտ է, եթէ այն մարդը
զոր լուեկայն կը սիրէիր՝ քեզի համամիտ կը
թուէր, սրիկայ մ'է, որ կարծէր քու անմեղու-
թեանդ հետ խաղալ և կ'ուզէր քու երիտասար-
դութիւնդ տխրեցնել, այն ժամանակ դու լաւ
դաս մը կընաս տալ իրեն, ինքզինքդ բոլորովին
անտարբեր ցոյց տալով իր մեծարանաց, ամե-
նայն արհամարհանքով ընդունելով զինք, որ զգայ
թէ ազնիւ սիրտ մը վերաւորած է՝ որ իրեն ա-
մենասիրելի էր, մոռնալով վերջապէս գայն. և

եթէ սեղանաւորը խարուած է՝ այն ժամանակ
դէշ կ'ընես այսչափ դիւրաւ տակնուվրայ ըլլա-
լովդ, ուրիշին կասկած կուտաս, որ լաւ է առ-
այժմ ծածկել:

Ռինա Գարմելիդայի խօսքերուն հաւանե-
ցաւ:

— Իրաւունք ունիս — ըսաւ նա — ինչպէս
կ'ուզես այնպէս կ'ընեմ, բայց եթէ դիտնայիր
ի՛նչ կ'անցնի կը դառնայ իմ մէջ... Կրնամ Մէն-
տէսէն հրաժարիլ, և հաւանական է որ հրաժա-
րիմ, վասնզի կը զգամ թէ ան պիտի չկարենայ
իմս ըլլալ. բայց մտածելը թէ անկից խարուած
եմ, գաղափարը թէ նա ուրիշի մը ամուսինը
կ'ըլլայ, բոլոր արիւնս երակներուս մէջ կը սա-
ռի: Ո՛չ... չեմ կրնար հանդուրժել... անկարելի է...
Ո՛հ, Աստուած իմ, հոգիս ա՛ռ...:

Եւ օրիորդը սկսաւ յորդ արցունք թափել:

Գարմելիդա թողուց որ քիչ մը սիրաբ թե-
թեւնայ. Տեսաւ որ աւելի լաւ է: Այսպէս, յետ
զրեթէ քառօրդ մը լալու, Ռինա ոտք ելաւ և
յանկարծակի իր բարեկամուհիին առջև կենալով:

— Շատ լաւ, հաւան եմ — գոչեց հաստա-
տուն շեշտով մը — ես քու խորհուրդներուդ պի-
տի հետեւիմ... ինքզինքս ուժով ցոյց պիտի տամ
... պիտի մոռնամ զայն, կարելի եղածին չափ...:

— Իբաւցնէ՞ — ըսաւ սպանուհին անկեղծ
գոհունակութեամբ, կրկին և կրկին գրկելով որ-
բուհին:

— Այո՞ — ընդմ'ընց վերջինս խրոխտաբար
— քաջասրտութիւնը պիտի ունենամ, ապահով
եղիր... սիրելի բարեկամուհիս: Ինձի նայէ՛:

Եւ աղջիկը քաջութեամբ վեր առնելով գը-
յուխը, և անմեղ հանդարտ և ժպտուն դէմքով
մոռցաւ կեանքի ամէն նեղութիւն:

Գարմելիդա այլևս չպնդեց, և կրկին գգուեց
զայն:

— Շատ լաւ — ըսաւ տալա — հիմա կրնամ
Լիզէթթան կանչել, որպէսզի զայ մեզի օգնէ:
Մինչև որ գայ՝ հօրս նամակը կարդամ քեզի:
Կուզե՞ս:

Ի պոտասխտնի այս ամէն հարցմանց՝ որ-
բուհին մէկ կողմ քաշեց Գարմելիդան, ըտելով
անոր անհուն խնդութեամբ մը:

— Քու հարցումիդ՝ իբրև ապաշխարա՞նք,
չո՛ւտ... շո՛ւտ կարգա՛ զայն ինձի:



Ը.

Գիշերը առաջ դացած էր, երբ Մարագ ու իր
աղջիկները Տէ Ռոսսիի պալատը մտան:

Հարձուտ գորգերով, անթիւ անօթներով,
կիտանդրիններով և բուրումնաւէտ ծաղիկներով
զարդարուած լուսաշող սանդուխներէն վեր ել-
նելով, շքեղ նախասենեակ մը մտան, ուր կա-

յին շատ մը նմանագրեստ ծառաներ և բազմաթիւ աղախիններ:

Երկու օրիորդները կանանց յատկացեալ սրբակապանը տարին... և Մարագ սպասեց որ ինքը գանոնք սրահը առաջնորդէ:

Աշխուժ ու գեղեցիկ երաժշտութիւն մը կը լսուէր... շնորհալի շաղկրատութեամբ մը խառն, բայց այս դաղընցաւ, երբ յանկարծ Մարագի բերած երկու նորեկ օրիորդներուն երեւցան:

Աննինա, որ մտից դռնէն քիչ մը հեռու շողորդներու խմբակէ մը շրջապատուած էր, հազիւ տեսաւ իր բարեկամուհիները, անոնց առջև վազեց, ցաւ յայտնելով քաղցրութեամբ՝ թէ քիչ մը ուշ մնացած էին:

Ռինա քիչ մը պազ շարժեցաւ հանդէպ Տէ Ռոսսի օրիորդին հոգատար ցոյցերուն: Գարմելիդա անշարժ մնացեր էր, աչքերը յառած ամենաչքեղ, համակրելի երիտասարդի մը վրայ, որ շատ մը զուարթ երիտասարդներու հետ տաք խօսակցութեան մը բռնուած էր:

— Ի՞նչ ունիս — հարցուց Աննինա սպանուհիին՝ հետաքրքրութեամբ անոր նայելով:

— Ոչի՛նչ, ոչինչ — պատասխանեց Գարմելիդա անտարբեր կերպով — կարծեցի թէ հո՛ն ճանօթ անձ մը կար... խաբուեցայ:

Ո՛չ, սպանուհին խաբուած չէր, և այս բանս ինք շատ լաւ գիտէր: Լիոնցի երիտասարդին նորածն զգեստներուն տակ նա ճանչցած էր Նոր-

պերդը որուն աչքերը նոյնպէս հազիւ հազ Գարմելիդայինին հանդիպեցան, արագ շարժումով մը, նշան ըրաւ անոր լուծիւն պահելու:

Կոմսն Տէ Ռոսսի և Մարագ սիրազեղ իրարու ձեռք սեղմեցին... յետոյ առաջինը սեղանաւորը դէպի երիտասարդաց ակումբը տարաւ:

— Երկու հոգի ևս ունիմ քեզի ճանօթացնելու. — ըսաւ անոր քաղաքավար կերպով — անաւասիկ նախ պարոն Աւրիլիոյ Ծամորոյ, յարութիւն առած մեռեալ մը. այսպէս կ'ըսեմ, վասնզի երեք ամիսէ ի վեր տան մէջ թաղուած էր, նոյն իսկ ամենամտերիմ բարեկամները մոռնալով...:

Աւրիլիոյ ամէջաւ և ծոցաւ առանց պատասխանելու:

— Եւ ասիկա՛ Մարաք դերակոմսն է — շարունակեց կոմսը զուարթ կերպով — ազնուական գաղղիացի մը, որ զուարճութեան համար կը ճամբորդէ... և խենթ սիրահար մը գեղարուեստներու:

Նորպերդ և Մարագ զիրար ողջունեցին և վերջինս բոլորովին անտարբեր խաղաղ ակնարկ մը ձգեց զոռոզ դերակոմսին վրայ: Մարագ ճանչցած չէր անառակ երիտասարդը, որ այնչափ ինքն իր վրայ խօսիլ տուած էր և որուն հետ ուրիշ անգամ ալ տեսնուած էր:

— Ուրախ եմ ձեր թանկագին տեսութեան — ըսաւ նա երկու պարոններուն՝ շնորհալից ու քաղաքավար ժպիտով մը:

Եւ մասնաւորապէս Նորպերդին դառնալով—
 — Իմ ազնիւ բարեկամիս տան մէջ — աւելցուց Մարադ—պիտի կարենաք ձեր ազնուական ճաշակը զոհացնել: Հո՛ւս ամէն ինչ միացած էր, բնութիւնն ու արուեստը կրնայ գեղեցիկն ու հրապուրիչը ստեղծել:

Տէ Ռոսսի կոմսը շնորհակալ եղաւ բարեկամին՝ համեստ շարժումներով մը, ապա հարցուց հոգածութեամբ.

— Եւ քու սիրուն աղջիկնե՞րդ:

— Ահա՛, պարո՛ն, քու քնքուշ Աննինայիդ քոյն են...:

Երբ Նորպերդ երկու օրիորդներուն ներկայացուեցաւ, Գարմելիդա Սարաք դերակոմսի անուան վրայ չէր կրցած սարսուռ մը սանձել և աշխուժութեամբ գլուխը վեր վերցուցած էր:

Բայց Նորպերդ աչքն իսկ չթարթեց:

— Կը հաճի՞ս ինձի հետ վալս մը պտրել— ըսաւ նա անշփոթ, ծոկով աներես կերպով մը՝ գեղեցիկ սպանուհիին առջև:

Սա հաւանեցաւ՝ շուրթներուն վրայ աստուածային ժպիտով մը:

Այս պահուս Աւրիլիոյ իր թևը Աննինայի տուած էր և հեռացած էին. Ռինա դարձեալ նըստելու վրայ էր, երբ երկչոտ ձայն մը լսուեցաւ իր շուրջը որ զինքը սարսուռացուց:

— Կը հաճի՞ս գոնէ միասին շրջան մ'ընելու

— Կ'ըսէր իրեն ձայնը:

Ռինա աչքերը վերուց և իր առջև տեսաւ Մէնտէսը, որ ակնապիշ իրեն կը նայէր: Երկուքին աչքերը զիրար շափեցին և օրիորդը գոյնը նետեց. ժխտական պատասխանը զոր պիտի տար՝ իր շրթներուն վրայ սառեցան... այնպէս որ մեքենաբար բռնելով, անոր կարկառած ձեռքը թռթովեց.

— Երթա՛նք:

Երկու երիտասարդները պարի յորձանքին մէջ նետուեցան:

— Գարմելիդա՛ — կը շնչէր Նորպերդ այն պահուն բոցավառ Անտալուգայի ականջներուն— Գարմելիդա՛ դու արդէն կը գուշակես թէ ինչո՞ւ համար ես Տէ Ռոսսի կոմսին տունը եկայ, այնպէս չէ՞: Ո՛հ, շատ ժամանակէ ի վեր միջոց մը կը խորհէի քեզի մօտենալու ... և անա միջոցը գտնուեցաւ... բայց պէտք է շատ խոհեմութեամբ գործածել...:

— Նորպե՛րդ... և դու դեռ զիս չե՞ս ձանձնար— ընդմիջեց սպանուհին:

— Իմ յուզումներս սանձել զիտեմ... պիտի լռեմ, ոչ ոք կրնայ գիտնալ թէ իմ ու քու մէջդ սիրոյ կապ մը կայ: Ինձի բաւական է զքեզ տեսնել, քեզմով հրճուիլ՝ մօտդ ըլլալ...: Ո՛հ, Նորպե՛րդս, Նորպե՛րդս, կրկնէ՛ ինձի թէ միշտ զիս կը սիրես... միայն զի՛ս կը սիրես... ո՛հ, ինչեր չքաշեցի այս ամբողջ ամսոյն մէջ ... քեզմէ հեռի:

— Դու միայն չես տառապողը, Գարմելի-
դա՛ — մըմնջեց երիտասարդը տարփալիք, զայն
իր սրտին սեղմելով, բան մը՝ որ պարի եռանդ-
եան մէջ միայն աչքի չգարնել:

Այդ վայրկեանին երաժշտութիւնը դադրե-
ցաւ, և զոյգերն իրենց տեղերը նստեցաւ: Նոր-
պերդ թողով Գարմելիդան հեշտալի զառանցան-
քի մը մէջ, Տէ Ռոսսի օրիորդին դարձաւ, որ
նոյնպէս բրտաբար Աւրիլիոյին թեւէն կը բաժ-
նուէր, և աչքերը Մէնտէսը փնտռելու հետ էին
որ դեռ զինք չէր ողջունած ...:

Իր շնորհալի դիմագիծը արհամարհութիւն
և բարկութիւն կ'արտայայտէր. բայց գերակում-
սը տեսնելուն պէս բոլորը փարատեցաւ:

— Կոմսուհի՛ — ըսաւ նա ազնիւ քաղաքա-
վարութեամբ — եթէ չափազանց համարձակու-
թիւն չէ, քեզմէ պարախաղ մը պիտի խնդրէի...
և եթէ կարելի է առաջին պատեն առթիւ...:

Աննինա շնորհալի կերպով ժպտեցաւ, երկու
չարք փոքր ճերմակ աղւանները ցուցադրելով,
երկու վարդէ թերթիկներու մէջտեղ:

— Դու չափազանց ազնիւ ես, պարոն դե-
բալիոմս, և շատ ուրախ եմ քեզի կարենալ հա-
ճելի ըլլալուս համար — պատասխանեց Աննինա
մեծ վայելչութեամբ, նստելով և միանգամայն
աչք ընելով երիտասարդին որ իր քով նստի:

— Նորպերդ շփոթեցաւ, այս իրեն եղած
շնորհքին վրայ. այսուհանդերձ հաւանեցաւ:

— Այնչափ բարի ես, որչափ գեղեցիկ — ա-
ւելցուց նա անհուն յուզում մը ցոյց տալով —
չափազանցութի՛ւն չէին... քու մասիդ ինձի խօ-
սածնին...:

— Իմ մասի՛ս... ո՞վ էր խօսողը:

— Քու հին մէկ ծանօթը... և իմ սիրելի բա-
րեկամ մը... Աւրիլիոյ Ծամորոյ... այն յոյն երի-
տասարդը, որ շատ ազնիւ և անուշ սիրտ մ'ու-
նի...:

Աննինա արհամարհոտ շարժում մ'ըրաւ:

— Մանաւանդ թէ ըսէ՛ — կրկնեց նա յան-
կարծակի թափով մը, պչրանքով շարժելով շնոր-
հալի գլուխը — այն տարօրինակ մարդը, պահանջ-
կոտութեամբ լեցուն...:

Նորպերդի գէմքը մեծ զարմանք մը ար-
տայայտեց:

— Բայց դու կը խաբուիս... օրիորդ կոմսու-
հի... և... — Աննինա ընդմիջեց զայն ժխտական
չարժումով մը, յետոյ թրթռուն ձայնով և զայ-
րոյթով մը ըսաւ իրեն.

— Դու անոր բարեկամն ես և ազնիւ սիրտ
մը ցոյց կուտաս՝ պաշտպանութեամբ հանդերձ...
գալով ինձի, ոչ ոք կրնայ իմ համոզումս փո-
փոխել: Լսէ՛, և իրաւունք պիտի տաս խօսքիս...:

— Խօսէ՛, օրիորդ, խօսէ՛ — պատասխանեց
Նորպերդ, սաստիկ անհամբերութիւն և հետա-
քըրքրութիւն ցոյց տալով:

Աննինա վայրկեան մը լուռ դիտեց դերա-

կոմսը, յետոյ հեզնական պչրանքով մը ժպտեցաւ:

— Կրնա՞մ յուսալ — հարցուց յետոյ անուշ ու ճկուն ձայնով մը — թէ Աւրիլիոյի ականջը պիտի չհասնի քեզի ըսելիքներս:

Նորպերդ մէկ ձեռքը կուրծքին վրայ դրաւ թատերական շքեղ շարժուձեւով մը ու յետոյ ըսաւ.

— Ապահով եղիր, որ քու խօսքերդ հո՞ս թաղուած պիտի մնան:

Տէ Ռոսսի կոմսուհին գուարթ ծիծաղ մը փրցուց:

Քանի մը վայրկեան երկու երիտասարդները իրարու նայեցան առանց խօսք մ'ըսելու. վերջապէս Աննինա իր ներքին տեսակ մը խրոտովքը ծածկելու համար պատասխանեց.

— Երեւակայէ՛, որ Աւրիլիոյ հաստատ միտքը դրած էր թէ ինձմէ անհունապէս սիրուած ըլլայ... Իրիկուն մը միտսին պարի մը գտնուեցանք Ալվիգա մարգիգուհիին տանը մէջ, իրեն հետ շատ անգամ պարեցի, ոչ թէ վասնզի սերիչէ մը աւելի զարնուած էի իրեն, այլ վասնզի հոն գտնուողներուն մէջ լաւագոյն պարողներէն մին էր: Բայց... այն իրիկուրնէ ի վեր, ինք սկըսաւ ստէպ ինձի քծնել. տունէն դուրս չէի կըրնար ելնել առանց իրեն հանդիպելու. ինչպէս նաև որ չէր ըլլար որ Աւրիլիոյ չգար իմ պատուհաններուս ներքև ձիավարժութիւն ընելու: Ան-

դամ մ'ալ ընկերութեան մէջ իրարու հանդիպեցանք... Աւրիլիոյ... վայրկեան մը ինձի հետ առանձին մնալով, վտանգաւոր յայտարարութիւն մ'ըրաւ... Չեմ գիտեր նոյնիսկ թէ ի՞նչ պատասխանեցի. ինչ որ կը յիշեմ, այս էր, թէ այն վայրկեանէն սկսեալ իրաւունք մը ունենալ կարծեց՝ ինձմէ կատարեալ երջանկութիւն մը պահանջելու... տասնեակ հատորներով սէր, լուսնի յոյսով, հառաջանքներ և որ ըստ կարգին...:

— Եւ դու — ընդմիջեց Նորպերդ սեթեւեթեալ կերպով — զինք իր մտախաբութեան մէջ թողուցիր...:

Աննինա հիտոքանչ շնորհալիութեամբ մը հառաչեց:

— Ո՞հ, Աստուած իմ, — ըսաւ նա — ինչ իրաւունքով կրնայի իր պատրանքն արգելուլ: Քնքզինք երջանիկ կը համարէր... աւելի լաւ Միւս կողմանէ, չեմ ժխտեր Աւրիլիոյ... այն ժամանակաւ զիս կը սիրէր... գուցէ սկսէի ես ալ զինք սիրել... եթէ ինք զիս ծանրապէս սարսռեցնելու չափ՝ զիս իրմէ չզուեցնէր: Երեւակայէ՛ ... որ ըստ իրեն, ուրիշ բան պէտք չէի ընել, բայց միայն զինք մտածել... ո՞հ, սակայն ծիծաղելի են այս տեսակ տարփածուները... ա՛յնչափ արատուցութիւններ ունին... զրեթէ կը յաւակնին որ կին մը ողջ ողջ թաղուի... իրենց սիրոյն համար ամէն տեսակ գուարճութենէ զրկուի. բայց արդէն յանցանքը իմս է, իմ անխոհեմութիւնս ...

չափազանց ազնուութիւն ցոյց տուի... զինք հաւատացուցի՝ թէ անտարբեր չէի ... բայց ասով հանդերձ չէի հասկնար ինքզինքս գոհել .. այս կը պակսէ՛ր միայն: Բաւական է ... նա իր անվերջ հառաչանքներով զիս ձանձրացուց ... և օր մը խնդրեցի ազնուաբար որ գանոնք ուրիշ տեղ մը տանի: Կը հաւատաս: Աւրիլիոյ իմ համարձակութեանս համապատասխանեց՝ փոխադարձ նախատինքներով զիս մասնշուհի, երգմնագանց կոչեց, միանգամայն երզուըննալով՝ որ ա՛յլևս ոտք պիտի չկուխէր իմ պալատը...: Մ՛հ, ա՛հ, կը տեսնուի որ պարոն Ծամորոյ զիտէ պահել իր երզումները...:

Կեանքի մէջ վայրկեաններ կան յորում կը թուի թէ գեղեցկութիւնը՝ դեւերուն միայն յատուկ ըլլայ քան հրեշտակաց: Աննինայի դէմքը, թէպէտև դժոխային չարամտութիւն մը կ'արտաշնչէր, սակայն անգիմադրելի կախարհանք մ'ունէր որ առաջին անգամ Նորպեղի սիրտը բաբախեցուց, ոչ միայն ցանկութեան զգացումով... այլ ճշմարտապէս... վառ սիրով:

— Բայց չե՞ս կարծեր — շնչեց նա տեսակ մ'անձկութեամբ, երբ օրիորդը իր քաղցր զուարթութեան սփոփութիւն մը տուաւ — չե՞ս կարծեր թէ այն միակ տարփանքն զոր Աւրիլիոյ քեզի համար կը սնուցանէ... հոս ալ դեռ բերած ըլլայ:

Աննինա անհոգութեամբ ուսերը թոթովեց՝

— Ո՛հ, այս՝ — մրմնջեց — լաւ գիտեմ որ նա դեռ զիս կը սիրէ ... վայրկեան մ'ատաջ ալ կրկնեց...:

Նորպեղը դողդոց և շրթները խածաւ:

— Բայց ես իրեն այնպէս մը խօսեցայ որ բոլորովին յոյսը կտրեմ. Բաւական զիս ծաղրածութեան առաւ իր բարեկամներուն հետ...:

— Ո՛հ, հաւատք մի՛ ընծայեր շար լեզուներուն, օրիորդ — գոչեց ինքնակոչ դերակումսը՝ վիհանձնութիւն ծախել ուղելով: — Աւրիլիոյ այնպիսի ցած վրէժխնդրութեան կարող չէ ... անքու վրադ մեծ յարգանքով կը խօսի:

— Համարե՛նք թէ — պատասխանեց Աննինա արհամարհոտ դէմքով, որուն տակ աւնորակելի յամառութիւն մը կը զգացուէր — ըստիս չափազանց յիմարութիւն է ինքզինքս պատասխանատուութեան ենթարկելու: Կը տեսնես, թէ մէկը չունի որ իր այս կիրքերու հոսանքին չհետեւի ինչպէս դու կ'ըսես, և ասոր համար է որ ես ուղեցի քեզի բուն ճշմարտութիւնը ճանչցնել տալ, որպէսզի չկարենաս բաղդատութիւն մ'ընել այն բաղաձանքներուն հետ զոր քեզի պատմած պիտի ըլլայ քու սիրելի բարեկամդ...:

— Ո՛հ... բայց անա հոս է պարոն Մէնտէսը — ընդմիջեց օրիորդը աշխուժով, յանկարծ կտրելով իր խօսքը և օտարական երիտասարդին ձեռքը սեղմելով, որ իրեն մօտեցած էր:

— Ներէ՛՛ դերակումս, որ քեզի ներկայացնեմ

հօրս լաւագոյն բարեկամը — աւելցուց Աննինա խօսքը Նորպերդի սեղեւիով, որ նոր անձնաւորութեան մօտեցած պահուն՝ յօնքերը պոստած էր և գոյնը սաստիկ նետած:

Երկու երիտասարդները իրարու յարգանքներ մատուցին:

Մէնտէս, ինչպէս գիտենք. Ռինայի հետ պարտիներուն մէջ նետուած էր. երիտասարդ արուեստագէտին երջանկալի երազ մը կը թուէր: Իր թեւը կը գողար նրբակազմ օրիորդին մէջքը գրկած ժամանակ, կը զգար որ անոր սիրտը սաստիկ կը բաբախէր իրենինին վրայ. օրիորդին խարտեաչ մագերը իր դէմքին կը զարնուէին, իրենց բոյրով սուր ու հեշտալի զգայականութիւն մը պատճառելով իրեն: Այն պահուն, Մէնտէս, իր շուրջը եղածներէն բան չէր իմանար. ո՛չ մէկ գաղափար, հազար գաղափար. խառնուրդ մը՝ հեշտութեան, մոռացութեան:

Իսկ Ռինա, ճնշուած, յիմարած, ոյժ չունէր, ոչ ալ քաջարտութիւն՝ մերժելու ձեռքը՝ որ իրենը սեղմած էր. և թեւը՝ որ իրեն փարած էր: Իր սիրտը յուզուած էր՝ նոր ու աստուածային աննկարագրելի յուզումով մը. իր զգայումները կը կորսուէին ամենաքաղցր յափշտակութեան մը մէջ...:

Բայց երգերը զագրեցան... և անոնց հետ Ռինայի մտքին մէջ կենդանացան ինչ որ պարահանդէսը մոռցնել տուած էր: Յիշեց երիտասարդ

նկարչին նկատմամբ սեղանաւորին ըսած խօսքերը... Գարմելիդայի ըրած խօստումը, քաջասիրտ ըլլալ... կին ըլլալ...:

Ասոր համար հազիւ բաժնուած Մէնտէսի թեւէն և շնորհակալ եղած շնորհալի յարգանքով, օրիորդը մօտակայ սրահ մը քաշուեցաւ՝ արեւելեան բազմոցի մը վրայ նստելու... միեւնոյն վայրկեանին ալ Նորպերդ Գարմելիդան թողած՝ Տէ Ռոսսի օրիորդին քով կը մօտենար:

Մէնտէս խարտիչազէս որբուհիին հետեւեցաւ և անոր քով նստաւ:

— Ինչո՞ւ գիտ թողուցիր — ըսաւ աննման քաղցրութեամբ մը — ուրեմն շատ յոգնած էիր:

— Պարը վերջացեր էր — պատասխանեց Ռինա սառնասիրտ — և ես թեւդ մտած կենալու ո՛րէ ելատճառ մը չունէի...:

Մէնտէս խռոված աչքերը վար առաւ:

— Իրաւունք ունիս — կրկնեց տխրաբար և դառնասիրտ — և... ներէ՛ անզգուշաւորութեանս:

Սա հեռանալու վրայ էր, բայց Ռինայի անուշ և երկչոտ նայուածք մը զինք կեցուց:

Նոյն պահուն շուրջը ակնարկ մը տուաւ և տեսաւ որ ամէնքը զբաղած էին. տիկնայք ու ասպետներ տաք տաք իրարու մէջ խօսէին: Գարմելիդա երկու երեք պարոններէ շրջապատուած էր, որոնք իր հրապուրիչ արդուգարդերուն վրայ գովեստներ կը շոյջէին:

Աննինա սերտ խօսակցութեան մը մէջ էր

գերակումս Սարաքի հետ:

Տէ Ռոսսի կոմսը և սեղանաւորն ալ խաղի սենեակը գացած էին:

Մէնտէս սիրտ ըրաւ:

— Ռինա՛ — ըսաւ աղջկան, որ սրտաշարժ իրեն կը նայէր. — Ռինա՛, կը ներես որ քեզի հարցում մը ընեմ...:

Որբուհին անկարելիութեան մէջ կը գտնուէր միակ շարժումով մը իր պատասխանը արտայայտելու, սակայն լռեց:

Երիտասարդը, այն լռութիւնը հաւանութեան նշան ընդունեցաւ. սակայն գլուխը բոլորովին օրիորդին կողմը ծռելով շփոթած, նուազ ձայնով մը մնջեց:

— Ռինա՛... զիս... պիտի սիրես... ո՛հ, եթէ գիտնայիր թէ ի՞նչ անուշ մխիթարութիւն պիտի պատճառէ ինձի քու սիրոյ... մէկ խօսքդ շատ պատճառներ կան որոնք ցարգ ինձի միայն աչքերով խօսիլ տուին. — բայց այս գիշեր ոյժ մը կը զգամ ինքզինքս բացատրելու և քեզմէ դատավճիռս սպասելու... Ռինա՛... զիս պիտի սիրես:

Աղջիկը զայրութեամբ մը շտկուեցաւ... Տէ Ռոսսի օրիորդին պատկերը իր մտքին առջեւէն անցաւ... կարծեց թէ շարժառիթը՝ որուն վրայ կը խօսէր իրեն նկարիչը՝ ուրիշ բան չէր բայց եթէ իր Աննինայի ըրած նոյն խոստումը. կարծեց դարձեալ թէ այդ երիտասարդը զինք կ'ուզէր իր վրան խնդալ... ուստի խիստ ակնարկ մը

դարձուց անոր և սառնասիրտ և հաստատուն ձայնով պատասխանեց.

— Ո՛հ... ընա՛ւ...:

Մէնտէս մեռելի մը պէս դունատեցաւ... և բոլոր մարմնով զողաց:

— Ուրեմն կ'ուզես իմ մեռնի՞լս տեսնել դո՛ւ — թոթովեց հառաչանքով մը, որ ողբ մը թուեցաւ օրիորդին:

Այսուհանդերձ, գիտցաւ նա իր յուզումը սանձել:

— Ո՛հ, այսպիսի ոչինչ բանի համար չես մեռնիր — ըսաւ դառն բայց ազնուական ժպիտով մը — հոս... կայ մէկը .. որ կընայ զքեզ մխիթարել: Պարոն Մէնտէ՛ս, — աւելցուց ձեռքերը շփելով — նայէ՛, կարծես թէ Տէ Ռոսսի օրիորդը քեզի նշան մ'ըրաւ. գնա՛ ... գնա՛, չեմ ուզեր զքեզ խօսքի բռնել ... ես Գարմելիդային պիտի երթամ:

Եւ որբուհին տեսակ մը անհամբերութեամբ հեռացաւ երիտասարդէն, առանց երեսն անգամ նայելու, մինչդեռ նա, առանց համարձակելու զայն խօսքի բռնել, անոր յառած իր երկու վառվռուն աչքերը, որուն մէջ կը փայլէին զարմանքը, երկիւղը և սաստիկ ցաւ մը...:

Առանց ըրածին գիտակցութիւնն ունենալու, Մէնտէս Աննինայի մօտեցաւ, և անկից, ինչպէս գիտենք, գերակումս Սարաքի ներկայացուեցաւ:

— Աստուած իմ, ի՞նչ ունիս պարո՛ն Մէն-
տէս — բայցզանչեց կոմսուհին՝ հոգածութեամբ,
հշմարելով նկարչին տժգոյն ու այլայլած դէմ-
քը — գէ՛շ կը զգաս:

— Ոչի՛նչ... ոչինչ — պատասխանեց երիտա-
սարգը բարեկամական սիրոյ շարժուձեւով մը —
զուցէ սրահին ջերմութիւնը...:

— Շա՛տ խղզուկ է — ընդմիջեց արթնու-
թեամբ Աննինա, — բայց... կուզե՛ս թեւդ ինծի
տալ, միասին ծաղկատուն երթանք... քիչ մը ...
զովանալու համար:

Նորպերդ մասնչ և անշարժ երկու երիտա-
սարգները կը դիտէր... մըմնջելով ինքն իրեն քա-
նի մը անխելի բառեր:

— Շնորհակալ եմ, օրիորդ — թոթովեց Մէն-
տէս ինքն իր վրոյ բռնանալով — բայց կը մտա-
ծեմ շուտով առանձնանալ:

— Ի՛նչպէս, կ'ուզես մեկնի՛լ — գոչեց աղ-
ջիկը բարկութեամբ — և առա՛նց ինծի հետ պար
մը խաղալու:

— Ներէ՛ ինծի կ'ըսեմ, բայց գլուխս... վը-
րաս չէ. կ'ուզեմ մինակ ըլլալ... հանգչիլ:

Մէնտէսի խօսքերը անկեղծ ու ճշմարիտ
էին... և իր տժգոյն ու այլայլած դէմքը շատ ա-
ւելի ծանր վիշտ մը կ'արտայայտէր քան որչափ
իր խօսքերը ցոյց կուտային, այնպէս որ Աննի-
նա ի գուժ շարժեցաւ... և առանց ուշադրու-
թիւն դնելու զերակոմսին որ իրեն կը նայէր,

երիտասարդին ձեռքերը իր կուրծքին վրայ տա-
նելով սեղմեց զանոնք:

— Այո՛ ... կը տեսնեմ թէ կը տառապիս,
խեղճ Մէնտէս — ըսաւ նա տրցունքոտ աչքե-
րով — եկո՛ւր, իմ յարկաբաժնիս մէջ՝ եկո՛ւր, քե-
զի զօրացուցիչ բան մը տամ ... հիմա կառքս
պատրաստել կուտամ, որ զքեզ տուն տանի... ես
տալ, եթէ հարկ ըլլայ, հօրս հետ քեզի կ'ընկի-
րիմ...:

Աննինայի քողցր ու զողոջուն ձայնը այ-
պիսի սերտ սէր մը կը յայտնէր, որ Սարաք
սարսուաց, մինչդեռ Մէնտէս զգացուած՝ շփոթած
գլուխը կը ծռէր, պատասխանելով ազնուու-
թեամբ և ժպիտով մը՝ որ լի էր մեղամաղձոտ
քաղցրութեամբ:

— Օրիորդ, դու չափազանց քարի ես, չա-
փազանց ազնիւս Բայց չնչին բան մ'է ... և շու-
տով կ'անցնի. Անհանգիստ մի՛ ըլլար, և ո՛չ ոք
նեղութիւն քաշէ... ես մինակ կ'երթամ:

Եւ իր ձեռքերը գեղեցիկ օրլորդին բաժ-
նելով, որ չհամարձակեցաւ չթողալ և հիւրերուն
մէջ անհետացաւ առանց նոյնիսկ ողջունելու զե-
րակոմսը...:

Նախասենեակին մէջ Մարուզն ու Տէ Ռոսսի
կոմսը գտաւ որ խաղի սենեակէն դուրս կ'եղնէին
և զինք կեցուցին:

— Ի՛նչպէս, Մէնտէ՛ս, այսպէս շուտ կը մեկ-
նիս — գոչեց զուարթաբար կոմսը, ձեռքը անոջ

ուսին վրայ դարնելով:

— Այո՛ ... գլուխս քիչ մը ծանր է ... և կը
զգամ թէ քիչ մը օդի պէտք ունիմ...:

— Եւ Աննինա՞ն — հարցուց ազնուական
մարդը, բարեկամական և բարեմիտ շեշտով մը:

— Սարաքի քով թողուցի...:

— Ա՛հ, ա՛հ — մըմնջեց Սարազ ականջն ի-
վար — զգուշացի՛ր այդ գազզիացիէն...:

— Ան ալ կը կարծէ թէ ես Տէ Ռոսսի օ-
րիորդը կը սիրեմ — ծամծմեց կատաղաբար ակ-
ուաներուն մէջէն. և ըսաւ բարձրաձայն.

— Անկից չեմ վախնար:

— Վասնզի քու յաղթութեանդ վրայ վստահ
ես .. է՛հ — կրկնեց Սարազ ուրախ և գօրովալիբ
շեշտով:

Մէնտէս չտատասխանեց:

Քանի մը նմանօրինակ կատակներէ վերջ,
սեղանաւորն ու կոմսը թողուցին նկարիչը, բայց
մեկնելէ առաջ աւելցուց սեղանաւորը.

— Վաղը, եթէ ինքզինքդ լաւ զգաս, կընաս
աղջկանս դիմանկարն սիսիլ:

Այս բաները բաւական եղան երիտասարդին
դիմագիծը ոգեւորելու: Բերանը բացաւ որ շնոր-
հակալուծիւնն յայտնէ, բայց ուրիշ բան չկրցաւ
ըսել բայց միայն.

— Վաղը:

Եւ մեկնեցաւ:

Այս պահուս՝ մինչդեռ դերակոմս Սարաք

ձեռքը Աննինայի կարկառելով մ'ըստին զէպի
ժողկանոցները կը տանէր, ըսելու անոր Մէն-
տէսի յանկարծակի գէշ զգալուն պատճառը՝ Ռի-
նա պատուհանի մը առջև, թիկնաթոռի մը վրայ
երկնցած, գեղեցիկ դէմքը ձեռքերուն մէջ կը
ծածկէր, մըմնջելով.

— Արդեօք սեղանաւորը ստա՞ծ էր, Մէն-
տէս իրաւցնէ զիս կը սիրէ՞ր ...

Թ.

Հազիւ արշալոյսը կը բացուէր:

Փիրէնցէ դեռ խոր քնոյ մը մէջ ընկղմած
էր. քանի մը ժիր արուեստաւորներու արագ
քայլերը, և քանի մը հեռաւոր կառքերու խլա-
ցուցիչ աղմուկը միայն ճամբաներուն կրօնական
և ծանր լուծիւնը կը խանգարէին:

Մէնտէս իր աշխատանցի մէջն էր, ուր բո-
լոր գիշերն անցուցած էր: Սեղանի մ'առջև նըս-
տած էր, որուն վրայ դեռ կանթեղ մը կը վառէր
և առջևը բացուած գիրք մը կար: Բայց նկարի-
չը չէ՛ր կարդար, ո՛չ: Թեւերը խաչաձև կուրծքին
վրայ դրած, անշարժ աթոռին վրայ, աչքերը
պատուհանին յառած կեցած էր, իրրև թէ ա՛յ-
ծանօթ առարկայներ տեսնուէին (առտոյն կը
չին մէջ: անինայի հետ)

— Աստուած իմ — մրմնջեց յանկարծ, մէկ
ձեռքը ճակտին տանելով — Աստուած իմ... ս'ը-
չափ կը տանջուիմ...:

Առջևը գտնուած գրքին վրայ ծոնցաւ և հոն
կարդաց մեքենաբար.

«Կ'ուզէ՞ք սաւառնիլ ձեր թեւերուն վրայ
երկրաւոր վիշտերը մէկդի նետելով: Փախէ՛ք
դրական անցուկ կեանքէն՝ դէպի գաղափարական
թագաւորութիւնը»:

— Այո՛ — գոչեց Մէնտէս թափով ոտքի ելած
— գաղափարական կեանքը... արուեստի կեանքը
միայն կրնայ զիս մխիթարել... է իմ ապաստա-
նարանս... իմ միակ յոյսս:

Նկարիչը վայրկեան մ'ալ լռեց, յետոյ դարձ-
եալ սկսաւ, շրջագայելով յուզմամբ՝ սենեակին
լայնութեամբ և երկայնութեամբ.

— Ինչո՞ւ համար սէրը տրուած է իմ հոգ-
ւոյս՝ անգութ մարտիրոսութեան համար: Ինչո՞ւ
երբեք չիրականացաւ հատ մը միայն այն տե-
սիլներէն, որոնցմով այնչափ անզամ հեշտացած
եմ երագներուս մէջ...: Ռինա՛: Ահաւասիկ կիներ՝
որ իմ իղձերուս կը համապատասխանէ, իմ ար-
ուեստական տեսիլներուս... և սիրոյս: Անոր հա-
մար միայն փոքր փնտռեցի: Անոր քովը միայն
վրձինս կրնայ հրաշքներ գործել...: Ռին, մա՛յր իմ,
ինչո՞ւ քովս չես որ զիս մխիթարես: Երբ դեռ
չուէ՞ քու ծունկերուդ վրայ նստած մ'ըշտ կա-
նուէ՞ քու ժպտուն խրկիները կը դիպէի ... քեզի
Այս պահու

պաղատելով որ թոյլ տաս ինձի արուեստ մը
սովբերու, որուն մէջ հաճոյք կը նշմարէի ... Ե-
րագելով հանգիստ ուսումնասնեակ մը՝ անուշ
ու գարնանային լոյսերով ողորուն ... բոլորովին
զեղեցիկ և բոլորովին անգորր, մտածեցի՞ երբեք
թէ օր մը արուեստը պիտի բաւական չըլլար այլ
ևս իմ կեանքիս, և երկրաւոր արարած մը իմ
տարփալից սիրտս պիտի բաբախէր, որոնք իմ
կեանքս կը նսեմացնեն և ըղբոս կը ցնդեն...:

Մէնտէս դեռ քանի մը վայրկեան խորա-
սուզուած մնաց իր մտածութիւններուն մէջ,
յետոյ սկսաւ սաստիկ ծիծաղիլ...:

— Ռին, խենթ եմ իրաւցնէ — քացազանչեց —
խենթ որ ժամանակս կը վատնեմ՝ մտածելով
կնոջ մը վրայ՝ որ զիս չի սիրեր...:

Ձիս չի՞ սիրեր...: Եւ ի՞նչ հոգս ...: Տա՛ր
երկինք որ բնաւ անոր չհանդիպէի...: Ինքզինքս
բաւական երջանիկ չէի՞ համարեր Աննիայի ինձի
տուած հաւանութեամբը...: Ռին... ան ալ անիծ-
ուած ըլլայ, որ ժամանակ մը հաճեցաւ իմ հո-
գիս արծարծուն ածուխներու վրայ նետելու...:
Եւ յետոյ... իր սէրը ուրիշ բան չէ բայց եթէ
ժողրածութիւն մը... երգիծանք մը... և այս սէրը
չէ զոր կը փնտռեմ...: Ի՞նչ հակապատկեր այն
երկու էակներուն մէջ: Մին՝ հոգին կը զիւթէ
զգայարանաց ձեռքով, միւսը՝ զայն կը հարուածէ,
և անմեղութեամբը, ճշմարիտ սիրով զայն կը
բարձրացնէ: Երբ ես կը խօսիմ Աննիայի հետ՝

կը զայրանամ և կը տհաճիմ. միեւնոյն ժամա-
նակ տաժանելի և սուր խռովք մը կը զգամ. երբ
ընդհակառակն կը նայիմ այն խարտեաչ և երկ-
չոտ աղջկան... նիւթական աշխարհը կ'անհետա-
նայ աչքերէս. . և կարծեմ թէ իր հրեշտակային,
քաղցր աչքերը կը փայլփլին իմ վրաս՝ գեղեցիկ
աստղի մը պէս...:

Եւ այսօր զինք պէտք եմ տեսնել պատկերը
գծելու համար — շարունակեց տխրութեամբ —
բայց... վախնամ որ չկրնամ ինքզինքս ուժով
բռնել իր առջև... կեցցէ՛ քաջութիւն. որոշեցի
երթալ... և պիտի երթամ:

Մէնտէս սկսաւ նկարել միեւնոյն խանդով,
իրբև թէ բոլոր գիշերը հանգիստ քնացած ըլլար
և միայն երբ արեւուն առաջին ճառագայթը իր
աշխատանոցէն ներս թափանցեց, կանթեղը մա-
րեց, մէկգի դրաւ վրձինները, գլխարկն առնելով
դուրս ելաւ:

Ճամբաներուն մէջ բաւական ժամանակ
չըջելէ վերջ, առանց նոյնիսկ ի'նչ ուղղութիւն
բռնելը գիտնալու, յանկարծ Լուսկառնիներուն
վրայ գտնուեցաւ: Չանոնք ալ կտրեց անցաւ
աճապարանքով և կանգ առաւ միայն՝ երբ հա-
սաւ բարձր պալատի մ'առջև, որ Զոււլիներու
հրապարակին մօտ շինուած՝ նոր ճամբու մը ան-
կիւնը կը կազմէր: Մեծ դռնէն մտնելով, Մէն-
տէս մարմառէ ընդարձակ սանդուղէ մը վեր ե-
լաւ... և առաջին յարկին մէջ զանգակ մը գար-

կաւ ուժգնօրէն:

Իսկոյն ծեր սպասաւորը մը երեւցաւ, որ ե-
րիտասարդը տեսնելուն պէս խոր յարզանք մ'ը-
րաւ:

— Ո՛հ, պարոն — դռնեց ապա անձկանօք —
հազար անգամ օրհնեալ ըլլայ երկինք: Ձեր չգա-
լուն վրայ սկսած էի մտատանջուիլ...:

— Բարի Յակո՛բս — բացագանչեց Մէնտէս
քաղցր ու ընտանի կերպով — բոլոր գիշերը աշ-
խատանոցիս մէջ՝ անցուցի, և յոգնութիւն չեմ
զգար: Պէտք եղածը պատրաստէ որ մաքրուիմ և
ըսէ Գատլոյին և Լորէնցոյին, որ պատրաստուին,
որովհետև քիչ վերջ զերեմք միասին պիտի տա-
նիմ...:

— Բայց, դուք պիտի չհանգչի՞ք ուրեմն —
հարցուց սպասաւորը, հետեւելով իր երիտասարդ
տիրոջ դէպի ճօխ կահաւորուած սենեակ մը՝ ո-
րուն որմերը ամենաթանկագին իւզանկարներով
ծածկուած էին:

— Ո՛չ... յոգնած չեմ, — ըսաւ երիտասար-
դը, հանգիստ նստելով թիկնաթոռի մը վրայ —
թո՛ղ զիս... դնա՛:

Յակոբ չչարժեցաւ:

Բարի մարդուն աչուրներն արցունքով լե-
ցուն էին:

— Բայց դուք գունատ էք — մըմնջեց զը-
թով — դուք շա՛տ կ'աշխատիք, չէք մտածեր ու-
րեմն թէ...:

— Կը բաւէ, կը բաւէ,— վրայ բերաւ զգայ-
նութեամբ Մէնտէս—քեզի ըսի որ երթաս:

Սպասաւորը, որ առաջին անգամ իր փոք-
րիկ տէրը զայրացած կը տեսնէր, զարհուրած ետ
քաշուեցաւ և դուրս ելլելու վրայ էր. բայց
Մէնտէս արդէն զղջացած՝ այդ մարդուն հանդէս
ցոյց տուած դաժանութեան վրայ՝ որուն յանձ-
նած էր զինք իր մայրը, զայն ետև կանչեց, և
ձայնը մեղմելով.

— Խեղճ Յակոբ — ըսաւ — մի՛ վշտանար
խօսքերուս համար: Բան մը կայ որ ըզեզս կը
խանգարէ:

Ծառան ճշմարիտ հայրական գորովով նայե-
լով պատասխանեց.

— Այո՛, ... կը տեսնեմ որ վշտացած էք...
պատճառը կը գուշակեմ:

Մէնտէս կարմրեցաւ՝ յանցաւոր տղու մը
պէս:

— Ի՛նչպէս... գիտե՞ս:

— Այո՛ — թոթովեց Յակոբ, ձայնը ցածցնե-
լով — այո՛... պարոն կոմս, գիտեմ թէ կը տառա-
պիք զուք՝ այդ օրհնած արուեստին պատճառաւ
... որուն համար ամէն բան կը լքէք:

— Լո՛ւ՛... լո՛ւ՛ — կրկնեց Մէնտէս տխրու-
թեամբ — գուցէ զու իրաւունք ունիս... բայց պի-
տի ջանամ ինքզինքս չափաւորելու: Հիմա զիս
ձգէ և ըսածներս պատրաստէ:

Եւ երիտասարդը կրկին ընկզմեցաւ իր մը-

տածումներուն մէջ:

Գրեթէ երկու ժամ ետքը, նա իր պալատի
աանդուխներէն կ'իջնէր՝ երկու սպասաւորներուն
հետ, միասին առած պատկերակալ մը, քանի մը
կտոր կտաւեղէններ և տուփ մը իւղաներկ: Կառք
մը նստուաւ, հրամայելով որ Մարագի բնակարա-
նը տանի:

— Սեղանաւորը մեկնելու վրայ էր, երբ
Մէնտէս հասաւ:

— Ազէկ որ եկար — ըսաւ, սեղմելով նկար-
չին ձեռքը — Ռինա անհամբեր քեզի կը սպասէ:

— Մէնտէս ուրախութենէն սարսուաց:

— Երբ ըսի թէ այս առտու պիտի գաս իր
դէմքը նկարելու՝ սենեակին մէջ սկսու վեր վեր
չատօքել: Խեղճ աղջիկ, իրեն համար նորութիւն
մըն է... և հակառակ որ գիշերը պարահանդէսով
չուսուց՝ առտուն կանուխ ելաւ և քեզի կը ըս-
պասէ ... բայց լաւ միտքս եկաւ ... քու զխուզ
ցաւը. »

— Դեռ բոլորովին չանցաւ, բայց չարժեր
վրտն մտածել... բազմամամբ այս գիշերուան...
հիմա չնչին բան մըն է:

Մարագ անուշ մը ժպտեցաւ:

— Եթէ գիտնայիր թէ օրիորդը ի՛նչպէս
զայրացած էր քու անակնկալ մեկնելուդ համար
— բացադանչեց դուրս թօրէն: — Ո՛հ, Մէնտէս...
Մէնտէս... երբեմն բանե՞ր մը կ'ընես... Այսպի-
սի երկու գեղեցիկ աչքեր լացնե՛լ տալ:

Նկարիչը պիտի պատասխանէր, երբ իրենց կեցած սրահին դուռը բացուեցաւ և երկու օրիորդները երեւցան:

Ռինա շնորհալի ժպիտով մը երիտասարդին ողջունեց: Իրեն դէմքը ամենատոժոյն էր, բայց խաղաղ ու ծիծղուն, իբրև համակամութեան հրեշտակ մը:

Գարմելիզա ընդհակառակն ձեռքը երիտասարդին կարկառեց, ըսելով.

— Բարի եկար, պարոն Մէնտէս... անհամբեր եմ քու աշխատիլդ տեսնելու:

— Ես զձեզ ազատ կը թողում— ըսաւ Մարագ ստքի ելնելով: — Կը ներես, Մէնտէ՛ս, կարելոր դործի մը համար պաշտօնակցիս պիտի երթամ: Ի՛իշ ատենէն կը տեսնուինք:

— Շուտ կը վերադառնաս, այնպէս չէ՞ — ըսաւ Ռինա շնորհագէմ, իր դեղեցիկ ճակատը սեղանաւորին տալով, որ վրան համբոյր մը դրոշմեց:

— Ամենաշուտ, սիրելիներս — մնա՛ք բարեկաւ:

Մարագ դուրս ելաւ և Մէնտէս քանի մը վայրկեան լուռ ու անշարժ մնաց՝ սրահին մէջտեղ՝ ապշած ու ակնապիշ գեղեցիկ աղջիկը դիտելով, որ իրմէ քիչ հեռու նստած էր:

— Ե՛րբ պիտի նստիմ— հարցուց Ռինա հեշտալի ժպիտով մը:

— Իսկոյն... եթէ չես տհաճիր:

— Ընդհակառակն ... բայց ըսէ ինձի, այս դպետը լա՛ւ է, կը ծառայէ՞:

— Ամենալաւ. պարզութիւնը անմեղութեան աւելի յարմար է:

Ռինա շառագունեցաւ... և Գարմելիզա միջամտեց:

— Պարոն Մէնտէս, — ըսաւ, շնորհալի ձեւերով մը և չարամիտ ժպիտով մը — յուսամ թէ ինձի կը ներես չէ՞ որ ձեր ընկերութիւնը վայելիմ:

— Ամենայն սիրով:

Սպանուհին գնաց լուսամտի մը առջև նստեցաւ, ձեռագործ մ'աշխատելով, և մերթաէնարկ մը տալով ճամբուն:

Մէնտէս սկսաւ կտաւն ու գոյները պատրաստել, մինչդեռ Ռինա կը դիտէր անմեղ հետաքրքրութեամբ մը:

Երբ նա լմնցուց, որբուհին դետեղեց այնպիսի դիրքով մը որ լոյսը ուղղակի դէմքին վրայ զարնէ, յետոյ տեսակ մը տագնապով ըսաւ անոր.

— Պարոն Մարագ կը փափաքի որ դքեղ բնական մեծութեամբ ներկայացնեմ, զուարթ և ծաղկանց փունջ մը կապելու դրադած: Ես իր փափաքը լիուրի պիտի կատարեմ... եթէ դու ևս հաճիս:

— Բարեբարիս կամքը իմն ալ է: Մէնտէս խոնարհեցաւ, և քանի մը վայրկեան

օրիորդին առջև ոտքի կեցած՝ ուշադրութեամբ
զննելով զայն ակնարկով մը՝ որուն մէջ կը նըշ-
մարուէր զարմանքն ... ու սէրը:

Ռինա սև թուռչէ պարեգօն մը հագուած էր,
որուն առջևի բացուածքը ժանիկաւոր էր՝ հին
արուեստով բանուած. և գեղեցիկ ճաշակով հիւս-
ուած իր խարտեաշ մազերը ալապատրէ կիսա-
մերկ վիզէն վար կը կախուէին: Յուզումը իր
այտերը վառ կարմրութեամբ մը ներկած էր, որուն
մէջ աւելի ևս դուրս կը ցայտէին ... սև, խոնաւ
ու արցունքոտ աչքերը:

Մէնտէս լուռ կը կենար, բայց սիրտը խոռ-
ված էր, այտերը կը վառէին. աչքերը կրակ ու
բոց...:

— Ռինա՛ — մրմնջեց նա ցած ձայնով, այն-
պէս որ միայն աղջիկը կարենար լսել — Ռինա՛,
գեռ հաստատուն ես մտքիդ վրայ...:

Օրիորդին երկայն արտեւանունքը իջան իր
խոշոր աչքերուն վրայ. այտերուն կարմրութիւնն
աւելի շառագունեցաւ, բայց բերանը չի բացաւ:

— Եթէ իմ վրայօքս մէկը քեզի բան մ'ը-
սաւ — շարունակեց Մէնտէս. յուզուած ու տար-
վալիւր ձայնով մը — զքեզ խաբա՛ծ է, Ռինա՛...
կ'երգնում...: Ո՛հ, այո՛... դու լաւ գիտես թէ
զքեզ կը սիրեմ... զքեզ միայն կը սիրեմ... դու
լաւ գիտես թէ հազար անգամ կեանքս քեզի հա-
մար կը զոհեմ...: Ինչո՞ւ ուրեմն սիրտս կը մոր-
մոքես քու խօսքերովդ...: Գուցէ... Աստուած իմ,
...ազատ չե՛ս...:

— Ազատ չեմ... ե՞ս — թոթովեց աղջիկը, բո-
ւրովին դողդոջուն.

— Մանաւանդ թէ քեզի ըսէ այդ խօսքը:
Միթէ Տէ Ռոսսի օրիորդին խօսեցեալը չե՞ս...:
Ժխտէ՛... եթէ կրնաս:

Մէնտէս ժպտեցաւ տխրութեամբ:

— Սիրելի օրիորդ... և դու ալ հաւատացիր
... — աւելցուց քաղցր ու յանդիմանական ձեւով
մը:

Ռինա գլուխը վար առաւ՝ իր ուրախութիւ-
նը ծածկելու համար, որ դէմքին վրայ կը փայ-
լէր: Մէնտէսի շեշտը այնպէս ստոյգ էր՝ որ ինքն
ա՛յլևս պզտիկ տարակոյս մը չունեցաւ անոր ան-
կեղծութեան վրայ: Եւ կ'ուզէր ... ներողամտու-
թիւնը խնդրել... երբ Գարմելիդա իրենց մօտե-
ցաւ ուրախութեամբ ժպտելով:

— Այսպէս, պարոն Մէնտէս, ուրեմն ե՞րբ
կը սկսիս նկարը...:

— Իսկոյն... հիմա՛ — թոթովեց Մէնտէս ար-
կար ձայնով մը, մինչդեռ Ռինա աչքերը վար
կ'առնէր՝ բարեկամօհիին հետազօտող ակնար-
կին առջև:

Նկարիչը սկսաւ տենդային եռանդով աշ-
խատիլ: Գրեթէ ժամ մը սենեակը խոր լուծիւն
մը տիրեց: Գարմելիդա մերթ ակնարկ մը կու-
տար ճամբուն:

Յանկարծ սարսոցաւ և ոտքի ելաւ. . մօ-
տենալով երկու երիտասարդներուն.

— Ներեցէ՛ք— ըսաւ, գլուխն անդին դարձնելով որպէսզի դէմքին կարմրութիւնը ծածկէ, որ վայրկեան մը երթամ... ու դառնամ:

Դեռ չէր անհետացած գեղանի սպանուհին. Մէնտէս մէկդի նետելով վրձիններն՝ Ռինայի մօտեցաւ ձեռքէն բռնեց՝ զոր շհամարձակեցաւ մերժել:

— Ռինա՛ — ըսաւ ապա նկարիչը աննկարագրելի գողար շեշտով մը — Ռինա՛, ստո՛յգ է ուրեմն որ կ'ուզես մեռնիլս տեսնել:

Որբուհին դողաց... աչքերը բողով ծածկուեցան, շնչառութիւնը դադրեցաւ, ... և խոր լուսթեան մէջ որ սրահը կը տիրէր, կարելի էր իր կուսական սրտին արագ բարախումը լսել:

— Ես գրեզ կը սիրեմ — շարունակեց տարփանօք Մէնտէս՝ անոր առջև ծնրադրելով — գրեզ կը պաշտեմ ինչպէս երկնից հրեշտակները կը պաշտուին: Դո՛ւ... և իմ արուեստս, անհ երագս: Քու անուշ աչքերուդ առաջին նայուածքը... և ձայնիդ առաջին վանկը՝ հրաբուխ մը բռնկեցուցին հոգևոյտ մէջ: Քու պատկերդ ուրեմն զիս կը հալածէ... քու անուշ դէմքդ սրտիս վրայ դրոշմուած կեցած է: Ռինա՛. զիս մի՛ դատապարտեր անգուծ կերպով... խօսք մը միայն ըսէ... ծնրադիր կը պաղատիմ քեզի...:

Այդ բոպէին Գարմելիդայի քայլերը կը լրսուէին մօտակայ սենեակին մէջ. Որբուհին զգացուած փաթթուեցաւ երիտասարդին ըսելով դող-

դողուն.

— Ոտքի ելի՛ր, պարո՛ն, կ'աղաչեմ...:

— Ո՛չ... մինչեւ որ դատավճիռս արտասանես... մանրերկրորդ մը մնաց... պատասխանէ՛:

Ռինա չվարանեցաւ ա՛յլևս:

Հառաչանք մը որ բառէ մ'աւելի կ'արժէր դուրս թուա իր վարդազոյն շրթներէն, բայց այս հառաչանքը կ'ըսէր յայտնապէս.

— Ես կը սիրեմ գրեզ...:

Գարմելիդա սրահը մտնելով, երկու երիտասարդներն այնպէս գտաւ ինչպէս ձգած էր:

Մէնտէս նկարելու գբաղած. Ռինա անշարժ, թոյլ կերպով թիկնաթուռի մը կռթնած:

Սպանուհին, առանց աղմուկ հանելու, լուսամուտի մ'առջև առանձնացաւ և ապահով որ ոչ ոք իրեն ուշադրութիւն կը դարձնէր, թուղթ մը հանեց ծոցէն, բացաւ և սկսաւ անյագարար կարդալ:

Բայց որչափ կը կարդար Գարմելիդա, այնչափ արիւնը իր գլուխը կը ժողուէր. իր կրծքին հեւքոտ բարախումները՝ որոշակի կը տեսնուէին իր թանկարժէք սւ գեղեցիկ առտնին պարեգօտին տակէն: Երբ ընթերցումը աւարտեց, թերթը ձեռքէն ինկաւ, իր գեղանի գլուխն ետ կախուեցաւ, ձեռքերն կարկամած սրտին վրայ ինկաւ: Բայց այս յուզումնալից վայրկեանը շատ կարճ տեւեց:

Նա կրկին գլուխը վեր առաւ գեղեցիկ ու

աղնուական շարժումով մը. իր սև աչքերուն բոցը կրկնապատիկ վառեցաւ, շրթները տարօրինակ կերպով մը ամփոփուեցան...:

— Ո՛չ... երբեք — մրմնջեց գողգոջուն, բըռունցքը սեղմելով...:

Եւ դարձեալ նամակը առնելով, կատաղաբար գայն կտոր կտոր ըրաւ:

Մէնտէս և որբուհին բան մը շանդրադարձան՝ գերագոյն երջանկութեան մը մտածումին մէջ ընկղմած: Շրթներնին մունչ էին. բայց իրենց ժպիտները ... ու աչքերը ճարտասանութեամբ կը խօսէին:

Ռինայի սիրտը ծանրածանր բեռէ մը թեթեւցած էր... իր հոգին ուրախութեամբ կը յորդէր...:

Նա այլակերպուած կը թուէր, իր գեղեցկութիւնը ա՛յլևս երկրաւոր բան մը չէր... իր աչուրները՝ Մէնտէսի յառած՝ անուշ կերպով մը յուզուած կը փայլէին...:

Սէրը մեծագոյն երջանկութիւն մ'է մաքուր հոգիներու համար. բայց ամենամեծ երջանկութիւն մըն է հաւատալը՝ տարփածուի մը խօսքերուն:

Ռինա այն պահուն կը հաւատար... կը հաւատար եռանդուն նկարչին սիրոյն... և իր սիրտը չէր կրնար ա՛յլևս ըմբռնել արբեցութենէն:

Մէնտէս, բորբոքած՝ զսպած ոյժով, կարմրած, երկչոտ, հաղիւ կը համարձակէր գողգոջուն

տինարկը յառել այն կուսական սիրուն դէմքին վրայ... որ երեւակայածէն աւելի... երազածէն աւելի գեղեցիկ կը թուէր իրեն:

Երկու երիտասարդներն ալ հեշտութեամբ անձնատուր եղան այն զգայացումին որ իրենց կը տիրապետէր: Եթէ արքայութիւն մ'իսկ բացուած ըլլար իրենց առջև, անոնք պիտի չկարենային տեսած ըլլալ: Մարագի ձայնը պէտք եղաւ՝ զանոնք իրենց յափշտակութենէն սթափեցընելու համար:

Սեղանաւորը յութեամբ սրահը մտած էր, և անշարժ, յափշտակուած կեցած էր Ռինայի պատկերի նախագծին առջև:

Գարմելիզա անոր հետեւած էր ոտքի մատներուն վրայ:

— Սյո՛... ճիշտ ինքն է — մրմնջեց Մարագ՝ սպանուհիին ականջէն — նայէ՛ Գարմելիզա՛ ... անիկա իր ժպիտն է, իր աչքերուն արտայայտութիւնը, ... երբ գոհ է:

Եւ աւելցուց բարձրաձայն.

— Կեցցե՛՛ն, պարոն Մէնտէս, ուրախակցութիւններս կը յայտնեմ:

Նկարիչը, այս անակնկալէն զարմացած, ուտում մ'ըրաւ և ստիպուեցաւ պատկերակալին կոթնիլ:

Ռինա ոչ նուազ յուզուած, պլուխը ծոցը՝ իր յանկարծական կարմրութիւնը ծածկելու համար՝ որ գունաւորած էր իր մաքուր ճակատը:

Մարագ շանդրագ արձաւ իրենց այս խռովքը. և մեծ քաղցրութեամբ շարունակեց նայիլ նկարչին:

— Շատ աշխատութիւն ըրած ես, և յողնած պիտի ըլլաս, կարծեմ:

— Ե՛ս, ո՛չ — պատասխանեց, ուրիշ կողմ դարձնելով գէմքը — բայց աւելի օրիորդին...:

Եւ որբուհիին մօտենալով

— Կը ներե՛ս — ըսաւ, բարձրաձայն — եթէ երկայն նստեցուցի...:

Եւ Ռինա պատկերակալին մօտեցաւ, աւելցրնելով անկեղծ դարմանքով և մանկական ուրախութեամբ մը.

— Ո՛հ, ի՞նչ գեղեցիկ է:

Յետոյ բոլորովին շփոթած ծոց խարտեաչ գլուխը, մինչ ուրիշները ժպտելով իրեն կը նայէին:

— Այսօր մեզի հետ կը մնաս ճաշի, չէ՞ — հարցուք Մարագ նկարչին:

— Կը ցաւիմ որ պիտի չկարենամ ընդունիլ ձեր հրաւերքը — պատասխանեց Մէնտէս, որ կը վախէր կասկած մը տալ երկար ժամանակ սեղանաւորին տունը մնալով, ... և առանձնութեան պէտքը կը զգար իր ուրախութիւնը քիչ մը թեթեւցնելու համար: — Առաջուց բարեկամի մը խօսք տուած եմ: Մանաւանդ թէ հրաման տուէք որ քաշուիմ. Վաղը կը վերադառնամ նկարը շարունակելու համար, և հիմակուրնէ կը խոստա-

նամ բոլոր օրը ձեր և ձեր սիրելի օրիորդներուն հետ անցնելու:

— Շատ ուրախ եմ — բացազանչեց գոնութեամբ Մարագ:

Մէնտէս գոյներու պնակիտն ու վրձինները մէկ կողմ դրաւ, և կրկին հրաման խնդրեց սեղանաւորէն:

Ռինայի ձեռքը սեղմած պահուն, զգաց որ անոր ձեռքը իրենուն մէջ կը դողդողար: Յետոյ աղջիկը իրեն նայեցաւ վերջին անգամ մ'ալ և այդ տկնարկը ուրիշ բան չէր նշանակէր եթէ ոչ կրկնութիւն մը քիչ մ'առաջուան խօսքին: «Ես զքեզ կը սիրե՛մ»:

Մէնտէս տուն վերադարձաւ... հարբած, Կ'արձեւս կ'ընկճուէր անհուն երջանկութեան տակ: Ինչպէս քաղցր կերպով տկանջին կը հնչէր Առնոյի հանդարտ ջրերուն Ֆշշոցը, ինչպէս իրեն ուրախ կը թուէր ամէն իր տեսած անցորդի գէմքերը Մէնտէս իր յարկարածիւնը մտաւ, և ծառաները քովէն բաժնուեցան, ինքզինքը իր բուն զգացումներուն մէջ բնկղմեց:

— Նա զիս կը սիրէ — կը բացազանչէր իր ցնորից մէջ — նա զիս կը սիրէ, և իմս պիտի ըլլայ... իմս... Աստուած իմ — աւելցուց ապա — հիմա քեզի կը հաւատամ, քու կարողութեանդ վրայ... և զքեզ կը պաշտեմ... որ ի միտքարութիւն իմ էութեանս՝ քու հրէշտակներէդ մին զրկեցիր: Հիմա այս ըսպէիս, ունիմ՝ ինչ որ

կրնամ ըզձալ այս աշխարհիս վրայ, Ռինանն և...
իմ արուեստս:



ժ.

Ինչպէս գիտենք, այն պարահանդէսին զի-
շերը, Տէ Ռոսսի կոմսին տան մէջ, կեղծ գերա-
կոմսը Սարաք, իր թեւը նուիրած էր Աննինա-
յի, ըսելով անոր գաղտնաբար.

— Կ'ուզե՞ս գիտնալ Մէնտէսի յանկարծակի
գէշ ըլլալուն պատճառը: Հետս եկ'ուր որ ըսեմ
քեզի:

Կոմսուհին առանց վարանելու՝ Նորպերդին
հետեւած էր:

Ծաղկանոցը հասնելով երկուքն ալ տրեւել-
եան բազմոցի մը վրայ նստան, նոնենիներու ան-
տառակի մը ստուերին տակ. և քանի մը վայր-
կեան ոչ մէկը լուծթիւնը չխանգարեց:

Սրահին մէջ խանդավառ կը պարէին, և ե-
րաժշտական գործիքներու ձայները անորոշ կեր-
պով իրենց կը հասնէին:

— Կոմսուհի — ըսաւ վերջապէս Նորպերդ,
տալով իր ձայնին անուշ ծաղրածական արտա-
յայտութիւն մը — դու կը սիրես Մէնտէսը, այն-
պէս չէ՞:

Աննինա սարսուեցաւ, և ոտքի ցատքեց՝ կա-
տաղի և հպարտ ակնարկ մը սեւեռելով երիտա-

սարդին գէմքին վրայ:

— Դերակո՛մս — ըսաւ անոր հեղնական
ժպիտով մը — դու կը մոռնաս այս վայրկեա-
նիս ասպետական օրէնքները:

Նորպերդ ամենայն հանդարտութեամբ տու-
կաց օրիորդի ակնարկին:

— Այս վայրկեանիս՝ միայն սրտի օրէնքնե-
րը կը ճանչնամ ես — թոթովեց անուշ ժպիտով —
և անոնք են որ կը թելադրեն իմ անզգոյշ հար-
ցումս...:

Աննինա դարձեալ նստաւ, քաղցր զուար-
թութեան երեւոյթով մը:

— Չեմ հասկնար ըսածդ — գոչեց, թեթեւ
մը ուսերը շարժելով:

Կեղծ դերակոմսն անոր ձեռքերը սեղմեց ...

— Կը հաւատա՞ս թէ ես քու բարեկամդ եմ
— հարցուց վրդոված ձայնով, սեւեռած օրիոր-
դին նայելով:

— Ինչպէս կ'ուզես որ հաւատամ, առաջին
անգամ է որ զքեզ կը տեսնեմ... և հետդ կը խօ-
սիմ...:

— Բայց ես շատ ժամանակ է ի վեր զքեզ կը
ճանչնամ... օր մը ամէն բան քեզ կ'ըսեմ: Առ-
այժմ կ'աղաչեմ, օրիորդ կոմսուհի, պատասխան
տո՛ւր հարցմանս... հաւատա՛ որ միայն քու օգ-
տիդ համար է... կը սիրե՞ս Մէնտէսը:

Աննինա ջղային սարսուռ մը ունեցաւ:
— Ո՛չ — պատասխանեց դաժանօրէն, գլու-

խը անդին դարձնելով:

— Աւելի լա՛ւ — ընդմիջեց Նորպերդ՝ ճակտին քրտինքը սրբել կեղծելով — ասով խարէ-
ութենէ մը գքեզ կը փրկեմ:

— Խարէութի՛ւն, ..ինչո՞ւ...ըսէ՛ տեսնեմ —
ընդմիջեց Տէ Ռոստի օրիորդը ուժգնօրէն, աւելի
ևս մօտենալով երիտասարդին:

Նորպերդ ծիծաղեցաւ:

— Բայց...ուրեմն գայն կը սիրե՞ս — հար-
ցուց ամենաբնական կերպով:

Կոմսուհին յօնքերը կնճռեց, և գոչեց բունն
թափով:

— Շատ լա՛ւ, այո՛, գայն կը սիրեմ: Հիմա
պիտի բսե՞ս ուրեմն ամէն բան...:

Նորպերդ անայլայլակ հանդարտութիւն մը
կը պահէր, որ աւելի ևս կ'աճեցնէր աղջկան
կասկածն ու անձկութիւնը:

— Վերջապէ՛ս, պատասխա՛ն տուր — գո-
չեց Աննինա, ոտքը գետին զարնելով:

Դերակոմսը հառաչեց:

— Վախնամ որ քեզի մեծ ցաւ մը պատճա-
ռեմ...:

— Բայց քու լուութեամբդ աւելի կ'աճեցը-
նես ցաւս:

— Շատ լա՛ւ — ըսաւ Նորպերդ, քաջասիրտ
— Կ'ուզե՞ս... ամէն բան կ'ըսեմ քեզի... Մէն-
տէս արժանի չէ ո՛չ քեզի, ո՛չ ալ քու սիրոյդ:
Ան ուրիշը կը սիրէ...:

— Եւ այս ուրի՞շը...:

— Մարագ սեղանաւորին սրգեգրած աղջի-
կը. ..

— Գարմելիդա՞ն:

— Ո՛չ...Ռինան:

— Օրիորդը երկու ձեռքով երեսը ծածկեց,
իր գլուխը կը վառէր, կը բորբոքէր, քունքերն
անսովոր կերպով կը բարախէին:

Նորպերդ դեւական ժպիտով մը իրեն կը
նայէր:

— Ո՛հ, ներէ՛ ինձի — բացազանչեց Նոր-
պերդ վայրկեան մը լուութենէ վերջ: — Ձէի
կաբձեր որ այդչափ ահաճութիւն պիտի պատ-
ճառեմ քեզի...:

Աննինա հպարտութեամբ վեր առաւ գլուխը,
աչքերը սուսերի մը սայրին պէս կը փայլէին...
Դէմքը վայրկեանաբար յղացած հաստատ որոշո-
ղութիւն մը կ'արտայայտէր:

Կեղծ դերակոմսը Մարաք, այն ամենայան-
դուզն մարդը, որ երբեք չէր կասէր ոճիրի մը
առջև իսկ, կարմրեցաւ և օրիորդին սպառնալից
ակնարկներուն տակ շփոթեցաւ:

— Դերակո՛մս — ըսաւ Աննինա, այնպիսի
ձայնով որուն տակ կատաղի մըրիկ մը կ'եռար
— ես գքեզ պատուաւոր մէկը կը կարծեմ...:

Նորպերդ գլուխը ծռեց՝ մէկ ձեռքը սրտին
վրայ դնելով:

— Կ'աշխատիմ ըլլալ... կոմսուհի՛:

— Շատ լա՛ւ, ըսածիդ տպացոյց մը կ'ուզեմ: Ես հաւատք չեմ ընծայեր պարզ կասկածներու: — շարունակեց աղջիկը պաղարիւնութեամբ — որոնք կը ձգտին արհամարհանքի քօղ մը նետել, կամ արատ մը... այն սնձանց վրայ գորս կը սիրեմ... և կը յարգեմ...: — Կոմսուհի՛ — ընդամիջեց դերակոմսը սաստիկ վիշտ մը մարել կեղծելով, գոր գզացած կը համարէր օրիորդին իր երեսին նետած նախատինքէն...:

— Կը կրկնեմ, ապացոյց մը տուր, թէ Մէնտէս զիս կը խաբէ — աւելցուց Աննինա հանգարա կերպով, և բաւական արհամարհոտ ժպիտով մը — և այն ժամանակ... կոյր հաւատք պիտի ունենամ վրայ:

— Կուտամ... և շուտ, բայց խօսք տուր որ առայժմ գաղտնիք պիտի պահես ամենուն հետ: Ժպիտը միշտ շրթներուդ վրայ պահէ, և ուրախութիւնը աչքերուդ մէջ... մասնաւորապէս Մէնտէսի ներկայութեան:

— Կը խոստանամ... բայց գիտցի՛ր դերակոմս, որ եթէ դու խաբես՝ դիտեմ ինծի արժանավայել վրէժս լուծել: Մի՛ մոռնար ո՛վ ըլլալս...:

Եւ քայլ մ'առաւ հեռանալու համար:

— Ներէ՛, որ սրահին մէջ քեզի ընկերիմ — ըսաւ դերակոմսը ելլելով և ձեռք տալով:

— Ո՛չ... ազատ թող... մինակ պիտի երթամ: Եւ անգամ մ'ալ կատաղութեամբ նայելով:

— Յիշէ՛... Ը՛է կը սպասեմ — ըսաւ դան-

դադօրէն:

Եւ ծաղկատնէն դուրս ելաւ:

— Գեղեցի՛կ պատան — գոչեց: — Որչափ որ ինք անտարբերութիւն, կատաղութիւն և նախանձ կը կեղծէ, սակայն սրտին մէջ մուտք գտած եմ: Պարզ ապացոյց մը... և Մէնտէս իր աչքերուն ապերախտ հրէշ մը պիտի թուի: Պիտի չուզէ այլ ևս տեսնել զայն... և ես կը կրկնապատկեմ իմ ջանքերս... և իմ մեքենայութիւններս: Շա՛տ լաւ է... Աննինա զիս պիտի սիրէ:

Կեղծ դերակոմսը ժամանակ մը մտածութեանց մէջ ընկզմեցաւ:

— Բայց... ի՞նչպէս ապացոյց մը ձեռք բերել Մէնտէսի խաբեքայութեան — մըմնջեց ինքնիրեն: — Հաւանօրէն ինքն ու Ռինա զերար շատ կը սիրեն: Իրարու հանդիպած ժամանակնին նըշմարեցի իրեն շիկնիլը, շփոթութիւնը... բայց եթէ ես խտրուած ըլլամ...:

Նորպերդ բռունցքը սեղմեց և ատամները կրճակեց հայհոյանք մ'ընելով...:

— Վա՛յ... վա՛յ Մէնտէսին — բացազանչեց: Յետոյ սկսաւ մտքով — Հիմա յոյսս Գարմելիդայի վրան է... պէտք է որ իրեն օգնութիւնը խնդրեմ... նա բան մը պիտի չմերժէ ինծի... այո՛, լաւ մտածեցի... որոշեցի:

Նորպերդ պարասրահը վերադարձաւ իր ծրարագրին վրայ Գարմելիդայի հետ խօսելու համար: Բայց կարելի չեղաւ հնորճալի սպանուհին

նոր պաշտելիներով շրջապատուած էր, որոնք վայրկեան մը քովը նստելով և անոր հետ պարելով հաճոյքնին կը գոհացնէին: Օրիորդին նորօրինակ և դիւթական գեղեցկութիւնը, հրաւիրեալներուն վրայ այնպիսի տպաւորութիւն մը գործած էր, որ անոնցմէ մէկէն աւելի անձինք՝ խանդավառութեամբ կը նուիրէր անոր իր սիրան ու մեծարանաց հաւատարմքը:

Գարմելիդա համարձակութեամբ և աշխուժութեամբ անոնց ամենուն կը պատասխանէր, բայց իր սև աչուրները յաճախ կը դառնային տարփածուին հետքերուն վրայ:

Յանկարծ գոյնը նետեց և սարսոեցաւ, և իր անկեղծ ուրախութիւնը բրտաբար ճնշուեցաւ: Նորպերդը նշմարած էր, որ լուսամուտի մը քով կ'երթար՝ որ ծածկուած էր լայն մետաքսէ վարագոյրի մը տակ՝ յետ ակնարկելու իրեն որ իսկոյն իր քով գայ:

Գեղեցիկ սպանուհին, թողլով իր ասպետները, Ռինայի մօտեցաւ, որ տխուր ու մտածկոտ կեցած էր Մէնտէսի բրտօրէն բաժնուելուն վրայ, ձեռքէն բոնեց, և սկսաւ քանի մը մխիթարական խօսքեր ըսել, անոր հետ սրահին մէջ շրջելով:

Երբ լուսամտին առջև հասան, որուն տակ Նորպերդ ծածկուած էր, Տէ Ռոսսի կոմսուհւոյն հանդիպեցան: Սա խարտեաչ երիտասարդի մը, անգլիացւոյ մը թեւին յենած, որուն հետ պա-

րած էր, ուրախութեամբ ու աշխուժութեամբ կը խօսէր. բայց Ռինան տեսնելուն պէս դողաց ելեկտրական հոսանքէ մը ցնցուածի պէս, և ակնարկով մը թողլով պարոնը, որ յայտնապէս կ'ըսէր «Զիս թող ու դուն հեռացիր» մօտեցաւ երկու բարեկամուհիներուն:

— Գարմելիդա՛ — ըսաւ, մեղմելով ձայնը և անուշ ժպիտով մը — եթէ հրաման կուտաս վայրկեան մը Ռինան տանիմ,...

Եւ այսպէս ըսելով քմասէր օրիորդը, որ կը փափաքէր Մէնտէսի նկատմամբ ո՛րէն նոր բան մը իմանայ, իր հետ տարաւ երկչոտ որբուհին, գուարթ ծիծաղ կեղծելով, իբրև թէ գեղեցիկ սպանուհին գուարձալի բանի մը վրայ խօսած ըլլար:

Գարմելիդա մինակ մնալով չորս դին նայեցաւ, և ապահով որ ոչ ոք կը տեսնէր, լուսամուտի անցքին մէջ մտաւ... և Նորպերդի մօտեհալով դողդոջուն:

— Տե՛ս — ըսաւ ցած ձայնով և անուշ ժպիտով մը — քու ակնարկդ հասկցայ... և եկայ... ի՞նչ կ'ուզես ըսել:

Նորպերդ զայն դիտեց տխուր ու մտածկոտ, առանց պատասխանելու:

— Ի՞նչ ունիս — աւելցուց Գարմելիդա խոր անձկութեամբ անոր դէմքին վրայ սեւեռած նայելով:

— Ինձի՞ կը հարցնես — ըսաւ կեղծ դերա-

կոմսը՝ յանդիմանական ակնարկով մը — կը տեսնեմ գրեզ... հո՛ն... խումբ մը պաշտելիներէ շըրջապատուած... մինչ ես հոս հազար ու մէկ տեսակ նախանձով կը տանջուիմ...:

Գեղեցիկ սպանուհին դարձեալ անոր երեսը խիստ նայեցաւ, և չկրցաւ ծիծաղը բռնել:

— Նորպէ՛րդ ... դու ի՞մ վրայ նախանձիս... բայց ես քեզի ո՛րէ պատճառ չտուի իմ վրաս կասկածելու համար...:

— Ստոյգ է... ներէ՛... յիմար եմ — ըսաւ աղջըկան ձեռքէն բռնելով ու ցնցելով: — Ո՛հ, Գարմելիդա կրկնէ որ զիս կը սիրես միշտ — աւելցուց, հրապուրիչ ու գգուական շեշտով մը:

— Մի՛շտ — պատասխանեց սպանուհին անհուն յուզմամբ, մերթ զլուրը վեր առնելով և տենդային ուրախութեամբ մը անոր նայելով:

— Կը հաւատամ — ըսաւ Նորպերդ խանդով — կը հաւատամ... բայց հիմա փաստ մը կ'ուզեմ քու սիրոյդ:

— Խօսէ՛, գիտես որ պատրաստ եմ կեանքս անգամ քեզի համար տալու...:

Նորպերդ անոր նայեցաւ ժպտելով:

— Քեզի չեմ հարցներ այնչափ — մըմնջեց ականջին:

— Այն ժամանակ... ըսէ ինծի ի՛նչ կ'ուզես:

— Այս վայրկեանիս անկարելի է — ըսաւ լրջօրէն կեղծ դերակոմսը — արդէն հոս շատ երկայն մնացինք. կրնանք յանկարծ մատնուիլ...:

— Ուրե՛մն — հարցուց սպանուհին անհամբեր:

— Վաղը... կամ լաւ ևս այս առտու նոյնիսկ, կէսօրուն մօտերը պալատդ կուգամ: Պատուհանը գտնուէ՛: Հագիւ զիս տեսնես, բակը իջի՛ր, հոն գտնուող ծառաները հեռացո՛ւր. քեզի նամակ մը պիտի յանձնեմ որուն մէջ քեզմէ փափաքածներս գրուած պիտի ըլլան...:

— Ի՛նչ որ ալ ըլլայ, կը խոստանամ քու բոլոր կամքիդ համակերպիլ...: Այսօր իղձդ հրաման մ'է ինծի համար:

— Ի գուր չէի տարակուսած քու գեղեցիկ սրտիդ վրայ. գոչեց Նորպերդ, զայն իր կուրծքին սեղմելով. բայց զրեթէ իսկոյն գլջալով չափը անցընելուն վրայ, բաժնուեցաւ անկից, փրսփրսալով ականջին. — Զգուշաւոր ըլլանք ... շատ երկայն չի տեւեր միշտ քովէ քով ըլլալու երջանկութիւնը վայելու համար: Մնաս բարեա՛ւ... և խնդրածս չի մոռնաս... խոստացար կատարել...:

— Զեմ մոռնար ըրած խոստումներս... մնաս բարեաւ:

Անգամ մ'ալ իրարու ձեռք սեղմեցին, յետոյ Նորպերդ հեռացաւ լուսամուտէն, վստահ թէ ոչ ոք զիրենք տեսած էր, պարասրահը կտրեց, խաղի սենեակը մտաւ, և զիշերուան մնացած մասը հո՛ն անցուց:

Արշալոյսը կը բացուէր, երբ ինք իր յարկաբաժինը մտաւ: Պիանքա Ռովէրպէլլա մարդի-

գուհին՝ հանգիստ կը ննջէր: Նորպերդ սենեակը քաշուեցաւ, և ժամ մը ծրագիրներ դնելէ և մը-տածելէ վերջ, թերթ մը թուղթ առաւ ու գրեց.

«Սիրելի Գարմելիդա,

«Քեզմէ ի՛նչ ծառայութիւն սպասելս, քեզմէ սիրոյ ի՛նչ ապացոյց խնդրելս ըսելէս առաջ, պէտք է որ քեզի յայտնեմ բան մը զոր կ'անգիտանաս, վտանգ մը որ գլխէս անցաւ և ուսկից ազատեցայ վեհանձն երիտասարդի մը ձեռքով»:

«Գիշեր մը, իմ ֆիրէնցէ հասնելէս քիչ վերջ, մինչդեռ ես քու լուսամտիդ տակ կը շըջագայէի, աչքերս յառելով այն պատերուն վրայ որ իմ ամենաթանկագին գանձս կը պատսպարեն, յանկարծ երկու սրիկաներ վրաս յարձակեցան, և առանց այլ և այլի ինձմէ ուղեցին. «Քսակդ կամ կեանքդ»:

«Գիտես որ իմ գիտաւորութիւնս էր անոնց ո՛չ մէկը և ո՛չ միւսը տալ բայց ցնորած այն անակնկալ երեւոյթէն, մինակ գտնուելով և անդէն, մինչդեռ անոնցմէ իւրաքանչիւրը մեծ դանակ մը կը շողացնէր ձեռքին մէջ, տեղի տալու վրայ էի, ոչ առանց պոռալու, երբ երիտասարդ մը լայն վերարկուի մը մէջ փաթթուած, ինծի օգնութեան հասաւ: Բազմշարուածեան ատրճանակ մը հանելով գրպանէն, յարձակողներու ճակտին ուղղելով, ըսաւ պաղարիւնութեամբ. «Եթէ չերթաք, չկորսուիք ... և շուտով ... կրա՛կ կ'ը-

նեմ»:

«Այն երկու սրիկաները, հրամանը կրկնել չտուին, այլ զարհուրած, մէկը այս՝ միւսը այն կողմը փախան: Ես ջերմագին պաշտպանիս ձեռքը սեղմեցի, իմ անունս ծածկեցի, և քաջալերուած իր ազնիւ շարժումներէն, հարցուցի կատակով մը, թէ ինչո՞ւ թողուց որ փախչին այն երկու անիծապարտները, մինչդեռ դիւրաւ կըրնար ձեռքը եղած բազմաբուռածեանով զանոնք կեցնել և ձերբակալել տալ»:

«— Դերակո՛մս — ըսաւ ինծի պատանին, սրտի դաշող մեղամաղձոտ ժանիքով մը — այս ճամբուն մէջ օրիորդ մը կը բնակի, զոր յիմարարար կը սիրեմ: Կուռի մը շառաշը, հրազէնի մը արձակումը կընային զինք վախցնել, զարհուրեցնել, և անիծել տալ ձանձրացուցիչը որ համարձակած էր իր քաղցր հանգիստը խռովելու: Ո՛չ, ո՛չ, թող այն սրիկաները ուրիշ տեղ գանեն իրենց պատիժը»:

«Ես ժպտեցայ անոր ձեռքը սեղմելով: Այն վայրկեանէն սերտ բարեկամ եղանք: Նա խոստովանեցաւ ինծի թէ այն օրիորդը զոր սաստիկ կը սիրէր, ուրիշ ոչ ոք էր բայց միայն գեղեցիկ, թէպէտ կամապաշտ, Տէ Ռոսսի օրիորդ կոմսուհին»:

«Մինչև հոս անշուշտ հասկցած պիտի չըլլաս թէ ի՛նչ յարաբերութիւն կընայ ունենալ այս պատմութիւնը անոր հետ զոր քեզմէ պիտի խնդ-

րեմ. բայց երբ ամէն բան ըսեմ, պիտի չզարմանաս այլևս եթէ ես քու ձեռնտուութիւնդ կը խնդրեմ, և դիւրաւ պիտի ըմբռնես ինչ որ կը յուսամ ու կը սպասեմ քեզմէ»:

«Իմ բարեկամս ուրեմն. խոստովանեցաւ թէ Տէ Ռոսսի կոմսուհին կը սիրէր, տարփալիր սիրով, ամէն դժուարութեան և ամէն արգելքի զընտով, մինչդեռ աղջիկը փոխադարձ անտարբերութիւն ցոյց կուտար: Սակայն այսուհանդերձ նա համարձակեցաւ և կոմսէն Աննինայի ձեռքն ուղեց. կոմսը հիացմամբ ընդունեցաւ այն պատանին, որ ամէն երաշխաւորութիւն կ'ընծայէր՝ ծննդեան, բնաւորութեան, և հարստութեան վերայ. բայց աղջիկը հպարտութեամբ այս խնդիրքը մերժեց»:

«Սեղճ տարփածուն, բոլորովին մոլեգնած, եկու գիրկս ինկաւ, ինծմէ խորհուրդ մը... օգնութիւն մը խնդրելով: Կրնայի՞ր մերժել պատանիի մը՝ որուն կեանքս կը պարտէի»:

«Ես... ո՛չ անտարակոյս»:

«Սկսայ ըսել իրեն թէ օրիորդին մերժումը նուրբ նպատակ մը կը ծածկէր իր մէջ, և այս նուրբ նպատակը ուրիշ բան չէր եթէ ոչ նախանձորդ մը»:

«— Ո՛հ, ստոյգ է — բացազանչեց պատանին զեղումով ձեռքս սեղմելով — այնչափ յամառօրէն ինծի մերժելէն վերջ, պէտք էր որ ուրիշ մը սիրէր: Բայց այս ուրիշը ի՞նչպէս զըտ-

նել»:

«Որոշեցինք ուշադրութեամբ աղջկան վրայ հսկել... և շատ շուշացանք զիտնալու թէ օրիորդը ուրիշ օտարական նկարչի մը պաշտամունքները կը վայելէր, որ ժամանակէ մը ի վեր իր վրայ խօսիլ կուտար, իր արտատոց կեանքին, և իր ցուցահանդէսին դրած մէկ մեծ պատկերին համար»:

«Բարեկամս կ'ուզէր ուզգակի երիտասարդին ներկայանալ, բայց ես իրեն ցցուցի որ անօգուտ էր այդպիսի ձեռնարկ մ'ընելը, և այդպիսի գաղափարէ մը հրաժարեցաւ»:

«Սակայն կըցանք իմանալ թէ օտարականը, Մէնտէս, յիրաւի սիրահարուած է խաբտեալագէտ ու երկչոտ աղջկան մը, որուն հանդիպած էր Տէ Ռոսսի օրիորդի տան մէջ... և անոր հասնութիւնն առած: Եւ աւելորդ է ըսել թէ երիտասարդ նկարչին միակ գողափարականն է Մարտի որդեգիր որբուհին, դու այժմ ինծմէ աւելի տեղեակ ես»:

«Այս կրկին մեքենայութեան յայտնութիւնը, միակ բարեկամիս նպատաւոր եղաւ: Ծանշնալով կոմսուհին քմասէր և երեւակայտ բնաւորութիւնը, ապահով էր թէ Մէնտէսին ամենափոքր անհաւատարմութիւն մը՝ բաւական պիտի ըլլայ՝ օրիորդին սէրը արհամարհանքի փոխելու»:

«— Բայց ի՞նչպէս ապացուցանել հակառակորդիս նենգութիւնը — ըսաւ ինծի բարեկամս,

միշտ նախանձու և կատաղի գրգուռ թեամբ ճնշու-
ուած»:

Գաղտնի ձայն մը՝ այն ժամանակ ականջէս
փսփոսաց, թէ պէտք եմ ես քեզի դիմել, թէ քեզ-
մէ՛ միայն, սիրելի՛ Գարմելիզա, կը կախուէր բա-
րեկամիս երջանկութիւնը... թէ դո՛ւ միայն, հո-
գի՛ս, կրնաս իմ առ նա ունեցած պարտքս հա-
տուցանել... իմ կեանքս փրկա՛ծ ըլլալու համար»:

«Ես վստահ եմ, ամենավստահ, թէ դու պի-
տի չմերժես ինծի օգնել, մտածէ՛ թէ ամբաս-
տանեալը որ դատաւորաց խորհրդակցութենէն
կը սպասէ իր կենաց կամ մահու վճիռը, այն-
չափ չի տառապիր որչափ կը տառապի բարեկամս,
և ես ալ կը սպասեմ պատեն առթիւ՝ կեղծաւոր
տարփածու մը խայտառակելու համար»:

«Եւ ահա իմ ծրագիրս: Քիչ օրէն Մարագ
Թորինոյ պիտի մեկնի, գործ մը ճշտելու համար,
որ գրեթէ շաբաթ մը կը տեւէ: Մի՛ հարցնեք ին-
ծի թէ ի՛նչպէս իմացայ. բաւական է որ ես շի-
տակը կը խօսիմ: Եթէ Մէնտէս և Ռինա զիրար
կը սիրեն, ինչպէս ապահով եմ. առիթէն պիտի
օգտուին իրարու քով գալու. դո՛ւ պէտք ես կա-
րելի եղածն ընել. որ այս մերձեցումը տեղի
ունենայ... և օր առաջ: Եւ ես համանուն նա-
մակով մը Աննինայի պիտի իմացնեմ, ըսելով, որ
եթէ կ'ուզէ իր սիրած մարդը ճանչնալ, այս ինչ
ժամուն՝ օրիորդ Մարագի այցելութեան թող եր-
թայ: Հո՛ս պէտք է զեղեցի՛կ տեսարան մը կազ-

մակերպել: Զանա՛ ծառաներն հեռացնել, դու ալ
հեռացիր, ուշադրութիւն դնելով որ դուռը կի-
սաբաց մնայ: Ի՛նչ պէտք է այն ժամանակ կա-
տակերգութիւնը լուծուելու համար, որ բարե-
կամիս երջանկութիւնը կը պատրաստէ: Ոչի՛նչ:
Որովհետև օրիորդ կոմսուհին, իր նախանձոտու-
թեամբ, ինքն ալ պիտի փութացնէ եզրակացու-
թիւնը: Ոչ ոք գտնելով նախասենեակին մէջ,
համարձակ միւս սենեակները պիտի մտնէ մին-
չև որ պիտի հասնի այն սենեակը, որուն մէջ
գուգած պիտի ըլլաս երկու սիրահարները: Այն
ժամանակ օրիորդը ապահով միջոցին պիտի դի-
մէ. բայց չափազանց հպարտ իր պարտութիւնը
ցոյց տալու և զղջացած իր տկարութեան վրայ,
ամենայն հանդարտութեամբ հրաման պիտի
խնդրէ սենեակը մտնելու. և ապահով եմ ... թէ
հակառակ իր կատաղի զայրութին՝ նա ինքզինք
հանդարտ ցոյց պիտի տայ և միանգամայն ար-
համարհոտ ... և պիտի կարծէ վրէժը լուծած ըլ-
լալ երիտասարդէն, ուրիշ մը պաշտամունքներն
ընդունելով: Եւ այս ուրիշը, ինչպէս պիտի գու-
շակես, իմ բարեկա՛մս պիտի ըլլայ...»:

«Գարմելիզա՛, զիս օրամուտութեանդ կը յանձ-
նեմ: Դու որ կեանքիդ մէջ այնչափ եզերական
դէպքերու փորձառու եղած ես, տարօրինակ պա-
տահարներու զիւցադնունին եղած ես, այս քեզի
համար նոր բան մը չէ՛ որուն քու ձեռնտու-
թիւնդ կը խնդրեմ»:

«Կը սպասեմ երկտողիդ: Նամակդ զրկէ գե-
րակումս Նորպերդ Սարաքի հասցէին»:

«Յուսամ թէ շուտով կը տեսնուինք Տէ Ռոս-
սիի տան մէջ. և միանգամայն կը յուսամ, մինչ-
դեռ սեղանաւորը բացակայ է, անգամ մ'եւս
վայել մեր անուշ տեսակցութիւնը... Այնպէս
չէ՞, անուշ սիրուհիս: Յետոյ մեր միութեան...
մեր մշտնջենաւոր երջանկութեան ժամը՝ յիշէ՛...
թէ շատ հեռի չէ. »):

«Միշտ քոյդ»

«ՆՈՐՊԵՐԴ»

Երբ նամակն աւարտեց, կեղծ գերակուման
Սարաք հանգարտութեամբ անկողնոյ վրայ նետ-
ուեցաւ և քանի մը ժամ քնացաւ:

Կէս օրուան մօտ Սարաքի պալատին դի-
մաց նրբանցքին վրայ վեր վար կը շրջագայէր:
Տեսաւ որ Սարաք զուրս ելնելով, եկաւ իր մօ-
տէն անցաւ, բայց մտածմանց մէջ ընկղմած ոչ
իսկ աչքերը վեր առաւ:

Շուրջ ժամ մը վերջ, Նորպերդ առանց տես-
նուելու նամակը յանձնէր Գարմելիդայի:

Բայց, ինչպէս գիտենք, գեղեցիկն Անտա-
լուզա, յետ այն վատ ու անպատիւ առաջարկը
կարգալու, հաստատ առաջադրութեամբ բացա-
զանչած էր:

— Ո՛չ...երբե՛ք...:

Նորպերդ այս անգամ, պէտք էր տուժե՛ր:

ԺԱ.

Կեղծ գերակուման Սարաք իրաւունք ունէր
լսելու թէ սեղանաւորը կարեւոր գործերու հա-
մար Թորինոյ կանչուած էր: Իրաւցնէ, իր հա-
ւատարիմ ծառան Լաւրինտիոս իրեն գրած էր
Տէ Ռոսսի կոմսին տան մէջ ըլլալիք պարահան-
դէսին օրը, նշանակելով միանգամայն թէ անհը-
րաժեշտ էր որ ինք քանի մ'օր Ծիրէնցէէն բա-
ցակայէր:

Մարագ մինակ պիտի ձգէր իր աղջիկներն,
թէ միասին պիտի տանէր: Մարագ չուզեց վեր-
ջինս ընել. նախ՝ որ կը ցաւէր որբուհին այն
ընկերական ժամանցներէն զրկել, որոնց վարժը-
ւած էր. երկրորդ՝ որ այն գործը քանի մ'օր-
ուան բացակայութեան խնդիր էր, և երկու աղ-
ջիկները կրնային շատ լաւ դաստիարակուհիին
հսկողութեան տակ մնալ, և իր Տէ Ռոսսի բարե-
կամն ալ որ դիմացը կը բնակէր, կրնար իրենց
վրայ հսկել:

Այս որոշեց Մարագ, և պարահանդէսի զի-
չերն իսկ իր ազնիւ բարեկամին հետ խօսեցաւ
այս բանիս վրայ. և Նորպերդ, որ իրենցմէ քիչ
հեռու կը գտնուէր, այն խօսակցութենէն բաներ
մը լսեց և վերջապէս հասկցաւ թէ Մարագ գոր-
ծերու պատճառաւ առանձին Թորինոյ պիտի
մեկնէր...:

Մարագ հաստատապէս որոշած էր, մեկնելէ առաջ, Ռինայի յայտնել իր սրտին վիճակը, և ծնրադիր անոր նուիրել իր ձեռքը:

Միեւնոյն օրը յորում Մէնտէս որբուհիէն այն սիրոյ քաղցը խօսքն ընդունած էր. որ դարերէ հետէ տարփաւորներու շրթունքները կը թարչամեցնէ, և սակայն միշտ քաբցը, միշտ գեղեցիկ կը թուի...: Մարագ Ռինայի նախադիծ իւղաներկին առջև նստած, ինքն իրեն կը մըրմընջէր. «Այս գեղանի, այս աստուածային էակը... կրնայ իմս ըլլալ»:

Մինչդեռ ընկղմած էր այսպիսի հեշտալի գառանցանքներու մէջ, ուսին վրայ թեթև շոշափում մը զգաց, և դառնալով որբուհիին թարմ ու ժպտուն դէմքը նշմարեց:

— Այսօր շրջագայութեան պիտի չելլենք — ըսաւ անուշ ընտանութեամբ մը — վասնզի Գարմելիդա սենեակը քաշուած՝ հօրը նամակ կը դրէ:

Մարագի գունատ դէմքին վրայ ուրախ ժըպիտ մը փայլեցաւ:

— Եւ...զքեզ մինա՞կ թողած է — հարցուց ցած ու գողգոջուն ձայնով:

— Այո՛...բայց ես զքեզ մտածեցի և եկայ որ քիչ մ'ընկերութիւն ընեմ...:

— Շնորհակալ եմ. Ռինա՛ — ըսաւ Մարագ զգացուած — շնորհակալ եմ.. մանաւանդ որ քեզ հետ երկայն խօսելիք ունիմ:

Օրիորդը սարսուռ մը զգաց և զրեթէ զզջաց հոն գալուն վրայ: Սակայն ջանալով իր ծանր տպաւորութիւնը փարատել, թոթովեց:

— Ի՞նչ պիտի ըսես ինձի, բարեկամս:

— Թէ վաղը ես Թորինոյ կը մեկնիմ — պատասխանեց սեղանաւորը ժպտելով տխրաբար:

Այս պատասխանը օրիորդին սարսափը խաղաղեց:

— Կը մեկնի՞ս — բացազանչեց չհասկցողի շեշտով մը:

— Այո՛ — կրկնեց Մարագ: — Կարեւոր գործերու համար կը կանչուիմ... բայց պիտի աշխատիմ շուտով վերջացնել զանոնք...որ ձեր քով վերադառնամ...:

— Ուրեմն մենք մինա՞կ պիտի մնանք...:

— Ժամանակ մը, այո՛, սիրելի Ռինաս...:

բայց ես պիտի շտապեմ եթէ ոչ ուրիշ բանով չէթ իղձով...Ժամերը որ զմեզ իրարմէ կը բաժնեն...յաճախ ձեր քով պիտի գամ մտքովս: Միւս կողմանէ Տէ Ռոսսի կոմսն ալ ինձի խոստացաւ որ իմ բացակայութեան ժամանակամիջոցին ձեզի հայրութիւն ընէ... դուք իրեն և Աննինային հետ միասին շրջագայութեան ելէք... տան մէջ աղախինը բաւական է... և յետոյ Գարմելիդա բաւական խելք ունի ընտանեաց մը գլուխը կենալու:

— Գարմելիդայի բան մը չըսի՞ր դեռ — հարցուց Ռինաս անկեղծութեամբ:

Մարագ իրեն նայեցաւ մեկամաղձոտ ժպիտով մը, պատասխանելով.

— Ո՛հ... կ'ուզէի նախ քեզի հետ խօսիլ... ըսելու... թէ...:

Կարծես Մարագ կը վարանէր:

— Ի՞նչ բան — բացագանչեց աղջիկը յանկարծակի թափով մը:

— Մտիկ ըրէ — ըսաւ Մարագ յուզուած շեշտով՝ որբունիին մօտենալով — կը յիշե՞ս դեռ այն գիշերը՝ յորում վատահամբաւ մարգիզուն հին Պրանքա Ռովէրպէլլա զքեզ ինծի յանձնած էր:

Ռինա գլուխը ծոց, շառագունած ... և լըւեց:

— Այս վերջիշուններս զքեզ կը սարսափեցընեն, կը տեսնեմ — շարունակեց Մարագ տըխրութեամբ — բայց ուշադրութիւն դիւր խօսքիս, խնդրեմ... համբերութիւն և վստահութիւն ունեցիր վրաս և պատճառը շուտով կ'ըմբռնես, որուն համար անցեալը քու կուսական երեւակայութեանդ մէջ կը վերանորոգեմ:

Որբունիին կեցուածքը ցոյց կուտար որ իր ուշադրութիւնը բոլորովին սեղանաւորին վրայ կեդրոնացուցեր էր, ասոր համար, Մարագ լի զգայուն շեշտով մը շարունակեց.

— Այն բոլորին ... տարփանքէս դիւրեւած, կեանքս կը նուիրէի, քովդ նստելու հաճոյքն ունենալու համար: Այնպէս ցնորած, ինքնիրմէս

դուրս ելած էի, որ ամենազիւրին կը նկատէի յաղթանա՛կաւ: Կը կարծէի քու մէջդ գտնել տրկար աղջիկ մը, բայց փորձը՝ դիւրաւ նուաճուելու հաճոյքի տինկալութիւններով դիս հրճուեցուց... և ընդհակառակն ինքզինքս ազնուական և հրեշտակային էակի մ'առջև գտայ, որուն ոտքի կոխած փոշիին անգամ արժանի չէի...: Ասոր համար ես ինծի դէմ դարձայ, ամչցած և դայրացած գարշելի գործին համար, զոր կատարելու մօտ էի:

Մարագ կեցաւ վայրկեան մը: Ռինա սկսաւ գողգղալ և ամօթխածութիւնը անոր սպիտակ ճակատը ծիրանեգոյն ներկեց:

— Եթէ ես սակայն տկարութիւնը ունեցայ անպատիւ վաճառաշահութեան մը մասնակցելու — շարունակեց Մարագ բարձր ձայնով — նոյնքան ալ դիտակցութիւնն ունէի ապականող չըլլալ այն կնոջ նման որ զքեզ ծախեց. այո՛ ... հազիւ թէ զքեզ մօտէն ճանչցայ... և քու ցաւոց արցունքները նշմարեցի, կուրծքիս տակ սրտիս բունը զարկերը, և իղձերու տենդերը խղճեցի... և փոխանակ քեզ հետ տարփալի սիրահարի մը յեղուով խօսելու, խօսեցայ՝ ինչպէս հայր մը կ'ընէր իր սիրասուն մէկ աղջկան: Ի՞նչ չէ՛ի տար՝ իմ առաջին տեսութեանս քու վրայ թողած տըպաւորութիւնս սրտէդ ջնջել տալու համար...:

Մարագ դարձեալ լըեց, կը տառապէր:

— Ո՛հ, այո՛ — գոչեց Ռինա երախտագէտ

զգացումով մը՝ բռնելով սեղանաւորին ձեռքը և իր շրթներուն տանելով — դու պատուաւոր գանուեցար ... ես ալ խելացի գանուեցայ քեզի հաւատարուս ... այո՛ ... դու զիս մեծ վտանգէ մ'ազատեցիր, և ես շնորհակալ եմ ... ամէն օր զքեզ կ'օրհնեմ...

— Կը հաւատամ խօսքիդ, Ռինա՛, կը հաւատամ ընդմիջեց Մարագ տարօրինակ ուժգնութեամբ — և չես կրնար երեւակայել թէ ի՛նչ քաղցր սփոփանք կը պատճառէ ինծի քու սէրդ։ Ահաւասիկ ապացոյց մը թէ դու լիովին ինծի ներած ես... իմ անցեալս... և զիս կը յուսացընեն զուարթ ու ժպտուն ապագայով մը...

Այս վերջին խօսքերս Մարագի շրթներէն հատիկ հատիկ դուրս ելան... կարծես տպաւորելու համար աղջկան սրտին մէջ. իր ձայնը կը թրթռար և աչքին բիբերը կը փայլէին։

Ժպիտը որբուհիին վարդագոյն բերնէն տներեւոյթ եղաւ։ Ուրուականի մը պէս գոյնը նետեց, և տեսակ մը սարսափ տիրեց վրան։ Ի՛նչ ըսել կ'ուզէր սեղանաւորը այն շիշտուած բաներով։

— Ռինա՛ — հարցուց Մարագ վայրկեան մը լուռութենէ վերջ — արդեօք մտածած չե՞ս աւելի քաղցր, աւելի ապահով կապի մը վրայ քան ինչ որ հիմա ունինք իրարու հետ։ Տեսած չե՞ս բնաւ երազներուդ մէջ, երջանիկ տեսակ մը՝ բոլորովին բուրումնաւէտ և բանաստեղծութիւն

ներշնչող... երկու հոգիէ բաղկացեալ... յորում ոչ միայն մաքուր ու անգորր միութիւն մը կը վայելես, այլ սրտիդ ուղածին պէս մշտնջենաւոր, վառ սէր մը։ Դու ինծի կը նայիս, սիրուն օրհորդ, բայց բան մը չես ըմբռներ... այնպէս չէ։

— Ո՛չ... թոթովեց Ռինա զողզալով։

Իրաւցնէ քան չէր հասկնար Մարագի ակնարկութիւններէն։

Իր աչքերը սեւեռած էր սեղանաւորին վրայ տեսակ մը պարզամիտ զարմանքով։ Կարծես ոչ իսկ կը կատկածէր թէ իր երջանկութեան վրայօք կը խօսի...

Մարագ վայրկեան մը հիացած գիտեց այն զանգուր խարտեաշ մագերով հովանաւորուած շնորհալի գլուխը, որ չքեղ կերպով մը գէպ իրեն ծռած էր... և իր սիրտն սկսաւ ուժգին բաբախել... Յետոյ յիմար, անտեղի զազափար մը յղացաւ թէ զուցէ Ռինա զինք պարկեշտ զգացումով և լուելեայն կը սիրէր... առանց համարձակելու զոյն իր մաքուր վիճակին մէջ իրեն յայտնելու... ուստի մօտեցաւ, բռնեց անոր ձեռքերն և մէկ ծունկը գետին դրած.

— Ռինա՛... — թոթովեց — Ռինա՛ ... խօսէ՞։
Զիս քեզի ամուսին կ'ընդունի՞ս...

Խեղճ օրհորդը կարծես կայծակնահար եղաւ. բերանաբաց... այլայլած... քարացած... տոանց կարենալու բառ մը արտասանել։

— Մինչև ցորդ կըցայ սէրս սանձել, — շա-

բունակեց Մարագ, խանդավառութենէն ոգեւորուած և իրեն նպաստաւոր կարծելով աղջկան ապշահարութիւնը — բայց այլևս զքեզ կ'ուզեմ, այլևս կը զգամ թէ չեմ կրնար դիմադրել այն խորհրդաւոր ոյժին որ զիս քեզի կը քաշէ: Եթէ ինձի կին ըլլաս, քու ապագագ ... և իմ ու քու երջանկութիւնդ կ'ապահովեմ: Եթէ փափաքես Ֆիրէնցէ մնալ ... միշտ հոս կը կենանք. եթէ կը սիրես ճամբորդել, ես երջանիկ պիտի ըլլամ քեզի նպաստելու: Վերջապէս պիտի չունենաս իդձ մը՝ զոր փառք չհամարեմ ինձի գայն լրացնելու: Իմ ինչքս, իմ կեանքս ... բոլոր քու ոտքերուդ առջև կը դնեմ ... Ռինա՛ ... դեռ ես չմեկնած, քեզմէ չհեռացած, յոյսի խօսք մը տո՛ւր ինձի...: Յանձն կ'առնուս ինձի կին ըլլալու:

Զարմանքը, շփոթութիւնը, երախտագիտութիւնը համայն տեսակ մը ջերմ բորբոքած էին աղջկան արեան մէջ, որ համբերել տուաւ իրեն սեղանաւորի խօսակցութեան ժամանակամիջոցին: Հազարաւոր պատկերներ կը խոռվէին իր ըզեզը...: Մարագի խօսքերը, իրեն համար տեսակ մը յայտնութիւններ էին...:

Ինքը մինակ էր աշխարհի վրայ, առանց ծընողաց, և առանց բարեկամի...: Ինչ բան կը յուսար երկրիս վրայ: Մէնտէսի պատկերն իրեն երեւցաւ և կարծէր թէ իր տկարութիւնը կը յանդիմանէր: Ռինա կ'ուզէր ոտքի ելնել, քաշարտիլ... պոռալ. «Ո՛չ ... չեմ կրնար քեզի կին»

ըլլալ... վասնդի ուրիշ մը կը սիրեմ... և այս ուրիշը դո՛ւ չես»:

Բայց եթէ իր ոգին քաջասիրտ էր, սակայն բնարորութիւնը երկչուաւ: Եւ յետոյ նոյն բանը չէ՛ր մահ պատճառել մարդու մը որ այնչափ անձնագոհութեամբ իրեն կը ծառայէր, որ իրեն համար վտանգներ ու շարախօսութիւններ կ'արհամարհէր... որ իրեն պատուաբեր ապագայ մը կը խոստանար...: Եւ կրնա՞ր ինքն յուսալ Մէնտէսի կին ըլլալու...: Եւ իր պատիւը, լաւ դիրքը չէ՛ր պարտէր այս մարդուն... որ իր ոտքերուն տակ խոնարհ... ծնրադիր կը կենար... զթա՛յ և սիրտանքի խօսք մը հայցելով:

Երախտագիտութեան զգացումը իրեն գերբընական ոյժ մը տուաւ:

— Պարոն Մարա՛գ — ըսաւ խոռված՝ բայց հաստատուն ձայնով — պարոն Մարա՛գ... կ'ընդունիմ առաջարկդ...:

Սեղանաւորը ուրախութեան աղաղակ մ'արձակեց...:

— Այո՛ — շարունակեց աղջիկը — ես քու կինդ պիտի ըլլամ... բայց պայմանով մը:

Մարագ դեռ ծնկան վրայ էր, երանութեան մը մէջ ընկղմած, բայց այս խօսքերուն վրայ ոտքի ելաւ:

— Խօսէ՛ — ըսաւ աւելի մօտենալով — խօսէ՛... և ինչ ալ ըլլայ հրամաններդ...:

Ռինա համարձակեցաւ անուշ շարժում մ'ը-

նել, իբրև ըսել ուզէր. «Հո՛ս հրամանի խնդիր
չկայ... այլ պար շնորհք մը»: Յետոյ շարունա-
կեց բարձրաձայն.

— Կը փափաքիմ որ մինչև Թորինոյէն դառ-
նալու ըլլաս, մեր ամուսնութիւնը զաղտնի պա-
հես: Քու բացակայութեանդ ժամանակ ես ոչ
մէկուն չեմ ըսեր... կը խոստանամ:

— Ի՛նչպէս կը փափաքես, այնպէս կ'ընեմ:
Ա՛հ, չեմ կընար երեւակայել Ռինա՛, ինչ որ կը
զգտմ այս վայրկեանիս: Քու ամուսինդ ըլլալու
համար, սիրով կուտայի իմ մնացած բոլոր կեան-
քըս, ի բացառեալ մէկէ՛ մը: Ըսէ՛ սակայն թէ
երախտագիտութիւնը չէ միայն որ զքեզ մղած
է իմ ձեռքս ընդունելու... ըսէ՛ թէ սիրոյ ձայնը
այլևս քեզի ծանր չի հնչեր: Չեմ ուզեր զքեզ
չարչարած ըլլալու խղճի խայթն ունենալ: Սրտիս
ցաւէն կը մեռնիմ, եթէ գիտնամ թէ իմ պատ-
ճառաւս դժբախտ եղած ես ...

Այս զգացումները Մարագի այնպիսի կա-
տարեալ բարութեան մը արտայայտութիւնը
կուտային, որ Ռինա զգածուեցաւ: Իսկոյն ձեռ-
քերը երկնցուց և տխուր մը ժպտելով անոր
պատասխանեց.

— Ապահով եզի՛ր, ես զքեզ պիտի սիրեմ...
որչափ արժանի ես:

— Ո՛հ, շնորհակալ եմ, Ռինա... շնորհակալ
եմ—մըմնջեց Մարագ բորբոքած՝ զայն կուրծքին
սեղմելով ... և խոնարհելով դէպի այն անբիծ

ձակատը...: Բայց զրեթէ իսկոյն բաժնուելով,
բացազանչեց՝ զգալով իր ազնիւ առաջադրու-
թեան մէջ դեղեւիլը.— Մնաս բարեա՛ւ ... մնաս
բարեա՛ւ ... կ'երթամ ... տունէն դուրս կ'ելնեմ,
վասնզի կը վախեմ ինքզինքս ուրիշի մը մասնել
... և պէտք ունիմ խաղաղութեան, հանգիստ սրը-
տով մեկնելու համար: Բայց... շուտով պիտի վե-
րագառնամ ... շուտով որ այլևս իրարմէ չբաժնը-
ուինք...:

Մարագ շտապաւ սրահէն մեկնեցաւ:

Ռինա մինակ մնալով զգաց բոլոր իր խան-
դավառութեան մարիլը. տկարութիւն զգաց և
սպառնացող վտանգէն սարսափած, դիակի պէս
բազմոցի մը վրայ ինկաւ, յորդանոս արտասուե-
լով:

— Ո՛հ, ինչո՞ւ քաջութիւնը չունեցայ հա-
մարձակ սրտիս վիճակը անոր յայտնելու— մըր-
մընջեց հեծկտալով— ինչո՞ւ...: Ապերախտութիւն
պիտի չըլլա՞ր: Չէի՞ գիտեր գուցէ թէ իմ մեր-
ժումս զայն պիտի սպաննէր: Բայց իմ խոստումս
... զի՛ս պիտի սպաննէ...: Ո՛չ ... ես չեմ կընար
իրենն ըլլալ ... սուտ են խօսքերս ... ես զինքը
չեմ սիրեր ... սիրած չեմ բնաւ... ես միայն Մէն-
տէսը սիրած եմ...: Ո՛վ Աստուած իմ... Աստուած
իմ... բայց ուրեմն ստո՞յգ է ինձ որ պատահեցաւ
... թէ խենթեցած եմ:

Ռինա զրեթէ ժամ մը իր մտածութեանց
մէջ ընկղմած մնաց: Բոլոր անցեալը իր առջեւ

եկաւ: Տեսաւ նախ գահաւանդը որուն մէջ իմանկութենէ ինկած էր իր մօրը հետ: Որոշակի տեսաւ խեղճ կնոջ սառած դիակը իր ոտքերուն տակ, արեան ընդարձակ հետքը ձեան վրայ, յետոյ ինքը դիակը գրկած ... ցուրտէն դողդալով յուսահատաբար օգնութեան կանչելով:

Երբ այս տեսարանը կ'անհետանար՝ ուրիշ մը կը յաջորդէր: Պզտիկ ու զուարթ գեղջկական տնակն էր, զոր Ռինա իր շատախօսութեամբ ու քրքիչներով կը զուարթացնէր: Ո՛հ, երանի՛ այն օրերուն, յորում անվիշտ, անհոգ գաշտերը կը չափչփէր, ուրիշ բան չունենալով շուրջը՝ բայց միայն ծաղկունք ու դալարիք... և վերը երկինք՝ որ իրեն կը ժպտէր:

Տեսարանը դարձեալ կը փոխուէր և Ռինա կը գտնուէր ընդարձակ պալատի մը մէջ, մեծղի և միածոյ պատուհաններով, գեղեցիկ ու կախարդիչ կնոջ մը կուշտին, որ զինք գգուելով կ'ողողէր և զինք աղջիկը կը կոչէր:

Ի՛նչպէս ինքզինք երջանիկ կը զգար ... վերածնած այն փոխադարձ սիրոյն մէջ:

Յետոյ կը յիշէր այն սո՛վալի գիշերը յորում ծախուեցաւ... և բոլոր իր մարմինը կը սարսուար ... և բազմօցին վրայ ուժէ կը սպառէր՝ վախէն ու յուզումէն սարսափահար:

Մէնտէսի գէմքն իրեն երեւցաւ, որ զինք կը մխիթարէր: Ինչպէս գեղեցիկ էր: Որչափ կը սիրէր զայն: Կարծէր ըսել զեռ անոր փայփա-

յիչ ու անուշ շեշտը, որ իրեն սիրոյ հազարաւոր խօսքեր կը փսփսար ... վայրկեան մը յաւիտենական երանութեան մը մէջ ապրեցաւ...:

Բայց շուտով իր երազներուն փայլուն աստղը ծածկուեցաւ իր տեսութենէն... և Ռինա ճշմարտութեան մ'առջև գտնուեցաւ, ցաւալի ճշմարտութեան մը, որ կուգար բոլոր իր սիրելի ցնորքները ցնդեցնելու...:

Արեւը մաքը մտնելու վրայ էր:

Ռինայի գտնուած սրահը ամայի էր... լուռ... և թմրած: Օրուան մահամերձ լոյսը, ընդարձակ յուսամուտներէն ներս մտնելով, յատակին վրայ կը զարնէր, առարկաներուն կուտար անորոշ ... ցնորական ... զրեթէ մահագոյժ կերպարանք մը:

Ռինա տառապագին և երկուղալից անբացատրելի զգացումով մը վարակուեցաւ: Կարծեց Մէնտէսը տեսնել, անշարժ, պատկերակալին կոթնած, սառնորակ և սպառած ակնարկ մը իր վրայ սեւեռած, և իր կուրծքէն տկար հեծութիւն մը դուրս կուգար, որ սրահի տարածութեան մէջ կը կրկնուէր և իր ականջին մօտէն իբրև շշում մը արագ կը սահէր... և այն հեծութեան, ողբի ձայնն էր մի միայն իր անուան կրկնութիւնը:

Պազ քրտինքով ծածկուած ձակատով, տենդային և վառվռուն աչքով, Ռինա փորձեց ոտքի ելլել... փախչիլ ... բայց ուժը կը պակսէր: Իր գեղեցիկ իրանը ծալուեցաւ, զլուխը բարձին

վրայ ինկաւ՝ շրջասփիւռ մնալով իր խարտեաշ մագերուն խոստովիները...

Սեղճ աղջիկը չէր կրցած տոկալ այնչափ յուզմանց... և դալկացած էր:



ԺԲ.

Գարմելիդա, հօրը նամակ գրելու պատրուակով, սենեակը քաշուած էր, ինքզինք իր մտածութեանց մատնելով:

Երկայն ժամանակ գլուխը ձեռքերուն մէջ առած կեցաւ, մտածելով Նորպերդի իրեն գրածներուն վրայ, և մտքին մէջ հազար մեկնութիւններ տալով, մէկը՝ միւսէն աւելի տարօրինակ:

Յանկարծ գաղափար մ'ունեցած էր. որ Նորպերդ այն առաջարկն իրեն ըրած էր միայն իր սէրը ու սրտին ազնուութիւնը փորձելու համար: Թէ պատրուակ մըն էր իր հետ յարաբերութիւնը խզելու, զիտնալով որ հակառակ պիտի կենար՝ այսպիսի անարգ դաւադրութեան մը, և պիտի մերժէր:

Բայց...

Գարմելիդա շատ շուտ վանեց այս վերջին ենթադրութիւնը՝ տեսակ մը ինքնիրեն դէմ դայրոյթով:

— Եւ ինչո՞ւ համար արդեօք միշտ կը տա-

րակուօրիմ իր սիրոյն վրայ, — կը մտածէր — և սակայն ոչ իսկ երէկ երեկոյ կրցայ ապացոյց մ'ունենալ, հակառակ իր անհուն... խանդավառ վիճակին: Արդեօք միայն ինծի համար չէ՞ որ Տէ Ռոսսի տունը եկաւ:

Եւ գեղեցիկ սպանունին հաճոյքով կը յիշէր կեղծ դերակոմսին հետ իր ունեցած խօսակցութիւնները, և ինքն իրեն մըմնջելով:

— Ո՞րչափ զիս կը սիրէ: Ո՞վ զիտէ քանի կիներ իմ երջանկութեանս կը նախանձին: Ի՞նչ ըրի ես որ այնչափ պաշտամունքի արժանի եղայ: Ինքը ազնուական, հարուստ և գեղեցիկ, նախատինք չի՞ համարեր իրեն ինծի պէս մագսանենգի մը աղջկան ամենաջերմ ու քաղցր սիրոյ հաւաստիքներ ընծայելու: Եւ ըսել թէ քիչ ժամանակէն իր կի՞նը պիտի ըլլամ...:

Գարմելիդա վայրկեան մը իր ցնորներուն մէջ ընկղմեցաւ: Ապագայ երջանկութիւն մը կ'ընդունարէր իր պաշտելի Նորպերդին կուշտը... իր հարբած մտքին մէջ կասկածի հետք մ'անգամ չէր տեսներ:

Այս երկնային... ճշմարիտ երջանկութեան երազին ամբողջ տեւողութեան ժամանակ, սպանունին դէմքը ամենապայծառ լոյսով մը կը փայլէր: Իր սև աչուրները դիւթող մեղկութեամբ մը լի, սեւեռած հեռաւոր հորիզոնի մը վրայ... կապոյտ կիրքերու, փափուկ անհուն զանձերու... աշխարհ մը կը յայտնէին՝ այն մարդուն համար

որ զինք կախարդած էր:

— Ապահովապէս ես խաբուած եմ — ըսաւ յանկարծ Գարմելիդա ինքն իրեն գալով— Նորպերդ իմ երեւակայած դաւադրութեան մէջ ոչ մէկ մասն չունի: Բոլոր յանցանքը իր բարեկամինն է ... ան զինքը մոլորցուցած պիտի ըլլայ անուշ խօսքերով ... և իմ Նորպերդս ալ ա՛յնչափ բարի է, որ տեղի տուած պիտի ըլլայ, առանց մտածելու թէ այսպիսի առաջարկութեան մը տակ անպատուութիւն մը ծածկուած էր:

Այն ժամանակ Գարմելիդա սկսաւ լրջօրէն մտածել իր տալու պատասխանին վրայ: Յետ գրելու և պատուելու տասնեակ մը թերթեր, որոշեց հետեւեալ պիտակը զրկել անոր.

«Իմ միակ սէրս,

«Նամակդ գրած պահուէ՛ր, բնաւ անդրադարձութիւն ըրած չես, կարծեմ, ինչ անպատիւ դեր մը կուտաս քու Գարմելիդայիդ՝ կաղմակերպելիք տեսարանիդ մէջ, ապա թէ ոչ այդ տողերը չէիր գրեր»:

«Ինձմէ խնդրէ ի՛նչ որ կ'ուզես, բաւական է որ ես ձեռնտու ըլլամ մեքենայութեան մը, որ կը ձգտի արատ մը նետել պարկեշտ օրիորդի մը վրայ, որ քրո՛ջ մը պէս ինծի սրբազան է»:

«Դու գուշակեր ես. Ռինան Մէնտէսը կը սիրէ: Բայց կը սխալիս, եթէ կարծես թէ երիտասարդ նկարիչն ալ փոխադարձը կը տածէ: Անիկա Տէ Ռոսսի օրիորդը կը սիրէ և քանի մ'ամիսէն

անոր ամուսին պիտի ըլլայ, այսպէս ըսաւ մեզի սեղանաւորը»:

«Կը տեսնես ուրեմն, թէ ուզելով իսկ, անկարելի է քու ծրագիրդ ի գործ դնել: Լաւ բացատրեցի՞ ծրագիրդ...: Կը ներե՛ս: Կ'ուզէի ըսել՝ բարեկամիդ ծրագիրը, որովհետեւ քու սիրտդ, որ այնչափ ազնուական ու վեհանձն է... չի կրնար նման մեքենայութիւն մը յղանալ»:

«Ձեմ գիտեր թէ սեղանաւորն ալ Ֆիրէնցէէն կը հեռանայ. չեմ կարծեր, վասնզի մինչև հիմա ինծի ըսած կ'ըլլար»:

«Յուսամ դարձեալ շուտով զքեզ տեսնել Տէ Ռոսսի կոմսին տան մէջ: Որչափ ալ ամենահամոռու և խորհրդաւոր, ոչ նուազ քաղցր են այն անուշ խօսակցութիւնները, այն անըման վայրկեանները՝ քու Գարմելիդայիդ համար, որ միշտ կը պաշտէ զքեզ: Յ տեսութիւն»:

Փակելով ու կնքելով իր նամակը, գեղեցիկ սպանուհին իր թոյլ գլուխը ձգեց մէկ ձեռքին վրայ, քանի մը վայրկեան իր մտածութեանց մէջ ընկղմած:

Օրիորդին անուշ աչքերը, մեքենաբար շուրջը դարձնելով, վառարանիկին վրայ հանգչեցան, ուր քանի մը չքեղ՝ տղու խաղալիքներու մէջտեղ, կը տեսնուէր կապոյտ թուղթ մը տձև ծալուած:

Գարմելիդա գայն տեսնելով սոսկաց. վաղանցիկ կարմրութիւն մը գունաւորեց իր դու-

նատ ճակատը. երկու ջերմ արցունքի կաթիլներ՝
ակամայ այտերէն վար սահեցան:

— Խեղճ հայրիկ — մրմնջեց — դու ինձի
միշտ Պօղոսի վրայ կը խօսիս... Պօղոսի՛ որ այն-
չափ դժբախտ է իմ պատճառաւ. և անոր հա-
մար՝ գոր ուրի՛ կոչել կը ցանկաս՝ ինձմէ մխի-
թարութեան խօսք մը կը խնդրես: Ո՛հ, եթէ
կարենաս՝ դու Գարմելիդայիդ սիրտը տեսնել...
և ինչ որ անոր մէջ կ'անցնի՛ ...: Ո՛հ, Պօղոս ...
Պօղոս, ինչո՞ւ գրեց այսչափ ուշ ճանչցայ...:

Հագարաւո՛ր յիշատակներ օրիորդին սիրտը
կը ճմլէին: Ի՛նչպէս դեռ իր ականջին մէջ կը
հնչէր այն տարփաւոր երիտասարդին ձայնը, այն
գիշերը՝ յորում գինք անպատուութենէ մը փըր-
կած էր:

— Գարմելիդա՛...ես քեզի կը ներեմ...երջա-
նիկ եղիր — ըսած էր իրեն: Եւ ինք քաջութիւնն
ուսեցած էր դայն մերժելու ... ըսելու անոր թէ
ուրի՛շ մը կը սիրէր:

-- Ո՛րչափ կրած պիտի ըլլայ, խեղճ Պօ-
ղոս — կը մրմնջէր Գարմելիդա սրտակսկիծ — և
ո՛րչափ դառն չեղաւ իմ երթաս բարեաւս ... որ
գուցէ վերջինն էր...:

Գարմելիդա ոտքի ելաւ, առաւ վառարանի-
կի վրայի թուղթը զայն տարփանքով շրթունքին
մօտեցուց... յետոյ բանալով, շուտով մը վրայէն
անցաւ, կանգ առնելով վերջին պարբերութեան
վրայ:

«Եթէ գիտնայիր — կը գրէր իրեն՝ հայրը —
ի՛նչպէս փոխուած է ժամանակէ մ'իվեր սեղա-
նաւորին գրագիրը: Մարմինը նիհարցած, դէմքը
կապուտցած, լքուած, վառվառն աչքերը՝ տըխ-
րօրէն անշարժ, որ գրեթէ տձև երեւոյթ մը կու-
տան իրեն»:

«Սակայն, այսուհանդերձ միշտ ինքզինք ա-
նուշ, ջերմ ցոյց կուտայ, իբրև որդի մը իր հօրը
հետ ... Ա՛հ ... ինչո՞ւ չեմ կրնար թեւերուս մէջ
զգուել երկուքդ ալ և որդեկներս կանչել ...: Ին-
չո՞ւ Գարմելիդա՛, քու սիրտդ մեռած է սիրոյ
համար»:

— Սիրոյ համար մեռա՞ծ, — պոռաց սպա-
նուհին ձեռքէն թուղթը վար ձգելով, և իր խօ-
սուն աչքերը երկինք վերցնելով — սիրոյ համար
մեռա՞ծ, մինչդեռ զգացած չէ որչափ հիմա կ'ապ-
րիմ ու սիրտս կը բաբախէ: Ո՛հ, այո՛ — շարու-
նակեց դառն ժպիտով — Պօղոսի համար մեռա՞ծ...
բայց ուրեմն Նորպե՛րդս: Վերջապէս պէ՛տք եմ
այս զգացումս հօրս յայտնել: Այս սէ՛րը որ բու-
լոր իմ կենացս նպատակը կը կազմէ ...: Բայց
Նորպերդ զիս չի՞ խաբեր: Ապահո՞վ եմ թէ ինձի
իր անունը պիտի տայ, ինչպէս տուած է սիրտը:
Անիկա ազնուական է, հարուստ է, մինչ ես ի՛նչ
եմ: Դժբախտ աղջիկ մը, հօրս հետ միասին ճամ-
բու մը վրայէն ժողուուա՞ծ՝ ազնուական և ա-
ռատասիրտ անձէ մը: Ուրեմն ճագումս այս ըլ-
լալէ վերջ կրնա՞մ այդպիսի պատուի մը սպա-

սել...

Վայրկեան մը Գարմելիդա տկարացած դե-
ղեւեցաւ և հարցուց ինքն իրեն թէ ի՛նչ է իր
առ Նորպերդ ունեցած սիրոյն վախճանը: Սա-
կայն բարոյական ոյժը զոր ունէր զարմանալի
կերպով, յաջողած հով մ'առաւ:

— Շատ լաւ, ինչո՞ւ պիտի չկարենամ ես
ալ դերակոմսուհի մ'ըլլալ—ըսաւ ինքն իրեն:—
Նորպերդ չկրկնե՞ց ինձի այնչափ անգամներ, թէ
ինք բնաւ կարեւորութիւն չի տար ընկերական
նախապաշարումներու, որոնց առջև միայն ա-
նոնք գլուխ կը ծռեն որ բնաւորութիւննին թոյլ
է: Գլխաւոր պատճառը, որ մեր անմիջական
միութեան արգելք կ'ըլլայ, չըսա՞ւ ինձի մէկէ
աւելի անգամներ, ամենահարուստ ծեր քեռիէ մը
առաջ կուգար, որ զինք մանուկ ընդունած էր...
և թէ իր մահուընէն վերջ իրեն քանի մը միլիոն
հարստութիւն պիտի ձգէր, որպէսզի իր ընտա-
նիքէն աղջիկ մը կնութեան առնէր: Եւ երբ ես
գողացի, հարցնելով թէ ի՛նչպէս ուրեմն ես կըր-
նամ իրեն կին ըլլալ ... ինձի չպատասխանե՞ց.
(Ի՛նչ. բանի կուգայ հարստութիւնը սիրոյ հան-
դէպ: Ստոյգ է, չեմ ուզեր մէկ հարուածով իմ
ծերունի քեռիիս ամէն բաղձանքը բառնալ...
բայց քիչ քիչ պիտի ջանամ զայն իմ գաղափա-
րիս բերել: Թերահաւատ կին, ինչո՞ւ գեռ կը
տարակուսիս:»

Զօրացած այս եզրակացութիւնէն և առանց

ուշադրութիւն դնելու իր հօր նամակին որ գե-
տին ինկած էր, Գարմելիդա թողուց իր սենեա-
կը և գնաց հոն՝ ուր Ռինա իրեն կը սպասէր:

Գիշերուան խաւարը, արգելք եղաւ իրեն,
տեսնելու թէ ո՛ւր կը գտնուէր սա. բայց ճրագ
մը վառելով, որբունին բազմոցի մը վրայ փռու-
ուած գտաւ, գլուխն անոր եզերքէն կախուած:

Սպանուհին կարծեց որ Ռինա կը ննջէր եւ
զինք այն անհանգիստ դիրքէն հանելու համար
մօտեցաւ ու անուշ մը շարժեց: Օրիորդը չշար-
ժեցաւ: Գարմելիդա այն ատեն անոր գլուխը վեր
բարձրացուց, ճակտին մագերը մէկդի ըրաւ ու
համբոյր մը դրոշմեց:

Այն ճակատը թրջած քարի մը պէս պաղ էր:
Այն ժամանակ միայն սպանուհին տեսաւ որ Ռի-
նա մարած էր: Առաջին մտածութիւնն եղաւ
օգնութեան կանչել... բայց ոչինչ բանի մը հա-
մար աղմուկ հանելէ վախնալով, լռեց: Յետոյ
սպասուհին ալ դուրս ելած էր, և ծառայք ալ
այն ժամուն խոհանոցին մէջ հաւաքուած, չէին
կրնար լսել:

Գարմելիդա որբունին իր բազկաց վրայ ա-
ռաւ՝ պզտիկ աղջկան մը նման, իր սենեակը տա-
նելով անկողնոյն վրայ դրաւ:

Մօր մը հոգատարութեամբ և փորձառու-
թեամբ, քրոջ մը սիրագորով դզացմամբ, Գար-
մելիդա աղջկան մարմինը տարածեց որպէսզի
ազատ շունչ առնու, յետոյ հոտաւէտ ջուրեր

լեցնելով արծաթէ կոնքի մը մէջ՝ թշուառին պաղ
գէմքին վրայ սրսկեց:

Այն զովացուցիչ ջուրը, կամաց կամաց օ-
րիորդը զգաստացուց: Հառաջանք մ'արձակեց և
աչքերը բացաւ, տարօրինակ կերպով մը սեւե-
ռելով բարեկամուհիին երեսին:

— Ո՛ւմ եմ — մըմնջեց յետ համառօտ ըս-
պասումի մը:

— Հո՛ս...իմ բազկացս մէջ — պատասխա-
Գարմելիզա դայն համբուրելով: Բայց գիտե՛ս —
շարունակեց քաղցրութեամբ — որ զիս շատ
վախցուցիր...: Բսէ՛ ինծի, ի՞նչ ունեցար:

Այս խօսքերը ըսելով, Ռինա ցաւատանջ
սարստեցաւ: Մէկ ձեռքը ճակատը քսեց, միտքը
մթազնող խաւարը փարատելու համար: Յետոյ
ցաւատանջ ձայնով.

— Չեմ գիտեր — ըսաւ — մինակ էի սրա-
հին մէջ ... բունն շփոթութեան մը աւար եղած:
Հազար ու մէկ յիշատակներ արթնցան մտքիս
մէջ... և անցեալը, որուն յիշատակը միշտ սրտիս
խորը կ'ապրի, արթնցաւ զիս խրատելու համար...:
Իմ սիրելիներուն ստուերը տեսայ առջիւս... հե-
ծեծանքներ լսեցի ... յետոյ ալ ոչի՛նչ ... կարծես
քնացայ ... Ո՛հ, Գարմելիզա՛ ... Գարմելիզա՛, զիս
այլևս մինակ մի թողուր, խնդրեմ:

Եւ Ռինա բարեկամուհիին վիզը փաթթուե-
ցաւ՝ շարունակելով պաղատական և արտասուա-
լից ձայնով.

— Միշտ քովս կեցիր, ո՛հ, ես կը վախեմ...
շա՛տ կը վախեմ:

— Աղջի՛կ — ըսաւ սպանուհին, համբոյր-
ներով ծածկելով օրիորդին խարտեաշագէս գլու-
խը — դո՛ւ ո՛րեք պատճառ մը չունիս անհան-
գիստ ըլլալու:

— Գարմելիզա՛ ... զիս մինակ մի թողուր
ընաւ:

— Ո՛չ ոչ...բայց փոխադարձ դու ալ ինծի
ամէն ճշմարտութիւն պիտի ըսես: Գեղի բան
մը պատահած պիտի ըլլայ զոր կը ջանաս ինծ-
մէ ծածկել:

Ռինա դարձեալ դողաց: Մտադիր էր բարե-
կամուհիին պատմել իր թալկացումին բուն պատ-
ճառը. բայց յիշեց անմիջապէս թէ ինքն իսկ յոր-
դորած էր Մարագը որ իր խնդրանքին մասին
զաղտնիք պահէ ... յետոյ յիմար, անիմաստ յոյս
մը միտքը ծագած էր, յոյս մը՝ թէ ինչ որ պա-
տահած էր, ուրիշ բան չէր բայց միայն տգեղ
երազ մը... ուստի վերջին անգամ մ'ալ Մէնտէսը
տեսնելու փափաքը...անգամ մ'ալ անոր զգուա-
լիք ու պաղատագին ակնարկով պարարուելու
իզձն ունեցաւ...:

Սակայն որբուհին լռեց: Բայց յարատե հա-
ռաչանքներն, որ իր կուտական կուրծքը կ'ու-
ռեցնէին, իր պզտիկ ձեռներուն տենդային շար-
ժումը, չէին կրնար խաբել Գարմելիզան:

— Խօսէ՛ ուրեմն, սիրելիս — ըսաւ նա —

վրաս վատահուծիւն չունի՞ս:

— Կը տարակուսի՞ս ... Գարմելիդա՛: Բայց ուրիշ բան մը չունիմ ըսելիք... բացի անկից զոր քեզ հազորդեցի: Միայնուծիւնը, ... խաւարը, ինձի ստուերները ցոյց տուին... և ստուերները զիս կը վախցնեն...:

— Եթէ այդպէս է՝ սիրտ ա՛ն: Մեռելները, սիրուհիս, այլևս չե՛ն վերադառնար...: Ապա թէ ոչ... բաւական է .. ժպտէ՛, Ռինաս, եթէ կ'ուզես զիս հանգիստ տեսնել...:

— Ո՛հ, ի՛նչ բարի ես — մըմնջեց որբուհին — և ո՛րչափ զքեզ կը սիրեմ...:

Եւ աղջիկը դարձեալ բարեկամուհիին զիրկը նետուեցաւ, և երկայն ու գողտը համրոյրներ փոխանակուեցան քանի մը վայրկեան:

Ռինա այն վայրկեանէն սկսեալ հանգիստ ու համակամ երեւցաւ: Տրտունջ մը չելաւ իր շրթներէն, ոչ հառաչ մը կրճքէն՝ այն մարդուն համար որ իրեն այնչափ վիշտ, այնչափ ցաւ պատճառած էր. ո՛չ յուսահատուծիւն, ո՛չ գոհուծիւն ցոյց տուաւ. այլ այն սոսկալի անտարբերութեան մէջ, որ դժնդակ ապշութեամբ մը կ'ապականէ: Երեկոյին, սեղանաւորին հետ ճաշի նստելով, շարունակ շնորհալի և անուշ երեւցաւ երբ նա իրեն հետ կը խօսէր. բայց ուշադրութեամբ դիտող մը պիտի սարսափէր անգուծ տառապանքի փայլատակէն, որ կ'ընկերէին իր պատասխաններուն:

— Սիրուհիներս — բացազանչեց յանկարծ Մարագ, մեղմ շեշտով մը — վաղը վերջին օրն է որ ձեզի հետ պիտի անցընեմ. սակայն կը փափաքեմ որ ուրախ ըլլանք...: Մէնտէս խոստաչ ցաւ մեզի հետ սեղանի մնալ... միտք ունիմ Տէ. Ռոսսի կոման ու իր աղջիկն ալ կանչելու: Ի՛նչ կ'ըսէք, գո՞հ էք:

— Այո՛ — թոթովեց Ռինա ձեւակերպեալ ուրախութեամբ: Մէնտէսի անունը իրբեւ ելեքտորական հոսանք մ'եղաւ, որ աղջկան բոլոր նիարդները ցնցեց, եւ մտքին մէջ նորոգեց աւստան սղբերգուծիւնը:

Եւ հիմա... պիտի մերժե՞մ զայն... պիտի մոռնամ — կը մտածէր: Վերջը՝ ի՛նչ պիտի ըսէ իմ վրայօք: Ի՛նչ կարծիք պիտի կազմէ: Աստուած իմ... Աստուած իմ... հոգիս ինձմէ ա՛ն: — Եւ Ռինա սաստիկ խղճի խայթ մը զգաց սեղանաւորին տուած խոր խոստման համար: — Վաստուծիւն էր բրածս — ըսաւ ինքն իրեն — տկարութիւն... եւ Աստուած զիս պիտի պատժէ՛:

— Ինչո՞ւ կը մեկնիք դուք — կը հարցնէր Գարմելիդա Մարագին սաստիկ զարմացած:

— Քանի մը ստիպիչ գործերու համար զիս թորինոյ կը կանչեն — պատասխանեց սեզանաւորը — բայց կարելի եղածին չափ կարճ պիտի կապեմ, ապահով եղիր...:

Եւ Մարագ աչքի տակէն խարտեաչ որբուհին կը դիտէր, որ բոլորովին դողդալով վաք

առաւ զլուխը, չհամարձակելով խօսք մ'արտաբերել:

— Դու ալ կը փափաքէիր հետս գալ, այնպէս չէ՞ — ըսաւ նենդութեամբ սեղանաւորը Գարմելիդայի, բարեմիտ ժպիտով մը շրթունքները բանալով:

Սպանուհիին այտերն շառագունեցան:

— Ո՛հ, այո՛ — մրմնջեց աչքերը վար առնելով — շատ սիրով կուգայի ձեզի հետ... խեղճ հայրս տեսնելու համար:

— Եւ ո՞չ ուրիշ մ'ալ:

Գարմելիդայի սիրտը արագ բազախեց, բայց լուռ կեցաւ:

Սեղանաւորն ոտքի ելաւ ժպտելով և Ռինայի ձեռքը սեղմելէ վերջ՝ դէպի սպանուհին ծռելով մրմնջեց.

— Իմ երջանկութեանս օրը՝ քուկդ ալ պիտի ըլլայ: Մի վախնար. ես խոստումս չեմ մոռնար, Պօղոս քու ամուսինդ պիտի ըլլայ:

Օրիորդը չկրցաւ զարմանքի և միանգամայն ցաւի ազդակ մը սանձել: Բողոքել կ'ուզէր, բայց դեռ ըսելիքը չմտածած, Մարագ արդէն սենեակէն դուրս ելած էր:



ԺԳ.

Հետեւեալ օրը կէս օր կը հնչէր, երբ Մէնտէս՝ ճիշտ իր խոստումունքին համաձայն, Մարագի պալատէն ներս կը կոխէր: Ի՛նչպէս երիտասարդ նկարչին սիրտը ուրախութենէն կը ճխար: Այլևս զլուխը վրան չէր. իր երջանկութիւնն այնպէ՛ս յանկարծակի և անակնկալ եղած էր, որ յիրաւի խելքը զլիւն կը թոցնէր: Ի՛նչ գոհ ու յաղթական դէմքով կը դիտէր իր քովէն գացող անցորդները:

Տունէն դուրս ելլելով, առաջին անգամ Նորպե՛րդը դիմացն ելաւ: Սա հապճեպով նշանաւոր օտարականին առջև կեցաւ, ըսելով.

— Պարոն Մէնտէս, շատ բախտաւոր եմ քեզի հանդիպելուս: Կը ներես համարձակութեանս որ վայրկեան մը ձամբանիդ կը խափանեմ, բայց այնչափ ծանօթ է ինձի քու ազնուութիւնդ որ կը համարձակիմ շնորհք մը խնդրելու...

— Խօսէ՛, դերակո՛մս, խօսէ — պատասխանեց Մէնտէս, զարմացած այն յառաջաբանին վրայ — Եթէ ո՛րէ ծառայութիւն մը կրնամ ընել քեզի պատրաստ եմ:

Նորպերդ ասպետական շնորհալիութեամբ ծռեցաւ: Հեղնական թեթև ժպիտ մը ծաղկեցաւ իր շրթանց վրայ բայց նկարիչը չհամարեց:

— Ճամբան քալելու ժամանակ քեզ կ'ըսեմ, եթէ ինծի ներես որ քեզի ընկերիմ — աւելցուց Նորպերդ, ազնիւ ընտանութեամբ մը:

Թէպէտե վշտացաւ այն պատասխանին վըրայ, որ Ռինան տեսնելու քաղցր վայելքը կ'ուշացնէր, սակայն Մէնտէս չափազանց կիրթ ու ազնուական շէք կրնար մերժել:

— Երթանք, — ըսաւ ամենայն ազնուութեամբ:

Դերակումսը նկարչին թեւը մտաւ և միասին լուսնկանիներուն մէջ մտան:

— Պարոն — ըսաւ Նորպերդ լըջօրէն, վայրկեան մը լուսննէ վերջ — եթէ չափազանց յանդգնութիւն չհամարես, ինծի շատ հաճելի պիտի ըլլայ՝ քու ուսումնասնեակդ մտնել և այցելելու թիւն մը տալ հրաշալիքներուդ...:

Նկարիչը ամէնչաւ և դպրոցականի մը պէս համեստարար ժպտեցաւ:

— Ինծի մեծ հաճոյք և միանգամայն մեծ պատիւ ըրած պիտի ըլլաք... բայց գալով հրաշալիաց, խնդրեմ հաւատա՛ որ զքեզ խաբած են, և ոչ հատ մ'ունիմ. բիշ ու պարզ նախագիծ նրկարներ ունիմ... բարբոսիւն անարժէք:

Նորպերդ ընդմիջեց...

— Քու մէկ յատկութեանդ վրայ կը զարմանամ ու կը հիանամ, որ նկարիչ մը ... բայց համեստ: Տէ Ռոսսի կումսը շատ կը գնահատէ քու հանճարդ և շատ խանդով կը խօսի վրագ ճանչ-

նալով իր դատաստանին արժէքը, և իբրև սիրահար գեղարուեստից, միաքս դրի որ աշխատանոցդ այցելելու շնորհքը խնդրեմ քեզմէ: Չէի գիտեր ի'նչպէս ընել, երբ բախար բերաւ որ քեզի հանդիպեցայ... Հրաման կ'ուտաս այնպէս չէ՛, որ այս վայրկեանէս սկսեալ զքեզ ալ իմ ամենասիրելի բարեկամացս թուոյն մէջ հաշուեմ. ինչպէս դու ալ պէտք ես նկատել զիս իբրև քու ամենաշիրմ հիացողներէդ մին...:

— Շատ երախտապարտ եմ քու ազնուութեան, և պատիւ կը համարեմ ինծի քու բարեկամութիւնդ ընդունելու, զոր ինձ կը նուիրես — ըսաւ Մէնտէս, անկեղծութեամբ և ուրախութեամբ ձեռքը կարկառելով դերակումսին...:

Սաստիկ յուզում մը զգաց, երբ Նորպերդ այն անկեղծ ձեռքը սեղմեց որ իրեն նուիրուած էր:

Նկարիչը շարունակեց.

— Երջանիկ պիտի ըլլայի եթէ այս վայրկեանիս իսկ կարենայի զքեզ իմ ուսումնասնեակս տանելու պատիւն ունենալ... միայն թէ...: կը վաբանէր, բայց Նորպերդ պնդեց.

— Միայն թէ...:

— Այո՛, միայն թէ, ինչո՞ւ քաղաքավարութիւն ընեմ բարեկամի մը հետ — պատասխանեց երիտասարդ նկարիչը, մելամաղձիկ ժպտով մը. — այսօր անկարելի է ինծի քու փափաքդ կատարել, վասնզի սեղանաւոր Մարազի

տունը պիտի երթամ:

— Մարապ — ըսաւ կեղծ գերակոմսն, մէկ ձեռքը ձակախին տանելով, իբրև թէ կը յիշէր ուրիշ անգամ լսած ըլլալ այդ անունը, բայց չէր գիտեր ո՛վ էր — ա՛ն, այո՛, հիմա կը յիշեմ... այդ նշանաւոր մարդը, անցեալ իրիկուն Տէ Ռոսսի կոմսին տունը կը գտնուէր՝ երկու շնորհալի օրիորդներու հետ միասին...:

— Ամենաճի՛շդ, անոնցմէ ամենաերիտասարդին դէմքը կը նկարեմ ես:

Նորպէս չկրցաւ դսպիլ յաղթանակի շարժում մը, բայց Մէնտէս զոյն չնշմարեց:

— Ամենահամակրելի դէմք մըն է ... կ'ըմբռնեմ քու անհամբերութիւնդ — աւելցուց գերակոմսը ազնուութեամբ, և հիտնալի պարզամտութեամբ մը, — քու գիպուածիդ մէջ ես ալ նոյնը կ'ըլլայի: Միւս կողմանէ, ես ալ խօսք տուած եմ բարեկամի մը: Այնպէս որ վաղը կը տեսնուինք:

— Շնորհակա՛լ եմ, շմոռնաս որ քեզի կը սպասեմ:

Երկու երիտասարդները իրարու ձեռք սեղմեցին և բաժնուեցան: Կարծեցեալ դերակոմսն դէպի տուն ուղղուեցաւ, Մէնտէս սեղանաւորին պալատը:

Սրահէն ներս մտնելով, նկարիչը չկրցաւ անձել բարկութեան և պատրանքի թեթև շարժում մը. Փոխանակ մինակ գտնելու աղջիկը,

ընկերուհիներով շրջապատուած էր, որոնց մէջ առաջին տեղը կը բռնէր Տէ Ռոսսի կոմսուհին:

— Ա՛ն, սիրելի Մէնտէսս — ըսաւ սեղանաւորը երիտասարդին առջև վազելով — շնորհակալ եմ փութկոտութեանդ վրայ: Այսօր սակայն ուրախութեան օր մ'է. պէտք չես աշխատիլ: Այս իրիկուն ես կը մեկնիմ ... քանի մ'օր բացակայ պիտի մնամ ... կը փափաքիմ ուրեմն որ այսօր ուրախութեամբ անցընենք:

Նկարիչը թեթև սարսուռ մը զգաց ուրախութեան և միանգամայն զարմանքի:

— Կը մեկնի՛ք — թոթովեց նա, չկրնալով իսկ հաւատալ իր աչքերուն:

— Այո՛, քանի մ'օրուան համար, բայց ասիկա արգելք մը չէ Ռինայի նկարը վերջացնելու: Կը յուսամ մանաւանդ ի դարձիս աւարտած տեսնել զոյն, այնպէս չէ՛:

— Յոյսերնիդ ի դերև չելլեր — ըսաւ Մէնտէս ուրախութեամբ լեցուած, յառաջանալով դէպի խմբակը...:

Մէնտէս նախ հանդիպեցաւ Տէ Ռոսսի կոմսին որ ձեռքը կարկռուեց ու ըսաւ իրեն.

— Գոհ եմ զքեզ առողջացած տեսնելուս: Կը վախնայի որ զլիւս ցաւդ լուրջ հետեւանքներ ունենար, բայց Մարապ ինձի ըսաւ որ երէկ բոլոր օրը եռանդով աշխատեց ես...:

Մէնտէս աչքերը կոմսին դարցուց, կարծելով որ այս վերջին խօսքերը տեսակ մը հեզ-

նութիւնն կը ներփակէին. բայց ազնուական մար-
գունն գէմքը այնչա՛փ բարութիւնն և փոյթ կ'ար-
տայայտէր որ նկարչին կասկածը փարատեցաւ:

— Անցողական բան մ'էր և ձեր չափազանց
ազնուութիւնն է որ կը զգայ — ըսաւ նա խրն-
դալով և փոխադարձ սեղմելով կոմսին ձեռքը:

Աննինա իր բարեկամուհիներուն մէջտեղն
էր, երբ իմացաւ Մէնտէսի գալուստը: Աշխու-
ժութեամբ ետեւ դարձաւ: Իր գէմքը գունատե-
ցաւ, յետոյ կարմրափայլ ներկուեցաւ, իբրև թէ
արիւնը սրտէն գլուխը խուժած ըլլար:

Ինչպէ՛ս դայն կը սիրէ — մըմնջեց Ռինա,
որ նշմարած էր այն խռովքը, մէկ ձեռքը կուրծ-
քին վրայ տանելով, որպէսզի բարախումն ար-
զիւելու — եւ անոր հետ երջանիկ պիտի ապ-
րի... մինչգեռ ես...:

Պօսքը ընդմիջեցաւ:

Մէնտէս իր առջև կեցած էր, շուարած վի-
ճակի մէջ, իրեն ուղղելով քանի մը պատիր քա-
ղաքավարական խօսքեր, որոնց ինք անտարբե-
րութեամբ պատասխանեց, աչքերը ուրիշ կողմ
շրջելով որ նկարչին չգիպին:

Կոմսուհին որ գաղտնաբար գայտ կը գիտէր,
ըսաւ ինքն իրեն.

— Ամենաապահով, գերակումը կը խաբուի:
Ռինան չի սիրեր Մէնտէսը, և սա ալ ոչ մէկ հի-
ացումի զգացում կը տածէ գէպի օրիորդը:

Զօրացած այս գաղափարով, Աննինա իր

սովորական զուարթութիւնն առաւ:

— Ի՛նչ ընենք ուրեմն — ըսաւ ուրախու-
թեամբ և աշխուժով՝ որ իրեն բնական էր — յու-
սամ թէ բոլոր օրը հոս փակուած չե՛նք մնար:

— Իմ կարծիքս ալ այս է ճիշտ — պատաս-
խանեց Մարագ խնդալով — ասոր համար հրա-
մայեցի որ երկու կողք լծեն, վասնզի կ'ուզեմ
որ պտոյտ մ'ընենք մինչև Ֆիէզօլէ, ճաշի ժա-
մուն տուն վերադառնալու համար...:

— Լաւ, շատ լաւ — գոչեցին երկու կող-
մերէն:

— Հիանալի մտածեր ես — ըսաւ Տէ Ռոս-
սի՛ բարեկամին — պտոյտն է որ կը զուարճա-
ցընէ և լաւ մը ախորժակնիս ալ կը գրգռէ:

Քիչ մը շաղակրատեցին, մինչև որ սպասա-
ւոր մ'իմացուց թէ կառքերը պատրաստ էին:

Մէնտէս փուշերու վրայ կեցած էր: Ի գուր
փորձած էր խօսք մ'ուղղել որբուհիին: Սա կար-
ծես չէր կրնար բաժնուել Տէ Ռոսսի օրիորդէն,
և ոչ ալ զինք բանի տեղ կը դնէր: Երկու աղջը-
կունք միասին կառքերէն միոյն մէջ նստան մի-
ասին առնելով Մէնտէսը ու Մարագը: Վերջինս,
այսպէս ընելով, կը կարծէր լիուլի գոհացնել
նկարչին ու Աննինան:

Միւս կողքին մէջ նստան Գարմիլիդա, Տէ
Ռոսսի կոմսը և երկու երիտասարդ խօսեցեալ-
ները՝ հօրեղբօրորդիք Ֆիօրէնցացի ազնուակա-

նին և հետեւաբար իրենք ալ ընտանեաց հետ սերտ սիրով կապուած:

Օգը գեղեցիկ էր: Առտուան մշուշը ցրուած էր, թողլով զարմանալի տեսարան մը գեղանրկարին վրայ զոր կը ներկայացնէին այն այլազան հոգերն որոնց առջեւէն կ'անցնէին: Մերթ կառքերը լուռ, նեղ ճամբէ մը կ'անցնէին, ուր ուրիշ բան չէր լսուէր բաց եթէ օգին շշիւնը՝ պարտէզներու պատերէն կախուած ճիւղերու մէջ, և անիւներու շառաչը՝ սալայատակին վրայ. երբեմն ընդհակառակն՝ տեսարանը կը տարածուէր հեռուն և ճամբան շրջապատուած էր ընդարձակ մարգագետիններով ու դաշտերով: Հո՛ս, հո՛ն կը լսուէին աշխատող գեղջուկներու զուարթ երգերը. մէկ քանի աշխուժ գիւղացիներ խրճիթներու սեմերուն վրայ կը տեսնուէին, հետաքրքիր՝ անցնող ճամբորդները դիտելու, և ասոնք ալ ձիերուն քայլերը կը դանդաղեցնէին, որպէսզի աւելի երկար կարենային դիտել այդ ախորժելի և գուարճալի տեսարանը:

Ռինա լուռ, կռթնած կառքի բարձրուն, կարծես աչքերը այն հրաշալի և բուրումնաւէտ տեսարաններով կը պարարէր. բաց իսկապէս բան չէր տեսներ, բոլորովին ընկղմած էր ուրիշ դգացումի մը մէջ: Ի՛նչ մտածութիւններ կը խուժէին իր մտքին մէջ. քանի յիշատակներ կը վերանորոգուէին այն վայրկեանին:

Աննինա կատակներ կ'ընէր ու կը խնդար



Մարագի ու Մէնտէսի հետ: Օրիորդին դէմքը ճառագայթներ կ'արձակէր: Աննինա գրեթէ ամէն բանի վրայ կը խօսէր, գիւղին, հաճոյքներուն և ձանձրութեանց վրայ զոր պտոյտը կը հայթայթէ. ճամբորդութիւններու, պատահարներու . . . մերթ խօսքը Ռինայի ուղղելով, մերթ սեղանաւորին և ուրախութեամբ ու կիրքերով բոցափայլ աչքերը օտարական երիտասարդ նկարչին:

Բայց վերջինս անոր շատ կարեւորութիւն չէր ասար, խռոված և զարմացած որբուհիին ըստէպ կերպարանափոխութենէն: Իր սրտի անձուկը անհանդուրժելի էր, նա կ'ուզէր խօսիլ անոր հետ, և այն անակնկալ ցրտութեան պատճառն հարցնել: Սրտով կ'անիծէր այդ շրջագայութիւնը, Աննինայի ընկերութիւնը, որ բնաւ աչքը իր վրայէն չէր հեռացներ, կարծես լրասեւլ ուզէր իր ամէն մանր շարժումներու . . . ամենաթիթե յուզմունքը:

Այս պահուս արդէն ձիերը քայլերնին դանդաղեցուցած էին, վասնզի զարիվերն հետզհետէ կ'ածէր:

— Չե՛նք կրնար այս կտոր մը ճամբան օտքով ընել — գոչեց Տէ Ռոսսի կոմսը՝ իր կառքէն:

Առաջարկութիւնը հաճոյքով ընդունուեցաւ: Կառքերը կեցան վայրկեան մը: Կառավարներն շուտով վար իջան սր օգնին օրիորդներուն:

Տէ Ռոսսի կոմսը նուրբ քաղաքավարութեամբ թե տուաւ օրիորդ Անտալուզայի, որուն նկատմամբ անդիմադրելի համակրութիւն մ'ուներ. նոր խօսեցեալ ամուլք մտածեցին իրարմէ չբաժնուիլ: Մէնտէս կ'ուզէր ձեռքը որբունիին տալ, որ կառքէն իջնելու օգնէ. բայց ընդհակառակն աղջիկը իր բնատուր քաղաքավարութեամբը, բացայայտ անհամբերութիւն ցոյց տուաւ և ոստումով մը գետին իջաւ: Յետոյ մէկ ձեռքով զգեստին քղանցքը վեր վերցնելով, միւսը սեղանաւորին թեւին վրայ յեցուց, որ ուրախութեանէն շփոթեցաւ ու կարմրեցաւ:

Մէնտէս անշարժ կեցած զայն դիտեց:

Ամպ մը պատեց աչքերուն վրայ...:

— Ի՞նչ փոփոխութիւն — մըմնջեց —: Բայց ես ի՞նչ ըրի որ այսպիսի վարմունքի մը արժանացայ:

Օրիորդին պիտի հետեւէր, երբ ամենաքաղցր ձայն մը զայն կեցուց.

— Պարոն Մէնտէս, ուրեմն զիս հոս մինա՞կ կը ձգես — ըսաւ Տէ Ռոսսի կոմսունին՝ յանդիմանական աղնարկով մը:

— Ներէ ինձի... զլուխս մտածութեամբ մը բռնուած էր... կը հաճիս անշուշտ որ քեզի թեւս տամ... երթանք:

Նկարիչն անհամբեր էր ուղեկիցներուն հասնելու. բայց Աննինա դանդաղ կը քալէր, իբրև թէ ամենախոր յուզումի մը ենթակայ եղած ըլ-

լար, ամէն քայլափոխի իյնալու վտանգի մէջ էր և սաքի վրայ կենալու համար ստիպուած էր բոլոր իր մարմնոյն ծանրութիւնը երիտասարդին վրայ ձգել:

Երկուքէն ոչ մէկը խօսք մը բերնէն չհանեց: Մէնտէս կը ջանար լուսթիւնը չխորտակել, որ քիչ թէ շատ նեղացուցիչ պիտի ըլլար այն բուպէին խօսակցութիւն մը, վասնզի չէր արգելուր իրեն անձնատուր ըլլալ իր ենթադրութեանց... իր կարծեաց...:

— Միթէ արդեօք Աննինայի ներկայութիւնն է միակ պատճառը օրիորդին այս առերեւոյթ ցրտութեան — կը մտածէր ինքնիրեն —: Եթէ յիշուի այս է, պէտք չեմ ազմուկ հանել և պիտի ցուցնեմ թէ ինչպէս ինք կը խաբուի:

Եւ կը ջանար քայլերը արագել, բայց կոմսունին միջամտեց իր շարժումներուն՝ յանկարծ կանգ առնելով՝ բնութեան այն հիանալի համայնապատկերը դիտելու պատրուակաւ. բայց իսկապէս դիտաւորութիւն ունէր իրենց և միւս ընկերներուն մէջ բաւական հեռաւորութիւն մը տալ: Եւ իրաւցնէ անոնք շատ առաջ գացած էին, այնպէս որ միայն երբեմն Տէ Ռոսսի պարօնին քրքիչը և ճամլուն խճաքարերէն կառքերուն հանած ազմուկը կը լսուէին:

— Պարոն Մէնտէս — ըսաւ Տէ Ռոսսի օրիորդ կոմսունին սրտաշարժ ձայնով — ինչո՞ւ ինձմէ կը փախչիս:

Թէև կը սպասէր այսպիսի յանդիմանութեան մը, սակայն գոյնը նետեց նկարիչը:

— Ես քեզմէ չեմ փախչիր — պատասխանեց ժպտախառն խօսքերով — այլ կ'ուզեմ մեր ուղեկիցիներուն հասնիլ... վասնզի...

— Վասնզի — հարցուց Աննինա անհուն յուզումով:

— Ո՛հ, Աստուած իմ — ըսաւ երիտասարդը անփութութեամբ — վասնզի չեմ ուզեր որ իմ վրաս գէշ գաղափար մը շինեն:

— Սակայն առեն մը այսպէս չէիր խօսեր... Կոմսուհին այս խօսքերը այնպիսի մելամաղձոտ յանդիմանական շեշտով մը արտասանեց, որ Մէնտէսի սիրտը խոր խոցեցին:

— Ստոյգ է — մըմնջեց նա ցած ու դողդրղացող ձայնով, տեսակ մը զայրոյթով ինքն իրմէ դուրս ելած — օր մը ես յիմար էի, վասրնզի քու հրեշտակային ժպիտիդ, քու տարփալի՛ր սիրոյդ կը հաւատայի... Եղբօրմէ մը աւելի, բարեկամէ մը աւելի սէր ունէի վրայ: Եւ դո՛ւ... դո՛ւ գիտէիր թէ զքեզ կը սիրէի... սակայն անգութ խաբէութեամբ մը հետս կը խաղայիր: Դու կը յամառէիր ինքզինքդ ցուրտ ու քմահաճ ցոյց տալ ինծի... իմ ամէն խօսքս կատակի կը տանէիր: Բայց մե՛ծ է Աստուած... հիմա ճանչցայ ճշմարտութիւնը... և քեզի կը նայիմ, կը լսեմ անդորրու ֆու անտարբերութիւնդ... քու արհամարհանքդ... քու պահանջկոտութիւնդ,

բոլորովին իմ սէրս սպաննեցին:

Աննինա լուռ անձկութեամբ մտիկ կ'ընէր այսերը կրակ կտրած էին, կուրծքը բարախուն: Յետոյ յանկարծ ... դեռ աւելի կոթնեցաւ Մէնտէսի բազկաց վրայ, և գլուխը անոր ուսերուն վրայ ծռելով, մըմնջեց գողտր ու զգայուն շեշտով մը.

— Ստոյգ է ... ես անգութ եղայ քեզի հետ ... ներումն կը խնդրեմ... չե՛ս շնորհեր...: Ո՛հ, Մէնտէ՛ս... Մէնտէ՛ս... եթէ զիտնայիր որչա՛փ կը տառապիմ...:

— Դո՛ւ... կը տառապի՛ս... դո՛ւ — բացագանջեց նկարիչը հեղնութեամբ — կեցցե՛ս... նոր կտոր մ'ալ կատակերգութեան... դոր կը ջանաս ներկայացնել...:

Աննինա չթողուց որ նա լմնցնէ: Օրիորդը երբեք նման մահացումունք մ'ուներցած չէր, իր անձնասիրութիւնը զրգուեցաւ: Մէնտէս տեսաւ որ անոր ձակատը կնճուեցաւ, միանգամայն գունատեցաւ ու շառագունեցաւ, շրթները կուճի պէս ձերմկցան, մինչդեռ աչքերը բոցավառ կրակ կը ժայթքէին:

— Ա՛հ, կատակերգութիւն մը կը ներկայացնեմ — գոչեց սարսուռով մը անկից բաժնուելով — չա՛տ լաւ, պարոն նկարիչ, Բայց նայէ՛ որ այս կատակերգութիւնը սղբերգութեան չփոխուի և դու անոր զոհն չըլլաս: Կարծես թէ ես չե՛մ զիտեր քու սրտիդ գաղտնիքները ... խոր-

Վրաց

Թէ՛ գոր կը ներփակէ քու բերումդ: Տեսնենք, մշարոն Մէնտէս ... երկուքէս ո՛րը պիտի յաղթե՛նք:

Եւ դառն ժպիտով մ'ողջունելով նկարիչը, օրիորդը քայլերը արագեց ուղեկիցներուն հասնելու համար:

— Ի՛նչ ունիս—հարցուց Մարագ, որ առաջին անգամ կոմսուհիին դէմքին զունատութիւնը տեսաւ:

— Բան չկայ, բան չկայ ... քիչ մը վազեցի անոր համար—պատասխանեց շնչասպառ ձայնով — ալ կարողութիւն չունիմ ոտքի վրայ կենալու... և յետոյ այնչափ խնդացինք Մէնտէսի հետ որ... բայց հիմա կ'անցնի:

Իրաւցնէ օրիորդին այտերը իրենց բնական գոյնը կ'առնէին, և ժպիտն ալ շրթներուն վրայ կ'երեւնար:

— Մէնտէ՛սը ուր թողուցիր — հարցուց Տէ Ռոսսի կոմսը իր աղջկան...:

— Հո՛ն, վարն է... հիմա կուզայ ... քիչ մը յոգնած էր ... ո՛հ... բայց հիմա կրնանք կառք նրստիլ, միայն թէ այս անգամ ես քեզի հետ կը մնամ, սիրելի՛ հայրիկ... և Գարմելիզա ալ Ռինսային քով թող երթայ:

— Ինչպէս կ'ուզես՝ այնպէս կ'ընենք աղջիկըս... բայց ահա Մէնտէս կուզայ:

Նկարիչը կամայ կամայ կը քալէր:
Աղջկան առաջին խօսքին վրայ սարսուռ մը

զգացած էր դնդերաց մէջ:

— Աստուած իմ— մրմնջեց տեսակ մը սարսափով, — եթէ Աննինա անգրադարձած է որ ես Ռինան կը սիրեմ ... ի՛նչ բան պիտի չընէ գայն ինծմէ խելու համար... ի՛նչ միջոցներ պիտի չըխորհի լրտեսելու, այն մաքուր ու պարկեշտ աղջկան սէրը՝ գոր կը զգամ անոր հանդէպ...:

Եւ այս մտածութիւնը յետ Մէնտէսը դուրացնելու, անոր սրտին մէջ ահաւոր բարկութեան մրրիկ մը փրցուց: Անիկա ուզած էր վայրկեան մ'ալ Աննինան խօսքի բռնել, անոր հետ համաձայնութեան մը գալ. բայց աղջիկը իրմէ հեռացեր էր՝ աղաղակ մ'արձակելով և միանգամայն հեռուէն սպառնալով:

Այն ժամանակ մտածեց ինքզինք հանդարտ բռնել, կասկած չտալու համար, և դանդաղ քայլերով՝ յոգնած մարդու մը պէս, միւսներուն հասաւ... որ արդէն կառք կը նստէին: Նկարիչը բռնաւ զարմանք չյայտնեց, և ոչ ալ հարցում մ'ըրաւ, տեսնելով որ գեղեցիկ սպանուհին հոն նրստած էր, ուր քիչ առաջ կոմսուհին կը գրաւէր: Պտոյտի մնացած մասը լուրթեամբ անցաւ: Ամէնքըն ալ կարծես իրենց մտածութեանց մէջ ընկողմած էին:

Գարմելիզա գունատ և տխուր ամենազառն կսկիծ կը զգար, մտածելով սեղանաւորին իրեն ըսածներուն վրայ ... և չհամարձակելով հերքել գայն, վախնալով որ նա ճշմարտութիւնը պիտի

ուղէր զիտնալ, զոր այժմ աւելի քան երբեք, նա
ինքզինքը պարտաւոր կը զգար ծածուկ պահե-
լու:

Ֆիէզոլէ համեւելով, կարծես թէ մեր ճանա-
պարհորդները իրենց քաղցր զուարթութիւնը
վերստացան: Մայր եկեղեցին այցելելէ, թանգա-
բանին հնութեանց վրայ հիանալէ և քանի մը
յարդէ հիւսուած առարկաներ գնելէ վերջ, մեր
խմբակը մտածեց քիչ մը բան ուտել, և թէպէտ
միակ սուրճը որ հոն կը գտնուէր չէր կրնար
զամէնքը հաւասարապէս հանգստացնել, գլխա-
ւորապէս կարեւոր՝ օրիորդներուն համար, այ-
սուհանդերձ ամէն ջանք ըրին և այն պղտիկ ըմ-
պելին կարծես իրենց համար ամենաառողջարար
և զօրացուցիչը եղաւ:

Այս ժամանակ Մէնտէս ի զուր կը ջանար
որբուհիին հետ խօսք փոխանակել, վասնզի նա
կամակորութեամբ ամէն առիթ կը փոխցնէր և
իր հարցումներուն լակոնական կտրուկ և միա-
վանկ բառերով կը պտտասխանէր, նշան ներքին
շփոթից:

Ֆիրէնցէ դարձերնին ալ նմանապէս տխուր
և լռիկ եղաւ. բայց երբ հրաւիրեալները հաւաք-
ուեցան ճաշարանին մէջ, խօսակցութիւնը ոգե-
ւորուեցաւ:

Աննինա ինքզինք երբեք այնպէս զուարթ,
կատակասէր, խածնող ցոյց տուած չէր. սակայն
այսուհանդերձ իրեն մէջ չեմ գիտեր ի՞նչ չափա-

զանց կամ բուն բան կ'երեւնար, որ սարսուկ
կուտար Մէնտէսը, թէպէտ և նա կը ջանար այն
խօսակցութեանց նոյնքան հեզութեամբ փոխա-
րինել:

Սեղանի վրայ խօսակցութիւնը աւելի տաք
և ոգելից եղաւ: Մարագ որ ամենէն երջանիկ ու
զուարթն էր, կրցաւ ամենուն զուարթութիւնն
ալ բորբոքել:

Եւ սակայն որչա՛փ դառնութիւն այն ու-
րախութեան մէջ:

Երեկոյեան ստուերներն սկսեր էին երկարել
գետնի վրայ, թողլով սրահին կէսը ստուերի մէջ
և կէսն ալ մեռնող արեւու թեթև ու աղօտ շո-
ղով լուսաւորուած:

— Եթէ դեռ չէք յոգնած իմ ընկերութենէս
— ըսաւ Մարագ իր սեղանակիցներուն՝ ազնիւ
ժպիտով մը — պիտի փոփաքէի որ երկար մնաք:
Ես ժամը տասն և մէկին կը մեկնիմ, մինչև տա-
սը կրնանք նուագել, խաղալ ու զուարճանալ:

— Սքանչելի գաղափար — գոչեց Տէ Ռոսսի
կոմսը:

Ուրիշ սրահ մը փոխադրուեցան: Ֆիրէն-
ցացի ազնուականն ու Տէ Ռոսսի կոմսը սկսան
ճատրակ խաղալ. երկու խօսեցեալներն ալ հրա-
ման խնդրեցին առանձնանալու, և ստացան: Ան-
նինա դաշնակին մօտեցաւ, խնդրելով Գարմե-
լիդայէն որ սպանիական վիպերգ մը երգէ, և
ինք ընկերէ: Ռինա և Մէնտէս ալ իրարու մօտ

նստած մնացին՝ սրահին մէկ անկիւնը:

— Ռինա՛ — ըսաւ Մէնտէս, քիչ մը զայն դիտելէ վերջ, որ ի գուր կը ջանար ինքզինք այն հետազոտութենէն պրծել: — Ռինա՛ չե՞ս յիշեր բնաւ ինչ որ երէկ ինծի ըսիր:

Այնչափ պաղատագին էր իր շեշտը, որ որբունին ի գութ շարժեցաւ:

— Կը յիշեմ — պատասխանեց դողդոջ ձայնով, բայց ... պէտք է որ երկուքս ալ մոռնանք զայն...նախ ես:

— Մոռնա՞լ ... բայց ի՞նչ պատճառաւ: Ես ի՞նչ ըրի որ այս անգութ խօսքերը լսեմ. Չեմ ըմբռներ... խօսէ՛...կամ կ'երգնում որ խենթութիւն մը կ'ընեմ:

Ռինա մեռելի գոյն առաւ:

— Մէնտէ՛ս — ըսաւ նա, անհուն անձկութեամբ — Մէնտէ՛ս... ի սէր քու ամենասիրելի մեռելներուդ հոգւոյն, այլևս մի՛ պնդէր... հարցումներ մի՛ ընեք ինծի, որոնց պիտի չկարենամ պատասխանել:

— Բայց ինչո՞ւ... եթէ զիս չէի՞ր սիրեր... ինծի խաղեր ըրիր, սրտիս մէջ կըրակ վառեցիր: Երէկ երջանի՛կ էի . . շա՛տ երջանիկ. Ո՛չ ... ես չեմ կրնար մոռնալ քու խօսքերդ ... զքեզ շա՛տ կը սիրեմ. մինչև իսկ կ'ընտրեմ իմ դժբախտ կնքերուս գոհ երթալ:

Օրիորդին հոգին այս խօսքերուն վրայ տըկարացաւ, ճնշուեցաւ. նա ըմբռնեց իր դիրքին

սոսկալի վիճակը և սարսուեցաւ չունենալով անկից պրծելու միջոց մը. դողդոջ ըլլալիքին վերայ մտածելով, եթէ Մէնտէս ճշմարտութիւնը երեւան հանելու ըլլար:

Ռինա մեռելի մը պէս գունատեցաւ, սակայն քաջութիւնն ունեցաւ իր գեղեցիկ պաղատագին աչքերը նկարչին վրայ դարձնելու և ամենանըւաղ ու շնչասպառ ձայնով.

— Պարոն Մէնտէ՛ս—ըսաւ-- դու չես գիտեր, չես կրնար երեւակայել թէ ինչ վիշտ կը պատճառեն ինծի քու խօսքերդ. Աստուած և իմ սիրտըս գիտեն թէ որչա՛փ քեզ կը սիրեմ. սակայն ստիպուած եմ ընդ միշտ քեզմէ փախչելու... որովհետև աւելորդ է քեզի յոյս մը ներշնչել, որ յիտոյ արցունքի և յուսահատութեան փոխուի...:

Այնչափ ցաւ և այնչափ պարզամտութիւն կար որբունին շեշտին մէջ, որ Մէնտէս ազդուեցաւ:

— Ռինա՛ — մըմնչեց նա քաղցրութեամբ — Ռինա՛, ես չեմ հասկնար կատարեալ կերպով քու խօսքերուդ իմաստը, կը լսեմ միայն...թէ... դու զիս կը սիրես...և եթէ ինչ որ կը տեսնեմ՝ ամենամեծ արգելք մը կը դիմակալէ մեր երջանկութեան...: Ռինա՛, սիրելի օրիորդ, ես զքեզ պիտի կորսնցնեմ...կորսնցնեմ ընդ միշտ: Ո՛չ... ստիկա չի կրնար ըլլալ...պարզէ՛ միտքդ .. խօսէ՛... վոտահութիւն ունեցիր իմ վրաս... յայտնէ՛ ինծի այս գաղտնիքը...և ինչ որ ալ ըլլայ, կերպ-

նում թէ իմ սէրս երբեք քու վրայ պիտի չնը-
լազի՛. և զքեզ իմս պիտի ընեմ...նոյնիսկ եթէ
աշխարհ համայն մեզի դէմ կանգնի:

— Կը բաւէ՛ Մէնտէ՛ս, առաջ մի՛ երթար
այլևս — ըսաւ Ռինա խղճուկ ձայնով: — Անկա-
րելի են մեր երազները...անկարելի: Կը կրկնեմ
դարձեալ... մոռցի՛ր զիս: Այ չեմ կրնար երկար
խօսակցիլ քեզի հետ...մնաս բարեալ...:

Եւ Ռինա սրահէն անցնելով բարեկամուհի-
ներուն քով գնաց, թողնով Մէնտէսը ցաւագին
ապշութեան մը մէջ ընկղմած:

ԺԴ.

Նորպերդէն աւելի երջանիկ ո՞վ կար՞ յետ
օտարական նկարչին հետ տեսնուելուն: Իր ու-
րախուժիւնը յայտնապէս կը տեսնուէր, որուն
վրայ Պիանքա մարզիզուհին վարմացած մնաց:

— Կ'երգնում — ըսաւ նա որդւոյն, հազիւ
տուն հասած, անոր քով նստելով — կ'երգնում
թէ քու խորամանկ մեքենայութիւններդ շատ յա-
ջող ընթացք մ'ունին...:

— Ուռած առագաստներով, մայրի՛կ — պա-
տասխանեց յանդգնօրէն զերակոմսն Սարաք:

Կրնա՞մ ես ալ մատնակցիլ — վրայ բերաւ
Պիանքա, հիացումով զայն դիտելով:

— Ինչո՞ւ չէ ... դու իմ խորհրդատուս ...
իմ բարի հրեշտակս չե՞ս — բացագանչեց Նոր-
պերդ հեգնօրէն:

Վայրկեան մը լուռութիւն պատեց:
Կարծես կեղծ զերակոմսը ըսելիքը կը կը-
ռէր, ինչ որ մօրմէն պիտի ծածկէր՝ Պիանքա
անդորր համակամութեամբ մը զայն կը դիտէր...
և կարծես կը սպասէր...:

— Տէ Ռոսսի կոմսուհին անհաւատարմու-
թեան փաստի մը կը սպասէ Մէնտէսէն, ըսաւ
վերջապէս Նորպերդ — և ես զայն գտայ:

— Ի՞նչպէս...
Նորպերդ պատմեց ինչ որ Գարմելիզայի
գրած էր:

— Եւ եթէ քու գեղեցիկ Անտալուզադ մեր-
ժէ:

— Զի մերժեր — ըսաւ լրբաբար Նորպերդ —
բայց եթէ պատահի, ուրիշ աւելի դիւրին ու
չուտ միջոց մը գտած եմ...:

— Կրնա՞մ գիտնալ...:
Կեղծ զերակոմսը պատմեց այն ժամանակ
իր Մէնտէսի հանդիպումն ու եզրակացուց. —
Վաղն անպատճառ ես զինք պիտի տեսնեմ...վա-
ղը իրմէ պիտի իմանամ իր իսկ զգացումներն
առ քու գեղանի որբուհիդ...:

— Խեղճ Ռինա — մըմնջեց Պիանքա տեսակ
մը խղճի խայթով — որչափ կը փափաքիմ զինք
երջանիկ տեսնել...: Ծաղրական է, յիշաւի, որ

իմ կողմանէ երջանկութիւն մաղթեմ աղջկան մը համար զոր ես իսկ մտանած, վաճառած եմ. բայց կ'ապահովցնեմ քեզ որ սուր վիշտ մը ըզգացի, որուն նմանը երբեք կեանքիս մէջ ունեցած չէի... և ցնծացի միայն այն օրը յուրում իմացայ թէ Մարագ գայն յարգած էր:

Մարգիգունին այսպէս խօսելով կ'ոգեւորուէր: Նորպերդ ալ անոր հակառակ արհամարհութիւն կը ձեւակերպէր:

— Եթէ Ռինան է մի միայն որ խղճմտանքիդ կը դպչի, հոգ մի՛ ընեք, գայն երջանիկ կ'ընենք — ըսաւ նա մեծաբանութեամբ: — Երբեմն պէտք է մերթ խղճմտանքը լռեցնել բարի դործով մը, իմ բարի և իմ ամենաառաքինի մայրիկ...: Վերջ ի վերջոյ քաւութեան գոհ մ'է...:

Եւ Նորպերդ քրքլաւոր ծիծաղ մը փրցուց:

Այդ երգիծաբան հարուածներուն տակ, Պիանքա սաստիկ տժգունեցաւ, սակայն լռեց:

— Բայց, շիտակն ըսէ — վրայ բերաւ կեղծ դերակոմսը կատաղի պնդութեամբ — լաւ չըլլա՞ր որ մենք մեր ընթացքին մէջ տկար դիւրահաւան էակներու հանդիպինք, առանց անոնց բերնէն տրտունջ մ'իսկ լսելու: Մէնտէսը ինծի համար այս էակներէ՛ն մին է...: Միւս կողմանէ շատ միտք չունիմ հետը խաղալու, մանաւանդ կը փափաքիմ իրեն երջանկութիւն պատճառելու, միայն թէ ինքը իմինիս արգելք չըլլայ: Ահա ծրագիրս:

Եւ խանդավառութեամբ մը, Նորպերդ սկըսաւ բացատրել իր նախատեսութիւնները ու ընելիքները:

Պիանքա լուռ մտիկ կ'ընէր, գրեթէ սարսափած անոր՝ այնչափ քաջասրտութեան և խելացիութեան վրայ:

— Կատարելապէս իր հայրը եղած է — կը մրմնջէր ինքն իրեն հառաշնքով:

Իրենց խօսակցութիւնը երկու ժամու շափ շարունակեցին, յետոյ Նորպերդ դուրս ելլելով դէպի նամակատուն մեկնեցաւ: Բայց Գարմելիդայի նամակը ստանալուն պէս, իր կատաղի բնաւորութիւնը բռնկեցաւ, գայրոյթը իր այտերը բոցավառեց:

— Անիծեա՛լ աղջիկ — բացագանչեց, բզրքտելով նամակը ակռաներով:

Բայց իսկոյն կեղծ դերակոմսը իր բարկութենէն իջաւ:

— Միթէ Մէնտէս իմ ձեռքիս մէջ չէ՞ — ըսաւ ինքն իրեն — ինչո՞ւ ուրեմն այսչափ կը տաքնամ: Եթէ այդ օրիորդը ինծի չ'օգնէր, ինքը ինծի կ'օգնէ:

Հետեւեալ օրը, ժամը տասնի ժամանակները, կեղծ դերակոմսը նկարչին ուսումնասնեակը դնաց:

Իր Ռինայի հետ խօսակցութենէն վերջ, Մէնտէս յուսահատ ու լքեալ տուն դարձած էր, սկնեակը քաշուած չուզելով ոչ մէկուն հետ տեսնու-

ւիլ:

Իր հաւատարիմ սպասաւորը, զինք այնպէս յուզուած տեսնելով և դժբախտութենէ մը վախնալով, ուզեց սենեակին դուռը բանալ փորձել, բայց երիտասարդը պատասխանեց ներսէն.

— Ազատ թո՛ղ զիս, մարդու պէտք չունիմ ...գնա՛:

Ծեր սպասաւորը չուզեց վրայ տալ այլեւս, որ գայն չգրգռէ: Գոհ եղաւ դրան քով կձկուած մնալու, որպէսզի իր տիրոջ ամենափոքր ակնարկին պատրաստ ըլլայ:

Այս ժամանակ Մէնտէս, ինքզինք իր տագնապներուն անձնատուր ընելով, թիկնաթոռի մը վրայ ինկած և հոն զլուխը ձեռքերուն մէջ, ջանաց իր միտքն ամփոփել... և մտքին մէջ գտնուած տարակոյսները պարզել: Վանեց կասկածը թէ այն աղջիկը. իր պարզամիտ նայուածքով, ուզած ըլլայ իր արժանապատուութեան հետ խաղալ և ասոր յանգեցաւ թէ զուցէ այն երկչոտ որբուհին ուրիշի մը խոստացուած էր...:

— Բա՛յց ոչ — բացազանչեց քիչ մը մտածելէ վերջ — երէկ ալ ինձի չըսա՞ւ թէ ինքն ազատ էր ...ուրե՛մն:

Թշուառ երիտասարդը մոլորական կը թափառէր երկիւղի և անձկութեան մէջ...:

— Աստուած իմ — կը մըմնջէր — խենթե՛նալո՞ւ բան է...ես չե՛մ ըմբռներ:

Յակորը որ անձկութեամբ մտիկ կ'ընէր, զի-

չերն ի բուն լսեց այդ տրտունջի և անհանգստութեան մըմունջը. արագ քայլերու տրոփին մը, երկայն հառաջ մը: Բայց չէր համարձակեր այլևս դուռը զարնել, և ոչ իր տիրոջ անհանգստութեան պատճառն հարցնել:

Առտուն սեղանատունն Իրեցաւ, աւելի հանդարտ: Մասամբ իր սովորական պաղարիւնութիւնը վերստացած էր. միտքն յիշած՝ ինկած էր իր դերակոմս Սարաքի հանդիպումը և անոր այս առաւօտ տալիք այցելութիւնը:

Ուստի նախաձաշն ըրաւ, պալատէն մեկնեցաւ դէպի ուսումնասենեակը: Բայց գործի չսկըսաւ, վասնզի շատ թոյլ կը զգար ինքզինք... և յետոյ... այդ ըոպէին, նկարչին անդիմադրելի սէրը կը լռէր՝ տեղի տալու համար յուսահատ տարփածուի մը զօրաւոր ու փակուած սիրոյն:

Դեռ Մէնտէս խորատուզուած էր իր ցաւատանջ մտածութիւններուն մէջ, երբ դուռը զարնուեցաւ:

Ինքը գնաց բանալու:

Նորպերդ ներկայացաւ, ներողութիւն խնդրելով կանուխ գալուն համար:

— Բայց այնչափ կը փափաքէի աշխատութիւններդ տեսնել—աւելցուց— և ձեռքերդ սեղմել... որ քաղաքավարութեան օրէնքները զանց ըրի:

Մէնտէս ազնուական ժպիտով մը խոնարհեցաւ:

— Շատ զոհ եմ քու այցելութեանդ— պատասխանեց— բայց դժբախտաբար հոս հազիւ քանի մը նախածիր պատկերներ պիտի գտնես... Կ'ուզե՞ս տեսնել զանոնք...:

Կեղծ գերակաման կրկնել շտուաւ հրաւէրը: Ինք մեծ ուշադրութիւն գնել կեղծեց պատէն կախուած իւղանկարներուն. շատ հիացումով զրուատեց զանոնք. բայց իսկապէս աչքին տակով նկարիչը կը դիտէր և շուշացաւ նշմարել Մէնտէսի գունատութիւնն ու խռովքը:

Ո՞վ գիտէ ինչ պատահած է — կը մըտածէր Նորպերգ, և շարունակեց բարձրաձայն. — Դուն հո՞ւ գեղեցկութեան եզակի տիպարներ և յանգուզն շարադրութիւններ ունիս, շատ վեր սովորական յղացումներէ և իսկական դպրոցական արտադրութիւններէ... Դու այն եզակի հանճարներէն ես որ գիտեն արուեստը երկաթի ձեռք վարսել, ջանալով իրական կեանքի պատկերը գաղափարել: Կը գմայլիմ քու յաւերժահասներուդ և բազոսի քրմուհիներու գեղեցկութեանց վրայ, քու կոյսերուդ բերկրալիութեան և ոչ նուազ նաև ահաւորութեանց վրայ, և այս միւս առարկաներուն խորութիւնը՝ զարմանքի և յարգանաց մեծ զգացում մը կը ներշնչեն ինծի... վասնզի անոնց մէջ միայն կը գտնեմ արուեստին ճշմարիտ և վեհ փիլիսոփայութիւնը...:

— Եւ հանճարին պատերազմները: Շնորհակալ եմ գերակամս. իմ անձնասիրութիւնս շատ

զոհ մնաց՝ տեսնելով որ քեզ նման արուեստից սիրահար մը, արժանի կը համարի գեղեցիկ գտնելու իմ ողորմելի արտադրութիւններս...: Պիտի չմոռնամ քու խօսքերդ... քու զրուատիքդ... բայց հիմա ուրիշ բանի վրայ զարձնենք խօսքերնիս:

Մէնտէս մեղամոզձոտ ժպիտով մը՝ հրամայուց Սարաքը որ նստի, յետոյ շարունակեց.

— Շատ ժամանակէ՞ ի վեր, պարո՞ն գերակամս, Ֆիրէնցէ կը գանուիս:

— Միայն տասն և հինգ օրէ ի վեր: Հոս եկայ սրտի հիւանդութեան մը զարմանումի համար, որ երկու տարիէ ի վեր զիս կը խոշտանգէ... սէր մը որ ինծի շատ սուղի նստաւ:

Մէնտէս ցնցուեցաւ և ինքնաբերաբար մէկ ձեռքը Նորպերգի վրայ դնելով, ըսաւ.

— Կ'ըմբռնեմ ըսածդ և կը կարեկցիմ պարո՞ն:

Կեղծ գերակամսը յուզիչ ժպիտ մ'ունեցաւ:

— Դեռ աւելի պիտի կարեկցիս ինծի երբ քեզի ըսեմ թէ փոխանակ զարման մը գտնելու հոս ցաւերուս, թոյն մ'ալ վրան աւելցաւ, որ իմ հոգիս կը քայքայէր:

— Գուցէ թէ այն կինը զքեզ հո՞ւ հալածած էլլայ:

Նորպերգ գլուխը շարժեց:

— Ո՞հ, ոչ... այլևս անոր վրայ չեմ խօսիր... այլ մտիկ ըրէ ինծի. իմ բոլոր պատմութիւնս

ընեմ քեզի. շատ պարզ է և մեկամաղձոտ:

Ես խենթենալու չափ կը սիրէի հրեշտակի պէս գեղեցիկ ու մաքուր օրիորդ մը. Պատրնի ջուրերը զիրար ճանչցանք. ան ամենահարուստ վարձակալի մ'աղջիկն էր. այս մարդը հարստութիւն զիգելու, ազնուականութեան տիտղոս մը կ'երագէր: Վեց ամսէ հետէ զիրար կը սիրէինք, երբ օր մը... դժբախտ օր... գեղեցիկ դէմքով օտարական մ'եկաւ, անհաւատալի հարստութեան տէր, որ ինքզինքը դուքս կը հռչակէր: Իսկոյն փնտուռեցաւ, շրջապատուեցաւ, լաւագոյն ընկերութեանց մէջ մտաք գտաւ, վարձակալն իր բարեկամն եղաւ, աղջիկը անոր ամուսինը.. :

— Անոր ամուսինը, ուրեմն ան այդպէս շուտով մոռցաւ քեզ:

Նորպէրդ ուսերը ցնցեց անմիտ ժպիտով մը:

— Ի՞նչ կ'ուզես— շարունակեց— դքսութեան տիտղոսը անոր գլուխը դարձուցեր էր: Ո՛հ, բայց ես շատ տանջուեցայ, անպիտան տառապեցայ... :

Մէնտէս մեծ շահադիտութեամբ մը նայեցաւ կեղծ դերակոմսին:

Վերջինս քանի մը վայրկեան գլուխը ձեռքերուն մէջ կեցաւ, յետոյ յանկարծ ջղագրգիտ քրքիչով մը.

— Ո՛հ, սակայն անհամ, անմիտ ողբերգութիւն մըն է այս կեանքը... ամէն կողմ ստախօսութիւն, խաբեբայութիւն. ես ինքզինքս տուի հաճոյքի, արբեցութեան, ցաւերու մոռացու-

թեան... բայց ուրիշ բան չգտայ, եթէ ոչ ճանձրոյթ... ճանձրոյթ, այս է իմ սոսկալի թշնամիս... :

Կեղծ դերակոմսը դարձեալ քանի մը ըսպէ մտածկոտութենէ վերջ՝ սկսաւ.

— Ֆիրէնցէ հասնելուս պէս Տէ Ռոսսի կոմսին տունը ներկայացայ. հո՛ն ինձի նոր յուսախաբութիւն մը կը սպասէր... :

Մէնտէս գոյնը նետեց և աթոռէն վեր ցատքեց:

— Տէ Ռոսսիի տունը — թոթովեց... :

Ընդմիջեց և կարծես կը վարանէր:

— Արդեօք դո՛ւ ալ կը սիրես մէկը ... որ այն տունը կը յաճախէ— հարցուց Նորպէրդ շրփոթական ձայնով մը և սաստիկ յուզում մը կեղծելով — կը ներես հետաքրքրութեանս... :

— Այո՛... ես ալ կին մը կը սիրեմ որ հոն կը յաճախէ — պատասխանեց Մէնտէս որ փուշի վերայ նստած էր և սրտի զեղումի սաստիկ պէտքը կը զգար — յիմարաբար կը սիրեմ զայն:

— Եւ... կընայի՞ գիտնալ իր անունը:

— Ռինա ... սեղանուօր Մարազի կրտսեր աղջիկը:

Նորպէրդ սրտի գոհութեան կեղծ հառաչանք մը քաշեց. յաղթանակի փայլակ մը շողաց իր աչքերուն մէջ:

— Ինքն իր բերնով կը խոստովանի — մըր-

մընջեց ինքն իրեն:

— Հրեշտակային էակ մ'է — յետոյ շա-

ըունակեց Նորպերդ բարձրաձայն—և կ'ըմբռնեմ քու երջանկութիւնդ, եթէ ան ալ փոխադարձ սէր ունի...

— Մինչև երէկ այո՛...բայց այսօր...

Նորպերդ ուշադրութեամբ ականջ դրաւ. կարծես հագիւ կը շնչէր:

— Այսօր հագար ու մէկ տանջանքի ... հագար ու մէկ կասկածի մատնուած եմ...

Խոր վշտի մը արաայայտութիւնը երեւցաւ Դերակոմսի դէմքին վրայ: Ինքն ալ Մէնտէսի վհատութենէն ազդուեցաւ. բայց սակայն կարեկից ակնարկ մը դարձուց անոր, մըմնջելով.

— Կրնայի՞ արդեօք վշտերուդ մասնակից ըլլալ:

— Ինչո՞ւ չէ, քու մտերմական զգացումներովդ ինծի բարեկամի մը ապացոյցը տուիր փոխադարձ կը պարտիմ: Լսէ՛:

Եւ նկարիչը նախորդ օրուան դէպքը ծայրէ ծայր պատմեց:

Նորպերդ ամենայն ուշադրութեամբ կը լսէր, առանց ընդհատելու:

Երբ Մէնտէս աւարտեց, Նորպերդ խօսք առաւ:

Բաւական տարօրինակ է գլխուդ եկածը, բայց պէտք չէ վհատիս: Ասոր տակ կ'նսջ մը մատը կայ...

— Կը կարծես:

— Անպատճառ: Ռինայէն առաջ ուրիշը կը

սիրէի՞ր: Դարձեալ ներողութիւն կը խնդրեմ իմ անզգուշութեանս, բայց միայն քո բարւոյդ համար է...

Մէնտէս կարմրած էր, աչքերը վար առնելով:

— Այո՛,— ըսաւ նա,— կին մը կը սիրէի որ հրէշտակի մը ժպիտն ունէր և դեւի մը սիրտը: Սէր մը կը կարծէի և քմասէր մ'ելաւ դիմացս: Սէր մ'էր որ զիս կը լքեցնէր, զիս կ'ընկճէր ... և...

— Եւ...ցաւօք սրտի ստիպուեցար ուրիշ մը առնուլ. այնպէս չէ՞:

Մէնտէս խոր հառաչ մը արձակեց...

— Այս երկու կանայք զիրար կը ճանչնան — հարցուց Նորպերդ շտհադիտութեամբ:

— Բարեկամ են. իմ առաջին տարփուհիս...

Տէ Ռոսսի օրիորդ կոմսուհին էր:

Այս խօսքը Նորպերդը սարսուեցուց...

— Տէ Ռոսսի օրիորդը, ըսիր — գոչեց նա, գունատիլ և աթոռէն վար իյնալ կեղծելով իբրև սաստիկ յուզումէն:

Երիտասարդը քանի մը վայրկեան պատասխան չտուաւ:

— Սօսէ՛... խնդրեմ—թախանձեց Նորպերդ:

— Ըսի արդէն—թոթովեց Մէնտէս:

— Շատ լաւ ... այն ատեն ես ալ ըսեմ որ

Աննինան իմ երազներուս նոր գաղափարականն է. Անոր սիրոյն կը մեռնիմ, եթէ ինք զիս չը-

թէ

սիրէ. կ'երգնում որ ըզեզս կը պայթի:

Նկարիչը բռնեց իր նոր բարեկամին ձեռքը
և սեղմեց:

— Կը մազթեմ ի սրտէ որ ինծմէ աւելի եր-
ջանիկ ըլլաս — ըսաւ զգաժուած ձայնով:

Նորպերդ աչնպիսի մխիթարեալ շարժում
մ'ըբաւ, որուն զերասան մը պիտի նախանձէր:

— Բայց եթէ կոմսուհին իր կողմանէ հիմա
զքեզ կը սիրէ... — մըմնջեց կէս բերնով:

— Ես պիտի չկարենամ փոխանակել: Մա-
նաւանդ որ երէկ վերջին տեսակցութիւն մ'ալ
ունեցանք միասին, և ես անկեղծօրէն իրեն պար-
զեցի իմ զգացումներս:

Նորպերդ զժուարաւ իր ուրախութիւնը
զսպեց:

— Եւ անիկա ..ինչ պատասխանեց քեզի —
հարցուց անձկանօք, ձեռքը սրտին վրայ սեղ-
մելով իբրև ցաւի նշան:

— Սպանալիքներ ... և զժբախտաբար կը
վախեմ որ զործադրէ...:

— Ես զքեզ կը պաշտպանեմ. սակա՞, եթէ
կ'ուզես որ քեզի խորհուրդ մը տամ...:

— Ըսէ՛:

— Ես...բու տեղդ ըլլայի այլևս ընաւ ոտք
չէի կոխեր օրիորդին տունը:

Մէնտէս ժպտեցաւ տխուր կերպով:

— Բայց իր հայրը բարեկամս է...:

— Բայց պատուաւոր մարդ մ'ալ է... և դու՛ն

Երեսմաս

Կարճաւա իրեն արեւ եւ հիշարարքանց խոստա-
վանէլ... — Եւ օրպէրդ. ընգմիդ ունեցաւ:

— Այո՛... այո՛... ստույգ է — ըսաւ մէջտես
աշխուժութեամբ — այստե՛սան դերք, եւ կը վա-
խեմար... կը վայսեմար սիրունիկս կողմէ:

— Բայց դուն ինձի շնորհ թէ պիտի
նկարեշու կերթա:

— Այո՛:

— Ես... ուրեմն... պատրաստով մը բացա-
րութեան ուղի իրմէ: Անկեղծօրէն յայտնէ արտի-
փիմակը. ըսէ անոր որ, հապառ չ'ընձայ է
պրպարութեանց... եւ էթէ ստապ թէ կը սիրէ
հիմայ շտարակուսիլ երբեք բու վրայ:

— Իրաւումը ունիս, փորձ մը է — Կոր
այսօր իսկ կ'ուզեմ ընել: Իմանաւանդ որ
սեղանաւորէ՛ս ալ հոն պիտի չ'ըլլայ...:

— Ինչո՞ւ:

— Որովհետեւ երէկ թորթն օ մեկնեցաւ:

— Ինչ լաւ արիթ թէպի համար —
ըսաւ դ'երկոմար ոտքի ելլելով եւ փոխառով
մը աւելցնելով: Ինչկը՞նքար կ'ըսեմ
թէ վրայ համակրութեան մ'ունեցայ,
կոր երբեք ուրիշի նկատմամբ
ունեցամ չէի:

Բարեկամ եմք եւ փոխառարք իրա-
րու օգնող ըլլանք... կ'ուզե՞ն:

Առաջմ էթէ իրատուն մը շունքս,
երբանք նախահայ մը ընենք եւ

բեպ ըսեմ թէ ինչ ճրագոր ունիմ մա-
րիս մէջ:

— Հաճոյքով կ'ընկերանամ:

Երկու նոր բարեկամները դուրս ելան ~~ուսում~~
ուսումնասիրելու Կեղծի Գեղարք Երկրորդ
ուրրուկան:

Ճամբուն մէջ, Կեղծի Գեղարք մէջ ~~բարե~~
բարեկամները չկարողացան իր
տարիանքը առ ետաներ Կեղարքի ~~տարի~~
օրրոգը:

— Ո՛հ... Կրէ թեյ նա շարիտ — դի-
տել տըսաւ Գեղարքը հառաչանքով
մը:

— Ապահով եղիր որ հիմա իսկ
չիս կ'արհաւիրէս — ըսաւ
օտարազանը Կեղարքին:

— Եթէ ստույգ ըլլայ — մտա-
ցեց Կեղարքը:

— Եթէ — շարունակեց մէնտէս
դանդաղօրէն — պատուոյս վրայ
կ'երդի իմ, որ ես այլեւս չեմ
սիրէր այդ օրրորդը, եւ ամէն
ժամ ի գործ պիտի դնեմ որ
մտնի ըստ անոր աչքերուն,
որպէս որուն դիւրաւ կարենաս
խաղաղիլ թու մտադրութեանս
մէջ:

— Այնուպէս սիրտ մը ունիս —
բացատրեցեց Կեղծի Գեղարքը

արտաբնապէս յուզուած — եւ
ուրիշ բան չեմ կրնար բայց մը-
այն անկեղծօրէն մայրեղ, որպէս
թու երգանկութիւնի իմիջես ա-
ւելի քան շանայ:

— Եւ որ հակառակ եմ... եւ թանկ,
որ համաձիտ եմ — ըսաւ նկար-
իւր յուսալից ճպրտով մը — լայ
է որ միզոյնէրը մտածելը օր
առաջ այս երգանկութեան
հասնելու համար:

Դուն այս վայրկեանիս սր-
տիդ մէջ այն Ստիւաճային հոյակերէն
մին ունիս, որ առանց որեւէ հառաչան-
քի մը որ մեզի մոռցնել կուտան
իրական կեանքի ամէն դառնութիւն...
եւ ընդհանրապէս... երկունքնէ սկա-
նալ... ահա որ բան մ'ունիմ,
որ սիրտս կտոր-կտոր կ'ընէ: Եթէ իմիս
չիս պիտի շարիտ այլեւս:

— Դեռ կ'ը յուսանիս — հարցուց Կեղարքը:
— Եւ ինչ... գուցէ կը խաբուիմ — հարցուց
մէնտէս: — Այո՛... կարծեմ կը խաբուիս:

Իմիս չի կրնար պարզապէս թեյ
սիրել. եթէ ես կրն ըլլայիքեց թեյ կը
պաշտէր — պատասխանեց Կեղարքը:
Ինչո՞ւ համոզուեմ չեղտով մը.
մէնտէս տարբերեալ ըլլուիս Կեղարքը:

— Դուն շատ բարբ ես — մընտէս:

— Բարեկամս ե... ջեմ ուզեր քոսի... որով —
 հետեւ այսօր իսկ կրնամ իրեն բացատրուիլ
 ուզել: — Կը հաստատեն, սիրելի բարեկամս...
 եւ ինչ որ քեզի պատահի, յիշէ որ որեւէ
 պարագայի մէջ՝ եւ եմ պատասխանատուն:
 Առաջարկով թիւր... քիչ մը վաւերացրելի,
 բայց մէնտէս. միտքը ուրիշ կողմ շրջելով,
 շատ կարեւոր ուժերն շտուաւ, կամ գոնէ
 էջնացաւ, վասն ինչ լռեց:

— Բայց... տեղեկարկ ջոնէյր — Բացառանշույ
 Աորպէսդ պուարթագին — Անոս մտնենք... Անոսի
 վրայ դարձեալ կը սկսիսք մեր վիճարանործինն
 երբ:

ԺԵ

Տէ Թոսար օրիորդը միմակ է իր սենեակին
 մէջ, սենեակ մը պայծառ եւ քմահաճօյ, ինչպէս իր
 հանակրեւի բնակչուներն:

Աղջիկը, կարծես սակե տեսակ կատարողութեան
 եւ նախանձի գերի եղած էր: Իր կարծիքը եւ
 ոտան աջերը պնդ կը մտածէին թէ նոր լացած
 էր, իր վառած, տեղեկային սլաքերը, մայրերը
 իստոնաբնդ-որ պրուած ուսերէն վար. վերջա-
 պէս բոլոր իր առաւ օտեւան սրբու-
 կարդերը միասին իր հոգւոյն վիճակը
 ներքին իստոքը կը յայտնէին... որով, ինչ-
 թակալ էր նայ- վարկեանին...
 Ասիորդ- գրչերը, Աննինա որ ճորտայի ն ստէն

տանջանք կրած էր:
 Ասիորդան ըսար Տիմարի Թինայի եւ Գար-
 մելիդայի հետ, ինքսինք քաղցրաբարօյ ցոյց տար,
 ուրախ պիտ շրջապատող անջարօյ, մինչդեռ իր իսկ
 երջանկութեան աներակներուն տակ, յոյսերուն մէջ
 ձնշուած, կարծես կը խնդրուէր, սիրտը կը ձգ-
 տէր. սուկաւի բան մըն էր իր բնական կապմու-
 թունէն վեր: Բայց իր անպտույ կարար ուժերն էր,
 որ պնդ փրկեց. եւ ոչ ոք կրնայ երեւակայել,
 այն տանջանքը կոր կը պզար ինչո՞ւ անջրկել,
 մինչդեռ իր մտնէրը պուարթագին կը սակէին
 իրանակի ստեղծերուն վրայ կամ ստեղծարդ զ
 շայնով մը կը գեղգեղէր սիրային

... Գրչերը Թինայի Թինայի Թինայի

վիպերդ մը:

Սակայն, վերջապէս մինակ կը գտնուէր, ազատ՝ իր սենեակին մէջ, կրցաւ սթափոււմ մը տալ այն բոլոր ճնշեալ ժամերուն:

Երկար ժամանակ լացաւ կատաղութեամբ, զլխուն մագերը փետելով, շրթունքները խածնելով, սաները արփելով, հեծելով, մոնշելով վայրենի վերաւոր զազանի մը նման: Նա չէր կրնար ներել Մէնտէսի իրեն ցոյց տուած արհամարհանաց:

Ո՛հ, վրէժս պիտի լուծեմ — կը բացագանչէր հեծեմանքով — վրէժս պիտի հանեմ:

Գիշերը լուսցուց ծրագիրներ կազմելով, մէկը միւսէն տարօրինակ. հազար միջոցներ փնտռելով որպէսզի կարենայ խորտակել սէր մը՝ որ երեւան եկած էր բոլոր իր երջանիկ երազները չքացնելու համար:

Ո՛չ... կռուէն ետեւ չէր քաշուէր. դեռ չէր յուսահատեր:

Վերջապէս ո՛վ էր այն Ռինան դոր նկարիչը կը գերազասէր: Ողորմելի՛ մը, սեղանաւորէն պաշտպանուած: Ո՛վ կրնային ըլլալ այն աղջկան ծնողները, եթէ ոչ սամիկներ կամ անարդ արարածներ:

Աննինա կանուխ ելաւ անկողնէն, չկրնալով հանգչիլ. անկողինը անտանելի գտնելով, իբրեւ փշալից ըլլար: Երկար ժամանակ շրջեցաւ սենեակին մէջ, շարունակաբար ո՛նէ միջոց մ'որո-

Ի՞նչն յետոյքը Կը լայնութեամբ...
Թակալ էր նայող վայրկեանս...
Նախորդ գիշերը նենինա որ ժողովարարն անէն

ճալով՝ դիտած նպատակին հասնելու համար, երբ իր դրան թեթև նայուած մը զինք իր մտածութիւններէն սթափեցուց:

— Հրամայեցէք — ըսաւ կոմսուհին անհամբերութեամբ, առանց գլուխը դարձնելու:

Աղախինն էր:

— Ո՛հ, Աստուած իմ — բացազանչեց բարի տիկինը՝ տեսնելով այն խառնակութիւնը որուն մէջ կը գտնուէր իր տիրուհին — ի՞նչ ունիս... Երեսդ շաա կարմրեր է... Պէտք չէիր ելլել... այսչափ շուտ... կրնայիր զիս կանչել...:

— Անկարելի էր — պատասխանեց Աննինա ուսերը թոթուելով — որովհետև... երբեք այսչափ լաւ զգացած չէի:

Աղախինը քար կարեցաւ, սակայն փութաց պնդել այնչափ աւելի՝ որչափ կը ճանչնար օրիորդին քմահաճոյքը ու բնաւորութիւնը...:

— Բայց ինձի կ'երեւնայ ... և ապահով չեմ խարուիր. որ դու քիչ մը ջերմ ունիս...:

Աննինա ընդմիջեց:

— Ի՛նչ ջերմ: Բան չունիմ կ'ըսեմ քեզի, և ինձի մեծ հաճոյք մ'ըրած կ'ըլլաս... եթէ... դուրս ելլես:

— Կ'ելլեմ, օրիորդ, քանի որ այդպէս կը փափաքիս...: Բայց նախ ներէ՛ որ ըսեմ...:

— Վերջապէս, երկայն մի՛ ընեք — գոչեց աղջիկը, բարկութեամբ ստնները տրոփելով:

— Սուրբ Աստուածածին, ի՛նչ չար սատանայ

— մտածեց աղախինը. յետոյ աւելցուց բարձրաձայն և կերկերափող.

— Կ'երթամ, կ'երթամ. միայն կ'ուզէի ըսել որ հայրդ, պարոն կոմսը, հրաման կ'ուզէր որ քեզի բարի լոյսի գայ:

— Եւ ինչո՞ւ առաջ չըսիր — բացազանչեց աղջիկը:

— Բայց... երբ չէիր թողուր որ խօսիմ...:

— Լո՛է՛... ժամանակ չունիմ արտոոց լսելու... զնա՛ հայրիկիս ըսէ որ իրեն կը սպասեմ:

Աղախինը քիթը կախած դուրս ելաւ, մըմըռալով.

— Ի՛նչ համբերութիւն պէտք է այդ օրհնած աղջկան հետ: Եթէ էրիկ ունենայ, խեղճ մարդը գո՛րծ ունի. ոչ մէկուն հետ յարգանք չունի... ո՛չ մէկուն հետ:

Աննինա այս պահուս մինչդեռ իր հօր կը սպասէր, քիչ մը վրան գլուխը կարգի դրաւ և մեղկօրէն ինկաւ բազմօցին վրայ:

— Բարի լոյս Աննինա՛ս — ըսաւ կոմսը ներս մտնելով և փութալով իր աղջիկը գրկել: Կելըրուտ ըսաւ՝ որ քիչ մը անհանգիստ ես:

— Կելըրուտ յիմար է — ըսաւ Աննինա արհամարհոտ, սրտի գեղումով փոխանակելով իր հօր համբոյրները — երէկուան պատյունէն դեռ քիչ մը յոգնած եմ. բայց ասիկա պատճառ մը չէ որ անհանգիստ ըլլամ:

— Լաւ, շատ լաւ, ... ես ալ մտատանջուիլ սկսայ... խօսքերդ զիս հանգգտացուցի՛ն: Ա՛հ, չես կրնար երեւակայել որչափ դառն վշտեր սիրտս կը ճնշեն երբ գքեզ տժգոյն ու տխուր կը տեսնեմ:

— Սիրելի, սիրելի՛ հայրիկ, որչափ բարի ես — մըմնջեց Աննինա իր գեղեցիկ գլուխը հօրը սուսին վրայ դնելով. «բպէսզի իր գգացած դառն տպաւորութիւնը ծածկէ:

Բայց կոմսը որ այն վայրկեանին նշմարեց, աղջկան գլուխը իր ձեռքերուն մէջ առաւ, և ուշադրութեամբ գննելով գայն:

— Աննինա — կ'աղաչեմ — շիտակն ըսէ՛, դու կը չարչարուիս... դու լացե՛ր ես...:

— Ե՛ս... սիրելի հայրիկ ... չարչարուի՞մ — պատասխանեց աղջիկը ժպտելով: — Ե՛ս լամ: Ա՛հ, ա՛հ, եթէ լամ ալ... ուրախութենէս պիտի ըլլայ: Հայրը զինք սեղմնց կուրծքին վրայ:

— Կը հաւատամ խօսքիդ — ըսաւ — և ի՞նչպէս կրնայ ուրիշ կերպ ըլլալ: Ծնած օրէդ քու կեանքդ յարատե ժպի՛տ մ'եղած է: Բանի մը փափաքած չես զոր ես... քու հայրդ... պատրաստ եղած չըլլամ կատարելու:

Աննինա չկրցաւ յուզմունքի շարժում մը սանձել:

— Մտոյգ է... — պատասխանեց յետոյ հանդարտութեամբ — բայց... հիմա... բան մը չունիմ ... բնաւ բանի մը չեմ փափաքիր — աւելցուց

կրցածին չափ գոհ երեւնալու շարժում մ'ընեւ լով:

Կոմսը գործազուրթ սիրով մը անոր նայեցաւ, յետոյ խօսքը շարունակեց.

— Երջանիկ եմ գքեզ այսպէս գուարթ տեսնելով ... և քանի որ միտակ ենք ... անշուշտ կը ներես հօրդ, որ քեզի հարցում մը ընեմ:

— Խօսէ՛ — ըսաւ աղջիկը ապշած՝ աչքերը հօր վրայ սեւեռելով:

— Դու միայն հայրդ... կը սիրես:

— Ինչո՞ւ այս հարցումը կ'ընես ինձի — պատասխանեց աղջիկը վարանոտ. բայց իսկոյն իր սովորական համարձակութիւնն առաւ, բազմօցէն ելաւ և կոմսին ծնկներուն վրայ նստաւ, մէկ թեւը անոր վիզը փաթթելով և անոր աւանջն ի վար մըմնջելով գգուալիւր սիրով:

— Եւ եթէ... ուրիշ մը սիրե՞մ:

— Չեմ նախանձիր, երբ ապահով ըլլամ ... թէ այդ ուրիշը քու երջանկութիւնդ պիտի կագմէ...:

Աննինա գայն ընդմիջեց շղագրգիւ ծիծաղով մը:

— Իրաւցնէ — ըսաւ դառնասիրտ դժուարութեամբ, դու հայրերուն փիւնկն ես — բայց ես ուզեցի կատակ ընել... գիտնաս... որովհետեւ մի միայն գքեզ կը սիրեմ:

Տէ Ռոսսի կոմսը ծիծաղ մը փրցուց:

— Իրա՞ւ կ'ըսես գոչեց, սեւեռած աղջը-

կան նայելով: — Եւ եթէ ես քեզի ըսեմ — շարունակեց տեսակ մը բարեմտութեամբ — որ ամէն բան գիտեմ...:

— Ամէ՛ն բան...բայց ի՞նչ...: Չեմ հասկնար հայրի՛կ:

— Կամ հհասկնալ կը ձեւացնես, քեզի՛ պէս հարածճի...:

Ազնուական մարդը լսեց վայրկեան մը, բայց անսնելով որ ազջիկը կը յամառէր հպատասխանել, աւելցուց քաղցրութեամբ

— Սառ՞յգ է...թէ ոչ որ Մէնտէսը կը սիրես:

Աննինա սարսուռ մը զգաց, շրթունքը չըշարժեց:

— Վե՛ր առ անուշիկ զլիւիկդ — շարունակեց հայրը միշտ աւելի գգուալիւր — գրեզ պիտի չյանգիմանեմ: Ես ալ եթէ ազջիկ ըլլայի, կարծեմ, պատուոյս վրայ կ'երգնում, որ ես ալ պիտի սիրահարուէի այդ երիտասարդին: Ինքն ալ հաւան է ..խօսէ՛ անուշիկս...կամչնա՞ս, սրաի՛կս, բայց ինչո՞ւ: Գուցէ յանցանքը Մէնտէսի՞ն է որ քու գեղեցկութենէդ ու շնորհքներէդ հրապուրուած է...: Եւ ի՞նչպէս... գրեզ չի սիրեր...:

Հայրական գոռոզ ճառագայթ մը շողաց Տէ Ռոսսիի աչքերուն մէջ:

Աննինա դեռ լուռ կը կենար...:

— Ինծի լաւ ուշ դի՛ր, սիրելի ազջիկս — սկսաւ դարձեալ ազնիւ մարդը քանի մը վայր-

կեան վերջ — գիտես թէ որչափ գրեզ կը սիրեմ և ինչպէս իմ միակ փափաքս է գրեզ երջանիկ տեսնել. արդ...եթէ կը հաւատաս Մէնտէս կրնայ արժանաւոր կերպով համապատասխանել քու սրտիդ իզձերուն...:

- Շա՞տ լաւ. — հարցուց այս անգամ Աննինա աւելի սրտատրոփ, իբրև ճնճուկ մը՝ տրդու մը ձեռքերուն մէջ — շա՞տ լաւ:

— Շատ լաւ... եթէ ինքն ալ դո՞՛ է, ես հաւկառակ չեմ կենար ձեր միութեան:

Օրիորդը, մինչդեռ իր հայրը կը խօսէր, ժամանակ ունեցաւ իր յուզմունքը զսպելու, իր երկիւղները հանդարտեցնելու, իրեն շահաւոր կողմը բռնելու և իր այն դիրքէն ազատելու:

Մակայն, երբ կոմսը խօսքն աւարտեց, ինք պատասխանեց լրջօրէն... և ցրտութեամբ:

— Սիրելի հայրիկ, ես բնաւ չէի տարակուսեր քու ազնիւ առատաձեռն սրտիդ վրայ: Գուցէ քանի մ'օր առաջ շատ սիրով քու նուէրդ կ'ընդունէի... բայց հիմա... ո՛չ... վասնզի ես ալ իմ ապագաս կը մտածեմ...:

Կոմսը զարմացած անոր նայեցաւ:

— Գուր սա՞ծս չես հասկնար, ստոյգ է, սիրելի հայրիկ, բայց ես քանի մ'բառերով պիտի բացատրեմ կամ մանաւանդ քեզի հարցում մ'ուզգելով: Տեղեկութիւն ունի՞ս այն օտարականին ծագման վրայ. գիտե՞ս թէ ո՛վ է... ուսկի՛ց կուգայ:

Հայրը ապշահար եղաւ, սակայն հաստատամտութեամբ պատասխանեց.

— Ես իսկապէս չեմ գիտեր ո՞վ է... բայց իմ մէկ բարեկամս որ իր ծագման գաղտնիքը գիտէ, զիս ապահովցուցած է թէ Մէնտէս պարկեշտ, պարտաճանաչ, բարի երիտասարդ մըն է...:

Աղջիկը ցնցուեցաւ այն հաստատամիտ լեզուին վրայ...բայց միտքը զբաժնւում ըլլալով սաստիկ հակառակ կռուիլ, շարունակեց հեզնաբար.

— Եւ եթէ ես քեզի ըսելու ըլլամ թէ Մէնտէս կատարեալ ստախօս, խարբբայ մ'է ... թէ կեղծ անուամբ մը ներկայացած է քու բարութեամբդ և իմ վստահութեամբս զեղծանելու համար...:

— Ահ...ասիկա քիչ մը չափազանց կը թուի — բացազանչեց կոմսը — և ես չեմ կրնար հաւատալ երբեք նման վատութեան մը...:

— Ոչ իսկ եթէ փաստերո՞վ ալ ցոյց տամ — ըսաւ աղջիկը յուզուած՝ բայց հաստատուն ձայնով:

— Դո՞ւ:

— Ես...մտիկ ըրէ՛: Երբ դու մեր պալատը մտցուցիր այն երիտասարդը... ես — կը խոստովանիմ, ամենաջերմ համակրութիւն մ'ունեցայ անոր վրայ: Զայն սիրեցի ա՛յնպէս .., ինչպէս կարելի է անգամ մը միայն սիրել կեանքի մէջ...:

— Եւ նա՞:

— Անիկա...ինծի կը համապատասխանէր —

Թոթովեց Աննինա կարմրելով — համարելով զիս այս աշխարհիս մէջ ամենաերջանիկ աղջիկը: Բայց ես նշմարեցի որ Մէնտէս ինծի փախստեամբ կը խօսի իր ծնողաց մասին, և օր մը որ ես բանի մը վրայ կը պնդէի, ինծի խիստ կերպով պատասխանեց. ի՞նչ պէտք ունիս զիանալու, ես միայն քեզի բաւական չե՞մ:

Աննինա լռեց վայրկեան մը և իր հօրը նայեցաւ, որ գունատած էր, բայց կը լռէր:

— Ուրիշ անգամ մը — շարունակեց խաբբայ աղջիկը, այնպիսի համոզիչ շեշտով մը, որ ազնիւ մարդուն բոլոր նեարդերն ցնցեց, — ըսի Մէնտէսի որ քեզի հետ խօսի մեր սիրոյն վրայօր... և գիտե՞ս .. ի՞նչ պատասխանեց ինծի:

— Ի՞նչ... — հարցուց կոմսը բոլորովին այլալա՛ծ:

Աղջիկը կրկնեց զանդադօրէն, որպէսզի լաւ սպաւօրել տայ իր խօսքերը հօրը սրտին մէջ:

— Ի՞նչ հարկ կը տեսնես, զեղեցիկդ Աննինա, հօրդ հաւանութիւնը մեր սիրոյն հաստատութեան նկատմամբ...:

— Բայց ասիկա մեծ նախատինք մ'է — գոչեց կոմսը բոցավառ աչքերը տնկելով և շըրթունքը զոդդոջուն. — Աննինա՛, երգուիք ինծի որ զիս չես խաբեր...: Մտածէ՛ որ Մէնտէս պատուաւ որ մարդու մը համբաւ ունի...:

— Շատ անգամ համբաւներն սուտ կ'ելլեն — ըսաւ օրիորդը ամենայն հանդարտութեամբ,

անհոգութեամբ մ'ուսերը վերցնելով:

— Ո՛հ. բայց ես Մէնտէսին պիտի երթամ...
զայն պիտի ստիպեմ որ իր ծննդեան գաղտնիքն
ինձի խոստովանի, զայն պիտի ամչցնեմ... և ե-
թէ հարկ ըլլայ հետը պիտի զարնուիմ:

— Այդ ըսածներէդ բան մը չես կրնար ը-
նել, սիրելի հայրիկ, — ըսաւ աղջիկը հաստատ
ձայնով — վասնզի ատով մի միայն գայթակը-
ղութիւն մը երեւան կրնայ գալ ... և անշուշտ
պիտի չուղես որ քու աղջկանդ անունը ծամծրմ-
ուի բերնէ բերան, վասնզի... չարախօսներն ան-
պակաս են բոլոր նախանձու թոյնը իմ վրաս
թափելու ... մանաւանդ, եթէ ես տեղդ ըլլայի,
Մէմտէսին արձակման գիր մը կը գրէի ... ո՛րէ
պատրուակ մը գանելով, օրինակի համար. թէ մենք
ճամբորդութիւն մը պիտի ընենք, կամ ի՛նչ գիտ-
նամ...:

— Ինչպէս որ կը փափաքես, այնպէս կ'ը-
նեմ — ըսաւ կոմսը խղղուկ ձայնով:

Յետոյ ինքզինք ձգելով բազմոցին վրայ,
դէմքը ձեռքերով ծածկեց. մրմնջելով.

— Ո՛հ, իմ երազնե՛րս... իմ անո՛ւշ երազ-
ներս, ո՛ւր են:

Աննինա թէն հօրը վիզը փաթթեց, անոր
երեսը համբոյրներով և փայփայանքներով ծած-
կեց. յետոյ տեսակ մը պչրանքով կոմսին առջև
գորգին վրայ ծնրագրեց, թեւերն անոր ծունկի-
րուն վրայ կռթնցնելով դիտեց զայն իր գեղեցիկ

ու արտասուաթոր աչքերով:

Իր փափուկ երեսը դժոխային չարամտու-
թիւն մը կ'արտաշնչէր, զոր հայրը չնշմարեց ...

— Սիրելի հայրիկ, — ըսաւ աղջիկը — կը
ներես որ քու բոլոր երեւակայական խորհուրդ-
ներդ ցրուեցի... սրոնք իմա ալ էին...:

— Ներե՛լ քեզի, սիրելի հրեշտակիկս, մա-
նաւանդ պէտք եմ շնորհակալ ըլլալ քեզի — պա-
տասխանեց կոմսը վերցնելով աղջիկը և բոլորո-
վին սրտազեղ իր կուրծքին սեղմելով: Յետոյ
չարունակեց. — Տես երէկ իրիկուն ալ խօսեցայ
իմ յոյսերուս վրայ իմ անմահ բարեկամիս
Մարագի, և խոստացայ որ իր հարսանեաց հան-
դէսը քու կիրնիդ հետ միասին պիտի ըլլար ... և
ընդհակառակն...:

— Պարոն Մարագ... հարսանի՞ք — ըսաւ Ան-
նինա սաստիկ հետաքրքրութեամբ — խնդրեմ, ո-
րո՞ւն հետ:

Տէ Ռոսսի կոմսը հասկցաւ թէ սխալ մ'էր
գործածը, մանաւանդ որ սեղանաւորը իրմէն
խնդրած էր որ ուրիշին չյայտնէ. բայց այլևս
առաջին քայլն առած էր. և միջոց չկար ետեւ
գառնալու:

— Ռինային փեսան է — բացազանչեց նա
մէկ շնչով, և աւելցուց. — բայց խնդրեմ, մարդ
չիմանայ:

— Ռինայի փեսա՞ն — կրկնեց աղջիկը, սխալ
հասկցում մը կեղծելով — բայց ասիկա անկա-

րելի է...

— Եւ սակայն իրականութիւն է, սիրելիս, և կրնամ ապացուցանել:

Եւ մտերմութենէ մտերմութիւն, վերջապէս կոմսը այն երկու որբունհիներուն բոլոր պատմութիւնն ըրաւ իր աղջկան, ծածկելով միայն զլխաւոր կէտը, այսինքն է, թէ Ռինան սեղանաւորին ծախուած էր, և անոր տեղ փոխանակելով՝ ըսած էր թէ՛ գիշեր ժամանակ աղջիկը ճամբու մը վրայ ձգուած գտնուած է և Մարագ գայն թշուառութենէ և անպատուութենէ փրկած էր:

Աննինա կը կարծէր երագել:

Աչքերը գետինը կախած հօրը մտիկ կ'ընէր, լուռ, անշարժ, իբրև անզգայացած:

Յետոյ, յանկարծ, երբ կոմսն աւարտեց, ուժգին բացագանչեց.

— Եւ Ռինան... կը սիրէ՞ Մարագը ...: Կը հաւանի՞ իր կինն ըլլալ:

— Ռինա շատ սիրով ընդունած է սեղանաւորին ձեռքը:

Դժոխային յաղթանակի փայլատակ մը շոգաց կոմսուհիին դէմքին վրայ:— Մէնտէս— կը մտածէր Աննինա — հիմա դու ձեռքիս մէջն ես. նայինք երկուքէս ո՛րը...:

Աղջիկը անձկանօք կը սպասէր որ իր հայրը մեկնի, բայց անիկա կարծես բազմոցին վրայ դամուած մնացած էր:

— Կ'երագե՞մ — մըմնջեց ինքնիրեն — կ'երագե՞մ:

Մէնտէսը ես ազնիւ մարգարիտ մը կը կարծէի մարդկութեան, ինքզինքս երջանիկ կը զգայի գայն որդիս անուանելով, մինչդեռ խաբերա՞յ մըն է եղեր...վա՛յ մը...: Ո՛չ...ո՛չ, անկարելի՛ է — աւելցուց ոտքի ցատկելով և բարկութեամբ սենեակին մէջ վեր վար շրջագայելով:

— Ի՛նչ բան...անկարելի՛ է, հայրի՛կ—ըսաւ Աննինա՝ ակամայ ապշած այն յանկարծական թափին վրայ, բայց սուսեց կորսնցնելու իր ձայնին քաղցր ելեւէջը:

— Ոչի՛նչ, ոչի՛նչ...—ըսաւ կոմսը, գսպելով իր յուզուածը, որովհետև խոհեմութեան ձայնը իրեն կը թելազրէր այն բողբոջին՝ լռել, կամ լաւ ես «մտքէս բան մ'էր անցաւ... որ քեզի բնաւ չվերաբերիր ըսել»: — Մնաս բարեաւ...քիչ մը ուշ կը վերագառնամ... դուրս պիտի ելնեմ հիմա ... բարեկամի մը խօսք տուած եմ: Այսօր...անշուշտ բարեկամուհիներուդ այցելութեան կ'երթաս...:

— Անպատճառ, սիրելի հայրիկ, ապահով եղիր— ընդմիջեց աղջիկը որ փշերու վրայ էր:— Համբոյր մ'ալ տո՛ւր, և երթաս բարեաւ:

Հագիւ կոմսը սենեակէն դուրս ելաւ, Աննինա երկայն հառաչ մ'արձակեց, իբրև ծանր բեռ մը կրճքին վրայէն վերցուցած ըլլար:

— Եթէ՛ դեռ քիչ մը մնար հո՛ս, ես կը խղզուէի— բացագանչեց շտկուելով տժգոյն ու

դողդոջուն: — Մէնտէ՛ս, հիմա դու ձեռքերուս մէջն ես, նայինք ո՛րր: Հանգիստ պիտի չըլլամ մինչև որ քու արհամարհանացդ վրէ՛ժս չլուծեմ կատարելապէս:

Նա մօտեցաւ գրասեղանի մը և թերթ մը թուղթ առաւ, և հետեւեալ սողերը գրեց.

«Պարոն Մէնտէս,

«Այն կինը զոր դու կը սիրես, կամ կարծես սիրել, ուրիշի մը հարսնացու կ'ըլլայ. ուրիշ քեզմէ աւելի նուազ գեղեցկի մը, նուազ երիտասարդի մը, բայց քեզմէ վեր շատ կատարելութիւններ ունի. անկից կրկնապէս սիրուած է: Քու ասողդ այս անգամ շատ նպաստաւոր չէ, պարոն Մէնտէս... ուշադրութիւն դի՛ր... որ բոլոր աստղերը քեզի դէմ չապստամբին:»

«ԲԱՐԵԿԱՄ ՄԸ»

Յետ նամակը փակելու և կնքելու, Աննինա զանգակը զարկաւ: Աղախինը երկչոտ ու շփոթած կերպարանքով մը դրան սեմին վրայ երեւցաւ, չհամարձակելով յառաջ գալ, բայց անուշ մը հարցընելով.

— Օրիորդ դի՞ս կ'ուզե՛ս:

— Այո՛... հո՛ս եկուր... շուտ... կարեւոր գործ մ'ունիս ընելիք:

Խեղճը ապշած աղջկան նայեցաւ, առանց բան մը հասկնալու:

— Կը տեսնես այս նամակը — շարունակեց Աննինա ցած ձայնով — շատ լաւ. կ'ուզեմ որ ժա-

մէ մը, ոչ աւելի ուշ, Մէնտէսի ձեռքն ըլլայ... առանց կասկած տալու թէ ուսկի՛ց կուգայ:

— Բայց օրիորդ... ես...:

— Լռէ՛... եթէ դու զիս կը սիրես, ինչպէս միշտ կ'ըսես, ա՛նաւասիկ առաջին փորձը ցոյց պիտի տաս ինձի: Եւ ինչո՞ւ... կը սարսափի՞ս ոչ-ինչ բանի մը համար: Կ'ուզե՛ս որ ես քեզի սովորեցնեմ ինչպէս պիտի ընես: Լռէ՛. ձիերը կառքիս լծել տուր, և Մէնտէսի աշխատանոցին մօտը դնա՛: Եթէ չեմ սխալիր, կարծեմ ճամբուն անկեան վրայ կօշիկ փայլեցնող մը տեսած ես, որ օր մը քիչ մնաց իմ կառքիս անիւներուն տակ կը մնար: Անոր յանձնէ՛ նամակը և ըսէ՛ որ շուտով մը տանի Գու կառքին մէջ ծածկուած սպասէ: Եթէ Մէնտէս հոն է, և նամակը յանձնուած է, տուն գարձիր. ապա թէ ոչ Մէնտէսի պալատը կ'երթաս և միեւնոյնը հոն կը կրկնես:

Խեղճ աղախինը բոլորովին ապուշ կտրած էր:

Չուր տեղ պատճառանքներ բերած էր . . . ցցնելու թէ սրչափ անպատշաճ էր իր հասակին կնոջ մը այդպիսի գործերու մէջ մտնել:

Աննինա ոչ մէկ պատճառանքի ականջ չըկախեց:

— Հո՛ս ե՛ս եմ տան տիրուհին — ըսաւ — և պէտք ես հնազանդի՛ր

Այս բառերը այնպիսի թափով մը շեշտուեցան և այնպիսի բարկութեամբ, որ կելզրուս

զարհուրեցաւ:

— Շատ աղէկ... կ'ընեմ ինչպէս որ կ'ուզես
— Թոթովեց համակամուժեամբ—միայն կը մտա-
ծեմ որ լաւագոյն պիտի ըլլար, եթէ ոտքով եր-
թայի. աւելի նուազ վտանգաւոր կ'ըլլայի ճանչ-
ցուելու:

Ազլիկը ոտքերը տրոփեց անհամբերու-
թեամբ:

— Ինչպէս կ'ուզես այնպէս ըրէ՛, բայց փու-
թա՛յ, և գլխաւորապէս կ'արգելում որ մարդու
հետ չխօսիս...:

— Բայց... օրիորդ...

— Լռութիւն, զիս մի՛ ձանձրացնել: Շո՛ւտ
գնա՛:

Աննինա պատուհանին առջեւէն չհեռացաւ
մինչև որ աղախինին անկիւնը դառնալը չտեսաւ:
Այս ժամանակ ետև քաշուեցաւ: Բայց իր դէմ-
քը զօհուժիւն չէր արտայայտէր, ընդհակառակն
տխուր ու այլայլած էր:

Ուսկի՞ց առաջ կուգար այսպիսի հակադրե-
ցութիւն մը, երբ շատ լաւ յաշողեցաւ իր ծրա-
գիրը: Ի՞նչ կ'ուզես: Գործ մը կ'ըլլուի, բայց ա-
մէն չափազանցութեան դիմելու համար պէտք
չէ պախարակելի շարժում մ'ընել, առանց ամե-
նածանր տհաճութիւն մ'ունենալու:

Աննինա, որչափ որ քմասէր, վրէժխնդիր էր,
սակայն կուսական սիրտ մ'ունէր, վեշտասա-
նամեայ սիրտ մը դեռ չափազանց թարմ խղճի

խայթ չզգալու համար, որ կ'ունեցուի շար գործ
մ'ընելէ վերջ:

«— Դու կը կորսնցնես Մէնտէս — կը դո-
չէր Աննինայի սիրտը—բայց ո՞վ կ'ըսէ քեզի թէ
դու ալ պիտի չկորսուիս»:

Յանցաւոր օրիորդը սաստիկ յուզման մը
ենթարկուած էր. ամէն բոպէ որ կը սահէր՝ իրեն
յաւիտենականութիւն մը կը թուէր: Ամէն վայր-
կեան պատուհան կ'երթար, ամէն թէթև աղմու-
կի կը սարսուէր և ոտքի կը ցատքէր: Վերջապէս
քովի սրահին մէջ լսեց աղախինին ստնածայնը:

Յուզմունքէն զունատած, հովէն շարժող
տերեւէ մ'աւելի խռոված, Աննինա անոր սուղե-
վազեց:

— Ուրե՞մն — հարցուց բոլորովին դողդղա-
լով:

— Ուրե՞մն, օրիորդ—բացազանչեց աղախի-
նը ցուլի մը պէս փոնչելով և դիւահարի պէս
շարժելով—նամակը տեղը հասաւ: Աէնտէս ճիշտ
այն վայրկեանին իր աշխատանոցը մտած էր:

Աննինա շունչ մ'առաւ:

— Եւ... ապահո՞վ ես որ չտեսնուեցար:


— Ամենաապահով — ըսաւ: աղախինը ձար-
տատանական շարժումներով մը:

— Լա՛ւ... հիմա գնա՛ հանդիստ առ, սիրե-
լիս, այսօր իմ արդուզարդերս ես կ'ընեմ: Ազատ
ես այս ծառայութենէն: Զիս մինակ թո՛ղ:
Կելզրուտ գուրս ելնելու վրայ էր, բայց

աղջիկը վայրկեան մ'ալ կեցուց:

— Եւ մասնաւորապէս — ըսաւ փափուկ մը մէկ մատը բերնին զնելով — մարդու բան չըսես...:

— Ապահով եղի՛ր.. չեմ խօսիր:



ԺԶ.

Մէնտէս, հաւատարիմ Մարագի տուած խոստման վրայ՝ անոր մեկնելէն առաջ, իր ուսումնասնեակը գացած էր քանի մը վրձին պատրաստելու՝ Ռինայի պատկերը քաշելու համար:

Երիտասարդ նկարիչը հազիւ քանի մը բոպէէ ի վեր ձգած էր կեղծ դերակոմսը Սարաք, սակայն ժամադրութիւն զնելով անոր հետ նոյն գիշերուան համար: Մէնտէս առտուընէ նուազ մտածկոտ էր, վասնզի Նորպերդ իրեն քաղցր յոյս մը ներշնչած էր: Կը մտածէր այն վայրկեանը յորում իր պաշտելի աղջկան հետ պիտի գտնուէր, երբ թեթիւ դրան զարկ մը յափշտակութենէն զինք սթափեցուց:

— Հրամմէ՛ — ըսաւ, առանց իր տեղէն շարժելու:

Որչափ զարմացաւ տեսնելով առջեւը ճամբու խեղճ ծեր մը:

— Ի՛նչ կ'ուզես ինձմէ — հարցուց հետա-

քըրքըութեամբ:

— Զեզի նամակ մը յանձնելու եկայ, պարո՛ն:

— Ո՞վ տուաւ:

Բեռնակիրը ականջները քերեց, բայց հաւատարիմ կելզրուտի թելադրած խօսքերուն, պատասխանեց.

— Մարդ մը:

- Շատ լաւ ... ասիկա քու անհանգստութեանդ համար — ըսաւ Մէնտէս քիչ մը ստակ տալով խեղճ բեռնակիրին:

— Շնորհակալ եմ, վսեմափայլ տէր: Աստուած գրեց վարձատրէ: Հրաման մ'ունի՞ք:

— Ո՛չ:

— Յ տեսութիւն:

Եւ դուրս ելաւ:

Մէնտէս մինակ մնալով դիտեց ու դիտեց նամակածրարը: Դողդոջուն ձեռքով ու նուրբ շղագրով գրուած էր, որ կնոջ մ'ըլլալը կը յայտնէին: Երիտասարդ օտարական սիրտը ուժգնօրէն բարախեց:

Նա տենդոտ ձեռքերով բացաւ կնիքը. բայց հազիւ առաջին տողերը կարդաց, արեան հոսանք մը գլուխը վազեց և ցաւոց աղաղակ մը կուրծքէն դուրս պոռթկաց...:

— Ո՛հ, ո՛չ... անկարելի է... չի կրնար ըլլալ

— գոչեց — սխալ կը կարդամ:

Բայց որչափ կը կարդար այդ թուղթը, այն-

չափ աւելի իր տարակոյտները կ'աճէին:

— Եւ չի՞ կրնար ալ ստոյգ ըլլալ—կ'ըսէր:—
Ռինայի այն մտայուզութիւնը ... այն կցկտուր
խօսքերն, իրենց մէջ գաղանիք մը կը ծածկէին...
և այս գաղանիքը հիմա այս պիտակին մէջ կը
գտնուի:

Մէնտէս, կարծիքներու ծովու մը մէջ կ'ա-
լեկոծէր: Գլուխը կը վառէր, երակներուն մէջ
արիւնը կ'եռար:

Բայց ո՞վ է այս լաւ տեղեկութիւն ու-
նեցող բարեկամը որ ինծի կը գրէ: Գերակոմս
Սարա՞քը...չէ կարելի...հիմա իրմէ բաժնուեցայ...
այն ժամանակ...:

Յանկարծ երկրորդ տնգամ մ'ալ սլոռաց:

— Ա՛հ ..հասկցայ—ըսաւ սարսափելի բար-
կացած: — Աննինան է, Աննինան որ ուզած է
ինծմէ վրէժ առնուլ՝ այս վատ և անարգ զըր-
պարտութիւնը գրելով ինծի ... վասնզի հիմա ա-
պահով՝ եմ խնդիրը զրպարտութիւն մըն է: Ռի-
նան երէկ չէ միւս օր չըսա՞ւ ինծի թէ ինքը ա-
գատ է...ամենաագատ...: Եւ մէկ օրուան մէջ
կարենալ ուրիշի մը սիրունի՞ն ըլլալ ...: Ո՛չ ...
ո՛չ...: Ասոր տակ դարան մը ծածկուած է, այն
դիտաւորութեամբ որ զիս այն աղջիկէն բաժնեն...
և ո՞վ գիտէ թէ մատնութեան մը գոհ եղած չըլ-
լայ: Բայց...այսօր ամէն բան կ'իմանամ արդէն,
Գարմելիզայի ներկայութեան ալ պիտի խօսիմ...
և այն ատեն, վերջը խնդացողը աւելի լաւ պի-

սի խնդայ:

Մէնտէս երկայն հառաչանք մը քաշեց, իր-
ըն թէ խոր մշուշէ մը դուրս ելած ըլլար: Առա-
ջին անգամ նախորդ օրէն քաղցր յոյս մը իր վե-
հանձն սրտին մէջ տեղի կ'ունենար:

Անիկա՛ Աննինայի նամակը խնամքով մը
իր թղթապանակին մէջ պահեց, և վրձիններն
առնելով դուրս ելաւ:

Բայց հազիւ դրսի դուռը հասած, բեռնակի-
ւրը առջինն ելաւ:

Յանկարծական մտածութիւն մ'անցաւ նը-
կարչին մաքէն:

Կեցուց գայն, և զրպանէն հինգ ֆրանգնոց
թղթադրամ մը հանելով:

— Ասիկա քեզի համար է—ըսաւ— եթէ ին-
ծի շիտակն ըսես:

Բեռնակրին աչքերը ցանկութեամբ մը շող-
շողացին, բայց խորամանկութեամբ ցոյց չտուաւ,
խնդրանքի վրայ զարմանք կեղծելով:

— Ձեմ հասկնար — պատասխանեց — ի՛նչ
բան կ'ուզես ըսել...պարո՛ն:

— Ա՛հ ... ուրեմն զիս չե՞ս ճանչնար: Շատ
լաւ, ա՛ն այս դրամը որ յիշողութիւնդ թարմա-
նայ...:

— Շնորհակալ եմ...ա՛հ. այո՛, հիմա կը յի-
շեմ... այսինքն է կարծեմ դու այն պարոնն ես
որուն վայրկեան մ'առաջ նամակ մը յանձնեցի:

— Եւ ճիշտ այս նամակին համար է որ կը

փափաքիմ ճիշտը գիտնալ: Ո՞վ քեզի յանձնեց:
Ըսէ՛...եթէ կ'ուզես ուրիշ հինգնոց մ'ալ շահիլ:

Բեռնակիրը, վայրկեան մը մտածելէ վերջ,
բացագանչեց.

— Արդարև պարոն, ինչպէս որ կը փափա-
քիս, քեզի ամէն բան կ'ըսեմ: Այնպիսի կերպեր
ունիս որոնց կարելի չէ դիմադրել: Յետոյ այն-
չափ անխելք չեմ որ այդպիսի անուշ մանանայ
մը մերժեմ, որ երկինքէն առջեւս կ'իջնայ, մա-
նաւանդ որ այն անձը անգամ մ'ալ պիտի չտես-
նեմ...

— Օ՛ն ուրեմն...եթէ պիտի վերջացնեմ շա-
ղակրատութիւնդ: Ա՛ն, ահաւասիկ դրամդ... խօ-
սէ՛, շո՛ւտ ըսէ՛, գործ ունիմ:

Բեռնակիրը հեզնական ժպիտով մը.

— Շատ լաւ... լսէ՛: Այդ համակը, հասակը
առած, կարճահասակ, գերուկ կին մը ինծի յանձ-
նեց: Մէկ ֆրանք մը և ձեր հասցէն ինծի տուաւ,
ըսելով. — «Տար ասիկա իրեն, ես հոս Ս. Աստ-
ուածածնայ եկեղեցիին քով քեզի կը սպասեմ,
վասնդի չեմ գիտեր, թէ այս ժամուս պարոնը
տունը կը գտնե՞ս: Եթէ քեզի հարցնելու ըլլայ
թէ ո՞վ քեզի յանձնեց ասիկա, ըսէ՛ որ՝ մարդ
մը. ֆրանք մալ կուտամ եթէ յանձնարարութիւնս
ծիշա կատարես»:

— Շատ աղէկ, ...չնորհակալ եմ — ըսաւ Մէն-
տէս, մեկնելու շարժում մ'ընելով:

— Սպասէ՛ պարոն, դե՛ռ աւելին կայ — ը-

տաւ բեռնակիրը շահադիտութեամբ: — Երբ ես
տիկնոջ քով վերադարձայ, լսելու համար իրեն
թէ ինծի բրած յանձնարարութիւնը կատարեցի,
և իմ ֆրանքս առնելու համար, որ լուսնի լու-
սին տակ հագուագիւտ են այսպիսի դէպքեր, շատ
գոհութիւն ցոյց տուաւ... և դրամը ինծի տալով
կը մրմնար. «հիմա Աննինա շատ գոհ պիտի ըլ-
լայ»:

— Բաւական է...ամէն բան հասկցայ — գո-
չեց Մէնտէս ուրախութենէն կարմրելով և արագ
քայլերով հեռանալով — հիմա այլևս տարակոյս
չկայ — կը մտածէր ինքն իրեն — եղածը շատ ան-
ժուր վրէժխնդրութիւն մըն է, չվրիպեցաւ սրբ-
տիս մէջ դժոխքը բորբոքել: Ո՛հ, Ռինա՛ն, ան-
կարելի էր որ Ռինան ուզէր այս աստիճան զիս
խաբել:

Այսպէս ինքնիրեն խօսելով, սիրտը հազար
ու մէկ զգացումներով խառն, Մէնտէս Մարագի
պալատն հասաւ:

Սպասուհին դուռը բացաւ:

— Ո՛հ, պարոն նկարիչ...ներս եկո՛ւր — ը-
սաւ տիկինը բարեմիտ շեշտով մը — օրիորդ Գար-
մելիզան տունը չէ, բայց քեզ հետ վերաբերու-
թիւն չունի, դու պիտի նկարես ...

Երիտասարդին սիրտը սաստիկ կը բարա-
խէր:

— Ա՛հ...օրիորդ Ռինան...մինակ է — թոթո-
վեց — չեմ ուզեր գինքը անհանգիստ ընել: Եւ

Մէնտէս սրահին մէջ սպասուհիին կը հետեւէր. —
Եւ...կընայի՞ զինքը տեսնել:

— Անշուշտ. ինծի հակառակ հրաման մը
տուած չէ— աւելցուց տիկինը ժպտելով, յետոյ
ընտանութեամբ մը մօտենալով պարոնին, ըսաւ
ցած ձայնով. — Ես չեմ ըմբռնեք, ինչպէս օրիորդ
Գարմելիդա դուրս ելած է առանց Ռինայի: Ասոր
տակ խորհրդաւոր բան մ'ըլլալու է: Բաւական
է որ շուրջ բերանը հասած է: Բայց մտիկ ըրէ՛...
կէս ժամ մը կայ, անծանօթ մը պիտակ մը բե-
րաւ օրիորդ Գարմելիդայի դոր հազիւ կարգաց՝
ժամանակ չկորսնցուց, զգեստներն հագուեցաւ
և տունէն դուրս ելաւ, առանց պատճառն ըսե-
լու իր այս յանկարծակի մեկնումին: Բայց...
համբերութիւն... հիմա հոս տան տիրուհին դուն
ես, սեղանաւորը մեկնելէն առաջ մեզի ըսաւ, որ
մի միայն օրիորդ Գարմելիդայի հրամանները
պիտի կատարենք:

— Եւ որովհետեւ աւելի տարեցն է, իրա-
ւունքն իրենն է...բայց շնորհակալ պիտի ըլլայի
...եթէ ինծի միւս օրիորդը կանչէիր...:

— Կ'երթամ... հիմա կ'երթամ: Այսօր բնաւ
սենեակէն դուրս ելած չէ, բայց հիմա կուզայ...
ապահովապէս:

Ռինա մինակ իր սենեակին մէջ՝ մտածու-
թիւններով ընկղմած էր:

— Ի՞նչ պիտի ըլլայ իմ ճակատագիրս— կը
մտածէր ինքնիրեն — մարդու մը քով՝ զոր չեմ

սիրեր և երբեք պիտի չսիրեմ, բայց միայն որ-
դիական սիրով: Եւ ինչո՞ւ ճիշդ այս վայրկեա-
նիս, որ երկնաւոր լոյս մը կ'երեւէր ճամբո:ս
վրայ, զայ և իմ բոլոր երազներս, բոլոր իմ ցը-
նորքներս ցրուէ: Միթէ իրաւունք մ'ունի՞ այս
կերպով իմ վրաս տրամադրելու: Զիս փրկեց,
ստոյգ է, անպատուութենէ, բայց իմ բոլոր
կեանքիս երջանկութեան գնով: — Ո՛հ, Սուրբ
Աստուածածին— կը շարունակէր դարձեալ վայր-
կեան մը լուսութենէ վերջ — զիս քովդ տաք...
մեռցո՛ւր զիս: Սյս պահուս կայ ինծի համար
աւելի քաղցր բան մը, քան իմ մօրս կուրծքին
վրայ, իր քարէ ցուրտ անկողնոյն մէջ հանգչիլ:
Ո՛հ, որչափ կ'ազօթէի Մէնտէսի երջանկութեան
համար: Բայց... ս.բ. պիտի ըլլայ հիմա...: Ի՞նչ
կը մտածէ իմ վրաս: Իցի՛ւ թէ կարենայի ան-
գամ մը զինքը տեսնել, գտնէ անգամ մըն ալ...:

Դեռ իր սիրտը այս իղձերէն հովանքած չէր,
երբ սպասուհին սենեակը կը մտնէր, աւետելով
օտարական երիտասարդը:

Ռինա ոտքի ցատքեց թափով մը. բայց չու-
զելով ցոյց տալ իր խոտիքը. . .

— Գնա՛, — ըսաւ կնոջ — ըսէ՛ որ սպասէ
վայրկեան մը. չուտով կուզամ:

Սպասուհին դուրս ելաւ:
— Աստուած իմ — բացազանչեց աղջիկը,
ձեռքերը միացնելով — շնորհակալ եմ քեզի...
սակայն կը դողամ. Գարմելիդան զեռ չվերա-

դարձաւ... և ես իրեն հետ մինակ պիտի մնամ...:

Անակնկալ կարմրութիւն մը ներկեց իր տոգոյն ճակատը... չեքմ արցունք մը վագեց այտերէն վար:

— Օր մը չէ օր մը — ըսաւ նա — իրեն մեկնութիւն մը պիտի տամ: Լաւ է որ այսօր ընեմ. . մէկ անդամով: Աստուած զիս կը զօրացնէ:

Այսպէս մխիթարուած վրան զլուխը կարգի դրաւ և շուտով ներկայացաւ սրահին մէջ:

— Կը ներես որ զքեզ անհանգիստ ըրի — ըսաւ Մէնտէս շփոթած սպասուհիին ներկայութենէն — բայց պարոն Մարագը, ինծի փափաք յայտնեց որ շուտով աւարտեմ պատկերդ...:

— Ծատ լաւ ըրիր որ եկար — ընդմիջեց Ռինա աշխուժութեամբ — և .. ինչպէս կը տեսնես... քու տրամադրութեանդ կը սպասեմ...:

— Երբ այդպէս է, շուտով կը սկսիմ աշխատիլ:

Սպասուհին, նշմարելով որ իր ներկայութիւնը աւելորդ էր և շուգելով արգելք ըլլալ նկարչին, կամաց մը սրահէն դուրս ելաւ, ետեւէն դուռը գոցելով:

Այն անակնկալ աղմուկը արձագանգ մ'ուսնեցաւ երկու երիտասարդներուն սրտին մէջ: Ոչ մէկը կը համարձակէր խօսիլ... և ոչ իսկ աչքերը վեր առնել: Բայց այս ամէնը ակնթարթ մը տեւեց:

Մէնտէս մտածեց որ նման առիթ մը դրժ-

ուարաւ պիտի կարենար ձեռք ձգել, ասոր համար մտոցած աշխատութիւնն ու վրձինները, Ռինայի քր' սասցաւ, և սա դեռ չմտածած զիմադրելու, սրկու թեւերը զինք շրջապատեցին և բոցակէզ շրթունք մը հպաւ իր մաքուր ճակատին:

Ռինա յուսահատ ջանքով մը, ինքզինք այդ զրկախառնութենէն բաժնեց:

— Պարոն — ըսաւ դողդոցող ձայնով և արցունքոտ աչքերով — պարոն, դու կ'ուզես զիս կորսնցնել:

Մէնտէս աղչահար և շփոթած մնաց իր միեւնոյն թափով: Բայց իսկոյն զգաց որ ժամանակն եկած էր իր միտքը բացատրելու:

— Ռինա' — ըսաւ, անհուն տարփանքի ակնարկ մը սեւեռելով աղջկան վրայ — Ռինա', ես զքեզ կը սիրեմ... զքեզ կը սիրեմ: Ծատ լաւ, պիտի մերժես արդեօք, եթէ ես հո'ս ծնրադիր քու ստքերուդ առջև քեզմէ խնդրեմ որ իմ ճակատագիրս որոշես ... քեզմէ խնդրեմ որ իմ կինս ըլլաս...:

— Մէնտէս... արգէն երէկ քեզի ըսի — ընդմիջեց աղջիկը հեծկտալով — անկարելի են մեր հրազնները, անկարելի. ես չեմ կրնար երբեք քու կը ըլլալ...:

Արցունքի հեղեղ մը խղճեց իր բառերը:

Դէմքը ձեռքերուն մէջ ծածկած, նա քանի մը վայրկեան անշարժ, լուռ կեցաւ, ջանալով հեկեկանքները խղճել, որ իր խոռված կուրծքէն

գուրս կուգային:

Մէնտէս անոր նայեցաւ անհանդիսաւ դէմ-
քով, գրեթէ սաբսափահար: Յետոյ աչն ատնելով
օրիորդին.

— Ռինա՛ — ըսաւ — գու վիշտ մը, նեղութիւն
մ'ուներս գոր կ'ուզես ինձմէ պահել: Աստէ՛ ան-
գամ մը, կ'հրգուրնցնեմ զքեզ: Այդպիսի վար-
մունքի՞ մը արժանի եղայ... Պատրաստ եմ ա-
մէն իմնի տակալու, բացի քու լոռութենէդ...
վասնդի զիս կը սպաննէ...: Ըսէ՛ ինձի... արդեօք
ուրիշ մը կը սիրես:

— Ո՛չ... կ'երզնում — բացազանչեց աղջիկը
վստահ կերպարանքով ճակատը վեր ատնելով —
երբ քեզի ըսի թէ զքեզ կը սիրեմ... ստոյգ էր...
վասնդի այնպէս կը զգայի... և դեռ ալ կը զգամ:
Այո՛, ես զքեզ կը սիրեմ... զքեզ սաստիկ կը սի-
րեմ, բայց կը կրկնեմ դարձեալ թէ քուկդ պիտի
չըլլամ: Մտիկ ըրէ ինձի:

Հեծեծախառն խօսքերով, Ռինա պատմեց ե-
րիտասարդին, բոլոր իր վարքը, բան մը չծած-
կելով, և կարծես սփսփանք մը, սրտի թեթեւու-
թիւն մը կը զգար այդ յայտնութիւններէն:

Մէնտէս ապշահար, ահանջ կտրած, մտիկ
կ'ընէր. բայց երբ աղջիկը ցաւալի շեշտով մը
իրեն յիշեցուց թէ սրբազան պարտք մը, երախ-
տագիտութիւնը, զինք Մարտգի հետ կը կապէր,
և թէ ինչպէս ինքը, նախորդ օրը, խօսք տուած
էր անոր հետ ամուսնանալու, երիտասարդը վեր

ցատքեց:

— Ա՛հ, ո՛չ . . . ո՛չ . . . այս բանս պիտի չըլլայ
երբեք — բացազանչեց ուժգին: — Դու ինձի ըսիր
որ քու պատիւդ վրկեց, բայց իր սրտին մէջ ա-
նիկա արդէն ուրիշ հաշիւ մը ըրած էր, մտածեր
էր զքեզ ուրիշ վայրկեան մը իւրացնել. և իր
իզձերը ծածկելու համար իր ձեռքը քեզի նուի-
րեց: Բայց դուն չես կրնար զինքը սիրել, Ռինա՛,
... ո՛չ... դու զիս միայն կը սիրես, այնպէս չէ՞...
ո՛հ, ըսէ՛... ըսէ՛ անգամ մ'ալ...:

Աղջիկը երկար նայեցաւ անոր, բայց ար-
ցունքոտ աչքերով:

— Իմ կենացս հրեշտակը — շարունակեց
Մէնտէս միշտ աւելի սգեւորուելով — ո՛չ... ոչ ոք
կրնայ զքեզ ինձմէ յափշտակել: Ռինա՛, ես քու
ոտքերուդ առջև կը փռեմ իմ սիրոյս անսպառ
զանձերը... բոլոր՝ ինչ որ ունիմ: Հաւանէ՛ իմ
ետեւէս գալու: Զքեզ իմ գեղեցիկ հայրենիքս կը
տանիմ, իմ ծնողացս կը ներկայացնեմ և կ'երզ-
նում իմ ամենասրբազան բանին վրայ, թէ նոր
համբոյր մը քու կուսական ճակտիդ վրայ չհը-
պած, դու իմ կ'ինս պիտի ըլլաս:

Ռինա աչքերը վար առած, այսերը կրակ
կտրած, լռիկ կուլար:

Այն ատեն Մէնտէս շարունակեց.

— Յանուն այն Աստուծոյն զոր դու կը
կանչես քու աղօթներուդ մէջ, յուսոյ խօսք մը
տո՛ւր ինձի: Փախի՛ր... փախի՛ր ինձի հետ, թո՛ղ

այն խոստումները որ քու սիրտդ կը կաշկանդեն, բաժնէ՛ ճակատագիրս: Դու իմ առաջնորդս պիտի ըլլաս, իմ աստղս, իմ գծուարին ճամբուս մէջ...: Դու պիտի ներշնչես իմ կտակներս ... և քու գեղեցկութիւնդ նշանաւոր պիտի ըլլայ և պիտի գնահատուի: Պատասխան տո՛ւր, Ռինա՛, ըսէ՛ թէ հաւան ևս ինձի հետեւելու: Եւ այս է վերջին, որոշիչ մեկնակէտը զոր կը մնայ մեզ ընտրել մեր ներկայ պարագային մէջ, Պէտք ես իմ վրաս կատարեալ, անսահման վստահութիւն մ'ունենար կամ ինձի հետ գալ, կամ այլևս զիրար չտեսնել...:

— Մէնտէս — մրմնջեց Ռինա, իր արցունքոտ աչքերը անոր դարձնելով — Մէնտէ՛ս, զիս մի՛ փորձութեան մատնիր, քու վտանքովդ, հրաժարէ՛ զիս քեզի ունենալու հաճոյքէն: Ես զըժբախտ ծներ եմ և այնպէս ալ պիտի ըլլամ բոլոր կեանքիս մէջ. բայց գոնէ միայն ինձի թողուի դառնութեան բաժակին վերջին մրրուրը քամել: Դու սիրտիս, մխիթարութիւն մը կրնաս գտնել քու արուեստիդ մէջ. ես երբեք զքեզ պիտի չմոռնամ...քու երջանկութեանդ համար պիտի աղօթեմ... և եթէ օր մը ամուսնանաս...:

— Ռինա՛ — ընդմիջեց երիտասարդը գրեթէ մոլեգին — դու զիս չես սիրեր, սիրած չես բնաւ, ապա թէ ոչ այսպէս ցուրտ կերպով չէիր տրամաբաներ: Եթէ դու կը խորշէիր Մարագի սէրէն, պիտի չմերժէիր իմ պաշտպանութիւնս, իմ խոր-

հուրդս... շատ լաւ, այդպէս ըլլայ. մնաս բարեալ... ես կը մեկնիմ... կրնաս երջանիկ ըլլալ...:

Ռինա ցաւոց ճիչ մը քամեց, և Մէնտէսի մէկ ձեռքը բռնեց, թօթովելով պաղատաձայն.

— Դո՛ւ, կը մեկնիս... զի՞ս կը թողուս:

— Իմ պարտականութիւնս է, այն բոպէէն՝ որ դու չես կրնար զիս սիրել: Ա՛հ, կեանքիս մէջ ինչ առիթներու որ ենթարկուած եմ, ասիկա ամենացաւալին, ամենասոսկալին է, և կը դգամ որ քաջութիւն պիտի չունենամ ասոր զիմանալու:

Մէնտէս վայրկեան մը լուռ կեցաւ: Մտածութիւն մը բռնած էր իր միաքը, ախուր ու սրտածմլիկ մտածութիւն մը...:

— Ռինա՛ — մրմնջեց նա տոանց աչքերը վեր առնելու — Ռինա՛... մնաս բարեալ... ընդ միշտ, դու զիս տեսնելիք չունիս այլևս, բայց եթէ այն օրը միայն յորում երջանկաբար քաղաքապետութեան պալատի սեմէն պիտի անցնիս, բայց միեւնոյն վայրկեանին յորում հանդիսաւոր երգում մը զքեզ անխղի պիտի կապէ Մարագի հետ... ես իմ ըզե՛զս պիտի պայթեցնեմ...:

— Մէնտէս — թօթովեց աղջիկը կիսազեղջ ձայնով երկու ձեռքը երեսը գոցելով, ապա տելու համար ահաւոր յայտնութենէ մը որ իր աչքերուն առջև պատկերացուած էր — Մէնտէ՛ս... դու անգութ ես...:

— Եւ դու ... դու որ զիս մերժեցիր, ինձի ցցուցիր թէ ս'չ սէր ունիս և ս'չ համարում իմ վրայ... ինձմէ աւելի անգութ չե՞ս: Գիտե՞ս թէ առանց քեզի ինձի համար աշխարհիս վրայ բան մը գոյութիւն չունի, թէ քեզմէ միայն իմ էութիւնս կը կախուի... թէ իմ կեանքիս կենդանաբարն ես ... և սակայն զիս կը մերժես ... քեզմէ կը վանես ...

Այս վերջին խօսքերը սրտաճւղիկ ձայնով մ'արտասանեց նկարիչը, և կուլար:

Կին մը որ յիբաւի կը սիրէ, չի կրնար երկայն դիմադրել այսպիսի ցաւազին տարփածուի մը:

Ռինա այդ վայրկեանին պարտականութիւն, երախտագիտութիւն ամէն բան մոռցաւ. նա իր առջև ուրիշ բան չտեսաւ բայց միայն իր ի խորոց սրտին պաշտած մարդը, որ պատրաստ էր մեռնելու իրեն համար. ուստի սիրտը ելած, դիւթուած, ապշած ձեռքերը անոր կարկանդակ, մըմնջելով հրեշտակային ժպիտով մը.

— Դադրէ՛, մի՛ լար Մէնտէս, ս'չ... դու պիտի չմտնիս վասնզի ես զքեզ կը սիրե՛մ, քեզի պիտի ըլլամ, քու հետդ պիտի գամ ուր որ ուզես...:

— Ո՛հ, շնորհակալ եմ ... շնորհակալ եմ — բացազանչեց Մէնտէս բորբոքեալ սրտին բոլոր թափովը՝ իր կուրծքին վրայ սեղմելով խարաբա չազէս որբուհին, որ այլևս չդիմադրեց: — Ո՛հ,

չսէ ինձի թէ զիս չես խաբե՞ր:

— Կ'երգնու՛մ: Սէրը զիս ընկճեց, համոզեց, և ես այլևս հակառակ պիտի չկուլիմ: Միով բանիւ աշխարհիս վրայ չունիմ մէկը, որ քեզմէ աւելի ինձի սիրելի ըլլայ ... Այո՛ ... պիտի ձգեմ այս տունը, իմ բարերարս, Գարմելիզան, ամէնը... քեզի հետ գալու համար... ո՛հ, ո՛րչափ ապերախտ եմ:

Եւ հակառակ իր կամքին, ազջիկը քանի մը կաթիլ արցունք թափեց:

— Իմ սիրելի Ռինաս — ըսաւ Մէնտէս, նախելով անոր տենդային ուրախութեամբ — դու պիտի չզղջաս երբեք քու որոշմանդ վրայ: Մենք պիտի թողունք այս տեղերը. ստոյգ է, բայց օր մը վերադառնալու համար, երբ սեղանաւորի բարկութիւնը անցած պիտի ըլլայ. կը խոստանամ քեզի: Բայց այժմ, իմ սիրուն հրեշտակս, մենք պիտի երթանք ապրելու չքեզ ամարանոցի մը մէջ, զոր ունիմ Լիզպոնայի շրջակայքը: Քու աչքերդ մոռցնել տուած էին ինձի իմ հայրենեացս յիշատակը, քու սէրը զայն ինձի կը վերադարձնէ, որպէսզի քեզի հետ կարենամ զայն վայելի: Ա՛հ, այն հեշտալի ու անզորր առանձնոցր, ահուշ օդերով և արբեցուցիչ բուրումնեքով սփոփուած, մենք պիտի ապրինք կեանքը... և եթէ ապագան ոսկեպսակ մը դնէ նկարչի զըլխուս վրայ, ի՛նչ վարձատրութիւն մ'եղած պիտի ըլլայ ինձի դնել զայն քու ստքերուդ առջև...:

Երկու երիտասարդները մտացած բոլոր աշխարհը, բազմոցին վրայ նստած էին:

Մէնտէս ձեռք ձեռքի անցուցած, աչք աչքի տուած, ... իրենց ազգայ երջանկութեան վրայ կը խօսէին դիւթիչ ու սրտազրաւ լեզուով մը, որ կը փայփայէ և երեւակայութիւնը կը փոխադրէ հեռաւոր ... գաղափարական աշխարհի մը մէջ...

Բայց յանկարծ Ռինա, իբրև թէ իր երազներէն արթնցած, սարսուռով մը թոթովեց.

— Դու ընտանեացդ վրայ կը խօսիս ինծի, բայց պիտի ուզէ՞ ան՝ խեղճ որբունհի մը ընդունիլ, որուն անունն ամենուն անծանօթ է, և թուրու որ քեզի կին ըլլամ: Եւ դու ալ, ապահո՞վ ես, որ պիտի չյանդիմանես օր մը այն հաւանութիւնը, զոր հիմա այնչափ թախանձանօք ինձմէ կը խնդրես:

— Սիրելի օրիորդ, ինչո՞ւ այս տարակոյսը: Բայց ո՞վ չի պարծիր քու ամուսինդ կոչուիլ, հրեշտակայի՞ն էակ: Չափէն ալ աւելի համողուած եմ թէ ծնողքս զրկաբաց պիտի ընդունին զքեզ, բայց եթէ ուրիշ կերպ ըլլայ, ընտանիք, յարաբերութիւն, ամէն բանէ կը հրաժարիմ: Զքեզ վաստկել, քեզի սիրելի ըլլալ, ահա իմ փառքս: Իե՞ս կը տարակուսիս սիրոյս վրայ:

Երկնային ժպիտ մը լուսաւորեց Ռինայի դէմքը:

— Ո՛չ, ոչ... քեզի կը հաւատամ - պատաս-

խանեց—որովհետև զքեզ կը սիրեմ ... բայց ի՞նչպէս փախչիլ:

— Ինծի մտիկ ըրէ: Ես ձեր ծառայ մ'ունիմ, որ իմ մանկութիւնս իր ձեռքերուն վրայ մեծցուցեր է, և իմ ամենահաւատարիմ և ամենասիրելի բարեկամս է: Մնոր շատ բան կը պարտիմ և հայրական պաշտպանութիւն մը, հաւատարիմ՝ ինչպէս շուն մը իր տիրոջ, ան կեանքըն ալ կը զոհէ առանց վարանելու՝ ինծի համար: Ես զքեզ այն մարդուն կը յանձնեմ: Միջոց մը խորհիմ այս գիշեր՝ թէ ի՞նչպէս այս տունէն զքեզ դուրս կրնամ հանել առանց մէկէ մը տեսնուելու: Վաղը, երբ դարձեալ աշխատելու գամ հոս, իմ ծրագիրս գրաւոր քեզի կուտամ: Հաւատարմութեամբ հետեւէ անոնց, և կը յաջողինք: Մինչև վաղը, ոչ բառ մը, ոչ մէկ շարժում որ կարենայ կասկած մը ծնուցանել տեսցուց սրտին մէջ: Բաջասի՛րտ եղիր, Ռինաս, չվհատիս... և քանի մ'օրէն իրարու հետ կը միանանք մէկ մ'ալ չբաժնուելի՞ս համար:

Երկու երիտասարդները ժամ մ'ես խօսակցեցան. միայն յանկարծ մէկը վրայ չհասնելու համար Մէնտէս սկսած էր նկարել, և աղջիկն ալ դիրք բռնել կը կեղծէր: Եւ բախտաւոր եղան, վասնզի յանկարծ ուժով մը դուռը բացուեցաւ, և Աննինա ու Գարմելիդա ներս մտան:

ԺԷ.

Նորպերդ՝ նկարչէն բաժնուելէն վերջ, սրբ-
ճարան մը մտաւ, և փուխչ մ'ապսպրեց և գրիչ-
կաղամար:

— Պէտք է որ Մէնտէս մինակ մնայ — կը
մըմնջէր ինքն իրեն — որպէսզի կարենայ ինք-
զինք Ռինայի բացատրել: Պէտք է որ Գարմե-
լիզա ալ հեռանայ և իմ ձեռնարկս պատրաստէ
Տէ Ռոսսի օրիորդ կոմսուհիին հետ:

Այսպէս ըսելով գրիչը կաղամարի մէջ թա-
թախեց և գրեց.

«Գարմելիզա՛,

«Կ'ուզեմ քեզի հետ տեսնուիլ, խօսիլ: Վը-
տանգ մ'ինծի կը սպաննայ... և առանց քու օգ-
նութեանդ, ես անպատճառ կորսուած եմ, այլևս
զիս պիտի չկարենաս տեսնել: Կէս ժամէն քեզի
կը սպասեմ Ս. Աւետման եկեղեցիին մէջ:»

«Նորպերդ»

Ապա սրճարանէն դուրս ելաւ և գնաց բեռ-
նակիր մը փնտռելու: Գաածին պէս անոր հետ
կառք մը նստաւ, և Մարագի պալատէն քիչ մը
հեռու կեցնել տուաւ:

Ճամբան կարեւոր յանձնարարութիւններն
ըրաւ բեռնակիրին, որ միայն կտրքէն իջաւ և
քառորդ ժամէն վերադարձաւ, ըսելով, թէ յանձ-
նարարութիւնը ճիշտ կատարած էր: Հինգ Փը-

րանգ բարի ձեռք տուաւ բեռնակիրին, յետոյ
կեղծ դերակոմսը տուն դարձաւ որ զգեստաւոր-
ուի՝ քմասէր Աննինայի այցելութիւն տալու հա-
մար:

Գեղեցիկ սպանուհին իր տարփածուին լա-
կոնական պիտակն ընդունելով, գոյնը նետեց և
գողգոջաց, կարծես նախագգացում մը իրեն կ'ըսէր
թէ անոր վերահաս դժբախտութիւն մը կը ըս-
պաննայ: Ամէն պատշաճութիւն մտոցած կը փու-
թայ իսկոյն ժամադրավայրը գտնուիլ և պատր-
ուակ մը բերելով Ռինայի և սպասուհիին, բո-
լորովին սև հագուեցաւ և տնէն դուրս ելաւ:

Ֆիրէնցէ գալէն ի վեր, առաջին անգամ մի-
նակ դուրս կ'եկնէր, ստոր համար կը կարծէր որ
ամենուն աչքը իր վրան էր, և քայլերը կ'երա-
գէր, ջանալով ամենուն աչքէն վրիպիլ: Բայց իր
չքեղ ու նկարչական գեղեցկութիւնը, շուտով աչ-
քի զարկաւ:

— Ի՞նչ գէմք — ըսաւ գաղիբրէն լեզուով,
տժգոյն, խարտեաչ, այրած գէմքով երիտասարդ
մը յամառութեամբ մը անոր ետեւէն երթալով:

Սպանուհին արհամարհոտ ակնարկ մը դար-
ձուց անոր, ջանալով քայլերը արագել: Բայց
պչրող երիտասարդը կարծես չնշմարեց օրիորդին
արհամարհոտ շարժումը, և նոյնպէս արագելով
քայլերը:

— Անգութ գեղեցկութիւն — փափսաց անոր
ականջին — լսէ՛ ինծի...:

Գարմելիդա գաղղիերէն՝ բառ մ'իսկ չէր գիտեր, բայց յոգնած այն շարունակ հալածանքէն, դարձաւ խստաբար, բսելով խրոխտ կերպով մը.

— Ի՞նչ իրաւունքով, պարո՞ն, արգելք կ'ըլլաս իմ քայլերուս: Ի՞նչ կ'ուզես ինձմէ: Կը խարուխ ճամբադ շարունակէ ե զիս ազատ թող:

Մեր պչրողը վայրկեան մ'արգիլուեցաւ: Ձօրաւոր ... սասանա՛յ պտթկաց իր շրթներէն. բայց երիտասարդը բոլորովին յամառ. միտքը դրաւ երկայն ժամանակ օրիորդին հետեւիլ և տեսնել այն բախտախնդրին վախճանը:

Գարմելիդա կրկին սկսաւ իր դանդաղ քայլերը, և կանգ առաւ միայն Ս. Աւետման բական տակ, ապահարզան տրուած կնոջ մը ակնարկը դարձնելով շորս կողմը: Բայց մարդ չի տեսաւ՝ բացի քանի մը հասարակ կիներէ, որոնք խօսակցութեամբ մը զբաղած էին:

— Դուցէ չափազանց շուտ է — փոփոսաց դեղեցիկ սպանուէին՝ հառաչանքով մը — կրնայ ըլլա՞լ որ ինձի սպասէ ներսը...:

Եւ բակէն անցնելով, եկեղեցի մտաւ, կենսալով կոնքի մը ծայրը, առանց նմշարելու երիտասարդը, որ ցանկութեամբ իր շարժումները կը գիտէր, սիւնի մը ետե կծկուած՝ ուսկից առանց նշմարուելու կրնար տեսնել:

— Իրաւցնէ չափազանց շուտ է — կրկինեց աղջիկը, նստարանի մը վրայ հանգչելով, որուն միւս կողմը սեւազգեստ կնիկ մը նստած էր,

զլուխը դէպի կուրծքը ծռած, ճակատը ձեռքերուն վրայ կոթնցուցած:

— Դժբախտ մը — մտածեց դեղանուշ սպանուէին — որ միայնութեան, աղօթքի պէտք կը գգայ: Ո՛հ, երբ մարդ կը տառապի, շատ լաւ է միայնութիւնը և միտքը առ Աստուած վերցնել: Ես ալ ճիշտ այս վայրկեանիս, միթէ աղօթքի մը պէտք չունի՞մ, ես ամենէն աւելի թշուառս: Կը դողդղամ դեռ, Մարագի խօսքերուն վրայ մտածելով: Նորպերդ իմ օգնութեանս կը կարօտի, և ալ իրեն...պէտք է որոշողութեան մը գալ: Ես չեմ կրնար այլևս երկայն դիմանալ այս տանջանքներուն: Ապրի՛լ միշտ յուսոյ և երկիւղի մէջ. ո՛հ, Աստուած իմ, դու ըսէ՛, ո՞ւր պիտի տանի զիս այս սէրը:

Գարմելիդա ծնրազրեց և բոլորովին իր աղօթքին մէջ ընկղմած, ժամանակ մը զինք չըրջապատող ամէն բան օտար երեցաւ: Պառաւ մը իր խոպոտ ու խածնող ձայնով զինք իր յափըշտակութենէն սթափեցուց:

— Տիկի՛ն — կ'ըսէր, խեղճ կին մը — ողորմութիւն մ'ըրէ ինձի...քու սիրելի մեռելնեբուդ հոգւոյն համար կ'աղօթեմ...կը մեռնիմ ա՛նօթութենէս:

Գարմելիդա ստատիկ սաբսուեցաւ, յանկարձական կարմրութիւն մը գունաւորեց իր տրժգոյն այտերը:

Տեսնոտ ձեռքով, քսակը հանեց և դրամ մը

զնելով պառաւին ձեռքը, բոլորովին ապշահար.
— Ա՛ն, տիկին— ըսաւ — Աստուած օգնա-
կան...;

— Եւ զքեզ հագար անգամ օրհնէ, օրի՛որդ
— մըմնջեց կինը ձեռքերը միացնելով՝ երախտա-
գիտական անհուն արտայայտութեամբ — Աստ-
ուածածնայ պիտի աղօթեմ որ զքեզ երջանկաց-
նէ:

Գարմելիդա բան մը չէր հասկնար այդ շը-
նորհակալութիւններէն, որովհետեւ յուզուած վի-
ճակի մը մէջ կը գտնուէր: Գարձեալ նստաւ
լքեալ և գլուխը կուրծքին վրայ ծռելով:

— Սը մը ես ալ միեւնոյն վիճակին մէջ կը
գտնուէի — կը փսփսար ինքն իրեն — անօթու-
թենէս ճամբու մը վրայ մեռնելու մօտ... յետ
իմ ձեռքովս իսկ կորսնցնելու, իմ սրտիս ամե-
նաթանկապին առարկան: Ո՛հ, գեղեցի՛կ երա-
զանքներ մանկութեանս, ս՛ւր էք... ի՛նչ տխուր
վերջիշում...:

— Բայց ո՛չ...ես ցնորեր եմ, — վայրկեան
մ՛ամփոփուելիէ վերջ — ինչո՞ւ կը տրտնջեմ ա-
ռանց պատճառի: Միթէ նորպերդ զիս չի՞ սի-
րեր: Խեղճ սիրելիս: Միայն զի՛ս կ'երագէ: Բայց
ինչո՞ւ չի գար: Արգեօք իրեն սպառնացող վը-
ստանգը... զլխո՞ւն... բայց ո՛չ... ո՛չ... անկարելի է...:
Սուրբ Աստուածածին, ս՛հ, չըլլայ թէ բան մը
պատահի իրեն...:

Այսպէս զառանցելով, սպանուհին գլուխը

վեր առած էր և իր աչքերն զարնուեցան այն
տիկնոջ, որ իր աղօթարանին միւս կողմը կը
նստէր:

Վերջինս, տեսնելով օրիորդը, զարմացաւ և
բացագանչեց.

— Անիկա՛ է ... Գարմելիդա՛ն է — մըմնջեց
ինքն իրեն:

— Ո՛ւր տեսած եմ արգեօք այդ գեղեցիկ
տիկինը — կ'ըսէր միւս կողմանէ Գարմելիդա — և
սակայն առաջին անգամը չէ որ իրեն կը հան-
դիպիմ:

Միեւնոյն մտածութեամբ շարժած, երկու
կանայք մեքենաբար իրարու մօտեցած էին:

Եկեղեցւոյն մէջ խոր լուծիւն կը տիրէր,
ասպետը՝ որ սպանուհիին հետեւած էր, կարծես
անհետացած էր, որովհետեւ ոչ մէկ անկեան մէջ
չէր տեսնուեր. մերթ կը լսուէր Աստուածամօր
խորանի քովէն աղօթաւորի մը տխուր ձայնը.
դուրսի լոյսը աղօտ կերպով մը կ'անձրեւէր այն
մութ մթնոլորտին մէջ:

Գարմելիդա և անձանօթ տիկինը, աչքի տա-
կով շարունակ իրարու կը նայէին:

Վերջապէս այս վերջինս, վարժ ու արագ
շարժումով մը աղօթագիրքը վար ձգեց զոր իր
ծունկին վրայ դրած էր:

Սպանուհին ծռեցաւ և վերցուց ... շնորհալի
կերպով ազնուական տիկնոջ տալով գայն:

— Շատ շնորհակալ եմ — մըմնջեց տիկինը,

այնպիսի շեշտով որ Գարմելիդայի բոլոր նեարդներն թունդ ելան:

— Ճիշտ Նորպերդի շեշտն է — փսփսաց — ո՞վ պիտի ըլլայ ասիկա: — Եւ բարձր ձայնով աւելցուց, բան մը չէ, տիկի՛ն. բայց խնդրեմ ըսէիք ժամը քանի՛ն է, ժամացոյցս հետս առած չեմ:

Անծանօթ տիկինը փոքր ոսկի ժամացոյց մը հանեց, որ Գարմելիդայի սարսափն աւելցուց, գոր որոշակի ուրիշ անգամ իր սիրահարին ձեռքը տեսած էր:

— Ժամը երկուքն է — ըսաւ քաղցրութեամբ անծանօթը:

— Այդչա փ... մատուած իմ. . . և չի դար դեռ — հառաչեց օրիորդը՝ ակամայ յուզումով մը:

— Որո՞ւ որ կը սպասես... այսօր պիտի չըգայ — ըսաւ օտարականն՝ ցած ու խորհրդաւոր ձայնով:

— Ի՛նչ կ'ուզէք ըսել, տիկին — գոչեց Գարմելիդա, որ զլսու պտոյտ կը դգար և կը կարծէր երազել...:

— Ըսել կ'ուզեմ որ դու իմ որդւոյս կը սպասես, բայց աւելորդ տեղը, վասնզի կարեւոր գործի մը համար ուրիշ տեղ պիտի երթայ: Սակայն անշուշտ ուրախութիւն պիտի պատճառէ քեզի ներկայապէս իր մօր հետ ծանօթանալով...:

Գարմելիդա աղաղակ մը խեղդեց:

Այդ խօսքերը զլուխը կը դարձնէին.

— Դո՛ւ... դո՛ւ իր մայրը... բայց անկարելի է ... Նորպերդ որը է գիտցածիս համեմատ:

— Եւ դու ալ կը հաւատաս — ըսաւ Պիանքա հեգնօրէն:

Գարմելիդա զլուխը ծռեց:

— Հոս չենք կրնար խօսակցիլ — փսփսաց մարգիգուհին — տեղը սրբազան է և նիւթը անպատշաճ: Հետս եկուր, գոց կտոք մ'առնենք և պարսպին չորս կողմը շրջան մ'ընելով ազատ խօսակցինք:

Մպանուհին խոր յուզման մը մատնուած՝ մեքենարար Պիանքայի հետեւեցաւ: Այս կիինը զինք կտոք մը նստեցուց, ինքն ալ մտաւ և կառապանին հրամանները տալով՝ դռնակը փակեց:

— Ո՞հ, անաւասիկ մինակ ենք — գոչեց մարգիգուհին գոհ հառաչանքով մը — ոչ ոք զմեզ կը խանգարէ ... այս պատուհանիկէն ալ սիրուն լոյս մը կը մտնէ... շատ լաւ... հիմա կրնաս Նորպերդի նմանիլս տեսնել:

— Ո՞հ, ստոյգ է, ստոյգ է, — ըսաւ Գարմելիդա — ձայնը, գէմքը, աչքերը, մազերն ալ քեզի կը նմանին: Բայց ինչո՞ւ ինձմէ ծածկեց թէ մայր մ'ունէր — աւելցուց սպանուհին տագնապալից շեշտով մը — ինչո՞ւ այսպէս զիս խաբել...:

— Զանիկա մի՛ դատապարտեր, առանց նախ ինձի լսելու — ընդմիջեց զինքը Պիանքա: — Տղաս կը վախնար որ ես հակառակ պիտի կենամ պատ-

ճառանքով մը՝ իրեն յիմար սիրոյն. կը վախնար որ ես...իր մայրը... դերակոմսուհի Սարաք, պիտի չթոյլատրեմ իր միութիւնը մաքսանենդի մը աղջկան հետ...:

Գարմելիդա վեր ցատքեց, ոտքը օձի մը վըրայ դրածի պէս: Իր դէմքը շառագունեցաւ, աչքերը կատաղի արհամարհութեան փայլատակ մ'արձակեցին:

Այս փոփոխութիւնը սակայն այնչափ շուտ եղաւ, որ Պիանքա ժամանակ չունեցաւ զայն անդրադառնալու:

— Չկարծես սակայն թէ Նորպերդ ինծի խոստովանած ըլլայ քու ծագումիդ գաղտնիքը — շարունակեց Պիանքա հեզնական քմծիծաղով մը — ես ինծմէ իմացայ...գիշեր մը... ի Թ'որինոյ... չեմ գիտեր եթէ կը յիշես... իմ որդւոյս ամարանոցն եկած էիր... քանի մը ազատ ժամերդ անցնելու համար...:

Այս խօսքերը՝ հեզնական շեշտով մ'ըսած պահուն, յանկարծակի այլայլութիւն մը բերին աղջկան վրայ:

Անիկա որ մինչև այս վայրկեանիս հեզ ու հանդարտ նստած էր, վէս կերպով բարձրացուց գլուխը և բոյավառ բարկութեան աչքերով և գոռոզ շարժումով մը.

— Տիկի՛ն - ըսաւ օրիորդը սարսուռն — ըստոյգ է... ես հաւանեցայ որդւոյդ աղաչանաց... մէկէ աւելի անգամներ իրեն գնացի՝ արհամար-

հելով ամէն վտանգ, նպատակ ունենալով բան մը զոր կին մը կրնայ երբեք սիրել աշխարհիս մէջ: Բայց ինչ ալ ըլլայ իմ յանցանքս քեզի նկատմամբ... յանդիմանուելու տեղիք չունիմ իմ վարուց ու բարուցս մասին, և առանց խղճմտանքի կրնամ իմ աղօթքս Աստուծոյ մատուցանել, մաքուր, անարատ հողով. Գու այս բանս ինծմէ լաւ գիտես... տիկի՛ն... եթէ մեր մտերմական խօսակցութեանց ներկայ գտնուած ես ...:

Պիանքա մարքիզուհին անհանգիստ չէր տեսուեր օրիորդին այս յանկարծական բորբոքուելուն վրայ: Իր ազնուական դէմքը սրտնեղ արտայայտութենէն՝ ծանր ու մեկամաղձոտ մտածութեան կը փոխուէր: Եւ երբ Գարմելիդա աւարտեց, ինք անոր ձեռքէն բռնեց և ամենահանդարտ ձայնով մը որ գթութեան և կարեկցութեան կը հաւասարէր:

— Սիրելի աղջիկս — ըսաւ — ինչո՞ւ այդչափ կը տաքնաս: Ես քեզի կը հաւատամ... և չեմ ուզեր արդէն զքեզ յանդիմանել:

Գարմելիդա անձկութեամբ տիկնոջ երեսին խոր ու հեռաքննող ակնարկ մը սեւեռելով, հաւկրնալու համար թէ ստոյգ կ'ըսէր: Բայց որովհետեւ մարգիզուհւոյն խօսքերը յայտնի չէին ընել բնաւ իր մտածութիւններն, այսպէս ալ դէմքը այնպիսի ճարպիկութեամբ կը փոխէր կերպարանքը, որ սպանուհին հակառակ իր սրամըտութեան, խաբուեցաւ այն արտաքին բարե-

մըտութենէն:

— Ահ,— ըսաւ նա յուզումէն կերկերուած ձայնով— զու բարի ես, տիկի՛ն, և քու խօսքերդ սրտիս մէջ քաղցր յոյս մը կը ծնուցանեն: Դու կը ներես ինծի, այնպէս չէ՞: Կը հաւան՞իս որ Նորպերդ զիս սիրէ:

Պիանքա գգուանքով մը իր ձեռնոցաւոր ձեռքը Գարմելիզայի ուսերուն վրայ դրաւ, մայրական շեշտով մ'ըսելով.

— Դու շատ հեռու կ'երթաս, սիրելիս . . . բայց սպասէ՛...ամէն բան պիտի ըսեմ քեզի... և կը յարմարինք:

— Ինչ որ կ'ուզես կ'ընեմ — թոթովեց օրիորդը գիւթուած — արդէն զքեզ շատ կը սիրեմ. զու իմ Նորպերդիս մայրն ես... ո՛հ, ինչո՞ւ չէի գիտեր այսչափ ժամանակէ ի վեր: Բայց... ճիշտ, Նորպերդ ըսի՝ միտքս եկաւ — աւելցուց Գարմելիզա հոգատար զգացումով մը — գիտե՞ս որ այս վայրկեանիս անոր վտանգ մը կը սպառնայ... ինքը ինծի գրած էր... պիտակը քովս է.. և...

Գեղեցիկ սպանուհիին խօսքը ընդմիջեցաւ, զարմացած Պիանքայի շրթանց վրայ տեսնուած ժպիտին ու հանգստութեան վրայ...:

— Մի՛ վախնար, աղջի՛կս — ըսաւ նա, թեթև հեգնական ժպիտով մը — իմ որդիս այս ժամուս ինծմէ քեզմէ աւելի հանգիստ է...:

Գարմելիզա կառքի բարձիկներուն վրայէն վեր ցատքեց:

— Ի՛նչ կ'ըսես... Ինչո՞ւ ուրեմն ինծի գրած է որ իր փրկութիւնը ինծմէ կը կախուի: Բան մ'ըսէ՛... խնդրեմ:

Օրիորդին խօսքերը շատ անձկութիւն կը յայտնէին, իր գունատ դէմքը այնպիսի ճարտասան երեսոյթ մ'առած էր. որ մարգիզուհին անգամ, թէպէտև ատելութիւն կը գզար, չէր կրնար զթութիւն չզգալ, այն դեպքիկ էակին համար, զոր վատութեամբ կ'ուզէր խաբել:

Բայց Պիանքայի յուզմունքը կայծակի մը տեսողութիւն ունեցաւ:

— Իմ որդիս — ըսաւ նա ցասկոտ դէմքով մը — քեզի ժամադրութիւն տուած է, վերջապէս մայր մ'ունենալը քեզի խոստովանելու համար, և այս մայրը իր ազնուական մեքենայութիւնները բռնեց: Անմիտը կը յուսար զքեզ իրեն հետ փախցնել, այսպէս ստնակոխ ընելով իր պատուաւոր ընտանիքը... բայց եթէ ինքը տղայ մ'է, ես կրկին փորձառութիւնն ունիմ, և յաջողեցայ վերջապէս իր բերնէն բոլոր գաղտնիքը կորցելու, զինքը պալատին մէջ թողուցի՝ սպասաւորներու հսկողութեան տակ, որոնք հրաման ունէին ամէն տեսակ ձեռնարկի դիմադրելու: Բարեբախտաբար իր մէկ բարեկամը հասաւ, որուն հետ սերտ խօսակցութեան բանուեցաւ, մինչդեռ ես իրեն տեղը իր որոշած ժամադրավայրը կը մեկնէի՛ Ս. Աւետման եկեղեցւոյն մէջ...: Կը փափաքէի հետք խօսիլ...:

Պիանքա այսպէս խօսելով յանդգնաբար կը ստէր:

Նոյն առաւօտը, նա խօսած էր Նորպերդի հետ, և Նորպերդ ալ իրեն խոստովանած էր թէ ի՛նչպէս գեղեցիկ սպանուհիին սէրը՝ իր գործերու յաջողութեան մտահոգութիւն մը սկսած էր տալ և ի՛նչպէս յօժարակամ անկէ կ'ուզէր օձիքը ազատել, բայց Գարմելիդայի հետ ըրած ժամադրութեան մասին բան մ'ըսած չէր: Նորպերդ ուզած էր օրիորդը տունէն հեռացնել՝ Մէնտէսի նպատակու համար, և ո՛չ իսկ մտքէն կ'անցնէր ժամադրութեան տեղը երթալու:

Պարագան բերաւ որ Պիանքա միեւնոյն վայրկեանին Ս. Աւետման եկեղեցիին գտնուէր:

Մարգիդուհին երբ սպանուհիին տեսաւ՝ մըտքին մէջ յանկարծական մտածութիւն մ'արթնցաւ: Նա փափաք մը, նպատակ մ'ունեցաւ՝ ազըլրկան մօտենալու, անոր քով նստելու, անոր վստահութիւնն ստանալու, և Նորպերդի վրայէն անոր Կորոր երեւակայութիւնը, ամէն յոյսը ջնջելու ... տեսնելու վերջապէս օրիորդին շարձարուելը, ինչպէս ինք շարձարուած էր այն գիշերը, յորում իր որդւոյն գաղտնիքին վրայ հասած էր...:

Բայց յաջողելու համար քաղցրութիւն պէտք էր. և մարգիդուհին շատ վարժ էր այսպիսի պարագաներու մէջ:

— Նորպերդ զիտէ՞ որ դու իր տեղն եկած

ես հարցուց Գարմելիդա սարսուռով մը, երբ Պիանքա խօսքը աւարտեց:

— Ո՛չ... դերակոմսը... լուր չունի. բայց ես չուզեցի այսպիսի գեղեցիկ առիթ մը ձեռքէ հանել, արմատախիլ ընելու համար մի անգամ ընդ միշտ այնչափ յապաղում և տագնապ. Լսէ՛, աղջիկս, դու ինծի շատ բարի կ'երեւիս, շատ խելացի ... իմ որդիէս շատ աւելի: Դու լաւ կ'ըմբռնես թէ քու և իրեն մէջ միութիւն մը չի կրնար երբեք տեղի ունենալ ...

Օրիորդը ցնցուեցաւ, իբրև թէ իժ մը զինք խայթէր, պատասխանելով.

— Ի՛նչպէս... ինչո՞ւ... բայց վայրկեան մ'առաջ ըսիր, թէ կը ներե՞ս ինծի...:

— Ներե՛լ քեզի... այո՛ ... անցելոյն համար, սակայն պայմանաւ որ... մէկզի թողուս քու ապագայի յիմար երազներդ...:

Թշնամական շեշտով մ'արձակուած այս բառերը՝ Գարմելիդայի միտքը քօղով մը ծածկեցին:

Վայրկեան մը լուռ, գունատ մնաց, բայց իսկոյն հաստատամտութեամբ մը վեր առնելով զլուխը.

— Տիկի՛ն — ըսաւ — դու մոռցար թէ Նորպերդ զիս կը սիրէ, և երդում ըրած է ինծի հետ ամուսնանալ...:

— Եւ դուն ալ կը հանատան — պատասխանեց մարգիդուհին ծաղրածութեամբ և արհա-

մարհանքի հպարտ ժեսթով մը — կեցցե՛ս .. այլևս պզտիկ աղջիկ չես որ վիպակներու հաւատքը ընծայես, խելապատակիդ մէջ դնես թէ իմ տղաս ուզէ գրեզ գերակոմսուհի մ'ընել: Ո՛հ... շատ լաւ գիտեմ որ զայն հրատուրած, շրջապատած, թուփած ես, իր աստիճանը, իր պարտքերը և մինչև իսկ իր մայրը մոռցնել տալու չափ...:

Այս անիրաւ թշնամանքը երեսին նետելով, գունատեց գեղեցիկ սպանուհին, որուն աչքերէն արիւն կը կաթէր այսուհանդերձ ոչ մէկ շարժում չըրաւ և իր շրթները փակ մնացին:

Գարմելիդա կը մտածէր իրքն իրեն որ այս բաներուն մէջ բնաւ մասն չունէր նա և այնչափ անգութ չէր կրնար ըլլալ... և զուցէ նոյն վայրկեանին իրեն պէս կը շարժարուէր.. և պիտի չկարենար համբերե՛լ իր մօր ըրած նախատանաց:

Մարգիգուհին որ արթուն կերպով զանկկա կը դիտէր, հասկցաւ օրիորդին կրած ներքին տագնապները և իր բերանը ծամածոց սատահայտական հեզնոց ծիծաղով մր:

— Օ՛ն անէր — շարունակեց Պիանքա քաղցրութեամբ մը, որուն տակ վայրագ հեզութիւն մը կը տեսնուէր — ես չեմ ուզեր այլևս անցածին վրայ մտածել. մոռնանք զայն և բարեկամ ըլլանք .. եթէ քիչ մը մտածես, այս է լաւագոյնը: Միւս կողմանէ... պէտք ես գիտնալ... որ ես յոգնած եմ այսպիսի տարփանքներէ ... մանաւանդ որ ուրիշ գաղափար ունիմ գլխուս մէջ իմ տը-

ղուս մասին: Չեմ ուզեր սակայն որ ըսուի թէ քու այս բուն սէրդ ո՛րեք պտուղ մը կամ օգուտ մը բերած չէ քեզի. ես քեզի համար բոււական լաւ եկամուտ մը պիտի հայթայթեմ, իբր օժիտ...:

Ասիկա չափազանց էր Գարմելիդայի համար:

Իր դէմքը կապուտցաւ, աչքերը զայրութէն բոցավառեցան, և մարգիգուհին վրայ յառեցան: Ատելութեան հոսանքներ ողողեցին այդ վայրկեանին՝ սպանուհին սիրտը, որ ուրիշ անգամներ այնչափ վեհանձն էր, անէծքներ թափեցին իր շրթները՝ անոր հասցէին որ կը յանդգնէր բոլոր իր երջանիկ երագները ցնդել...:

— Դո՛ւ... դո՛ւ ինծի վարձատրութի՛ւն կը խոստանաս իմ առ նա ունեցած սիրոյս փոխարէն — ըսաւ օրիորդը ցրտութեամբ, մինչդեռ ջրդածգութեամբ ակունները կը կափկափէին — աներե՛ս... դրամդ քեզի մնայ, անիծեա՛լ:

Եւ դեռ մարգիգուհին չմիջամտած, դէն դրնել չմտածած, Գարմելիդա կողքը կեցնել տուած էր. դոնակը բացած և դուրս նետուած:

Օրիորդին աչքերը բնաւ բան չեն տեսներ, կը քալէր, ... առանց ետև դառնալու, առանց գիտնալու թէ ո՛ր կողմ կ'երթար:

Յանկարծ ի գարմանս իրեն Ածէլիոյի հրապարակին մէջ՝ իր բնակարանին մօտ գտնուեցաւ: Հո՛ն շփոթած և մտածկոտ ակնարկ մը դարձուց չորս դին:

Պալատան պարտէզը այն ժամուն ամայի էր: Գարմելիզա վարանոտ ներս մտաւ. իշնալով ծառի մը ստուերին տակ եղած աթոռակի մը վրայ, և հոն հետաքրքիրներու աչքէն ծածկուած, ջանաց զինքը ճնշող մտածութիւններուն թռիչք մը տալ: Այն պատահածները իրեն անկարելի կը թուէր, կարծէր տխուր ու աժգոյն երագ մը տեսած ըլլալ:

Գլուխը կուրծքին վրայ ծռած, ճակատը ձեռներուն կաթնցուցած, օրիորդը կը փորձէր իր միտքը ամփոփել: Աչքերէն յուսահատութեան զանն արցունքներ կը թափէր, կուրծքը դժուարաշնչութեամբ մը կը հեւար:

Այսպէս մնաց ժամանակ մը, մինչև որ իր ականջին ծանօթ ձայն մը հասնելով զինք ցնցեց: Ելեքտրական հոսանքէ մը մղուածի պէս ականջ դրաւ, անտառակին այն կողմը վազեց՝ որուն միւս կողմը՝ նստարանի մը վրայ բազմած ամենաորոշ երկու մարդիկ կը տեսնուէին. Տէ Ռոսսի կոմսը ու կեղծ գերակոմս Սարաքը:

Հոն տիրող խոր լուսթեհէն, և երկու մարդոց ցած ձայնով շխօսելու անզգուշութենէն, սպանուհին անոնց ամէն խօսածը կը լսէր:

— Երբեք Ֆիրէնցէ եղած չե՞ս — կ'ըսէր Տէ Ռոսսի, շարունակելով խօսակցութիւն մը որ կը տեսնուէր թէ բաւական ժամանակէ ի վեր սկըսուած էր:

— Ո՛չ Ֆիրէնցէ, ո՛չ Իտալիա — պատասխա-

նեց Նորպերդ պաղ կերպով: — Փարիզ ծնայ և մանկութեան և երիտասարդութեան օրերս ալ հոն սահեցան...:

— Ծնողքդ ալ անշուշտ քաղաքին ամենաազնուական ընտանեաց հետ յարաբերութիւն ունեցած պիտի ըլլայ — ըսաւ կոմսը զգայուն ձայնով մը:

— Անշուշտ — բացազանչեց Նորպերդ անհողութեամբ մը:

— Երբ այդպէս է, պիտի կարենաս ինծի տեղեկութիւն մը տալ Պրիան դուքսին վրայ...:

— Իմ բարեկամս է — կրկնեց Նորպերդ անհուն յանդգնութեամբ: — Ի՞նչ կը փափաքես զիտալ իր մասին:

— Ո՛չ իր մասին, այլ իր տիկնոջ: Գիտե՞ս թէ արդեօք ի՞նչ ընտանեաց կը պատկանի:

Գարմելիզայի այնպէս երեւցաւ թէ կեղծ գերակոմսը կը վարանէր պատասխանելու, վասընզի Տէ Ռոսսի շարունակեց.

— Բան մը լսած չե՞ս թէ դրսեցի ըլլայ: — Ա՛հ, այո՛... կը յիշեմ: Գուքսը իր մէկ

ձամբորդութեան ժամանակ ամուսնացած է...: Փորթուկալի՞ մէջ — ընդմիջեց կոմսը:

— Այո՛ Փորթուկալի՞ մէջ — կրկնեց Նորպերդ:

Կոմսը երկայն հառաչեց ուրախութենէն. — Ուրեմն Մէնտէս զիս խաբած չէր — մը-

տածեց իրնքնիրեն — Պրիան դքսուհին իր քոյրն է:

Յետոյ աւելցուց բարձրաձայն.

— Պարոն դերակոմս, ասկից առաջ բնաւ
տեսած չէի՞ր երիտասարդ նկարիչը, Մէնտէսը:
— Բնա՛ւ:

— Անկարելի կը թուի: Բաւական է ... Ի՞նչ
գողափար ունիս իր վրայ:

Նորպէրդ կարծես շփոթեցաւ այս հարցման
վրայ, սակայն առանց վարանելու պատասխա-
նեց.

— Ազնուական սիրտ մը կը կարծեմ զայն,
և շատ ուրախ եմ ինծի ցոյց տուած բարեկա-
մութեան վրայ: Բայց լաւ միտքս եկաւ ... եթէ
դիտնայիր ո՛րչափ դժբախտ է ...

— Դժբա՛խտ—բացազանչեց կոմսը— և ին-
չո՞ւ:

— Վասնզի չափազանց կը սիրէ... և առանց
յոյսի:

Տէ Ռոսսի. ոստում մ'ըբաւ նստարանին վը-
րայ:

Գարմելիդա հետաքրքրուած և դեռ աւելի՛
իր իսկ բերնէն լսելու թէ նա իր սիրահարը կը
մնայ, անյազաբար ականջները սրեց:

— Եւ գիտե՞ս զով կը սիրէ:

— Այս առտու ինծի ըսաւ: Բայց խնդրեմ
սիրելի կոմս, գաղտնիքը մեր մէջ մնայ... այսինքն
է ո՛չ... գուցէ դու միայն պիտի կարենաս կեր-
պով մը անոր նպաստել:

— Ե՞ս — թոթովեց կոմսը, զարմացած կեղ-

ծելով ըրած հարցումին վրայ:

— Այո՛... Մարագ սեղանաւորին սերտ բա-
րեկամը չե՞ս:

— Եւ ասո՞վ — հարցուց ազնուասիրտ մար-
դը զարմանքով:

— Շատ լաւ... դու կրնաս միայն իր առջև
Մէնտէսի շահը պաշտպանել:

— Ի՞նչպէս, բայց ես չեմ հասկնար ըսածդ. . .
Հեզնական ժպիտ մ'երեւցաւ դերակոմսի
չրթանց վրայ:

— Զիս լաւ բացատրեմ: Մէնտէս խենթի
պէս կը սիրէ սեղանաւորի աղջիկներէ՛ն մին:

Ակամայ Տէ Ռոսսի կոմսը գունատեցաւ:

— Եւ ո՞րը — հարցուց թափով մը:

— Ամենաերիտասարդը, այն խարտեաչ ու
չուշանի պէս սպիտակը: Կարծեմ Ռինա կը կոչ-
ուի:

Խղղուկ բացազանչութիւն մը ցատքեց Տէ
Ռոսսիի կուրծքէն: Եւ ձեռքը նորպէրդի թեւե-
րուն վրայ դնելով և յուզուած ձայնով.

— Ստո՞յգ կ'ըսես: Մէնտէս Ռինա՞ն կը սի-
րէ: Չե՞ս սխալիլ:

— Ո՛չ... կ'երդնում թէ ո՛չ, ինքն երէկ ինծի
խոստովանեցաւ:

— Եղո՞ւկ, բայց այն աղջիկը իրենը պիտի
չըլլայ երբեք:

Նորպէրդ զարմացած լուռ մնաց:

— Ռինա չի կրնար, պէտք չէ՛ զանիկա սի-

րէ — կրկնեց ու ժգին կոմսը:

— Բայց ինչո՞ւ — ընդմիջեց կեղծ գերա-
կոմսը թեթև յուզմունքով մը:

Նորպէրդ կոմսը շղատեց թեամբ Նորպէրդի
թեւը սեղմեց, ըսելով.

— Դու ազնուական մարդ մըն ես, և պիտի
չուզես մասնել զազանիքը. զոր քեզի կը յայտ-
նեն: Ռինա չի կրնար փոխադարձ սէր նուիրել
Մէնտէսի, վասնզի Մարազին իսկ նշանածն է:

Նորպէրդ սարսուեցաւ և ապշահար կոմսին
նայեցաւ:

Գարմնիկդ, որ ամէն բան լսած էր, եր-
կինք վերցուց իր գեղեցիկ աչքերը, մտածելով
հառաչանքով մը.

— Խեղճ Ռինա, ինձմէ շատ աւելի զըժ-
բախտ է:

Երկու խօսակիցներն ալ վայրկեան մը լսու
կեցան:

Վերջապէս Տէ Ռոսսի ըսաւ.

— Անշուշտ Մէնտէսի սէրը անակնկալ կեր-
պով ծագումն առած է, որ քիչ մը շուր կը վերցնէ:
Դեռ տասն և հինգ օր շքեր որ ուրիշ մը կը
սիրէր...:

Նորպէրդ հեզնական ժպիտ մ'ունեցաւ, բայց
ամենաքաղցր ձայնով և անկեղծօրէն սիրակաթ՝

— Սիրելի կոմս — ըսաւ — այսպէս շուտով
մի՛ զատապարտեր խնդրեմ քու բարեկամդ: Ըս-
տոյզ է, Մէնտէս ուրիշ մը կը սիրէր, գուցէ սե-

զանաւորի որդեգրեալէն աւելի գեղեցիկ, և ա-
ւելի պատուաւոր, ազնուական, նշանաւոր ըն-
տանիքէ մը, որուն հետ խնամիտանալը մեծ պա-
տիւ կը բերէր իրեն. բայց ան այդ օրերը չէր
սիրեր հնկարելը կամ գոնէ կը կեղծէր շտրել,
այնպէս որ անօգուտ տնտեսով բոլոր իր խոս-
տանները, սրտմաշ ու սրտաբեկ՝ անկից ետեւ
քաշուեցաւ, և Ռինայի սիրոյն մէջ պիտի մնայ
մը փնտռեց իր խարկանքին...:

Տէ Ռոսսի կոմսը, որ անձկութեամբ հետե-
ւած էր Նորպէրդի խօսակցութեան, վերջին խօս-
քերուն վրայ մխիթարական մտածութիւն մը
զգաց մտքին մէջ: Հիմա շատ աւելի համեզուած
էր թէ իր աղջիկը Մէնտէսը կը սիրէր և թէ մի-
այն նախանձը զանիկա ինքնիրմէ դուրս հանած
էր, և առաւօտեան տեսարանը յղացած էր:

— Բայց երբ Մէնտէս — կը մտածէր — գիտ-
նայ թէ անկարելի է իր և Ռինայի մէջ միու-
թիւն մը, իր սիրտը անցեալ յոյսերուն պիտի
բանայ, և իմ երազս պիտի իրականանայ:

Այս մտածութեան վրայ, ազնուական մար-
դուն սիրտը աւելի արագ սկսաւ բարախել, յոյ-
սի ժպիտ մը տեսնուեցաւ իր շրթանց վրայ:

— Խեղճ երիտասարդ — ըսաւ բարձրաձայն —
ես գիտեմ կը զրպարտէի: Բայց դարձան մը կը
մտածեմ...:

Նորպէրդ գլխէն մինչև ոտքը դողաց:
— Անոր առաջին սիրած աղջիկը կը ծանչ-

համ — շարունակեց կոմսը բարեմտութեամբ մը
— և կընամ ապահովցնել զքեզ որ Մէնտէս ալ
անոր համապատասխանած էր....

— Ատոր վրայ կը տարակուսիմ — ընդմիջեց
կեզծ գերակոմսը, աչքերը Տէ Ռոսսիի յառած:

— Ի՞նչպէս... բայց եթէ ես քեզի ըսեմ....

— Ինձի բան մ'ըսելիք չունիս, զոր չգիտ-
նամ արդէն — ըսաւ Նորպերդ. և ցած ու գողզը-
զացող ձայնով՝ շարունակեց. — Քու աղջիկդ
կ'ատէ զՄէնտէս, այն պարզ պատճառին համար
որ ուրիշ մը կը սիրէ....

Կոմսը գունատեցաւ և ցնցուեցաւ. բայց
կրցաւ սիրտ ընել բաւական պաղարիւնութեամբ
պատասխանելու:

— Դերակոմս. ստուգիւ կը խաբուիս: Աղ-
ջիկս ինձմէ գաղտնիք չունի, կը խնդրեմ որ հա-
ւատաս....

— Քիչ մը չափէն ալ աւելի համոզուած եմ
— թոթովեց Նորպերդ յուզուած ձայնով — իմ
խօսքերովս չուզեցի օրիորդ կոմսուհին մեղա-
պարտ դասել ... որովհետեւ . . գուցէ ինքն ալ ..
տեղեկութիւն չունենայ... սէրէն....

— Տէ Ռոսսի ծիծաղ մը փրցուց:

— Օ՛հ, այս աղէ՛կ բան — ըսաւ — բայց այն
ժամանակ ի՞նչպէս կընաս հաւատալ....

— Կոմս, մենք հոս միմեկ ենք... վկայ մը
չունինք... ես կընամ ամենայն ինչ քեզի խոստո-
վանիլ: Միւս կողմանէ անպատշաճ պիտի ըլլայ

իմս, այլեւս ասկից վերջ քեզի գաղտնիք պահել ...

— Կը հասկնամ ըսածդ. ի՞նչ կ'ուզես ըսել

— թոթովեց կոմսը:

— Կ'ուզեմ ըսել քեզի, կոմս, ամիս մը կը-

նէ որ քու աղջիկդ կը սիրեմ ...

Գարմելիգա երկու ձեռքերը սրտին վրայ
տարաւ. կարծեց մեռնիլ այն վայրկեանին, սա-
կայն կրցաւ ինքզինք բռնել և ամէն բացագան-
չութիւն խղզիլ....

— Դո՛ւ... Աննինան կը սիրես — ըսաւ կոմսը

ապշահար եղած:

— Այո՛... Ծիրէնցէ հասնելէս երկու օր վերջ՝
գիշեր մը զինք թատրոնին մէջ տեսայ: Այն գի-
շերէն ի վեր միակ մտածութիւնս եղաւ իրեն մօ-
տենալ և զիս սիրեցնել տալ: Ո՛հ, չափազանց
յուսալ մ'էր, այնպէ՛ս չէ՛:

Կոմսը բարեյօժար շարժումով մը, մըմնջեց.

— Շարունակէ:

— Չեր պալատն եկայ և առաջին ակնար-
կով իսկ նշմարեցի որ օրիորդը անտարբերու-
թիւն ցոյց չտուաւ: Առանց գիտնալու թէ ինք
համակրութիւն մ'ունէր Մէնտէսին վրայ, ես, որ
նշմարած էի իսկոյն, ի՞նչպէս վերջինս պատիւ-
ներ կ'ընէր սեղանաւորի որդեգրեալ աղջկան, ըսի
անմեղաբար քու աղջկանդ, որ ինձի պատասխա-
նեց ամենայն հանդարտութեամբ.

«Քեզի չեմ հաւատար, գերակոմս, ապացու-
ցո՛ւր թէ Մէնտէս զիս կը խաբէ, եթէ կ'ուզես

որ քու վրադ վստահութիւն ունենամ...»:

— Չարածճի՛ր — մրմնջեց կոմսը ժպտալով մը:

Գարմելիզա այդ մտերմական խօսակցութենէն բառ մ'իսկ չէր կորսնցնիր: Ազլիկը իր կենաց մէջ այնչափ կրած չէր բնաւ: Ի՛նչ էին իրեն համար Պիանքա մարզիգուհւոյն նախատինքներն՝ համեմատութեամբ Նորպերզի մատնութեան:

Հիմա կ'ըմբռնէր՝ անոր իրեն ուղղած նամակին պատճառը:

— Վատահամբա՛ւ — կը փափսար ինքնիրեն — գոհ չէ զիս մատնելէն՝ իր վախճանին հասնելու համար զիս իբրև գործիք ալ կ'ուզէր գործածել:

Այս մտածութեան վրայ օրիորդին ակնարկը սոսկալի եղաւ. դէմքը շղային գունատութիւն մը պատեց, դիմազծութիւնը՝ ատելութեան, արհամարհանքի, վրէժխնդրութեան կերպարարանք մ'առաւ:

Գարմելիզայի մէջ կրկին կ'ընծիւղէին այն կատաղի, վայրի բնազդները, որ իր ցեղին ոյժն ու կորոզիւ իսկ կը կազմեն...:

— Ա՛հ, մրմնջեց իրքնիրեն տխուր ձայնով — դու կը յուսաս Աննինային հետ ամուսնանալ...: Բայց չմտածեցի՞ր թէ քու և անոր մէջ՝ ես ալ կրնամ ըլլալ...: Թշուառական, յուսա՛ դեռ... բայց քանի մ'օր: Ես. գիտեմ վրէժ լուծել...:

Այս պահուս Նորպերզ, մտքէն իսկ չէր ան-

ցընէր թէ Գարմելիզա զինք կը լրտեսէր. կը շարունակէ.

— Դու պիտի ըմբռնես, սիրելի կոմս, որ եթէ ես երբեք ապացոյց մ'իսկ չունենամ թէ Մէնսէս ուրիշ մը կը սիրէ, իմ արժանապատուութիւնս չի ներեր օգտուիլ այդպիսի առիթէ մը՝ սէր մը ձեռք բերելու համար, որ թէև իմ բոլոր կենացս երջանկութիւնը կը կազմէ: Ուստի լուռ ու մոռնչ մնացի քու աղջկանդ առջև և երբ ձեր տունէն դուրս ելայ, հոգիս մեռած կը դառայի...:

— Եւ յետո՛յ — հարցուց Տէ Ռոսսի շահագիտութեամբ մը:

Նորպերզի դէմքը ուրախութեան և յաղթանակի հող մ'առաւ:

— Հիմա ապահով եմ թէ քու աղջիկդ զիս չ'արհամարհէր, ...որովհետև, վայրկեան մ'առաջ, երբ ձեր տունն եկայ, անիկա շտեսնուեցաւ, բայց սպասուհիին ձեռքով այս պիտակը ինծի զրկեց:

Եւ կեղծ դերակոմսը դուրս հանեց թղթապանակէն փոքր կարմրորակ բուրումնաւէտ թուղթ մը:

Տէ Ռոսսի զայն տեսնելուն սաստիկ ցաւ մը զգաց: Ի՛նչ դիւրին կերպով իր օրիորդական համեստութիւնը վտանգի մէջ կը դնէր քմասէր Աննինան, գրելով երիտասարդի մը որ դեռ քանի մ'օր առաջ իրեն ներկայացեր էր:

Հակառակ այս միտքերուն, կոմսին շրթներէն ժպտար չի բաժնուեցաւ: Մէկ ձեռքը Նոր-

պերդի կարկառեց, ըսելով յուզուած ձայնով.

— Ձեռքդ ինձի տա՛ւր:

Դերակոմսը իսկոյն հաճեցաւ:

— Գորմելիդա, որ դեռ անձկանօք ականջ էր դնէր, իր կենաց տասը տարին կը դռնէր այն պիտակին պարունակութիւնը գիտնալու համար: Դժբախտաբար անկարելի կ'ըլլար, որովհետեւ Աննինայի հայրը, միայն թեթեւ ակնարկ մը տուաւ անոր վրայ, յետոյ Նորպերդի դառնալով, որ աչքին տակէն իրեն կը նայէր:

— Յղւսամ թէ... ստիկոս պիտի հաճիս ինձի թողո՛ւլ — ըսաւ ցուրտ կերպով մը:

Թէև կոմսի ձայնի հնչումէն ազդուեցաւ, սակայն երիտասարդը գլխու ազնիւ շարժումով մը հաւանութիւն յայտնեց:

— Պարո՛ն դերակոմս — աւելցուց ապա Տէ Ռոսսի — քանի որ կը հաճիս՝ կ'ուզեմ քեզի խորհուրդ մը տալ:

Նորպերդ սեւեռած կոմսին նայեցաւ՝ պատասխանելով ամենայն հանգարտութեամբ.

— Բարեբախտ պիտի ըլլամ անոր հետեւելու, պարո՛ն կոմս:

— Ուրիմն... մտքէդ հանէ իմ աղջիկս: Այն պիտակը զոր քեզի դրկած է, բոլորովին ուրիշ զգացման մը ազդեցութեան տակ գրուած է, որ առայժմ չհամ կրնար քեզի յայտնել: Անկիդծութեամբ կը խստովանիմ որ քեզ նկատմամբ մեծ յարգանք և բարեկամութիւն մը կը սնուցանեմ

իմ մէջ, բայց այսուհանդերձ եթէ իմ Աննինայ քեզի կնութեան ուզես, ստիպուած եմ մերժելու:

Նորպերդ սարսեցաւ և զոյնը նետեց:

— Մտի՛կ ըբէ գորովայից և դժբախտ հօր մը: Եթէ ինձի նոյնիսկ շատ սուղի ալ նստի այսպիսի խստովանութիւն մը, սակայն ստիպուած եմ ընելու, որպէսզի մի՛ գուցէ սպանիական զղեակներ կանգնես երեւակայութեանդ մէջ: Աննինա չափազանց թեթեւ և քմաւէր բնւորութիւն մ'ունի իսկապէս ըմբռնելու համար ամուսնական միութեան մը կարեւորութիւնը. նա միայն գուարճանալ կը մտածէ, միայն հաճոյք և նորութիւն կ'երազէ: Անոր բնւորութիւնը, միտքը դրածը փոփոխել տալու համար՝ մեծ ու վառ կերք մը պէտք է, որ իրեն բոլորովին տիրէ, զինքը գերէ, այն սերերէն մին պէտք է որոնց կեանքն իսկ յօժարութեամբ կը գոհուի. բայց իմ աղջիկս անզգայ է այդպիսի սէրերու հանդէպ, և եթէ իր սիրտը վայրկեան մը ոյժգին բարախած ալ է, կը ցաւիմ ըսելու որ, ապահովապէս քեզի համար չէ՛:

— Ո՛հ, ստիկոս գիտեմ — ըսաւ դառնութեամբ Նորպերդ — գիտեմ թէ նա սիրած է և գուցէ դեռ կը սիրէ Մէնտէսը. բայց հիմա որ գիտե թէ այդ մարդը՝ զոր ինք կը սիրէր՝ իր վրան բնաւ չի մտածեր, կը կարծես թէ աղջկանդ կուսական սիրտը կարենայ ընդ միշտ անզգայ

մնալ ուրիշ սիրոյ մը առջև: Թէ նա չկարենա՛յ սիրել պատանի մը որ պատրաստ է մեռնելու իր երջանկութեան համար:

Այս վերջին խօսքերը, այնպիսի տաքութեամբ մ'արտասանուեցան, որ յոյսի սարսուռ մը ձգեցին Տէ Ռոսսի կոմսին սրտին մէջ:

Եւ իրաւցնէ, ինչո՞ւ Աննինա պիտի չկարենար սիրել անկեղծութեամբ այս գեղեցիկ, այս փայլուն երիտասարդը, որուն հետ շատերը իրենց պատիւ պիտի համարէին խնամիանալ, և որ այնչափ անձնագոհութեամբ իր կեանքը կը նւիրէր իր աղջկան սիրոյն համար:

Տէ Ռոսսիի հայրական անձնասիրութիւնը անուշ մը շողքորթուեցաւ. ուրախութեան նշան երեւցաւ դէմքին վրայ: Փափկութեամբ մը՝ որ խորագէտ դերակոմսին սիրտը բաբախել տուաւ, ազնուական մարդը ձեռքը երիտասարդին կարկառեց, ըսելով.

— Դերակոմս. եթէ դու յաջողիս ճշմարիտ և անկեղծ սէր մը ներշնչել իմ աղջկանս, եթէ Աննինայի ընտելութեան քուէն դու շահիս, Աստուած վկայ որ ես ոչ մէկ արգելք պիտի դնեմ ձեր երջանկութեան համար:

— Ո՞ր շնորհակալ եմ. կոմս, շնորհակալ եմ — ըսաւ Նորպերդ ինքնիրմէ դուրս ելած, և Տէ Ռոսսիի մէկ ձեռքը իր շրթներուն տարաւ:

— Չափազանց շուտ...սպասէ՛ դեռ — կրկնեց ուրախութեամբ կոմսը, ոտքի ելնելով:

Նորպերդ նմանապէս: Երկուքն ալ թե թեւի մտան և դեռ քանի մը վայրկեան ևս լսուեցաւ իրենց ձայնին արձագանգը և ոտնաձայները ծառուղիին խճաքարերուն վրայ:

Յետոյ լուծիւն տիրեց: Քանի մը ըսպէ Գարմելիդա անշարժ մնաց՝ կրած յուզումներէն դալկահար:

Յետոյ...միշտ մատնչի պատկերովը իր աչքերուն առջև, հազիւ ինքզինք քաշքշեց մօտակայ աթոռի մը քով և չարչարուող թմրութեան մը մէջ ինկաւ, որ զինք կը շուարեցնէր ու կ'ապշեցնէր: Հազար տեսակ յուզումներ կը կրէին իր զգայարանքները և իր մտային կարողութիւնները:

Ո՞վ կրնայ նկարագրել այն ցաւոց վայրկեանները, յորում մարդկային էակ մը կը զգայ բոլոր իր բուռն կրքերուն զարթումը, իր յուզումնալից մտածութիւնները, իր խառնաշփոթ յոյսերը. լուծիւն... Սոսկալի տքնութիւններ, որ զմարդ կը տապալեն, անիծել կուտան կեանքը, մարդկութիւնն համայն...:

Կէս ժամու մէջ, գեղեցիկ սպանուէին վերջիչեց այն ութը ամիսները զոր անցուց երջանկութեամբ Նորպերդի սիրոյն մէջ, ուսկից կը յուսար փոխադարձ ընդունիլ...:

Յետոյ անոր կողքին անցուցած այն հիասքանչ գիշերները, այն համակիր յարգանքը՝ որով

միշտ զինք կը շրջապատէր, այն խոստումները զինք կնստեցնէին առնելու՝ հազիւ ամէն արգելք հարթուած, որ իրենց միութեան խոչընդոտ կը կանգնէին:

Այս յիշումներու վրայ Գարմելիզա գլուխը առջև ծոցը և լուսթեան մէջ քանի մը վայրկեան արցունք թափեց: Բայց յանկարծ մտածութիւն մը զինք ցնցեց. աստիճանաբար այս մտածութիւնը աւելի խտացաւ, և գրեթէ հակառակ իր կամքին՝ ինքնաբեր շարժում մը զինք ստքի հանեց. արձանի մը պէս ճերմակ, բայց խաղաղ և սեւեռուն աչքերով և արհամարհոտ ժպիտ մը իր գունատ շրթներուն վրայ:

— Մայրը զիս նախատեց — բացազանչեց — և իր որդին զիս կը խտրէ: Շատ աղէկ. բայց պիտի դայ իմ վրէժխնդրութեանս ժամը: Մահը բաւական պատիժ մը չէ մատնիչի մը համար. ինքը պէտք է կրէ ինչ որ ես այս մէկ երկու ժամուան մէջ կրեցի:

Գանդաղ բայց հաստատուն քայլերով, Գարմելիզա սփռտէզէն դուրս ելաւ:

Երբ տանը կը մտնենար, տեսաւ որ Աննի-նա աղախնոյն հետ իր պալատէն դուրս ելնելով ուրախ ու ժպտուն գէմքով իրեն կը զիմաւորէին:

Բարև Գարմելիզա, բարև — ըսաւ կոմսուհին աշխուժով — ես ալ ճիշտ քեզի կուգայի: Բայց այս ինչպէս կ'ըլլայ... այս ժամուս գուն մինակ

դուրս...: Եւ Ռինան...:

— Ռինան տունը թողուցի, վասնզի ես յանձնարարութիւն մ'ունէի... կամ լաւ ես բարեգործութիւն մը... կատարելիք... աղքատ կնոջ մը, որ ինծի յանձնուեցաւ — պատասխանեց Գարմելիզա, օրիորդ կոմսուհին թեք մտնելով:

Գեղեցիկ սպանուհիին կարովը այնչափ մեծ է, որ Աննինա բնաւ չէր կրնար գուշակել այն տանջանքները՝ որուն ենթարկուած էր Գարմելիզա:

— Ո՛հ, ի՛նչ ազնուական քոյր գթութեան — ըսաւ Աննինա, շանալով կարելի եղածին չափ գուարթ երեւնալ — բայց... ինչո՞ւ նախ չեմ տեղեկանար թէ ի՛նչ է քու այս անակնկալ այցելութեանդ պատճառը, զոր շատ հաճոյքով պիտի ըսեմ...:

— Ուրիշ անգամուան թողունք — աւելցուց Գարմելիզա փափկութեամբ — և հիմա ... տուն գաննանք. շատ յոգնած եմ...:

— Իրաւցնէ... գոյնդ նետեր ես... երթանք... Ռինա փուշերու վրայ նստած պիտի ըլլայ, տեսնելով որ չեա գար, և իրեն համար գեղեցիկ աշակնկալ մը պիտի ըլլայ տեսնելով յանկարծ զիս ալ քեզի հետ...:

Այս խօսքերս քմասէր օրիորդին յատուկ գառն հեզնութեամբ մ'արտասանուեցան. բայց Գարմելիզա չափազանց զբաղած այն կողմերը

չեղաւ:

Երկու օրիորդները սպասուհին արձակեցին: Հինգ վայրկեան վերջ յանկարծ այն սրահը կը մտնէին, ինչպէս գիտենք, ուր Ռինա Մէնտէս միասին կը գտնուէին:

ԺԸ.

Երիտասարդ նկարիչը չչարժեցաւ, աչքն անգամ չթարթեց երկու օրիորդներուն ներս մտնելու պահուն:

Իր աշխատութեան խորը ընկղմած կը թուէր. Ռինա թեթեւ մը կարմրեցաւ, բայց իսկոյն յուզուժը սանձելով.

— Ո՛հ, դ՞ու ես Գարմելիզա—ըսաւ— մեզմ ձայնով մը՝ աչքերը ետ դարձնելով— անհամբեր քեզ կը սպասէի:

— Եւ ինձի ո՞չ — հարցուց Աննինա թեթեւ ժպիտով մը, որբուհիին մօտենալով և յուզումնալից համբոյր մը տալով:

— Ո՛հ, դ՞ու ես Աննինա ... կը ներես որ չուտով զքեզ չնշմարեցի: Շատ երախտապարտ եմ որ եկար ինձի ընկերութիւն ընելու....

— Մանաւանդ թէ — ընդմիջեց Մէնտէս, ուրախ գէմքով ողջունելով սպանուհին և շնորհալի Տէ Ռոսսի օրիորդը— ես... և օրիորդը, երկու

ժամէ ի վեր բառ մը չփոխանակեցինք:

Աննինա իր խուզարկու աչքերը սեւեռեց արուեստագէտին վրայ, բայց վերջինս ոչ մէկ զգացում ցոյց չտուաւ, և շարունակեց ծիծաղիլ, խօսակցիլ, մինչև որ վերջապէս ներողամտութիւն խնդրեց օրիորդներէն մեկնելու թողլով Աննինան զարմանքէն լուռ ու անշարժ:

— Ստուգիւ— մտածեց ինքնիրեն— ես դարձեալ խաբուած եմ. Մէնտէսը չի սիրեր Ռինան: Բայց... այն ժամանակ ո՞վ է ուրեմն այն կինը որ իր սիրտը ինձմէ յափշտակեց: — Եւ աղջիկը արանց այլևս ուշադրութիւն դարձնելու իր բեկամուհիներուն, խոր մտածումի մը մէջ ընկըմեցաւ:

Երիտասարդ նկարիչը, Մարագի պալատէն դուրս ելնելու պահուն, չտեսաւ որ մէկը ճամբուն միւս անկիւնը կը սպասէր, որ զինք տեսնելուն պէս տեղէն շարժեցաւ: Մէնտէս, Ռինայի հետ փախչելու կերպին վրայ կը մտածէր, որ չըլլայ թէ գայթակղութիւն մը յառաջ գայ, մէկէ մը տեսնուի, իր վրայ կասկած մը հրաւիրէ:

Անակնկալ լոյս մը ծագեց մտքին մէջ:
— Գտայ — մըմնջեց ինքնիրեն, ուրախութեամբ ձեռքերը շփելով — գտայ: Վաղը ծրագիրս Ռինայի կը յայտնեմ...: Այո՛, այո՛ ... շա՛տ լաւ է... ամէն բան մեզի նպաստաւոր է ...: Աստուած իմ, ի՞նչ երջանկութիւն...
Այս ուրախ մտածութեանց մէջ ընկղմած,

կը սիրէ՞ :

Մէնտէս դարձեալ հառաչեց, ուսերուն մէջ սեղմուելով և հաւանութեան շարժմամբ գլուխը ձուելով. բայց իսկապէս աչքի տակէն Նորպերդի խռոված դէմքը կը դիտէր:

— Աստուծոյ սիրոյն — բացազանչեց վերջինս զայրացած շեշտով, որովհետև կը վախնար թէ Աննինա գիտնալով Մէնտէսի ազատ ըլլալը՝ պիտի փորձէր դարձեալ անոր քով մօտենալու — այս չէ կարելի... ոչ, պէտք չէ ըլլայ. ան չի կրնար ծերերը՝ քեզի պէս ազնուական, գեղեցիկ և նրբամիտ երիտասարդէ մ'աւելի գերադասել: Ո՛չ... ո՛չ, խաբուած ես... Ռինա գրեզ կը սիրէ. ամենաապահով եմ, դիտմամբ ըրած պիտի ըլլայ՝ քու հաստատամտութիւնդ փորձելու համար... մի՛ հաւատար անոր ... անիկա չի կրնար, Մարագի հետ չ'ամուսնանար:

Դերակոմսի զայրացումը այնչափ մեծ էր և այնչափ զաւեշտական, որ Մէնտէս չկրցաւ ծիծաղը բռնել:

— Ծնորհակալ եմ պարոն — ըսաւ — քու խօսքերուդ, բայց սակայն ճշմարտութիւնն այս է: Իմ կողմանէ այլևս ո՛րէ՛ք ձեռնարկ աւելորդ է այդ աղջկան նկատմամբ: Ինքն իր բերնով խոստովանեցաւ ինծի այն անհրաժեշտ պարտքերը՝ որոնք զինք սեղանաւորին հետ կը կապեն, անկարելիութիւնը՝ իմ սիրոյս համապատասխանելու... և ես խոստացայ մոռնալ զինք ընդ միշտ:

Ա՛խ, մեծ քաջարտութիւն մը պէտք եղաւ ինծի, հաւատա՛: Բայց հիմա աւելի հանգիստ կը զգամ ինքզինքս, կ'անդրադառնամ յիմարութեանս վրայ և կը տեսնեմ կերպով մը... որ Ռինա իրաւունք ունի գերադասելու մարդ մը՝ որ իրեն անդորր ու անձանձորոյթ կեանք մը կ'ապահովէ, քան նկարիչ մը որ կը պայքարի իր մտածումներուն հետ, միշտ բաժնուած մարդկային ընկերակցութենէ և միշտ երկրպագու գեղեցիկին, գաղափարականին, գերագունին...:

Օտարականը մէկ շունչով այս խօսքերը արտասանելով, որ կարծես զինք ճնշող մղձաւանջէ մը կը ջանար ազատել, Նորպերդը ապշեցուցին ու շփոթեցին:

Այսուհանդերձ կեզծ գերակոմսը կ'ուզէր պատասխան մը տալ որ երիտասարդին գաղափարները ցրէ, երբ վերջինս գուշակելով, համաձայնութեամբ մէկ ձեռքը կարկառեց, ըսելով.

— Ներէ՛ ինծի, և շատ ժամանակ չեմ ուզեր զոհել. խելքս ո՛ւր է չեմ գիտեր, և միայնակ ըլլալու պէտքը կը զգամ: Յ տեսութիւն, դերակոմս:

Եւ Մէնտէս գոհ սրտով հեռացաւ, մինչդեռ Նորպերդ, չթուենքները խաճնելով, անոր ետևէն մտքով այս օրհնութիւնները կը զրկէր, սուր բրբրիչով մը համընթաց:

— Ռինա գրեզ կը քամահրէ, հոգս չէ, բայց եթէ դու կը մտածես ինծի ոտնաձգութիւնները —

նել, իմ ճամբաս արգելուլ, ապահով եղիլ որ դեռ գլուխդ չբարձրացուցած կը շախշախեմ գայն:

Հետեւեալ օրը, միեւնոյն ժամուն, Մէնտէս իր պաշտելի տարփունիին քովն էր: Բայց այս անգամ գայն մինակ չգտաւ: Ռինային քովն էր նաև հրապուրիչ սպանունին:

Գարմելիդա չդրժեց իր հայրենեաց և սեռին յատուկ կեղծելու սովորութեան: Իր դիմագծին վրայ հետք մը չկար որ նախորդ օրուան մղած պայքարը մատնէր: Ատելութիւնը կ'եռար սրտին խորը, բայց դէմքը հանդարտ ու ժպտուն անդորր խաղաղութիւն մը կը պատկերացնէր:

Այնչափ հանգիստ չէր տեսնուեր սակայն խարտեաչ որբունին: Կը տեսնուէր թէ քիչ քնացած էր, որովհետև աչքերը նուազկտա ու յոգնած էին սովորականէն աւելի և իր արտաքինը վհատութիւն մը ցոյց կուտար:

Այսուհանդերձ Մէնտէսը տեսնելուն պէս Ռինայի դէմքը կենդանացաւ և քիչ մ'առաջուան ունեցած դեղնութեան տեղ իր բնական կարմրութիւնը վերգգեցաւ:

Նկարչին առ ինքը դարձուցած ակնարկին մէջ՝ այնչափ սէր կար, ժպտին մէջ՝ այնչափ քաղցրութիւն, ձեռք սեղմումին մէջ՝ այնչափ յոյս կար, որ ազլկան երկիւղները բոլորովին ցրուեցան:

Մէնտէս գրեթէ երեք ժամու չափ աշխատեցաւ Ռինայի նկարին վրայ, երբեմն քանի մը խօսք փոխանակելով երկու օրիորդներուն հետ:

Մեկնելէ առաջ, օգտուելով վայրկեանէ մը, յորում Գարմելիդա լուսամուտին մօտ գացած էր, նկարիչը նամակ մը յանձնեց որբունին, ձեռքերով աղաչանքի նշան մ'ընելով, իբրև թէ բսէր:

— Սիրտ ա՛ն...բոլոր ըսածներս գործադրէ... և քիչ մ'ալ դեռ...երջանիկ պիտի ըլլանք:

Ժամերը սահեցան և գիշերը վրայ հասաւ: Ռինա, տեսնելով որ Գարմելիդա պառկեցաւ և աղախինն ալ ժամէ մ'ի վեր էր կը քնանար, դուրս հանեց Մէնտէսի նամակը, և անհանգիստ, խռովայոյզ, անձուկ սրտով, բոցավառ աչքերով, կարգաց գայն:

«Պաշտելի Ռինաս,

«Բու անուշ սէրդ ինձ ցոյց տալու վայրկեանը հասած է: Դեռ քանի մ'օր ալ կայ, եթէ ուզես, մենք պիտի միանանք ընդ միշտ գիրար չթողլու պայմանով: Բայց հաւատաք ու վստահութիւն պէտք է ունենալ, ապա թէ ոչ կորսուած ենք, և ընդ միշտ իրարմէ բաժնուած: Ամէն բան քեզմէ կը կախուի»:

«Մտիկ ըրէ՛, վաղը երեկոյ, երբ ամէնքը կը պառկին պալատին մէջ, և վայրկեան մը շանցած սուր սուրոց մը կրկնակի օդոյ մէջ կը լսուի, դու ծածուկ մը աուսնէն դուրս ե՛լ: Ասիկա զբժ-

ուարին բան մը չէ, քանի որ, ինչպէս ինծի կ'ըսէիր, երկու ծառաներն ու սպասուհին նախասենեակէն հեռի կը պառկին: Իմ սպասաւորս վարը քեզի կը սպասէ: Այդ անձը, ինչպէս ըսի քեզի, բոլորանուէր իմ մարդս է: Յանձնուէ իրեն': Մի' մտնար նաև հետդ աւնուլ գլխարկ ու վերնազգեստ մը. այն դոր ամէն օր կը գործածես: Պատճառը յետոյ քեզի կ'ըսեմ և դուն շատ պիտի հաւնիս: Ան այժմ ուրիշ բան չունիմ բայց միայն քեզի ազաչանք մ'ընելու, զոր քեզմէ կը խնդրեմ յանուն մեր սիրոյն և մեր երջանկութեան. միշտ զքեզ խաղաղ և անտարբեր ցոյց տուր: Վաղը, օրուան մէջ կը տեսնուինք և ակնարկով մը կրնաս ինծի իմացնել հաւանութիւնդ ... թէ ինծի կը հետեւիս և թէ զղջացած չես խոստմանդ վրայ):

«Ռինա», եթէ զիս կը սիրես և վրաս գութ ունիս պիտի չուզես մերժել իմ ազաչանքս: Մտածէ թէ առանց քեզի ես պիտի չկարենամ ապրիլ, թէ իմ կեանքս քու հետ կապուած է, թէ քեզմէ կը կախուի իմ երջանկութիւնս կամ թըշուառութիւնս: Ո՛վ պաշտելի սիրուհիս, յոյսս ունայն մի հաներ: Սիրտ ըրէ՛, և քիչ օրէն զիս քու ոտքերուդ առջև պիտի տեսնես, ծնրադիր ազաչելու քեզմէ որ ընդունիս իմ անունս և զիս երջանկացնես բոլոր կենացս մէջ, ինչպէս կը յուսայ յաւէրժ երջանիկ ընել զքեզ քոյդ»

«ՄէնՏէՍ»

«Յ. Գ.— Հաւատարիմ ծառաս ուր ալ զքեզ տանելու ըլլայ, զնա՛ առանց տարակուսի: Իմ հրամաններս է որ կը գործադրէ: Ազատելուդ պէս, անիկա ամէն բան կ'ըսէ քեզի. վրան վարանութիւն ունեցիր, իբրև հօր մը: Ես ալ շուտով ետեւէդ կը հասնիմ:»

Երկչոտ սրբուհին քանի մը վայրկեան իր մտածումներուն մէջ ընկղմած մնաց: Մարազը թողելուն զաղափարը չէր որ զինք կը չարչարէր, այլ Գարմելիգայէն հրաժարելը, որ ամբողջ երեք ամիս իրեն առաջնորդն եղած էր, իր պաշտպանը, իր ամենասիրելի նեցուկը:

Բարեկամութիւնը՝ որ երկու օրիորդներու սրտերը սերտիւ իրարու կը միացնէր, երիտասարդական սէրէ մը տարուելու վրայ էր. փափուկ սպանուհիին դժբախտութիւններն ու քաջասրտութիւնը, Ռինայի անմեղութիւնն ու ազնուասրտութիւնը և երկուքին ազնիւ ոգիներն ալ զարմանալիապէս կը կազմէին սէր մը՝ որոնց հաստատամտութիւնը յառաջ կուգար մտածութեանց ներդաշնակութենէն, և սէրը աճած էր բնաւորութեանց զանազանութենէն:

Բայց յանկարծ Մէնտէսի դէմքը սրբուհիին մտքին առջև երեւցաւ: Իրեն կը թուէր թէ երկտասարդը ակնապիշ իրեն կը նայէր յանդիմանելով իր թերահաւատութիւնը:

Կը յիշէր անոր խօսքերը. «Կամ միասին փախչիլ կամ այլևս զիրար չտեսնել»:

— Զերար չտեսնե՛լ— մտածեց Ռինա զողահար— ո՛հ, անկարելի է: Իրմէ հետի՛ ինծի ուրիշ բան չի մնար բայց եթէ մեռնիլ...

Աղջկան սիրտը սաստիկ կը բաբախէր, բայց երկիւղը իսկոյն ուրիշ զգացումի մը փոխուեցաւ, զգացում մը՝ որ իր հոգին նոր ու երկնային յուզումներով լեցուց: Կարծես երազի մը մէջ՝ նա կը դտնուէր տնակի մը ներքե կիսով չափ կիտրոնի և նարնջենիներու անտառակով մը շրջապատուած: Երկնային ներդաշնակութիւն մը օդը կը լեցնէր. անուշ զեփիւռ մը ծաղիկներն ու ծառերու տերեւները կը շոյէր, կարծես անոնց բոյրերը գոգնալ կը խորհէր. թիթեռնիկներու եւ մեղուահաւերու խումբ մը դաշտերուն մէջ զբւարթ կը թափառէին:

Մէնտէս՝ իր կողքին, անոր ձեռքերն իրեն ներուն մէջ սեղմած, իրեն հետ սիրային հրապուրիչ լեզուով մը կը խօսակցէր, հազար անգամ կրկնելով իրեն թէ իր սիրոյն համար միայն կ'ապրէր. թէ՛ բացի այն ներդաշնակ զեղանկարէն, որ շուրջը կը տարածուէր, ուրիշ աշխարհ գոյութիւն չունէր իրեն համար. թէ իր կեանքը բաւական չէր ինքզինք երջանիկ ընելու որչափ կ'ընէր զինքը, սիրուհին, իր փափուկ ու զողար սիրովը:

Սէրը ե՛րբ յողթական չէ հանդիսացեր:

Մէնտէսի հետ ապրելու մտածութեան հետ, ամէն վարանում անհետացաւ որբուհւոյն սրտէն:

Բոլոր իր երիտասարդական ներշնչումները, իր քաղցր ու անմեղ երազները՝ այն բանաստեղծական և մենաւոր ամարանոցին մէջ մտնելու սաստիկ ըզմանքին մէջ ձուլուեցան, ուր խորհրդաւոր և հրապուրիչ օտարական նկարիչը կը թուէր ուզել հաստատել ընդ միշտ իրենց բնակութիւնը:

Հետեւեալ առտուն, Ռինա խոտվայոյզ արթընցաւ, այն նորանոր մտածութիւններուն համար որ իր միտքը վեր ի վայր կ'ընէին:

Անձկանօք երիտասարդի գալստեան ուղասեց: Գարձեալ անոր հետ միայնակ սիտի գտնուէր, որովհետեւ Գարմելիդա բոլորովին իր վերէժխնդրութեան ծրագրին մէջ ընկղմած՝ կարելորութիւն չէր տուած Ռինայի, և Տէ Ռոսսի օրիորդ կոմսուհիին հետ դուրս ելած էր, ուզելով մի միայն իրեն բացուիլ Նորպերդի խնդրոյն վրայօք, և եթէ կարելի էր, զինքն ալ համոզել որ իր մտադրութեան գործակցի:

Ճիշտ կէսօրին Ռինայի նամակ մը բերուեցաւ որ թորինոյէն կուգար:

Սեղանաւոր Մարագէն էր:

Որբուհին շուտով բացաւ գայն: Քանի մը տող էր, բայց բաւական էր աղջկան սրտին մէջ փախչելու խորհուրդը հաստատելու համար:

Պիտակին մէջ կ'ըսէր.

«Իմ խարտեաշ անուշիկս,

«Ուրախ եղիր, սիրելիս: Գործերս մեծ յա-

Ղողութեամբ կ'ընթանան: Քիչ օրէն ազատ պիտի ըլլամ և Ֆիրէնցէ պիտի վերադառնամ, հոն հաստատուելու համար կեանքիս գեղեցիկ անուրջը: Անձկութեամբ կը սպասեմ զիրար տեսնելու բոսլէին: Քեզմէ հեռու գտնուելով իսկ՝ դարձեալ իմ սիրտս, իմ հոգիս, իմ մտածութիւններս բոլոր քեզի հետ են: Իմ կողմանէս ողջունէ Գարմելիդան և ըսէ՝ ...այսինքն է բան մի՛ ըսեր: Իրեն անակնկալ մը պիտի ընեմ Ֆիրէնցէ վերադարձիս: Առայժմ թող ընդունի իր հօր մէկ համբոյրը հատ մ'ալ ես քեզի կը զրկեմ, ի մօտոյ, ամենահերջանիկս»

«ՄԱՐԱԳ»

Ռինա բոլոր նամակէն ուրիշ բան չհասկըցաւ բայց միայն թէ քիչ օրէն սեղանաւորը Ֆիրէնցէ պիտի վերադառնար:

Այս գաղափարը զինք սարսափեցուց:

Բայց երկայն մտածելու ժամանակ չունէր: Քանի մը ժամէն ինք կրնար փախչի՛լ վերահաս վտանգէն:

Փութաց պիտակը ծածկել, նախատեսնակին մէջ Մէնտէսի ձայնը լսելով: Երբ վերջինս սրահ մտաւ, աղջիկը թիկնաթոփ մը վրայ նստած էր, հանգարտ ու ժպիտը երեսին:

Հագիւ թէ տեսաւ երիտասարդը, ոտք ելաւ, անոր առջև վազեց և ակնարկով մը հասկցուց թէ պատրաստ էր իրեն հետեւելու:

Նկարիչը ուրախութենէն ինքնիրմէ դուրս

կլած էր:

— Հաւատա՛մ— մրմնջեց, օրիորդին ձեռքը իր սրտին վրայ տանելով:

— Կ'երզնո՛ւմ — ըսաւ Ռինա հաստատուն ձայնով, առանց ո'նէ յուզումէ զրգոտած: — Երէկ դեռ կը վարանէի... այսօր... ո'չ ա՛յլ ես:

Երկու երիտասարդները իրարու քով նստած, և մինակ գտնուելու առիթէն օգտուելով, վիճաբանեցան, գանազան ծրագիրներ հերքեցին, մինչև որ յարմար գաղափարի մը յանգեցան: Ռինա, որ ի բնէ երկչոտ ու զգուշաւոր էր, խօսելով կ'ողեւորուէր: Այս յայտնի էր որ, Մարագի նամակը իր սրտին մէջ հզօր առաջադրութիւն մը ծնուցեր էր, որ իր դէմքին ու բիբերուն մէջ կը փայլէր:

Գարմելիդա դեռ չվերադարձած՝ Մէնտէս մեկնեցաւ, վերջին անգամ մ'ալ կրկնելով որբուհիին:

— Կէս գիշերին պատրաստ գտնուէ: Ըսածներս պատրաստէ. ամէն բան նպաստաւոր է: Քաջասիրտ և վստահ եղի՛ր: Քանի մ'օրէն նաւ մը գմեղ հեռուն պիտի փոխադրէ, դրախտի մը մշտնջենաւոր երջանկութեան մէջ.

Տխո՛ւր ու փոթորկալից էր գիշերը: Հիգեղօրէն կ'անձրեւէր և հովը սաստիկ կը փչէր, որ պատուհաններու բոլոր փեղկերը կը ցնցէր:

Ռինա մինակ էր սենեակին մէջ, զրասեղանին առջև նստած: Գիշերային կանթիղի մը նուազ

շողը կը լուսաւորէր իր անուշ ու հանդարտ դէմ-
քը: Անհոգաբար հանգուցուած իր մազերը ոսկե-
ղէն քօղի մը պէս ուսերը կը ծածկէին:

Սև բուրդէ պարզունակ զգեստ մը հագուած
էր իր փափկակազմ մարմնոյն վրայ, և քովտօր
սեղանի մը վրայ գլխարկ ու վերարկու մը կը
տեսնուէին, նոյնպէս սև:

Սղջիկը կը գրէր, ընդհատուելով մերթ կա-
թիլ մ'արցունք չորցնելու համար. որ այտերէն
վար կը թափէին կամ մէկ կողմ նետելու հա-
մար զանգուրներն որ ճակատը կը խափանէին:

Երբ աւարտեց, Ռինա զայն վառարանի մը
վրայ դրաւ, ուրիշ մ'ալ գրեց և փակեց նամակի
պահարանի մը մէջ, վրան հասցէն աւելցուց և
առաջնոյն քով գետեղեց: Յետոյ կանթեղն առ-
նելով, թեթև մը, ստքի մատներուն վրայ, Գար-
մելիդայի սենեակը մտաւ և մէկ ձեռքով լոյսը
պատասպարելով քիչ մը ժամանակ մունջ հայե-
ցողութեան մը մէջ ընկղմեցաւ:

Գեղեցիկ սպանուհին խոր քնոյ մէջ էր.
բայց յայտնի կը տեսնուէր որ քունը հանգիստ
չէր: Փոփոխ կարմրութիւն մը մերթ տժգոյն
դէմքը կը ծածկէր, կիսաբաց շրթներէն ծամ-
ծրմուած ձայներ կ'ելնէին, իր դիմագծութիւնը
որ սովորաբար միշտ քաղցր ու մաքուր էր, եր-
բեմն խիստ ու կատաղի երեւոյթ մը կ'առնէր:

— Խեղճ Գարմելիդա — մըմնջեց Ռինա, —
ս'վ գիտէ ինչ գէշ երազներ գինք կը խոշտանգեն:

Չուզեց անոր համբոյր մը տալ, որ մի' գու-
յէ արթննայ, բայց փափուկ մը անոր բարձին
քով տեսակ մը ոսկեմետալ դրաւ, միակ բանը
զոր ունէր խկապէս Ռինա, որովհետև մանկու-
թենէ ի վեր քովը էր, ինքն իրեն մըմնջելով:

— Այս մետալը, որ վրաս կրած եմ միշտ,
քեզի թո'ղ յիշեցնէ իմ սէրս և իմ վերջին ող-
ջոյնս:

Տեսնելով որ այլևս պիտի չկարենայ ինք-
զինքը բռնել, Ռինա դուրս եկաւ սենեակէն, բայց
սեմին վրայ ետ դարձաւ, ձեռքով հազարաւոր
համբոյրներ զրկելով անոր: Այս պահուս ամե-
նասուր սուլոց մը կրկնուեցաւ ճամբուն մէջ:

Որբուհին մէկ ձեռքը սրտին վրայ դրաւ, և
աչքերը վար առած, զողբոջուն քայլերով իր
սենեակը դարձաւ, գլխարկն ու վերարկուն ա-
ռաւ, և քանի մ'անգամ ետև դառնալ նայելէ
վերջ, նախասենեակէն անցաւ և բանալիով՝ զոր
օրուան մէջ ջանացած էր ձեռք անցընել, բացաւ
դուռը, մեղմով փակեց զայն և քանի մը վայր-
կեան վերջ ճամբուն մէջ կը գտնուէր:

Մտտաիկ տեղացող անձրեւէն և կատաղի
հովէն երկու քայլ հեռուն չէր տեսնուեր: Մինչ-
դեռ ինքը յուզումէն ու երկիւղէն զողբոջուն
ապշած աչքերը չորս դին կը դարձնէր. զգաց որ
ձեռք մը զինքը բռնեց և ամենաքաղցր ձայն մը
սկանջին փսփսաց:

— Մի' վախար, Ռինա, ես եմ...

— Ի՛նչպէս... դ՞ու... Մէնտէս... բայց ինծի
բասձ էիր թէ քու ծառադ պիտի զրկես... — մըր-
մընջեց օրիորդը, թէ՛ անոր ներկայութենէն ա-
ւելի սիրտ առաւ:

— Փոթորկէն և գիշերուն մթութենէն օ-
գուտ քաղեցի, անձամբ գալու: Բանի մը քայլ
անդին կառք մը մեզի կը սպասէ. կառապանն
ալ իմ ծառաս է: Ես քիչ մը տեղ միայն հետդ
պիտի գամ, որովհետև հարկ է որ ես Ֆիրէնցէ
մնամ կասկած չտալու համար: Գալէ՛... մնացածը
կառքին մէջ կը պատմեմ:

Տեսնելով որ օրիորդը կը դողդղար և ոտքի
վրայ չէր կրնար կենալ, Մէնտէս զայն իր թեւե-
րուն վրայ առաւ, տղու մը պէս, և մինչև կառքը
տարաւ որ ճամբուն անկեան գլուխը իրենց կը
սպասէր, կամաց մը բարձին վրայ գետեղելով
զայն, անծանօթ լեզուով մը քանի մը խօսք փո-
խանակեց իր հաւատարիմ ծառային հետ, որ ի-
պատասխանի զարմացական ձայն մ'արձակեց:
Յետոյ Մէնտէս նստաւ աղջկան կողքին, դռնակը
փակեց, և կառքը սկսաւ սուրբար:

Գարմելիդա մութն ու լուսուն արթնցաւ և
զարմացաւ՝ տեսնելով իր բարձին վրայ այն մե-
տալը զոր Ռինա վզին վրայ կը կրէր, իբրև միակ
խշատակ իր թշուառ ծննդեան:

Նորօրինակ և խորհրդաւոր նախազգացումէ
մը ընկճուած, գեղեցիկ սպանուհին անկողնէն
ցատքեց և առանց իսկ զգեստները հագուելու.

աճապարանքով որբունիին սենեակը վազեց՝ կան-
չելով բարձրաձայն: Ոչ սք պատասխանեց. սեն-
եակն ամայի էր և տեսաւ որ գեղեցկունիին ան-
կողինին ձեռք դպցուած չէր:

Գարմելիդա զարգասրահի սպիտակ պատե-
րէն աւելի գունատեցաւ, այնուհանդերձ կրցաւ
բոլոր սենեակները շրջիլ, պոռալով.

— Ռինան... ո՛ւր է Ռինան:

Այս ձայնէն սպասուհին ու ծառաները վա-
զեցին, բայց օրիորդը կիսամերկ, հերարձուկ,
անհանգիստ, այլայլած տեսնելով, ապշած իսկոյն
քաշուեցան:

Այս բանս Գարմելիդայի խռովքն աւելի
զրզուեց:

Սոր յուզումներու կռիւ մը, որ խօսքով չէր
կրնար բացատրել, իր կուրծքը կը ճնշէին և ձայ-
նը կը խղզէին:

— Բայց... վերջապէս — գոչեց Գարմելիդա
վայրկեան մը վերջ, ցաւօք ձեռքերը գալարելով
— ըսէ՛ք ո՛ւր է Ռինան:

Սպասուհին ու ծառաներն իրարու նայեցան
ուսերնին կծկելով և բերանաբաց, իբրև թէ ու-
զէին ցրտել:

— Ի՛նչ կ'ուզես որ մենք գիտնանք: Բան
մը չտեսանք: Տեսնելով թէ կարելի չէր անոնց-
մէ բանի մը տեղեկանալ, Սպանուհին օրիորդին
սենեակը վերադարձաւ:

Պաղ քրտինք մը իր քունքերը կը թրջէր:

սիրտը հագիւ կը բարախէր: Այն ատեն էր որ վառարանին վրայ դրուած երկու պիտակները տեսաւ: Տենդագին առաւ գանոնք. մէկը իրեն ուղղուած էր, միւսը Մարագի:

Վերջինը մէկ կողմ ձգեց և ցաւատանջ ճընշումի մը, տարտամ ու տխուր նախազգացումներէ տանջուած, արագ ակնարկ մը տուաւ իրեն գրուածին:

Առաջին բառէն, աղաղակ մ'էր փրցուց. բայց այնպիսի կերպով մը զոր զիտութիւնն իսկ չի կրնար բացատրել, Գարմելիդա, որ ըստ բոլոր երեւոյթներուն և անհրաժեշտ գեբախտութեան մը, կրնար կայծակնահար ըլլալ, իր նախկին պաղարիւնութիւնն առաւ և գրեթէ հաստատուն ձայնով մ'ըսաւ սպասուհիին.

— Շուտ, զգեստներս ու զլխարկս բե՛ր — վայրկեան մի՛ կորսնցնե՛ր — անմիջապէս դուրս պիտի ելլեմ Տէ Ռոսսի կոմսին երթալու... շո՛ւտ շարժէ:

Եւ սպասուհին այնպիսի փութկոտութեամբ կատարեց Գարմելիդայի հրամանները, որ հինգ վայրկեան վերջը սա Փիրէնցէցի ազնուականին և Աննինայի քով կը գտնուէր, որոնք զարմացան երբ իրենց իմացուցին Սպանուհւոյն տարածած այցելութիւնը:

Առանց բառ մ'ըսելու, Գարմելիդա Ռինայի իրեն զբաժ. թուղթը կոմսին տուաւ:

Նա կարգաց զայն վհատ և անհանգիստ վի-

ճակով:

— Չարաշո՛ւք — մրմնջեց, ապա բարձրաձայն — կարելի՞ բան է... ո՛չ... չի կրնար ըլլալ... կամ լաւագոյն պիտի ըլլայ... բայց դեռ ժամանակ ունինք զայն փրկելու: Հոս կեցի՛ր .. Գարմելիդա... հրամաններս տամ ... և ես անձամբ կ'երթամ տեսնելու:

— Ես ալ հետզ պիտի գամ — գոչեց Գարմելիդա խղզուկ հեծկլտանքներով՝ գլուխը վեր առնելով — և եթէ Աստուած ուզէ, որ չափազանց ուշ ըլլայ, անոր ետեւէն պիտի իյնամ: Գեռ կը յիշեմ սեղանաւորի վերջին խօսքերը:

«— Գարմելիդա — ըսաւ ինծի — քեզի կը յանձնեմ այս աղջիկը. աշխարհիս մէջ իմ առաջին սիրելի գանձս է: Անոր և իմ սիրոյս համար՝ լաւ հսկողութիւն ըրէ՛: Եւ ի՛նչ պիտի պատասխանեմ, երբ վերադառնայ և Ռինայի մասին հաշիւ պահանջէ:»

Տէ Ռոսսի կոմսը շփոթած գլուխը վար առաւ, միեւնոյն պարագային մէջ գտնուելուն համար:

Աննինա արցունքոտ դէմքով, ի գուր իր հայրը կը հարցափորձէր, ունեցած խռովքին նըկատմամբ: Ո՛չ կամար, ոչ Գարմելիդա լսելու չէին զարներ:

Վերջապէս ազնուականը ըմբռնեց թէ պէտք էր մէկ հարուածով խզել իրենց այս անձուկ վիճակը և նշան մ'ընելով Սպանուհիին, միասին

զետը նետած է: Յարդ ոչ իսկ դիակը կրցած են
գաննել՝ գետի յորդութեան պատճառաւ, եւ ահա
իր վախճանը...: Ո՛չ... ոչ... ես այլեւս պիտի
չկարենամ տեսնել զայն, երբե՛ք, կամ լաւ եւս
իւր զգեստները միայն պիտի տեսնեմ...:

Եւ Սպանուհին սուր ծիծաղով մը, ծիծաղ մը
որ վախ կ'ազգէր, Ասնոյի եզերքը գանուած ա-
ռարկաները կը խուզարկէր:

Օրիորդ կոմսուհին ապշահար, սրտայոյզ, եւ
կոտորած այս խօսքերուն. այն ծիծաղին վրայ,
ձեռքերը սրտին դրած, քայլ մ'առաւ իբրև ծըն-
րադրելու համար այն զգեստներուն առջև և
համբուրելու գանոնք, բայց չկրնալով դիմադրել
յուզմանց, վարանեցաւ, դողդղաց, և դեռ կոմսը
օգնութեան չփութացած, իբրև կայծակնահար
գորգին վրայ տարածուած փռուեցաւ:

— 465 —

[Faint, mostly illegible handwritten text at the bottom of the page, possibly bleed-through or a separate note.]

ՄՄ Հայագիտական գրադարան



MAL031217

